

82
Մ-68

ՄԻՍԻՈՎ ԱՐԻՍՏԱԿԷՍ

# ԴՐԱԽՏ ԿՈՐՈՒՍԵԱԼ

Հայրենասիրական վիպակ

ի լեզուս հայոց

Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ Վ. ԱԼԵՔԵԼԵԱՆ



335 6308

Ի Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ի Տպարանի Ազգին Մխիթարեանց

1824

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

TO

LORD GEORGE WILLIAM RUSSELL

*LIEUTENANT COLONEL IN THE ARMY OF*
*HIS BRITANNIC MAJESTY*

AND

MEMBER OF THE BRITISH SENATE

This translation of MILTON'S PARADISE LOST into the Armenian Language is humbly dedicated with the deepest feelings of grati-

tude for the generosity manifested by his Lordship in forwarding its publication,

*BY*

*HIS LORDSHIP'S*

*obliged and very obedient*
*humble servant*

PASCHAL AUCHER.

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Երաշխեցին, և յաւէտ ոլոտանին ՚ի Բանասաեղծական քերթուածս՝ ի ըստ հասարակաց կարծեաց Դիւցազնականն, որպիսի է Հոմերոսին ՚ի Յոյնս, Վիրգիլեայ ՚ի Հռովմայեցիս, Տասսոյ Իտալացիս, և Միլտոնի Անգղիացիս. յորմէ ցարդ վըճռ գտաւ Հայաստանեայցս աշխարհ: Եւ թէպէտ մեծ էր ՚ի նմա անուն Հոմերոսի՝ մինչև Հոմերացիան առնձնել զամենայն բան չափաբերական, սակայն ոչ էառ նա ոլորապէս զձաշակ քաղցրութեան Դիւցազնական բանաստեղծութեան նորա, և կամ թարգմանութիւն նորին ոչ ժամանեաց առ մեզ:

Ընդ որ էր կամեցեալ մեր և յայսմ կարևոր մասին չմոռանալ զսէր մեր անձաշակ՝ յերևելի և յաշխարհաքարոզ Դիւցազնական Բանաստեղծութեանց անոի չորեցունց ազգացդ՝ զՄիլտոնի Անգղիացւոյ զԴրախան կորուսեալ քաջ չափէ ևս համարեցաք ընծայել զառաջինն ՚ի Հայկականս բարբառ. զի է նա քերթուած յաւէտ արքական, և չունի ինչ հակառակ ողջախոհ լսելեաց:

Առանձին իմն յորդոր եղև մեզ ՚ի թարգմանութիւն առ բին ամենալաւ Սեպուհն Անգղիացի Կուլիէլմոս Ռուսէլեան (1). որոյ առեալ սակաւուք զձաշակ Հայկազեանս բարբառոյ՝ կամեցաւ տալ զայն ընծայել ՚ի լոյս ներքոյ անդեամբք յօգուտ Հայկազանցս, և ՚ի յիշատակ ազնուական տան իւրոյ:

Արդ՝ արժան է մեզ տալ գյետագայ ծանօթութիւնսդ՝ զանձնէ Միլտոնի, զԴիւցազնական բանաստեղծութենէ նորա, և զվերս թարգմանութենէ Անգղիական բնագրէ անտի:

(1) Lord William Russell.

2. 28. Կաղապարանոց ի Տուզն

# ՎԱՐԴ ՄԻԼՏՈՎԱՆ

Յովհաննէս Միլտոն ազնուական Անգլիացի ծնաւ ի Լոնդոն մայրաքաղաքի յամի Տեառն 1608. Անգտոին ի մանկական տիոյ գտաւ նա կարի ուսումնասէր, և անխոնջ պարապէր ի գիրս ցհասարակ գիշեր. յոյր սակս ստացաւ զառաջինն զանհնարին ցաւ գլխոյ, և ապա զկուրութիւն աչաց:

Ի հասակի հնգետասան ամաց չոգաւ յուսումն ի Համալսարանն Կանտաբրիկիոյ (1) և եկաց անդ ամս եւթն, և ապա դարձեալ՝ ետ զանձն ի վարժութիւն համօրէն գիտութեանց:

Չկնի մահուան հօր իւրոյ (2) չոչեցաւ ի Գաղղիա և Իտալիա ի մարզս հմտութեանց: Եւ թարգմանեաց յանգլիական բարբառ զընտիր ընտիր հատուածս իտալական քերթուածոց Դանտեայ, Արիոստեայ և Պետրարքայի: Ի Նէապոլիս քաղաքի սեպուհն Մանսոս՝ պաշտպան Տասսոյ, յորդոր եղև նմա ի յօրինուածն Դիւցազնական բանաստեղծութեան յանգլիական բարբառ. կամ ըստ այլոց՝ վերծանութիւնն քերթուածոց Մարինոսի չարժեաց ի նոյն: Կամէր անցանել Իտալիոյ ի Յունաստան, այլ ի սակս խռովութեանցն յուզելոց Անգլիա փութացաւ դառնալ ի Լոնդոն զկնի հնգետասան ամաց մեկնելոյ անտի: Ուր և փոխանակ զինուց՝ գրովք սկսաւ զինիլ ընդդէմ Թագաւորականն և Եպիսկոպոսական իշխանութեանց, զի էր աղանդումն Երիցական, և խնդրէր զհասարակապետական իշխանութիւն Անգղիա:

Ի հասակի երեսուն և հինգ ամաց ամուսնացեալ՝ ծնաւ երիս դստերս, որոց և ուսոյց ընթեռնուլ յայլևայլ լեզուս. և ի ժամանակի կուրութեան իւրոյ նոքա վերծանէին յուսնկն

(1) Ես ինն ի հինն երեսնեվեց Համալսարանաց Անգլիոյ:
(2) Որ էր նորագոնդ Երիցական կամ Պուրիտան, որպես և ինքն Միլտոն. բայց հաս նորա էր Հոռվդեան:

նորա առանձին իմն գնասյի մարգարէ Աբբրայական բարբառ, գՀռոմերոս՝ ի Յոյն, և գՎիրգիլոս՝ ի Լատին:

Ի խաղալիլ խռովութեանց առ ժամանակ մի՝ կարգեցաւ Քարտուղար արքունի. և գրեաց մատեանս ի պաշտպանութիւն ազատութեան Անգլիացւոց. յոյր սակս ընկալաւ պարգև հազար լիտր Սաերլին, որ է՝ երկու հազար ոսկի վէնէտկոյ:

Ի մեռանել կնոջ իւրոյ՝ մինչդեռ էր ամուսնացեալ վերստին, կորոյս զաչսութիւն միոյ ականի. և ի Թագաւորել անդ Կարոլոսի երկրորդի՝ ընկեցաւ նա ի պաշտամանէ անոի Քարտուղարութեան, և մեռաւ ևս երկրորդ կին իւր: Եւ ապա երրորդ անգամ ամուսնացաւ. բայց ընդհուպ մեռաւ և երրորդ կինն. և ինքն կորոյս զաչսութիւն միւսոյ ականն ևս:

Եւ այնպէս ի ժամանակի խաղաղ կուրութեան իւրոյ եա զանձն յաշխատասիրութիւն Դիւցազնական բանաստեղծութեան Դրախտին կորուսեալոյ՝ ձեռնամուխ ունելով գրարեկամն և զգաստերս իւր: Ջոր և ընծայեաց ի լոյս յամի Տեառն 1667 կամ 1669, գոլով ինքն ի հասակի վաթսուն և մի ամաց. զորոյ գնմանն յարդ ոչ եաես Անգլիա: Յօրինեալ էր Միլտոնի յառաջագոյն և զայլ քերթուածս, որպէս և զինի յօրինեաց միւս ևս Դիւցազնական բանաստեղծութիւն կոչեցեալ Դրախտ վերստին գտեալ: Այլ Դրախտն նորա կորուսեալ գեր ի վերոյ է քան զամենեսեան, մինչև ասել ոմանց ի քննչաց նորա, թէ «Միլտոն գոհանի ի Դրախտին կորուսելոյ, այլ ոչ ի վերստին գտելոյ»:

Յառաջին տպագրութեան անդ Միլտոն բաժանեալ էր զԴրախտ իւր կորուսեալ ի տասն գիրս, այլ զինի բաժանեաց զայն յերկոտասան:

Մեռաւ նա ի հասակի վաթսուն և վեց ամաց յամի Տեառն 1674. և թաղեցաւ ի գաւթի եկեղեցւոյն՝ որ կոչի Սէյնդ Ճայլս (1) առընթեր Լոնդոնի: Բայց յամին 1793 կանգնեցաւ մահարձան նորա ի նմին եկեղեցւոջ առվին հանուամ արձանագրութեամբ «Յովհաննէս Միլտոն յօրէ նոր Դրախտին կորուսելոյ»: Ի ներքոյ արձանագրութեանս քանդակեալ կան Օձ և Խնձոր ի վերայ Բոցեղէն գաւազանի:

(1) Saint Giles.

Բայց ՚ի բազմապատիկ լեզուաց ուսեալ էր նորա և զնշ-
մարտութիւն, զպատմութիւն, զբնաստեղծութիւն,
զիմաստասիրութիւն և զաստուածաբանութիւն: Ջկնի Ա-
տուածաշունչ գրոց յատկապես ինձ սիրելի էր նմա Հոմերոս,
զոր գոգցես ոգւոյն առեալ էր ՚ի բերան:

Ջամս լինն աշխատ եղև ՚ի յօրինուածն Դրախտին կորու-
սելոյ: Մթերք գիտութեանցն ՚ի կուրութեան անդ առա-
եալ ևս զօրացուցին զկարողութիւնս մտաց նորա. որով և
երևակայութիւն նորա ազատ գոլով յարտաքին առ արկայից՝
արձակ արձակ խաղաց յաշխարհս նմանալի:

## ՓՆՆՈՒԹԻՒՆ ԴՐԱԽՏԻՆ ԿՈՐՈՒՍԵԼՈՅ

Ռազմաւք գոհան յՆերսոպացւոց անուն քննիչք և Թարգ-
մանք Դիւցազնական բանաստեղծութեանն Մելտունելի. ո-
մանք գեր ՚ի վերոյ, և ոմանք սորին գասեցին զայն քան
զքերթուածս Հոմերոսի, Վիրգիլեայ և Տասսոյ. Թէպէտև
ամենեքեան առհասարակ աքանչանան ընդ գիւտ և ընդ վեհ-
մտութիւն իմաստից նորա: Ասդ՝ չկամեցաւ մեր ինքնին լս-
նել գաստաւոր, ՚ի միջոց Անգղիացի, Գաղղիացի և Իտա-
լացի քննչաց նորա՝ զթարգմանութիւնն անաչառ բանից
Ճօնսընի Անգղիացւոյ (1) դնցուք աստանօր. որ Թէպէտև
սակաւ մի երկայնաձիգ է, այլ քանզի բովանդակէ ՚ի կար-
ճոյ և զկարևոր տեղեկութիւնս ՚ի սակս Դիւցազնական
բանաստեղծութեան, Թերևս ախորժալուր պատճ ընթեր-
ցանելեաց:

„Մատիցուք արդ (ասէ Ճօնսընն) ՚ի քննութիւն Դրախ-
տին կորուսելոյ, այնր բանաստեղծութեան՝ որում ըստ նիւ-
թոյն կամ ըստ գաղափարին մարթ է ունել զառաջինն տե-
ղին ՚ի ծնունդս մարդկեղէն մտաց, և ըստ եղանակի յօրի-
նուածոյն կամ ըստ ճարտարութեանն զերկրորդն: Ըստ
հասարակաց հաւանութեան զնախկին գովեստ բնական հան-
ճարոյ կամ ախորժակի արժան է ընծայել գրչի Դիւցազ-
նական բանաստեղծութեան. զի պահանջէ նա զբովանդա-

(1) Samuel Johnson.

կութիւն համօրէն կարողութեանց մտաց՝ որք յայլ քեր-
թուածս շատ իսկ են առանձինն :

» Բանաստեղծութիւնն է արուեստ զօդելոյ զդուարձու-
թիւն ընդ ճշմարտութեան՝ կոչեալ զերևակայութիւնն յօգ-
նութիւն բանին : Դիւցազնական բանաստեղծութեանն է
աւանդել զկարևոր վարդապետութիւնս ճշմարտութեան ա-
մենավայելուչ կանոնօք, և պատմել զերևելի անցս աղդուղա-
գոյն ինն օրինակաւ : Վասն որոյ՝ պէտք են պատմութեան
ընծայել գրչի նորա զսկզբունս վիպասանութեան, զորս ու-
նի նա յօրինել և շքեղաշարդել ընտիր արուեստիւ, կեն-
դանացուցանել թատրոնական նկարագրութեամբ և ազ-
գութեամբ, և պէսպէս յեղափոխել յիշատակօք անյե-
լոցն և ապառնեաց : Պէտք են բարոյական վարդապետու-
թեան ուսուցանել նմա զանվթար կանոնս, և զբազմադիմի
յեղանակս առաքինութեանց և մոլութեանց : Ի քաղաքա-
կանութենէ անտի և՝ ի կենցաղավարելոյ ընդ մարդկան ուն-
նա ուսանել զպէսպիսութիւնս բուսոց բարուց, և զհակա-
միտութիւնս կրից՝ առանձինն, կամ զուգորդեալ՝ ի միասին :
Եւ բնախօսութեան պէտք են ընծայել նմա զուսաբանու-
թիւնս պատկերաց :

» Ա՛ւ՝ ի կիր արկանելոյ զայդոսիկ ըստ օրինաց բանաս-
տեղծութեան՝ պէտք են և նմա նմա քաջայարմար երևակայու-
թեան՝ ի կենդանագրել զբնութիւնն, և ընծայել կեղծեաց
զկերպարանս ճշմարտութեան : Եւ տակաւին ոչ է նա բա-
նաստեղծ ակրաւէս, եթէ չիցէ ժամանեալ՝ ի ծագս իւրուն
լեզուի, և՝ ի միտ առեալ զվայելուչ եղանակս խօսից և զոճ
բառից, և ուսեալ և զյարմարութիւնս այլև այլ հնչմանց
նոցա ըստ պէսպիսութեան չափաբերական ներդաշնակու-
թեան :

» Ըստ Բոսուայ (1) առաջին ճարտարութիւն բանաս-
տեղծին է գտանել զնիւթս բարոյական, զոր զինի պարտ է
առաստպելոյ նորա մեկնաբանել և հաստատել : Այս միայն
Թուի լինել միտք բանաստեղծութեանն Միլտոնի : Բա-
րոյական նիւթս բանաստեղծութեանց այլոց են պատահա-
կան և հետևորդ . Միլտոնին միայն է գլխաւոր և ներ-

(1) Bossu ֆրանսացի գրագիտի՝ ի ճառն գիւցազնական բա-
նաստեղծութեան :

քին : Կպատակ նորա էր կարի լինն կարևոր, ընդ նմին և դժուարին յոյժ. լմա՛ արդարացուցանել զՅանապարհս Աստուծոյ, ցուցանել զբանաւորութիւն Կրօնին, և զկարևորութիւն հնազանդութեան աստուածային օրինաց :

» Աւ՛ի յառաջագէմ ընծայել զնմասան բարոյական՝ պէտք են առաստպելաց և արուեստակեալ պատմութեան՛ի զարթուցանել զհետաքննութիւն և զզարմանս : Յայսմ մասին արժան է խոստովանել զքերթուածն Միլտոնի զուգահաւասար բանաստեղծութեանց այլոց : Ի պատմութեան անդ անկմանն Ադամայ բովանդակեաց նա զանցեալս և ըզհանդերձեալն : Եւ զնմասան Աստուածաշունչ գրոց այնպիսի նմն վայելչութեամբ գեղեցիկս հիւսեաց, մինչև հասմօրէն մասանց նորա երևիլ կարի նմն կարևոր, և չունել պէտս համառօտութեան յերազութիւն ընթացից երևելի գործողութեան :

» Նևեթն Դիւցազնական բանաստեղծութեան է անգք ինչ երևելի : Միլտոնին ոչ է կործանումն քաղաքաց, ոչ առաջնորդութիւն գաղթականի, և ոչ հիմնարկութիւն ինքնակալութեան. այլ՝ տեսչութիւն աշխարհաց, վտարանդութիւնք յերկինս և յերկրի, ապստամբութիւն երևելի արարածոց Աստուծոյ՝ յերեանց, պարտութիւն զօրաց նոցա, և պատիժ յանցանաց. արարչութիւն նորոգ բանաւորաց, երջանկութիւն նոցա և անմեղութիւն. անկումն նոցա՛ի վիճակ անմահութեան, և վերատին կանգնումն՛ի յոյս, և հաշտութիւն ընդ Աստուծոյն :

» Պատմութիւնն երևելի անցից ունի զարթուցութիւն իւր և զյամրութիւն՛ի գործոց անտի արանց մեծամեծաց. առաջի մեծութեանն նկարագրելոյ՛ի Միլտոնեան բանաստեղծութեան տեղի տան ամենայն աւադութիւնք : Եւ՛ս ակարատպինքն՛ի նոսա էն բարձրագոյնք և ազնուականագոյնք՛ի մարդկեղէն արարածս, և նախանձնոցք մարդկան ազգի : Ընդ գործս նոցա համակից լինին տարերք, և զուգութիւնէ կամ զհատորնակութենէ համաց նոցա կախեալ կան հանգամանք երկրաւոր բնութեանս, և հանդերձեալ վիճակ համօրէն բնակչաց երկրի :

» Երևելիքն յայլոց գործոցաց՛ի բանաստեղծութեան՝ են այնպիսինք ոմանք, զորս չէ արժան՛ի մէջ բերել՛ի դուշ նաքեայ տեսիլս : Իակ մնացեալքն են տարբին զօրութիւնք, զայց վերջնոյն՛ի նոցանէ մարթ է շարժել զտարերքս, և

արկանել զանձամբ զսպատաղինութիւն նոցա : Եւ զօրու
թիւնք այնպիսիք՝ զոր միայն հրամանն Ամենակալին կալեալ
ունի յատկանելոյ զամենայն արարածս . . . Բացատրու
թիւնն պատճառաց և գործոց այսպիսի բարձրագոյն արա
րածոց՝ որչափ ինչ մարթ էր մարդկային բանի քննել զնո
սա , գտաւ առաջարկութիւնն՝ զոր յանձին կալաւ Միլտոնին
բանաստեղծ քաջ, և տարաւ ՚ի գլուխ :

„՚Ի քննութեան անդ Դիւցազնական բանաստեղծութեան
մանաւանդ պէտք են զննութեան հանգամանաց կամ բնա
ւորութեան անձանց : Անձինք արժանի զննութեան ՚ի Դը
րախտին կորուսեալոյ՝ են Հրեշտակք և Մարդն . հրեշտակք
բարի կամ չար , և մարդ ՚ի վիճակի անդ անմեղութեան և
յանցանաց : Յատկինութիւնս անդ հրեշտակաց Ոսփայէլ
հեզահամբոյր է , քաղցրագութ , դիւրանաց և ինքնամա
տոյց . Միքայէլ արքայակերպ և վեհափառ . . . Աբդիէլ և
Գաբրիէլ ըստ պատեհին երևին և գործեն : Առանձին հա
տատմութիւն Աբդիէլի գեղեցիկ լին ցուցանի : Այլ
առաւել ևս պէտպիտութիւն տեսանի ՚ի բնաւորութիւնս
անդ հրեշտակացն չարաց : Որպէս յուշ առնէ Ադիսոնին (1)
այնպիսի լին ընծային Սատանայի , որպիսի քաջա
գէպ են բարձրագոյն և յաւէտ ապականեալ բնութեան :
Կղարքսոս (2) ստգտեաց զՄիլտոնին ՚ի սակս հայհոյու
թեանցն՝ զոր արկանէ նա երբեմն ՚ի բերան Սատանայի .
զի ըստ ծանուցանելոյ նորա գտանին ՚ի նոսա խորհուրդք
այնպիսի՝ զոր չէ մարթ արդարացուցանել , և ոչ ոք կեր
կիւղածաց կարէ ներել նոցա անցանել ընդ միտս իւր , թէ
պէտև հարևանցի ևեթ : Բայց դնել բանս ՚ի բերան Սատա
նայի երբև ապստամբի Աստուծոյ առանց այսպիսի գժո
խային խմաստից՝ էր արդարև մին ՚ի մեծագոյն գժուարու
թեանց բանաստեղծութեանն Միլտոնի : Եւ թուի ինձ
նա քաջ իսկ զերծուցանել զանձն յայնմանէ , զի ՚ի բանս անդ
Սատանայի սակաւ ինչ գտանի անըմբերելի բարեպաշտ լսե
լեաց : Եւ չէ հնար լեզուին ապստամբութեան նոյն լինել
ընդ լեզուին հպատակութեան : Ջարութիւնն Սատանայի
փրփուրս արձակէ յամբարտաւանութեան անդ և ՚ի կամա
կորութեան , բայց բանք նորա չունին ինչ ստնանել առ ա

(1) Addison Անգլիացի : (2) Clarke Անգլիացի :

ակրատուԹեան իւրեանց : Այլ՛ի գլխաւորաց անոնց յատկա-
տամբացն երկնից քաջ ցուցանին յառաջին և յերկրորդ
գիրս : Եւ մոլեգին կատաղուԹիւնն Մողբայ նոյնօրինակ
երեւի՛ի մարտն անդ և՛ի խորհրդեան :

» Ի վիճակի անդ անմեղուԹեան այնպիսի ընծային և
մաստք Ադամայ և Եւայի, որպիսի քաջալայեըուչք են նո-
ցա : Սէր նոցա է անարատ, և լի մեծարանօք . կերակուր
նոցա անպաճոյճ, և վաստակ նոցա անաշխատ : Բանք նոցա
ընդ Աբարչին՝ զարմացման լեԹ են և գոհուԹեան : Այլ
էլք նոցա չունին զայլ ինչ խնդրել, և անմեղուԹիւն նոցա
աներկիւղ յամենայնի : Այլ յանցանօքն մոանեն՛ի նեղչս
կասկած և երկպառակուԹիւն, չարախօսուԹիւն զմիմեանց,
և կամակոր պաշտպանուԹիւն անձին : Հային ընդ երեսս
սարտուցեալ մոք, և երկնչին յԱբարչէն երբև՛ի վրէժ-
խնդիր գտանել յանցանաց իւրեանց : Այլ ինն՛ի նմին
գիր լինին ապաւինիլ՛ի գԹուԹիւն նորա, և քաջցրացու-
ցանել անձանց զարտասուս ապաշխարուԹեան : Նախապա-
տուԹիւնն Ադամայ առանձին ինն ցուցանի յառաջքան
զանկուձն և զինի :

» Յաղագս հաւանականին և զարմանալոյն՝ որք են կրկին
մասունք Դիւցազնական բանաստեղծուԹեանն . . . սակաւ
բանից պէտք են՛ի Դրախտին կորուսելոյ : Բովանդակէ նա
զպատմուԹիւն սքանչելեացն արարչուԹեան և վրիպադր-
ծուԹեան . և յանդիման առնէ զզօրուԹիւն և զգԹուԹիւն
գերագոյն Հաստչին : Նմին իրլ հաւանականն՛ի նմա է զար-
մանալի, և զարմանալին հաւանական . և բովանդակ պատ-
մուԹիւնն ճշմարտուԹիւն : Եւ զի չեն պէտք ընտրուԹեան
ճշմարտուԹեան, յայն սակս հարկաւ գեր՛ի վերոյ գտա-
նի նա քան զամենայն կանոնս : Եւ Թէպէտ՛ի պատահական
և յարտաքին մասունս նորա գտանին ինչ ինչ արտաքոյ կա-
նոնի՝ որպէս և յամենայն ինչ մարդկայնի, սակայն բարձրու-
Թիւն չինուածոյն ողջոյն արձանացեալ կայ գեղեցկայար-
մար և անշարժ : Որպէս քաջ ծանուցանէ Ադիսոնն, այս
բանաստեղծուԹիւն առաւելեալ գտանի ըստ նիւԹոյն քան
զամենայն գերԹուածս, զի է պիտանի ընդհանրապէս և
միշտ . քան զի համօրէն աղեք մարդկան ծնունդք են Ադա-
մայ և Եւայի, և հաղորդք գտանին բարեացն կամ չարեաց՝
զոր ձգեն յանձինս՛ի նոցանէ :

» Յաղագս պատահական մասէ գերբնական զօրուԹեան

'ի բանաստեղծութենն անդր՝ որ է միւս ևս բաղմաքեղուծ տեղի քննողական ծանօթութեան, չեն պէտք նոյնպէս բազմապատիկ բանից 'ի սմա։ Ջի ամենայն ինչ կատարն անմիջական և ակներև ուղղութեամբն Աստուծոյ. բայց այն պիտի օրինակաւ, մինչև և ոչ միոյ մասին գործողութեան բանաստեղծութեանս այլազգ ելանել 'ի դլուխ։

» Մինչդրութենքն կրկին Թուին ինձ լինել 'ի բանաստեղծութեանս։ Առաջինն բովանդակի 'ի պատմութեան անդ պատերազմին յերկինս՝ զոր նկարագրէ Ռափայէլ, և երկրորդն 'ի մարդարէական տեսլէս վոխոխութեանցն յաշխարհի՝ զոր ցուցանէ Միքայէլ Աղամայ։ Երկոքին ևս անբաժէն 'ի գլխաւոր գործողութենէ բանաստեղծութեանս։ Մինն կարևոր էր 'ի զգուշութեն Աղամայ, և միւսն 'ի քաջալերութեն նմին։

» Ա. ամբողջութեն գաղափարի բանաստեղծութեանս էն մարթ առարկել ինչ. զի ունի որոշակի և յայտնապէս զսկիզբն, զմէջն և զվաստարածն՝ որոց պէտք են ըստ Արիստոտէլի։ Զնք Թերևս քերթուած երկայնաձիգ՝ յորմէ մարթ էցէ սակաւ ինչ 'ի բաց առնուլ առանց յայտնի կրճատութեան, որպէս 'ի սմանէ։ Ո՛չ գոն 'ի սմա հանդէսք յուզարկաւորութեան մեռելոց, և ոչ մանրապատում նկարագրութեն վահանի։ Ապաքէն մարթ էր զանց առնել զնմա մասօք զարտուղութեամբքն 'ի սկզբան երրորդ, եւթնեերորդ և իննեերորդ գրոցն, բայց ո՞ր կամիցի 'ի բաց Թողուլ զայնչափ գեղեցիկ աւետրդս, և ո՞չ խակ փափաքիցէ, զի և յօրինողն Եղիսականին զնոյն արարեալ էր շնորհս առնեաց վրդու իմն ծանօթութեամբ զանձնէ։ Եւ Թերևս ոչ այնչափ յառախակի և մասդիւր ընթեռնութեամբ զայլ մասունս բանաստեղծութեանս, որպէս զայդոսիկ արտաքին յաւելուածսդ։ Եւ զի վահանն բանաստեղծութեան զուարճութենն է, որ ինչ միանգամ զուարճացուցանէ՝ չկարէ լինել առանց արուեստի բանաստեղծութեան։

» Խնդիրքն՝ Թէ արդեօք գործողութենն բանաստեղծութեանս էցէ՞ մի ճշդութիւն, կամ արդեօք մարթ էցէ սահմանել զսա տիրապէս Դիւցազնական, և ո՞ էցէ Դիւցազն նորա՝ յառաջ եկեալ 'ի վերծանողաց անոի, որք զսկզբունս դասման ձգեն յաւէտ 'ի դլոց քան 'ի բանէ անոի։ Մեր ասեմ՝ Թէպէտև մակագրեաց զբանաստեղծութենն իւր Դիւցախոհ իղուռեալ, բայց հոչէ զայն Եւզ Դիւցազնական։ Դրև-

դէն (1) ապատումս և տարապարտուց ժխտեաց ղԴուքացաղ
Թուխին Ադամայ՝ ի սակս պարտուխեան նորա : Բայց
միթէ չեկէ արժան Դուքացին թշուառանալ՝ թէպէտև ար-
տաքոյ սովորութեան Բանաստեղծից , զի յաջողուած և
առաքինութիւն ոչ են միշտ զուգընթաց միմեանց : Կա-
տոն (2) և Դուքացն Լուկանեայ (3) թէպէտև ըստ կուռն-
տիլիանոսի (4) օրինակն նորա չուն ինչ հաստատել : Ապա
եթէ պէտք են յաջողութեան , ահա պատրոն Ադամայ
նկուն գտաւ ի վախճանի , և Ադամ դարձաւ ի հնորհս
Արարչի իւրոյ . . .

„ Ջկնի գաղափարի և հինուածոյ բանաստեղծութեանն
արժան է քննել զբաղկացուցիչ մասունս նորա , զիմաստս
ասեմ և զոճ խօսից : Իմաստք բանաստեղծութեանն՝ իբրև
յայտարարք բնաւորութեան անձանց , են արդարև առա-
ւելագոյն մասամբ ընտիրք : Գեղեցիկ հաստուածք բարոյա-
կան իմաստից կամ կանոնաց խոհեմութեան դուն ուրեք
ընդ առաջ ելանեն ի մեզ . զի հին բանաստեղծութեանս
ոչ կարէ ընդունել զեղանակ մարդկային , վասն որոյ և սա-
կաւ նպաստս մարթ է նմա ընծայել ընթացից կենաց մարդ-
կան : Եւ նպատակ նորա է ամբաւնալ զմիտս յերկրաւորացս
ասեմ : Սակայն և այնպէս գովեստն առաքինի քաջութեանն՝
զոր եցոյց Աբդիէլ առանձինն ընդդէմ նախատանաց բազ-
մութեան , ի գէպ գայ ամենեցուն : Եւ սոգոտանքն Ռա-
փայէլի՝ զոր եցոյց նա ընդ խուզարկութիւնն Ադամայ ըզ-
շարժմունս մոլորակաց , քանզ մարթին ունել զտեղի ի կա-
տարեալ կենաց՝ զոր միանգամ ետուն Բանաստեղծք :

„ Իմաստքն՝ որք ըստ դիպաց ընդ առաջ ելանեն ի քա-
ղաքավարութեան անդ բանաստեղծութեանս , այնպիսի իմն
են՝ որոց մարթ էր յառաջ գալ միայն ի կարի իմն եղան-
դուն և ի զօրաւոր մտաց Միլտոնի : Որում ձեռնտու
եղեն անդադար ուսումն , և խորին հետաքննութիւն . . .
Նոյն նա զմտաւ զարթուխիւնն յընդարձակութեան անդ
իւրում , յոյր սակս և նկարագրութիւնք նորա են բազմա-
հանճար : Սովորեցոյց զերևակայութիւն իւր յանխափան

(1) Dryden բանաստեղծ Անգղիոյ :
(2) Cato Հռոմայեցի պարծիկ հռովմայեցի :
(3) Lucanus բանաստեղծ Լատին :
(4) Quintilianus ճարտասան Լատին :

թուիչս, նմին իրի և ծնունդք մտաց նորա են լսինածաւալ: Առանձին յատկութիւն բանաստեղծութեանն Միլտոնի է վեմութիւն: Եւ թէպէտ իջանէ նա երբեմն յընտիրն, այլ ոչ թողու զմեծն: Արկանէ զանձամբ զվայելչութիւն, բայց քնիկ ընթացք նորա են հակայակերպ՝ ուղղեալ 'ի բարձունս: Զուարճացուսանէ ըստ տեղւոյն, այլ առանձին քաջութիւն նորա է կրթել 'ի զարմանս: Թուի լինել քաջածանօթ բնաւորութեան իւրուհի մտաց, և ձրից բնութեանն՝ զոր ունէր առաւել քան զայլս. որ էր կարողութիւն ընդարձակելոյ զլսինածաւալն, պայծառացուցանելոյ զլուսաւորն, տոութերացուցանելոյ զմթինն, սաստկացուցանելոյ զահեղն, և մեծացուցանելոյ զահաւորն: Նմին իրի և զայնալն ալ ընտրեաց նիւթ իւրուհի բանաստեղծութեան, յորում չէր հնար բազմաբանել, և մարթ էր նմա ցուցանել զհանդիպ դէպ իւրուհի հանճարոյ՝ առանց սոգոսանաց և անտեղութեան: Երևոյթք բնութեանն, և ընթացք կենաց ոչ ընուն զախտրժակ մեծութեան նորա. 'ի նկարագրել զարարածս ըստ բնութեան պէտք են մանրախոյզ զննութեան, և յիշողութեան յաւէտ քան մտաց: Զուարճութիւն Միլտոնի էր խաղալ յընդարձակ սահմանս կարելեաց: Թատրոն գոյից անձուկ նմին էր մտաց նորա. նմին իրի արձակեաց զկարողութիւն իւր 'ի ինդիր անծանօթ աշխարհաց՝ յորս մարթ էր երևակայութեան նորա հասանել զձանապարհ: Եւ այն պէս էգիտ զզբօսանս անձին 'ի ձևացուցանել անդ զնորոդ եղանակս գոյութեան, յընծայել զնմաստս և զգործս բարձրագոյն արարածոց, 'ի հեռացօտել զդպղտնիս գժոխոց, և 'ի մտանել 'ի պարագրութիւն երկնաւորաց: Բայց անմարթ էր նմա ձնալ միշտ յօտար աշխարհս, այլ հարկ էր երբեմն իջանել վերստին յերկիր, և բանս 'ի մէջ առնուլ զերեւելեացս և զծանօթից: 'Ի չկարել անդ զարթուցանել զզարմանս վեմութեամբ մտաց իւրոյ՝ ընծայէ զբերկրութիւն արդասաւորութեամբ նորա:

» Յամենայն բանս իւր երբէք ոչ տկարանայ 'ի ընուլ ըզմիտս: Բայց պատակերք նորա, և նկարագրութիւնք տեսանց կամ գործոց բնութեան ոչ երևին լինել միշտ դազափարեալ 'ի նախագծէ անտի, և չունին զնորութիւն և զազդուութիւն անմիջական տեսութեան: Տեսանէ նա ըզբնութիւնն՝ որպէս յուշ առնէ Դրիդէն, ընդ աչնոցս գրոց. և բազում անգամ կոչէ զուսումն յօգնականութիւն ան-

ձեն։ Դրախան Էդեմայ յուշ ածէ նմա զձորն Էննայ՝ յո-
րում Պերսեփոնէ հաւաքէր զծաղիկս։ Ճանապարհ առնէ
Սատանայ ընդ տարերսդ ընդդիմամարտ, որպես Աքիլլես
ընդ Կիւանեան ժայռս, կամ Ոդիսևս ընդ կրկին յոյնս
նուաս Սիկիլեոյ՝ ի խուսափել անդ յերեսաց Քարիբդեայ
առ ձախակողմամբ նաւին։ Դիւցաբանական ակնարկութիւնք
Մելսոնեի երաւամբք եղեն սոգաւակ, զի ոչ միշտ յիշա-
տակին իրրև զառապեալս անառակս։ Բայց ընծայեն նոքա
պատմութեանն զպէսպիսութիւն, և կրեն փոփոխակի զյե-
ղուրեսն և զվիպս։

» Օրինակք նորա սակաւաթիւք են, և կարի քիչ տար-
բեր ի նմանութենէ անտի Բանաստեղծիչ՝ որք յառաջ
ընթացք գան նմին։ Եւ ոչ իսկ կան փակեալ ընդ Ոչնչ
սահմանաւ Համեմատութեան։ Յաւէտ իմն զերազանցու-
թիւն Մելսոնեի ի ընդարձակութիւն, ձգէ նա զպատկերն
հեռանալ անդր քան զսահմանն՝ որ տեղին պահանջէ։ Սո-
վին օրինակաւ Համեմատեալ նորա զնաւն Սատանայի ընդ
սկաւառակին լուսնի՝ ընդ զերկայնութիւնն գիւտիս դէ-
տական, և սքանչելեօքն որք ցուցան նովաս։

» Աւաւերութիւն բարոյական խմասից նորա քան զար-
ուց բանաստեղծիչ՝ ինքնին իսկ քաջայայտ է, և գովութեան
արժանի. զի ունի զայն ի ծանօթութենէ անտի Աստուա-
ծաշունչ գրոց։ Կանխի Դիւցազնական Բանաստեղծք վրկեալ
գոլով ի լուսոյ Աստուածային յայտնութեան՝ կարի իմն
անհնձար գան ի վարգապետութիւնս անդ առաքինու-
թեանց։ Մարթի է լինել բանից նոցա աքանչելի, այլ ոչ
ցանկալի։ Մարթի է ուսանել ի քերթուածոց նոցա զարժ-
բագոյն տասիանս արուեստից և խոհեմութեան, բայց զաս-
կաս ի կանոնաց անտի արդարութեան. իսկ զգեղեցկեան
և ոչ զմի։ Քաջայայտ իմն է ի Բանաստեղծիչ անտի խոս-
լացոյց, թէ մարթի է վարել յաւմպեաս և զօգուտն Քրիս-
տոսական ծանօթութենէ։ Խոտորնակութիւնն Աքիլեսեայ
յայտնի է ամենեցուն։ Եւ թէպէտ մարթի է Արբատան ա-
դնել զազատութիւնն Երուսաղէմի (1), սակայն քերթողն
նորա Տասս կարի իմն աւելի գաւս ի բարոյական մասին։
Իսկ ի Մելսոնիս ամենայն տողք նորա բուրեն զմաքրութիւնն

(1) Gerusalemme liberata, Երուսաղէմ ազատեալ. այսպէս
եւս բանաստեղծութիւնն Տասսոյ Խմբագրոյ։

խորհրդոյ, և զանազատութիւն վարուց. բայ 'ի միջարկու-
թենէ անտի բանից հոգւոյն ապացամբաց: Սակայն և նո-
քին իսկ բանագատին խոստովան լինել զպատահականութիւն
իւրեանց առ Աստուած. և այն՝ այնպիսի օրինակաւ, մինչև
ծանանել 'ի միտս զյարգութիւն, և զօրավիգն լինել աստ-
ուածպաշտութեան:

,, Արդեն միայն են մարդիկ 'ի բանաստեղծութեանս, այլ
նոքին են ծնողք մարդկան ազգի: Յառաջ քան զանկումն
մեծարոյք 'ի սակս արժանապատուութեան և անմեղութեան
իւրեանց, և զինի անկմանն սիրելիք 'ի սակս տապաստու-
թեան և հեղանդութեան իւրեանց: 'Ի նախկին վիճակի
անգ սէր նոցա է կաթոգին, այլ ոչ կիրառ. աստուածպաշ-
տութիւն նոցա վեմ, այլ ոչ յանձնապատաս: Յակ զինի
յանցանաց յուշանէն պչակառակութիւնն մաեալ 'ի նոսա,
և զաւարտ նորին 'ի հաճիւրութիւն միմեանց. զկորուստն
վտահութեան 'ի հնարէն Աստուծոյ, և տպա զոյգն Թո-
զութեան 'ի ձեռն տապաստութեան և ազօթից: Զվիճակն
անմեղութեան մտօք լեթ ըմբռնեմք՝ եթէ արդարև էրկ
հնարաւոր յառաջիկայ թշուառութեանս, բայց զնմանատ
և զպաշտօնն սեպհական անկելոյ և մեղանչական վիճակի
մարթ է մեզ ուսանել 'ի Քանատեղծութենէս, զի կարելոր
են մեզ: Վէմ է բանաստեղծս յամենայն բանս իւր: Պատ-
հաբ մեր 'ի նախկին վիճակի անդ վարին ընդ հրեշտակս.
և զինի անկման անմոռութեամբ և յանցանաբք իւրեանց՝ տա-
կաւին 'ի նուաստութեան անդ ոչ ունին զիշխանակ նեղուն
ազաչաւորագ. և գտանեն վերատին զշնորհս, զի ազօթք նո-
ցա եղեն լսելի:

,, Մարդկային կիրք զինի անկմանն մտին յաշխարհ,
նմին իրի տակաւ բանից ազգութեան պէտք են 'ի Դրախ-
տին կորուսելոյ: Սակայն և այնպես ոչ պակասին 'ի նմա:
Սեռական կիրք բանական բնութեանս, տագնապ խղճի
մտաց 'ի սակս պատուիրանազանցութեան, և երկիւղ գա-
տաստանի աստուածային արդարութեան՝ գեղեցիկ ինձ
նկարագրեն, և ազդուպագոյնս ցուցանեն 'ի նմա: Բայց մի
միայն է առիթն չարժման կրեցս: Վատմութիւնն է ընդհա-
նուր և առաջին յատկութիւն այսր բանաստեղծութեան.
որ ե՛ է զի նկարագրական է, և է զի տրամաբանական:

,, Զվերստութիւնս Դրախտին կորուսելոյ՝ զի չէք ինչ
մարդկային առանց վերնատոյ, գործ է յուշանել անաչառ



ԳՐԱԴԱՐԱՆ ՆՈՐ

քննութեան : Սակայն՝ որպէս յառաջի գնել անդ զգեղա-
զանգուածին Միլտոնեի, ոչ ածի ի մէջ զբնական ի բա-
նաստեղծութենէս, զի ընտրութեան գեղեցկութեանց նո-
րա ոչ լինէր վախճան, նոյնպէս ընդհանրապէս ևեթ յիշա-
ատակից զորս արժանի երևին առգուանաց ի նմա :

» Գաղափարն կամ առաջարկութիւնն Դրամատին կորու-
սելոյ ունի զայս անպատշաճութիւն, զի ոչ բովանդակէ
յինքեան զարարս և զեղանակս մարդկան : Ադամ և Եւայ
գտանին յայնպիսւոյն վիճակի՝ զորոյ զիարձ չէ հնար առ-
նուլ ուսիք ի մահկանացուացս. նմին իրի և վերծանողն
բանաստեղծութեանս սակաւուք ևևեթ գտանէ ի նմա զհե-
տաքննութիւն և զախորժակ անձին : Արդարև առնուիք
ամենեքին յանձինս զիարձ զանհնազանդութեան Ադամայ,
մեղանչեմք ըստ օրինակի նորա, և պարտիմք տապաստալ
զյանցանս մեր, ունելք հանապազ գարանակալ թշնամիս
զանհնալ հրեշտակս, և պահապանս և բարեկամս զերանեալ
հոգիս, ի փրկութեան անդ մարդկային ազգի ակն ունելիք
լինել բաժանորդ, և նկարագրութիւնքն երկնից և գժոխոց
անշուշտ ի մեր սակս են, զի զնոքին ունելիք կալ՝ կամ յա-
դեաս, և կամ յերանութեան. բայց այսոքիկ ձշմարտու-
թիւնք չունին պէտս նորոգ գիտութեան : Աղեղանն ի մանու-
կական տիոց ուսանելիք զգոսա, մանուկն յառաձգին խոր-
հուրդս մեր և յընտանի զբոյցս, և կից են սովորութեամբ
ընդ համբերն ընթացս կենաց մերոց : Ջոր միանգամ գի-
տեմք յառաջագոյն, ոչ ևս ուսանիմք. և որ միանգամ ոչ
է անակնկալ, ոչ տայ զարմանս : Յոմանց ի գաղափարաց
անտի՝ զորս յանգիման առնեն ահաբկու տեսարանքս, խոյս
տամք յարգանօք, թողեալ զնոսա միայն կարևոր ժամու :
Եւ յայլոց խուսափիմք երկիւղիւ, և կամ տեղի տամք
միայն իբրև պիտանի խրատուց յուղղութիւն անձանց :
Բերկրութիւն և երկիւղ են արգասիք տիրապետ ծնունդք
բանաստեղծութեան. բայց այնպիսի պարտի լինել բերկրու-
թիւնն, զի հնար իցէ մարդկային մտաց գնել ըմբռնել
զայն. և երկիւղն այնպիսի՝ զի մարթ իցէ մարդկային զօ-
րութեան կամ քաջութեան ի դիմի հարկանիլ նմին : Ընդ-
քնութիւնն և թշուառութիւնն յաւիտենական կարի
ծանրակշիռ գտանին թևուց հանձարոյ, նմին իրի տեղի տու-
եալ մտաց ի նոցանէ՝ չատանոյ անդորրը հաւատովք, և խոս-
նաւոյ երկրպագութեամբ :

» Բայց սակայն մարթ է ծանուցեալ Աշմարտութեանց զգենուլ զայլ կերպարանս, և յանդիման լինել մտաց նոր բոզ իմն միջադրութեամբ պատկերաց։ Եւ ահա զայս եղեալ նախ յանձին կալաւ Մխլոպին, և տարաւ զայն ի գլուխ անզուգական բնդնաւորութեամբ և քաջութեամբ մտաց իւրոց։ Այր միանգամ ի միս առնու զսակաւութիւն բանիցն՝ զոր հաւատ նա յԱստուածաշունչ գրոց, ուրիշ աբանչեալ թէ զնարդ ազդուպատչիս ձգեալ նա զնաւսին յայնչափ ընդարձակութիւն, և ի պետպէս յերանական զգուշացեալ և յանչափութենէ կեղծեաց ի ժեծարանս Կրօնին։ Գտաւ նի ի բանասեղծութեանս Աշգրեա հանդէս միացեալ զբութեան ուսման և բնական հանճարոյ, որպէս և բազմամեայ կատարութիւն նիւթոց եգելոյ ի կարգի քաջ գաւառաց, և զգելոյ ընդ միւանս հզօր երևակայութեամբ։ Մխլոպին ձարտար գտաւ յընտրել անգ ի բնութենէ, ի պատմութենէ, ի նախնի առասպելոյ և յարդի գիտութեանց զկարևորսն ի պայծառացուցանել կամ ի պճնազարդել զնորհնարդս իւր։ Համբալք ծանօթութեանցն բեզնաւորեցին զմիտս նորա՝ որ յառաջ իսկ մակարդեալ էր ուսմամբ, և ուռճացեալ երևակայութեամբ։ Վասն որոյ իրաւամբք ասաց մի ոմն ի գովեցս նորա, թէ ի վերծանել անգ զԿրթական կորսուեալ ընթերցուածք գմտաւան համբերն վիպասթեանց։ Սակայն չէր հնար գործման մտաւոցա նել սկզբնական թերութեան նորա . . . (1)

» Ա՛իս և անպատշաճութիւն բանասեղծութեան Մխլոպին է անկարութիւնն նկարագրելոյ զգործողութիւնս հզօրս։ Տեսեալ նորա, զի աննիւթականութիւնն ոչ ընդոյզ նմա պատկերս, և ինքն ոչ կարէ յանդիման առնել զգործս Հրեշտակաց՝ եթէ ոչ ի ձևս գործարանաց, զգեցուցանէ նոցա զմարմին և զնշանակ . . . Բայց ոչ քաջ միաբանի նա զբանասեղծութեան իւր ընդ իմաստասիրութեան։ Պիժոխային և երկնային զօրութիւնքն է զի հոգիք են անմարմին, և է զի մարմնիք հոգեկիր։ Ա՛յն ինչ Սա-

(1) Ա՛ընդհանուրին ճառելի վերծանողս (առ Ճօնսըն, Համ ծանօթարար նորա) որթ առաւել ընթրեն զանհամարութիւնս առասպելս զոր փան գտաղորութիւն Դրախտին Կորսուելոյ, լսանի ինչ նոյնպէս զուգաձնել գյորթ նորա։ Ա՛նք ի պիրապէս իմանալ զայն՝ պէտ է ցնկեր շատ խիտ մտերմութեան, վնէմարեան և լուսաժայռութեան մեծ՝ որպիսի էր Մխլոպէն։

*տանայ նիզակ ՚ի ձեռին ընթանայ ՚ի վերայ հիւլեանոզական հաւտին, է նա մարմին. և այն ինչ յանցանել նը ընդ միջ դժոխոց և նորոյ աշխարհիս՝ կայ ՚ի վտանգի ընկղմելոյ ՚ի դատաստուածեան անդ, և շոգիքն ամբարձեալ ՚ի վեր ունին զնա, ունի դարձեալ զմարմին. իսկ ՚ի կենդանացուցանել զդոլան՝ թուի լինել հոգի, որում մարթ է ընդմատնել ՚ի նիւթն ըստ հաճոյս. և յընդոստանուլ նորա ՚ի նոյն կերպարան՝ պարտ է ունել զնմա մարմնոյ: Եւ ՚ի յանդիման լինել նորա Գաբրիէլի՝ ունի ՚ի ձեռին զնիզակ և զվահան, զորս և մարթացաւ թագուցանել ՚ի գորան. սակայն զէնք հրեշտակացն չարաց էին նիւթական: Խուժանն Պանտեմոնի՝ թէպէտև անհամար բազմութեամբ, սակայն գոլով անմարմին՝ կան յընդարձակի ՚ի միջոցի անդ. բայց ՚ի պատերազմին ՚ի պարսիլ նոցա յերեսաց լերանց՝ սպառազինուցին թիւն նոցա պատճառ եղև ընաւս, և զէնքն գտեալ յանցանօք՝ մնին ՚ի մարմինս նոցա յանցանօք: Ջնոյն է տեսանել և ՚ի սուրբ հրեշտակն՝ որք պարտեցան ՚ի սակս զինուց նը. եանց. զի անզէն գոլով դիւրաւ մարթ եղև նոցա երթև հոգւոց խուսափել՝ ամփոփեալ կամ տեղւն տուեալ: Սակայն և այնպէս տակաւին ոչ են հոգեղէն. զի ամփոփումն կամ տալ զտեղի՝ պատկերք են նիւթոց... Ուրիել յընթանալ նրբուամ ՚ի ճառագայթի անդ արեգական՝ է նիւթեղէն. նոյնպէս և Սատանայ յերկինչէլ անդ յերեսաց զօրութեան Աստուծոյ... Ընդհանութիւնն հոգւոյ ընդ մարմնոյ ՚ի պատմութեան անդ պատերազմին յերկինս՝ ունի զանպատշաճութիւն նը ՚ի բանաստեղծութեանս...*

*„Զինի գործոց աննիւթական անձանց՝ զորս չէ մարթ յանդիման առնել, ինոյ մեզ քննել զայլաբանութիւն անգոյից: Մեծացուցանել զպատճառան յարարողս անդ, կերպարանել զվերացեալ գաղափարս, և կենդանացուցանել զնոսա աղդութեամբ նմին՝ են գործք բանաստեղծութեան: Բայց այսպիսի այլաբանութիւնք զինի կատարման պաշտամն նրբեանց պարտին առնել տալ վրութիւն: Օրինակ նմին՝ Համբաւն պատմէ մեզ զառաստելս, և Յաղթութիւնն հովանի լինի զօրավարին, և բազմեալ կայ ՚ի վերայ դրօշակի նորա. բայց երկոքին ևս չկարեն առնել ինչ գործել: Վասն որոյ ընծայել նոցա զպաշտօն կամ զգործ նիւթական՝ ոչ է այլաբանել զնոսա, այլ յաւէտ տգիտասիրացուցանել զմիտս ընթերցողին: Եւ Թէպէտ տեսանեմք ՚ի Պրոմէթէոսն*

Եպիւղեայ ՚ի թատրոն ածեալ զբանութիւն և զերգութիւն, և Յաակէսեան Եւրիալիդեայ զմահ իբրև դերասան, սակայն օրինակն այլոց ոչ կարէ արդարացուցանել զանպատշաճութիւնն: Այլաբանութիւնն Մելայ և Մահու՝ ի բանաստեղծութեանս է արդարև արժանի ստգտանաց: Մելքն է անշուշտ ծնող մահու, և մարթ է զերկոսին զնոսա առդնել բարեպանս դժոխոց: Բայց ՚ի խափանել անդ նոցա զճանապարհն Սատանայի՝ որ նկարագրի իբրև նիւթական, և՝ ի մարանչել մահու ընդ նմա՝ ոչ ևս ճնայ այլաբանութիւնն: Մարթ է Մելայ և Մահու ցուցանել զճանապարհն դժոխոց, բայց ոչ դիւրացուցանել զանցս նորա՝ կամուրջ արկեալ ՚ի վերայ անդնդոց. զի դժուարութիւնն անցից Սատանայի նկարագրի իբրև իրական և զգալի, իսկ կամուրջն է այլաբանական... Ընդհեթեթ այլաբանութիւնն թուի ինձ լինել մի յերևելի թերութեանց անտի բանաստեղծու-



„Մարթ է առարկել ինչ և ընդդէմ ընթացից պատմութեան բանաստեղծութեանս: Սատանայ ՚ի Դրախտի անդ ածեալ լինի առաջի Գաբրիէլի իբրև պատժապարտ, բայց անդէն արձակի անպատուհաս: Աբարչութիւն Մարդոյն համարի լինել առ՚ի ընուլ զդատարկութիւնն թողեալ յերկինս զկնա զիւնի մերժելոյ ապստամբացն. սակայն Սատանայ յի-ջատակէ զայն իբրև զնամբառ հոչակեալ յերկինս յառաջ քան զմեկնիլ նա անտի:

„Գտանել զնմանս ՚ի վիճակի անդ անմեղութեան կարի ինձ դժուարին էր Միլտոնի, նմին իբրև ուրեք ուրեք յաոաջնութիւն բանից երևի ՚ի բանաստեղծութեանս: Բանքն Ադամայ ՚ի սակս երազոյ ոչ թուին լինել նորատաեղծ մարդոյ... Ջնմանատասիրական բանս՝ մանաւանդ զոչ հասատս, լաւ ևս լինէր Միլտոնի թողուլ ՚ի բաց: Հրեշտակն ՚ի բաղդատութեան անդ բանս ՚ի մէջ առնու զերկեցոտու-թենէ էջերուն, բայց ցայնժամ ոչ էր երկեցոտ էջերուն. և Ադամ ոչ կարէր խնամատար լինել բաղդատութեանն:

„Յուշ առնէ Դրիդէն, թէ Միլտոնի երբեմն ցուցանէ գնութիւն ՚ի բարձրութեան անդ. և կամ ասել՝ թէ ամենայն մասունք բանաստեղծութեանս ոչ են միօրինակ: Սակայն յամենայն երս մի մանն կարդեալ է ՚ի պէտս այլոց: Պարտ է պատշաճութեան ունել զանցս, նոյնպէս և բանաստեղ-

ծուԹեան : Ըէ արժան խնդրել միշտ զպայծառս վայելուչն հանճարոյ , որպէս և ոչ միշտ զկայս արեգական 'ի միջօրէէ անգ : Յերևելի գործս գոանի փոփոխուԹիւն ինն լուսանցոյց և գիմահար մասանց , որպէս և յաշխարհի փոխանակուԹիւն տուընջեան և գիշերոյ : 'Ի շրջել անգ Մելսոնին 'ի հաստատուԹեան երկնից՝ արժան էր նմա իջանել և երբեմն յերկիր : Բայց ո՞ւր 'ի քերԹողաց անուն այնչափ 'ի բարձունս խոյացաւ , և կալաւ անգ ընդերկար զԹռչէլն իւր . . .

» Այսոքիկ են երևելի ԹերուԹիւնքն սքանչելի բանաստեղծուԹեան Դրախտին կորուսեալոյ . զորս եԹէ ոք կամիցի 'ի կչիռ դնել ընդ գեղեցկուԹիւնս նորա , անդէն ցուցանէ զխմամարուԹիւն անձին . որ և 'ի սակս խրտուիլն անզգայուԹեան յաւէտ արժանի է ներողուԹեան քան կըշտամբանաց :

» Մեակ պարծանք մատցն հանճարոյ է պիտան : Մեծն ոչ է գտակ Դիւցազնական բանաստեղծուԹեան : Մեծ գովուԹեան են արժանի զօրուԹիւն և ընդարձակուԹիւն մատցն Հոմերոսի . որոմ պարտական են ամենայն ազինք 'ի սակս բանաստեղծականն արուեստի 'ի պատմուԹեան անգ , 'ի հիւսուածս առասպելոց , 'ի պէտսիսուԹեան անցից , 'ի միջադրուԹեան բանից , և 'ի համօրէն հնարագիտուԹենան՝ որք կրԹեն զամենեսեան 'ի զարմանս , և յափշտակեն զմիտս : Սակայն յամենայն փոխառուածս նորա Թերևս միայն Մելսոնն է սակաւուք նմին պարտական : Էր նա ինքնահանճար 'ի բնէ , և քաջվստահ ընդ բաւականուԹիւն անձինն . նմին իրի և չկամեցաւ ընդունել զօգնուԹիւն , կամ խափան լինել յայլոց . . . Ջերևելն քերԹուածս իւր աշխատասիրեաց նա 'ի ժամանակի անգ տառապանաց և կուրուԹեան իւրոյ , այլ 'ի մատչել նորա 'ի վերջ դժուարուԹիւնքն բարձան 'ի միջոյ : Ծնեալ էր նա 'ի սակս դժուարընդել իրաց : Եւ բանաստեղծուԹիւն նորա յայն սակս միայն ոչ է գեր 'ի վերոյ քան զամենայն քերԹուածս , զի ոչ գտաւ Մելսոնն առաջին բանաստեղծ « : Յայս վայր են բանք Ճօնսընի :

# ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՄԵՐ ՅԱՆԳԱՍՏԱՆ ԿԱՆ ԲՆԱԳԻՐԸ

*Ո՛վհոյն երևելի ազինք Եւրոպիոյ ՝ի սակս Ճարտարութեան և վսեմութեան բանաստեղծութեանն լեզին զոյն ՝ի բարբառս իւրեանց յոտանաւոր և յարձակ բան, և այն բազում անգամ՝ առ ՝ի կարող լինելոյ տիրապետ ՝ի յայտ բերել զվիտս բնագրին: Յոյն սակս կամեցեալ և մեր հարազատ ընծայել ըստ կարի զհայկական թարգմանութիւնն՝ ընտրեցաք զոյն յայս առաջին նուագ յարձակ բան. զի բաց ՝ի վսեմութենէ իմաստից բանաստեղծութեանն՝ և ոճ բանից Միլտոնէի դժուարիմաց գտանի յանդղնական բարբառ:*

*Յայսմ աշխատասիրութեան՝ որ բազմաքիրտն եղև մեզ, ունէաք զառաջեաւ և զգաղղիական և զիտալական թարգմանութիւնս նորին բանաստեղծութեան ՝ի լուծումն հմանուն իմաստից ինչ և տարակուսանաց. յորս առանձին իմն զհետ գնացաք ՝ի զգուշալնան կամ ՝ի սրբագրելիս անստերիւր շաղս ցոց Յովհաննու Կունէոսի Իտալացի թարգմանչի՝ տպագրեցս ՝ի Հռոմ յամին 1822.*

*Միլտոնէ յօրինեաց զԴրախտ իւր կորուսեալ յանգղնական բարբառ յոտանաւոր տաղոտանեան անյանգ. զորոյ կամեցեալ տալ զձաշակ ինչ Հայկազանցս՝ ահա այս է սկզբնաւորութիւն նախերգանաց բանաստեղծութեանն՝ յանգղնական և ՝ի հայկական բարբառ նովին չափմամբ:*

Of Man's first disobedience, and the fruit
Of that forbidden tree, whose mortal taste
Brought death into the world, and all our woe,
With loss of Eden, till one greater Man
Restore us, and regain the blissful seat,
Sing, heav'nly Muse —

Երգեա՛ ընդուագ Մուսայդ երկնային
Նախկին յանցանաց նախասահզի Մարդոյն,
Եւ պաղոյ ծառոյն արգելեալ նըմին.
Որոյ ընդ ճաշակ եմուտ մահ յաշխարհ,
Եւ աղէտք ցաւոց կորսեամբ Ադեմայ.
Մինչ Աստուածորդին նորոգեաց ըզմեզ,
Եւ գարձոյց անգրէն յերջանիկ կայանն —

Ի լուսաբանութիւն բանաստեղծութեանս ի սեղս սէ-զիս՝ կարեւոր համարեցաք կարգել ի վախճանի զՀամառօտ ծա-նօթութիւնս։ Աւ-ել եթէ ի նոսա, և եթէ յողջոյն ընթացս հարազատ թարգմանութեանս կալաք զոհ դիւրմոյ. զի անհնար էր մեզ պահել ի նմա զընթերց հայկաբանութիւն՝ ի սակս կարի ինն տարբերութեան անգղիական բարբառոյ ի մերմէս։ Եթէ թարգմանեալ էր մեր զայն յոտանաւոր բան ըստ բնագրին, թերեւս առաւել քաղցրանայր բանաստեղծու-թիւնն Միլտոնի ի քիմս Հայկազանց. այլ թողաք զայն այլոյ ժամանակի, և այլոյ ձարտարոյ։ Աւ-ժամն ակն ունիմք շահառնել նոցա խնամատիւքն ևեթ, և ընթեռնուլ զայն՝ ոչ միայն ի զբօսանս մտաց, այլև յարգասիս հոգւոյ։ Յայլ սակս և ի թարգմանութեան անդ բանաստեղծու-թեանս թողաք ի բաց զՀատուածս ինչ բանից՝ որք կամ արտաքոյ էին ողջամիտ վարդապետութեան, և կամ ոչ այն-չափ ի գեղ մաքրասէր լսելեաց։ Խակ զայլ կէղծս նորա դիւրաւ մարթի է ընծայել բանաստեղծական հոգւոյ։ Եւ որպէս գեղեցկիս ասէ Հովրատիոս (1) — ի բանաստեղ-ծութեան անդ՝ որ լինի է լուսաժպտութեամբ, արժան է առ ոչինչ գրել զգուշնաքաշ բիծս —։

Աչսչափ ինչ ի յառաջաբանութիւն Դրախտին կորու-սելոյ. զայլ կարեւոր գիտելիս դիցուք ի ծանօթութիւնդ։

(1) Horatius Լատին բանաստեղծ ի գիրս Բանաստեղծական ար-ուեստի։

# ԳՐՔԱԽՑ ԿՈՐՈՒՍԵՔԱԼ

ԳԻՐՔ· Ա·

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ (1)

Ազատին վիրքն յանդիման առնէ նախ ի կարճոյ վերտառութեանն, զի՞արդոյն առեալ պատասխանատուութիւն, և զկորուստ Դրախտին յայն առիս: Ապա անցանէ ի գլխաւոր պատճառն անկմանն Ադամայ, որ էր օձն, և յաւէտ Սատանայ ի նմա: Որոյ ապատամբեալ յԱստուծոյ, և ձգեալ զինն իւր զգաստութիւն գիտից Հրեշտակացն կամ՝ վարեցեալ յերկնից յանդունդս ընդ խաւարային իւրոյ: Յառաջ ընթացեալ բանասաւեղծութեանն՝ ցուցանէ զկատարեալ նորոգ անկեալ ընդ Հրեշտակացն ի գիտիս. զոր և նկարագրէ ոչ ի կենդանի երկրիս (զի համարի զայն առաւել ոչ առեղծեալ) այլ ի անզգալ ուրեք արարչին խաւարի՝ երեսամբք կոչեցեալ Աստուածդ կամ Վիհ: Ապրանօք յորոյս անկեալ Սատանայի ընդ հրեշտակացն ելոյց ի վիշապ կիզանոզական լճին՝ շանթահարեալ և յապշտութիւն կրթեալ, զինի սակաւուց գառնոյ յուշ իւր անթմանելիս: Զայն ասց նմին՝ որ անկեալ կայր առընթեր, և էր երկրորդ նորա քան կարգի և քան պատուոյն: Բանս ի մէջ առնուն ի միասին յաղագս ոտրմի կործանման իւրեանց: Զարթուցանէ ապա Սատանայ զանձնայն զգաստութիւն՝ որպէս ցայնժամայր տապատառ անկեալ կային նոցին օրինակ ամենատապար: Յառնէն նոքա. թէպէտ, ճակատ մատաղ, և անուանէք երևելի զբաժանեալ նոցա՝ քան անուանդ կառոյն յայտնելոյ զինն ի Քանան, և ի սահմանս նորա: Ուզղէ Սատանայ զան իւր առ նոսա, և քաջալերէ ի յոյս վերստին գտանելոյ զերկինս: Եւ ապա ծանուցանէ նոցա զհանդերձեալ պարչութիւնն աշխարհի և նորոգ պարագոյ՝ քան զառնելոյ մարգարէութեանն կամ հմայուածոյ յերկինս (զի քան կարճեալ յոգուածի նահանջի Հարց՝ Հրեշտակք բազմաք յառաջագոյն առեղծան քան զերեւելի պարագս): Ջատուգութիւն մարգարէութեան, և զնուրհնուրդն ի նոյն սակս՝ ձգէ նա ի ժողով հատարակաց: Փոյթ պնդութեան միաբանելոյն ընդ նմա ի նոյն սակս: Կանգնի Պանդխտին առաջի Սատանայի, յանկարծակի կառուցեալ յանդնգաց անտի: Խաղին անդ ի ժողով աւագանին զժոխոց:

(1) Նախագրութիւնք բանասաւեղծութեանս Ածգ պնացուց:

# ԴՐԱԽՏ ԿՈՐՈՒՍԵԼՈՅ

## ԳԻՐՔ Ա

ՈՎ մարդոյն զառաջինն անհնազանդութիւն, և զպտուղ արգելեալ ծառոյն՝ որոյ մահաբեր ճաշակ եմոյծ յաշխարհ զմահ, և զհամբերն աղէտս մեր կորաւանդն Աքինայ, մինչև ցնորոգել զմեզ Գառ բազումն [1], և վերստին ստանալ զկայրն երա-նաւէտ [2], նուագեա Մուսայդ [3] երկնային. որ ի գաղանի գազաթան Հորեբայ կամ Սինայ [4] ազ-դեցեր հովուին [5], այնմ՝ որ ուսոյց զառաջինն ըն-տրեալ զաւակին [6], թէ զիարդ ի սկզբանէ երկինք և երկիր ելին յանդնդոց [7] ի վեր։ Կամ՝ եթէ լեառն Սիոն [8] առաւել ըղձալի է քեզ, և զեան Սիլոամ [9], որ հոսեր առընթեր պատգամին Աս-տուծոյ՝ անդուստ կարգամ զօգնութիւնս քո յանդ-դուն երգոյս, որ ի բարձրագոյն Թռիչս ձգտի խոյանալ ի վեր քան զլեառն Ջանեան [10], այն ինչ զհետ կրթի չև ևս փորձելոյն ի շարագիրս կամ ի չափաբերեալ բան։

ԱՅԼ դու յաւէտ սիրբ Հոգի [11] որ առաւել քան զառաքեալս ընտրեաս զսիրտ ուղիղ և մաքուր,

ուսա՛ ինձ, զի պիտակ ես ինքնին. դու՛ ի սկզբանէ անդ էիր, և հզօր թեւոյդ տարածմամբ ապաւնա կերպ տածեցեր զանդունդս՝ ածեալ յարգասա տուրութիւն [12]: Որ ինչ միանգամ խաւարային է յիս, լուսաւորեա. և որ ինչ ստորին, ամբարձ՛ ի վեր, և կալ. զի՛ ի բարձրութեան անդ մեծի առա ջարկութեանս կարող եղեց Աշգրտել զյաւիտենա կան նախախնամութիւնն, և արդարացուցանել մարդկան զձանապարհս Աստուծոյ [13]:

Աստ նախ՝ զի երկինք չծածկէն ինչ յաչաց քոց, և ոչ սանդարամետք անդնդոց. ասա՛ նախ զպատ ճառն՝ որ՛ ի վիճակի անդ անմեղութեան այնչափ իմանալիք եալ Աստուծոյ, զրգռեաց զնախա հարս մեր անկանել՛ ի բաց Աստուածմէ, և ի բարկն իւրեանց. և ստունգանել կամաց նորա՛ ի սակս միոյ ևթ պատուիրանին՝ թէպէտև կարգեալ էին իշխանք աշխարհի: Ո՞ զատաչինն ձգեաց զնոսա՛ ի չամ բուշդ վատանդութիւն: Ա՛ իշխն անդնդային. որոյ խորամանկութիւն զրգեալ նախանձու և քի նախնդրութեամբ՝ պատրեաց զԱդամն մարդկան ազգի, յորժամ ամբարտաւանութիւն նորա ընկէց զնա յերկնից զօրաց հանդերձ Հրեշտակացն ապստամբաց: Որոց օգնականութեամբ ցանկա յեալ զերազոյն փառաց՝ եդ՛ ի մոլ գալ՛ ի կշիռ ընդ Արարչէն՛ ի հակառակել նորա. և այնպէս փառասէր մտօք և մտոք Ադամն յարոյց յերկինս զանօրէն մարտ և զյանդուգն պատերազմ ընդ դէմ աթոռոյ և միահեծան տէրութեանն Աստուծոյ: Օ՛ նա Աստուածային զօրութիւն ընկէց զահա վիճ յերեքականն երկնից ահագին կործանմամբ և բոցակիզմամբ՛ ի կորուստն անյատակ, կալ ան

դանօր յաղամանդեայ շղթայս և ՚ի տանջարանն
հուր · փոխանակ ոչ իշխեաց զրզռել ՚ի գին զՔ·
մնռազօրն ։

Ընդ լինելոյ շրջան ժամանակի՝ որ չափէ մահ
կանացուացս զոմն և զգիշեր [1], անկաւ նա ընդ
սոսկալի խուժանի իւրում՝ յաղթահարեալ և առ-
Թալից, Թաւալգլոր ՚ի հրեղէն անդունդս, Թէ-
պէտև անմահ ։ Իսկ զառաքինիքն նորա պահեաց
զնա յառաւելագոյն կատարած Թիւն · քանզի արդ
տագնապէն զնա կրկնակի խորհուրդք երջանկու-
Թեանն կորուսեալ, և մշտատև տանջանաց ։ Յա-
ծեցուցանէ շուրջանակի զոմբարակին աչս իւր՝ որք
յուցանեն զանհնարին ցաւս և զզարհուրանս խառն
ընդ կամակոր ամբարտաւանութեան և սիերիմ
տեսլութեան ։ Իսկ ըստ բացահայեաց տեսութեան
Հրեշտակաց անդէն նշմարէ զոսկալի վայրն ա-
մայի՝ բամո ինչ ահագին և բոլորաձև իբրև զՀր-
նոց բորբոքեալ ։ Իսկ ՚ի բոցոյ անտի ոչ լոյս, այլ
խաւար տեսանելի ձեռնտու լինի նմա ՚ի նշմարել
զոեսիլս ազիտից, զսոսկալիս վշտաց և զատելիս
ցաւոց ։ Զիք անգամօր տեղւոյ խաղաղութեան և
Հանգստեան, և ոչ մեռաք յուսոյ՝ որ ամենայն ու-
րեք ունի զտեղւոյ, այլ տանջանք անվախճան, և
Հեղեղ անծայրական հրոյ պարարեալ միշտավառ
ծծմբով տագնապեն զնա Հանապազ ։ Օ այսօրիկ
նակ պատրաստեալ էր տեղւոյ արգարութեանն յա-
ւիտենական ապստամբացս այսոցիկ ։ Իսկ տանջօր
կարգեալ զամանս նոցա ՚ի խաւարն արտաքին · և
զբաժին նոցա եդեալ էր այնչափ հեռի յԱստու-
ծոյ և ՚ի լուսոյ երկնից, որչափ երկիր ՚ի բացեայ
և կենդանի երկրիս ՚ի վերջին բևեռէ անտի ։ Ալ

քանի՛ տարօրինակ էր տեղին՝ յորմէ անկանիս։ Ո՛չ զէն և անդ տեսանէ՞ս զընկերս իւր կործանեալ և ընկղմեալ ՚ի մըրկալից հեղեղ ալէտանջ հրոյն, և զոմն առընթեր իւր Թաւալական՝ որ էր երկրորդ նորա ՚ի զօրութեան և ՚ի յանցանս, զկնի ժամանակաց յայտնեալ ՚ի Պաղեստին, և կարգաւ ցեալ Ա՛ղեզբեռ[15]։ Ո՛ր սկզբնաչար Թշնամին՝ յայտնէ՞ս անաւանեալ Սատանայ[16], լուծեալ զահագին լուծիւնն՝ սկսաւ ասել խրոխտ բանիւք օրինակ գայթ։

Ա՛րդարև նայն ինքն իցես դու. այլ աւա՛ղ՝ զկարդ կործանեալ, և զիո՛ր կարդ այլափոխեալ յայնմանէ՝ որ յերջանիկ Թագաւորութեան անդ լուսոյ չքեղազարդեալ գերասանդ փառաց՝ պատեալ քան զբիւրաւորս ՚ի լուսազգեստին արտափայլեիր։ Վա՛յ նա ինքն իցես՝ զոր դաշնակցութիւնն ընդ միմեանս, միաբանութիւն խորհրդոց և մտաց, հաւատարմութիւն յուսոյ, և դիմագրաւ շահատակութիւնն կապեցին երբեմն ընդ իս, և այժմ կաս պեաց թշուառութիւնն ՚ի նոյնօրինակ կործանմանն։ Ո՛ր խորխորատ գտանիս, և յորմէ բարձրութենէ անկեալ։ Ա՛յնքան այսչափ հզօր ցուցաց նա ՚ի շանթս իւր։ Ո՛ւր ցայժմա՞ւ զիտաց զզօրութիւն ահագին զինուց նորա։ Ա՛կայն ո՛չ վասն սոցին, և ո՛չ վասն այլոցի՝ զօրս միանգամ մաքրեի, հզօր յաղթականին Թափել յիմ վերայ ՚ի սրատմութեան անդ իւրում, ապաշաւեա՞մ ես, կամ փոխեա՞մ (Թէպէտև փոփոխեալ ըստ արտաքին լուսափայլութեանս) գնաստատուն միտս իմ, և զանհնարին վրէժխնդրութիւնն՝ զոր յանձին կրեա՞մ ՚ի սակս զրկանաց խնդոց արժանեաց. որ և ետ ինձ

'ի վեդ գալ ընդ Ա՛ստուածոբէն , և ձգեաց ընդ նա 'ի գոռ պատերազմ զանթիւ բազմութիւն զօրաց սպառազինացն հոգւոց : Ա՛յլք իշխէին անդամանել զթագաւորութիւն նորա . և զնա նախամեծար ընտրեալ 'ի գիմի հարան հակառակ զօրութեամբ վերջին զօրութեան նորա 'ի կեզակարծ մարտի անդ ընդ գաշտավայրս երկնից , և սատանեցուցին զաթոռ նորա [17] : Դ՛ու զինչ , եթէ կորուսաք զնա կատաղարան . ա՛յ կորեաւ ամենայն ինչ ընդ նմա : Տակաւին կան ինձեան անմուաձելի կամք , փոյթ վրէժխնդրութեան , անմահ ատելութիւն , և քաջութիւն սրտի անբնկձելի : Դ՛ու զինչ այլ իսկ անպարտութիւնն : Օ՛այդոսիկ պարծանս իմեամն անձին՝ սրտմտութիւն նորա կամ զօրութիւն երբէք ա՛յ հանգիւ կինէն : Ի՛ջանել 'ի ծունկս ազատարար 'ի խնդիր թողութեան , և սատուաճացուցանել զզօրութիւն նորա՝ որ սակաւիկ մի յառաջ խնամ ընդ ինքնակալութիւն իւր չերեսաց այսր բազկի , ապաքէն լինէր մեզ նուաստութիւն , նաև յաւելուած և ամօթ խոնարհագոյն քան զանկումն : Ա՛յժ քանզի ըստ հակատագրին [18] չէ հնար կորն չիլ զօրութեան Ա՛ստուածոյ [19] , և հրեղէն գայթագութեան . և զի 'ի փորձոյ անտի ահագին ելիցին չեմք ինչ 'ի զինս վատթարագոյն , և առաւել քաջակրթեալ եմք 'ի նախահայեաց զգուշութեան , մանրել և մեզ ասպ բարերաստիկ ևս յաւուրս հնաւտատել զմիտս առ 'ի տալ քաջութեամբ կամ խոնարհութեամբ զմարտ պատերազմի անհաշտելի և յաւիտենական ընդ քաջագոյն թշնամիդ մեր՝ որ այժմ յաղթանակէ . և յաւուրս ելութեան անդ իւրում ինդուլթեան թագաւորեալ

առանձինն՝ զբաւեալ ունի զբռնակալութիւնն երկնից [20]։

Ո՞յսօրինակ խօսեցաւ Հրեշտակն ապաստամբ, մեծամեծս պանծացեալ՝ թէպէտև՝ ի տանջանս, և կարի ինն տաղտապեալ յերեսաց անյուսութեան։ Այլ ընդէր նորա խրոխտասլանիկ անդէն արար նմա զայս պատասխանի։

Ո՛վ իշխան և պետ բազմաց դահակալ զօրութեանց. որ առաջնորդեցեր Ձակատամարտ Աւրով բռիոյ ընդ քոյով ձեռամբ. և անվհեր յահագին հանդիսի՝ արկեր ի վտանգ զիշխանութեանդ աջքայն երկնից, մատուցեալ ի փորձ գերազոյն դահակալութեան նորա, թէ արդեօք զօրութեամբն իցէ հաստատեալ, եթէ դիպուածով կամ Ձակատագրով։ Վասն որոյ տեսանեմ ես, և ցաւ է ինձ ընդ անցս աղետիցդ՝ որք ետուն մեզ ահագին կործանմամբ և սաստիկ հարուածովք կորուսանել զերկինս. և զչզօր զինուորութիւնդ արկին յապականութիւն այնչափ ստորին՝ որչափ մարթի էր կորնչել Ոստուածոց և երկնային գոյացութեանց։ Վասնզի միտք և կամք մեան անպարտելի, և զօրութիւնն տկարացեալ անդրէն դառնայ փութանակի. թէպէտև ամենայն փառք մեր շնջեալ կան աստանօր, և վհձակն երանութեան ընկղմեալ յանեզրական ազէտս։ Այլ զինչ, եթէ յաղթականն մեր՝ զոր արդ յակամայս խոստովանիմք լինել ամենազօր (զի ոչ նուազագոյն ոք կարող էր յաղթել այսպիսեացն զօրութեան՝ որպիսի և մեր) եթող մեզ անթերի զչոգիս և զզօրութիւն՝ առ աստակազոյնս կրելոյ զցաւս. զի սովին օրինեալ կաւ յաղուդդ ընծայեսցուք վրէժխնդիր բարկու-

Թեան նորա . և կամ ուժգնակի արկցուք նմա զպատս ծառայութեան իբրև զգերիս նորա կալեալ ի մարտի . և զանհնայն հրամանս նորա կատարեցուք աստանօր ի հուր ի սիրտ դժոխոցս . և լիցուք պատգամաբերք նմին ի խաւարազգած անդունդս : Ա՛րդ՝ ընդ ինչ օգուտ է մեզ ունել տա կաւին զանհնարաւոր գործութիւն, և զիշատուն գոյութիւն, եթէ անկեալ կամք ընդ յաւիտենական պատժովք :

Որում նախկին թշնամին էտ փութանակի զայս պատասխանի : Ընկեալ Վիրաւորէ՝ տակաւութիւնն է թշուառութիւն յառնել անդ կամ՝ ի կրել : Բայց լաւ է հաւատալ, զի առնել զաւերին չունի երբէք քաղցրանալ ի քիմն մեր , այլ միայն չանձուածութիւն մեր հանապազ հանդերձեալ է լինել դործել զարիս , իբրև հակառակ ինչ կամացն նորա՝ որում հարկանիմք ի դիմի : Ա՛րդ՝ եթէ նախատինամ տեսչութիւն նորա խնդրի յաւաջ ածել ի չարեաց անտի մերոց զարիս , վաստակոց պէտք են մեզ առ ի թիւրել զնպատակ կամացն նորա . և ի նոցունց խակ ի բարեաց գառնել զկեղծանակ չարեաց : Որում մարթի է պատահել բազում անգամ. մինչև՝ եթէ ոչ վրխալիմ, երկիւղացանել զինս , և զգաղտնի միտս նորա խոտորեցուցանել ի նպատակէ իւրեանց : Բայց ապէ հայեաց , զի յաղթականն սրտմտեալ կոչեաց անդրէն ի գրոնս դժոխոց զհետամուտ պաշտեանայս իւրումն վերիվինդրութեան. կարկառեան ծծմբալից՝ հոսեալ մրրկասաստն գինի մեր , առեալ տուեալ՝ հանդարտեցոյց զներեղն կոհակն , որք ի վախից անտի երկնից ընկալան զմեզ զանկեալքս , և որոտումն՝

Թևաձգեալիկ բոցակարմիր փայլատակամբ և սև-
հնարին սրամտութեամբ՝ զոզոյս սպառեալ ըզ-
նետս իւր, և կայ աւազիկ դադարեալ ի մէնջէ-
ւոյ ընդ լայնածաւալ և ընդ անեղծական անդունդ
ղբս։ Ընդ մի՛ թողցուք ի ձեռանէ զքաջագէպ
պատեհութիւնս, եթէ անհոգութիւն թշնամւոյս,
և եթէ յազուրդ սրամտութեան նորա ընծայի
մեզ զայն։ Տեսանեմ յայն կողմն զսոսկալի վայրդ
անյոյս և խոպանացեալ՝ զդաշտդ ասպականու-
թեան, անմասն ի լուսոյ, ի վերոյ տխուր և
աչարկու փայլմանն՝ զոր աղօտագոյն նշոյլ նահ-
մապատ բոցոյս արկանէ ի նա [21]։ Ընդդէմ դիմես-
ցուք հեռագոյն ի բաղխմանէ աստի հրեղէն ալ-
եացս. և հանդիպեալ անդամօր, եթէ գոցի անդ
տեղի հանգստեան։ Այս վերստին ժողովեալ զվըր-
տատես զօրութիւնս մեր՝ խորհրդով կալցուք ի
միասին, թէ ի՞նչ մարթասցուք յայսմհետէ առա-
ւել ևս ստանալ մերում թշնամւոյ. զիարդ զըտ-
ցուք զկորուստ անձանց. զինչ հնարս հայթայ-
թեսցուք ահագին աղետիցս, և զո՞ր թիկունս օգ-
նականութեան յանձինս ձգեսցուք ի յաւոյ ան-
տի։ Ընդ թէ ոչ՝ զո՞ր ձանապարհ կալցուք յերե-
սաց անյուսութեան։

Ինդեռ զայսօրինակ խօսէր Սատանայ ընդ
մերձակայ ընկերի իւրում՝ ունելով զդլուխն ի
վերոյ քան զալիսն, և զսչեն փայլակնացայտ, մեռ-
ցեալ մասունք մարմնոյ նորա սիրեալ երկայնա-
ձիգ և լայնատարած ընդ բազում ասպարէզս ի
վերոյ հեղեղին՝ կային ի տատանման։ Ի վեր-
խարութեան անդ ոչինչ ընդհատ էր նա ի նայե-
նի՝ զորս առ անդիմելի մեծութեան հատակին

առասպելքն կոչեն Ջհանահաս [22] կամ Երկրաշժիս [23], որք ի մարտ կբրեցան ընդ Բասանազպայ [24]· Իրիարիս [25] կամ Ջիւփան՝ [26] զոր քարանձաւն առեալ նախնոյն Տարանի [27] ժողովեաց առ ինքն· Նա կամ վիշապն Ծովու Լևիաթան [28], զոր առեղծ Աստուած մեծամանրմին քան զամենայն կիսա՝ որք լողան ի հատանն Հվկիանոս [29]· Ոմն՝ մինչդեռ ըստ դիպաց ինձեալ կայ ի վերոյ Նոր վիպեան [30] Փրիրոյ [31], զեկավարն կիներատանջ նաւակի Տանարեալ կղզի, բազում անդամ՝ որ պէս նաւաստիքն քարոզեն, խարխափ արկեալ ըզԹեփալից պատենիքն՝ Հանդչի առ կողիւք նոցա, պատապարեալ յերեսաց Հողմոյն՝ այն ինչ գիշերն պատեալ ունի զծով, և առաւօտն ցանկալի անաչ գանէ· Ոմն այսօրինակ տարածեալ կայր նախկին Թշնամին՝ պնդեալ չղԹայակաւ ի վերոյ կիզմտոյ զական ընկեն· Նա չէր երբէք կանգնեալ անտի, կամ զգլուխ իւր ամբարձեալ, եԹէ կամքն և վիրսն Տրամանն Ալինակալին չէր Թողեալ գնա յառաջիւն Թշնամանն զոր Թողեալ գնա յետս. զի կրկնապատկեալ գյանցանս՝ բարդեսցի յիւր վերոյ գինիքն գատապարտութեան, ի խնդրել անդ զարիս այլոց· Նա ի զայրոյթ սրտի իւրոյ գիտասցէ, Թէ գնդրդ չարութիւնք նոցա ոչ յայլ ինչ պիտս եղեն ձեռնտու, բայց յառաջ ածել զամբաւ բարիս, զնորն և զողորմութիւնն ցուցեալ ի վերոյ Արարչէն զոր պարտեաց· և յիւր վերոյ հեղան երկակի անԹ, սրտմտութիւնն և քէն վրիժուց [32]·

Կանգնի փութանակի ի ընդ անտի զսոսկալի հասակ իւր· Ընդ երկաքառմիք ձեռաքն բոցքն ձգեն

չեալ՝ խոնարհեցուցանէին զչեշտակի բրգունս իւրեանց. և ոլորտացեալ ՚ի կոհակ՝ Թողուն ՚ի մէջ ի զհովիտ ահագին։ Ուղեալ ասպ Թևատարած զթռիչս իւր ՚ի վեր՝ բազմի ՚ի վերայ խաւարամած օդոյն, որ յանձին զգայ զծանրութիւնն տարօրէն նակ. մինչև էջ նա ՚ի վերայ ցամաքի՝ եթէ արդարև էր նա երկիր ցամաք, գոլով մեծաւաւտ անլուծականս հրով՝ որպէս լերն լուծականատուն։ Իր և ըստ գունոյն այնպէս ինն էրևէր, որպէս լեառնն՝ զոր բռնութիւնն ստորերկրեայ հողմոյ առեալ տանի խլեալ ՚ի Պեղոբայ [33]. և կամ պատառեալ կողմն որոտընդոստան Լանայ [34], որոյ կիզանուտ և ջերատած ընդերք ընկալեալ անդուստ զհուր, և ամբարձեալ ՚ի վեր հանքայինն ուժգնութեամբ՝ ձեռնտու լինին հողմոյ. և Թողուն պատակն խանձողեալ՝ մածեալ համբուն ՚ի հոտ գարշութեան և ՚ի ծուխ։ Օ այսօրինակ գոլն զտեղի ահատանի գարշապարքն ոտից չուառականին։ Օ կնի նորա չոգաւ ընկերք նորա ՚ի երկրորդ. երկոքին ևս պանծացեալ ընդ փախստական իւրեանց ՚ի Սիւգեան [35] հեղեղ՝ զոգեկս աստուածանմանն և վերանոզոզ զօրութեամբ իւրեանց, այլ ոչ Թոյլատուութեամբ վերին զօրութեան։

Իլեթ այս իցէ գաւառն՝ ասաց յայնժամ Հրեշտակապետն կորուսեալ. մի՛թէ այս իցէ նահանգն և երկիրն, և այս տեղին՝ զոր պարտ է մեզ փոխանակել ընդ երկնից. և զայս տխրագին աղջամուղջ ընդ երկնայինն լուսոյ։ Այո՛ չէ ինչ. զի որ այժմ իշխէ, կարող է հրամանն տալ ըստ հանգոյս կամացս իւրոց։ Սակայն սրչափ հեռագոյն գտանի ոք ՚ի նմանէ, լաւ ևս վկնակի է հասեալ. զոր

բանն կացոյց հաւասար, և քաջալերիչն դերազոյն
հանդիսացոյց քան զընկերս իւր [36]։ Ինասջիք սրտ
խաղաղութեամբ գաշտաւայրդ երանութեան,
ուրանօր բնակիլ խնդութիւն անծերանալի։ Ող-
ջոյն արհաւրացդ, ողջոյն սանդարամետական աշ-
խարհիդ. և դուն անդնդայինդ դժոխք ընկալ զը-
քոյդ նորահնար ժառանգ՝ որ բարձեալ բերիր յան-
ձին զմիտս անպրկռելի յերեսաց տէրոյ կամ ժա-
մանակի։ Ինաբեր ի իւր ինքեան տեղի. և յին-
քեան կարող ի յեզափոխել զերկինս ի դժոխս,
և զդժոխս յերկինս։ Օ՛ի՞ փոյթ ի, ինձ վասն տեղ-
ւոյ, եթէ, ես տակաւին նոյն եմ։ Ոչ զինչ լինել-
լոց էի յերկինս։ Ինինայն ինչ. բայց խոնարհ քան
զնա՝ զոր որոտումն իւր կարգեաց դերազոյն քան
զիս։ Վասն ատանօր լինիցիմք ազատ։ Ինինա-
կանն ոչ չինեաց զայս տեղի ի նպատակ իւրումն
նախանձու։ Ինչ մերժեալ, նա զմեզ ատէ։ Ինը-
տանօր մնալն ի, մեզ թագաւորել անեղականն։ Ոչ
բան խնամոյն ընտրութեան՝ թագաւորութիւնն ի,
պատուասիրութիւն ինն գովելի, թէպէտև ի գը-
ժոխս։ Ասւ ի, թագաւորել ի դժոխս, քան ծա-
ռայել յերկինս [37]։ Ասայց արդ ընդէր ի, մեզ թո-
ղուլ զհաստատեալ բարեկամն մեր, զընկերս և
զբաժանորդս մերոյն կորստեան՝ կալ այսպէս
յապահով վայելութեան ի վերայ անյուշ ըն-
կերին [38]։ Ընդէր ոչ կոչեմք զնոսա ի հաղորդութիւն ընդ մեզ թերի-
ութեան բնակութեանս. և ընդէր ոչ մնասիմք միւս
անգամ ի փորձ՝ ժողովեալ զզօրութիւնս, թէ
զինչ մնալի ի մեզ տակաւին ստանալ յերկինս, և
կամ զինչ այլեւս կորուսանել ի դժոխս։

Օ՛ այսօրինակ խօսեցաւ Ասատանայ։ Ոչ Ադեղ-

Այլ զայս ասացեալ բազմեցաւ. բայց ակնկալութիւնն ունէր ՚ի կախ զգէստն նորա. զի ինայլ տեսանել, թէ ո՞հատան գայի, կամ զգէմ կալցի, և կամ յանձն առնուցու զիտորձն բազմանալոյ: Ապայն ամենեքին կային անմուռունչ, կըռեալ զվտանգն խորին խորհրդով: Այլ ամենայն որ յաւուշ կրթեալ՝ վերծանէր զանձին երկիւղ ՚ի գէմն այլոց: Ոչ ոչ որ յընարելոյ անակ և յառաջնոյ երկնամարտ նահատակաց գտաւ դիմագրաւ, և կամ յանձն էառ առանձինն զայն Հանապարհ ահագին: Մինչև զինի Սատանայ՝ զոր մեծութիւն աստիճանին բարձրացուցեալ էր յայնժամ գեր ՚ի վերոյ քան զընկերս իւր, ըստ արժանեացն խոսեցաւ անվեհեր՝ օրինակ զայս:

Ով ծնունդք երկնից, և Աթոռք հրեղինք. կարի յիրաւունս ըմբռնեալ կաք ՚ի խոր լռութիւն և ՚ի տարակուսանս, թէպէտև եմք աներկիւղ. զի կարի երկայն է և գժուարակոխ Հանապարհն՝ որ ՚ի գժոխոցս տանի ՚ի լայն վերկինս: Հանս մեր ամրափակեալ կայ. և ահագին կամարն մնչեցին և լսելիզող հրոյս պարիսպ արկեալ ունի

զՔեօք ննջապատիկ· և դրունք կիզանող ազամանդիս փակեալ առաջի մեր՝ արգելուն մեզ զամենայն անցս· Այլ թէ և անցցեմ ոք ընդ սոսա, սակայն զինի ընդունի զնա դատարկ խորութիւնն անզգայ Վիշերի՝ [27] բացեալ ահագինս զբերան իւր· և սպառնայ նմին զվերջինն սատակումն կորստեանն՝ խորասուզեալ յանկերդարան անդունդս [28]· Այսոքիկ էին փախատեայ գնացեալ անտի յայլ աշխարհ կամ դաւառ անծանօթ, զի՞նչ նուազ ինչ նմին քան զնատնդն անծանօթ, և դժուարին քան զփախուստան· Այլ ես՝ Ջեւթը, ոչ ըստ արժանեայ ունելի զայս աշխատս ինքնակալութեան՝ շքեղազարդ փառօք, և քաջազին զօրութեամբ, էին յարդարացեալ առաջարկութեան անդ կամ ի խորհրդեան յօդուտ հասարակաց՝ առ դժուարութեան կամ վտանգի յուցանել զերկիւղ առ ի տալ զանձն զխնդրատ· Այլ ընդէր խակ ընդունիմ զարբայականդ պատիւ, և ոչ հրաժարիմ ի թագաւորելոյ՝ էթէ չառնուի յանձն զմեծութիւն վտանգին՝ որպէս զպատուոյն· զի երկոքին են պատկանաւոր են արքայի· և այնչափ առաւել մեծութիւն վտանգին, որչափ բարձրապատիւ նաւի նա քան զայլս [29]· Այսան որոյ՝ հզօր ՚Ո՞ օրութիւնք, և ահարկուք երկնից՝ թէպէտև կործանեալք, երթայք դուք, և միա դիք առ անին՝ յորչափ պարտ է լինել աստանօր մերումս ընտրութեան, թէ զինարդ մարթի իցէ ձեզ նուազել յուցանել մասամբ զայժմու աղէտս, և դիւրաստար ընծայել զդժոխս· միայն թէ կայցէ դարման կամ թուլութիւն ի մեզմէ, ի դիւրել և ի թեթեւաւ յուցանել զանտանելի վիշտս անդնդային բնակու-

թեանս : Այլ զանց առնէք զպահպանութեամբ ընդդէմ անքուն ականն , մինչդեռ ես ջղլիմ ար տասքոյ յաւիտեան վտանգս խաւարային կորստեան՝ ի խնդիր մերում ազատութեան : Յայս գործ մի՛ ոք լինիլ կնճ օգնական :

Օ՜այս ասացեալ՝ յարեաւ յանթոռոյ իւրմէ ինքնակալն , և խնամոտութեամբ ոչ եթող տեղի պատասխանոյ նոցա . զի կասկածէր , գուցէ այլք ի գլխաւորացն շարժեալ յընտրութենէ նորա՝ անձնանուէր գոյին ( թէպէտև չառնոյր նա յանձն ) յայն ինչ , յորմէ երկեան զատաջինն : Եւ ի մերժել նորա զնոսա՝ ի նախանձ շարժեսցին ի միտս իւրեանց . և այսպէս թերևս դիւրաւ ատասցին զնոսն քաջութեանն՝ զոր պարտ էր նմա գտանել յահագին վտանգս : Սակայն նորա ոչ այնչափ երկնչէին ի վտանգոյ անտի , քան որչափ ի բարբառոյ հրամանոյ նորա : Ա՛ստ որոյ և յա րեան միահաղոյն ընդ նմա : Եւ ի յառնել նոցա հնչեաց լսելի լինել իբրև որոտման ի հեռաստանէ : Խմաարհեցան առ նա երկիւղալից յարդանաք , և իբրև զՊատուհաս մեծացուցին զնա հաւատարիմ Խարձրելոյն յերկինս : Եւ ճանուցին և նմա զպատճառն այնչափ մեծարանաց իւրեանց . զի ի փրկութենն հաստարակաց առ ոչինչ գրեր նա ըզ կեանս իւր : Վասնզի դատապարտ հոգիք ոչ կո րստանեն երբէք բովանդակապէս զքաջութենէնս իւրեանց . զի մի՛ յարատևեալք ի մարդկանէ պարծե ոյն ընդ երևելի արարս իւրեանց յերկրի . առ որս փառքն կամ գաղանի պատուասիրութենէնն յորդոր լինին նոցա՝ սեպհականել արտաքուստ նախանձայուզութեամբ : Օ՜այսօրինակ հանին ի

գլուխ գխիթալն և գխաւարային խորհուրդս իւր
եանց՝ խրախացեալք ընդ անզուգական առաջ-
նորդ իւրեանց։ Որպէս յորժամ ամբարձեալ
մթագին ամպոց ՚ի գագաթանց լերանց՝ այն ինչ
հնչեալ կայ հողմն հիւսիսոյ, ծածկեն զգեղա-
զուարճ երեսս երկնից, և օդն ստորանկեալ տե-
ղայ գձիւն և գանձրև ՚ի վերայ սիրարկին դաշ-
տաց՝ եթէ յանկարծակի լուսաւորիւր արեգակն
քաղցը ողջունիւ տարածանէ գձառագայթս իւր
երեկորեն, դաշտքն գուարթանան, թռչունք նո-
րոգեն գերգերաս իւրեանց, և խաչինք արձակեն
գինդապին ձայնս մինչև հնչել լերանց և հովտաց
առհասարակ։ Այլ ամաչեցեալն մարդիկ, գի Աս-
տանայ պահէ ընդ դատաստանաւ Աստանային
գանքակ միաբանութիւն. և մարդիկ միայն ՚ի բա-
նաւորաց անտի ոչ միաբանին ընդ միմեանս,
թէպէտև կան ընդ յոտով երկնային ճնորհս։
Այլ թէպէտ Աստուած՝ խաղաղութեան լինի նո-
ցին ձայնատու, սակայն և այնպէս կեան ընդ մի-
մեանս ատելութեամբ, թշնամութեամբ և հակա-
ռակութեամբ. և մինն գանհնարին պատերազ-
մունս ՚ի սատակումն իւրեարց, և յատկանութիւն
երկրի։ Որպէս թէ չունէր մարդն ըստ բաւակա-
նին գգիտոխային թշնամիս իւր՝ որք գլիս և գկիրս
սպասեալ միանգամ կորստեան նորա։ Այլ երանի՛ թէ,
սովին իսկ ձգեալք ՚ի միաբանութիւն ընդ մի-
մեանս [30]։

Յոզմէն Պարթևեան [31] աւարտեցաւ գայսօրիս-
նակ. և մեծամեծ աւազանին գիտոխոց ելին սա-
տաբս գինի միմեանց։ Վերադոյն իշխան նոցա
ունէր գինքնին առնին. և գերապանծ վաստաքն, և

աստուածակերպ վայելչութեամբ՝ զոր կերպարա-
նեալ էր յանձին, թուէր առանձին ինն ախոյեան
երկնից՝ ոչինչ ընդհատ յահեղ ինքնակալէ դժո-
խոց։ Վասնզի ինչ հրեղէն Սրովբէից շուրջ պատ-
եալ էր զնովաւ լուսաձաձանչ նշանակօք, և
ահագնատեսիլ վիճակաւ։ Հրամայեաց ետուն ապա
հրատարակել ի ձայն արքայական փողոց զայդ-
պակ ելս կատարման ժողովոյ իւրեանց։ Զորբերին
երապրնթաց՝ Սրովբէք ուղղեալ զանձինս առ
չորեսին հողմն՝ եդին ի բերանս իւրեանց զքա-
ջահնչող փողսն, և ծանուցին զաւարբառ քարո-
զին։ Լուան զայն ի հեռաստանէ սանդարամետք
անդնդոց. և համօրէն զօրութիւնք դժոխոյ և-
տուն մեծաձայն զարձագանգս իւրեանց։ Այս ապա
զնոսին ոչ սակաւ հանդարտութեան խորհրդոյ իւ-
րեանց, և քաջալերութեան ընդ մտաւի չոյն
յանդգնութեան՝ արձակեցան զօրքն ձակատեալ.
և յածեալ աստ և անդ՝ կալան այր իւրաքանչիւր
զիւր ձանապարհ, չոր կողմն և չօժարութիւն
կամաց իւրեանց, կամ ցաւագին ընտրութիւնն
ձգէր զնոսա. զի տարակուսեալ էին յանձինս,
թէ ուրանօր արդեօք մնասցեն իցէ նոցա գտանել
յաւէտ զՀանգիստ միտատակնապ խորհրդոյ իւր-
եանց, և անձանձրոյթ անցուցանել զժամանակն՝
մինչև ցայդրէն դարձ իշխանապետի իւրեանց։

Ոմանք ի դիւրի, կամ չօդն վերին՝ ի թռիչս
և յերագութիւն ընթացից զմիմեանս ելանէին,
որպէս յՍղեմպիական [32] խաղս, կամ ի Պիւ-
թեան [33] դաշտավայրս։ Այս ոմանք զհրեղէն նժոյգս
իւրեանց սանձակոծեալ մղէին. կամ երապրնթաց
անուաքն խոյս տային ի նպատակէ անտի ձիրնթաց

յից . և կամ ձակատեալ խումբք կազմիլն։ Որ-
պէս յորժամ առ ի խրատ քաղաքացին առաջ-
տաւանութեան մըցմունք մարտից երևիլն ՚ի խառ-
նակութեան անդ օդոյ , և բաղխմունք զօրաց
յամպ՝ յառաջքան զօդային ասպետս յառաջա-
պահ գունդքն շահատակեն , և արձանացուցանեն
զնիզակս իւրեանց՝ մինչև յհասանել ՚ի վերայ
ստուար | էգէտացն . և շարժմամբ զինուց իւ-
րեանց ՚ի ծագաց երկնից զլեռներն բոցակիզեն [34] ։
Ալլք կարի լիճն զայրացեալ անհնարին մեղկու-
թեամբն Տիւփեայ՝ [35] զքարաժայռս և զլերինս
հերձանէին . և ընդ օդն մըրկախառն ընթանային .
և դժոխք չէին բաւական տանել աղաղակի նոցա ։
Որպէս յորժամ Ադիդէս [36] պահակեալ յաղթա-
նակաւ Աղբաղիա [37] էարկ զնիւթև զզաստամուձանն
Թուխաւոր , առ անհնարին ցաւոց անձինն խլեաց
յարմատոց զԱեստաղեան [38] սարոյս , և զ | Ֆքաս [39]
ընկէց ՚ի դագաթանց Ատայ [40] ՚ի ծուխ Աւբեան [41] ։
Այս այլք յաւէտ հեզահամբոյրք մեկուսացեալ
յառանձին հովտի՝ ՚ի հնչուն քնարաց և հրեշտա-
կային բարբառոյ նուագելին զդիւցազնական շա-
հատակութիւնս իւրեանց , և զողորմ կործանումն
զինի կորստական մարտին . և աշխարհին զազատ
առաքինութեանն զգերութիւն ընդ բռնակալու-
թեամբ դիպուածոյ կամ ձակատագրի ։ Երկ
նոցա էր յառանձին վայրի . բայց երաժշտակա-
նութիւնն՝ որում անմարթ էր նուագ լինել յերկս
անդ անմահական հոգւոց , կալեալ ունէր զդժոխս ,
և կրթէր ՚ի զարմանս զիւժանին ունկնդրաց ։
Ակնք առանձինն նստեին ՚ի վերայ բլրոյ՝ տուեալ
զանձինս ՚ի զուարճութիւն բանից . զի երգք զըգ

գայութիւնս բերկրեցուցանէն, իսկ քաղցրութիւն պերձախօսութեան զմիտս։ Այլ կարի լինի նրբացեալ ի խորհուրդս իւրեանց՝ խորագոյն բանս ի մէջ առնուլին յաղագս նախախնամութեան, յառաջգիտութեան, և նախասահմանութեան. որպէս և յաղագս անփոփոխ ձակատագրի, ազատութեան կամաց, և անհրաժեշտ նախագիտութեան։ Այլ կորուսեալ ի բաւիղս մոլորութեանց՝ չգտանէին զելս խնդրոց իւրեանց[42]։ Այլ ապա բազում ինչ խօսեցան յաղագս երջանկութեան, և յետին թշուառութեան. յաղագս կրից, և անկրականութեան. յաղագս փառաց, և ամօթոյ։ Այլ էին բանք նոցա առհասարակ մնոտի ձարտարութիւն, և ընդունայն խնամատարութիւն[43]։ Ապաքէն և այնպէս քաղցր թուէր թեամբ ձեռնտու եղեն թմրեցուցանել առ վայր մի զվէրս և զցաւս նոցա. զարթուցանել ի նոսա զյոյս մնոտեաց, և կամ պնդացուցանել զխոտորութիւն կամակոր սրտից նոցա երից կարծրակուռքան զպողպատիկ։ Այլ այլք յանդգնաբար պիտեալ խմբովին ի գիւտ ընդարձակ երկրի ի տարածնագ վայրս (միայն թէ լինէր նոցա գտանել անդորր բնակութիւն ուրեք) ընդ քառեակ ձակատարհ ձգեցին զթռիչս իւրեանց յերկայնութեան անդ չորեցունց սանդարամետական գետոց՝ որք զժանտաբեր առաջս իւրեանց թափեն ի կիզանոզականն լիճ։ Այլ են սոքա՝ Ասիւգս[44] գարշահոտ, հեղեղ մահաւէտ առելութեան։ Քեբոնն[45] վշտագին ցաւոց, խաւարչտին և անդնդախոր։ Պոկիւտոս[46] ընկալեալ զանունն յողբոց անտի՝ որք մեծաձայնական լսին ի վերայ հոսանային

աղետից ։ Այս վկեգևեծան [47] ամէնի հրոյն՝ որոյ հնէզաստատ ալիք ուժգնիս բորբոքին ։ Եթէ [48] գետ մռաացութեան, հեռագոյնս հոսեալ ի սոյանէ լռիկ և հանդարտաձեմ՝ պատի ընդ ոլորտս իւր ջրեզին ։ Այս որ միանգամ ըմպէ ի նմանէ, անգէն և անդ ի մռաացօնս արկանէ զվիճակ իւր գառաջինն և զկեանս, զուրախութիւնն և զտրտմութիւն, զսերիրուութիւն և զվիշտս ։ Յայնկոյս գետոյս անկեալ կայր երկիր սառնատաք՝ տիրատեսիլ և ամայի, մշտաբաղխ յերեսաց մրրկածին փոթորկաց, և ապականապուրծ կարկտի՝ որ ոչ հալի երբէք, այլ դիզացեալ ի վեր՝ գոգցես սեւբակ ինչ երևի վաղեմի շինուածոց ։ Ոակ զայլ տեղիս պատեալ ունէր առհասարակ ձիւն և սառն բարձրադէզ և անգնդախոր՝ երբև զԵրբուենան [49] Ձահիձ ընդ մէջ Վաղիատայ [50], և նախնի լերինն Կասեայ [51] յորում խորասոյզ եղեն բանակք զօրացն ։ Այլ օդն սաստկասառոյց բոցակիզ առջրեր, և ցրտութիւնն զնոյն ունէր զօրութիւն ։ Ոչնի ժամուց անդր փուխացան դատաստարաեալքն Համօրէն՝ մղեալք յարագոտն Կատաղեաց [52], առ ի առնուլ փոփոխակի զվորձ անհնարին ծայրիցն, անցեալ յանկողնոց անտի բազմատազնապ հոգոյն ի սառնամանիս անդր՝ առ ի զգվացուցանել զչերմութիւն իւրեանց եթերական. և կալ անդանօր առժամանակ մի անշարժ և սրբատաշոյց, և ապա վերստին փութալ անկանիլ ի հուր ։ Ընդանէն նոքա յայս կոյս և յայն կոյս ընդ Եթեան անդունդս՝ յառաչելութիւն ցաւոց իւրեանց. և յանցանել անդ ցանկան և նկրտին հուպ մատչել ի հրապուրող հոսանդ, և ի

կաթիլ նորա ընկղմել ՚ի քաղցր մեռացութիւն
զամենայն վիշտս և զաղէտս իւրեանց ՚ի միում
վայրկենի : Այլ թէպէտ զափամբք նորա քերեն,
այլ ձակատապիճն ոչ տայ նոցա թոյլ առնուլ
զձաշակ : Այլ Կորգոնեանն Մեդուսա [53] յարդել
ձգանց նոցին ահագինս ակնարիկ ընդ հունն : Այլ
ջուրն ինքնին տեղի տայ ՚ի ձաշակաց նոցա, որպէս
երբեմն խոյս եհ ՚ի չրթանաց անտի Տանտաղեայ [54] :
Օ այսօրինակ վայրապատին յածեալ խուռն բազ
մութեանն Թառամեալ Թօշնին սաստկագոյն եր
կիւղիւ, և պակուցեալ հային ընդ ողորմ վիճակ
իւրեանց : Այլ չգտեալ զՀանգիստ՝ անցանէն ապա
ընդ բազմապատիկ սառնապատ և հրեղէն Ա՛ե
պեայս [55], ընդ բազում խաւարայինն և ահագին
ձորս, ընդ տխրագին դաւառս, ընդ ափափայս,
ընդ խորս, ընդ լինս, ընդ ձահիճս, ընդ տղմուտս,
ընդ փապարս, և ընդ սառուերս տիեզերաց մահու.
ղոր անհնչեն այնպէս չարախտաւոր հաստեցեալն,
մինչեւ չարին միայն լինել ՚ի նմա բաբի : Օ ի անդ
դանօր մեռանին կեանք, և կենդանի է մահն :
Այլ խեղճութիւնք բնութեանն ճնանի ՚ի նմա զամե
նայն այլանդակ, տգեղ և զզարհուրելի հրէշ՝
վտանգարգոյնս քան զԿորգոնս [56], զՀիդրայս [57]
և զսոսկալի Նղբերուաքաղս [58], զորս միանգամ
առասպելքն կեղծեցին, կամ ճնաւ երիւղն [59] :
Յայնմ վայրի Սատանայ՝ հակառակորդն Ա՛ս
տուծոյ և մարդկան, վառեալ ՚ի խորհուրդս մե
ծի առաջարկութեանն՝ ամբառնայ ՚ի վեր զարա
գաշարժ թևս իւր, և խնդրէ ուղղել զթռիչս իւր
՚ի դրունս անդ դժոխոց : Այ զի դիմէ յամին կոյս
աջակողմեան, և ի զախակողմեան : Ապրեր

տարածեալ զթևս իւր՝ զերեսաք անդնդոյն քերէ, և մերթ սլացեալ ի վեր ի կամարն հրեղէն՝ աշտարակաձև արձանանայ ։ Արդէս յորժամ գուշմարտակք նաւուց ի ծովու նշմարեալ ի հեռաստանէ՝ կախեալ կան զամբոյ, այն ինչ զիշերաՀաւասարին [60] հողմովք բացեալ զառագաստս միահամուռ ի Լենգալայ [61], կամ ի կղզեաց Տէր Նատայ [62] և Տիդովրայ՝ [63] ուստի բարձեալ բերեն վաճառականք զհամեմն և զդեղերայս իւրեանց ի վերայ վաճառաշահ ալեաց, սկսեալ ի լայնատարածեան Աթովսիոյ [64] մինչև ցկասն՝ [65] փութան ուզղել զդիշերագնաց նաւարկութիւն իւրեանց ի բևեռ անդր [66]. այնպէս ինն սլացեալ երևէր Թշնամին ։ Արևեցան ասպ սահմանք գժոխոց. որոց ձեղուն հասանէր յահագին բարձրութիւն, և դրունքն էին երիցս եռափեղկեան. երեք փեղկք պղնձի, երեք երկաթի, և երեք ադամանդեայ ի կարծրակուռ վիմէ. և էին շրջափակեալ անծայրածոյ կատարաւ հրով ։ Ոչ ոք ելանէր աստի և անտի կրկնակի սոսկալի տեսիլք ։ Ոմն ունէր զդիերպարանս կնոջ մինչև ցմէջս, և էր գեղեցիկ. բայց բազմոցուտ թեփուկից տատմէն աւարտէր ի վիշապ գարշատեսիլ երկայն և լայն՝ զինեալ ի խայթոց մահաբերաւէր ։ Օ միջոցք նորա մեծաբարբառ հաչիւն շանց սանդարամետից լայնատարած Աերբերեան [67] բերանովք լինէր լսելի հանապազ ահագինս ։ Ոչ թեպետ մերթ էր նոցա ի կամել իւրեանց, և կամ ստիպեալ ի լուծիւն՝ խուսափել յորովայն նորա, և անդ որջանալ, սակայն և անգամօր մեծաձայն հաչելին անտեսաբար ։ Այլ ոչ էին նոքա այնչափ զզուելի, որչափ զարհուրելին

Ակնալայ [68] լուսաբեղմն ի ծովի անդ՝ որ բաժա-
նէ զվաղաբրիա [69] ի կերկերաձայն եղերացն Ցրկ-
նակրայ [70]։ Այս ոչ այնչափ գաղշագոյնս ընթա-
նայինն զկնի գիշերական Ալկի, այն ինչ կոչեալ
նորա գաղտ՝ սլանայ ընդ օդն, հրապուրեալ ի
հոտոյ անտի մանկանցն արեան՝ ի պարարտու-
թիւն վկայիցն Լապլանտիայ [71], և այն ինչ լուսինն
խաւարի՝ վաստակաբեկ յերեսաց հմայից նոցա [72]։
Երկրորդ տեսիլն՝ եթէ մարթի իցէ տեսիլ կոչել
զանկերպարանն յանդամս և ի յօդուածս, և
կամ գոյացութիւն զայն՝ որ ստուեր ինն երևելը
(քանզի զերկոսին և յանձին ցուցաներ) կայր
սևատեսիլ իբրև զգիշեր, զայրագին իբրև զատան
Կատաղիս [73], և ահագին իբրև զԼժոխս։ Այս
ձօձեր զսոսկալի նիզակն՝ զոր ուներ ի ձեռին. և
բերեր ի գլուխ իւր զնմանութիւն ինն ազգայա-
կան Թագի։ Այս ահա հուպ մատեաւ առ նա Ա-
տանայ։ Լոկ հրէշն ելեալ ի տեղւոջէն՝ չոգաւ
փութանակի ընդ առաջ նորա մեծաքայլ և ահա-
գին ոտիւք։ Ասանելեացն գժոխք ընդ գնացս նո-
ցա։ Լայր անվհեր թշնամին զարմացաւ և եթ
ընդ տեսիլդ, այլ ոչ երկեաւ։ Օ՛ի բաց Ա՛ստու-
ծոյ, և Ա՛ստուծոյ նորա առ ոչինչ գրէ նա զամե-
նայն ինչ, և ոչ խուսափէ յիմքէ։ Որ և զայրա-
գին դիմաք սկսաւ ասել զառաջինն՝ օրինակ զայս։

Ո՞ ես դու, կամ ուստի՝ Տեսիլդ գարշելի, զի
իշխես՝ թէպէտև զարհուրատեսակ և ահարկու,
ընդդէմ մատուցանել զքարշուք ձախատ քո
յարգել Ձանասպարէին առ դրունդ։ Ծանիր
քաջ, զի կամք են ինձ անցանել ընդ դոսա առանց
իսկ քումդ հրամանի։ Ամէ՛ն ի բաց կաց այսի,

և կամ սա զձաշակ քումդ անմտութեան՝ պաժռ
խածին դու· և ուսիր արդեամբք չհակառակել
ընդ հոգիս երկնից։

Ուրումն ետ պատասխանի տեսիլն մեծաւ սրտ-
մնութեամբ։ Ինձի դու՞ իցես հրեշտակն գաւա-
ձանող՝ որ զառաջինն քակեաց յերկինս զնաղա-
զութիւն և զիմաստութիւն տայնվայր մնացեալ
անքակտելի· և ձգեաց ընդ երբ ի գոռոզ զինս
ապստամբութեան զերծորդ մնան որդւոցն երկ-
նից՝ երդուեալ ընդ նոսա հակառակ Նարթիելոյն։
Զոյր սակս ընկեցեալ միահաղոյն յերեսաց Ա-
ստուծոյ՝ դատապարտեալ կաչք սատանօք անցու-
ցանել զանվախձան աւուրս յաղետս և ի վիշտս։
Սակայն դու՝ պարտապանդ դժոխոց, համարիս
զանձն քո հոգի երկնաւոր· և իշխես հնչել քամա-
հանս և խրոխտանս ի տեղւոջն՝ ուր թագաւորեմ
ես իբրև արքայ· և յառաւել զայրոյթ սրտի քո՝
արքայ քո և տէր։ Նրդ՝ դարձիր անդրէն ի սա-
տիժ քո՝ փախստականդ կեղծաւորութիւն· և յա-
ւել յերազութիւն ընթացից քոց զթէս, զուգ
խարազանաւ կարճաց պնդեցայց զհետ քումդ
դանդաղանաց· և կամ ի մի հարուած նիզակիս
կալցեն զքեզ միանգամայն երկիւղ տարօրինակ,
և տարհնոյ անմխոթձ յառաջագոյն։

Նյսպէս խօսեցաւ արհաւիրքն սոսկալի· և տե-
սիլ նորա յայն օրինակ բանից և սպառնալեաց՝
ցուցաւ տանտպատիկ առաւել տգեղ և ահարկու։
Նակ Սատանայ սրամտեալ բարկութեամբ՝ եկաց
աներկիւղ իբրև զվխտաւոր բոցաւառ, որ ընդ
երկայնութիւն լայնատարածն Ավիխոբայ [74] յար-
ջայնն բևեռի անդ արկանէ զնուր, և յահա

գին գիսոց իւրոց Թօխմախէ գժանատամՀ կամ զմարտ : Արկոքեան ևս ուղղեցին ՚ի գլուխ մեանց զմՀայուս նշանն : Զեռք նոցա անվրկպ՝ ոչ մնան երկրորդ Հարուածոց : Ոակ կնձինն գիմոց՝ զոր արկին առ միմեանս, այնչափ ժանատեսիլ էր՝ որպէս յորժամ կրկին Թխպագին ամպք ծանրաբեռնեալ Հրազինուք երկնից , Հասանէն շառաչմամբ ՚ի վերայ Կասպից [75] ծովուն , և կամ յօդս Ձակատ առ Ձակատ անշարժ՝ մինչև Հողմ փողին զնշանն խաւարային բաղմանն նոցա ընդ միմեանս : Ոչ Հապէս խեթիւ ակնարկեցին Հզօր մարտադիրքն առ միմեանս, մինչև գժոխոց առաւել ևս սաուերանալ յերեսաց խոժոռադիմեալ Թեան նոցա : Ո՞ այսօրինակ կային նոքա զուգաՀաւասար միմեանց. զի ոչ որ ՚ի նոցանէ կարող էր գտանել զՀամեմատ ախոյեան, բայց միայն ՚ի նմին ժամու : Ոչ ահա Հանդերձեալ էր նոցա մեծաւ մեծ արՀաւիրս գործել, և Հնչեցուցանել զսանդարամետս, եթէ վՀուէն օձատեսիլ՝ որ նստեր առ դրան դժոխոց , և ունէր զմՀատիթ փականս նոքա , չէր յարուցեալ, և ահագին Ձիւքն անցեալ ՚ի մէջ նոցա :

Ո՞վ Հայր՝ աղաղակեաց նա, զինչ կամք են ձեռնդ ընդդէմ որդւոյդ . և զինչ կատաղութիւն՝ ոՀ որդի, կալեալ ունի զքեզ ՚ի ձգել զմՀարեր նիզակդ ՚ի վերայ զլխոյ Հօր քո : Վխիկեաս արդեօք յոյր սակս : ՚Ի սակս նորա՝ որոյ նստեալ ՚ի բարձունս ծիծաղի զքև, այն ինչ պատուէր տայ դերւոյդ կատարել զկամս բարկութեան իւրոյ՝ զոր կոչէ նա արդարութիւն . որ և Հանդերձեալ է ՚ի միում աւուր սատակել զերկոսեանդ ՚ի միասին :

Ա.յսպէս ասացեալ լռեաց, և արդելաւ ժամ-
տաման այն զժոխայինն: Յայնժամ Աստուած
յաւել ասել ցնա այսպէս: Ա.հնպիսի արկեր ՚ի
մէջ ձիոյ անլուր, և բան անակնկալ, մինչև արա
գաշարժ ձեռին իմոյ զտեղն առնուլ. և տակաւին
իմայի ծանուցանել քեզ արդեամբք գկաման իւր,
մինչև ՚ի միտ առիցես՝ թէ ո՞ւս զու յայդ կըղ-
կին կերպարանս. և ընդէր հանդիպեալ զառա-
ջինն յայս հոլիտ սանդարամետական՝ կոչես զնա
քեզ հայր, և զտեսիլդ առաչօք՝ իմ որդի: Ես
ոչ ճանաչեմ զքեզ. և ցարդ չտեսի զարշաղոյն
գէմն քան զնորայն, և զքոյդ:

Ա.ւ որ Աբրահամն զժոխոց արար պատասխա-
նի: Ակնիմ մեռացաւը գնա. և մինիմ այժմ այն-
չափ զարշահեսիլ Յուխիմ յաչս քո՝ որ երբեմն
կարի ինն գեղեցիկ համարեալ էի յերկինս, յոր-
ժամ ՚ի ժողովն անդ և յանդիման Արուվելիցն
միաբանելոց ընդ քեզ ՚ի ժպիրհ դաշնակցութիւն
ընդդէմ աբբայիկն երկնից՝ կալաս զքեզ յանկար-
ծակի անհնարին երկունք. մեծագնեցան աչք քո.
և ցնորեալ ՚ի միտս՝ ընկղմեցար ՚ի խաւարն. և
գլուխ քո թօթափէը գնամանդրախտ և զարագ ա-
բագ կայծակունս. մինչև բացեալ ձախակողմեան
ընդարձակութեան նորա՝ ելիր ես արտաքս ՚ի նմա
նէ Աստուածոչխ սպառազին [76], նմանօրինակ քեզ
՚ի ձև կերպարանաց, և ՚ի չքնաղ տեսիլ դիմաց՝
որ փայլէը յայնժամ երկնային գեղեցկութեամբ:
Ո՞ արմանք կալան յայնմ պահու զՀամօրէն գե-
նուորութիւնս երկնից: Ո՞ առաջինն զարհուրեալ
նոցա յինէն՝ նհանջեցին յետս. և համարեալ գնա
ցնորք ինչ ահագին՝ կոչեցին Ա՞ղը: Ա՞այց ասա

յընտրելանալ նոցա ընդ իս՝ գոյ հաձոյ և սիրելի յաչս նոցա : Այլ հրապուրանօք դէպ եկութեանս յաղթեցեալ որոց միանգամ այնչափ խորչելին չկայր. և մանաւանդ քեզ՝ որ բազում անգամ նկատեալ ի մէս զՀոգեբիս նմանութիւն պատկերի քո, հաբար ի սէր . և գաղտ այսպիսի ինն կալար ընդ իս ոգեխառնութիւն, մինչև զգալ խնամս որովայնի զծանրութիւնն բեռնին : Յայնժամ յարեաւ պատերազմ, և ձակատամարտք եղեն ի դաշտավայրս երկնից . ուր և ամենազօր ախոյեանին մեր տարաւ գկատարեալ յաղթութիւն ( զի զինչ այլում իմիք մարթի էր ակն ունել ), և մեք զկորուստ և զխորտակումն ընդ ամենայն հրեղէն երկինս : Ընկան այլք ի բարձրութենէ անտի երկնից , և խոբասոյզ եղեն յանդունդս . անկայ և ես ընդ նոսա ի համաշխարհական կործանման անդ : Յորում ժամանակի տուան ի ձեռս իմ փականքս այսոքիկ. և պատուէր եղաւ ի վերայ իմ մշտափակ ունել զդրունդ . ընդ որս չի հնար ումեք անցանել, եթէ ես ոչ բացից : Վասն առանձինն աստանօր, յառեալ ի խորհուրդս : Այլ զինի սակաւուց որովայնի իմ յղացեալ ի քէն կարի ինն աձեցեալ՝ զգայ զահագին շարժումն երկանց : Այս ապա որդի քո ծնանիցէ զարշաւեսիլ՝ զոր արդ տեսանես, բռնի բացեալ զձանապարհ պատառեաց զաղիսն իմ. որոց ծամածռեալ յերեսաց երկիւղն և ցաւոց՝ զայսօրինակ այլակերպեցեալն զատորին մանկերպարանացս [77] : Այլ ընդ այդոյս ձեշտամին իմ եկն արտաքս . և ձնձեղ ի վերայ իմ զմահաբեր նիզակ իւր կարգեալ ի սատակումն : Յորմէ փախեայ՝ աղաղակեալ մեծաձայն Ահ: Պղծղծեցան

սանդարամետք յահպիկն անուանէս. և ՚ի քա-
րանձաւաց իւրեանց հառաչմամբ հնչեցուցին զար-
ձագանգս նորա։ Խուսափեցայ ես ՚ի նմանէ, այլ
նա սկզբնեայս զկնի իմ. և որպէս Թուխէր յաւէտ
բորբոքեալ անառակութեամբ, քան սրտմտու-
թեամբ. և անդէն եհաս առ իս առ մայրն իւր՝ որ
կայի ողջոյն ահաբեկեալ։ Նա ՚ի փարիլ նորա
զկնև բռնութեամբ՝ ծնան ապա ՚ի գաղտնութենէ
անտի հրեշտգ կաղկանձող։ Ոլոր որպէս և տեսա-
նէիք, պատճն զկնև անլուելի աղտղտկաւ, յղա-
ցեալ ժամէ ՚ի ժամ, և ժամէ ՚ի ժամ ծնեալ՝
յանհնարին վիշտ անձին իմոյ։ Ո՛ի յորժամ կա-
մին, գառնանն անգրէն յորովայնն՝ որ ծնաւ զնո-
սա. և հալէն՝ խաճատեալ զալիսն իմ ՚ի կերա-
կուր իւրեանց։ Նա ապա վերստին արտաքս վա-
զեալ՝ խայթողական արհաւրջք մտացս խղճի չար
չարէն զնս հանապազ. մինչև չգտանել ինձ երբէք
հանգիստ կամ դուլ յերեսաց նոցա [78]։ Ոչտո՛ ՚ի
հանգիպել յանդիմանն աչաց իմոց Ոնոյն ահագին՝
որդն իմ և Թշնամի, և գրգռէ զնսա։ Որ և առ
՚ի չգոյէ որոց անձինն՝ անդէն գիշատէր զնս զմեզր
իւր ողջոյն, եթէ չգիտէր զկապ կենաց իւրոց ընդ
իմումն, և փորձ նորա չլինէր նմին գառնագոյն
պատառ և Թոյն։ Ո՛ի այսպիսի են կամք չհկա-
տագրե։ Ոչայց դու՛ ով հայր՝ ահա ազգ առնեմ
յաւաջագոյն, խոյս տուր ՚ի մնհաբեր նետից նո-
րա. և մի յուսար յանձն քո տարապարտուց՝
ինալ անխոցելի յերեսաց նորա պայծառափայլ
զկնուքդ, Թէպէտև իցեն երկնամուխ. զի ըստ
՚ի նմանէ՝ որ Թագաւորէն ՚ի բարձունս, ոչ ոք կարէ
կալ առաջի մնհառելի հարուածոց նորա։

Ալախանեաց նա զբան իւր. և խորամանկ թշնամին ուսաւ անդէն վաղվաղակի զդաս իւր. և ողբ բանիւք արար նմա պատասխանի. Ահաւասիկ իմ սիրելի՝ փոխանակ զի ընդունիս զիս ՚ի հայր քո, և ցուցանես ինձ ասա զորդին իմ գեղեցիկ՝ զվայելուչ գրաւական իմում սիրոյ, զոր կալայ ընդ քեզ յերկինս, և անուշակ ուրախութեանցն երբեմն՝ որոյ յիշատակ գառն է այժմ ՚ի սակս ահագին յեղափոխութեանս, որ ժամանեաց մեզ յանդէտս և անակնկալ՝ ծանիր. զի ես ոչ գամ իբրև զթշնամի, այլ առ ՚ի վերծուցանել ՚ի խաւարէ, և ՚ի տանել ցաւոց զքեզ և զնա միանգամայն, և զհամօրէն զինուորութիւնս հոգւոց՝ որք զինեալ ՚ի վերինպրութիւն արդար երեւանից մերոց, անկան ՚ի բարձանց ընդ մեզ. Ձառութեամբ նոցին մատչիմ ես յայս հանդէս անփորձ. և տամ զանձն իմ միայն ընդ միայն ընթացիւք ՚ի զինուորութիւն անյաղթակ անդնդոցս. և վտարանդի հարցանինութեամբ յանապհման դատարկութեան անդ՝ չըջիմ ՚ի խնդիր նախաձայնեալ տեղւոյն, թէ ուրանօր արդեօք ՚ի սահմանս երկնից կայցէ վայրն երանութեան՝ այժմիկն իսկ ըստ նշանացն արարչագործեալ ընդարձակատարը և բոլորչի. և եդեալ ՚ի նմա նորաստեղծ արարածոյ՝ թերեւս ՚ի ընդ զպակասութիւն մերոյս բնակութեան. և այն՝ կարի հին ՚ի բացեայ յերկնից, գուցէ ծանրացեալ նորա ահագին բազմութեամբն՝ վերստին անցցէ ընդ փորձ նորոգ խռովութեանց. Այդ՝ եթէ այս իցէ խորհուրդն երկնից, կամ այլ ինչ ծածկեալ, փութամ ես հասանել ՚ի վերայ. Ոչինչ տեղեկութեանս զարձայց այսորիկ փութանակի,

և տարայց զձեզ անդր՝ ուրանօր դու և ԱՀ անյուսջիք զկեանս յանդորրու, և բաղխեսջիք լռելեայն և անելեալի թևօք զվերին և զներքին օդն զուարձալի և զմռսալից անուշահոտ խնկովք։ Աւտիճիք և յագեսջիք անդանօր լուռլի, և առնայն ինչ լեցի ձեզ յորս։

Աղաճանեայ նա զբան իւր, զի երկոքին ևս կարի ինն հաճ և հաւան յուցին զանձինս։ Յակ ԱՀն՝ի լսել անդ զՀանդերձեալ յագուդդ իւրումն քաղցու, արձակեալ զծիծաղ մեծաձայն՝ երանեայ զբարվայն իւր կարգեալ յայն բարեբաստիկ ժամ։ Աչինչ նուաղ գտաւ և խնդութիւն չարեացասարտ մօր նորա։ Աոր և խօսեցաւ ընդ Հօր իւրում՝ օրինակ զայս։

Ահեմ ես զվակատս անդնդային զբոյս իրաւամբք և՝ ի հրամանէ առնաղօր արքային երկնից՝ որ արգել ինձ զբացուցն ադամանդեայ զբանց նորա։ Ա՝ բռնանալ ուրուք՝ ի վերայ իմ՝ ԱՀն անեղիւտն և անպարտելի յերեսաց զօրութեան կենդանեաց, կայ՝ ի պատրաստի արիանալ ընդ մէջ զնիզակ իւր։ Ակայց առիմ իցէ ինձ Հնազանդել՝ ի վերուստ հրամանաց նորա՝ որ առնէ զիս. և զբնակիչս երկնից և զերկնածինս աստանօր՝ ի խաւարի տարտարոսական անդնդոցս Հարստեալ կարգեաց յայս պաշտօն անբեերելի, ՝ի մշանջենաւոր տուր տալնալ և յահագին վիշտս յերեսաց ահի և աղաղակի խռոցս ծննդոց՝ որք աղեօքս մանկին։ Ա՛ահ ես Հայր իմ, զահ ծնողն իմ, և զահ եռուր ինձ զկեանս։ Ա՝ղդ սէմ Հնազանդեցայց ես՝ բայց՝ի քէն, և զքոյ զՀետ գնացից։ Ա՛ահ Հանդերձեալ ես տանել զիս փայթ ընդ փայթ յայն նորոգ աշ-

խարհ լուսոյ և երանութեան. ուրանօր ընկղմեալ
ի բերկրութիւնս ընդ հեշտակենցաղ աստուա-
ծոյ[79] Թագաւորեցից անվախձան ընդ աքմի քումմէ, որպէս և վայել կայ ե դատեր քումմ, և սի-
րելոյ։

Այս զայս ասացեալ եհան ի միջոյ իւրմէ զմահ-
առիթ բանալին, զդժոգակ գործիս մերոյ աղե-
տից։ Այս Թաւալեալ զանանձելին ձեռ իւր ի
դուռն անդր՝ ամբարձ ի վեր զահագին նիպս նո-
ցա, զոր չէր հնար համբրկն Սիւգեան[80] զօրու-
թեանց շարժել միանգամայն։ Այս ասա ընդ ծակ
աղեխին պատոյքեալ զբազմամանուած բանալին՝
հեշտեաւ ինն ելոյծ զամենայն փականս և զկա-
պանս ի կարծրակուռ երկաթոյ կամ յատպատաժ
վիմէ։ Այս ահա անդէն տեղւոյ տուեալ ամբարիշտ
դրանցն դժոխոյ՝ բացեալ պատառեցան շռնչա-
ձայն, և ի ծղնեալ անտի ձայնք հնչէին ահեղ
որոտման, մինչև դղրդեցուցանել զանդնդախոր
յատակս Երեբեայ[81]։ Այ բաց նա զդրունսն, բայց
փակէլն զնոսա վերստին անցանէր ըստ կարգ զօ-
րութեան նորա։ Այ ին նոքա լայնարձակ յոյժ,
մինչև կարող լինել անցանել ընդ նոսա դրօշակա-
կիր զօրաց կառաւք և երիվարօք՝ Թևատարած
խաղացեալ նշանօք պարզելովք և ցրիւ դասա-
կարդութեամբ։ Օ այսօրինակ կային բացեալ, և
իբրև զբերան հնոյն մեծի հոսէին արտաքս գծուխ
բաղմադէզ, և զբոց կարմրորակ։ Յայնմ վայրի
յանդիման եղէն աչաց նոցա գաղտնիքն հինաւուրց
Վնդնդոց՝ խաւարչտին, ահագնատեսիլ և անսահ-
մանն Վվկիանու[82]։ Վրանօր սուզեալ կորնչէր եր-
կայնութիւն, լայնութիւն, և խորութիւն, ժա

մանակ և տեղի· Ուր և երիցագոյնն Պիղեր [83], և Ալիֆ [84] նախահաղբ Իսուբեհան [85], յամենից անդ անեզրական մարթիւ կալեալ ունին զիշխանջեր նաւոր անիշխանութիւն [86]· Վասզի ջերմ, ցուրտ, խանաւ և չոր՝ քառեակ ոխերիմ թշնամիք, զմիմեանս ելանեն անդանօր՝ ի խնդիր իշխանութեան՝ համախմբեալ՝ ի մարտ զանկերպարան հիւղես [87] իւրեանց· Ուրաքանչիւր զօրք յայլեայլ գունդս՝ թեթեւագէն կամ կուռ, ուժգնակի կամ թեթև, երագընթաց կամ յամրաքայլ՝ բազմաձեւ խառնին զգրօշակօք իւրեանց· և իւրև զանթիւ աւազ Խարկայ [88], կամ այրեցած երկրին Կիւրենայ՝ [89] ելանեն՝ ի չհաստատ մարտադիր հողմիւք, արձակեալ զարագաթռիչ թեւս իւրեանց· Ուխտ նա առաժամանակ մի՝ զորոյ գիտաց երթման բազմութիւնք· Ալ նոտի իշխանապետ Ալիֆն [90]· և գատաւոր կարգեալ՝ յուզի զսղմոսկ խռովութեան, որով և ինքնին թագաւորի· Օ կին նորա Պիսլուաճն [91] ունի զգատաւորական իշխանութիւն՝ ի վերայ ամենայնի· Յայս ահագին անդունդս՝ որ ի որովայն Իսուբեհան, և թերեւս գերեզման նորա· և ոչ ի ծով, ոչ երկիր, ոչ օդ, և ոչ հուր՝ սոքա ամենեքին խռովեալ յուզին՝ ի բազմաբեղուն պատճառս իւրեանց [92]· Այս ուրեմն մարդիկ հանապազ ընդ միմեանս, եթէ Ադարիէն ամենակալ ոչ տայր հրաման անընդդիմելի ստեղծանել զգազմութիւն աշխարհի [93]· Յայս վիհ սոսկալի եկայ հնարիմաց թշնամին առ չութամբք գժոխոց, և դիտեաց առ վայր ու զնա նապարհ իւր· զի ոչ ընդ անձուկ ինչ ունէր անցանել ընդ նեղուց· Այս ահանգիր իւր ոչ նուազ

ունկին հնչել ՚ի ձայնէ կործանմանն, քան ՚ի մրրկել
Ահեղնայ՝ [94] ուղղեալ զպատերազմական մանգ-
ղնոս իւր ՚ի կործանումն մայրաքաղաքաց ։ Կամ
յանկանիլ անդ հաստատութեան երկնից ՚ի վե-
րուստ ։ Այլ կամ ՚ի կորզել տարերցս խառնու-
թեան զհաստատմատ երկիրս ՚ի կայից անտի իւ-
րոց ։ Զպատ տարածեաց զառագաստալիր թևս իւր
՚ի թռիչս . և ամբարձեալ ՚ի ծուխ բազմակոհակ՝
անկուշեաց զերկիրն ։ Այլ այնպէս ասպա գոգոյս
յամպէղէնն նատեալ աթոռ՝ յանդուգն վազեալ
ընդ քաղաքս վարսախս ։ Զի ՚ի լքանել զնա
բազմոցին՝ [95] ընդհատել եգիպտ նա զգատարկու-
թիւնն անընդալին ։ Այլ ՚ի շարժել անդ զթևս
իւր յանզգոյշս և տարագէպ՝ սուզաւ շեշտակի ՚ի
խորութիւն անդր գրկաչափս բիւր ։ Այլ ունկն
ողջոյն լինել խորասոյզ, եթէ ըստ ձախողակի բեր-
ման [96] ուժգնին բազնիւն մրրկայոյզ առնոց վա-
րեալ յերեսաց հրոյ և բորակի՝ ոչ մնէր զնա նոյն
չափ մնալոս ՚ի վեր ։ ՚Ի հանդարտել ապա խռո-
վութեանն՝ զտեղի հաս նա յաւազակայտ ինչ
ձախձախուտ . որ ոչ ծուռ էր, և ոչ երկիրն ցան-
կալի ։ Յայնժամ կոխեալ նորա ոտամբ զվնդա-
գոյն տեղւոյն՝ գոգոյս գայթ ՚ի գայթ յառաջ վա-
րեաց զընթացս իւր ։ Այ՛ զի հետոտս ընթանային,
և ՚ի զի ՚ի թռիչս, և ակտք էին ևս նման թռոց և
առագաստի ։ Որպէս յորժամ Ա՛ծուառիւծն [97]
յանապատի անդ թևառոր ընթացիւքն ընդ լե-
րինս և ընդ տղմուտ ձորս վշտի պնդի Ա՛րիմաս-
պեայ՝ [98] որ յանքուն պահպանութեան նորա գո-
ղանայ գաղտ զոսկին զգուշութեամբ, այնպէս փու-
թոյ պնդութեամբ վարեաց Թշնամին զհանապարհ

իւր ընդ ՃախՃախուտս, ընդ առապարս, ընդ անձուկս, ընդ ափափայս, ընդ դիւր, ընդ թանձր, և ընդ անօդ՝ գլխով, ձեռամբ, թևովք և ոտիւք, լողացեալ, սուզեալ, ընդ հունն անցեալ, սողոսկեալ և թռուցեալ։ Իսկ յետոյ ժամանեաց ուժգնակի ՚ի լսելիս նորա աղաղակ ինչ համաշխարհական և սոսկալի՝ բարձրացեալ խառնիխուռն հնչմամբ յանդնդոց անտի խաւարի։ Վասն որոց նա անդր անվեհեր ՚ի խնդիր անդնդային զօրութեան կամ հոգւոյ՝ առ ՚ի հարցանել ՚ի նմանէ, եթէ ՚ի սահմանս անդ խաւարի կայցէ՞ Ճանապարհ առ դրացի լցոյն։ Այլ ահա անդէն եհաս զաթոռն Ալհի, և զխաւարային վըրան նորա հանգոփիւռ սփռեալ ՚ի վերայ անդնդոց ապականութեան։ Լսազմեալ կայր յաթոռ ընդ նմա և սամուրազգեստն 99 Վխշեր, երիցագոյնն արարածոց՝[100] թագաւորակից նմին։ Այս առընթեր նոցա Ալրկոս [101], և Ալգէս [102], և ահեղանունն Վեմոզորգոն [103]։ Այս զկնի նոցա Ալղաղակ, Վխլուաճ, Ալգմուկ, Շ փոթ խառնափնդոր, և Այրկպառակ կուրթիւն հազարբերանեան և բազմաբարբառ [104]։

Այս որս համարձակագոյնս ուղղեալ Սատանայի զբան իւր՝ խօսեցաւ օրինակ զայս։ Օ՜ օրութիւնք և հոգիք խաւարին անդնդոց՝ Ալ լինդ, և հինաւուրց Վխշեր. ես ոչ եկի ՚ի հետազօտութիւն և ՚ի վրդովումն զաղտնեաց ձերոյն թագաւորութեան. այլ ակամայ յածեալ ընդ անասպատ խաւարչին (զի ընթացք Ճանապարհ՚ի լոյս անդր ձգին) յընդարձակ ինքնակալութեան ձերում շրջիմ առանձինն, զոգեբս մոլորական և անօգնական. և եմ ՚ի խնդիր շաւղացն ընդ երկինս, եթէ

կայցեն ՚ի սահմանապլուխս անդ տիրապետին վայ-
րացդ ։ Այլ կամ՝ եթէ արքայն երկնից զրաւեալ
ունի զայլ սահմանս ՚ի տէրութենէ ձերմէ, փու-
թամ հասանել անդր՝ ձանապարհորդեալ ընդ
խորս անդնդոցդ ։ Այդ՝ ուղղեցէք զկնայս իմ,
զի ոչ դուշնաքեայ ինչ լինիցին վարձք ձեր և օ-
գուտ՝ եթէ զգաւառս կորուսեալ , մերժեալ
զբռնակալութենէն՝ դարձուցից անդրէն ՚ի նախ-
կինն խաւար , և յիշխանութիւն ձեր ( որ է ա-
ռաջին նպատակ իմումս ձանապարհի ) . և վերս-
տին կանգնեցից անդամսոր զդրօշակին Հինաւուրց
Պիղերոյ ։ Այլ յայնժամ ձեր լեալ օգուտն , և իմ
վրէժխնդրութենն ։

Օ այսօրինակ խօսեցաւ Սատանայ ։ Այլ Հինաւ-
ուրց անիշխանն պատասխանի չտուեալ բանիւք, և աղձա-
տեալ դիմօք արար նմա զայս պատասխանի ։ ( )-
տարակոյս դու , քանզ ձանաչեմ զքեզ. զի դու ես
հրեշտակն՝ հզօր հրամանատար զօրաց. որ սակաւ
մի յառաջ զլուխ ամբարձեալ ընդդէմ արքային
երկնից՝ կործանեցար ։ Ցեսի ես և լուայ զան-
կումն ձեր . զի անհնար էր այնչափ բազմութեան
զօրաց զանխուլ անցանել ընդ ահագին անդունդս՝
զկնի չարաչար կործանման , և ամենալից խոր-
տակման ։ Այլ զրուանք երկնից հռսեցին արտաքս
զբազմութիւն գնդից յաղթական զօրաց ՚ի վա-
նել զձեզ ։ Այսմ ես առտնօր ՚ի պաշտպանու-
թիւն ըստ կարի փոքրու սահմանիս՝ որ ինձ տուեալ
և տակաւին նուազն յերեսաց խռովութեանց՝
որք ՚ի ներքս մտանեն ՚ի տարաշխարհս զգուշա-
նան զօրութեան հինաւուրցն Պիղերոյ ։ Օ առաջ
ջինն միայն դժոխքն՝ որ է բանտ ձեր , ձգեալ կայր

'ի նեղքոյ լայն և ընդարձակ· իսկ այժմ՝ սակաւ ժամանակք են, զի հաստատութիւնն երկնից, և երկիր՝ միւս ևս աշխարհ, կախեալ կան 'ի վերոյ թագաւորութեանս իմոյ, կապեալ ոտիւ չղթայիւք յոյժ կոզմանէ երկնից՝ ուստի անկան լեգէոնք ձեր։ Զդ՝ եթէ գնացք քո ուղղեալ էն ընդ այդ Ճանապարհ, չես հեռի 'ի նմանէ· բայց վտանգ անձինդ հասեալ կայ մծատլուա։ Զյլ երթ ողջամբ, և յաջողեսցի քեզ։ Յափշտակութիւնն քո, և աւար, և կործանումն լինիցին իմ բաժին։

Վադարեաց նա 'ի բանից անտի իւրոց· և Աստանայ ոչ ևս իշխեաց տալ նմա պատասխանի։ Ակամն խնդացեալ ընդ մերձենալ ընթացից իւրոց 'ի ծովէ անտի 'ի ցամաք՝ նորոգ զուարթութեամբ, և հաստատեալ զօրութեամբ եկաց արձանացեալ յամայն ընդարձակութեան անդ իբրև զաշտարակ հրեղէն։ Զի 'ի միջի հարուածոց մարտադիր տարերց շուրջանակի՝ երացց գիւբ Ճանապարհ· սաստկագոյն ևս ըմբռնեալ 'ի վտանգս՝ քան Զրգոս [105] յանցանել իւրում ընդ Ասոփոսն [106] 'ի միջ ժայռից բաղխելոց ընդ միմեանս, և քան Աղիսև [107] 'ի խուսափել նորա ընդ ձախակողմն նաւուն յերեսաց Վարիւբդեայ [108], և 'ի զեկավարել ընդ միւս յորձանուտն։ Զայ այսպիսի նեղութեամբ, և բուռն Ճգամբ յառաջեաց նա յընթացս իւր։ Բայց զկնի անցանելոց նորա միանգամ, և անկանելոց Արգոյն՝ ոմ սոսկալի փոփոխմանս, Եղք և Ահ սկսգագոյնս զՀատնացեալ շաւղաց նորա՝ զի այս էին կամք երկնից [109], սալայատակ յօրինեցին Ճանապարհ լայն և բազմակոխ 'ի վերայ անցնդոց խաւարի· որոյ

յորձնեռանդն խորութիւն տարաւ հեղութեամբ
ի վերայ իւր զկամուրջն ահագին ձգեալ ի դժո-
խոց անտի ի մակերևոյթ անդը դիւրակործան
աշխարհիս ։ Ընդ որ հոգիքն չարութեան դիւ-
րաքայլ անցանեն յայս կոյս և յայն կոյս՝ ի փոր-
ձել կամ ի պատժել զմահկանացուս. այլ ոչ
վնասս՝ զորս Աստուած, և բարի հրեշտակք նորա
պահեն առանձին շնորհօք ։ Հուսկ յետոյ նշմարէ
նա զՀոսանս երկնային լուսոյն՝ որ ի պարսպաց
անտի երկնից առկայծէր ի ծոց աղջամղջին Վի-
ճերոյ զաղօտ ինն լուսափայլութիւն ։ Յայնմ վայ-
րի զառաջինն սկսանի լայնատարած սահման Հնու-
թեան. և Ալիքն իբրև զթշնամի խորտակեալ՝
տեղի տայ վայրիք և ձգմաբ ։ Այս անդ ապա Աս-
տանայ սակաւ մի աշխատութեամբ ի սկզբանն,
և հեշտեաւ զկնի՝ յառաջ խաղայ ի վերայ հան-
դարտագոյն ալեաց առ լոյսն կեղակարծ. և իբրև
զնաւ զերծեալ ի բռնութենէ հողմոյ՝ խնդագին
փութայ հասանել ի նաւահանգիստ անդը, թէ-
պէտև խզեալ պարանօք, և խորտակեալ կայ-
միք ։ Այս կամ ի դատարկութեան անդ օդա-
նման և լայնածաւալ՝ ուղղէ նա զտարածեալ
թևս իւր ի զննութիւն ի մծոյ՝ եթերականն
երկնից, որ էր ընդարձակատարը յանսահման շըր-
ջապատի անդ քառակուսի կամ բոլորակ, զար-
դարեալ Պաղեան[110] աշտարակօք, և մարտկոցօք
կենդանափայլ շափիւղայ ։ Ընդ նմին կախեալ կայր
ոսկի շղթայիւ և աշխարհս զուգահաւասար ըստ
չափու մեծութեան փոքունց աստեղայց առընթեր
լուսնի ։ Ընդը լի անհնարին վրէժխնդրութեամբ՝
ահաւասարեաց կորստականն ի չարաշուք ժամու [111],

# ԴՐԱԽՏ ԿՈՐՈՒՍԵԼՈՒ

ԳԻՐՔ Գ

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Նստեալ Աստուծոյ յաջոյ իւր՝ տեսանէ զՄաստոյ, զի թուլացեալ մտանէ յաչխարհս զոր նորոգ ստեղծեալ էր Նորա յայնժամ: Ցուցանէ զայն Որդւոյ իւրում՝ որ բազմակ կոյ ընդ աջմէ Նորա: Ծանուցանէ յառաջագոյն զյաղթութիւն Սատանայի՝ ի խոտորեցուցանել անդ զազգ մարդկան: Իրաւացուցանէ զարգարութիւն իւր և զնմանատուութիւն՝ ի սակս սաեղծանելոյ զմարդն անձնիշխան, և կոչոյ բաւականին առ՝ ի զգէմ ունել փորձոլին: Սակայն և այնպէս յայտ առնէ զնուրհնութիւն Հոգւոյն Նորա՝ զոր կամէր ցուցանել առ նա. զի ոչ անկանի նա առ չարութեան՝ որպէս Սատանայ, այլ պատրեալ ի նմանէ: Որդին Աստուծոյ գոհանայ զՀօրէ իւրմէ վասն յայտնութեան խորհրդոյն շնորհաց՝ զոր հանդերձեալ էր ցուցանել առ մարդն: Ահա Հայր վերստին ծանուցանէ նմա, թէ անհնար է շնորհաց լինել ի վերայ մարդոյն՝ առանց հաւատացելոյ զպատաս տաուածոյին արդարութեան: Մարդն յանցեաւ ընդդէմ մեծ վայելչութեան Աստուծոյ՝ ի ցանկալ անդ Աստուածութեան, նմին իրի պատասխան գոլով մահու համօրէն ծննդովքն հանդերձ՝ պարտ է նմա մեռանել, եթէ չգայցի որ ձեռնհաս ի հաւատացնել փոխանակ յանցանացդ Նորա, և կրել զպատիժս Նորա: Որդին Աստուծոյ մատիւբ ընծայէ զանձն իւր ի փրկանս մարդոյն: Հայր ընդունի զայն: Յաչմանէ զմարգարէսն Նորա. ծանուցանէ զպարտութիւն Նորա զեր ի վերոյ քան զամենայն անուն յերկինս և յերկրի. և հրամայ ոտ հրեշտակաց երկիր պագանել նմա: Հնազանդին Նորա, և ի նուագս քնարաց իւրեանց օրհնեն միաձայնութեամբ զՀայր և զՈրդի: Հայեմ վայրի իմանի Սատանայ յանդգնեալ երեսս գնոյ աշխարհս. և յաճեալ անդամօր գասանէ նախ զառջինն կոչեցեալ զհինի Լամբս ուրացութեան: Ոչնչ, և զինչ իւր գիմն անգր: Անգուսա անցանէ ի գուռն հաւատացութեան երկնից՝ որ ունի զսանդուղս եղանելի. և ի ջուրսն ի վերոյ քան զհաստատութիւնն՝ հոսեալ առ նոքօք: Նշանակ տպա ի գուռնն արեգական: Գտանէ անդ զՄերիկ զՀայեան Նորա: Փոխէ զանձն իւր ի կերպարանս մեղ ի սոսրին Հրեշտակաց, և ցուցեալ զյանկուածիւն բարեխառնած ի տեսութիւն նորոգ պարշտութեան աշխարհի, և մարգոյն զոր կորզեալ էր Աստուծոյ ի նմա, հարցանէ նմա զտեղի բնակութեան Նորա. և նա ցուցանէ նմա: Որ և իջանէ նոքա ի վերոյ լերինն Նիփատայ:

# ԴՐԱԽՏ ԿՈՐՈՒԱԾԱԼ

ԳԻՐՔ Դ։

Ա՛բաթս լեր աստուածայինդ լոյս՝ անդրանիկ ծնանդ երկնից, կամ մշանջենաւորակից Հոգւոյ՝ ի յաւիտենականն՝ եթէ մարթայցայ անսպիտա գրեզ քարոզել[1]։ Ա՛յլ քանզի լոյս է Աստուած, և՝ ի լոյս անմատոյց բնակեալ՝ ի յաւիտենից[2], ի քեզ են օթևապահել լուսասիրեւռ և պայծառապայլ Հոսանեք անստեղծական էութեանն։ Կամ՝ եթէ յաւէտ ախորժես, վտակ ես ակնակիտ և արփիական. զորոյ զաղբերակն ո՞ պատմեսցէ[3]։ Յառաջ քան զարեգակն, և յառաջ քան զերկինս գտար դու. և՝ ի ձայն Հրամանին Աստուծոյ իբրև զօձոյ ծածկեցեր զաշխարհս զղմնեալն՝ ի ջուրց անդնդոց և խաւարի, և ցայտիշատակեալն՝ ի ձեռաց անսահմանն և անկերպարան գատարկութեան[4]։ Աւդ՝ զինի զերծանելոյ՝ ի Սիւգեանն լձէ[5], ժամ է, ինձ վերստին դիմելոյ առ քեզ քաջաձիկ և Թևաք. Թէպէտև ընդերկար դեգերեցայ յայմ անընդալ վայրի. այն ինչ յածեալ՝ ի Թռիչս ընդ խաւարն ներքին և միջին[6] յայլ երեք

նակ քան Հռիփսեանն քնար [7] նուագեցի զՀ, և զյաւիտենականն Վիշէր . ուսեալ յերկնային Մովսէսէ [8] դիմագրաւ իջանել ՚ի խորս դժոխոյն բեր և տարօրինակ խաւարի , և վերստին սլանալ ՚ի լոյս վերին ։ Այնմ իրի դարձեալ համարձակիմ մատչել առ քեզ՝ բարձեալ յանձին զկենդանագոյն լսպտեր քումդ իշխանութեան [9] ։ Ապագոյն դու ծածկեալ կաս յաչաց իմոց՝ որք վայրապար Թաւալին ՚ի խնդիր Թափանցանց Ճառագայթիդ, և ոչ գտանեն զարշալոյս ։ Հմա այսչափ յանկարծակի խափանումն տեսութեան [10] մեծագոյց ըզգոնութս նոցա , և քօղարկեաց գնոքօք լուսն ըստ ուերաձիգ ։ Այլ ես հարեալ ՚ի սէր աստուածայինն երգոց՝ ոչ գադարիմ ՚ի չքնելոյ ընդ ականակիտ աղբիւրս , ընդ հովանաւոր անտառս , և ընդ արեգակնաձեմ լերինս՝ ուրանօր Մովսէսէն [11] դեգերին ։ Ապագոյ յաւէտ զքեզ չքնիմ Աիոնի [12] ՚ի գիշերի անդ [13] և զծաղկազուարճ վտակօքդ ՚ի խոնարհ [14], որք լուանան զոտս քումդ սրբութեան, և գետահոսեալ գնան գեղգեղաձայն ։ Այլ ոչ մինանամ զկրկին զուգահաւասարսն ինձ ըստ քաղքդի՝ ( երանի թէ և ըստ համբաւոյ ) զկոյրսն Թաւմիւրիս [15] և զՀոմիդէս [16], և զՏիրէսիաս [17] և զՎինէոս՝ [18] զհին Մարգարէս ։ Այլ այնպէս յաճիմ ՚ի խորհուրդս՝ որք ինքնակամ հարկանեն գներգաշնակութեան զոտս [19] . որպէս Թռչունն անքուն երգեալ ՚ի մթան , և ընդ ստուերաւ քօղաստղեալ՝ յեղանակէ գնաւագ իւր գիշերային ։ Օ այսօրինակ դառնան եղանակք ընդ տարւոյ . բայց ոչ ինձ միւն , կամ քաղցր գալուստ առաւօտու և երեկոյին . ոչ տեսիլ ծաղկանց գարնանոյն

կամ վարդից ամարայնոյ· ոչ խաչանց և արձա-
ռոց, և կամ աստուածամանան դիմաց մարդոյ ։
Այլ փոխանակ նոցին ամպ և խաւար մշտաւակ
պատեալ վինէ՝ զրկէն զնս ՚ի զուարճութենէն
անտի կենցաղոյս մարդկան ։ Այս փոխանակ մա-
տենից ցանկալի գիտութեան դնի առաջի աչաց
մանց տիեզերական թուղթն գազծոց քնութեան
անգիր և ջնջեալ· և դուռն խնամոտութեան փա-
կեալ կայ առաջն իմ։ Ա՝ ամն որոյ՝ լսոյդ երկնայ-
ին, [20] գնա ինքնին ծագեա ՚ի սրտի իմում· լուսա-
ւորեա զիտս իմ ընդ համբոյն զօրութիւնս նո-
րա · անկեա ՚ի նոսա աչս · սրբեա և փարատեա ՚ի
նոցանէ զամենայն մթամրս· զի կարող եղեց տե-
սանել և պատմել զանեղևոյթս մահկանացուացս
աչաց [21] ։

Այրդ՝ Հայրն ամենակալ ՚ի բարձանց անտի հրե-
ղէն երկնից՝ ուրանօր գերաստիճանեալ նստի ՚ի
վերոյ քան զամենայն բարձրութիւնս [22], խոնար-
հեցոյց զաչս իւր ՚ի տեսանել զսրարածս ։ Ա՝մե-
նայն Աւրբք երկնից չուրջ կային զնովաւ՝ պար
առեալ երբև զաստեղս ։ Ա՝նդ աջմէ նորա բազ-
մեալ էր Որդին միածին՝ Ձառագայթաւէտ պատ-
կեր փառաց նորա [23] ։ Այտես նա զառաջինն յեր-
կրի անդ վերկոսին ՚Ադամայ մեր՝ զրկեն միայն
ցայն վայր ՚ի մարդկային սեւն, և եգեալ ՚ի Ա՝ր-
բահամին փափկութեան · ուրանօր յերջանկու-
թեան անդ կեցին զանմահական պտուղս զուար-
ճութեան և սիրոյ, յարատեակ ասեմ զուար-
ճութեան և անմահանձ սիրոյ ։ Այս ապա ածեալ
զաչս իւր ՚ի դժոխս անդր, և յանդունդս միջին՝
ետես զԱատանայ, զի բարձրացեալ յօդն ստուե-

բանած յայնմ կողմանէ Վիշերոյ՝ [24] մերձենայր առ պարիսպն երկնից : Եւ վաստակաբեկ Թևաքն իւրովք, և յօժարընթաց ոտիւք կայր ՚ի պատրաստի վայրաբերել յանզարդ երեսս աշխարհին՝ որ առանց հաստատութեան Թուէր լինել երկիր հաստատուն . կանգնեալ՝ ոչ դիտեմ, արդեօք յԱվկիանոսի անդ, եթէ ընդ օդս : Ոչնարիկեալ ՚ի նա Պատուծոյ ՚ի բարձանց անտի իւրումն տեսութեան՝ յորում ունի զառաջեաւ զանցեալսն, զապագայսն, և զկանդեղեալս, զայսօրինակ խօսեցեալ յառաջատեսութեամբ ընդ Ադդոյ իւրում միածնի :

Տեսանես միածինդ իմ Ադդի զմոլեգնութիւնն՝ որ կալեալ ունի զկատարածորդն մեր . մինչև ոչ սահմանացն եդելոց, ոչ փականաց դժոխոց, ոչ շղթայիցն բարդելոց ՚ի վերայ նորա, և ոչ խոչ լայնատարած անջրպետութեան ահագին անդնդոցն՝ բաւական լինել ունել զնա : Այլ սովին օրինակաւ տուեալ է նորա զանձն յանկայս վրէժխնդրութիւն՝ որ հանդերձեալ է հասել ՚ի վերայ ապստամբ գրեալ նորա : Այլ արդ զերծեալ նորա յամենայն կապանաց՝ ոչինչ ՚ի բացեայ յերկնից Թևատարած զննութեանցն իւր յառնիթեր սահմանս լուսոյ, դիմ եղեալ անխոտոր յաչխարհն նորաստեղծ, և առ մարդն կարգեալ ՚ի նմա : Եւ կամի զիւրձ առնուլ, Թէ արդեօք մարթ իցէ նմա բռնի կորուսանել զնա, և կամ չարագոյն ինչ անցուցանել ընդ նա պատիւ խաբէութեամբ : Եւ անշուշտ ունի պատրել. զի մարդն ունկնդիր լեալ սուտակասպաս բանից նորա՝ անցանէ հեշտեաւ զմիակ պատուիրան նաւնոր և գրաւական հնազանդութեան նորա : Եւ

այնպէս կործանեսցին, և ուխտաղ բուժ ճնուղք նորա ընդ նմա։ Այլ նորա միայնոյ են յան-
ցանքն· զի ընկալեալ նորա կենդանի զամենայն բա-
ւականութիւն՝ տակաւին գտանի երախտամոռաց։
Վանզի տեղծի զնա արդար և ուղիղ, և ձեռն-
հաս առ՛ի կալ հաստատուն՝ թէպէտև անձնիշ-
խան յանկումն։ Զոյնպէս տեղծի և զերկնային
զօրութիւնս՝ զոր միանգամ կալցէ, և զոր ան-
կան անձնիշխանութեամբ իւրեանց։ Օ՛ի եթէ
չէին ազատ կամ անձնիշխան, զիա՞րդ մարթ էր
նոցա յուցանել զանկեղծ հպատակութիւն իւ-
րեանց, և զանդրդուելի մնեցմունքն սիրոյն·
քանզի թուէր իմն, թէ բռնաբար կատարեն զը-
պարտս իւրեանց, և ոչ ինքնակամ հաճութեամբ։
Այլ յայնժամ զո՞ր գովութիւն մարթ էր նոցա
գտանել լինելն· և կամ ինձ զո՞ր հաճութիւն՝ ի
հնազանդութենէ նոցա, եթէ կամքն և բանն (եր-
կոքին ևս բարի են) ոչ ունելով զանձնիշխանու-
թիւն՝ վարկպարագի հպատակութեամբ ծառայ-
էին հարկի, և ոչ կնճ։ Այդ՝ ըստ արժանեացն
ստեղծման նոցա։ Այս ոչ կարեն մեզադիր լինել
Աբարչի իւրեանց, արարչագործութեանն կամ
ձախատագրի, որպէս թէ նախասահմանութեանն
բռնացեալ՝ ի վերայ կամաց նոցա՝ հատեալ իցի
զանհրաժեշտ վճիռն վերնական։ Այդ՝ ինքնին
սահմանեցին զվատարանջութիւն իւրեանց, և ոչ
ես։ Այթէ յառաջատես գտայ յանցանաց նոցա,
տեսութիւնն իմ չեղև ինչ ձեռնտու նոցին· զի
առանց իսկ իմում յառաջատեսութեան հան-
դերձեալ էին արդիւնանալ։ Այլն սակս առանց
խիք բռնադատութեան, կամ տուեալ ձակա-

տապրի, և կամ անփոփոխ նախասահմանութեան
խնամն յառաջգիտութեան յանցեան նոքա, ա-
ռաքնորդ գտեալ անձանց յամենայն խորհուրդս,
և յընտրութիւն կամաց իւրեանց։ Օ՛ի սովին
անձնիշխանութեամբ ստեղծի ես զնոսա։ Այլ նոյն-
պէս ունելին ինալ, եթէ չէր նոցա անձամբ մատ-
նեալ զանձինս ՚ի ծառայութիւն։ Այսպա թէ ոչ՝
պարտ էր ինձ փոխել զբնութիւն նոցա, և յետս
դարձուցանել զվերին, զանփոփոխելի և զյաւի-
տենական վճիռն՝ որ սահմանեաց զանձնիշխանու-
թիւն նոցա։ Այսոյ որոյ ինքեանք սահմանեցին
զանկումն իւրեանց։ Երեշտակք անկան ինքնա-
հրապոյրք, անձամբ զանձինս փորձեալ և պատ-
րեալ։ այլ մարդն հանդերձեալ է անկանիլ նոցին
պատրանօք։ Այսին իրի արժան է նմա գտանել
զբնորհս, այլ ոչ առաքնոցն։ Այսին օրինակաւ
ողորմութեամբ և արդարութեամբ բարձրացոյի
պատիւն իմ յերկինս և յերկրի։ այլ յաւէտ փայ-
լեսցի ողորմութիւնն իմ առաջին և վերջին [25]։

Այնուհետև զայսօրինակ խօսեր Երայրն յաբիտե-
նական, անուշահոտ բուրումն անմահութեան [26]
ելից առհասարակ զերկինս։ և յերանելի հոգիս
երջանկաց սիրեաց զքաղցրութիւն նորոգ և ան-
ձառելի ինդութեան։ Օ՛ի տեսին զվերդին միա-
ծին յանզգական փառս իւր։ Այութիւնն Երօր
համբուն արտափայլեալ էր ՚ի նմա։ և երեսք նո-
ցա յայսմհետ յոյսանկին զվթութիւն աստուա-
ծային, զսէր անվախձան, և զանչափ ընորհս։ Այր
և խօսեցաւ ընդ Երօր իւրում՝ օրինակ զայս։

Շ՚նորհաւորդ ես բանք քո՝ ո՞ Երայր, որովք
հիւսեցեր զվճիռ քո տիրական, թէ՝ արժան է մար-

դպրն գտանել զշնորհս։ Ա՛ման սորին հանդերձեալ
են երկինք և երկիր բարձրացուցանել զօրհնու-
թիւնս քո անըժելի փառաբանութեամբ. և երկ-
նայինքն շուրջ զաթոռովդ հնչեցուցանել զբեզ
միշտ օրհնեալ։ Ա՛յլ միթէ տակաւին կոմնչիցի
մարդն, վերջինն արարած քո այնչափ սիրելի. և
սրդիկն քո կրասեր զայսօրինակ կործանեսցի դա-
տաստանեալ պատարանօք, թէպէտև կիսց ունելով
զանմտութիւն իւր։ Վա՛ւ ի քէն Հա՛յր՝ որ դա-
տաւորդ ես արարածոց, և ուղղութեամբ են դա-
տաստանք քո։ Միթէ զայսօրինակ հասցի՞ հա-
կառակորդն իւրումն կամաց, և քոյդ ի դէրև
ելցէ։ Միթէ լցցի չարութիւն նորա, և ունայն
գոյն բարութիւն քո։ Միթէ գարձցի նա ան-
դրէն ի գատապարտութիւն իւր պանծանօք՝ թէ-
պէտև յաւէտ ծանրաբեռն, այլ կշռապինդ վրէժ-
խնդրութեամբ. և ձգեսցէ զինն իւր ի գժոխս
զհամբրէն ազգ մարդկան ապականեալ նովաւ։
Նո՛ւ կամ ինքնին իսկ կորուսանիցես վասն նորա
զամենայն արարածս քո՝ զորս արարեր վասն փա-
ռաց քոց։ Նո՛ւ յայնժամ իւ արդարացին բարու-
թիւն քո և մեծութիւն։

Որո՛մ Ա՛բարիչն ամենակալ էաս զայս պատաս-
խանի։ Որդի իմ սիրելի, Որդի ծոցածին, Որ-
դի, Խան, և Խմաստութիւն, և Օ՛զօրութիւն
իմ էական. զամենայն ինչ ասացեր ըստ խորհրդոյ
իմոմն կամաց, և ըստ յաւիտենական վճռոյս։
Այլ կորիցէ իսպառ մարդն, այլ փրկեսցի. բայց
ոչ ի ձեռն կամաց իւրոց, այլ ի ձեռն ազատա-
պարգև ընտրեցոյս։ Լսեմ՛ նորոգել և կանգնել
վերստին զկործանեալ զօրութիւն նորա՝ Թէպէտ

և յանցաւոր է նա, և վերեալ ընդ մեղաց ցան-
կութեան և յիմարութեան: Օ՛ի զօրացեալ նո-
քա լինեն՝ միանգամ զդէմ կալցի խրատն Թըշ-
նամոյ՝ ի մարտի անդ: Ինձ ասեմ զօրացեալ՝ զի
ծանիցէ զտկարութիւն իւր՝ ի կործանման անդ,
և ինձ խոստովանեսցի զիւրկութիւն իւր, և ոչ
այլեւս: Օ՛ամանն ընտրեցեալ առանձին լինի ընդ-
հօք: Կ՛ալաք ձայնի խնամ լուիցեն, և ատեպ խրա-
տուց՝ առ՝ի խոյս տալ՝ի Հանապարհայ իւրեանց
չարաց, և հաշտիլ ընդ իս փութանակի, ցածու-
ցեալ զբարձրութիւն իմ՝ ի հրաւիրել անդ զնո-
սա Հոգւոյն խնդ: Օ՛ի լուսաւորեցից զիսաւար
մտաց նոցա, և զխստութիւն սրտից նոցա կակղա-
ցուցից՝ առ՝ի կարող լինել նոցա կալ յաղօթս,
ապաշխարել զյանցանս, և մնտուցանել ինձ ըզ-
պարտուպատշաճ Հնազանդութիւն: Յաղօթից նո-
ցա, յապաշխարութիւն և՝ ի Հնազանդութիւն մի
գայցեն ականջք իմ ծանրալուր, և ոչ աչք կափու-
ցեալք: Կարգեցից՝ ի նոսա իբրև զպատսպան
զիեզմ մտաց նոցա՝ զդատաւորն իմ միջնորդ:
Եթէ լուիցեն ձայնի նորա, գայցեն զլոյս զինի լու-
սոյ՝ քաջ՝ ի կիր արկեալ զառաքինին. և այնպէս
հասցեն անշուշտ՝ ի վախճանն անվախճան: Ամ-
որք միանգամ անփոյթ առնեն կամ արհամար-
հեն, ոչ վայելեսցեն յերկայնմտութեան իմում, և
ոչ հասցեն աւուրն ընտրեալ: Կ՛ալ խոստովանքն
առաւել ևս խոստասցին, և կոչեսցեն յաւէտ կոչ-
եսցին. և այնպէս գթեալ նոցա՝ անկցին՝ ի խոր-
խորատ: Կ՛ձայ զայսպիսիս միայն զրկեմ՝ ի ընտր-
հայ իմոյ: Ասացի ոչ ամենայն ինչ վնասուն սուաս:
Կարգն անհնազանդ առումնասիրն ուխտին հաւա-

տարմութեան. և յանկացեալ աստուածութեան՝ յանցանէ ընդդէմ գերագոյն իշխանութեան երկնից. և այնպէս կորուսեալ նորա զամենայն ինչ՝ ի բաւութիւն իւրոց յանցանացդ, և ի բարձումն անիծից՝ ոչ այլ ինչ մնայ նմա, բայց միայն պարտիք մահու ընդ իւրոց համօրէն ծննդոց։ Եւ պարտ է մեռանել՝ կամ նմա, և կամ արդարոյ[27] եթէ չգտցի ոք բաւական, և անձնանուէր ի ձիշդ հատուցումն փոխանակ նորա, զմահ յանձն առեալ ընդ մահու։ Եւդ՝ ասացէք Օ՞օրութիւնը երկինից, թէ ուրանօ՞ր մարթ է գտանել զսէր այսպիսի։ Ո՞ի ձեզնէ յանձն առնուլ լինել մահկանացու ի քաւութիւն յանցանացդ մահկանացուի, և իւրով արդարութեամբ կեցուցանել զմեղաւորան։ Եւ մի՞թէ կայցէ յերկինս այսպիսի սէր անզուգական[28]։

Եհարց նա. բայց համօրէն դասք երկնաւորաց կային անբարբառ, և լռութիւն էր յերկինս[29]։ Օ՞ի ոչ ոք գտաւ պաշտպան կամ միջնորդ ընդ մարդոյ. և ոչ ոք իշխեաց յանձն առնուլ զայսպիսի նորա, ընդ նմին և զիրկանան եդեալ ի վէրսայ նորա։ Եւ այնպէս առաջի կայր մարդկան ազգի կորուսան անիրկանաւոր՝ գտատկութեալ անհրաժեշտ ի մահ և ի դժոխս, եթէ Աղդին Եւտուածոյ՝ յորում բնակէ լրումն աստուածային սիրոյն, ոչ էր ընծայեալ զարժանայարգ միջնորդութիւն իւր՝ օրինակ զայս։

Հայր հնարեալ է բան քո՝ արժան է մարդոյն գտանել զնորն։ Եւ մի՞թէ չկայ՞ մարթ ընորհայդ՝ որ գտանէ զանառարկ իւր արագագոյն քան զթեւաւոր պատգամաւորս քո, և ժամանակ,

առ ամենեսեան կանխեալ և անխնդիր, պատանել
Ինարս առ ի Տասանել ի Թիկունս արարածոց
քոց: Զրանկի մարդոյն՝ որում ողորմիս դու սովին
օրինակաւ: Կոլով նորա մեռեալ առ անգամ մի
ի մեզս, և կորուսեալ՝ անմարթ է նմա խնդրել
զօգնութիւն ընարհացս քոց. և ոչ զքո զկնի մտա-
պարտութեան և կորստեան նորա կարող է մա-
տուցանել ըստ արժանւոյն գնութեան քաւութեան
վասն նորա: Զի արդ՝ աւասիկ կամ ես փոխանակ
նորա. մատուցանեմ զկեանս իմ ընդ կենաց նո-
րա. յիմ վերայ անկցի սրտմտութիւն քո. և Տա-
մարեա զնա փոխանակ ընդ մարդոյդ: Զամիմ Թո-
ղուլ զծոցդ Հայրենի, և կամաւ այլակերպիլ ի
փառացս՝ մարմնոյ զգեցմանբ. և այնպէս մեռա-
նել Տաճնութեամբ փոխանակ նորա: Զատիկեայկ
մահ զցասումն իւր ի վերայ իմ. այլ ոչ նկուն
եղէց, և մնայից ընդերկար ընդ խաւարային իշ-
խանութեամբ նորա: Զտուր ինձ ունել զյաւի-
տենական կեանս յանձին [30]: Զի կեցից, Թէ-
պէտև այժմ յանձն առնում զմահ՝ որով մարթի Տ
ինձ մեռանել. և պարտական կացուցանեմ զանձն
իմ նմին: Զի զկնի Տատուցանելոյ զպարտս՝ ոչ
Թողցես ինձ լինել որս մահու ի գերեզմանի անդ
ապականութեան. և ոչ անարատ Տոգւոյս տացես
մնալ անդ ընդերկար: Զի յարեայց վերստին
յաղթական. և նուաձեալ զյաղթողն՝ կողոպտե-
ցից ի նմանէ զպանծալի աւար նորա: Զայնժամ
ընկալցի մահ զվերս իւր. և խայտառակեսցի՝ ոչ
կացեալ ի մնայնդրաւէր խայթոցի իւրմէ: Զայն-
դարձակութեան անդ վերին օդոյ վարեցից ի վե-
րութիւն զգժոխս գերասանձ յաղթութեամբ՝ ի

նախատինս նորուն իսկ դժոխոց · և ցուցից կալաւ
նաւաւոր զնշխանութիւն խաւարի : Այլ քո հաձեալ
ընդ տեսիլ հանդիսիդ՝ հայեցայս ի խոնարհ ի
բարձանց երկնից · և զուարձացայս յանձն քո , այն
ինչ յարուցեալ իմ քեզ՝ խորտակեցից զամենայն
թշնամիս իմ , և զմահ · և լցից դիակամբք նոցա
զգերեզմանն ապականութեան : Այլ ապա բազ-
մութեամբ փրկելոցս մերոց յերկինս , վերատին
դարձ արարեալ յերկրէ զկնի ընդերկար բացա-
կայութեան՝ առ ի լինել Հայր յանդիմման երեսաց
քոց · յորում ոչ և ս ցուցցի ամպ սրտմտութեան,
այլ պարզութիւն անխռով խաղաղութեան · զի
յայնմհետէ ոչ և ս գայի տեղի ցասման առաջի
քո , այլ կատարեալ ուրախութեան :

Վ ախձանեաց նա աստուծոյ զբան իւր · այլ
քաղցրագութեամբ տեսիլ դիմաց նորա տակաւին խօ-
սէր լռելեայն , և ընկեր զսէր անմահական առ
մարդն մակկայացու : Այլ առաւել և ս արտա-
փայլէր ի նմա հնազանդութիւնն որդիական · որ
և իբրև զպատարագ ինքնանուէր յընծայումն՝
ակն կալեալ ճնոյր կամաց Հօր իւրոյ ամենակալի·
Օ արմայեալ կայն երկինք , և ոչ դիտէին բզ-
միտս բանից նորա , թէ կինչ ակնարկէն : Այայց
Հայրն ամենակալ անդէն արար նմին զայս պա-
տասխանի :

Վաւ միայն զատար հաշտութիւն յերկինս և յեր-
կրի փոխանակ մարդոյն՝ որ անկեալն է ընդ բար-
կութեամբ : Վաւ միակ հաձութիւն անձին իմոյ :
Վաւ ծանեալ քաջ զանչափութիւն սիրոյս առ
արարածս , և յաւէտ առ մարդն՝ զոր ստեղծի ի
վերջոյ · մինչև ի սակս նորա Թողուլ ինձ զբեզ ի

ծոցոյ և յաձոռակցութենէ իմմէ, զի հեռացեալ
առժամանակ մի՝ կեցուսցես զկորուսեալ ազգ
մարդկան։ Արդ՝ միացո՛ ընդ քումդ բնութեան
զնոցան՝ զորս դու միայն կարող ես փրկել։ Այր
ինքնին՝ ի մէջ մարդկան յերկրի անդ, առեալ
զմարմին յիւրումն ժամանակի՝ ի կուսական արգ
գանդէ անձառելի ծննդեամբ։ Այր գլուխ մարդ
կան ազգի փոխանակ Ադամայ՝ թէպէտև որպի
ես նորա։ Որպէս ամենեքին կորնչին ի նմա, նոյն
պէս՝ ի քեզ յարմատդ երկրորդ կենդանացին
համօրէն փրկեալք։ բայց ոչ ոք առանց քո։ Յան
ցանք նորա պարտաւորս կացուցանեն զամենայն
որդիս նորա, այլ արդիւնք քո և փրկանք ազա
տեսցեն զորս միանգամ հրաժարեալ յանխրատու
թենէ իւրեանց՝ կեան պատուաստեալ՝ ի քեզ, և
ընդունին՝ ի քէն վնորոգումն կենաց։ Սովին օրի
նակաւ արդարն հատուսցէ փոխանակ մարդոյն։
Պատեաց, մեռաւ, և յարուցեալ՝ ի մեռելոց՝
յարուսցէ ընդ իւր զեղբարս իւր. և փրկեսցէ
զնոսա պատուական արեամբն իւրով։ Այս այն
պէս սերն երկնային ջնջեսցէ զատելութիւնն դժո
խոց, տուեալ զանձն՝ ի մահ՝ ի փրկութիւն մարդ
դոյն։ Այս այնպէս ճանրագնի փրկեսցէ զնա, որ
չափ դիւրագին կորոյս ատելութիւնն դժոխոց։
Այս տակաւին և կորուսցէ զորս ոչ ընդունին
զնորա։ Այս՝ ի խոնարհիլ քո՝ ի զգենուլ
զմարդկային բնութիւն՝ ոչինչ նուազեցուցանես
կամ անարգես զքոյդ. զի տակաւին բազմեալ՝ ի
գերագոյն աթոռ երանութեան հաւասար Հօր քո՝
վայելես յաստուածեղէն փառս։ Սակայն և այս
պէս առ՝ ի փրկել զաշխարհ՝ ի վերջին կորստենէ

նորա՝ յանձն առնուս Թողուլ զամենայն ։ Որով և վաստակօք յաւէտ քան իրաւամբք ծնդեան գանախ Որդի Աստուծոյ · արժանի եղեալ այնմ յաւէտ բարութեամբ քո , քան մեծութեամբ փառացդ · զի քան զփառս սէրն առաւելեալ գտաներ ի քեզ ։ Ոչ այնպէրիկ խոնարհութիւն քո բարձրացուսցէ ընդ քեզ և զնորդութիւն քո յայս աշխո[31] ։ Ասացիս ի սմա մարմնացեալ · և օձեալ միահեծան արքայ՝ Թագաւորեացես Աստուած և Արդ , որդի Աստուծոյ և որդի Արդոյ միանգամայն ։ Տայ ի ձեռս քո զամենայն իշխանութիւն · Թագաւորեա միշտ որպէս և վայել է քեզ ։ Սկսիցի ի նեբրոյ քո՝ իբրև գերագոյն Վլխոյ , զԱթոռս , զԻշխանութիւնս , զՊետութիւնս և զՕրութիւնս ։ Արկինեսցի քեզ ամենայն ծունր երկնաւորաց , և երկրաւորաց , և սանդարամետականաց ։ Ամն լինչ սպասաւարկեալ փառաւք՝ ծագեսցիս ի Հաստատութեան անդ երկնից · և առաքեսցես զՀրեշտակսն քո զհրեշտակապետան ի կոչումն յատեանդ ահաւոր · զի յամենայն ծագաց երկրի կենդանիք և մեռեալք առ Հասարակ յիւրաքանչիւր դարս՝ Հայձեսցի փութացին ի դատաստան քո տիեզերական ։ Ի ձայն ահեղ կոչման զարթիցեն ամենեքեան ի քնոյ ։ Այնընտրեալ քո զՈւրբոյդ՝ դատեսցես զչարան ի մարդկանէ և ի հրեշտակաց · որք և զինի Հարցաւ փորձի իւրեանց՝ անկցին ընդ քումդ դատաստանաւ ։ Յայնժամ լցեալ ժողովոյ զԱիւս իւր՝ կացցէ մշտապահ ։ Երդեհեալ կիզեսցի աշխարհս · և ի մխրոյ նորա բուսցին նոր երկինք , և նոր երկիր՝ ի բնակութիւն արդարոց ։ Որք և զինի բաղ

մաժամանակեայ հեղուԹեան իւրեանց վայելեա-
ցեն յոսկեղէն գաւս [32], լցեալք պտղովք ոսկեղէն
գործոց, և խնդալից յաղԹանակաւ սիրոյ և գե-
ղեցիկ ՀնմարտուԹեան։ Իսկ դու դիցես Ի բաց
զդաւազանդ ալքայական, զի յայնժամ ոչ ևս լի-
ցին պէտք գաւազանի. այլ Ըստուած լիցի ամե-
նայն յամենայնի [33]։ Նայց արդ Պիւցանդիոնքդ
երկնից երկիր պագէք նմա՝ որ յանձն առնու ըզ-
մեզ առ Ի ընուել զայս ամենայն. երկիր պագէք
Որդւոյն, և մեծացուսջիք զնա ընդ իս [34]։

Մինչ չև էր աւարտեալ Ըմենակալին զգան իւր՝
և ահա համօրէն բազմուԹիւնք Հրեշտակաց բար-
ձրագոյն հնչմամբ բազմաձայն և քաղցրանուագ
օրհնուԹեանց հնչեցուցին զերկինս յօրհնեալս [35],
և լցին ովսաննայ [36] երգովք զաշխարհն վերնա-
կան։ Խոնարհեցան յարգանսք յերկոսին աԹոռ-
սըն. և երկրպագեալ Հօր և Որդւոյ՝ եղեն ընդ
երկիր զպաակս իւրեանց, որք էին յօրինեալ յոսկ
ւոյ և յանԹառամ ծաղկէ, յանմոխականէն յայնմ
մանէ՝ որ երբեմն սկսաւ փԹԹիլ Ի Պրախատ անդ
առընԹեր ծառոյն կենաց. բայց ապա Ի սակս
յանցանացն մարդոյն վաղվաղակի տեղի տուեալ
յերկինս՝ ուր զառաջինն բուսաւ, անդ առնեալ.
և ծաղկաւէտ բարձրացեալ՝ հովանի եղև Ի վե-
րայ աղբերն կենաց, և գեղոյն երանուԹեան՝ որ
պարապածէ յերկինս զբաբեղեան [37] վտակ իւր
զԱղիւսեան [38] ծաղկամբք։ Այս զի նոքա անԹառ-
չամ են միշտ, նոքօք կապին ընտրեալ հոգիք զինւո-
լագէզ և զձառագայԹափայլ բոլորս իւրեանց։
Ընդ խիտառխիտ սիւռումն նոցա լուսաձառագայ-
ալայատակն երկնից լերև զծով յասպիսանման

ինդագին զուարճանայր՝ ծիրանագեղեսեալ երկ
նային վարդիւք ։ Այս ասպա վերստին Թագաւոր
գեալ նոցա առին՝ի ձեռս զոսկի քնարս իւրեանց ,
որք էին միտայարմար , և կախեալ կային զմիջոց
նոցա իբրև զկապարձս պայծառափայլ. և այն
պէս սկսան մատանել յերգս սրբութեան քաղցրա
ձայն և զմայլեցուցիչ նախերգանաւք աքանչելի աղ
ուեստականաց ։ Այնոյն ձայնիք , և ընտիրք միայն
ունէին զտեղի յայն մեղեդի երաժշտական ։ Այս
այս էր նուագ ներդաշնակութեան նոցա յերկինս ։

Օ՜ քեզ Հայր՝ ( երգեցին զառաջինն ) ամենա
գո՛ր , անփոփոխելի, անմահ, անսահմա՛ն և միան
ջնեա՛ւր արքայ ։ Օ՜ քե՛զ Հասուիչ համայնից , և
աղբիւր լուսոյ ։ Օ՜ քե՛զ անհեսանելի՛ ի պայծա
ռութեան անդ փառացդ՝ յորում կաս բազմեալ
յաթոռ անմատոյց ։ Այլոց տակաւին՝ի ծածկել
անդ զլրութիւն փայլման ճառագայթիցդ՝ երև
եալ նահ՛ զքանչից քոյ լինդ առնն , որ շուրջ պա
տեալ է զքե՛ իբրև զոտսպանակ՝ առ անչափ պայ
ծառութեան շողոցյանէն զերկինս . մինչև լու
սազգեաց Սրովէից ոչ իշխեցեալ հայել մերձենալ՝
կրկնակի թևօքն պարածածկեն զաչս իւրեանց ։
Օ՜ քե՛զ (երգեցին զկնի) անդրանիկդ արարածոց՝
միածին Որդի , և կերպարան աստուածային ։ Ի
պայծառափայլ դէմս քո երևեալ անաղօտ Հօր
ամենակալի՝ տեսանի անտեսանելին եղականաց ։
Ծագումն փառաց նորա տպաւորեալ օծագայի
՝ի քե՛ . և զեղումն առատութեան Հոգւոյ նորա
հանդուցեալ կայ՝ի վերայ քո ։ Այլ գոյացոյց նա
զերկինս երկնից , և զամենայն զօրութիւնս նորա .
և քա՛ կօրծանեաց զթիկնածու իշխանութիւնն ։

Պահ ի նմին աւուր ոչ անխոչեմեալ յահէդ շանթ
Հոր քո. և ոչ արդելեալ զոգոյավառ անիւս կա
ռայդ՝ որք դղրդեցին զյաւիտենական հիմունս
երկնից, ի խաղալ անդ ի վերայ պարանոցաց մար
տադիր հրեշտակացն վառեալոց։ Այլ զկնի վանե
ցեր քո զնոսա՝ զօրութիւնք քո մեծաձայն քարո
զեցին զքեզ Աղդի զօրութեան Հոր, և վրէժին
դիր ի թշնամեաց անտի։ Աւա՛ ոչ նոյնպէս և ի
մարդոյ։ Օ՜ի զանկեալն ի ձեռն պատրանաց նո
ցա ոչ արկեր՝ Հայր ողորմութեան և Հնարչայ,
խոստացոյնս ընդ դատաստանաւ. այլ յաւէտ խո
նարհեցար ի գթութիւն։ Ո՛ման որոյ՝ ընդ առ
նուլ ի միտ սիրելի և միածին Աղեւոյդ զկամս
գթութեան քո՝ ի վերայ դիւրակոծան մարդոյն,
ի զիջուածն բարկութեան քո, և ի վախճան մար
տի ողորմութեան և արդարութեան՝ զոր երեք
քո ցուցանելին, անդէն անտես արարեալ զերա
նութեամբն՝ յոր վայելէր ընդ քեզ, մատոյց զանձն
իւր ի մահ փոխանակ յանցանաց մարդոյն։ Ո՛վ
անզուգական սիրոյ՝ որ անգիւտն է, և միակ աստ
ուածայինն։ Աւրա՛խ լեր Աղդի Յատուծոյ, և փրկ
չիչ մարդկան։ Յայմհետէ երգեցից զանուն քո
յորդառատ բանիւ, և քնարն իմ հնչեսցէ անմո
ռաց զօրհնութիւնս քո՝ անանձատաբար յօրհ
նութեանց անտի Հոր քո [39]։

Օ՜այսօրինակ անցուցանելին նոքա յերգս ու
բախութեան զերջանկաւէտ ժամն յերկինս ի վե
րոյ քան զհաստատութիւնն աստեղաց։ Յայնմ
վայրի իջեալ Յատանայն ի խոնարհ շրջէր ի վե
րոյ հաստատուն և դիմահար գնոյց բոլորակաձև
աշխարհիս, որոյ կամար բաժանէր զտորին պա

բռնակս Աստուածոյ՝ որք փակեալ կային ի քեսայ Ա՛ն, և յարշաւանաց հինաւուրցն աղջամղջոյ Կատնտ ինչ նշմարեաց զայն՝ ի հեռատեսանէ զառաջինն. այլ յայնժամ եգիտ երկիր անասնան, խաւարչտին, անապատ և ամայաբնակ՝ կարգեալ՝ ի հանդիպոյ ժանտատեսիլ դիմաց անասունոյ գիշերոյ, և մշտատատ մրրկաց Ա՛ն՝ որք բաղխէին յամենայն կողմանց՝ ի խստութեան անդ հատատաուելեան։ Ա՛ինչ յայնմ կողմանէ՝ որ հայի ընդ պարիսպն երկնից, ընդունէր նա՝ ի բաց ուստա գնոյր՝ ինն աղօտաթափալ օդով՝ որ էր տակաւուրց տանջեալ յերեսաց սաստկաբարձ մրրկին։ Ընդարձակութեան անդ լայնածաւալ դաշտին ազատաքայլ ընթանայր Թշնամին։ Արդ՝ ոչ յորժամ անգղ ծնունդ Ամաւսայ՝[40] որոյ ձիւնատարած գագաթն բաժանէ զասպատակաւոր Ամալեարն[41], տարածեալ եղեալ՝ ի սակաւորս գաւառ անտի՝ ի ընտրոյ զորովին իւր մտոյ գառանց և մատաղ ալք ջից արօտականաց՝ ի լերինս՝ Թաչի յակունս Կանգեայ[42] և Ա՛շտասպայ[43], գետոյն Հնդկաց. այլ զՆանապարհային իջանէ, յանդերձի գաշտաւայրսն Ա՛երիկանայ[44]. ուրանօր Վինակայիք[45] վարէն հողմալից առագաստիւք զեղեցնեայ զթեթեւ ընթացս կառս իւրեանց[46]։ Օ՛այսօրինակ շրջէր Թշնամին՝ ի վեր և՝ ի վայր՝ ի հողմահոծեալ ծովուանդ ցամաք երկրի[47], այնգեալ զկնի որոյ իւրոյ առանձինն, զի տակաւին ոչ գտանէր անդ արարած կենդանի կամ անկենդան։ Կայր ապա՝ ի ընտրանդ մեզաց զգօրծս մարդկան ուսեալ Թեամբ, բազմուելիւն յոյժ անցաւորաց և մնոտեաց վերասլացան անդր հանդոյն օդային գոլոր

շեաց։ Սկսոտիք ամենայն, և որք միանգամ հաս-
տատեցին ի մտօտիս զանհնչալի յոյս իւրեանց վկայի
փառաց, յաւերժական անուան կամ երջանկու-
թեան յաստես։ Վկայնէքեն նոքա՝ որք ընկալան
յերկրի զվարձս մտօտի պաշտամանն իւրեանց, զ-
վշտամբերութեան և վկոյը նախանձու՝ խնդրեալ
միայն զփառս առ ի մարդկանէ, գտանեն անդ զար-
ժանի հատուցումն ըստ մտօտի գործոց իւրեանց։
Կրնպես և համօրէն ծնունդք բնութեան ան-
կերպարան, վիժեալ, այլանդակ կամ օտարա-
խառն՝ ի լուծանիլ իւրեանց յերկրէ, ցնդեալ վե-
րանան անդր, և վտարանդի շրջին ցլուծումն վեր-
ջին։ Ալ ոչ ի սահմանակից լուսնի անդ՝ որպէս
երազեցին ոմանք[48]։ Կրկին անդր նախ[49] Հսկայքն
ծնեալք ի յաւիտենից ի խառնուածոց ուսաերայ
անտի և ի գետերայ՝ անուանիք երբեմն մեծա-
մեծ և բազմադիմի գործովք ունայնութեան իւ-
րեանց[50]։ Այլ շինողքն Բաբելայ ի գաշտին Սե-
նաարայ[51]. որք և մտոտի խորտնդովք իւրեանց կա-
մեցին շինել գնորանոր Բաբելս[52], եթէ էր նոցա
կարողութիւն։ Օ կնի եկին այլք առանձինն. որ-
պէս Անմեդոկղէս[53] որ ի Համար աստուածու-
թեան վազեաց կամաւ ընդ բոցն Ետնայ[54]. և
Կղեմբրոտոս[55] որ ի սակս վայելից Պղատոնեան
Կղեսիսիանի[56] ամաց կնքեաց ի ծով։ Եւ այլք բա-
զումք՝ որոց ոչ գոյ թիւ[57]։

Կգիտ Թշնամին զհանապարհայն զայս գոտո[58]
ողջոյն խաւարամած, և շրջեցաւ ի նմա ընդհե-
կար. մինչև կնկի աղօտաձայնիկ ինն լոյս ձգեաց
զլուսնավաստակ ոտս նորա առ կնքն։ Ցետսանէր
նա ի հեռաստանէ զշնուած կնչ մեծակառոյց՝

ամբարձեալ հոյակապ աստիճանօք առ պարիսպն
երկնից ։ Ի գագաթան նորա նշմարէր զգաւխտն
աքթայական պալատի յարկեալ մեծագանձ ։ Ո՛ւռ
կատ նորա զարդարեալ էր յադամանդ և յոսկի·
և դուռնն յոլանայր խիտաւխիտ ճառագայթաւք
ձակ արևելեան գոհարօք ։ Օրըդ զգաղափար
կամ զտաւերագիծ նմանութիւն չիք տեսանել
յերկրի աստ ։ Ամենազեղն բերկրին զնմանութիւն
սանդղոյն Յակովբայ, յորում՝ ի փախչել անդ
յերեսաց Եսաւայ ի Միջագետս Սորոց [59],
եռես ի տեսլեան գիշերոյ ի բացօթեայ դաշտին
Լուզայ [60] զելևէջս Հրեշտակաց՝ գլուսապայծառ
պահապանացն գնդից, և զարթուցեալ աղաղա-
կեաց· Այս դրան է երկնից ։ Այնոյն աստիճանք
սանդղոյս ունէին զառանձին խորհուրդ ։ Եայց
ոչ կային միշտ առկախեալ, այլ ձգելն երբեմն ան-
տեսաբար յերկինս ։ Այս առորոտով նորա ծածա-
նէր ծով յատպիս, կամ մաքրափայլ ի մարգարիտ
Հոսանուտ [61] ։ Այր ի վերջոյ ժամանեաց յերկրէ,
էանց ընդ նա առագաստալից՝ նաւապետեալ ի
Հրեշտակաց անտի· և կամ սրաթռիչ վազեաց,
յափշտակեալ ի կառս՝ զոր ձգելն նժոյգքն հրե-
ղինք [62] ։ Լծողան ասպա սանդուղքն ի խոնարհ·
կամ ի հրապոյրս թշնամոյն յանապհատ ելս, և
կամ ի նախատինս ցասագին աքսորանաց նորա ի
դրանց անտի երանութեան ։ Ի հանդիպել նորա
դէմ յանդիման երանաւէտ վայրաց Երթալոյն
փափկութեան բացան ի ստորև լայնատարած անց
ընդ երկիր, առաւել լայնարձակ քան զոր բացեալ
եղև զինի ժամանակաց ի լերին անդ Սինեայ յեր-
կրին աւետեաց սիրելւոյն Աստուծոյ· ընդ որ ի

վերին հրամանաց բազում անգամ անցին Հրեաք տակը յայս կոյս և յայնկոյս յայցելութիւն տալ միջն երջանկաց [63]։ Եւ աչք նորա ակնարկեցին ընտրանւոք ի Պանեասայ յաղբերէն Յորդանան. նու մինչև ի Լերսաբէկ, որ բաժանէ զերկիրն սրբութեան զԱդիպատոսէ, և ի ծովեզերէն Լ.քա բացւոց [64]։ Այս այսպէս տեսանէր նա զընդարձակութիւն անցից. ուր և եդեալ կային սահմանք Իսաւրի՝ որպէս և աւետաց Ովկիանոս [65]։ Լ.ըշ՝ անդուստ առ ոտս սանդղոյն՝ որ Հանէր ի վեր ընդ աստիճանն ոսկի առ գուռնն երկնից, ձգտեցոյց Մատանայ զաչս իւր ի խնարհ, ըմբռնեալ ի հիացումն ընդ յանկարծակի և միահաղոյն տեսիլ համօրէն աշխարհիս։ Լ.սա օրհնակի լըտեսի, որոյ գնացեալ զգիշերն ողջոյն ընդ անկոխ ձանապարհ բազմավտանգ՝ ի լուսանալ զըւարթաբար առաւօտու ժամանէ ի կատար բարձու լերին՝ որ յանդիման առնէ աչաց նորա անակն կալ զգեղեցիկ և գնորատեսիլ դէմս օտար երկրի, կամ մեծահռչակ մայրաքաղաքի պճնելոյ լուսաշնոյլ բրգաձիք և աշտարակօք՝ զորս ի նմին պահու յոսկի համակէ ձառագայթարձակ ծագումն արեգական։ Լ.սպիսի ինն կալան զարմանք զկնի զին չարութեան (թէպէտև զկնի տեսանելոյ նոքա զերկինս), և յաւէտ նախանձ ընդ գեղադիտեսիլ աշխարհիս։ Ակնարկէ շուրջանակի (և կարի քաջ մարթ էր նմա ի տեղւոջն՝ ուր կայր յայնժամ ամբարձեալ ի վերոյ քան զշրջապատ վրանն համասփիւռ հովանւոյն գիշերոյ) յարևելից կուսէ Կըռոյն [66] մինչև ցաստղն գեղմնաբարձ՝ [67] որ բարձեալ տանի զՆդրոմեդ [68] հեռագոյն յԱ-

լանեաւն[69] ծովուց անդը քան զՀորիզոնն։ Այսպա
ի լայնութեան անդ ձգտեցուցանէ զաչս իւր բևե-
ռէ ի բևեռ[70]։ Այլ անդէն հայեցեալ արկանէ շեշ-
տակի զխուցանդ թռիչս իւր ի վերայ նախկին
սահմանի աշխարհին։ Որ և հեշտեաւ լինի ուղղել
զմոլորեալսն զնացս իւր ընդ լուսափայլ օդն
մարմարտնեայ ընդ մէջ բազմաթիւ լուսաւորաց։
Որպս ի հեռաստանէ համարիր աստեղս, այլ ի
մեծոյ եղիտ աշխարհս[71] կամ կղզիս երանութեան՝
ըստ օրինակի Հեսպերեանն[72] պարտիզայ հուչա-
կելոց առ նախնիս։ Այլ երջանիկ դաշտաց, և
անտառաց, և ծաղկաւէտ հովտաց, և երիցս եր-
ջանիկ կղզեաց։ Զարմացաւնա ընդ տեսիլ նո-
ցա, բայց ոչ եկաց ի խնդիր բնակչացն ի նոսա[73]։
Այլ առաւել քան զամենեսին՝ ոսկի արեգակն
հանդուստատիպ երկնից ի լուսափայլութեան անդ,
ձգեաց առ ինքն զաչս նորա։ Այսան որոյ և ուղ-
ղեաց առ նա զգնացս իւր ընդ հաստատութիւնն
մշտահաստաղ։ Այլ թէ արդեօք ի վէր կամ խո-
նարհ, ընդ կէնդրոն կամ ընդ արտակէնդրոն, և
կամ ընդ լայնութիւնն՝ ուրանօր լուսաւորդ մեծ
բացական ի բազմախիտ համաստեղութեանց ան-
տի հաստարակաց, որք զվայելչականն ունին զէն-
ռաւորութիւն ի տիերական աչաց նորա, մնաս-
կարարէ զոյս, զժուարաւաստուտ են բանքդ[74]։
Ի բոլորել նոցա ոտիւք զաստեղանիշ պարս իւ-
րեանց[75] որք ի թիւս արկանեն զաւուրս, զամիսս
և զտարիս, զարձուցանեն արագ արագ զայլևայլ
շարժմունս իւրեանց առ լսողսեր նորա ամենա-
զուարճ, և կամ Թաւալին ի ձեռն մաղխսեան
շառաւիղաց նորա։ Որ իւրով բաղդատութեամբ

ջերմացուցանէ զամենայն տիեզերս. և ընդմտեալ
հեղիկ և անտեսաբար ի խորս համօրէն մասանց
նորա՝ ազդէ զղօրութիւնն իւր զանեւևոյթ ։ Այն
այսպէս աքանչելի էին պայծառափայլ դիրք նո-
ցա ։ Այնպես անդր թէշամին ։ Օրինակ նմանօրինակ
նմին թերևս ոչ եռես երբեք Այսեղաբաշխին ի
լուսակիր գնտի արեգականդ ընդ տեսողական
խոզուվակ իւր ապակեզարդ [76] ։ Յեղին ի վեր քան
զբան պայծառափայլ՝ զոր եգիպ ի նմա, համեմա-
տեր մետաղաց կամ պատուական քարանց յեր-
կրաւորացս աստի ։ Ինպէսև համօրէն մասունք
նորա ոչ էին նոյնօրինակ պայծառատեսիլ, այլ
առհասարակ յօրինեալ էին ի հատագայթարձակ
լուսոյ իրրև զերկաթ արտաշնկացեալ ի հուր ։
Իրրև զմետաղ՝ մասամբ ինչ թուէր ոսկի, և մա-
սամբ արծաթի սպիտակափայլ ։ Ինչ իրրև զանի
պատուական՝ էր յատեղ կարկեհան կամ ոսկե-
քար, յատենի կարմիր կամ տալզիոն. կամ
երկտասանքն իսկ՝ որք պայծառ փայլէին ի լան-
ջանոցին Այարոնի [77]. և կամ թերևս քարն այն
յատեղ երևակայեալ քան զտեալ երբեք՝ որում
ի ստորինս աստ վայրապար ի խնդիր ելին փիլի-
սոփոսք ընդ բազում ժամանակս [78] ։ Սակայն և
այնպէս Ձարտար արուեստիւն իւրեանց կապեցին
զձռչականն Հերմէս [79]. և վերակոչեալ ի ծովե
զիփոխականին յայլևայլ դէմս զհինաւուրցն Պրո
տեոս՝ [80] զարձուցին զնա ընդ ցքահան [81] իւրեանց
ի կերպարան իւր բնիկ։ Ընդ զինչ զարմանք են,
եթէ դաշտք և երկիր շնչեն անդանօր [82] զմաքուր
ոգի հեղանիւթոց. և զեաք խաղացուցանեն զոս-
կի ընծելի, այն ինչ պետն Վիմիկոսաց [83] արե-

գահն՝ այնչափ ի բացեայ գոլով ի մէնջ, ազգս
հպատակութեամբն խառն ընդ հողեղէնն հիւթոյս
ածէ ի գոյութիւն ի խաւարի աստ մերում զայն
չափ բազմապատիկ և զպատուական իրս՝ գերե-
ցիկ գունով, և անշուշտական արդասեաց[84]։ Այժմ
անդ բանսարկուն զնոր տեսարան ի պէնուէլ ան-
թարթափ աչօք, և անխոով յերեսաց լուսոյն։
Ալ ան որոյ և տայր հրաման աչաց իւրոց խաղալ
արձակ արձակ ընդ երկայն և ընդ լայն· զի տե-
սութիւն իւր ոչ գտանէր անդ խափան ինչ կամ
ստուեր· այլ ամենայն ինչ պայծառացեալ կայր
յերեսաց արեգականն՝ որպէս յարձակել նորա
զձառագայթս ի միջօրէի ի հասարակածէ անտի։
Ոլոր և յայնմ պահու ուշզակի սլանային ի վեր·
նմին իրի և չէր հնար ստուերացն անկանիլ շուր-
ջանակի ի գիմահար մարմնոյ անտի[85]։ Ոսկ օդն
յաւէտ ինն պայծառագոյն գոլով անդանաւր՝ և՛ս
քան զևս սրացուցանէր զտեսանողական շառա-
ւիղս աչաց նորա ի տեսութիւն հեռաձիգ առար-
կայից[86]։ Ալ ան որոյ և անդէն ետես յանդիման
աչաց իւրոց զԵրեշտակն լուսապայծառ՝ որ կայր
անդ, զնոյն ինքն՝ զոր ետես Յովհաննէս յարե-
գակնդ[87]։ Ոարձուցեալ ունէր նա զյետոյս իւր,
այլ պայծառութիւնն կայր անթագուստ։ Ոսկր ոչ
ևի ձառագայթաձիգ արփիական ձառագայթիւք
պատէր զգլուխ նորա· և գիսակք նորա յաւէտ
պայծառափայլ՝ շուրջ անկանէին կոհակաձև զուս-
սովք նորա և զփետրազարդ թևսքն։ Ոտուէր ինն
կարգեալ ի պաշտօնատարութիւն երևելի· և
կայր յառեալ ի խորհուրդս։ Ինդ տեսիլ նորա
ուրախ եղև յոյժ այն պիղծ· զի յուսայր գտա-

նել նովաւ զուղղութիւն վասրանդի ոտից իւրոց
՚ի դրախտ անդր՝ յերանաւէտ բնակութիւն մար-
դոյն . որ և էր աւարտ իւրումն ձանապարհի , և
սկիզբն մերոց աղետից [88] : Այլ նախ յայլ կեր-
պարան փոխեաց նա զանձն իւր . զի մի ՚ի սկզ-
բանն վտանգ ինչ հասցէ նմա , և կամ յասպա-
ղումն լիցի ընթացից իւրոց : Վասն որոյ և երևե-
յայնժամ զոգոյս Վերովբէ մատաղատուտկ : Ո-
թելէտ ոչ էր ՚ի ծաղկի անդ հասակին , սակայն
տակաւին խայտայր յերեսս նորա մանկութիւն
երկնային . և յամենայն անդամս իւր սիրեալ
կային ընդհէք վայելչութեան : Այնմ այսպէս գե-
ղադէղ էին կերպարանք նորա : ՚Ի ներքուստ թա-
գին հոսեալ գիտոյն ՚ի խոզոպիս՝ ծածանելին յեր-
կոսին այտս նորա : Ոսկեա ունէր ՚ի բազմագունեան
փետրոց՝ սրսկեալ յոսկի : Կարձութիւն զգես-
տուն քաջալայելուչ էր յերագութիւն ոտիցն . և
գաւազան արծաթի ՚ի ձեռին ուղղէր զընացս նո-
ա : Ո՛չ մատեաւ նա լռելեայն առնելին : Յա-
ուաջ քան զվերձենալ նորա՝ հրեշտակն լուսափայլ
յայզմանէ անտի ականջացն դարձոյց առ նա ըզ-
պայծառատեսիլ դէմս իւր : Որով և անդէն ծա-
նոյց նմա զլինել իւր Հրեշտակապետն Ուրիել [89] ,
ՙի յերթանց անտի՝ որք հպատրաստեալ կան առա-
ջի աթոռոյն Աստուծոյ պատրաստականք առ հրա-
մանս նորա [90] : Այս հանդերձ աչացդ նորա ընթանան
յերկինս ՙի վեր , և յերկիր ՙի խնայարհ ՙի պատ-
ժամասորութիւն : Այս որ մատուցեալ Աստա-
նայի՝ խոսեցաւ օրինակ զայս :

Ո՛րիել առաջինդ լուսապայծառ փառաւոր յեր-
թանց անտի ՙի Հոզոց՝ որք կան առաջի գերապա-

միշտանեալ աղաւթից Աստուծոյ. որ և իբրև ըզ-
պատգամաւորս նորա տանիս յերկինս զհրամանս իշ-
խանական կամաց նորա՝ ուրանօր սպասեալ մնան
համբոյն որպիսք նորա. և աստ ի նորուն հրամա-
նաց կարգեալ կաս ի նոյնօրինակ պատիւ իշխա-
նութեան. և հանդերձ աչաց նորա բազում ան-
գամ շրջիս ի գնին նորատեղջ արարածոց նորա.
կարի լինի փափաք ցանկութեան ձգեաց զնս այսր
ի գաստից անտի ՝Ներսիսեից յառանձին գնացս՝
ի տեսանել և խմանալ զքանչելի գործս նորա,
և յաւէտ զմարդն՝ որ է առաքինին ի հնորհս բա-
րերարութեան նորա. և յոյր սակս կարգեաց
նա զայս ամենայն աքանչելիս ՝Աստ՝ ասա պայծա-
ռափայլ ՝Ներսիսե, թէ յորմէ՞ ի լուսապատառ
գնտիցդ [91] ունի մարդն հաստատեալ զընակու-
թիւն իւր. և կամ՝ եթէ չունելով նորա զընա-
կութիւն հաստատուն ի միւսմի, թողեալ էիցէ կա-
մաց նորա բնակել յիւրաքանչիւրսն ըստ հաճոյս:
Ո՞ ի մարթացայց գտանել զնա. և զանխտուռ կամ
երես առ երես պչնուլ զարմացմամբ ընդ նա՝ ո-
րում ՝Քարչեսեան հնորհեաց զաշխարհդ, և ա-
ստաձեռնեաց ի նա զայնչափ հնորհս: ՈՒրպէս
զի կարող լիցուք նովաւ հանդերձ և ամենայն ա-
րարածովքս փառս մատուցանել ՝Քարչին ամենե-
ցունն՝ որ իրաւամբք վտարեաց յանդունդս զասու-
տամբ զթշնամիս իւր. և ի հայթհայթանս կորս-
տեան նոցին ստեղծ նորոգակոս զգայզերքնչիկ
ազգ մարդկան առ ի լաւ ևս ծառայել նմա: ՈՒր-
գարև խնամատարեամբ են ամենայն հանապարհք
նորա [92]:

Ո՞ այսօրինակ խօսեցաւ կեղծաւորն խաբեբայ

յանձանօթս ։ Օ՛ի անհնար է Աստուած և կամ
Հրեշտակի՛ ի միտ առնուլ զկեղծաւորութիւնն
զմիակ Յանասարկուն. որ և ջրջի զանխլաբար՝ այլ
ոչ առ Աստուծոյ, ընդ երկինս և ընդ երկիր՝
թոյլտուութեամբ կամաց նորա ։ Այլ կասկածն
բազում անգամ յարթնութեան անդ իմաստու-
թեան՛ ի քուն կայ առ գրուանս նորա . և տայ՛ ի
ձեռս պարզմտութեան զպաշտօն իւր . որ և բա-
րեմտութեամբն հաճարի չլինել անդ չարի , ուր
ոչ տեսանէ զչար ։ Այս ինքն պատրեաց առ ան-
գամ մի և զԱդրիել, Թէպետև ոստիկան էր նա
արեգական, և յերկինս հաճարեալ առաւել սրա
տես քան զամենայն Հոգիս[93] ։ Որ և զայս ետ պա-
տասխանի առ պատրողն չարանենգ ։

Հրեշտակք դեղեցկատեսիլ՝ ցանկութիւն փա-
փաքանաց քոց զկնի գիտութեան գործոցն Աստու-
ծոյ՛ ի փառաւորութիւն Բարբասեհին՛ ոչ ձգէ
զքեզ յանչափութիւն ստգտանելի . այլ յաւէտ
առաւելագունի և արժանի գովութեան. զի քեզ
միայն առաջնորդեաց յերեսաց բնակութենէ
այսր , առ՛ի լինել ականատես վկայ այմ՝ զոր
ոմանք լսեն Թերևս յերկինս , շատացեալ ընդ
լուրն ևեթ ։ Այնպէս արդարև աքանչելի են գործքն
Աստուծոյ , ցանկալիք գիտութեան , և կարի ար-
ժանաւորք երախտագէտ յիշատակաց միշտ ։ Այլ
ո՛ր միաք արարածական կարող է գիտել զնոսին ,
և կամ՛ ի միտ առնուլ զանբաւ իմաստութիւնն՝
որ գոյացոյց զնոսա , և թագոյց զգաղտնի պատ-
ճառս նոցին ։ Այնդ էի ես , յորժամ ընդ բան հրա-
մանի նորա զանգուածն անկերպարան՝ նիւթական
գաղափար աշխարհիս , եկն՛ ի կուտակութիւն .

խառնակութիւնն լուաւ ձայնի նորա· ապմուկն
ահագին տեղի էտ· և անբաւութիւնն անսահման
փակեցաւ ընդ սահմանաւ· Մինչև յերկրորդ
հրաման նորա փախեաւ խաւարն, ծագեաց լոյսն,
և էլ կարգաւորութիւն յանկարգութենէ անտի·
Յայնժամ տարերքն խառնիխուռն՝ հող, ջուր,
օդ և հուր, փութացան արագ արագ յիւրաքանչ-
իւր կայսն իւրեանց· Եւ հինգերորդ դասացու-
թիւնն եթերական սլացեալ՝ի վեր՝ ձևացաւ՝ի
պէսպէս կերպարանս, և յանթիւ բազմութիւն
աստեղաց· որք թաւալին և շարժին գնատձև՝ որ-
պէս և տեսանես· Մինչդեռն ունին գիւրեանց
տեղի, և զառանձին ընթացս· Եւ ոմանք շուրջ
պարսպեն զընդհանուր տիեզերս [94]· Մյժ դու
հայեաց՝ի գունտդ խոնարհագոյն՝ որ յայսմ կողմ-
մանէ փայլէ ցոլացեալ լուսոյն աստի· Այ նա եր-
կիր՝ բնակարան մարդոյն, և լոյն տիւ նորա· Եւ
թէ ոչ ունէր զայն, գիշերն գրաւէր և գնա՝ որ-
պէս զմիւս կիսագունտ նորա· Այլ դրացի Լու-
սինն (այս է անուն գեղեցիկ Լուսաւորչին՝ի հան-
դիպել նորա) հասանէ նմա՝ի ժամու յօգնակա-
նութիւն· զի Ի զի սկզբնաւորեալ, և Ի զի աւար-
տեալ նորա զչքնջան իւր ամենօրեայ յերկինս՝ի
ձեռն լուսոյն զոր աստուստ առնու՝ի փոխ, ընդ
և դատարկէ զերեքկերպեան դիմն իւր՝ի լուսա-
ւորութիւն երկրի· և այնպէս անձնահարկ զգե-
շերն՝ի խաւարային իշխանութենան իւրում·
Իսկ՝ զոր տեսանես՝ի նմա, է գրախտն բնա-
կութիւն Ադամայ· և բարձրաբերձ ստուերըդ
հովանի նորա· Մնխոտոր ունիս զՀանապարհդ ա-
ւաջի քո· Մնայ ինձ Հանապարհն իմ·

Ո՞այս ասացեալ նորա՝ դարձոյց զերեսս իւր
առ ՚ի գնալ։ Եւ Աստանայի խոնարհեալ նմա
ըստ գեղեցիկ քաղաքավարութեան գերապոյն հոգ
ւոց յերկինս՝ որք ոչ անփոյթ առնեն զպատշաճ
մեծարանօք և զյարգութեամբ առ միմեանս՝ ի
ընկալաւ ՚ի նմանէ զողջոյն հրաժարական։ Եւ
ապա փութացեալ ՚ի գծել անտի խաւարման՝ ի
յուսով յաջողակ ելիցն խաղացոյց զՀեղտապ
Թռիչս իւր բազմապատիկ եթերական անուշ
յերկիր ՚ի խոնարհ։ Եւ ոչ էառ զտեղի, մինչև
էջ ՚ի գլուխ գագաթան Ալիփատայ [97]։

# ԳՐՔԱՏ ԿԱՐՈՒՄՆԵՒ.

ԳՐՔ. Գ:

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Կայեալ Սատանայի յանդիման Եդեմայ, և մերձ ՚ի տե-
ղին՝ ուր հանդերձեալ է՝ մատչել ՚ի փորձ յանդուգն ձեռ-
նարկութեան, զոր ինքնին առեալ էր յանձն ընդդէմ Ա-
ստուծոյ և մարդոյն՝ անկանի ՚ի տարակուսանս, և ՚ի բազ-
մադիմի կիրս՝ յերկիւղ, ՚ի նախանձ և յանյուսութիւն.
բայց զկնի պնդեալ հաստատէ զանձն ՚ի չարութեան: Յա-
ռաջ խաղայ ՚ի դրախտ անդր: Նկարագրութիւն արտաքին
տեսլեան և դրից նորա: Անցանէ ընդ սարիսակ նո-
րա. և ՚ի կերպարանս հողմամուխ նստի ՚ի զննութիւն շուր-
ջանակի ՚ի վերայ ծառոյն կենաց՝ որ բարձրագոյնն է ՚ի
դրախտի անդ: Նկարագրութիւն պարտիզի նորա: Տես-
նէ Սատանայ զառաջինն զԱդամ և զԵւայ: Զարմանք նո-
րա ընդ գեղեցկութիւն կերպարանաց նոցա, և ընդ երջան-
կութիւն վիճակին. և չարիմաց միտք նորա ՚ի կործանուճն
նոցին: Լսէ զանխլաբար զբանս նոցա. և ՚ի միտ առնու ՚ի
նոցանէ զմահուրչափ արգել հրամանին ՚ի ճաշակմանէ ծա-
ռոյն գիտութեան եդեալ ՚ի վերայ նոցա: Վասն որոյ և
դնէ ՚ի մտի հաստատել զվորձութիւն նոցա յայնր վերայ՝
հրապուրեալ զնոսա ՚ի պատուիրանազանցութիւն: Բայց
ապա թողու զնոսա առ վայր մի՝ յառաւել ծանօթութիւն
վիճակի նոցա ՚ի ձեռն հնարից: Յայնմ պահու իջեալ Ու-
րիէլ ՚ի վերայ ճառագայթից արեգական՝ ազդ առնէ Գաբ-
րիէլի պահպանապետի դրախտին զվախուստան հոգւոյն չա-
րութեան ՚ի գժոխոց անտի. և զմուտ նորա ՚ի դրախտ
անդր՝ անցեալ ընդ դուռնա արեգական ՚ի միջօրէի ՚ի կերպա-
րանս բարի հրեշտակի. զոր և ծանուցին զկնի մոլեգին շար-
ժուածք նորա ՚ի լերին անդ: Գաբրիէլ խոստանայ նմին
գտանել զՍատանայ՝ մինչեւ է ծագեալ առաւօտու: Հա-
սեալ գիշերոյն ՚ի վերայ՝ Ադամ և Եւայ պատրաստեն
զանձինս առ ՚ի գնալ ՚ի հանգիստ քնոյ: Նկարագրութիւն
հովանոցի նոցա. և պաշտօն երեկոյին: Հանէ Գաբրիէլ
զգունդ իւր ՚ի պահպանութիւն գիշերոյ առ սահմանօք
դրախտին. և զերկուս ՚ի զօրաւորաց անտի հրեշտակաց
կարգէ ՚ի զգուշութիւն հովանոցին Ադամայ և Եւայի.
գունդ մնալ անդր հոգւոյն չարութեան՝ մինչեւ լինչ հա-
րուցէ նոցա ՚ի ննջել անդ: Գտանեն նոքա զՍատանայ առ
ունկամբք Եւայի, զի փորձէր զնա յանուրջս. և կալեալ ա-
ծեն զնա բռնի առ Գաբրիէլ: Յորմէ հարցեալ նորա՝ տայ
պատասխանի յանդուգն, և կամի հակառակել: Բայց նշանն
յերկնից արգելու զնա. և ինքն խոյս տայ ՚ի դրախտէ անտի:

# ԴՐԱԽՏ ԿՈՐՈՒՍԵՑԱ.

ԳԻՐՔ· Դ։

Ո՞ լսելն առնէր յայնժամ զձայնն աղդարար՝ Վայ քեռակոյց երկրի, զորոյ զբարձրագոչ բարբառ լուաւ յերկինս տեսողն Յայտնութեան, այն ինչ զկնի երկիցս խորտակմանն անկաւ վիշապն ի խոնարհ՝ ի վըհժինդրութիւն ի մարդոյ անհնարին սրտմտութեամբ[1]։ Օ՛ի թերևս զգուշացեալ յառաջագոյն Լսխահարցն մերոց ի գալստենէ անտի պաղտնորոգեալ Թշնամւոյն՝ խոյս տային, թերևս խոյս տային ի մահհրաւէր մենքենայից նորա։ Վասզի ահա Սատանայ նորոգ բորբոքեալ սրտմըտութեամբ՝ իջանէ յերկիր ի փորձել յառաջադոյն զազգ մարդկան՝ մինչև է նորա չարախօս լեալ զնոցանէ[2]. և թափել ի վերայ անմեղութեան դիւրակործան մարդոյն զվըհէժ քինու կորստեան նախկին մարտի իւրոյ յերկինս, և ակամայ փախստեան ի դժոխս։ Սակայն մինչև է նորա խնդացեալ ընդ յաջողուած անձինն, և ստացեալ պարծանս՝ խրոխտաբար լինի և անվեհեր սկիզբն առնէ ահագին հանդիսին, որ արդ յերկուսն հա-

սեալ՝ եռացեալ բորբոքի ի խռովայոյզ սրտի նո-
րա, և իբրև զմեղքենայ դիւական՝ առ ինքն ըն-
կերի։ Արհաւիրք և կասկածք խռովեցուցանեն
զաղմկեալ խորհուրդս նորա. և սատանեցուցանեն
ի նմա ի հիմանց զդժոխս՝ զոր յանձին բերէ. և
չ՚հնար նմա փախչել ի նմանէ փոփոխութեամբ
տեղւոյ։ Այլայսութիւնն զարթուցանէ զնիւթ
մտացն՝ որ ի քուն կայ. ընդ նմին և զդառն յի-
շատակ նորին՝ որ էր, և է, և հանդերձեալ է լի-
նել վատթարագոյն եւս. զի չարաչար գործոց մեան
չարաչար տանջանք։ Տիրապետն արձակէ զվշտա-
տես աչս իւր, և զի Ադեմ՝ որ կայ յանդիման
նորա զուարճատեսիլ, և և զի յերկինս, և յարե-
գակն պայծառափայլ՝ որ ամբարձեալ կայ յաշ-
տարակն միջօրեայ։ Այլ զկնի ընդերկար խորհր-
դոց՝ սկսաւ ասել հեծութեամբ օրինակ զայս։

Ով արեգակն՝ որ կաս թագաւորդեալ գեղա-
պանծ փառօք, և երևիս ի քում տէրութեան
իբրև Աստուած նորոյ աշխարհիս, և անտեղք հա-
մբերն ծածկեն զանշքացեալ գլուխս իւրեանց յե-
րեսաց քոց՝ առ քեզ բարբառիմ, այլ ոչ ի բար-
բառ մտերմական սիրոյ. զի գիտասցես, թէ քա-
նի ատելի են լինձ ձառագայթք քո՝ որք յուշ ա-
ծեն լինձ զվիճակն յորմէ անկայ. և զչքեղութիւն
փառացն՝ զոր ունէի երբեմն առաւել քան զգան-
տրդ լուսափայլ. մինչև ամբարտաւանութիւն և
հեգ փառասիրութիւն կործանեաց զիս ի մարտի
անդ յերկինս՝ զոր յարուցի ընդդէմ Աստուածու-
թեան։ Ո՛հ, ընդէր արդեօք։ Օ՛ի նա ստեղծ զիս
ի բարձրութեան անդ շքեղաշուք պատուոյն՝ յո-
րում կայի. բարութիւն նորա ոչ լինէր կշտամ-

բիչ· և ծառայութիւն նորա չէր ինչ ծանրալուծ· Այլ էր նա արժանի այսպիսի փոխարինաց լինելոյ· Օ՛ի զինչ մարթ էր լինել յաւէտ դուշնաքեայ և դիւրագին տրիտուր՝ քան մատուցանել նմա զխառս, և զարժանին հնարս երախտեաց· Ա՛ւ կայն ամենայն բարուքիւնք նորա համարեցան ինձ չարիք· և գտին յիս միայն զչարութիւն· Տարապարտ հպարտացեալ՝ ոչ առի յանձն զհպատակութիւն ծառայութեան· և համարեցայ զերազոյն աստիճանին ամբառնալ զիս յիւր բարձրազոյնն, և անդէն կացուցանել զիս ազատ ի պարտեաց անտի անսահման երախտեացն, որք առ անչափութեան՝ ի վճարել անդ տակաւին ինձեան ի պարտեաց համարի· Ա՛յլ ես ի մոռացօնս արկեալ զամենայն երախտիս նորա՝ ոչ ածի զմտաւ, թէ միտք հնարհակալս ի խոստովանել անդ ըզպարտիս անձին՝ ոչ ևս ինեայ պարտական, այլ անդէն հատուցանէ· և այնպէս ազատացեալ՝ ընդ ևս զպարտս անձին· Այս զինչ մարթ էր լինել թեթևագոյն քան զայդ· Ա՛վ երանի թէ կարգեալ էր զիս տեսչութեան Ա՛րարչին ի հրեշտակ խոնարհագոյն· զի յայնժամ բարեբաստիկ լինէի, և յանձնապատանութիւնն ամենի ոչ ամբառնայր զեղջիւր փառասիրութեան· Այլ զինչ· Ա՛րթ էր և յայնժամ մեծագոյն ևս զօրութեան քան զիս հետամուտ լինել այնմ, և զիս զստորինս ձգել զինի իւր· Ա՛յլ այդպէս· Ա՛հա և այլք ի հզօր զօրութեանց անտի իմոց հաւասարից ոչ անկան, այլ կացին անսասան՝ սպառազինեալ ներքոյ և արտաքոյ ընդդէմ ամենայն փորձութեանց· Ա՛ւթէ ոչ ունէիր դու զնոյն կամ ազատութեան,

և զնոյն զօրութիւն առ ի կալ հաստատուն։ Այլ եթէ ունիցիր, ոճմ և կամ իմ իմիք մարթ ես քեզ մեզադիր լինել, եթէ ոչ անչափ սիրոյ ազատութեան՝ զոր նա հաւասար բաշխեաց ամենեցուն։ Արդ՝ անիծեալ լիցի սերդ. զի սէր և ատելութիւն առհասարակ մատանեն զիս անվախճան աղիտից։ Ցինա անիծեալ լինիր դու. զի կամք քո ընդդէմ կամաց նորա ընտրեաց ազատութեամբ զայն ինչ ընդ որ յիրաւի ստրջանաս այժմ։ Աւաղ անձին իմոյ։ Ընդ որ ձանապարհ փախեայց յերեսաց անսահման բարկութեան, և անսպառ անյուսութեան։ Յո՛ր կողմն և փախեայց, գտաւ նեմ զդժոխս, զի ինքնին եմ դժոխք։ Այլ ի խորխորատի անդ տակաւին խորագոյն ևս անդունդք բացեալ կան ահեղ սպառնալեօք, և կամին կլանել զիս։ Այլ որովք դժոխքն՝ զոր յանձին կրեմ, համարին երկինք։ Զի ապաշաւեա գոնեայ անագան։ Այնեթէ չիք այլ ևս տեղի ապաշխարութեան և ընորհաց։ Այո՛, բայց հպատակութեամբ ևեթ։ Այլ զայն և յիշատակել անգամ ոչ ներեն ինձ ամենին և երկիւղն նախատանաց ի մէջ հոգւոցն սանդարամետից՝ զորս խոտորեցուցի՝ ոչ խոստմամբ հպատակութեան, այլ մեծամեծս պանծացեալ յաղթահարել զԱստուածն։ Այդուհետև ինձ, զի ոչ զգան նորա զծանրութիւն տուգանացն՝ զոր յանձին կրեմ ի սակս մեծաբանութեանցս. և ոչ զտանջանսն՝ որք տան ինձ յոգւոց հանել ի ներքոյ, այն ինչ բազմեալ յաթոռ դժոխոց՝ ընդունիմ զերկրպագութիւն ի նոցանէ։ Վասն որոյ ամբարձեալ ի թագ և ի գաւազան՝ իշանեմ ի խորս անդնդոց, և գերազանցեալ կամ զնորքօք՝ միայն

'ի Թշուառութեան: Ա՛հա այս է փառասիրու-
Թեանն փոխարէն: Այլ Թէ և մա՛րթ իցէ ինձ
ապաշաւել, և գտանել ընդհօք զվիճակն իմ զա-
ռաջին, սակայն վերստին բարձրութիւնն ոչ ապա-
քէն ընդհատ հանդերձեալ է հրապուրել զիս 'ի
խորհուրդս ամբարտաւանութեան, և ժխտել
փութանակի զերդումն կեղծաւորատիւր հպատա-
կութեան: Վխրութիւնն անդրէն գտեալ հրա-
ժարեսցի յայնժամ յուխտէն՝ զոր արար 'ի վիշտս,
իբրև Թէ լեալ իցէ ակամայ և յուսահատս: Օ՛յ
անհնա՛ր է անկեղծ հաշտութեան ունել անդ տե-
ղի, ուր խորագոյն են վէրքք ոխերիմ Թշնամա-
Թեան: Այր և անչուշտ ձգեսցէ զիս միւսանգամ
'ի վատԹարագոյն և անկումն, և 'ի կորուստ ան-
դարմանելի: Այլ այնպէս ինայ ինձ գնել ծանրա-
գնի և կրկին ցաւօք զՀանդիսան առժամանակեայ:
Օ՛յայս քաջ գիտէ և նա՝ որ պատժէն զիս. վասն
որոյ այնչափ հեռի է նա յընդունելոյ զՀաշտու-
Թիւն, որչափ ես 'ի խնդրելոյ զայն: Այր և անյոյս
գոլով 'ի մէնջ՝ ահաւասիկ նորոգ հաճութիւն նո-
րա փոխանակ մերժելոցս և տարագրելոցս արար-
չագործեաց զազգ մարդկան. և 'ի սակս նոցա
զայս աշխարհս: Ա՛րդ՝ և ինձ ոչ ևս ինայ տեղի յու-
սոյ, և ընդ նմին երկիւղի, և ընդ երկոցունց խոյ-
Թի մնացս խղճի: Ա՛մենայն բարիք կորուսեալ են
վասն իմ: Ջարիքն միայն ինան ինձ բաժին: Վէմ
նորօք կալոյց զբաժանեալ ինքնակալութիւնն ընդ
արքային երկնից, և Թերևս Թագաւորեցից 'ի վե-
րայ առաւելագոյն մասին. որպէս ծանիցէ զինի
մարդն, և աշխարհն նորաստեղծ [3]:

Այնուհետև զայսօրինակ խօսեր նա, համօրէն

կիրք անձինն արկին զստուեր մեռելեան զերեզման նորա. և երիցս այլափոխեցին զայն սրտմտութեամբ, նախանձու և անյուսութեամբ. որք և մեռան լինելիք տգեղութեանն, եթէ ոք ակնարկեր ի դէմն նորա: Վասնզի երկնային միաք ազատ են յայնպիսի ժանտատեսիլ այլայլութենէ դիմաց: Որ և անդէն ծանուցեալ Հարտարապետին խաբէութեան՝ հանդարտեցոյց առ արտաքս զամենայն յուզմունս մտացն խռովութեան: Այլ էարկ ի կիր զառաջինն զստուերիւն ընդ կերպարանօք Հմարտութեան՝ ի ծածկոյթ խորին չարութեան, որ դարանեալ կայր ի սրտի նորա ի խնդիր վրիժուց: Վասն այնորիկ մինչև էր նորա վարեալ զայն ի պատրանս՝ ծանոյց Աւրիէլ յառաջագոյն: Որ ի աչս նորա չոգան զկնի Հանապարհի նորա յերկիր ի խոնարհ. և ի լերին անդ Մորեայ տեսին զանհնարին տգեղութիւն դիմաց նորա յերեսաց կրիցն, որում անմարթ էր վիճակել անմահական հոգւոյ: Այլ անդէն քակէ ի միտ էառ զմեղեցին գնացս և զշարժուածս նորա, այն ինչ համարէր նա զանձն անհնարին յումեքէ, և անտես բոլորովին: Որ այս օրինակ յառաջ խաղացեալ նորա՝ եհան ի սահմանս Այդեմայ: Աւրանօր դրախտին փափկութեան յանդիման աչաց նորա պսակէր դալարագեղ պատնեշաւ իբրև ցանկով անդաստանի զգաշտակայնն գլուխ զառ ի վեր բլրոյն. որոյ թփալից կողմանք բարգաւաճեալ յանարուեստ և ի վայրի մացառս՝ անմատոյց ընծայէին զամենայն մեւս: Ի գագաթան նորա աճեցեալ յանպաղք բարձրութիւն մայրի, սոճի, եղևնի և բազմատեսակ արմատոյ՝ լայնանիստ ստուերօքն իւ-

բեանց կազմէին տեսարան իմն անտառազուարճ։ Այլ եւ ելք կարգաց նոցա ի վեր ընդ աստիճանեալ հովանիս՝ թատրոն իմն յօրինեին կանաչազեղ և գեղեցկատեսիլ։ Ոակ ի վերոյ քան զկատարս նոցա ամբարձեալ կայր գալարազուարճ պարիսպն դրախտին. որ և մատուցանէր Ոօլն Հասարակաց[5] զլայնածաւալ տեսիլ իւրումն ինքնակալութեան ի խոնարհ, և սահմանաց նորա շուրջանակի։ Այլ ի վեր քան զպարիսպդ շուրջ պատէին դաստակարդութիւնք ընտիր ընտիր ծառոց ծանրաբեռն գեղեցկատեսիլ պտղովք. որոց ծաղկեալ և ի տոհմականս հասեալ ոսկեզոյն՝ զուարճախառն երևէին ընդ կիսուռածոյ երանգաց։ Ընդեղէն յաւէտ հաճութեամբ տպաւորէր ի նմա զձառագայթս իւր՝ քան ի զուարճագեղ ամպն երեկոյին, և ի ջրաբեր աղեղն[6] զկնի ուռոգելոյն Ոստուածոյ զերկիր։ Ահա այսչափ զուարճալի էր տեսիլ նկարուն տեղւոյդ։ Ի պարզութեան անդ օդոյ՝ ի մաւելէ նորա յառաջ, մաքրագոյն և օդ ելանէր նմա ընդ առաջ. և ընդէր ի սիրտ նորա զգարնանազուարճ բերկրութիւն, որ շատ իսկ էր ի փարատումն ամենայն տխրութեանց նորա, այլ ոչ անյուսութեան։ Ի բաղխել անդ քաղցրասիրտ հողմոց զանուշահոտ թեւս իւրեանց՝ բաշխէին զընկիկ անուշունս իւրեանց. և ի շնչելն իւրեանց ծանուցանէին զկողմանս սահմանացն՝ յորոց յափշտակեալ էին զբալասանեան աւարս իւրեանց։ Արպէս յորժամ ի նաւարկել անդ յայնկոյս դաբանդին Կասպ[7], և յանցանել ընդ Ոզամբիկ[8] բուրեն հողմք հիւսիսոյ և արևելից զԱբեսական[9] անուշահոտութիւնս իւրեանց ի հեռաս

տանէ ՚ի ծովեզերէն համեմից երջանիկն Ա֊բրահիմ [10]։ Եւ նաւորդացն ընդ անագանուճն ընթացեալ ոչ ձանապարհի խրեանց խնդամեաւ՝ Թողայուցանեն զառագաստս, և այնպէս բազում փարսախս զուարձացեալ բերկրին ընդ քաղցրութիւն անուշահոտ բուրմանցն՝ որովք հինաւուրցն պարսիկ Ովկիանոս [11]։ Ո՞այս օրինակ էառ Թշնամին ջհոտ բուրման անուշից դրախտին՝ զորս եկն նա ՚ի Թուխաւորել։ Սակայն և այնպէս յաւէտ հաձեցաւ նա ընդ նոսա, քան Ա֊մոդէոս [12] ընդ ձկանն ծուխ՝ որ հալածեաց զտարփածուն ՚ի հարսնիկ որդւոյն Տովբիթայ. մինչև առաքեալ նորա քինախնդիր վրիժուս ՚ի Ա֊րացն կայից Ա֊գիպտոս՝ պնդեցաւ ՚ի կապանս [13]։

Ա֊րդ՝ յառաջեաց Սատանայ յուշիկ և մտախոհ ՚ի ստորոտ անդր զառ ՚ի վեր և անտառազուարճ բլրոյն. բայց անտի և անդր ոչ եդիտ ըզձանապարհ. զի այնպէս Թաւացեալ էր, որպէս մնացառք յաձել անդ Թփոց և փշոց յանցս ձանապարհին՝ խափան լինին ընթացից մարդոյ կամ անասնոյ։ Ունէր զմի միայն դուռնն՝ որ հայէր ընդ արևելս։ Ո՞ր տեսեալ նախաչարին՝ ոչ արժան համարեցաւ անձին անցանել ընդ նա. այլ ընդոստուցեալ՝ վազեաց անդր քան զսահման բլրոյն կամ բարձու պարսպին, և համբուն ինքեալ ՚ի ներքս՝ եկաց կանգուն ՚ի վերոյ ոտից իւրոց։ Որպէս յորժամ գայլ յափշտակող եղեալ ՚ի խըն֊դիր նորոգ որոյ առ քաղցու՝ զգուշանայ անձին զվայրօքն, ուրանօր հովիւքն տաւարին զհօտս իւրեանց ՚ի ցանկապատ դադարս յանքոյթ դաշտի ընդ երեկս. և վազեալ ընդ ցանկին՝ մտանէ ՚ի

նեբքս ՚ի հօտն ոչխարաց։ Այո՛ որպէս գող զհետ մտեալ մթերից գանձու մեծատան՝ որոյ ստուա- րափակ դրունք ամրացեալ կան քաջապինդ նգօք, և չերկնչին յերեսաց յարձակման, ելանէ ՚ի վեր ընդ պատուհանն, կամ ՚ի վերայ տանեաց, և այն- պէս մտանէ ՚ի նեբքս։ Ոչ այսօրինակ եմուտ ա- ւազակապետն ՚ի փարախն Աստուծոյ զառաջինն, և նոյնպէս մտին զկնի յեկեղեցի նորա վարձկանքն անիրաւութեան [14]։ Այլ ասաւ նա անդուստ ՚ի վեր, և նստաւ իբրև զհողմաղաց [15] ՚ի վերայ ծառոյն կենաց՝ որ բարձրագոյնն էր ՚ի դրախտի անդ։ Այլոյ ոչ ձգեաց ՚ի նմանէ յանձն իւր զձգմարիտ կեանս. այլ նստաւ անդ ՚ի խորհուրդ մահուն կենդանեաց։ Այր ոչ իսկ յածեցոյց զմիտս իւր ընդ զօրութիւն կենսաբեր անկոյդ. այլ կարգեաց զայն ՚ի դիտանոց անձին։ Ոչ որ եթէ քաջ ար- կեալ էր ՚ի կիր, լինէր նմին առհասարակ ան- մահութեան։ Այնպէս ամենայն ոք ոչ քաջ ձա- նաչէ զյարգ առաքինեայ բարւոյն. և զպիտանին ՚ի կիր արկանէ չարաչար, կամ յումպէտս [16]։ Տե- սանէ անդ ՚ի ստորև նորոգ զարմացմամբ զամե- նայն մեծութիւնս բնութեան, մնանաւանդ թէ զերկինս յերկրի՝ կարգեալ յանձուկ սահմանի ՚ի վայելս զուարճութեան մարդկային կենաց։ Ոչ ՚ի պարտէզ էր Աստուծոյ դրախտն փափկութեան անկեալ ՚ի նմանէ Ադեմ ընդ արևելս։ Այր և ձգէր զսահման իւր Աբրահամ [17] մինչև ցարքու- նի աշտարակս մեծին Ելևկեայ [18] ՚ի դաստակերտս Թագաւորացն Յունաց. և կամ ՚ի Տեղասաար՝ [19] ուր որդիքն Ադեմայ կալան յառաջապահն զընա- կութիւն իւրեանց։ Յայն երկիր սիրալի կար-

գեաց Աստուած զպարտէզ իւր ամենազուարճ, Յորոյ արգաւանդաբեր հողոյ քուսոյց նա զամենայն ազգս ընտիր ընտիր և հաճոյական ծառոց ի տեսիլ, ի հոտ և ի ճաշակ : Յորոց միջի բարձրացեալ կայր ծառն կենաց, և տայր զանուշակ պտուղս յոսկի բուսական : Այլ առընթեր կենացն աձեր մահ մեր՝ ծառն գիտութեան : Յորմէ գիտութիւնն բարւոյ գտաւ ծանրագին չարին գիտութեամբ : Ընդ հարաւակողմն Եդեմայ խաղայր գետ լայնանիստ՝ որ ոչ փոխեր զընթացս իւր, այլ անցեալ ընդ բլուրն անտառաշատ՝ անդնդաձայր ի ստորև : Վասնզի ձգեալ էր Աստուծոյ զբլուրդ իբրև զարձրաբերձ գիտանոց իւրումն պարտիզի՝ ի վերոյ քան զհոսանս ջուրց : Որ և ընկլուզեալ հեզիկ ծարաւով ի բազմածակ երակս հողոյ՝ յառնէր զինի աղբիւր զովարար . և բազում վտակօք ոռոգանէր զպարտէզն : Այս ապա միացեալ՝ հոսէր ընդ զառ ի վայր բլրոյն, և ելեալ նէր ընդ առաջ գետոյն՝ որ էր ի խոնարհ . և ի գնացս իւր էր գի երևէր ընդ աղօտ, և էր գի բաժանեալ ի չորս մեծամեծ առաջս՝ ընթանայր յայլևայլ կողմանս . և շրջէր պատէր զսահմանօք երևելի թագաւորութեանց՝ որոց աստանօր չեն պէտք պատմութեան : Այլ յաւէտ պէտք են բանիւք՝ եթէ մարթ իցէ պատմել արուեստիւ, թէ գիարդ յաղբերէ անտի շափիւղայ՝ յածեալ բազմապատիկ վտակացն ընդ մարգարիտ արևելեան, և ընդ առազ ոսկի՝ յոլորտաճաւալ գնացս իւրեանց ընդ հովանեաւ ծառոց՝ խաղացուցանէին գնեկտար [20] յայգեկութեան անդ առ իւրաքանչիւր տունկս. և դարմանէին զդրախտավայել ծա-

ղիկս. զորս ոչ արուեստն Ճարտար սփռեաց բազ-
մառատ յակօսամիջս կամ յընտիր շառաւիղս,
այլ բնութիւնն մշտազուարճ ի լերին անդ, ի
հովտի և ի դաշտավայրս։ Եւ միայն անդանօր՝
ուր արեգակին հարկանէ զառաջինն ջերմութեամբ
իւրով զվայրն բացօթեայ, այլև ուրանօր անթա-
փանցանց հովանին ստուերացուցանէ ի միջօրէի
զձողաբարձ սարփինայս։ Ոչ այսպիսի զուարճա-
լի էր դաշտայինն տեսիլ դրախտիս փափկութեան։
Համեմահարուստ ծառք անտառաց հոսէին ի նմա
զանուշահոտ խէժս և զբալասան։ Եւ պտուղք
ոմանց ոսկի պատեհիւքն ողորկափայլ կախեալ
կային՝ գեղեցիկ ի տեսանել, և քաղցր ի կերա-
կուր։ Հեսպերեանն [21] առասպելք՝ եթէ իցէն
Ճշմարիտ, անտանօր միայն ունէին զտեղի։ Ի միջ
անտառացս կային դաշտք կամ մարգագետինք
պար առեալ շուրջանակի ի ծառոց անտի. և խա-
չինք Ճարակաւորք ի դալարիս փափկութեան. և
բլուրք արմաւենեաց։ Անդանօր և նկարապաճոյճ
գոգ ջրարբի հովտին սփռէր զգանձս իւր՝ զբազ-
մագունեան ծաղիկս, և զանփուշ վարդս։ Ահա
կողմն նորա առաջի ընծայէր զծմակային փապարս
և զղօղագին քարանձաւս յառանձին վայրի. յո-
րոց վերայ հովանացեալ որթոյն՝ տարածէր զծի-
րանափայլ ողկոյզս իւր, և հանդարտաբայլ ուռ-
Ճանօք արկանէր զխիղճս։ Անդ և կարկաջահոսան
ջուրք անկանէին ի խոնարհ ընդ զառի վայր լե-
րինն, սփռեալ վտակացն, և կամ համահաւա-
քեալ ի լիճ՝ որ զբիւրեղեան հայելի իւր առաջի
առնէր եղերացն պճնելոց ի վերջաւորս, և թա-
գաւորդից ի մշտենի։ Ոտչունքն անցեալ կային

անդանօր ի պարերգութիւն ընդ միմեանս ։ Եւ-
ւագք նոցա նուագ գարնայոյց ։ Ընդ շուն[ջ] անու-
շահոտ բուրմանց դաշտի և անտառի քաջ յար-
մարիչն նոքա զնչիւն դիւրաշարժ տերևոցն, այն
ինչ Պան [22] պարագլուխ դասու բոլորիկ ընդ Շ ը-
նորհս [23] և ընդ Ջամն [24] զկաքաւ իւր յանմա-
հական գալնան [25] ։ Ո՛չ գեղեցկազուարճ դաշտն
Ա՛ննայ [26] (ուրանօր Պերսեփոնէ [27] ի հաւաքել
զծաղիկս ինքնին ամիսոփեցաւ ի գեղեցկապոյն
ծաղիկ ձեռամբ անդնդաբնակին Պլուտոյ [28]. յոյր սա
կրս կրեաց իսկ Պևեռը [29] զայնչափ տառապանս՝
շրջեալ ի խնդիր նորուն ընդ ամենեսին). ո՛չ քաղց-
բաշունչ անտառն Պահինեայ [30] առ երի Արո-
տեայ [31]. և ո՛չ հոգեկիր աղբիւրն Աստաղեան՝ [32]
կարէն երբեք մոռանել ի պայքար ընդ դրախտիս
Ադեմայ։ Որպէս և ոչ Ա՛իսկեանն [33] կղզի՝ զոր
զեան պատեր Տրիտոն [34]. ուրանօր ծերունին
Վ՛համ [35] զոր հեթանոսք կոչեն Ա՛մմոն կամ Ա՛մա-
մոզդ Լրեցուոյց, Թագոյց գՈ՛ամլեթիա [36], և զոր
զի նորա զծաղկապսակ մանուկն Պրոմեթիոս [37]
յերեսաց անհարազատ մօր նորա Պհեայ [38] ։ Եւ
ոչ իսկ լեառն Ա՛մարայ՝ [39] ուրանօր Կասիլիկ [40] ար-
քայք պահեն զծնունդս իւրեանց ։ Պհեպհա ո-
մանք անդանօր համարեցան լինել զդրախտն Ա՛ղբ-
մարիտ ընդ Ադամեան գծիւ առընթեր գլխոյն
Ա՛ղեղսի՝ [41] զոր քարաժայռն պատէ պայծառա-
փայլ՝ վերամբարձեալ աւուր միոյ Ա՛նապարհ ։
Ա՛կայն նա կարի լինի ի բացեայ է ի պարտիզին
Ա՛ղբոյ՝ [42] ուր Թշնամին ետես անզուարճ՝ տե-
սիլ նոր և աքանչելի, զամենայն զուարճութիւնս ,
և զազգս կենդանեաց ։

Յորոց միջի զերկուս տեսանէր յաշխատական կերպարանս՝ ուղղորդս, բարձրահասակս և առատաճաճանչս. և ի հոլանի վայելչութեան անդ բնական պատուոյն զարդարեալս իբրև տեարս աշխենեցուն: Այլ կարի իսկ արժանաւորք. զի յանզուգական դէմս նոցա արտափայլէր պանծալի պատկերք Աստուածութեան, ընդ նմին և Ճշմարտութիւն, և իմաստութիւն, և սրբութիւն անբիծ և անառաջառ. արդարև անաչառ, բայց հաստատեալ ի Ճշմարիտ ազատութեան որդւոց՝ յորմէ տիրապէս իշխանութիւն ի մարդիկ: Այլ չէին նոքա զուգահաւասար. զի և սեռք նոցա որոշեալ էին ի միմեանց: Այիոյն կերպարանք կարգեալ էին ի խոհականութիւն և յարիութիւն, և միւսոյն ի քաղցրութիւն և ի ընարհս: Այնմ արարեալ էր ի սակս Աստուծոյ միայն, և միւն ի սակս Աստուծոյ և ընկերին: Այիոյն Ճակատ լայն և գեղեցիկ, և աչքն վսեմահայեաց՝ էին քարոզ գերագոյն իշխանութեան նորա: Այս կախեալ կային յականջս թեան խոպոպիք շուրջանակի ի փունջս զանջատեալ հերաց նորա առնաբար, այլ ոչ խոնարհագոյն քան զլայնութիւն ուսոցն: Ակ միւն զլոկի վարս իւր անպաճոյճ և արձակ արկեալ էր իբրև զքօղ զիջողքն ի խոնարհ. որք և կային կոհակաձև գալարեալ ի խոպոպիս իբրև զխիլեայ որթոյ: Այս այն էր նշանակ հնազանդութեան՝ զոր միւն ընծայէր, և միւն ընդունէր ըստ արժանեաց իւրումն իշխանութեան: Ասայց խոնարհ հպատակութեամբ, վեհանձն ակնածութեամբ, հեզահամբոյր խոստափմամբ, և սիրալիր յապաղմամբ: Այս ոչ իսկ ծածկեալ էին գաղտնախորհուրդ ան-

դամբ նոցա. զի չէ և այ էր պատժապարտ ամենեին, ամենեին ասեմ անպատկառ գործոց քնութեան... Ո այսօրինակ գնային նոքա, և ոչ խուսափէին յերեսաց Աստուծոյ կամ Ջրհեղեղի. զի ոչ անցանէր ընդ միտս նոցա խորհուրդ չարութեան։ Վտանգին ձեռն տուեալ միանգամ ամենքեան խանգակաթիք (որոց նման ոչ գտաւ գինի յոգեխառնութեամբ սիրոյ) Աստ ամենասաստ քան զորդիս իւր գինի, և Այսպ ամենագեղեցիկ քան զդստերս իւր։ Այսպ գինի սակաւուք քաղցր մշակութեան՝ ի պարտիզի անդ՝ բազմացան ընդ հովանաւոր ծառոյն (որ՝ ի դալարուոջ անդ քաղցրասիրտ հնչէր առընթեր զովացուցիչ աղբերն) առ՝ի տալ զանձինս քաղցրիկ հողմոյ, և զհանգիստ իւրեանց յաւետ իմն ընծայել հեշտութեանց, և զքաջառողջ ծառաւ իւրեանց և զախորժակ և քան զնուա քաղցրամոք։ Այ յետ այնորիկ մատեան յընթերս իւրեանց, որ էր կազմեալ՝ ի Ակատաբեան[43] պտղոյ՝ զորս ծանրաբեռն ոստք ծառոյ մատուցանէին նոցա առ ծաղկենկար և փափկադալար ափամբ աղբերն, ուր կային բազմեալ։ Ակերին զքաղցրաձայն շակ միս նոցա. և պատենիւքն հանին զջուր յորդառատ՝ ի ծարաւս իւրեանց։ Ա պակաս պտուղ անդանօր և յանկալի առաջարկութիւնք բանից, ծիծաղք քաղցրալիցք, և զուարճաբանութիւնք՝ որպէս վայել է ամուլոյն գեղեցկաց, զորս զուգեալ է միայն երջանիկ կասն ամուսնութեան։ Այսմ վայրի պար առեալ գնոքօք՝ կայթս հարկանէին ամենայն անասունք երկրի, յայսմհետէ գազանք վայրի, և ամենայն բնակիչք անտառի, անապատի, պառակաց և մրեաց։ Ադիւծն ընդ կատակս

ընդոստուգեալ՝ ձօձէը ի ձիրանս իւր զաղջն դիե-
ցիկ։ Աղջիք, վագերք, յովազք և ինձք ցնծալից
խաղայոյին առաջի նոցա։ Վիշն անարի ի մէջ առ-
նոյր զամենայն քաջութիւն ի պատատել զպա-
տիճ իւր առ ի զբօսանս նոցին։ Ոչն խորամանգ
մեռեալ յարարնի ի նեբբս՝ ի Կորդեան [44] հիւս
ոլորեր զտուտ իւր անկուածոյ. և յանգետս ցու-
ցանէը զհանգէս իւրումն մահաւիթ պատրանաց [45]։
Ասկ պյլք զկնի ձարակելոց ցյադուրդ՝ պառա-
կեալ ի գալարսոջ որոձային. և անթարթափ ա-
չօք հայեին ի խշտիս իւրեանց։ Օ՜ի յայնմ պա-
հու տարաժամեալ արևու՝ փութայր ընդ զառ ի
վայր ընթացս ի կղզիս Ավկիանու [46]. և աստեղք
կարապետք գիշերոյ՝ ելանէին ի վեր ընդ աստի-
ճանս սանդղոյն երկնից։ Յայնմ վայրի Սատանայ
դեռ ևս ի զարմացման գոլով և ի թաղձուածեան
իբրև զառաջինն՝ հաղիւ ուրեմն եգիտ միւսան-
գամ զմոլորեալ շաւիղ իւրոյն բանից՝ օրինակ
զայս։

Ա՛վ դժոխք, զի՞նչ է զոր տեսանեմ ցաւագին
աչօք։ Ի տեղւոջ անդ մերումն երանութեան
կարգեալ կան արարածք յայլ ձևս կերպարանաց։
Ոմանք ևս երկրածինք ոմանք, այլ ոչ հոգեղինք.
սակայն փոքու ինն խոնարհ են նոքա քան զըս-
տապյածս հոգիս երկնաւորաց։ Կտրհուրդք իմ
ի հիացումն կրթեալ՝ ընթանան զկնի նոցա։ Ա՛յր
երանի՛ թէ կարող լինեի սիրել զնոսա։ Օ՜ի պայ-
ծառ փայլէ ի դէմս նոցա նմանութիւն աստուա-
ծային. և ձեռն Աստուծոյ եհեղ ի կերպարանս
նոցա զպատկառ շնորհս։ Ա՛հ ամ՛ենքդ ցանկալի՛՝ ոչ
պիտիք դուք զյեղափոխութիւն ձեր եկեալ հա-

սեալ. զի ընդհուպ ունայնասցին ամենայն զուարճութիւնք ձեր, և դուք մատնեսջիք յաղէտս. այնչափ առաւել՝ որչափ այժմդ վայելէք ի լիուլի ուրախութեան: Ալ երջանիկքդ. բայց տեւողութիւն ձերումդ երջանկութեան ոչ է աներկևան. և ի պահպանութիւն պանծալի բնակութեանդ՝ որ է երկինք ձեր, ոչ քաջ զգուշացան վերինք. մինչև բաւական լինել նոցա մերժել անտի զթշնամին՝ որ արդ մտեալ է ի նմա: Ալակայն ես ոչ գամ առ ձեզ ի կամ թշնամութեան. այլ ողորմիմ լքելոյդ անտէրունչ, թէպէտ և ես անմահն եմ յողորմութենէ: Վասն խնդրեմ հաստատել ընդ ձեզ, և բարեկամութիւն ընդ միմեանս՝ այնչափ սերտ և անձուկ, մինչև յայտնեսցէ բնակել մեզ ի միասին: Վնակութիւնն իմ թերևս ոչ գոյի ձեզ այնչափ հաճոյ, որչափ դրախտդ գեղակազարդ: Ալակայն ընկալարուք զգործս Քարէղին ձերոյ: Վա ետ ինձ զգայն, և ես ուժգին կամիմ տալ: Վժոխք յընդունելութիւն ձեր հանդերձեալ է բանալ զընդարձակ դրունս իւր, և յղել ձեզ ընդ առաջ զհամօրէն իշխանս իւր: Ընդ գոլիք ընդարձակագոյն և տեղի ի բնակութիւն յոգնաթիւ ծննդոցդ: Ապա եթէ չիցէ այն տեղի ընտրելագոյն, հնարկս կալցիք նմա՝ որ հարկեցոյց զնա ակամայ յայս քէն վերիժուց առ ի ձէնջ անմեղացդ ի սակս զրկանաց նորա: Այս թէպէտ մնրթ է ինձ շարժիլ ի գութ ընդ անպարտ անմեղութիւն ձեր՝ զոր և զգամ յանձին իմում; սակայն արդար իրաւունքն, ընդ նմին և պատիւն և ինքնակալութիւնն ընդարձակեալ քինու ի զրաւել զնորաստեղծ աշխարհդ, բունադատեն զիս

յայն ինչ, յորմէ պարտ էր ինձ խորչել՝ թէպէտև դատապարտեալ ՚ի դժոխս [47]։

Օ այսօրինակ խօսեցեալ Յիշնամէնն՝ ՚ի չքմեղութիւն դիւական դործոց իւրոց էառ ՚ի ձեռին գՀարկն՝ որ է պատձառանաք բռնաւորի։ Եւ ապա ՚ի կայից անտի բարձրաբերձ ծառոյն իջեալ ՚ի խոնարհ՝ խառնեցաւ ընդ դասակս չորքոտանեաց։ Եւ էր գի ձևանայր իբրև գինի, և էր գի իբրև գինւոյ ՚ի նոցանէ՝ որպէս և գիտող կերպարանաք նոցա լսեաս ձեռնտու լինելին նմա ՚ի նշմարել ՚ի մօտոյ զորս իւր, և գաղտ խմանալ՝ թէ որո՛վ հնարիւք մարթ էր նմա առաւել ինչ ուսանել յաղագս վիճակի նոցա ՚ի բանս կամ ՚ի գործս նոցա։ Եւ երթ իբրև զառիւծ սիգադեմ շրջէր գնոքօք՝ ունելով զաչսն փայլակնացայտ. և մերթ պառակեալ դարանէր ՚ի գեմսի իբրև գվագր, որոյ տեսեալ իցէ յանկարծակի գերկուս գեղեցիկ մատաղատունկ եղջերուս խաղալ ՚ի դաշտի անդ առ երկի անտառի։ Եւ ապա յարուցեալ՝ ստէպ փոխէր զդէմս պառակտուր զգուշութեան իւրոյ, որպէս թէ կամէր ընտրել զտեղին՝ յորմէ մարթ իցէ նմա անվրէպ յարձակիլ ՚ի վերայ նոցա, և արկանել ՚ի ձիրանս իւր գերկոսին միանգամայն։ Եւ յայնժամ վայրի նախահայրն Ադամ ուղղեալ զգան իւր առ նահապետն Աբրահամ՝ ասէ՝ շրջեաց յունկնդրութիւն գթըշնամին՝ որ էր ողջոյն ակնջացեալ գինւոյ անլուր գրուցացն նորա։

Ինակ օգնական իմ, և հատո՛ր անձին իմոյ՝ առաւել սիրելի ինձ քան զամենայն զուարձութիւնս դրախտիդ. անշուշտ պարտ է զօրութեանն՝ որ ստեղծ զմեզ, և ՚ի սակս մեր զայս աշխարհ մեծա-

մարմին՝ լինել անսահման բարի, և ըստ իւրումն բարութեան առատաբաշխ և ինքնիշխան։ Ո՛չ նա գոյացոյց զմեզ ՚ի հողոյ, և կարգեաց յայսոսիկ վայելս երջանկութեան, զմեզ՝ որք չունէաք ինչ արգասիս, և չեմք ձեռնհաս լինել իւիք սիտանալ ցու նմին։ Սակայն նա ոչ այլ ինչ խնդրէ ՚ի մէնջ տրիտուր, բայց միայն զգահպանութիւն այսը դիւրատար պատուիրանիս. այն է՝ յամենայն ծառոյ դրախտիս, որք բերեն զպտուղս բազմապատիկ և քաղցրաձաշակ պտուղս, չուտել միայն ՚ի պտղոյ անտի ծառոյն գիտութեան՝ որ տնկեալ է առընթեր ծառոյն կենաց։ Յապէս ահա առընթեր կենաց բուսանի մահ. որ զինչ և իցէ այն, անշուշտ է խիթալն։ Վասն քոյ, զի Աստուած վճռեաց զմահ ընդ ձաշակ ծառոյդ. զոր և եթող միակ նշանակ մերումն հնազանդութեան յայնչափ բազմապատիկ բարեաց միջէ՝ զոր ընկալաք ՚ի նմանէ, և իշխանութեանն՝ զոր ետ մեզ ՚ի վերայ ամենայն արարածոց, որք կալեալ ունին զերկիր, զծով, և զօդն վերին։ Զդ՝ վայելողքս յայնչափ ընդարձակ իշխանութեան, և յազատ ընտրութեան բազմապատիկ վայելից՝ մի խիստ համարեցուք զմիակ դուզնաքեայ պատուիրանն. այլ շնորհս կալցուք նմին, և օրհնեսցուք զնա՝ ուշ եդեալ զուարձալի վաստակոցս ՚ի հատանել զաւելորդ աճումն տունկոցդ, և ՚ի դարմանել զծաղիկսդ։ Ար թէ և լիներ բազմաշխատ, սակայն ընդ քեզ հեշտալն իմն է ինձ։

Արուամ ետ պատասխանի Աւետ օրինակ զայս։ Զաջնորդ իմ և գլուխ՝ յորմէ, և յոյր սակս կազմեցայ ես՝ մարմին ՚ի մարմնոյ քումմէ, և առանց

քո յոչինչ եմ պիտանացու· զամենայն ինչ արդար և ուղիղ ասացեր· զի պարտ է մեզ մնատուցանել նմա հանապազ զփառս և զպատուիրն։ Ա՛նապատնդ ինձ՝ որ վայելեմն ի գերերջանիկ վիճակ՝ ի վայելել անդ զքեզ զգերազանցեալդ անզուգական պարգեւօք· և չէ հնար քեզ գտանել զկենսակից նմանատիպ անձինդ։ Յիշեմ ես քաղցրամ անգամ զօրն՝ յորում զարթեայ ի քնոյ զառաջինն· և գտի զանձն իմ հանպուցեալ ի վերայ ծաղկանց ընդ հովանեաւ ծառոյն։ Ուր և կայի զարմացեալ յոյժ, թէ զինչ եմ, ուրանօր գտանիմ, և ուստի կամ զիարդ անցայ անդր։ Ա՛յլ ոչինչ կարի ի բացեայ անտի հնչելն լսելի լինէր ի քարանձաւէ կարկաջահոս ջուրց· որ և սփռեալ տարածանէր ի դաշտ հոսանուտ· և կայր անշարժ և ջինջ իբրև զպարզութիւն երկնից։ Զոր գայ անդր անփորձ ի խորհուրդս անձին, և կայծ ի վերայ գալարագեղ գեաեղէնն՝ որ թուէր ինձ միւս և՛ս երկինք։ Ի խնարհել իմում ի ընծայութիւն՝ տեսի ի լուսափայլութեան անդ ջրոյն կերպարան ինչ գոգոյս ի հանդիպոյ, որ նոյնպէս խոնարհեալ հայէր ընդ իս։ Յայնմ վայրի ընկրկեցայ ես յետս, և նա ընկրկեցաւ։ Ա՛յլ հաձեալ իմ ընդ տեսիլդ՝ դարձայ անդրէն փութանակի· և նա նոյնպէս դարձաւ հաձութեամբ՝ ցուցեալ ի դէմն իւր զհամանմանն բարս և զկեր[48]։ Ա՛ւ ցարդ անդր ինայի՝ կառուցեալ զաչս իմ, և նուաղելի վարկպարագի հաձութեամբ, եթէ ձայնն յայնժամ ոչ առնէր ինձ ազդ՝ օրինակ զայս։ «Տեսիլդ՝ զոր տեսանես, արարածդ գեղեցիկ, դու ինքն ես· ընդ քեզ եկն նա, և ընդ քեզ չոգաւ։ Ա՛յլ դու

Եկ զկնի իմ, զի տարայց զքեզ անդր՝ ուր ոչ ըս-
տուեր նորա, որոյ ես դու նմանութիւն, սպա-
սեալ ինայ քումդ գալստեան և ոգեխառնութեան։
Այսպէսեցես զնա անանձնատաւար ի քէն. և բեր-
ցես ընդ նմա զլռազմութիւն քումդ նմանեաց. և
յայնժամ կոչեսցես Այր ազգի մարդկան «։
Լսեկ ես չէի ձեռնհաս այլ ինչ առնել, բայց միայն
գնալ անյապաղ զկնի նորա՝ որ առաջնորդէր ինձ
յաներևոյթս։ Մինչև եկեալ գտի զքեզ ընդ սո-
սեաւդ։ Այս էիր արդարև վայելչատեսիլ և բարձ-
ձրահասակ, այլ որպէս թուեցաւ ինձ՝ ոչ սակաւ
նուազեալ ի գեղեցկութեան անդ և ի շնորհս
քան զպատկերն, զոր տեսի յողորկափայլ մաք-
րութեան անդ ջրոյն։ Այլ ես գարձուցի և
յայնժամ զերեսս իմ յեաս։ Նայց դու բարձրա-
ձայն աղաղակեցեր զկնի իմ՝ ասելով։ «Գարձիր
աւ ես գեղեցիկդ Այսայ։ Յումմէ[2] փախչես. փախ-
չես ի նմանէ՝ յորմէ դուդ ես, մարմին և ոսկր նո-
րա։ Այլ ի տալ քեզ զկեանս՝ ես ինքնին ետուս
յանօթ զմին ի կողից՝ զվերձաւորն սրտիս կենդա-
նութեանս արմատոյ, զի յայնմհետէ կալայց զքեզ
անմեկնելի յուրախութիւն իմումն սրտի։ Հատոր
հոգւոյ իմոյ՝ ինդրեի զքեզ, և արդ կամիմ ունել
զքեզ միւս ևս կէս անձին իմոյ «։ Այս զայս ասաց
ցեալ կալար զձեռանէ իմմէ, և ես գտայ քեզ հա
ւան։ Այս յայնմհետէ ծանեայ զառաւելութիւն
այրական շնորհաց և իմաստութեան՝ որ ի տիրա-
պէս գեղեցկութիւն[49]։

Ո այսօրինակ խօսեցեալ հասարակաց Այօր մե-
ծում՝ ի նշանակ անպարտաւ սիրոյ լծակցութեան,
և խոնարհ ակնածութեան՝ գիրկս արկ Ալսահօրն

Ընդամայն· Լսէ նորա զուարճացեալ և բերկրեալ
ի հոգի իւր ի սէր անզուգական՝ որպէս յարդա-
սաւորել անդ Ընդամզդայ [50], և Հերայ [51] զճաշ-
կահոսան ամպս ի Պայխի, ետ տիկնոջ իւրում
զհամբոյրն սրբութեան [52]։ Յայնմ վայրկ նախանձ
ձեալ Պատանայի ընդ նոսա՝ դարձոյց յայն կողմն
զերեսս իւր· բայց տակաւին չարաչեր մնաք ակն
արկեալ ի նոսա՝ խօսեցաւ յանձն իւր օրինակ
զայս։

Ո՞վ անբերելի և չարատանջ տեսլեանս։ Ընդ
երկոքին սոքա ի դրախտի անդ փափկութեան
վայելէին և զերջանկութիւն սիրոյ, այն ինչ ես
մնանեալ կամ ի դժոխս։ Ուրանօր չէք գտանել
զբերկրութիւն կամ զսէր, այլ միայն զցանկու-
թիւն՝ ոչինչ նուազ դժնդակ քան զայլ տանջանս·
տակայն և այնպէս անյագուրդ յերեսաց վշտաց
անվախձան ցաւոց։ Ընդ ես տակաւին ոչ մոռա-
ցայց զոր ի նոցունց խակ լուայ բերանոյ։ Որպէս
ինձ թուի, ոչ են նորա ինքնիշխան տեարք յամե-
նայնի։ Ընկեալ կայ աստանօր մահաբեր ծառն՝
կուռեցեալ ծառ պիտութեան, յորմէ ոչ ունին նո-
քա զհրաման ի ձաշակել։ Եւ միթէ զի՞րդ լինիցի այդ։
Միթէ մա՞րթ իցէ արգելուլ զպիտութիւնն։ Եւ
դարև կեղակարծ են իրքդ, և լի անտեղութեամբ։
Ընդէր է Տեառն նոցա խանդալ զայն։ Միթէ
հնա՞ր իցէ պիտութեան լինել չանցանք, կամ ա-
ռիթ մահու։ Միթէ նորա՞ միայն կայցեն ի տգի-
տութեան անդ։ Եւ միթէ այդ իցէ վճռակ եր-
ջանկութեան նոցա, և հանդէս հնազանդութեան
նոցա և միամտութեան։ Ա՛հ գեղեցիկ հիմնա՝
զոր եդեալ կայ առաջի իմ ի հաստատել ի վերայ

նորա զչինուածն կործանման նոցա ։ Յայսմանէ ակօսյց Թեղադիր լինել մտաց նոցա ՚ի պիտուԹիւն կարի իմն ցանկուԹեամբ. և ՚ի մերժումն յանձանց ՚ի բաց նախանձաբեկ հրամանին՝ որ եդեալ է ՚ի վերայ նոցա ՚ի նուաճումն նոցին. զորս մարԹ էր պիտուԹեանն բարձրացուցանել հաւասար Ա՛ստուածոյն ։ Այլ այնպէս ցանկացեալ նոցա լինել յայնպիսեաց սակի՝ ձաշակեսցեն ՚ի ծառոյ անսխ, և մահու վախճանեսցին ։ Այլ զի՞նչ կայցէ առաւել դիւրահնար քան զայդ ։ Վակայն արժան է ինձ շրջիլ նախ ՚ի պարտիզին առանձին իմն խուզողուԹեամբ, և հետազօտել զամենայն վայրս նոքա. գուցէ ըստ դիպաց մարԹացայց գտանել յաւանչորդուԹիւն անձին իմոյ զմի ոք յերկնաւորաց անտի՝ որք շրջին զաղբերաւ, կամ հանդիպիմ ընդ հովանեաւ ծառոյ. զի կարող եղեց աւելի լինչ ուսանել ՚ի նմանէ ։ Այլ դուք ամենքդ երջանիկ՝ մինչդեռ հնար է ձեզ, կացջիք տակաւին, և վայելեսջիք զկարճժամանակեայ զուարճուԹիւնդ՝ մինչ չև ցգարձն իմ անդրէն. զի երկարատև ինամն ձեզ աղէտք [53] ։

Ո՛չ այսօրինակ խօսեցեալ նորա՝ դարձոյց աներկիւղ զոտս ամբարտաւանուԹեան իւրոյ ՚ի փնացս, բայց խորամանկ զգուշուԹեամբ. և այնպէս սկսաւ շրջիլ ընդ անտառն, ընդ դաշտն, ընդ լեառնն, և ընդ ձորն ։ Յայնմ պահու գոլով արեգական ՚ի մուտս իւր ՚ի վերջին երկայնուԹեան՝ ուրանօր երկինք ընդ առաջ ելանէն երկրի և Աւկիանոս [54], իջանէր հանդարտաքայլ ՚ի խոնարհ, և ձգէր ուղղակի զերեկոյին ձառագայԹս իւր յարևելեան դուռն դրախտին ։ Ուր էր քարաժայռ աղաբաստր՝

արձանացեալ յամուն ի տեսիլ բացական. և ուր-
նէր զմի միայն ոլորտապտոյտ շաւիղ առ բարձրա-
բերձ մուտս իւր յերկրէ անտի: Ոակ այլ կողմանէ
նորա ուղղորդ կային ի գահավէժ վախս, ընդ որս
չէր հնար ուժեք ելանել ի վեր: Ընդ մէջ սեանց
քարաժայռս նստէր Դաբրիէլ պետն հրեշտա-
կացն պահապանաց, ակն կալեալ գիշերոյ: Կա-
ցեալ առ նովաւ մանկտւոյն երկնից անպէն՝ կըր-
թելին զանձինս ի մարզս դիւցազնական [55] խաղոց.
բայց կախեալ կային առ նոքօք ի բարձու երկնային
սպառազինութիւնք նոցա՝ առապարք, գեղարդունք
և սաղաւարտք՝ յադամանդ և յոսկի բոցավառք:
Ուրիել սլացեալ ընդ ձառագայթ արեգականն՝
եկն անդր ընդ երեկս այնպէս փութանակի, որ-
պէս ասացեալ անկեալ ի գիշերային պահու աշխա-
նոյ՝ այն ինչ հրաւառ գոլորշիքն դրոշմեն զօդն, և
ցուցանեն նաւաստուոյն՝ թէ յորժամ կողմանն իւ-
րումն հողմացուցեալ արժանն իցէ նման զգուշանալ ի
բռնութենէ անտի մրրկաց: Որ և սկսաւ խօսել
շտապ բանիւք՝ օրինակ զայս:

Դաբրիէլ՝ անկաւ քեզ վիճակաւ ի վերուստ
պաշտօն քաջ պահպանութեան երջանիկ վայրացդ,
զի մի չար ինչ մերձենայի կամ մտցէ անդր: Ի սեր-
կեան աւուր ի բարձրութեան անդ միջօրէի եկն
առ գունան իմ [56] մի ոմն ի հովուաց անտի. և որ-
պէս թուեցաւ ինձ, կարի լինն հետաքննին գործոց
Ոմենակալին, և յաւէտ մարդոյն՝ որ ի վերջինն
արարածոց, և պատկեր նորա: Ցեսի ես, զի ձա-
նապարհ նորա ուղղեալ էր շտապս. և նշմարեցայ
զօդային գնացս նորա: Ոյր ի լերինն անդ՝ որ ձգի
Ասդեւանայ ի հիւսիս, ուր և էջ նա զառաջինն,

եղոյց անդէն զգէտն իւր կարի ինն տարօրինակ յերկնաւորաց, զի աղտեղեալ էր գարշելութեամբք կրից [57]։ Այլ իմ չոգան զկնի նորա անընդհատ. այլ ընդ հովանեաւ ծառոյն ծածկեցաւ տեսիլ նո՛ր յինէն։ Այսն որոյ կասկածիմ, գուցէ ոք ի տարագիր խուժանէն արձակեալ էիցէ յանդնդոց, և կամիցի յարուցանել զնորոգ խռովութիւնս։ Այդ՝ պէտք են քումդ փութով ի գտանել զնա։

Որում զօրավարն Թևազգեցիկ արար պատասխանի։ Զնո՛ւ ինչ զարմանք՝ Ուրիէլ, եթէ անաղօտ տեսութիւն աչաց քոց ի պայծառափայլ գրնոյդ արեգական՝ յորում բնակես, հեռագոյնս և ընդարձակագոյնս ակնարկէ։ Այլ ընդ դուռնդ զգուշացեալ աստանօր՝ չէ հնար անցանել ումեք, բայց միայն որոյ դան յերկնից, և էն քաջածանօթք մեզ։ Ի ժամէ անտի միջօրէի ոչ ոք եկն անդրստ այսր։ Իսկ եթէ օտար ոք հոպի վազեալ էիցէ ընդ հողերկն սահմանսդ, քաջ գիտես զայն՝ զի գժուարին ինն է մարմնաւոր խնփանօք մերոյժել ի բաց զկոպեղէնն գոյացութիւնն։ Այսպա եթէ ընդ կերսպարանօք Թագուցեալ կայցէ ի շրջապատի վայրացս նա՝ զրոմ դուդ ասես, գիտացից ի լուսանալ առաւօտու։

Այս ասաց նա. և Ուրիէլ դարձաւ անդրէն յիւր պաշտօն ընդ պայծառափայլ Հառագայթն. որոյ ծայր եղեալ յայնժամ ի վեր՝ տարաւ գնա ընդ զառ ի վայր Հանապարհ առ արեգակն, որ յայնմ պահու անկեալ կայր խնարհագոյն քան զԳաղիլեա [58]։ Ուրանօր կամ պարունակին մեծ տունջենայինն սաստիկ արագութեամբն անդր հոլովեալ, և կամ յամընթաւալ երկիրս արագ ընդ

արևելս Թռուցեալ՝ Թողեալ էին զնա՝ որ պէ՞ս զարդէր ի կարմրափայլ ծիրանի և յոսկի զամս, որք սպասեալ ծնային գալստեան նորա յաթոռ իւր արևմտեան։ [59] Յայնմ վայրի տակաւին յառաջ խաղայր երեկոյն. և աղօտ լոյն ի նսեմ նշանագգեստ իւր պատէր զամենայն։ Այլ լուսնթիւնն լիներ նմին ուղեկից. զի ամենայն անասունք և թռչունք մեկնեալ էին յայնժամ ի խշտից և ի բոյս իւրեանց. քաց ի սոխակին զուարթնոյ՝ որ երգեաց զգիշերն ողջոյն զերգ իւր սիրատարփ. և լուսնթիւնն հաճեցաւ ընդ նա։ Նմին պահու ցոլանայր հաստատութիւնն երկնից ի կենդանի շաւիղս։ և Կիլերաւարն [60] նշուլագեղ ճիավարեալ՝ առաջնորդ լինէր աստղային զօրաց։ Մինչև զնիվ էլեալ լուսնի ամպազգեստ փառօքն ի վեր, և ծանուցեալ դէմոյ՝ [61] յայտնեաց զանզուգական լուսափայլութիւն իւր, և սիրեաց ի վերայ խաւարի զօթոց իւր արծաթի։

Յայնժամ Աղամ խօսեցաւ ընդ Հսայի օրինակ զայս։ Վաղդր կենակից իմ, մեկնեալ արդ գիշերային ժամուս, և ամենայն արարածոց ի հանգիստ գիտ՝ ի նոյն հրաւիրեն և զմեզ։ Ոչ ի Հաստուած որպէս զտիս և զգիշեր զնիվ միմեանց, նոյնպէս կարգեաց և զաշխատութիւն և զհանգիստ ի պէտս մարդկան։ Այս ահա քաղցրիկ ցօղդ հանդստեանն անկեալ քնաբեր ծանրութեամբ ի վերայ աչաց մերոց՝ ի նենջ խոնարհեցուցանել զարտևանունս մեր։ Այլք յարարածոց պարապարդ և անպոծ շրջին զիւն ողջոյն, վասն որոյ և սակաւ պէտս ունին հանդստեան. այլ մարդն կարգեալ է յօրըստ օրէ աշխատութիւն մնաց և մարմնոյ՝ որ է նշա-

նակ մեծութեան նորին, և հայելոյ Աբարչին յամենայն ձանապարհս նորա, այն ինչ այլք ի կենդանեաց դատարկ չըլլին, և Աստուած ոչ առնու պճառս գործոց նոցա: Արդ ի վաղիւն՝ մինչև և ըստարթարար առաւօտու խայտաձամուկ յօրինեալ զարևելս ընդ ծագումն լուսոյն, պարտ է մեզ վազ զայարոյց ելանել ի զուարձալի վայտակս մեր՝ ի սրբել զծաղկաբեր սարփինայդ, և ի յարդարել զդալարաւէտ շաւիղդ՝ զձեմելիս մեր ի միջօրէի: Որոց բուսաբերութիւն կարի ինն բարգաւաձեալ՝ քամհանս առնէ զդուշնաքեայ մերովս աշխատութեամբ. և քաջագոյն ձեռաց պիտոյ են ի հատանել զանչափութիւն ձամման նոցա: Զոյն պիտ մաքրութեան պիտոյ են ծաղկանց, և կայլակահոս խիժից՝ որք յանչափս սփռեալ ի գետնի՝ խափան են ոտից, եթէ կամք են մեզ դիւրագնաց ունել զձանապարհդ:

Ընդուն Աբայ զարդարեալն անթերի գեղեցկութեամբ ետ պատասխանի: Ոչ՝ Տէր՝ մնադիւր հնազանդեալ կամ հրամանաց քոց, զի այդ և պատուիրանքն Աստուծոյ: Ահա և օրհնագիր քո, և դու խմումն անձին: Ոչ գիտել ինչ առաւել քան զայս՝ և կատարեալ գիտութիւն, և պարծանք կնոջ: Յանցուցանել անդ զկեանս ընդ քեզ՝ մնռանամ զամենայն ժամանակս, և զփոփոխումն եղանակաց տարւոյն. և ամենեքին հաձոյ են ինձ միօրինակ: Վաղդը և շունչն առաւօտու, և ելք նորա՝ ի գեղգեղաձայն բարբառ վաղդայարոյց Թռչնոց: Ցուարձալի և ծագումն արեգական, և սփռումն արևելեան ձառագայթից նորա՝ ի վերայ գեղեցկատեսիլ երկրի, և յօդանցեալ

դալարեաց , տնկոց , պտղոց և ծաղկանց : Զնու-
շահիտ է բուրումն արգաւանդաբեր գետնոյ վկայե
անձրևացն քաղցրութեան : Յանկալի է քաղցրա-
շունչ գալաստ ղովագին երեկոյի : Այս վկայե նո-
ցա ժամանումն լուսոյ գիշերոյ ընդ խրոմն
սիրալի թռչնոյ , ընդ գեղեցիկ լուսնի , և ընդ գո-
հարացն երկնից՝ իբրոց աստղային ուղեկցաց: Այլ
առանց քո և ոչ մի ի սոցանէ [62] , և ոչ ձեռք ի
լուսափայլութեան անդ լուսնի կամ աստեղաց՝
քաղցրանան ինձ : Այլ առնէ փայլատակեն դո-
քա զգիշերդ ողջոյն . և չինչ պէտս է տեսիլ նո-
ցա սիրալի՝ ի փակել անդ քնոյ զաչս հաստարակաց :

Ուրուք ետ պատասխանի Նախահայր մեր ամե-
նեցուն : Ադամ Նստուածոյ և մարդկան՝ ամենա-
կատարդ Նշան, պատեն դոքա զերկրաւ յընթացս
իւրեանց ցվաղուանն երեկոյ . և նահանջէ ի նա
հանդ ի մուտս և յելս իւրեանց մատակարարեն
զլոյս , և ա և աղանց՝ որք չև են ծնեալ . զի մի խա-
ւարն տիրեսցէ ողջոյն ի գիշերի . և կալեալ զժա-
ւանդութիւն իւր նախկին՝ շնորհեսցէ զկեանս բնու-
թեան , և ամենայն արարածոց : Ոչ որս ոչ միայն
լուսաւորեն քաղցրահայեաց լուսաւորքդ , այլև հե-
զիկ ջերմութեամբ բազմապատիկ հոսմանց իւ-
րեանց տածեն, բարեխառնեն և մսուցանեն: Այս
կամ սիրեն մասամբ զաստղային զօրութիւն իւ-
րեանց զբուսականաւքն յերկրի՝ առ ի քաջ յար-
դարել զնոսա յընդունելութիւն առաւելագոյն
ազդեցութեան հզօր Ճառագայթիցն արեգական:
Այդ՝ թէպէտև անճառելի է մեզ զօրութիւն նո-
ցա , սակայն ոչ վայրապար փայլատակեն դոքա ի
խորութեան գիշերոյ: Այս մի համարիս, թէ ի չքե-

նել մարդոյ՝ Թափուր գտցին երկինք ի հանդի-
սանալոյ, և Աստուած ի փառաց իւրոյ։ Նա-
զարը հազարաց ի հոգեղինաց շքջին անտեսաբար
յերկրի յարթնութեան և ի հանգստեան մերում.
և ամենեքին անլռելի գոհութեամբ պշուցեալ
հային ընդ արարածս Աստուծոյ զարիւ և զկիրք։
Ո՛չ ապաքէն մեք իսկ լուաք բազում անգամ զնա-
սարակ կիրերաւ յանմատոյց ժայռէ բազմարձա-
գանգ լերինդ, և կամ ի թաւ անտառէդ զբար-
բառս երկնաւորաց յերգս Աստուածային արարչին՝
առանձինն կամ միաձայն օրհներգութեամբ։ Ո՛չ
ապաքէն ի շքջել նոցա խմբովին ի պահպանութիւն
կիրերոյ, բազում անգամ միաբանեալ ի միասին
յերկնային նուագածութիւն՝ ի հրաշալի ներդաշ-
նակութեան անդ բաժանեն երգովք իւրեանց ըզ-
պահս կիրերոյն, և ամբառնան ի վեր զխորհուրդս
մեր։

Օ այսօրինակ խօսելով նոցա ի միասին՝ ան-
ցին ապա յառանձին հովանոց իւրեանց երջանկա-
կէտ։ Ուր էր տեղի առանձին խնամով ընտրեալ
յարարչագործ մկրտչէն ի անտեսել անդ զամե-
նայն ինչ առ ի պէտս զուարճութեան նոցին։ Յարկ
ձեղունն ծածկեալ կայր խիտ առ խիտ հովանաւո-
րութեամբ դաբնոյ և մրտենոյ, և այլոց բարձ
բաբերձ ծառոց՝ որ անթափ ունէին զանուշահոտ
տաղարթս իւրեանց։ Կանթ [63] և ամենայն քաղց-
րահոտ և բազմատերև բոյսք պատէին զդրան նո-
ցա շուրջանակի։ Յորոց միջէ ամենայն գեղեցկա-
տեսիլ ծաղկիք՝ հիբիկ բազմագունեան, վարդ և
յասմիկ, ամբառնային ի վեր զգլուխս իւրեանց,
և յօրինեին զվիւսիոնեան [64] նկար։ Իսկ ի յատա-

կի անդ մանուշակ, և քրքում և յակինթ ծաղիկ
՚ի պատուական անկուածս պՀնէին զգեստին՝ ա-
ռաւել գունագեղ և գեղեցկայօրէն քան զմեծա-
գանձ զրուագս ականիք պատուականօք ։ Ել ոք
՚ի կենդանեաց անտի, ՚ի թռչնոց, ՚ի զեռնոց կամ
՚ի ՀՀեաց իշխեր մտանել անդր ։ Ոչ այսչափ էր
ակնածութիւն նոցա յերեսաց մարդոյն ։ ՚Ի գաղտ
նածածուկ հովանոցի առաւել բազմաշուք քան
զայն ոչ ննջեաց երբեք՝ թէպէտև յառաստղէլ,
Պան [65] կամ Սիղբանոս [66], և ոչ երեւեցաւ Յաւեր
ժահարան [67] կամ Վաւռնոս [68]։ Յառանձին վայրի
՚ի նմա յօրինեալ էր յառաջագոյն հարմնացեալն
Նւսայի զառագաստ իւր բոլորիւք ծաղկանց, և ա-
նուշահոտ գալարեօք ։ Նյս երկնաւորացն դաստս
երգեալ զնուագ հարսանեաց նորա՝ յաւուր յորում
պահպանապետն պսակի էած զնա առ Հայրն մեր,
առաւել վայելչազարդ բնիկ գեղեցկութեամբն, և
յաւէտ տենչալի քան զՊանդորա՝ [69] զոր Վիքն [70]
օժտեցին պարգեւօք իւրեանց ։ Ոյլ աւաղ կարի
խին հանգուցատիպ նմին ՚ի ցաւագին անցս, այն
ինչ ածեալ նորա ՚ի Հերմեայ [71] առ անխմաստ որ-
դին Յաբեթայ՝ [72] ՚ի գեղ երեսաց իւրոց ձգեաց
զազգ մարդկան ՚ի քէն վըրիժուց առ ՚ի նմանէ, [73]
որ զվաւերականն [74] գողացաւ հուր զՊրամաղ-
դայ [75]։

Հասեալ նոցա ՚ի հովանաւոր բնակարան իւ-
րեանց, և կացեալ առ վայր մի՝ դարձուցին զե-
րեսս իւրեանց յերկինս, և երկիր պագին Ոստու-
ծոյ՝ որ արար զերկինս և զերկիր, զպայծառափայլ
գունդն լուսոյն, և զլեւեռն աստեղազարդ՝ զորս
տեսանէին յանդիման աչաց, և մատուցին զաղօթս

իւրեանց օրինակ զայս ։ Ովսաննա Տէր ամենակալ ա-
բարեր զքիշերը և զտիւ . զոր ըստ հրամանի քումմ
հանապ՛ի գլուխս օժանդակութեամբ և սիրով ընդ
միմեանս՝ որ է պատկ ամենայն օրհնութեանց տուէ-
լոց մեզ առ՛ի քէն ։ Ա՛յլ վայրս փափկութեան կա-
րի ինն ընդարձակ է վասն մեր , եթէ բազմատա
ոզորմութիւն քո ոչ գտցէ բաժանորդս ընդ մեզ .
զի յայնժամ ցրուեալ սփռեսցի ընդ երկիր ։ Ա-
կայն խոստացար դու յարուցանել զտակ յերկու
ցունց՛ի միջէ. որ և հանդերձեալ է ընդուլ զերկիր,
և օրհնել ընդ մեզ զանբաւ բարութիւն քո՝ եթէ
յարթնութեան անդ , և եթէ՛ի խնդրելն զքոյդ
պարգև հանգստեան՝ որպէս մեք այժմ ժառանգ ։

Օ՛այս ասացեալ՝ ( մինչ յառագաստ հովանա-
ցեին , և ննջեցեին անդ . որպէս ինձ թուի , ոչ հրա-
ժարեալ՛ի խորհրդական օրինաց անտի ամանութե-
թեան ) [76] ։ Յայնմ վայրի չափեալ էր զիշերոյ՛ի
կոնան[77] իւր ստուերական զլայնաձիգ կամարն ևս
թաղանեալ՛ի կէս անդ ընդ զառ՛ի վեր ձգնա-
պարհին ։ Եւ վրովելեքն՛ի սովորական ժամու իւ-
րեանց եղեալ՛ի փղոսկրեայ զրանէն՝ կային սպա-
ռազինեալ ըստ օրինի մարտիկաց՛ի պահպանու-
թիւն գիշերոյ ։ Յորում պահու Վաթրիել խօսե-
ցաւ ընդ երկրորդի իւրում յիշեցուցանել անդ՝
օրինակ զայս ։

Ո՛ւզիել[78] առեալ ընդ քեզ զկէս զօրացդ՝ կալ
՛ի զգուշութիւն պահպանութեան զկողմն հարա-
ւոյ ։ Ա՛յլք ընդ քեզ մնասցին զհիւսիսոյ ։ Ասէ մեք ընդհա-
յուք՛ի կողմն արևմտից ։ Յայն բան նորա ամենե-
քեան իբրև զոյց ընդհանայնին՝ վառեալք յոտպար
և՛ի նիզակ ։ Ա՛յլ նորա կոչեալ զերկուս՛ի զօրա-

ւորաց անտի և յարաշաւարժից՝ եւ նոցա զայս պատուէր հրամանի ։

Լթուրիէլ և Ո֊ւթման[79] ելիք թևաղղեցիկ փութալ՝ի խնդիր ընդ պարտէզդ, և որոնեցիք յամենայն անկիւնս նորա . և յաւէտ՝ի տեղւոջն՝ ուր կան արդ երկոքեին գեղեցիկ արարածքդ՝ի քուն , թեւեա անկասկածք յերեսաց չարեաց։ Ո֊ւ յայսմ երեկոյի՝ի խոնարհել արեգականն եհաս առ իս մի ոմն , և պատմեաց եթէ ետես նա զհոգին դժոխոց դիմեալ յայս կոյս (և ո՛ւմ՝ հնար էր լինել՝ի կարծիս) , փախուցեալ յարգելանաց անտի , ունելով անչուշտ յանձին խորհուրդ լինչ չարութեան ։

Ո֊ւյս ասացեալ եհան նոցա արտաքս զնչուլա փայլ գունդ զօրացն՝ որք չլացուցանէին զլուսինն։ Որոց ընթացեալ փութանակի՝ի հովանոց անդը՝ի խնդիր թշնամոյն՝ գտին զնա , զի իբրև զղեռուն[80] զազրատեսիլ և ահագին՝ կծկեալ կայր առ ոտնակամբ Ադայի . և զիւականն արուեստիւն խնդրեր հուպ մատչել՝ի զգայարանս մտաց նորա՝ առ՝ի նուաճել՝ի նմա զառաչօք տեսիլս , զնօլականն ցնորս և զանուրջս ։ Կամ գէթ վարակել թունաւոր հնձմամբ զկենսական ոգիսն՝ որ ելանէին՝ի մէջ քուր արենէ նորա իբրև զանօսր սղոխս՝ի մաքրափայլ գետոց ։ Ա֊ւ այնպէս ապա յարուցանել՝ի նմա զնեղալութիւս և զասլատամբ խորհուրդս , զյոյս մտոտեաց , զընդունայն յուժարութիւնս հոգւոյ , զանկարգ ցանկութիւնս , և զիքացուածն բարձրամտութեան՝ որ է մայր ամբարտաւանութեան ։ Այնչգեռ կայր նա այնպէս մտադիր, Լթուրիէլ փոքու լոյս մերձեցոյց՝ի նա զծայր նիզակի իւրոյ ։ Ա֊ւ զի անհնար է խաբէութեանն կալ առաջի հա-

բուածոց երկնային զինուց, անդէն դարձաւ նա յակամայ կամս յառաջին կերպարան իւր. և եղոյց զանձն՝ ընդոստուցեալ զարմացմամբ։ Որպէս յանկիւղ կայծի՛ ի շեղջ բորակային փոշւոյ պատրաստելոյ՛ ի տակառս առ՛ի սկսս ահեղ մարտի՝ յանկարծակի ցոլացեալ սևորակ հատին՝ [81] բոցավառ կիզուզ զօդն, այնպէս ընդոստեաւ Թշնամին, և դարձաւ՛ ի բնիկ կերպարան իւր։ Ընդ անակնկալ տեսիլ զարհուրատեսակ արքային՝ [82] չոգան յետս երկոքին պեղեցկատեսիլ հրեշտակքն, և կային տարակուսեալք յանձինս. այլ զկնի քաջալերեալ՝ մատեան առ նա՛ ի հարցափորձ, օրինակ զայս։

Ո՞ ես դու՛ ի հոգւոց անտի ապստամբութեան դատապարտելոց՛ ի դժոխս, և գաս զերծեալ՛ ի բանտիդ յայլակերպս։ Այս ընդէր նստիս աստ՛ ի դարանի իբրև զթշնամի առ մնարիւք նոցա՝ որոց անկեալ կան՛ ի քուն։

Ոչինչ ոչ ձանաչէք զիս՝ ասաց ցնոսա Սատանայ լի ցասմամբ։ Ոչինչ ոչ ձանաչէք զիս դուք՝ որք երբեմն քաջ ծանեայք դէր՛ ի վերոյ քան զձեզ բազմեալ անդանօր, ուր դուք ոչ իշխեցիք առնալ զանձինս։ Այլ անպիտութիւն ձեր յայտ առնէ զնուաստութիւն ձեր և զարհամարհութիւն՛ ի բազմութեան անդ։ Այսպա եթէ ձանաչէք զիս, առ իմ՝ հարցանէք. և եկեալ էք՛ ի մնոտի պատգամաւորութիւն՝ որոյ կատարածն նոյնպէս հանդերձ ձեալ է լինել մնոտի։

Որոմ ետ պատասխանի Օֆիոն նոյնօրինակ արհամարհութեամբ։ Հոգիդ ապստամբ՝ ով համարիր զանձն ունել զնոյն կերպարանս, որպէս երբեմն յերկինս՛ ի վիճակի անդ մաքրութեան և

անարատութեան, և կամ սակաւուք և եթէ նուա-
զեալ զփառսդ՝ մինչև գալ քեզ վերստին ի ծա-
նօթութիւն։ Յանկզկատանալ անձինդ՝ մեկնեցաւ
ի քէն պայծառութիւն շքոյ փառացդ· և այժմ
խաւարային գոլով և գարշատեսիլ՝ նման ես մե-
ղայ քոց, և տեղեայդ դատապարտութեան։ Այլ
երթիցուք, զի ունիս տալ պատասխանի այնմ՝ որ
առաքեաց զմեզ, և որում յանձնեալ է անշնաս
պահպանութիւն տեղւոյս, և աներկևանութիւն
բնակչաց նորա յերեսաց արկածից։

Այսօրինակ խօսեցաւ Վերոլեէն· և ասաց
կուրթիւն կշտամբանաց նորա յաւել զանպարտելի
շնորհս ի գեղեցկութիւն մանկութեան նորա։ Ո-
կայ բանասիրութն ամենապարտ։ Վիտաց յանձն
իւր, թէ քանի՛ ահարկու է բարութիւնն· և քա-
նի՛ սիրելի առաքինութիւնն ի վերպարանս իւր։
Ծանեաւ, և սուգ էառ ի վերայ կորստեան ան-
ձին իւրոյ· մանաւանդ ի տեսանել անդ զնուա-
զութիւն իւրումն պայծառութեան յայտնապէս
ծանուցեալ անդանօր։ Սակայն և այնպէս անվե-
հեր յուցեալ զանձն՝ ասաց ցնա։ Եթէ պարտ իցէ
ինձ զգեմ ունել, հարայց ի դիմի քումդ ընդ լա-
ւագունին, ընդ առաքողին, կամ ընդ ամենեսին
միանգամայն՝ և ոչ ընդ առաքելոյդ· զի յայնժամ
գոից առաւելագոյն պարծանս, կամ նուազ կո-
րուսից։ Երկիւղ քո՝ ասաց ցնա արքին Ահիմ,
ոչ տայ քեզ մատչել ի փորձ, և ի միտ առնուլ
թէ զինչ մարթի է և խոնարհադունին ի մէնջ ան-
յուշանել ընդ քեզ առանձինն· փոխանակ զի վատ
թարացեալ գտար առ չարութեան անձինդ։

Պարտեալ թշնամւոյն ի սրտմտութենէ՝ ոչինչ

ետ պատասխանի. այլ իբրև զխոտերախս նաժոյգ սանձակոծեալ յառաջ ընթանայր խրոխտանօք, և խածատէր զսանձն. զի վայրապար համարեցաւ զընդդիմութիւն կամ զփախուստ։ Այնպէս ահն վերնական կալեալ ունէր զսիրտ նորա, և չայլմէ խնդիր ոչ երկնչէր։ Հասին ի կողմն արևմտից [83]. և դարձն անդ զպահապանսն՝ որոց հատեալ էր ընդ կէս ձանապարհն պահպանութեան իւրեանց. և միացեալ ընդ նոսա՝ կացին ի հանդէս ձակատու, սպասեալք նորոգ հրամանին։ Եւ որս զօրապետ նոցա Վաբրիել աղաղակեաց մեծաձայն, և ասէ։

Այս ոմն բարեկամք լսեմ զձայն երազընթաց ոտից՝ որք փութան ընդ այս ձանապարհ. և ի վայրկեանն լուսոյն ընդ աղօտ նշմարեմ զԼթուրիել և զՕեփան։ Վայ ընդ նոսա և երրորդ ոմն ի տեսիլ արքայական. այլ շուք փառացն նուաղեալ և թարշամեալ. որ և յընթացից իւրոց, և ի ժանտատեսիլ դիմացն երևի լինել իշխանն դժոխոց։ Ամենևին ոչ եկեսցէ նա այսր առանց հակառակութեան։ Պինդ կացէք, զի զհրաւէր մարտին տեսանեմ ես ի դէմս նորա։

Այնչափ էր նորա աւարտեալ զբանն՝ և ահա մերձենան նոքա. և Լթուրիել և Օեփան մատուցեալ յառաջ՝ կացուցին զՍատանայ առաջի նորա, և ծանուցին նմա ի կարճ թէ ուրանօր գտեալ էին զնա, յինչ գործ, և յո՞ր կերպարանս։

Եւ Վաբրիել խօսեցաւ ընդ նմա ահագին դիմօք՝ օրհնակ զայս։ Ընդէ՞ր ելեր ո՛վ Սատանայ ըստ սահմանադ՝ որք եգան քումդ յանցանաց. և ընդէ՞ր խռովէցուցեր սուտ զպահապանսն՝ որք ոչ ա-

ուն յանձն յանցանել ըստ քումդ օրինակի, և ու-
նին իշխանութիւն՝ի հարցանել զպատճառն յան-
դուգն մոխց քոց այս տեղւոյ, որպէս թուի՝ առ՝ի
խռովեցուցանել զքուն, և զանձինս զորոց երջան-
կաւէտ բնակութիւն կարգեաց Աստուած աստա-
նօր։

Որում ունչս արարեալ Սատանայ՝ ետ պատաս-
խանի։ Վասն որիվ՝ ունելիր դու յերկինս զանուն
լմնաստանայ, և այնպէս համարեցայ զքեզ· այլ այս
խնդիրք քո արկանել զիս՝ի տարակուսանս. զի ո՞ր է՝
որ հաձեսցի ընդ վիշտս. և ո՞ր՝ի դատանել հնա-
րիցս ոչ կամիցի զերծանիլ՝ի դժոխոց, թէպէտև
դատապարտեալ եղէ անդանօր։ Ապաքէն և դու
յանդգնաբար յարձակիր՝ի տեղին, ուր՝ի բա-
ցեայ գոլով՝ի դժոխոց՝ ակն ունելիր փոխանակել
զտանջանս ընդ հանգստեան, և փոխանակ վշտաց
դատանել զանդորրութիւն՝ յորոյ՝ի խնդիրս շրջիմ
ես աստանօր։ Վասն, զի առ քեզ ոչինչ գնան
փաստքս, քանզի ոչ առեր դու զփորձ չարեաց,
այլ միայն զբարեաց։ Այս միթէ կամիցիս՝ի գէմն
ածել ինձ զկամս այնորիկ՝ որ փակեացն զմեզ՝ի
դժոխս։ Պնդեսցէ նա և ևս զերկաթի դրունսդ,
եթէ կամք են նմա ունել զմեզ հանապազ՝ի խա-
ւարի անդ։ Այսչափ ինչ առ հարցումիդ։ Ակ
ուրանօր ասեն դոքա գտանել զիս, ստոյգ է. բայց
զի՞նչ խռովութիւն կամ՝ ինձս այսմ։

Ասէին օրինակաւ խօսեցաւ նա. իսկ քաջամարտ
տիկ հրեշտակն յառաջ մատուցեալ՝ ժպտեալով ինն,
բայց խառն սպառնալեօք՝ արար զայս պատասխա-
նի։ Ո՛վ կորստականին յերկինս. որ զինի անկա-
նելոյ անմտութեամբ՝ զիտէ ընտրել զմնաստուն.

և այժմ փախստական գոլով՝ ի բանտէ դժոխոց՝ տարակուսեալ կայ յանձին, թէ արդեօք արժանի եղէ նմա առ իմաստունս ունել զինա՝ որ հարցանէ զպատճառս փախստեան նորա։ Այս իմաստութիւն ինձ համարի զփախուստն յերեսաց վշտաց, և զազատութիւնն ի դժոխոց անտի։ Տակաւինս նոյնպէս հաստիաջիր ոմն ապառնամ, մինչև սրտմտութիւնն վերջին բարկութեան՝ զոր յանձին ձգեցեր՝ ի փախչել անդ, դադարեսցի զփախուստ քո, և գազանաւոր իւրով վարեսցէ անդրէն՝ ի դժոխս զմիաստութիւնն քո՝ որ դեռ ևս ոչ խրատեաց զքեզ, և ոչ ուսոյց քեզ՝ թէ անհնար է այլ ինչ վշտաց զուգահաւասար լինել անհնարին սրտմտութեան նորա բորբոքելոյ։ Այլ աղէ ասա, թէ ընդէր դու միայն եկիր, և ընդէր ոչ զերծան ընդ քեզ դժոխայինքն համօրէն։ Այ՛թէ սակաւ իցեն տանջանք նոցա, և չունելիցն պէտս փախստեան։ Այս կամ դու վատթարագոյն իցես քան զդոսա՝ ի կրել անդ զտանջանս։ Այ՛զ քաջ զօրավարին՝ որ առաջինն է՝ ի փախչել յերեսաց վշտաց։ Այթէ ուսուցեալ էր քո զինչնկէց զօրացդ զայդ կանոն փախստեան, ոչ էր քո եկեալ փախստական առանձինն։

Ողջո՛ւմ ետ պատասխանի խոժոռադէմ Թշնամին։ Երեւակդ Թշնամանագիր՝ ոչ նուազ էր իմ համբերութիւն քան զայլոցն, և ոչ իսկ փախեայ այսր յերեսաց վշտաց։ Այ՛զ դիտես դու, զի ես կացի հզօր ախոյեան հակառակ քո, այն ինչ՝ ի մարտի անդ յերկինս հասեալ քեզ յօդնութիւն կարեւեր շանթին՝ ձեռնտու եղև նիզակիդ։ Այակայն անհանձար բանք քո՝ որպէս յառաջագոյն, նոյնպէս և այժմ յայտ առնեն զանհմտութիւն անձինդ,

որպէս թէ չիցէ արժան հաւատարիմ գօրավարի՝ որ քաջակիրթն է՝ ի հանդիսի անդ զառնապէին ա-
պիտից, ոչ ևս լինել յանդուգն դիմադրաւ: Այդ՝ եթ միայն յանձին կալայ հատանել նախ առաջին՝ ի
թուիչս փախստեան զամայութեան անդունդս, և
լրտեսել զնորատեղծ աշխարհդ՝ զորոյ զհամբաւ
և երկինք հնչեցուցանեին, ի լոյս ահկալութեան
գտանելոյ աստանօր լաւ ևս բնակութիւն, և հաս-
տատելոյ զիշխատես գօրութիւնս իմ՝ կամ յերկիր
աստ, և կամ յօդդ վերին: Այս կամիմ՝ ի փորձ
մատչել միւսանգամ՝ թէպէտև արդէն իսկ գիտակ
եմ, թէ զինչ գօրութիւն կայցէ քո, և ընտիր լե-
գէոնացդ՝ հակառակ իմումն գօրութեան: Որոց
հեշտին ևս լիներ գործ ծառայել Տեառն իւրեանց
՝ի բարձունս, փառաւորել զաթոռ նորա երգովք,
և երկիրպագանել նմա՝ ի հեռաստանէ, քան մար-
տընդել ընդ իս աստանօր:

Որում՝ արար պատասխանի գօրավարն երկնից: Հաստատել ինչ, և ապա մերժել զայն. զնանալ
նախ ցուցանել իմաստութիւն զգիտասան՝ ի վըճ
տաց, և ապա յանձն առնուլ զլրտեսութիւն՝ ոչ
են նշանք քաջ գօրավարի, այլ յայտնի տախտօպի:
Ո՞վ Սատանայ զի՞րդ իշխեցեր յաւելուլ՝ ի նոյն և
զհաւատարիմդ անուն, և պղծեցեր զկոչումն սուրբ:
Այս առ ո՞ գտար դու հաւատարիմ: Ընդ խուժան
քո ապստամբ, և առ գօրդ չարութեան, որք են
քաջագէտ մարմին վայելուչ դևոցդ: Այս էր կըր-
թութիւն ձեր, և խոստումն հաւատարմութեան.
և այս հպատակութիւն ձեր զինուորական. քակել
զսխան միամտութեան ընդ խոստովանեալ ար-
քային երկնից: Այլ՞ով խորամանկ կեղծաւոր՝ որ

արդ կամիս ցուցանել զանձնդ պաշտպան ազատութեան, ո՛ առաւել քան զքեզ խոնարհեցաւ երբեմն, և երկիր եպագ ծառայաբար ահաւոր և միահեծան Տէրութեանն։ Նա՛ յո՛ր սակս. եթէ ոչ՝ ակնկալութեամբ հանելոյ զնա՛ ի ժառանգութենէ իւրմէ, և թագաւորելոյ փոխանակ նորա։ Արդ՝ միա՛ դիր բանիցս։ Գնա՛ ասէ, և փութացեալ երագեա՛ անգր՝ ուստի փախեարդ։ Եթէ այլեւս երևիս ի սուրբ սահմանադ, ես ինքնին շղթայակապ վարեմ զքեզ ի տարտարոսդ. և այնպէս պնդեմ զքեզ անդանօր, մինչև ոչ և կարող լինել քեզ ծաղր առնել զդրամիքդ դժոխոց՝ որք ցարդ դիւրաբաց կային, և չէին ամրափակ։

Օ՜ այսօրինակ սպառնացաւ նա։ Ախայ Աստուա՛ծ առ ոչինչ զրեաց զսպառնալիս նորա. այն պի՛ յաւէտ լիմն սրտմտեալ՝ արար նմա պատասխանի։ Խրոխտապանծդ Վերովբէ սահմանապահ՝ յայն ժամ զոյց ի մէջ արկիչը յաղագս շղթայիդ, յոր ժամ վարեացես զնա՛ ի գերութիւն։ Այլդու կայ և ինա՛ զծանրագոյնն ընդունել կապանս ի քաջազօր բազկաց իմոց՝ թէպէտև բարձեալ բերես զարքայն երկնից ի վերայ թևոցդ. և ընդ ընկերս քո՝ որք քաջակիրթ են ի լուծ, ձգես զյաղթական անհնա՛ս կառաց նորա յընթացս ձանապարհին աստղայատակ երկնից։

Այնուհետև խօսեր նա զայսօրինակ, դունդն հրեշտակապետին ցուցաւ յաւէտ լիմն պայծառազգեստ և կարմրափայլ. և սրացուցեալ զփաղանգս իւր ի լուսաձև եղջիւրս՝ սկսաւ պատել զնա շուրջանակի արձանացեալ նիզակօքն. որք էին այնչափ թանձրախիտ՝ որպէս յորժամ անդաստանն Վե-

մեռել [84] հասեալ ՚ի հունձս՝ ծածանել մէտ ՚ի մէտ զբիատս իւրոցն հասկաց, յոր կողմն և խնաւարհեցուցանէ զնոսա հողմն. և աւրօրագիրն բազմախնամ ըմբռնեալ կայ ՚ի տարակուսանս՝ թէ զուցէ որպէք իւր յոտատատար՝ զացեն զյարդ սէն ՚ի կալ անդ ցորենոյ: Յայնմ վայրի խոտվեալ Աստուածային յանձն իւր՝ ժողովեաց առ ինքն զամենայն զօրութիւնս. և եկաց արձանացեալ հսկայաձև իբրև զՅենեբիի [85] և կամ զ Ատլաս [86]: Հասակ նորա ժամանէր յերկինս. և ՚ի վերայ սաղաւարտին նորա երկիւղն փետրազարդ: Նա ոչ խոկ ՚ի ձեռին նորա պակասեաց նմանօրինակ ինչ զեղարդեան և ասպարի: Յայնժամ հանդերձեալ կէին լինել առհասին մրցմունք. և ՚ի խոտվութեան անդ՝ ոչ միայն զբախտն, այլ զերեւս և աստղալից կամարն երկնից ունէր գնալ յապականութիւն յերեսաց անհնարին մարտին, եթէ Յաւիտենականն առ ՚ի ունել զառաջս նորա՝ ոչ կախէր անդէն վազվազակի ընդ երկինս զչշուխ իւր ոսկի՝ զոր յարդ տեսանէք ընդ մէջ կենդանակերպից Զոդիական [87] և Կարձի [88]: Յորում կշռեաց նա նախ զամենայն առարածս՝ զառկախեալն երկիր բոլորակաձև, և զօդ հաւասարակշիռ. և այժմ կշռէ զամենայն անցս յաշխարհի, զպատերազմունս, և զթագաւորութիւնս: Նա եդեալ էր ՚ի նմա զկրկին կշռորդս. զմին ՚ի բաժանումն, և զմիւսն ՚ի մարտ: Նա ահա սլացեալ ՚ի վեր երկրորդին՝ անկուշեաց զլուծն կշռոյ: Ո՞ր տեսեալ Զաբրիէլն՝ զայս օրինակ խօսեցաւ ընդ Թէնեմուին: Ո՞վ Աստանայ՝ քանզ ձանաչեմ ես զզօրութիւնս քո, որպէս և դու զանձին քում. ոչ միայն սեպհական, այլ զոր ընկալաք

ՀԱՐՑԱՆ։ ԱՂԴ՝ զինչ անմտութիւն է պանծալ ընդ զօրութիւնս բազկաց։ Օ՛ի քոյդ ոչ կարեն ա֊ ւելի ինչ առնել քան զոր Թողացուցանեն երկինք. նոյնպէս և ոչ բազուկք իմ, Թէպէտև զօրութիւն նոցա կրկնապատկեալ է այժմ առ՝ի կոխան առ֊ նել զքեզ ընդ ոտիւք։ Հայեաց՝ի վեր յերկինս, և ընդերոյիր զաւփ անձին՝ի նշանդ՝ յորում կաս կշռեալ. և ծանիցես, Թէ քանի Թեթև ես և տկար առ՝ի զդէմ ունել իմում զօրութեան։ Կշռա֊ կեալ Թշնամւոյն՝ի վեր՝ ետես զամբարձումն իւ֊ րումն կշռոյ [89]։ Ալ՝ ան որոյ և ոչ այլ ինչ յաւե֊ լեալ՝ խոյս ետ անտի քրԹիմնջելով. և խաւար վի֊ շերոյն տեղի ետ ընդ նմա [90]։

# ԴՐՄԽՏ ԿՈՐՈՒՍԵԱՑ

ԳԻՐՔ· Ե։

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի հասանել առաւօտու պատմէ Եւայ Ադամայ զխոր վայրայղ անուրջըն՝ զոր սեսեալ էր ի գիշերի։ Ել հարձի ընդ նոսա Ադամ, բայց քաջալերէ զնէսայ։ Եւ նայեցեալ նոքա առ տաքս յառաւօտեայ վաստակս իւրեանց։ Օրհնութիւն նոցա առաւօտեան առ դրան հովանոցին։ Աստուած յանպատասխան թողի առնել զմարդն՝ առաքէ առ նա զԽափայէլ ծանուցանել նմա զպարախս հնազանդութեան, զանձնիշխանութիւն իւր, և զինամին եկեալ հասեալ. և թէ՝ ո է նա, և ընդէր թշնամի նորա, հանդերձ այլովք կարևորօք ի սակս գիտութեան Ադամայ։ Խափայէլ իջանէ ի գրախտն։ Կարագրութիւն երևման և հերպարանաց նորա։ Ադամ նստեալ առ դուռն հովանոցին՝ սեսանէ ի հեռատեսանէ զգալուստս նորա։ Գնայ ընդ առաջ, և ածէ զնա ի բնակութիւն իւր։ Պատասխանի ընդ ընդիր պատգամ գրախտին՝ զոր քաղէ Եւայ։ Խանձ նոցա ի սեղանի անդ։ Խափայէլ ըստ պատգամաւորութեանն յուշ առնէ Ադամայ զվիճակ նորա, և զթշնամին։ Ի խնդրոյ Ադամայ ծանուցանէ նմա զհանգամանս թշնամւոյն՝ սկսեալ ի նախկին վտարանդութենէ նորա յերկինս, և զպատճառ նորին։ Եւ թէ զնարդ ձգեաց նա զչէհաճան զկնի իւր ի կողին հիւսիսոյ. և անդ յորդոր էզնոցա յատատամբութիւն, որպացեալ զամենեսեան՝ բայ ի Աբդիէլէ, որ ի խորհրդեան անդ ընդդէմ գտաւսնմա, և ապա ի բաց եկաց ի նմանէ։

# ԴՐԱԽՏ ԿՈՐՈՒՍԵԱԼ

ԳԻՐՔ· Ե·

Որպէս յառաջ խաղացեալ առաւօտու՝ ի վարդակարմիր գնացս իւր ընդ կողմն արևելից՝ սփռէր զմարգարիտս ընդ երկիր, զարթեաւ Աշամ՝ ի քնոյ իւրմէ ըստ սովորութեանն. զի քուն նորա թեթև էր իբրև զօդ՝ մեծաւ դիւրածախ մարտզուարթեամբ, և բարեխառն արտաշնչութեամբ զո՛ լորշեայ· զոր և շրչիւն ևթէ տեսլոց, և շոգիք վտակի՝ ի հովահարել անդ արշալուսի, և գեղգեղաձայն բարբառ թռչնոց յոստս ծառոց յառաւօտու՝ գիւրաւ փարատէին՝ ի բաց յաչաց նո՛ր։ Այլ կարի ինն զարմացաւ՝ ի գտանել անդ զԱհեայ տակաւին՝ ի քուն. որոյ և հեքը խանգարեալ էին, և այնք կարմրացեալ՝ գոգցես յերեսաց անհանգիստ քնոյ։ Ախայարոյց լեալ, և յեցեալ յարմունկն առ կողնիք նորա՝ խոնարհեցոյց զանձն իւր առ նա խանդաղատանօք, և եառ ըզգեղ վայելչութեան նորա՝ ի քուն անդ ոչնչ ընդհատ՝ ի ժամ արթնութեան։ Այս ասպա կալեալ զձեռս նորա՝ ի ձայն քաղցր (որպէս՝ ի հնչել

Օ Եփիւրայ [1] առ Փղըրա [2]) բարբառեցաւ յա-
կանջս նորա օրինակ զայս՝ Օ արթիր հարսն իմ
գեղեցիկ, ընտիր պարգեւդ երկնից գտեալ ՚ի վեր-
ջոյ, և բերկրութիւն իմ միտաղուարձ. զարթիր,
զի լուսապայծառ ծագէ առաւօտն, և դաշտն զո-
վագին՝ կոչէ զմեզ ՚ի վաստակս։ Օ արթիր, զի
անցանէ ժամն բարեվայելուչ ՚ի զննել՝ թէ զիարդ
բուսանին տունկքն մշակեալք առ՚ի մէնջ, զիարդ
ուռճանայ անտառն կիւրոսի. այլ ումանք հոսեն
զգինւոյն, և այլք զբալասան։ Օ լարդ բնութիւնն
նկարէ զերանգս իւր. և զիարդ մեղուն նստեալ
՚ի վերայ ծաղկանց՝ ձգէ ՚ի նոցանէ զբաղցրու-
թիւն հեղանիւթից [3]։

Օ այսօրինակ բարբառեալ՝ զարթոյց զնա։ Եւ
նորա յառեալ զաչս իւր ՚ի դամ, և ընդգրկեալ
զնա՝ խօսեցաւ ընդ նմա օրինակ զայս։

Ո՞վ փառք իմ և պարծանք, յորում միայն
դանեն զՀանգիստ ամենայն խորհուրդք իմ։ Ու-
րախ եմ ընդ տեսութիւն երեսաց քոց, և նորոգ
առաւօտուս. զի յայսմ գիշերի (գիշեր աւարօրի-
նակ) տեսի երազ՝ եթէ իցէ երազ, ոչ գիտեմ՝ որ-
պէս բազում անգամ սովորութիւն է ինձ, կամ
զվաստակոց երեկեան աւուր, և կամ զհնամոյ
վաղուեան առաւօտու, այլ զբարեաց և զվշտաց՝
զորս ոչ գիտացին միտք իմ մինչև ցայս գիշեր
բազմատաղնապ։ Ածուէր ինձ առընթեր ական-
ջաց լսել զբաղցրաձայն բարբառ՝ որ կոչէր զիս
արտաքս ՚ի զբօսանս։ Օ քոյդ համարեցայ զայն։
Որ և ասաց ցիս։ » Արդեր ննջես Հա՛ւայ, զի արդ
հասեալ է ժամն քաղցրաղուարճ և խաղաղաէտ։
Լուսնութիւնն տեղի տայ միայն գիշերահաւոց թռչ-

նոյն. որ և արդ զարթուցեալ՝ քաղցրաձայն նուա-
գէ զերդ իւր տենչալի: Լուսինն Թագաւորէ կա-
բահնաձև. և ՚ի գեղեցիկ լուսափայլութեան իւ-
րում ստուերազգեստ ինն ցուցանէ զերեսս արա-
բածոց: Հայց վայրապար, եթէ ոք ոչ ակնարկէ
՚ի նոսա: Աչք երկնից յարթմնի կան ՚ի տեսանել՝
զո՞ւյլ ոք, եթէ ոչ զքեզ զցանկալիդ բնութեան:
Ընդ տեսիլ քո զուարճանան արարածք. և հի-
ացմամբ ձգին միշտ ՚ի սլանալ ընդ գեղ երեսայ
քոյ «4: Օ՜արթեայ ՚ի ձայնէս իբրև ՚ի քումդ
կոչմանէ. բայց ոչ գտեալ զքեզ՝ ուղղեցի զմնացս
իմ ՚ի խնդիր քո: Ճանուէր ինձ անցանել առանձին
ընդ ձանապարհն՝ որ էած զիս անակնկալ առնլ
թեր արգելեալ ծառոյն գիտութեան: Կարի զայն
յայնժամ գեղեցիկ, բայց առաւել ևս գեղեցիկ
քան ՚ի տունջեան անդ: Այս ՚ի հայել իմում զար-
մացմամբ ընդ նա՝ տեսի առ նովաւ զոմն թևա-
զգեցիկ, և ՚ի ձև կերպարանաց նոցա՝ զորս բա-
զում անգամ տեսանեմք իջանել յերկնից 5: Ընդ
գնաց ցօղատարափ հոսէին զանմահութիւն 6. և
նա ևս պչուցեալ հայէր ընդ ծառդ: Որ և խօսե-
ցաւ ընդ նմա օրինակ զայս: «Ո՞վ գեղեցիկ ծառ՝
ճանրաբեռն պտղովք, ոչ ոք տակաւին Ա՜ստուա-
ծոց 7 անտի կամ ՚ի մարդկանէ հաձեցաւ թե-
թևացուցանել զճանրութիւն բեռինդ, և առնուլ
զձաշակ քումդ քաղցրութեան: Ո՞րքան այսչափ
արհամարհեալ լեիր գիտութիւնն: Ամ նախանձ,
և կամ երկիւղ արգելոյ ձաշակել ՚ի քէն: Որ
ոք կամի՝ հրաժարեցուսցէ, բայց ոչ ոք կարէ ար-
գելուլ ինձ ընդերկար զպարգևս քումդ բարու-
թեան: Այս մինչ վայրապար տնկեցար աստա-

նօր «։ Օ՜այս աստուածա՛ծ ոչ ևս յապաղեաց, այլ անդէն յառաջ մատուցեալ՝ ձգեաց զձեռն իւր ՚ի նա, հատ և ձաշակեաց։ Յայնժամ արհաւիրք կալան զնա ընդ անչնարին ժպրհուԹիւն բանից նորա՝ որոց երաշխաւոր եղև մեծ ևս յանդգնուԹիւն գործոյն։ Ա՜յլ նա խնդալ ինն խօսեցաւ ընդ նմա օրինակ զայս։ »Ո՛վ աստուածայինդ պատուդ՝ քաղցրաձաշակ ինքնին, բայց առաւել ևս ՚ի կԹիլ զքեզ սովին օրինակաւ։ Ա՛ւաղ ինձ, Թէ արդեւեալ կաս աստանօր իբրև Ա՜ստուածոյ միայն վայելչական. բայց քաջայարմար ես յընծայել Ա՜ստուածս ՚ի մարդկանէ։ Ա՜յս զնաՀդ ոչ. զի բաբին Հաղորդեալ առաւել ևս բաշխմանայ. և պարգեատուն՝ ոչ եԹէ նուաստանայ, այլ առաւել ևս պատուեալ մեծարի։ Ա՜բարաձդ բարերջանիկ՝ Հրեշտակատիպ գեղեցկիդ Ա՜նայ, լեր Հաղորդակից ընդ ևս. զի ԹԷպէտ երջանիկ ես, այլ մարԹէ քեզ լինել առաւել ևս երջանիկ, բայց ոչ յաւէտ արժանաւոր։ Ձ՜աշակեա ՚ի դմանէ, և լեր յայսմհետէ Ա՜ստուածուՀի ՚ի մէջ Ա՜ստուածոց։ Ա՛ի մեզ կապեալ միշտ ընդ երկիր. այլ եԹ երբեմն յօդս ըստ մերումն օրինակի, և երբեմն յերկինս՝ ըստ քումդ արժանեաց։ Ա՜յս տեսս անդանօր զկեանս Ա՜ստուածոյ, և կեաց իբրև զմի ՚ի նոցանէ «։ Օ՜այսօրինակ խօսեցեալ նորա՝ մերձեցաւ առ ևս, և մատոյց ինձ՝ մանաւանդ Թէ խմման բերանոյ, զմանն պաղպղն՝ զոր եՀատ ՚ի ծառոյ անտի։ Ո՜րա նորա ախորժակ և Հեշտալի՝ այնպէս զարԹայց զձաշակն իմ, մինչև ոչ ևս կարող լինել ինձ Հրաժարել ՚ի նմանէ։ Ա՜յլ անդէն սլացայ յամնդ ընդ նմա. և տեսի ՚ի ներքոյ զսահման տարածուԹեան

երկրի, սահման լայնածաւալ և բազմապիսի ։ Այնչափ զարմացեալ կայի ընդ խոյանալն իմ յայնչափ բարձրութիւն, և ահա առաջնորդն իմ մեկնեցաւ յինէն յանկարծակի. և ես համարեցայ զանձն իմ վայրաբերեալ, և ընկղմեալ ի քուն ։ Այլ քանի՞ ինդուլեամբ զարթեայ՝ ի գտանել անդ զամենայն ինչ երազ ։ Օ՜այսօրինակ պատմեաց Դաւիթ զանուրջս դիւերոյն. և Պգամ խօսեցաւ ընդ նմա տիրագիսն օրինակ զայս ։

Պ՜ամենայնէ պատկերդ իմ, և կին անձին իմոյ ամենասիրելի՝ յուզմունք խորհրդոցդ ի քուն գիս չերայս նոյնպէս տագնապեցուցանեն և զիս ։ Պէ եմ հաձեալ ընդ երազդ քաջանիւելի. խիթամ, զուցի յաւուրջ գայցէ ի չարէ անտի ։ Այլ ուստի՞ իցեն մեզք չարի ։ Ի քէզ ի տեղծուածդ անսբաս չի հնար նմա ունել զտեղիս ։ Պ՜յլ ծանիր, զի բազմապատիկ են ի հոգւոջ ստորին կարողութիւնք՝ որք արբանեկեն բանին իբրև դլխոյ իւրեանց ։ Երևակայութիւնն զերկրորդ ունի զպաշտօն ի նոսա ։ Յամենայն արտաքին իրաց՝ զորս հնդէքին աննկնջ զգայարանքն յանդիման առնեն նմա, յօրինէ նա զգաղափարս՝ զօդեղէն պատկերս ։ Օ՜ւրդորդեալ բանին, կամ անջատեալ զնոսա՝ կազմէ զՀատանուածս կամ զերբուսին ի միտս, զորս կոչեմք դիտութիւն կամ կարծիք. և ապա խոյս տայ յատանձին սենեակ իւր՝ ի հանդստարանն բնութեան ։ Ի մեկնիլ նորա՝ բազում անգամ արթուն կայ երևակայութիւնն, և խնդրէ բերել յանձին զնմանութիւն նորա ։ Այլ յոլովակի չարաչար անջատեալ զգաղափարսն՝ յանդիման առնէ՝ յաւէտ յանուրջս, զանհեթեթ և

զանտեղի բանս և զդործս՝ զանցեալս յառաջա-
գոյն [8]։ Օ՜յսպիսի ինչ յարացոյց Թուի ինձ տե-
սանել՝ի քումդ երազի՝ի բանից անտի մերոց ընդ
միմեանս յերեկեան աւուր ընդ երեկս, այլ տա-
բադէպ յաւելուածովք։ Սակայն մի՛ անկցի սիրտ
քո. զի մարթ է անցանել չարի ընդ միտս հրեշ-
տակի կամ մարդոյ առանց հաւանութեան, և
չթողուլ զինի իւր արատ ինչ կամ ստգտանս։ Այս
ես վստահ եմ՝ի քեզ, թէ յորմէ սոսկացար յե-
րազի անդ, չառնուս յանձն կատարել զայն յարթ-
նութեան։ Այդ՝ մի՛ լքանիր, և մի՛ մթագներ զգ-
դէմդ՝ որում արժան է զուարթագին ևս պայ-
ծառանալ, քան ինդագին և զուարձագեղ առա-
ւօտու ընդ երեսս երկրի։ Այլգ՛ուք անդրէն՝ի վաս-
տակս մեր ընդ անտառս, ընդ աղբերակունս, և
ընդ բուրաստանս ծաղկանց՝ որք արդ սփռեն զգ-
գրկալիր անուշահոտութիւն իւրեանց պահպա-
նեալ յերեսաց պիչերոյ, և չտեմարանեալ վասն քո։

Օ՜յսօրինակ զուարթացոյց նա զհարսն իւր
գեղեցիկ. և նա քաջալերեցաւ յանձն իւր։ Այդ
հոսեցոյց լուելեայն յաչաց իւրոց զքաղցր արտա-
սուս. զորս և հերովքն ջնջեաց։ Սակայն զերկու
սին պատուական չնթաս՝ի նոցանէ՝ որք կային պատ-
րաստական՝ի բիւրեղեան սահանս իւրեանց, մինչ
չև էին անկեալ՝ համբուրեաց Այդամ իբրև հնոր
հաղարդ նշանս գեղեցիկ մտացն խղճի, և բարե-
պաշտ երկիւղի յերեսաց յանցանաց։

Օ՜յսօրինակ անդորրացեալ՝ փութացան ապա
՝ի դաշտ անդր։ Այլ մինչև էր նոցա ելեալ ար-
տաքս՝ի տնկասաղարթ հովանոցին՝ի տեսիլ ծագ-
մանն առաւօտու, և արեգական (որ տակաւին ոչ

եղեալ ՚ի վեր, այլ հոլովեալ զանիւս կառոյց իւ-
րոց առ ըղձամբք Աւկիանոս՝ արկանէր ՚ի հան-
դիպոյ երկրի զցօղագին Ճառագայթս իւր, և ՚ի
լայնածաւալ ընդարձակութեան անդ ցուցանէր
զամենայն արևելեան կողմանս երջանիկ վայրաց
դրախտին և Եդեմայ ) խոնարհեցուցին զանձինս
յերկրպագութիւն, և մատուցին զաղօթս՝ զոր
յամենայն առաւօտու նուիրէին յայլևայլ եղա-
նակս. զի ոչ պէսպիսութիւնք ձայնից, և ոչ չափ
տակութիւն մեծ պակասէին նոցա յօրհնել անդ
զԱրարիչ իւրեանց ՚ի բարեվայելուչ և յինքնաւ
բուղխ բանս կամ երգս ։ Զարտարիմացութիւնն
ինքնին հոսէր ՚ի շրթանց նոցա յարձակ կամ ՚ի
չափեալ բան. և այնպիսի լիոն ներդաշնակու-
թեամբ, մինչև չլինել անդ պէտք միւս կամ քնա-
րի յառաւելութիւն ձայնից քաղցրութեան։ Օ՜ որ
և սկան օրինակ զայս ։

Ասացի զորձք քո էն սքանչելի՝ Վհոակալ
ծնող բարեաց, քո և համօրէն զարմանահրաշ յօ-
րինուածք տիեզերաց ։ Ասէ դու Զինաւելի քա-
նիօ՞ն առաւել ես սքանչելի՝ որ նատիս ՚ի վերոյ
քան զերկինս անտես առ ՚ի մէնջ, և կամ ընդ ա-
զօտ երեսիս ՚ի ստորին արարածքս՝ որք ցուցանեն
զբարութիւն քո և զգօրութիւն աստուածային՝ ՚ի
վեր քան զմիտս ։ Այլ դուք որդիք լուսոյ հրեշ
տակք՝ որք լաւ ևս գիտէք, պատմեցէք զնմանէ.
զի դուք տեսանէք զնա, և ՚ի միաբանութիւն եր-
գոց ձերոյմդ պարու շուրջ պատէք զաթոռով նո-
րա խնդագին զտիւն անպիղեր ։ Դուք յերկինս
օրհնեցէք զնա ։ Ասէ ՚ի վերոյ երկրի արարածք
ամենայն միաբանութեամբ բարձր արարէք զնա՝

որ է առաջին, միջին, վերջին, և անվախձան։ Վեղեկապժնդ՝ի լուսաւորս [9], վերջին սպասս հարկուզդ վիշերոյ ընդ արշալուսի, և անշուշտ զրաւականդ տունջեան՝ Թագաւորդեալ զինդա զին առաւօտն՝ի շրջանակ քո պայծառափայլ օրհ նեա զՏէր՝ի քում պարունակի՝ի ծագել տունջեանս, և յեղս քաղցրասիզ առաւօտուս։ Աբե զանձդ՝ առն և հոգի մեծամարմին աշխարհս, ծա նիր զՏէր քո վերնական. և հնչեա զօրհնութիւնս նորա՝ի միանձնեաւոր ընթացս քո յեղս անդ, ՝ի բարձրութեան միջօրէի, և ՝ի մուտս։ Ուսինդ՝ որ կ՝ ալ ընդառաջ ելանես արեգականն ծագման, և կ՝ ալ խոյս տաս յերեսաց նորա ընդ աստեղային հաստատութեան. և հնդէքին մնըրակքդ՝ [10] որք յօրինէք զկարճրդական պարս երգով, մատուցէք նմա զօրհնութիւնս՝ որ՝ի խաւարէն կոչեաց ըզ լոյս։ Ո՛դդ, և ամենայն տարերք՝ անդրանիկ ծնունդք բնութեան, որք ընթանայք՝ի քառեակ թիւ ընդ միանձնեաւոր շրջանն բազմայեղանակ, և բարեխառնութեամբ դարմանէք զամենայն արա րածս, յանդադար փոփոխման ձերում յեղանա կէցիք Աբարձին զնոր օրհնութիւնս։ Ակդք և գոլորշիք՝ որք արդ Թանձր կամ անօսր արտաշնչ չեալ՝ ելանէք՝ի լեռնէ կամ՝ի ձմէ, այն ինչ արե գակն նեբկէ յոսկի զգեղեցկաբարձ ատրոտս ձեր, բարձրացուցէք զպատիւ Աբարչապետին՝ եթէ՝ի սձնազարդել ձեր ամպօք զՀաստատութենն երկ նից այլագոնեալ, և եթէ յոտոգանել՝ի տա րսիս անձրևաց վերկիցն ծարաւի։ Աւ յամբաս նալ ձեր կամ յիջանել՝ մատուցէք նմա զօրհնու թիւնս։ Ատուցէք և դուք հնչմբ՝ որք հեղիկ

ֆամ ուժգին ընկէք ի չորից ծագաց երկրի· Սա
ւոյք, և ծառաստանիք ամենայն խոնարհեցուցէք
զդողդոջուն զագաթունս ձեր յերկրպագութիւն
նմին· Զլերդք, և ամենայն կարկաջուն հոսանք
երգեցէք զմեղեդիս նորա ի ձայն քաղցրութեան·
Այս գուք համբերն չունիք կենդանիք ընկեցէք նմա
վասն զձայն օրհնութեան· Ծառ չունիդ՝ որք սա
զառնայք երգով առ գրունս երկնից, համբարձէք
ի թեւս ձեր զօրհնութիւնս նորա· Այսուհետ ի
ջուրս, չորքոտանիք և գեւռունք ի վերայ երկրի՝
տուք վկայութիւն զմինչ, եթէ դադարեալ լեամբ
երթիք ի հնչեցուցանելոյ ընդ առաւօտս կամ
ընդ երեկս յականջս լերանց, հովտաց, աղբերաց
կանց և զովագին հովանեաց զերգս մեր, և յու
սացանելոյնոցա զօրհնութիւննորա [11]· Ո՞ւստր
Ձայիր Տէրդ տիեզերաց, և հաճեաց տալ մեզ
հանապազ զբարիս· Զայս եթէ ժողովեալ էցէ
կամ թագուցեալ գիշերոյս զբար ինչ, մերժեա
զայն ի բաց ընդ փարատել լուսոյս զնաւարն·

Ո՞յսօրինակ մատուցին զամբիծ աղօթս իւ
րեանց· և անդէն հաստատեցան միտք նոցա յան
դորր խաղաղութիւնն՝ զոր խնդրէին· Այս այն
պէս ասա ընդ քաղցրութեան ցօղոյ և ծաղկանց
փութացան յառաւօտեան մշակութիւն իւրեանց՝
ուր շարք ինչ պտղաբեր ծառոց կարի լինի ուռճա
ցեալ, հեռագոյնս արձակէին զառաւարաստեղն
ոստս իւրեանց· վասն որոյ և պէտս ունէին ձե
ռաց ի քշտել զանպտուղ գրկախառնութիւն նո
ցա· Այս կամ պէտք էին պատկելոյ զօրէն ընդ
հնձնուոյ· որոյ գիւրիկ արկեալ նմին՝ բերէր վար
ձանս ընդ իւր զղկոյզս որդեգրութեան՝ առ ի

զարդ տերևոց նորա ամլութեան։ Յայսպիսի վաս տակս տեսեալ զնոսա բարեխնամ Աքքային երկնից՝ կոչեաց առ ինքն զԱափայել, զընկերասէրն հոգին՝ որ յանձն էառ զուղեկցութիւնն Տոբիթ Թայ, և կացոյց յապահովի զամուսնութիւն նորա ընդ եւթնապատիկ օրիորդին. և ասէ ցնա։

Ասափայել՝ տեսանեն զաղմուկն, զոր յարոյցԱա տանայ ի վերայ երկրի ի դրախտի անդ՝ փախուցեալ ի դժոխոց ընդ խաւարային անդունդս։ Որ պէս տագնապեցոյց յայսմ գիշերի զամուսնս մարդկութեան. և զիարդ հնարի կործանել ընդ նոսա զՀամօրէն ազգ մարդկան։ Աբդ՝ գնա և խօսեաց ընդ Ադամայ իբրև բարեկամ ընդ բարեկամի՝ յոյժ և հովանաւոր վայրի գտանես գնա ի միջոցի՝ մեկնեալ յերեսաց տօթոյ ի հանգիստ, և յառնուլ զկերակուր։ Այն արա նման զերջանկութիւն վիճակի նորա, զերջանկութիւն Թոզեալ յահ.ձնիշխան կամն՝ անձնիշխան, այլ ոչ անփոփոխ։ Ոչ ատն որոյ զգուշացո՛ գնա, զի մի խոտորեսցի կալցի ինն յանճնապատասխանութեամբ։ Յայտնեաւ և նման զվտանգն, և յումմէ։ Աբ որպիսի հնարս հնարք թշնամին անկեալ յառաջագոյն յերկնից՝ ի կործանումն այլոց ի նոյնօրինակ երջանկութենէ։ Աբ միթէ բռնութեամբ, ա՛չ երբէք՝ զի գիտէ զընդդիմութիւնն, այլ պատրանօք և ստութեամբ։ Օձ նա նման զայս ամենայն, զի մի կամաւ անցեալ ընդ պատուիրանն՝ պատճառս առնուցու զգաւառանութիւնն, երբև ոչ խրատեալ յառաջագոյն։

Օ այսօրինակ խօսեցաւ Հայկն յաւետենական. և ելից զամենայն արգարութիւն [12]։ Իսկ Թեւա զգեստ Աբովքէն ոչ ևս յատպաղեաց զվնի վերնա

կան հրամանին. այլ՝ի միջոյ անտի հազարաց երիվ
նային ձառագայթիւ՝ [13] ուրանօր պարապօղեալ
կայր չքնաղափայլ Թևօքն, Թեթևս սլացաւ՝ի վեր։
Ընդ շատ խուճապման նորա յայս կոյս և յայն
կոյս բաժանեալ դասուց Հրեշտակաց՝ արարչին
նման ձանապարհ ընդ համօրէն հրեղէն սղոցատին.
մինչև ժամանեաց նա՝ի դուռնն երկնից։ Որ և
ինքնին բացաւ լայնարձակ, ձնչեալ՝ի վերայ ոտ
կեղէն ծղինեաց՝ զոր յօրինեալ էր վերադէն Ար-
ուեստապետի աստուածահրաշ ձարտարուԹեամբ։
Ընդուստ առ չլինելոյ խափան տեսուԹեան նորա
ամպոյ կամ անջրպետուԹեան աստեղ՝ ետես նա
զերկիր հանգուստատիպ այլոց լուսափայլ գնտոց,
Թէպէտև փոքրիկ. ընդ նմին և զդրախտն Ար-
ուեստոյ պսակազարդ յօրինեալ եղևնափայտիւք՝ի
վերոյ քան զլուրն։ Օրօրինակ նշմարէ՝ի գի-
շերի Վաղիլեանն ապակի [14] ՝ի ձուռնի անդ՝ Թէ
պէտև ոչ հաստատեաւ, զկարծեցեալ երկիրս և
զօդհմանս։ Կամ նաւուղղն՝ի Կիւկղադայց [15]
միջի տեսանէ նախ զՎեղս [16] և կամ զՀամս՝ [17]
իբրև զբիծ ամպաձև։ Ընձապարեաց ապա ընդ
Թռիչս իւր՝ի խնարհ. և առաջաստեալ զքաջա-
ձիգ Թևս իւր ընդ լայնատարը եթերն վերին՝ նա
ւարկեաց ընդ աշխարհս և ընդ աշխարհս [18]. և զի
՝ի վերայ բևեռական հողմոց, և և զի արագ բաղ
խեալ զօդն գիւրանասց։ Մինչև՝ի սրաձռիչ խո-
յանս անդ արծուեաց երևեր նա ամենայն հաւուց
իբրև զփիւնիկ [19] Թռչունն միածին, որ՝ի պահեստ
իւրոց նշխարաց՝ի չքնաղ տաձարի անդ արեգա-
կան [20] Այգիպտականն ընծայեալ՝ի Թեբէ [21]։
Ընդէն փուԹանակի իջեալ նորա՝ի վերայ արևե-

լեան պարապի դրախտին՝ դարձաւ ի բնիկ կեր-
պարան իւր Աերովբէ Թևաւոր։ Ա Էջ Թևք էին
նորա ի պարածածկել զպատկեր իւր աստուա-
ծանման։ Երկուք ի նոցանէ կարգեալ ի ծած-
կոյթ երկոցունց լայնանիստ ուսոց նորա՝ անկեալ
կային զլանջօքն ի զարդ արքայական։ Երկուքն
միջին պնդէին զմէջս նորա իբրև զգօտի աստեղա-
նշոյլ, և շուրջ պատէին վերիվայնեան և զպզտեցս
յընտիր ոսկի և ի գոյն երկնաներկ։ Ոսկ երկուքն
վերջին ծածկէին զոտս նորա փետրազարդ անգս-
տին ի զարշապարաց՝ իբրև վերտիւք և երկնե-
բանդ կարմրով։ Ագեալ անգամնօր ի վերոյ ոտից
իւրոց Հանգուցանտիպ որդւոյն Աայայ՝ [22] Թօթա-
փեաց զփետուրսն, որք լցին երկնային անուշահո-
տութեամբ զընդարձակութիւն վայրացն։ Ընդէն
վաղվաղակի ծանեան զնա հրեշտակայն գունդք՝
որք կարգեալ էին ի պահպանութիւն դրախտին.
և ի պատիւ երեսաց նորա և պատգամաւորու-
թեան կանգնեցան կացին յոտին։ Եւ նա անցեալ
ընդ շուշտուն վրանս նոցա, և ընդ անտառս զմե-
ապ, ծաղկանց անուշից, կասիայի, նարդոսի և բա-
լասանի՝ եհաս ի դաշտավայրն երանաւետ. ուր
բնութիւնն կոյս և առոյգ խայտայր անդ ի ծաղ-
կի հասակին. և զուարճանայր յառաւելապոյն
սիրուամբ քաղցրութեան անչափ առատութեամբ
ի վեր քան զկանոնս և զարուեստս [23]։ Աստեալ Ա-
դամայ առ դրան զուլպոյն Հովանոցի իւրոյ՝ եաես
զդալուստ նորա ընդ անտառն խնկենեաց. այն ինչ
բարձրացեալ արեգական՝ արկանէր չերտակն զե-
ռանդագին ձառագայթս իւր ի ջեռուցանել զը-
նորս երկրի առաւել քան զկէտան Ադամայ։ Եւ

Այսպէս յայնմ քաջագէպ ժամու պատրաստեր ի նեղբս գնաց ի համեղաճաշակ պաղոց անտի՝ որք քաղցր էին ի քիմս ընտիր ախորժակի, և յորդոր լինէին ծարաւոյ յարբեցութիւն Արեւտարեան ¾ ըմպել լեաց ի կամնաբուղխ գետոց անտի՝ ի հատա- պաղոց և ի խաղողոյ: Օր որ և կոչեաց Աստ ամարաւաքս՝ օրինակ գայս:

Փութա՛ Այ՛սպ, և եկ այսր ի տեսանել զլուսա- փայլ կերպարանն արժանի քումդ տեսութեան. որ և ուղղեալ գայ առ մեզ ընդ արեւելեան կողմն անտառիւք: Ոտի նա միւս ևս առաւօտ ծագեալ ի միջօրեի: Ոտերևս պատգամ ինչ կարևոր բերէ նա առ մեզ յերկնից, և կամի ընդունել այսօր զհիւրընկալութիւն առ ի մէնջ: Արդ՝ առնապա- բեա՛ հան արտաքս զամենայն մթերս քո, և սիրեա՛ անխնայ յարժանի պատուասիրութիւն երկնաւոր իջաւորիս: Այս կարի խակ արժան է մեզ ընծայել երախտաւորացն գնորդն, և Ձոխաբար մատուցա- նել զընծայեալ պարգևսն առատութեամբ. զի բնութիւնն առատացուցանէ զբերս իւր, և ի բաշ- խել անդ առաւել ևս պտղաբերէ. և վարդապե- տէ մեզ ոչ անխոհել:

Որում ետ պատասխանի Այսպ: Աստ՝ բազ- մերջանիկ հողագանգուածդ աստուածազգեցիկ, սակաւ մթերից պէտք են անդանօր՝ ուր յամե- նայն եղանակս տարւոյն պտուղքն հասունացեալ կախին գծառոց վասն մեր. միայն պարտ է փոքու- ինն մթերել զնոսա՝ որք ի շտեմարանել անդ՝ սահման զառաւել զօրութիւն ի մնուցանել, և սպառէն զանչափութիւն հիւթոյն: Ապա որոյ փութայեալ կթեցից յամենայն ծառոց, անկոյ և

բուսոց զընտիր ընտիր բազմահիւթ պտուղս՝ ըզ-
վայելչականն ասպնջականութեան երկնային հիւ-
րոյս. զի տեսեալ նորա՝ խոստովան լինի, թէ որ-
պէս յերկինս՝ նոյնպէս և աստ առատաձեռն է
Աստուած ՚ի բարութիւնս իւր։

Ո՛չ այս ասացեալ նորա՝ մեկնեցաւ փութանակի
ունելով ՚ի դէմս զինամեն, և ուշ եդեալ հիւրա-
սէր խորհրդոյն թէ զերս արդեօք ՚ի պտղոց անտի
յաւէտ արժան իցէ նմա ընտրել ՚ի սակս ազնը-
ւութեան նոցա. և յինչ կարգ քաջալայելուչ դա-
սել զնոսա, զի մի անընտրական գոլով, և ոչ քաջ
միաբանեալ ընդ միմեանս՝ խառնուրդ ինչ համոյն
գործիցեն. այլ ախորժակ փոփոխմամբ ընծայես-
ցին զկնի միմեանց զքաղցրութիւն ձաշակաց։ Եւ
ապա յառաջ մատուցեալ՝ յամենայն մատաղա-
տունկ ծառոց՝ զոր միանգամ երկիր մայրն համայն
նաբեր ընծայէ յարևելեան կամ յարևմտեան ՚ի-
նիկս [25], ՚ի ծովեզերեան Պոնտոսի [26] և Պունիկայ [27],
և ՚ի Թագաւորութեան անդ Ասղկիռովայ՝ [28] ժողո-
վեաց զընտրելագոյն պտուղս ՚ի կեղև անհարթ, ՚ի
փեձեկ փայլուն, և ՚ի պարուտակ կամ ՚ի պատեան
քիստաւոր։ Եւ անխնայ ձեռաւքն կուտակեաց զնո-
սա ՚ի վերայ սեղանոյն ՚ի բազմահարկի պատուասի-
րութիւն։ Ապա ՚ի պէտս ըմպելեաց՝ ձմերեաց զխա-
ղողն (քաղցու անմեղանչական) և զբազմատեսակ
անուշակ հատապտուղս [29]. յորոց և յօրինեաց ըզ-
քաղցրաձաշակ անուշունս. և յընդունարան նո-
ցին ոչ կարօտացաւ նա քաջալայելուչ և մաքրա-
փայլ անօթոց։ Եւ ապա սփռեաց ՚ի գետինն ըզ-
վարդ և զանուշահոտ բուրումն բուսոց և ծաղ-
կանց։

Յայմմ վայրի նախահայրն մեր Ադամ չոգաւ ընդ առաջ աստուածանման իւրումն ի ջնաւորի. և չուներ ընդ իւր զայլ սպասահարկուս, բայց միայն զանթերի կատարելութիւնս անձին իւրոյ։ Որք և յաւէտ շքեղաշուք էին քան զերկայնաձիգ հանդիսս իշխանաց՝ այն ինչ մեծագանձ ուղեկցութիւն պաշտօնէից նոցա և երիվարաց յոսկի համակեալ, խտտղէ զաչս ամբոխին, և յակձիուս կացուցանէ զամենեսին առ հասարակ։ Որ՝ յօտ հասեալ Ադամայ առնա՝ երկիր եպագ նմա խոնարհ յարգանօք այլոց երկիւղիւ, ի պատիւ վերնական բնութեան. և խօսեցաւ ընդ նմա՝ օրինակ զայս։ Կնակիւղ երկնից (զի զայդ ցուցանէ չնաշխարհիկ կերպարանդ) փոխանակ զի հաձեցար ի ջնանել ի վերին աթոռոց, և թողուլ առ վայր մի զկայանդ երանութեան, հաձեաց ընդ մեզ ընդ երկոսեանս միայն որք ցարդ ժառանգեմք տիրական պարգեւօք ըզվայրդ ընդարձակ, հանդչել ի տնկալուարձ հովանոցիս, և ձաշակել յընտրական պտղոց պարտիզիս. մինչև զուարթացն տօնին միջօրէիս ընդ խոնարհել արեգականդ։

Որում ետ պատասխանի քաղցրութեամբ հրեշտակային զօրութիւնն։ Ադամ ես իսկ յայն սակս եկի։ Օ՛ի ոչ ստեղծար դու այնպիսի, և կամ ընակեցար յայս տեղի՝ մինչև չլինել քեզ մարթ հրաւիրել բաղում անգամ ևս և զերկնային հոգիս յայցելութիւն անձինդ։ Ադդ՝ առաքինորդեա ինձ ի հովանոցդ, զի կամք են ինձ անցուցանել ընդ քեզ զմիջօրեայդ մինչև ցերեկոյ։ Ու այսպէս եկին նոքա ի տեղին հովանաւոր՝ որ խնդայր ծաղկազուարճ գեղեցկութեամբ, և անուշահոտ

բուրմամբ հանգոյն վայրացն Պոմպէոյ [30]։ Իսկ Աւետ վայելչութեամբ եւ եթէ անձին պճնազարդեալ եւ յաւէտ գեղեցկատեսիլ գոլով քան զՀարսին անտառի, և քան զերեսին գեղադէղ Աստուածուհիսն՝ որք ըստ առասպելացս մատեան հոլանի ի կուիս ի լերինն Իդայ [31], եկաց ի սպասու ասմնջակատութեան իջաւորին երկնից։ Օ՛ի ի հանդէս առաքինութեան իւրոյ չեղեն նման պկտք ծածկութիւ, և ոչ տկարութեան խորհուրդք այլագունեցեալն զայս նորա [32]։ Այլ հրեշտակն մատոյց նմա զողջոյնն ընծայեալ զինի ամենօրհնեալ Աստուածմա՝ երկրորդն Աւետի. Ուրախ լեր մայր ազգի մարդկան, զի պտղալից որովայն քո հանդերձեալ է ընդ քեզ երկիր յոգեսահիւ ծննդովք՝ առաւել քան զկուսատակութիւն սեղանոյդ բազմատեսակ պտղովք ծառոյն Աստուծոյ։ Անդեան նոցա ուղղեալ էր ի գալարազգեստ հողոյ. և ունէր շուրջ անակն զմանուածատ բազմոցս։ Իսկ ի վերայ նոցա բազմեալ կայր դիպայեալ աշուկն [33] ողջոյն, Թեպետեւ պարկեին անդադար գարուն և աշուն ի միասին՝ ձեռն ի ձեռն տուեալ միմեանց [34]։ Այնչ չէ էր մատուցեալ նոցա ի կերակուր՝ բանս ի միջ առին առ վայր մի ընդ միմեանս, զի ոչ զայր երկիւղ ցրտանալոյ ձաշուն։ Այ՛ Աստուածայրն մեր սկսաւ ասել օրհնակ զայս։ Ձաձեանց հիւրդ երկնային ձաշակել ի բարութեանցս՝ զորս կերաքկրկին մեր՝ յորմէ իջանեն անչափ առատութեամբ ամենայն պարգեւք կատարեալք, ետ մեզ յերկրի ի կերակուր և ի վայելս։ Աներեւս իցեն զոքա անաստ խորժ կերակուր ի քիմս հոգեղէն գոյացութեան, բայց մի ե հայրն երկնաւոր որ տայ ամենեցուն։

Արուամ եւ պատասխանի հրեշտակն· Ա՛ան սպ-
սոլիկ զոր լինչ միանգամ պարգեւէ նա (որոյ օրհ-
նութիւնն քարոզեսցի ՚ի յաւիտեան) մարդոյ մա-
սամբ հոգեվինի, մարթ է լինել և ամենամաքուր
հոգւոց կերակուր ախորժաճաշակ· Օ՛ի նոյնպէս
՚ի խնդիր էն կերակրոյ մաքուր գոյացութիւնքն
իմանալեաց, որպէս և բանականն ձեր· Արկածքին
եւս [35] բարձեալ բերէն յանձինս զտտորին կարօղու-
թիւնս զգայութեանց՝ որովք տեսանէն, լսեն, հո-
տոտին, չօշափեն և ճաշակեն· Ճաշակ քաջեփեաց,
դիւրամարս և դիւրախոսիկ ՚ի գոյացութիւն ան-
դրը· որով մարմնականն փոխարկի ՚ի մարմին· Ա՛յլ
ծանիր, զի ամենայն արարածք պէտս ունին սնու-
դեան և կերակրոյ· Ծանձրագոյնքն ՚ի տարերց
զնրբագոյնսն ունին իւրեանց ՚ի կերակուր· Ո՛ղ
զջուր, հող և ջուր զօդն, և օդ զհուրն եթերական·
Այս նախկին լուսինն, զի կարի խիտ խոնարհագոյն
է նա· և յայն սակս կրէ ՚ի բոլորշի դէմս իւր զլիծս՝
որք են Թանձր գոլորշիք եւ եւս փոխարկեալք ՚ի
գոյացութիւն նորա· որ և արտաշնչութեամբ իւ-
րովն խոնաւութեան ընծայէ բարձրագոյն գնոյց [36]
զմտնունդ· Ա՛յնպէս և արեգակն մնատակարար լու-
սոյ համայնից՝ ընդունի յարատաշնչութենէ խոնա-
ւութեան բոլորեցուցոյ զմննդական վարձս իւր, և
վայելէ զայն յերեկոյին ընդ Աւվխանու· Այս թէ-
պէտ յերկինս ծառքն կենցաղ բերեն զԱ՛մբրոսեան [37]
պտուղս, և որթք բղխեն զՆ՛եկտար [38], և մեք
յիւրաքանչիւր առաւօտու թօթափեմք յամենայն
բուսոց զմեղրածորան ցօղս [39], և գյատակն երկնից
գտանեմք ծածկեալ յերեսաց մարգարտեայ հո-
տից՝ սակայն Ա՛ստուած զայնպիսի խիճ պէսպիսու-

Թիւն իւրոց բարուքեանց եցոյց աստանօր ՚ի գլ-
խախտս ՚ի նորոգ վայելս զուարճութեանց, մինչև
մարթ լինել նմա համեմատիլ ընդ երկինս: Ա՝ ան
որոյ մի համարիլը զնս կարի ինն հրաժարեալ ՚ի ձա-
շակելոյ ընդ ձեզ: Այս այնպէս ապա բազմեցան ՚ի
կերակուր ... Յայնմ վայրի պաշտեր Այսպ ՚ի սե-
ղանի անդ, և պսակէր զԹագաւորն բաժակաւ յա-
նուշակ ըմպելիս ... Երբև յապեցան կերակրովքն
և ըմպելեօք առանց յափրանալոյ՝ յանկարծակի
խորհուրդք անկան ՚ի միտս Գամայ չթողուլ ըզ-
ժամն բարեպատեհ ՚ի բանս անդ ընդ հրեշտակին՝
առ ՚ի գիտել զորս ՚ի վերոյ են քան զաշխարհս, և
զընտրեալսն բնակչաց երկնից՝ զորոց զգերազանցու-
թիւն առաւելեալ տեսանէր քան զիւրն. որոյ լու-
սաւորեալ կերպարանք նշոյլք էին աստուածայնոյն,
և զօրութիւն նոցա առաւելեալ յոյժ քան զմարդ-
կայինս: Ա՝ ան որոյ և պատկառանօք լինի զայս օ-
րինակ ուղղեալ նա զբանս իւր առ պաշտօնեայն
հրեղէն:

Հնակիւղ ընդ Գաստուծոյ՝ քանզ ձանձրեմ գլ-
խախտս քո ցուցեալ առ իս յայս պատիս, զի հա-
ճեցար մնանել ընդ յարկաւ իմում խոնարհու-
թեան, և ձաշակել երկրային պտղոցդ՝ որք ոչ
են վայելուչ կերակուր հրեշտակաց: Ապակայն և
այնպէս հաճեցար յոյժ ընդ նոսա, մինչև ցուցանել
զանձնդ ոչ ձաշակեալ երկինս առաւելապէս հա-
ճութեամբ զվերին կոչմանդ: Գլ մի՛թէ կայցէ
ինչ համեմատութիւն ընդ միջ երկոցունցդ:

Ողորմ եւ պատասխանի Գահանայապետն թե-
տապէսիկ: Ան և Գդամ Գբարիչն ամենակալ
յորմէ ելին արարածք ամենայն, և ՚ի նոյն դառ-

նան վերստին՝ եթէ ոչ խոտորեսցին ի բարւոյ անտի: Նա ամենեքեան ստեղծան նովին կատարելութեամբ: Մի է և նիւթն առաջին յօրինեալ յայլ և այլ ձեւս, և յայլ և այլ աստիճանս գոյացութեան, և կենաց ի կենդանիս: Այլ առաւել նուրբ են, և յաւէտ հոգեղէն և մաքուր, որչափ հպատուագոյնս մատչին առ նա՝ հաստատեալ իւրաքանչիւր ի ներգործական կոպարի իւրեանց. մինչև մարմնոյն ազգել ի հոգի ի սահմանի անդ համեմատութեան իւրաքանչիւր կարգի: Այս օրինակ յարմատոյ անտի ընձիւղն նախ շառաւիղն դալարի, ապա տերևն օդանման, և ապա լցեալ ծաղկին պայծառ՝ որ բուրէ զանուշահոտութիւնս: Ծաղիկք բուսոց, և պտուղք ծառոց՝ որք կարգեալ են ի կերակուր մարդկան, ձը գին ընդ աստիճանս նրբութեան առ կենսական, առ կենդանական, և առ խնայական հոգիս. և ընծայեն զկեանս, զզգայութիւն, զերևակայութիւն և զմիտս: Յորմէ ընդունի հոգին զբանն. և բանն է գոյութիւն նորա տրամաբանող կամ հայեցողական: Տրամաբանութիւնն յաւէտ մնկ է ձեզ, և հայեցողութիւնն մեզ. որք որոշին ըստ աստիճանի և եթ, և նոյն են ըստ տեսակին: Արդ՝ մի զարմանար, եթէ ոչ հրաժարիմ ես ի բարեաց անտի՝ զորս կարգեաց Աստուած ի պետս ձեր, այլ ըստ օրինակի ձերում փոխարկեմ ի գոյացութիւն անձին: Ակեսցէ ժամանակ թերևս, զի հաղորդեսցին մարդիկ ընդ հրեշտակս. և գոյեն զկերակուրն ոչ անվայելուչ, և զգարման մնդեանն՝ կաըն անօսր: Նա թերևս մարմինք ձեր նրբացեալ ժամանակաւ մարմնական կերակրովքս՝ դարձցին

ասա ողջոյն ՚ի հոգի. և ելցեն թևազգեստ լե-
թերն վերին ըստ օրինակի մերում, և կամ բնա-
կեսցեն ըստ հաճոյս ՚ի դրախտի աստ կամ յերկ-
նայինն. միայն թէ լինիք դուք հնազանդ, և կաց-
ջիք հաստատուն և անշարժ ՚ի սէր նորա՝ որոյ էք
սերունդ։ Ա.յժմ խնդութեամբ վայելեսջիք
պերճանկութիւնն՝ զոր մարթ է ձեզ ունել յերա-
նաւէտ վիճակիդ, և չէ հնար հասանել առաւե-
լագունին [40]։

Ողջոյն արար պատասխանի նախահայրն Ադամ։
Ո՞վ բարեհոգի հոգի՝ հիւրդ բազմերախտ, բարիոք
ուսուցեր զձանապարհն՝ որ ուղղէ զընթացս մե-
րումն դիտութեան. և զաստիճանս բնութեան
ձգեցեր ՚ի կենդրոնէ անտի առ չորրապատ նորին.
ընդ որս ՚ի գինութեան անդ արարածոց մարթ է
մեզ ոտն առ ոտն ելանել առ Աստուած։ Ա.յլ
պինչ միտք էին զգուշութեանն՝ զոր յաւելեր գինի
ասելով, դիայն ընդ լեզուս դուշականդ։ Այնմ մարթ
էցէ մեզ անկանիլ ՚ի հնազանդութենէ նորա, կամ
մերժել յանձանց զսէր նորին՝ որ ստեղծ զմեզ ՚ի
հողոյ, և կարգեաց աստանօր ՚ի լուսթեան օրհնու-
թեանց՝ որոց մարթ է մարդկայինս յանկութեան
՚ի խնդիր լինել կամ հասանել։

Ողջոյն եւ պատասխանի Հրեշտակն։ Որդիք
երկնից և երկրի՝ [41] ունկն դիր բանիցս։ Ո՛ երջան-
կութիւնն զոր ունիս՝ խոստովանեա Աստուծոյ, և
գնահատազորդութիւնն ՚ի նմին՝ անձինդ և, այս
է՝ քումդ հնազանդութեան, և կայ ՚ի նմին. և
այս էր զգուշութիւնն՝ զոր ետու քեզ։ Ա.յլ ՚ի միա
առ, գի Աստուած ստեղծ զքեզ անթերի, բայց
ոչ անփոփոխ. ստեղծ զքեզ բարի, բայց գնահա-

պաղորդութիւնն ՚ի նոյն՝ եթող քումդ անձնիշ-
խան ազատութեան . զի կարգեաց նա զկամ քո
ազատ ՚ի բնութենէ իւրմէ , և ոչ բռնակալեալ
յանհրաժեշտ ձակատագրէ, կամ յանողոքելի հար-
կէ ։ Վասն որոյ խնդրէ նա զհարկ մերումն ծա-
ռայութեան կամաւ , և ոչ ակամայ . զի ոչ հաճի
նա ընդ ակամայն, և կարէ իսկ ոչ ։ Վասնզի զիաւրդ
մարթ է անսազատ սրտիւ ցուցանել զհանդէս կա-
մաւոր կամ ՚ի հարկէ ծառայութեան իւրեանց ,
յորժամ կատարեն միայն զհրամանս ձակատա-
գրին , և չկարեն այլ ինչ ընտրել ։ Այս իսկ , և ա-
նոյն գինուորութիւնք Հրեշտակաց՝ որք կամք
առաքի աթոռոյն Աստուծոյ , ունելիք զվիճակ մե-
րումն երանութեան՝ որպէս և դուք զէերդ , յոր-
չափ հնազանդութիւն մեր կալեալ է զայն , և չէք
մեզ այլ ակատան ։ ՚Ի կամ ազատութեան մերոյ
սպասահարկու եմք նմին , զի անձնիշխան կամօք
սիրեմք զնա . և ՚ի կամ մեր է սիրել զնա կամ ոչ ։
Յայսմ կամք , և կամ անկանիմք ։ Վնկան ոմանք
՚ի մէնջ , զի անկան յանհնազանդութիւն . և յայն
սակս կործանեցան յերկնից յանդունդս դժոխոց ։
Ո՞վ ահագին կործանմանն՝ յորպիսի բարձրու-
նէ երանութեան յիր խորս աղետից ։

Ո՛ս այս աստ ցհրեշտակն Աստուածայինդ մեր պահ-
ծալի ։ Յաւէտ մտադիր և ախորժակ ունկնդրու-
թեամբ լուայ զբանս քո՝ աստուածայինդ Վար-
դապետ , քան զարձագանգս երաժշտականութեան
Վրովբեականն երգոց յօդս՝ զոր ՚ի մերձակայ լե-
րանց արձակեն ՚ի գիշերի ։ Այս ոչ իսկ քաջ գիտեի
զանձնիշխան արարչութիւնն կամաց և գործոց ։
Ասյր զի չէ պարտ մեզ մոռանալ զսեր Արարչին

մերոյ, և զհնազանդութիւնն առ նա՝ որոյ սիակ պատուիրանն է կարի՛ լինն արդարացի, զայն հաս տատութեամբ երաշխաւորելոյն ինձ միաք իմ, և երաշխաւորեն միշտ։ Սակայն քանք քո յաղագս անցիցն անցելոց յերկինս՝ զարթուցանեն յանձին իմում զտարակուսանս, և յաւէտ զփափաք ցան կութեան առ՝ ի լսել՝ եթէ ոչ է քեզ անհաճոյ, զլուանդակեալ պատմութիւն նորին. որ և անշուշտ պարտ է լինել նորանշան, և արժանի խորհրդածու լուսթեան առ ունկնդրութիւն։ Ա.ին զի և երկայնութիւն տունջեանս զեռ առաջի կայ մեր. զի չև և է աւարտեալ արեգական զկէս ընթացից իւրոց, և չև է սկսեալ զմիս կէս նորին ընդ լայնաձիգ կամարն երկնից։

Ա.յս էին խնդրուածք Ա.զամայ։ Ա.ւ Ա.ստիայէ լի հաճեալ ընդ այն՝ զկնի սակաւ մի հանգստեան սկսաւ ասել՝ օրինակ զայս։

Օ՜ բարձրագոյն խնդիրս՝ զգաւազին և զդժուարին ձեռնարկութիւնս եդիր՝ ի վերայ իմ; Օ՜ աղիկդ մարդկան աղգի։ Օ՜ ի զիա՛րդ պատմեցից՝ ի մարդկային լսելիս զանեւելոյթ մրցանս հոգւոյն մարտագրաց։ Օ՜ ի՛արդ առանց ողբոց յիշատակեցից զկործանումն այնչափ բազմութեան փառաւորաց և կատարելոց երբեմն՝ ի հաստատութեան իւրեանց։ Ա.ւ զի՛արդ յայտնեցից զգաղտնիս վերին աշխարհի, զորս թերևս չէ արժան հրատարակել։ Սակայն յօգուտ անձինդ չնորհեալ է քեզ։ Ա.յլ զոր միանգամ՝ ի վերոյ է քան զհաստումն մտաց մարդոյ, այնչափ միայն նկարագրելից՝ ի մէջ ածեալ զհոգեղէնն՝ ի մարմնական դէմս, որչափ մարթ իցէ ինձ քաջ ևս յուցանել։ Ա.այց զի՞նչ, եթէ

երկիրս լոկ ստուեր իմն երկնից . ապա որք միանգամ գտանին ի նոսա , առաւել նմանագոյք էն միմեանց՝ քան զոր կարծեն երկրածինք[42] :

Արդ՝ մինդեռ տակաւին ոչ էր արարչագործեալ աշխարհի , և Աիչն անդնդային Թագաւորեր անդ՝ ուր այժմ երկինքդ Թաւալին , և երկիրս ծանրագեալ հանդչի ի վերայ իւրումն կեդրոնի , յաւուր միում (քանզի ժամանակն Թիպէտև ի յաւիտենականութեան անդ , եթէ մեր ձեռագործի ի շարժուձին՝ չափէ զաւուրականն ի նեղկայ , յանգեալ և յապառնի ) յայնպիսւոյն աւուր՝ զոր օրէն է ծնանել մեծի տարւոյն երկնից , հրեղէն զինուորութիւնք Հրեշտակաց կոչեցեալք յինքնակալ հրամանէն՝ եկին փութանակի յամենայն ծագաց երկնից , և յանդիման եղեն առաջի աԹոռոյ Աենակալին՝ անհամար բազմութիւնք ի պայծառափայլ կարգս իւրեանց ընդ իւրաքանչիւր Հրամանատարութեանց : Հաղարք հազարաց չքնաղ նշանաց յառաջ խաղային . և դրօշք և վառք ի միջոց յառաջապահ և վերջապահ գնդիցն ընդ օդն ղեղանէին . և որոշեալ կային ի միմեանց առանձին քահանայապետութեամբք , կարգօք և իշխանութեամբ իւրեանց : Այլ ի փողփողեալ ոսկեհուռն դիպակս իւրեանց նկարակերտ կրեին զսուրբ յիշատակարանս երևելի և հոյակապ գործոց իւրեանց ի հանդէս նախանձայուզութեան և սիրոյ : Արդ՝ ի կալ նոցա ի բոլորակ բոլորակ անպատում շրջապատին՝ Հայրն յաւիտենական՝ առ ոտն Նստեր Աթոռին բազմեալ ի ծոյն երանութեան , ի միջոց նորա իբրև ի հրացայտ լեռնէ՝ զորոյ ղգաչաճն անտեսանելի ընծայէ պայծա-

ռափայլութիւն բոցոյն, խօսեցաւ օրինակ զայս։ Որդիքդ լուսոյ՝ Հրեշտակք, Աթոռք, Տէրութիւնք, Պետութիւնք, Իշխանութիւնք և Օրութիւնք, լուարուք ամենեքին զվճիռն իմ անդարձ ի յաւիտեան։ Յաւր [43] ծնայ զՈրդին իմ միածին, զոր ցուցանեմ ձեզ։ Ի վերայ սրբոյ լերինս օծի զնա՝ զոր տեսանիք նստեալ ընդ աջմէ իմմէ։ Նդի զնա գլուխ ձեր. և երդուայ յանձն իմ, զի ամենայն ծունր կրկնեսցի նմա յերկինս, և խոստովանեսցի զնա Տէր։ Այսիքն յերանութեանդ ընդ գերազոյն իշխանութեամբ նորա, միացեալ ընդ նմա իբրև զմի մարմին ընդ գլխոյ։ Որ միանդամ ոչ հնազանդի նմա, և ոչ ինձ հնազանդի, և հերձեալ բաժանէ զմիութիւնն. նմին իրի և անկեալ ի նմին աւուր յերեսացն Աստուծոյ, և յերանական տեսութենէն՝ խորասոյզ անկանի ի խաւարն արտաքին, որ է տեղի կալզեալ նմին անիծեալ կանաւոր և անվախճան։

Այսօրինակ բարբառեցաւ Ամենաշնորհն. և ամենեքին հաւան ցուցին զանձինս ընդ բանս նորա. ցուցին, բայց ոչ էին ամենեքին։ Սակայն զայն օր անցուցին ըստ աւուրց տանից յերդս և ի պարտաւորութիւնս զլերամբն սրբով։ Պարտաւորութիւն խորհրդական. առ որ յաւէտ իմն հուպ մնալն պարբերութիւնն մոլորակաց և հաստատանոց [44] յաւնիւս իւրեանց. շրջանք ոլորտաձև, արտակենդրոն և բազմամանուած. բայց յայնժամ առաւել կաւնոնաւոր, յորժամ երևին յաւէտ պարականեր։ Նդ ի շարժուածս ոտից նոցա այնպէս քաղցրացուցանէր ներդաշնակութիւնն երկնային զսքանչելի եղանակս իւր, մինչև նոյն իսկ լսելեացն Ա-

տուծոյ զուարճութեամբ լինել ունկնդիր ։ Արդ՝ Եհան [45] երկոքին ի վերայ (զի գոյ և մեր երկոյն և առաւօտ՝ ի զուարճութիւն փոփոխութեան, և ոչ առ ի պէտս)· և անդէն փութանակի զարձան ի պարտաւորութեանց անտի ի ձաշ քաղցրաձաշակ կերակրոց ։ Յակմէիլ նոցա՝ էդան սեղանքն առաջի, և լցան յանկարծակի համադամօք Հրեշտակաց ։ Յայնմ՝ վայրի Հոսէր և յակնթագոյն Լեկտարն [46] ի մարգարիտ, յագամանդ և ի ձոյլ ոսկի՝ յանուշահամ բերս երկնաբոյս որթոյ ։ Խաղաղաձայն նոցա ի վերայ ծաղկանց, և պտակեալ նոքաբողբոջ բողբոքիւք՝ կերկն և արբկին. և ի զուարճամարտ հաղորդութեան իբրեանց յաւէտ լինին ձայնշակեցեալ զանմահութիւն և գնորհասութիւն՝ անէրևեան յերեսաց շուայտութեան (զի լիուլին չափ գնէր անգամօր անբափութեան) առաջի աՄեծապարգև Աստուծոյն՝ որ լիաձեռն տեսլեամբ առ նոսա, զուարճացեալ ընդ բերկրութիւն նոցին ։ Յայնմ վայրի արտաչնչեալ Ամբրոսեան [47] գիշերոյ ի լեռնին Աստուծոյ՝ յորմէ ելանեն լոյս և ստուեր, պայծառափայլ երեսաքն երկնից փոխեցան յաղօտ լոյս զուարճախառն (զի գիշեր ոչ արհամէն անդ գիւրաքեաւ գքօղ խաւարապղտեաց)· և վարդալից ցօղն հրաւիրեաց ի հանգիստ զարտաւառնոսա ամենեցուն՝ բաց յանքունն՝ աչացն Աստուծոյ ։ Ի լայնածաւալ դաշտի անդ՝ որ ընդարձակագոյն և էր քան զգնտաձև երկիրդ տափարակեալ (զի այսպիսի է արքայարանն Աստուծոյ) սիրեալ անթիւ բազմութեան Հրեշտակաց ի խումբս և ի դասակարգութիւնս՝ հարին զանակս իբրեանց առ գետովքն կենդանութեան ի միջ

անմահական ծառոյ ։ Այլ ահա յանկարծակի ՚ի վեր երևեցան բազմութիւնք լոյժ վըսնոյ , և երկնային տաղաւարաց ։ Յորս և զնջեցին ամենք քին ՚ի սիւդ զովագին հողմոյ , բայ ՚ի նոցանէ՝ որք փոխանակին զքաղցրաձայն օրհնութիւնս զսի- բական աթոռոյն ըստ դասուց իւրեանց յերկայ- նութեան անդ դիշերոյ ։ Այլ ոչ ըստ օրինակի սոցա արթուն կայր Սատանայ (զոր այժմ լայս ա- նուն կոչեմ . զի առաջին անուն նորա ոչ ևս էղև լսելի յերկինս ) ։ Այլ նա մի յերևելեաց անտի՝ թէպետև ոչ առաջին Հրեշտակապետ , առաւե- լեալ ՚ի զօրութեան , ՚ի շնորհս , և յիշխանական պատուի ։ Սակայն և այնպէս լցեալ նորա նախան- ձու հակառակ Արդեոյն Աստուծոյ՝ զոր ՚ի նմին ա- ւուր [48] պատուեալ մեծարեաց Հայրն յաւիտենա- կան , և քարոզեաց ( )ծեալ ալքայ , առ ամբար- տաւանութեան ոչ կամէր տեսանել զերեսս նո- ցա , զի համարէր զանձն նուաստացեալ ։ Զմին իսկ լցեալ անհնարին չարութեամբ և սրտմտութեամբ , ՚ի հասանել անդ հասարակ դիշերոյ ՚ի վերայ խա- ւարային ժամու՝ որ ցանկալին է քնոյ և լռութեան, կամեցաւ մեկնիլ անտի ընդ լեգէոնս իւր , թո- ղեալ արշամարշանաւք զաթոռն վերին , և լքեալ զպաշտօն նորա և զհպատակութիւն ։ Այ- սոր որոյ և զարթուցեալ զերկրորդ իւր յիշխանութեան՝ խօսեցաւ ընդ նմա լռելեայն՝ օրինակ զայս ։

Զնջեա արդեօք ընկերդ սիրելի , և մինակ հնար եցեր քնոյ կատարեալ զարտաքանչնոյդ ։ Զնջեա զքեզ՝ զոր յերեկեան աւուր ետուն շրթունք Աստենակալին ։ Սովորութիւն էր մեր հաղորդել միաբանից զխորհուրդս . յարթնութեան անդ միա-

բան էաք ընդ միմեանս , և զնաւրդ լեցուք անմիա-
բան ի քուն ։ Այսաբէն լուար զնոր օրէնս եդեալ
ի վերայ մեր ի նմանէ՝ որ Թագաւորէն . սակայն
մնրթի է ծնանել և ի մեզ նոր խորհրդոց և քնու-
Թեան , Թէ զինչ խնԹալն երայց մնրթի է յառաջ
գալ յօրինաց անտի ։ Լեալ էին ասել աստանօր՝
ոչ է աներևոյթ ։ Այդ՝ ժողովեա՛ ի բիւրաւո-
րացդ՝ որոց եմք հրամանատար , զգօրագլուխս . և
ասա՛ նոցա , Թէ ես , և որք միանգամ ամբառնան
զգրօշակ իւրեանց ընդ ինև , պարտիմք փուԹալ
սրաԹուիչ ընԹացիւք ի կողմն հիւսիսոյ [49] ուր ու-
նիմք զգօրանիստ մեր , ի հանդերձանս կարևոր
պատրաստուԹեան առ ընդունելոյ զարքայն մեծ
զ()ծեալ՝ որ ընդ հուսկ անցանելոց է փառօք ընդ
համօրէն Ս.ահանայապետուԹիւնս , և ունի տալ
մեզ անդանօր զնոր օրէնս և զվերամնաս ։

Ո՞չայս օրինակ խօսեցաւ Հրեշտակապետն սը-
տասց . և եհեղ զհոգանս չարուԹեան իւրոյ ի
սիրտս իւրոյ ընկերաց ։ Ասէ երկրորդ նորա կո-
չեաց զամենեսին ի միասին , և զբազում ի զօ-
րապետաց անտի ընդ իւրով իշխանուԹեամբ՝ ա-
ռանձինն . և որպէս ուսաւ , ծանոյց նոցա՝ Թէ գե-
րագոյն Իշխանապետ իւրեանց արդ իսկ՝ մինչև և
մեզն գիշերոյ ի բաց բարձեալ յերեսաց երկնից
զպատրուականն , հանդերձեալ և յառաջ խաղա-
ցուցանել զգրօշակ իւր Ս.ահանայապետական ։
Ընդոյց նոցա և զպատճառն՝ զոր Թելադրեալ էր
նմա իշխանապետին . և յաւել՝ի նոյն գերկդիմի
բանս նախանձու՝ ի փորձ կամ յապականուԹիւն
անարատ մտաց նոցա ։ Սակայն ամենեքին ըստ սո-
վորուԹեան իւրեանց անյապաղ հնազանդեցան

ակնարկութեան և հրամանաց պերազոյն իշխանի իբրեանց, զի արդարև մեծ էր անուն նորա, և բարձր աստիճան իշխանութեան նորա յերկինս։ Որոյ և երեսք նման աստեղն առաւօտու՝ [50] որ հռովէ խաչանցն աստեղաց [51], հրապուրեաց զնոսա, և տուեալ իւրով ձգեաց զկնի իւր զերկրորդ մասն զօրացն երկնից [52]։ Յայնմ պահու Լուկիս յայ՝ իսենական՝ որ նշմարեալ տեսանէ և զդալանիս խորհրդոց, ՚ի միջոյ անտի ոսկի զամպարայ՝ որք վառեալ բորբոքին յանդիման նորա ՚ի պիշերի, եաես և առանց իսկ լուսոյ նոցա զապստամբութիւնն յարուցեալ։ Այս թէ՞ էր գլուխ նորին, պիտոյ սիռեալ յորդիսն առաւօտու, և քանի՞ էն բազմութիւնք միաբանելոց ընդ նմա հակառակ իւրումն վճռոյ։ Այս ծիծաղեալ ընդ այն՝ զայս օրինակ խօսեցաւ ընդ Որդին իւր միածին։

Որդի իմ՝ յորում տեսանեմ զիտառս իմ անթերի լուսափայլութեամբ, և ժառանգդ հաճոյն զօրութեանց իմոց՝ ժամ է մեզ արդ անել և կացուցանել զիշխանութիւն մեր աներկակալ, և յուցանել զհանդէս զինուցն՝ որովք արժան է մեզ պաշտպան կալ իրաւանց Աստուածութեան և ինքնակալութեան մերոյ ՚ի յաւիտենից։ Ծնեալ նաժի յարուցեալ է ՚ի միջի, և խնդրէ յընդարձակատարը սահմանի անդ հիւսիսոյ կանգնել զաթոռ իւր զուգահաւասար մերումն։ Այս ոչ շատացեալ սուին՝ եդեալ է ՚ի մէն զիտրձ առնուլ ՚ի մարտի մերումն զօրութեան և իշխանութեան։

Որում քաղցրահայեաց և պայծառատեսիլ դէմք, և աստուածային անձառելի փայլմամբ արար պատասխանի Որդին։ Հայր ամենազօր՝ իրաւամբ

առ ոչինչ զրեա զՔնչամիս քո, և անվհատ ծաղը առնեա զնոտի խորհրդովք և զխոստովանութեամբ նոցա ։ Քնչամութիւն նոցա առաւել ևս շքեղաց ցուցեալ զփառս իմ, ՚ի տեսանել նոցա տուեալ ինձ զամենայն արքայական իշխանութիւն առ ՚ի խոնարհեցուցանել զամբարտաւանութիւն նոցա, և ցուցանել արդեամբք, թէ արդեօք ձեռնհա՞ս իցեմ ՚ի նուաձել զապստամբս քո յերկինս, եթէ տիա՛ բացեալ առաջի նոցա ։

Ո՛չ այսօրինակ խօսեցաւ Որդին. բայց Աստա՛ նայ կարի ինչ յառաջ խաղացեալ էր ՚ի հպարձակ Թուիչս հանդերձ զօրօքն իւրովք ։ Որք և բազմաթիւ էին երբև զաստեղս դիշերոյ. և կամ երբև զաստեղս առաւօտու, զչնթա ասեմ ցօղոյ՝ զորս արեգակն մարգարտաշար տողէ ՚ի վերայ տերևոց և ծաղկանց ։ Ո՛նգին նորա ընդ սահմանս ահեղ իշխանութեան Աերովբէից, Տէրութեանց և Ո՛թոռոց՝ ընդ երրակի դասակարգութիւնս նոցա. ընդ սահմանս՝ առ որովք Ո՛դամ համօրէն տէրութիւն քո ոչ է առաւել քան զպատեղդ հաստատեալ ընդ ամենայն երկրի և ծովու տարածելոց յերկայնութիւն և ՚ի լայնութիւն ՚ի գլխատական ձևոյ անտի ։ Ո՛ւ այնպէս ապա հասին ՚ի կողմն հիւսիսոյ ։ Որդանօր Աստանայ բազմեցաւ յաթոռ իւր արքայական ՚ի վերայ լերինն բարձու՝ որ լուսանշոյլ փայլէր ՚ի բացուստ երգամբք և աշտարակօք գոգցես հատելովք ՚ի մեռալոյ անտի ադամանդի, և ՚ի քարաժայռից ոսկւոյ ։ Ո՛ւ էր նա պալատ Ո՛րսեհկին մեծի [53] ։ Յայդ անուն կոչեաւ գլխնուաճդ ՚ի բարբառ մարդկան ։ Ո՛ր զկնի թեկն ածեալ նորա հաւատարութեան ընդ

Աստուածոյ, ՚ի նմանութիւն լերինն՝ յորում քա-
րոզեցաւ Յեսու յանդիման երկնից, կոչեաց նա
Հառն միաբանութեան։ Ոչ ի անդը ժողովեաց
նա զհամբերն պաշտօնեայս իւր ՚ի խորհուրդ ըն-
դունելութեան մեծաշուք գալստեան Քրիստի նո-
ցա։ Այլ և չարարուեստ զրպարտութեամբ խար-
դաւանեալ զՀնմարտութիւնն՝ ձգեաց առ ինքն
զանհնդրութիւն նոցա սովին բանիւք։

Ճշմարտ, պետութիւնք, տէրութիւնք, իշխա-
նութիւնք և Օրհնութիւնք՝ այսպէս տակաւին կա-
յեմ զձեզ, եթէ չքնաղ վերատառութիւնդ ոչ էն
լոկ անուանք. զի ահա այլ ոք արկ վճռաւ զանա-
ձամբ զամենայն իշխանութիւն, և նահատակեալ ըզ-
մեզ ընդ անուամբ արքային Յեսուայ՝ ՚ի նորա տակա
են գիշերախառն ձեպքս, և փութամարիկ հատա-
քումն մեր աստանօր ՚ի խորհուրդ՝ թէ զիարդ մար-
թասցուք պատուասիրաբար ընդունել զնա, որ գայ
ինդրել առ ՚ի մէնք զՀարկ երկրպագութեան՝ցարդ
չե՜ս ընծայեալ նմին [54]։ Այոյն՝ և եթէ շատ խակ
էր մեզ, իսկ զիարդ տարցուք երկոցունցն՝ Հօրն,
և պատկերի նորա Յծելոյ։ Խայտ միթէ չկայ Հնար
քաջ խորհրդոյ ամբաստնալ զմիտս մեր, և ուսու-
ցանել մեզ զընկերուքն ՚ի բաց զլուծ նորա։ Այլ
միթէ կամք իցեն ձեզ արկանել զպարանոցս ձեր
՚ի ներքոյ նորա, և առնուլ յանձն զնուաստու-
թիւն երկրպագութեանդ։ Այ՛ արդարև, եթէ
ես քաջ Հանապետ զձեզ, և դուք քաջ Հանապէտք
զանձինս ձեր որդիս և բնակիչս երկնից՝ զոր յարդ
ոչ ոք անձին գրաւեայ։ Այլ թէպէտ ոչ էք առե-
ներին զուգահաւասար, այլ ազատ էք միօրինակ.
զի դասակարգութիւնք և աստիճանք ոչ էն Հա-

կառակ աղատութեան, այլ քաջ միաբանին ընդ նմա ։ Արդ՝ ոմն հնար է վարել զիշապետական իշխանութիւն ի վերայ նոցա, որք հաւասար են նմին նովին իրաւամբք, և թէպէտ նուաղեալք ի զօրութեան անդ և ի պայծառութեան փառաց, այլ զուգահաւասարք յազատութեան ։ Եւ ոմն ումեք հնար է հրամանն տալ մեզ կամ օրէնադիր լինել՝ որք առանց իսկ օրինաց երբեք ոչ յանցանեմք ։ Այս առաւել տիրապետել ի վերայ մեր, և խնդրել զերկրպագութիւն առ ի մէնջ, առ ոչինչ գրեալ զվերատառութիւնքս ազատութեան՝ որք քաջ ցուցանեն զվիճակ մեր կարգեալ յիշխանութիւն, և ոչ ի ծառայութիւն [55] ։

Յայս վայր յանդգնութիւն բանից նորա կալաւ ընդ երկար զուսնդրութիւն նոցա առանց լուր հաւ կառակութեան. մինչև ի միջոց անտի Աերովբէից յարեաւ Արդիւ՝ որ էր յաւագ լին նախանձայոյզ երկրպագու Աստուածութեանն, և ունկնդիր հրամանաց նորա ։ Ար և ի բոց հրոյ անաչառ նախանձու իւրոյ զգեմ կալաւ զհոսանաց մոլեգնութեան նորա՝ օրինակ զայս ։

Ո՛վ ամպարշտութեան, ատութեան և ամբարտաւանութեան բանիցդ ։ Ո՞ այդոսիկ ոչ ակն ունէին ականջք մեր լսել յերկինս, և առաւել ի քէն ապաշնարհ դու՝ որ յայնչափ բարձրութիւն ամբարձեալ կաս զեր ի վերոյ քան զընկերս քո ։ Եւ արդ միթէ հնար էր քեզ անօրէն զրպարտութեամբդ դատապարտ առնել զարդարութիւն վճռոյն Աստուծոյ՝ որ երդմամբ ծանոյց, թէ Արդ-ւոյ նորա միածնի՝ որ իրաւամբք կրկ զգաւազանն արքայական, պարտի կրկնիլ ամենայն ծունր երկ

նաւորաց, և ամենայն հոգի ըստ արժանեաց պատ-
ուոյ նորա խոստովան լինել զնա արժանաժառանգ
արքայ։ Այսպէս անիրաւ լինել զկապելն ընդ օրի-
նօք զաղատան, և զթողուլն հաւատարի թագաւո-
րել՝ի վերայ ընկերի իւրոյ, միւսն՝ի վերայ ա-
մենեցուն մշտաւոր իշխանութեամբ։ Այնմ օ-
րինադիր լինիցիս դու Աստուծոյ, և միմիայն՝ի նմա
դիր մտանիցես՝ի սակս ազատութեան ընդ նմա՝
որ արար զքեզ որ ինչ եղէ, և կարգեաց զգօրու-
թիւնս երկնից ըստ կամաց իւրոց, և սահման եդ
գոյութեան նոցա։ Այլ մեք՝ի փորձոյ վիճակիս
զբարութիւն նորա, և զարարչական խնամին՝ի
վերայ մեր. և զի՝ հեռի գոլով նորա՝ի խորհրդոյ
անտի նուաստացուցանելոյ զմեզ՝ յաւէտ լինի ձգի
՝ի բարձրացուցանել զվիճակ մերում երանու-
թեան, քանզ միաբանեալ զմեզ ընդ միով զկնով։
Այլ ընդհակառակ ևս քեզ, թէ անիրաւ իցէ ինքնա-
կալութիւնն՝ի վերայ հաւասար ընկերին, սակայն
դու՝ թէպէտև մեծասպատիս ես և փառաւոր, հա-
մարիցիս զանձն քո, կամ զհամօրէն հրեշտակային
բնութիւնն միանգամայն հաւասար նմին, Աղե-
տոյն միածնի՝ որով Հայրն ամենակալ իբրև բա-
նիւ իւրով արար զամենայն արարածս, և զքեզ
ևս. և զհամօրէն հոգիս երկնաւորաց կարգեաց
՝ի լուսափայլ աստիճանս՝ պահակեալ զնոսա փա-
ռօք։ Այլ՝ի պարծանս նոցին կոչեաց զնոսա Աթ-
ոռս, Իշխանութիւնս, Տէրութիւնս, Պետու-
թիւնս, և Օրութիւնս։ Զոր ոչ են նախմայեալք
յերեսաց թագաւորութեան նորա, այլ առաւել
ևս պայծառացեալք։ Օ՛ գոլով նորա զլուս,
՝ի մերում համարի դ։ Զինք նորա՝ օրինք մեր

ԷՆ, և ամենայն պատիւ ընծայեալ նմին՝ առ մեզ դառնայ։ Ա՛րդ՝ կարկեայց ի մելեկնութենէ առ բարշտութեանդ, և մի պատրեր զդօսա. այլ փութա՛ զիջուցանել զՀայրն բորբոքեալ, և զԱրդին սրտմտեալ՝ մինչդեռ մարթ ես քեզ գտանել զթողութիւն խնդրեալ՝ ի ժամու։

Օ՜ այսօրինակ խօսեցաւ Հրեշտակն եռանդնալից. բայց ոչ ոք գնաց զկնի նախանձու նորա, զի համարեցան զայն տարադէպ, ինքնակամ և յանդուգն։ Ա՛նդ որ զուարճացեալ Պատարիկին, և առաւել ևս յեցեալ յամբարտաւանութիւն իւր՝ ետ նմա պատասխանի օրինակ զայս։

Ա՛պա ըստ քումդ բանի ստեղծական եմք մեք, և արարածք երկրորդ ձեռաց՝ ըստ հրամանատարութեան Հօր առ Արդի։ Ա՛յլ անհեթեթ և անլուր բանիցդ։ Ա՛յլ մեք կամիմք գիտել, թէ ուա՞ր արդեօք ուսար զվարդապետութիւնդ։ Ո՞ետես զարարչութիւնդ զայդ։ Արիթէ յիշե՞ս դու զքոյդ՝ ի տալ քեզ Ա՛ստուծոյ զգոյութիւն։ Ա՛յլ ոչ գիտեմք զժամանակ՝ յորում ոչ էաք որպէս այժմ. և յառաջ քան զմեզ ոչ ոք գիտաց զայն։ Ինքնաճիճ եմք և ինքնայարոյցք մերովս կենդանական զօրութեամբ. և ի կատարել Ձակատագրին զընթացս իւրումն շրջանի՝ հասանեցեալ սեպհական ծնունդք երկնից, և եթերական որդիք [56]։ Ա՛յլ և զօրութիւն անձանց մերոց. և քաջուկ մեր ուսուցիկ մեզ ի հանդիսի ձանաչել՝ թէ ո՞ և հաւասար մեզ։ Յայնժամ ծանիցես, թէ արդեօք մնատ չիմք խնարհութեամբ յերկրպագութիւն նմին, և պատ առնումք զաւետաւոր աթոռով նորա ի պատանս, եթէ ի պաշարումն։ Օ՜ այդ բան, և

զայդոսիկ պատգամն տալը արդ առ Աբբայդ Օ-
ծեալ. և մեկնեաց ասել, մինչեւ էին կալեալ չա-
բեաց զփախուստ քո։

Այս ասաց նա. և անթիւ բազմութիւն զո-
բաց նորա՝ի կերկերաձայն աղաղակ իւրեանց եբրև
՝ի կարկաջիւն անդնդահոսան ջուրց եւտուն արձա-
գանգս հաճութեան ընդ բանս նորա։ Եւ ի-
րովքեզն վառեալ ոչինչ վհատեալ յայն սակ՝ թէ-
պէտեւ առանձինն շրջապատեալ կայր ՝ի թշնա-
մեաց անտի, համարձակագոյն եւս արար նմա պա-
տասխանի օրինակ զայս։

Ո՞վ օտարացեալդ Աստուծոյ, հոգիդ անիծեալ
և լքեալ յամենայն բարեաց։ Տեսանեմ հաւաս-
տեաւ զկործանումն քո, և զչուառականն զրկդ
Թաթաւեալ յորոգայթ անապօրէն՝ ՝ի ձարակել
անդ ժանտաբեր ախտի յանցանաց քոց և պատու-
հասի։ Եւ՝ մի՛ եւս տագնապիր ՝ի խորհուրդս քո
մերժել ՝ի բաց զլուծ Օծելոյն Աստուծոյ. զի ոչ
եւս տայլին քեզ քաղցրագոյն օրինքք ընդդէմ նո-
ցա, այլ ելցէ դատաւճիռք անհրաժեշտ։ Վաւա-
ղանն ոսկի՝ զոր մերժեցեր, դատաւորդ երկաթի՝ ի
ջաղխել և ՝ի խորտակել զանապատութիւն քո։
Կարիւք ազգեցեր լինէ հեռանալ աստի. այլ եւս
ոչ ՝ի տակս խրատուց քոց կամ ապառնալեաց մեր
նիմ՝ ՝ի բաց. միայն խոյս տամ յանիծեալ վրա-
նացդ չարութեան, զուցէ յանկարծահաս սրա-
մտութիւնն բորբոքեալ յանակնկալ բոց՝ և չիս
ինչ ոչ ինայեսցէ։ Օ՛ի ընդհատ ինայ քեզ գիտէ
առնուլ շանթի նորա զծախիչ հրոյն ՝ի վերայ
քումդ գլխոյ։ Յայնժամ արտասուօք ծանիցես
զԱարիէն քո, տեսեալ զնա ձեռնհաս ՝ի դար-

ձուցանել զքեզ յոչինչ և յապականութիւն կե-
նաց ։

Ո՞յսօրինակ խօսեցաւ Աերովբէն Աքդիել·
նա միայն գտեալ հաւատարիմ՝ ի մէջ անհաւա-
տից [57] ։ Յայնչափ բազմութեան անդ ստոց կա-
լաւ նա անյողդողդ, անսասան, անպատիր և ան-
վհեր զհաւատարմութիւն իւր, զսէր իւր և զնա-
խանձ։ Ո՛չ թիւ բազմութեանն, և ո՛չ օրինակ նո-
ցին ազդեցին ինչ՝ ի սիրտ նորա խոտորել՝ ի չըշ-
մարտութենէ անտի, կամ փոխել զհաստատուն
միտս իւր, թէպէտ եր միայնակ ։ Այնց նա ընդ
մէջ նախատանաց թշնամեաց, զոր և տարաբա-
ջաբար՝ ոչինչ երկուցեալ՝ ի բռնութենէ նոցա ։
Այլ շրջեալ զնախատինսն առ նոսա, և դարձու-
ցեալ զթիկունս իւր՝ խոյս ետ յաշտարակացն ամ-
բարտաւանութեան, որք դատակնքեալ կային յա-
րագ արագ կորնչանումն [58] ։

# ԳՐՔԱԽՏ ԿՈՐՈՒՍԵՑԻ

ԳԻՐՔ· Ջ·

# Ն ԱԽ ԱԴՐՈՒԹԻՒՆ

Յառաջ մատուցեալ Ռոփսիէլի ի բանս՝ պատմէ, թէ զի-
արդ առաքեցան Մ՚ելքայէլ և Գաբրիէլ ի պատերազմ ընդ-
դէմ Սատանայի և հրեշտակաց նորա: Նկարագրութիւն
առաջին ճակատամարտի նոցա: Սատանայ և համօրէն զօրք
նորա տեղի տան զնաւարար գիշերոյ: Կոչէ զնոսա ի խոր-
հուրդ. և գտանէ հնարիւք զդիւականն մանգլիոնն՝ որք ի
մարտի աւուրն երկրորդի տագնապեցուցանէն զՄ՚ելքայէլ և
զհրեշտակս նորա. բայց նոցա խլեալ զլերինս՝ նկուն առնէն
զզօրութիւն և զմինչեւնայս Սատանայէ: Սակայն յոչ հան-
դարեալ խռովութեանն՝ առաքէ Աստուած զՄրգի իւր զՕ-
ծեալ՝ որում պահեալ էր զպարծանս յաղթութեան: Եկեալ
նորա զօրութեամբ Հօր իւրոյ ի տեղի ճակատուն՝ կարգէ
յաջմէ և յահեկէ զդունդս իւր. և մտեալ կառոք և որոտ-
մամբ ի մէջ թշնամեաց՝ վանէ զնոսա սաստկութեամբ մին-
չև ի պարիսպն երկնից՝ որ բանայ ինքնին: Դահավէժ թո-
թափին նոքա յանդունդս ի պատրաստեալ տեղի պատուհաս-
սի իւրեանց, Դառնայ Օծեալն յաղթանակաւ առ Հայր:

# ԴՐԱԽՏ ԿՈՐՈՒԱԾԱԼ

ԳԻՐՔ· Զ·

Երեշտակն անվհեր չունելով զոք հետամուտ գինի՝ կալաւ զհանապարհ իւր զգիշերն ողջոյն ընդ լայնածաւալ դաշտն երկնից· մինչև զարթուցեալ Ադաւօտու՝ ի ղրջապատեալ Յամուց՝ եբաց վար դակարմիր ձեռամբն զդրունս լուսոյ· Ի լերինն անդ Աստուծոյ կայ քարանձաւ առընթեր աթոռոյ նորա, յորում մշտնջենաւոր ղրջանաւ օթևագայեալ լուսոյ և խաւարի՝ տեղի տան միմեանց· Ընդ մի դուռն ելանէ արտաքս լոյն, և ընդ միւսն մտանէ՝ ի ներքս խաւարն դիւրանասց՝ մինչև ցժամ քօղարկելոյ նորա զերկինս· Թէպէտև մարթ է խաւարի անդամոյ՝ հանեմատիլ ընդ արշալուսի աստանօր· Ընդ՝ ծագեաց առաւօտն ըստ սովորութեան իւրում՝ ի բարձրութեան անդ երկնից, սկսնագգեստեալ յոսկի հրափայլ· Ել մերժեցաւ գիշերն յերեսաց նորա յարձակել նորա զարևելեան ձառագայթս իւր· Յայնմ վայրկ տեսին աչք Ադիկելի զառաջինն, զի գաշտավայրն համօրէն ծածկեալ կայր խիտառխիտ ձակատուք

պայծառափայլ գնդից, բոցաձաձանչ կառօք և
զինուք, և հրեղէն փայլակնացայտ երիվարօք։
Այն որոյ և անդէն ծանեաւ զնշանն մեծապատ
մարտի, և ատուգեաց զոր լուեալ էր ի համբա
ւոյ։ Խառնեցաւ յայնժամ ուրախութեամբ ընդ
մեերիմ զօրութիւնն։ Ողք և ընկալան զնա խրն
դագին և ի բարբառ ցնծութեան՝ երբև զմի ոք,
որ դարձեալ էր անկորուստ յայնչափ բազմութեա
նէ բիւրաւորացն կործանելոց։ Այս տարեալ զնա
պարծանօք ի լեառնն սուրբ՝ կացուցին առաջի
աթոռոյ վերնոյն։ Յորմէ ընդ ամեն ոսկեղէն ձայն
եղև լսելի՝ օրինակ զայս։

Ծառայդ Աստուծոյ Հաւատարիմ՝ բարւոք պա
տերազմեցար զպատերազմին, զի դու միայն պաշտ
պան կացեր Աշմարտութեանն դատի ընդդէմ
ապստամբացն բազմութեան. և գտար անպարտ
տելի՝ յաւէտ ի բանս, քան ի զէնս։ Այս ի վկայ
ութիւն նորին Աշմարտութեան տարար նախատա
նաց յամենեցունց՝ որ անտանելի ևս է քան զբո
նութիւն. զի եդեալ էր քո ի մահ՝ ընտիր գոտ
նիլ միայն առաջի Աստուծոյ, Թէ և ամենեքեան
համարեցան զքեզ յետսամիտ և անհաւան։ Ապրդ՝
դիւրագոյն ևս ինայ քեզ յաղթութիւն։ Ապա
ցեալ զինուորացդ բարեկամաց՝ ունիս խաղալ
անդրէն ի վերայ թշնամեաց քոց յաւէտ պանծա
նօք, քան ի դառնալ քումմէ յետս ի նոցանէ ար
համարհանօք. և բռնի նուաճել զնոսա՝ որք չառ
նուն յանձն ընդունել յօրէնս զբանն ուղիղ, և
զՕծեալն յորքայ իւրեանց՝ որ իրաւամբք Թա
գաւորէ ըստ արժանեաց։ Ակնքայել՝ իշխանդ երկ
նային զօրաց, և դու Պաւրհել՝ երկրորդ ըստ նմա

նէ ՚ի զինուորութեան կարգի, երթայիք առաջնորդեցէք ՚ի պատերազմ իմոց անպարտելի որդւոց, և սպառազէն սրբոց՝ ձակատեալ զնոսա ՚ի մարտ հազարս հազարաց ըստ Թուոյ անաստուածս խոժռանի ապստամբացդ։ Վասնեցէք ՚ի վերայ նոցա աներկիւղ ՚ի հուր և ՚ի զէն. և մնեալ զհետ միոյ եւ ՚ի սահմանս երկնից՝ ընկեցէք զնոսա գահավիժ յերեսացն Աստուծոյ, և յերանութենէ յանդունդս տարտարոսի՝ ՚ի պատրաստեալ տեղի պատուհասի նոցա. որ այժմէն բացեալ լայնարձակ զվիհ իւր հրեղէն՝ սպասեալ միայ ընդունել զկոծանումն նոցին։

Ո՚այսօրինակ բարբառեցաւ ձայնն տիրական. և ամպք սկսան մթացուցանել զլեառնն ողջոյն. և ծուխն գալարեր ՚ի թխպագին ոլորտս, և ՚ի բոց ակամայ՝ ՚ի նշան բարկութեանն բորբոքելոյ։ Այլ յահարկութիւն ոչ սակաւ սկսաւ ևս գոչել ՚ի բարձանց բարձրաբարբառ փոսն եթերական։ ՚Ի ձայն գոչման նորա զինուորութիւնքն Հրեշտակաց՝ որք կալեալ ունէին զսահմանս երկնից, համահաւաքեալ ՚ի բանակ հզօր և անվանելի, խաղացուցին յուշիկ ոչ՚ջնաղ լեգէոնս իւրեանց ՚ի հնչուն երաժշտական նուագաց՝ որ ազդէր ՚ի նոսա զգիւցազնական եռանդն դիմագրաւ մրցանակ ընդաստուածանման զօրապետաց իւրեանց ՚ի դատ անդ Աստուծոյ, և ()ծելոյ նորա։ Վնասկին յաւրաջ պնդակազմք։ Ո՚չ ելք լերին ընդառաջ, ո՚չ անձկութիւն հովտի, ո՚չ անտառ, և ո՚չ գետ՝ անջատեալ ցրուիչն զվայելուչ կարգ դասաւորութեան նոցա. զի չու նոցա էր ՚ի վերոյ քան զերկիր. և օդն ստորանիւեալ ամբառնայր ՚ի վեր զթե-

Թևաքայլ ընթացս ոտից նոցա : Օ որ օրինակ՝
յորժամ համօրէն ազգք թռչնոց կոչեցեալք ՚ի
քէն՝ եկին կարգաւ ՚ի Թռչից խրեհանց , և կացին
՚ի վերայ Ադեմայ՝ առ ընդունելոյ ՚ի քէն զան-
ուանս խրեհանց, նոյնպէս խաղային նոքա ընդ սահ-
մանս երկնից , ընդ լայնածաւալ գաւառս՝ տանն
պատիկ առաւել քան զընդարձակութիւն երկրիս :
Աշմարէեղին ասպ ՚ի հեռաստանէ առ հորիզոնաւ
՚ի կողման անդ հիւսիսոյ զգաւառն հրեղէն՝ որ
ողջոյն տարածեալ կայր ՚ի հանդէս մարտի : Այս
՚ի մերձենալ խրեհանց տեսին՝ զի էր նա անտառա-
ցեալ յոգնախուռն բազմութեամբ արձանացեալ
բնից ստուար նիզակաց , անթիւ սաղաւարտաց ,
և անհամար ասպարաց՝ որք նկարագիրս ունէին
զնոտիսպանած նշանակս : Այս կրկին զնոսա հա-
մախմբեալ զօրութիւնքն Սատանայի՝ զիմագրաւ
շահատակեալք յաւուրդ յոն : Օ՚ի եդեալ էր
նոցա ՚ի մտի գրաւել ՚ի նմին իսկ աւուր մարտիս
կամ յարձակմամբ զքեառն Աստուծոյ , և նատու-
ցանել յաթոռ նորա զնախանձաւորն Իշխանու-
թեան նորա՝ զԼորոխտ ախոյեանն : Այլ խորհուրդ
նոցա անգէն ՚ի կէս ձանապարհին գտաւ խօլական
և մտոտի : Այս թէպէտ զառաջինն Թռչեցաւ մեղ
օտարոտի իմն մարտադրութիւն հրեշտակաց ընդ
միմեանս , և պատահումն նոցա միմեանց ահեղ պա-
տերազմաւ ( որոց սովորութիւն էր միշտ գտանել
զմիմեանս ՚ի ածանս ուրախութեան և միաբան սի-
րոյ , և յօրհնութիւնս անդ Յաւիտենականին՝
որում փառք միայ Հոր գերագունի ) սակայն շը-
ւրդիս միոյ ժամու արդէն իսկ սկսեալ էր , և աղա-
ղակն դիմագրաւ յարձակման խաժանեալ զամե-

նայն խաղաղասէր խորհուրդս : Աչքարձեալ ասա-
տամբին՝ ի մէջ նոցա իբրև զմի Աստուածոց՝ կայր
բազմեալ յարեգակնափայլ կառս իւր , զոգեաս
նմանութիւն ինն մեծավայելչութեանն Աստուծոյ .
և էր պարտ առեալ շուրջանակի ՚ի բոցանշոյլ Ար-
րովքէից , և յոսկիաձոյլ վահանաց : Այլ ասա ՚ի
շքեղապանծ աթոռոյ անտի իւրմէ . զի ՚ի մերձե-
նալ երկոցունց զօրաց առ միմեանս՝ անձկագոյն
ևեթ մնացեալ էր անջրպետութիւն ՚ի միջի , ան-
ջրպետութիւն ահագին . և երկոքին ձակատքն ար-
ձանացեալ կային հանդէպ միմեանց յահեղ և
յերկայնաձիգ դասաւորութիւն : Այնչափ էր սկս-
եալ մարտի , յառաջ մատուցեալ Սատանայի ՚ի
մեծաքայլ և ՚ի գոռոզաձեմ ընթացս՝ եկաց ՚ի
ձակատու անդ առաջի ամպամանն յառաջապա-
հացն իբրև զաշտարակ զինեալ յադամանդ և
յոսկի : Ընդ տեսիլ նորա ոչ հանդուրժեաց Ա-
ղիհէլ՝ որ կայր ՚ի մէջ հզօրագունիցն քաջաց պատ-
րաստեալ ՚ի հանդէս արիական մրցանաց . վասն
որոյ և զայսօրինակ հանդէս արար նա յառաջա-
գոյն իւրումն անվեհեր սրտի :

Ո՛վ երկինք՝ միթէ մա՞րթ եղեւ այսպիսի նմա-
նութեան Խարձրելոյ մեծաւ տակաւին ՚ի նմա՝ յոր-
մէ օտարացեալ են հաւատք և միամտութիւն :
Ընդէ՞ր զօրութիւն և քաջութիւն ոչ տկարասցի
՚ի նմա՝ յորում կործանեալ է առաքինութիւն :
Այս ընդէր ոչ նկուն լինի խրոխտապանծն յան-
չափս՝ թէպէտև տեսլեամբ երևեսցի անպարտե-
լի : Կամիմ ապաւինեալ ՚ի զօրութիւն Ա՛ննա-
կալին՝ զիտոյ առնուլ քաջութեան նորա , զորոյ
ղեւանն փորձեցի յառաջագոյն , և գտի ապակա-

նեալ և սուտ ։ Կարի իրաւունք են յաղթականին
՝ի բանս ձշմարտութեան՝ յաղթել և ՝ի գլխս , և
յերկոսին միօրինակ հանդիսանալ անպարտելի ։
Այլ թէպէտ անիրաւ լինի և կարի շամբուշ հա-
կառակութիւն զօրութեան ընդ բանի , սակայն
յաղթութիւն բանին իրաւացի է յոյժ ։

Այսպէս օրինակ կշռեալ նորա ՝ի միտս իւր , և
յառաջ խաղացեալ ՝ի միջոց սպառազէնն ընդհե-
րայն ընդդէմ խրոխտապանծ Թշնամոյն՝ եպիտ
գնա ՝ի կէս ճանապարհին կարի լինն սրտմտեալ
ընդ կանխել նորա յառաջագոյն ։ Այլ նա ան-
վեհել սրտիւ հրաւիրեաց գնա ՝ի մարտ՝ սովին
բանիւ ։

Ո՛վ ամբարտաւան՝ իշխեա դեռևս ելանել լինձ
ընդառաջ ։ Յուսացեալ եր զո առանց լինչ ընդ-
դիմութեան հասանել ՝ի բարձրութիւն քումդ
ցանկութեան, յաթոռն ասեմ Աստուծոյ գտեալ
առանց պահպանութեան . և հուպ մատչել առ
նա՝ որպէս թէ լիներ թողեալ յահ և յերկիւղ
յերեսաց քումդ զօրութեան կամ ժպիրհ լեզուի ։
Ո՛վ անմիտ, ընդէր ոչ ածես զմտաս, թէ քանի՛
մեծ է յառնել գինուք ընդդէմ Միհնակալի՝
որ կարողն է և ՝ի ակարագունիցն յարուցանել
միշտ զանչափ բազմութիւն զօրաց ՝ի կորուսանել
զանմտութիւն քո ։ Այլ կամ ինքնին հասեալ անդր
քան զսահմանս՝ ՝ի մի ևեթ հարուած սատակել
զքեզ առանց ուրուք օգնականի , և զլեգէոնաց
ծածկել ընդ անդնդային խաւարաւ ։ Այլ դու
տեսեր, զի ոչ ամենեքեան գտան ՝ի խուժանի քումմ՝
առաւել ընտրեալ ոմանց զհատատ և զքաջարեալ
տութիւն իւրեանց առ Աստուած ։ Սակայն ան-

տես եղեն նոքա ի քէն· զի զնս միայն համարեցար ի մեզ ամբոխիդ օտարանալ յամենեցունց։ Տե- սեր դու զանձատումն իմ ի քէն, արդ՝ գոնեա անագան գիտասջիր, թէ զնարդ երբեմն հնար է սակաւուց ի միտ առնուլ զմեղրութիւն հազա- րաւորաց։

Որում ահագնատեսիլ թէնամին ետ պատաս- խանի՝ ակնարկեալ ի նա արհամարհանօք ։ Ի- նչաս չարութեան անձինդ՝ բայց ի դէպ ժամու իմումս վրէժխնդրութեան խնդրեալ զառաջինն, դարձար անդրէն ի փախստենդ՝ Հրեշտակդ խռովարար, ընդունել զարժանիդ հատուցումն՝ զնախկին փորձ զաջոյ ձեռինս զպրացելոյ· զի այդ լեզու հակառակաշունչ իշխեաց զառաջինն ընդ- դէմ կալ երրորդ մասին Աստուածոյն՝ որք ժողո- վեալ էին ի խնդիր աստուածական զօրութեան իւրեանց· քանզի չէր հնար նոցա ի զգալ անդ յանձինս զայսպիսի զօրութիւն՝ ընծայել ումեք զամենազօրն ։ Այլ դու բարւոք արարեր, զի յա- ռաջագոյն եկիր քան զընկերս քո՝ ցանկացեալ հանել ի գլխոյս զցցունս իւր· զի կորուստ քո քա- րոզ լիցի սատակմանն այլոց ։ Այլ թողում զքեզ առ վայր մի (առանց պատասխանւոյ, զի մի պար- ծիցես) առ ի գիտել, թէ ես եղեալ էի ի մոխ զառաջինն, եթէ ազատութիւն և երկինք նոյն են առաջի երկնաւորաց, սակայն այժմ տեսանեմ զբազումս ի նոցանէ ընտրել յաւէտ զգերութիւն առ վատութեան իւրեանց ։ Ամբ են հոգիք սպա- սաւորութեան քաջակիրթք ի հանդէս տօնի և յերգս ։ Ո՞յսպիսի երկնային երգեցիկս վառե- ցեր դու ի զէն՝ ի խնդիր ծառայութեան կիսոյ ընդ

աղատութեան : Օ՛ր և հանդերձեալ է յուցանել փորձն այսօր՝ համեմատեալ զպօծս երկոյսունց կողմանացս ընդ միմեանս :

Որում Աբդիել ետ պատասխանի՝ ի կարձոյ և ահագին դիմօք : Ո՛վ ապստամբ՝ տակաւին մնալոցեալ կաս , և հեռի՝ ի շաւղայ ճշմարտութեան . և ոչ կամիս գտանել զվախճան մնալոցութեանդ : Յանուն զերութեան յանիրաւի կամակորես զծառայելն նմա՝ զոր կարգեալ է Աստուծոյ և բնութեան . զի երկոքին ևս զնոյն հրամայեն , յորժամ նա՝ որ իշխէն , է յաւէտ արժանաւոր , և զեր՝ ի վերոյ քան զիշխեցեալն : Աչն խակ է զերութիւն՝ ծառայել անմտի , կամ ապստամբելոյն յարժանաւորէ քան զինքն : Որպէս արդ քոյինքդ ծառայեն քեզ , ոչ ազատիդ՝ այլ զերւոյդ քումդ անձին : Սակայն և այնպէս յանդուգն ժպրհիս մեզադիր լինել մերում սպառաւորութեան : Կա՛մ դու՝ ի գժոխս զքոյդ թագաւորութիւն , և թո՛ղ ինձ յերկինս զծառայութիւնն Աստուծոյ օրհնելոյն՝ ի յաւիտեան . և զհնազանդութիւն հրամայեսցէ նորա՝ որք են կարի արժանաւորք : Սակայն դու՝ ի գժոխս անդ անկանելոյ ծնա չղթայից , և ոչ թագաւորութեան : Խակ այժմ ընկալ՝ ի դարձելոյս անդրէն՝ ի փախստեան՝ որպէս ասացեր յառաջագոյն , զոյս հարուած ողջունի՝ ի վերայ գալոցդ :

Օ՛յս ասացեալ՝ ամբարձ՝ ի վեր զհարուածն պանծալի . որ ոչ էառ զտեղի ընդ օդն , այլ փութակեալ արագութեամբ՝ էջ անդէն՝ ի վերայ գոլոշացեալ գլխոյ Սատանային . մինչև ոչ տեսութեան աչօք նորա , և ոչ երագութեան մտացն

շարժման՝ թէղ թէ վահանի նորա, կարող լինել զգուշանալ յերեսաց նորա։ Ընկրկեցաւ նա յետս տան քայլ երկայնաձիգ, զտանեղորդն ի գուռն՝ հաստատեաց նիզակ նորա ստուարաբուն։ Ոչ որ օրինակ եթէ յերկրի բռնութիւնք ստորերկրեայ հողմոց կամ ջուրց յանցս իւրեանց խլեալ յարմատոյ վերկայնութիւն լեռնակոզմանն՝ խորասոյզ առնէին զայն ստէուովքն հանդերձ։ Ոչ ուշութիւն կալաւ, այլ յաւէտ իմն մոլեգնութիւն՝ զխուժանն ապստամբաց ի տեսանել անդ վատթարեալ ըզհզօրագոյնն քան զինքեանս։ Ոտկ մերձն լցան խրճդութեամբ, և աղաղակեցին բարձրաձայն ի նշան յաղթութեան, և յօժարամտութեան իւրեանց ընդ պատերազմ։ Յայնժամ Ալիքայել հրամանն ետ հարկանել զփողն հրեշտակապետական։ Զայն նորա հնչեաց ընդ ամենայն սահմանս երկնից. և հաւաստարիմ զօրքն գոչեցին ուժգնաձայն։ Ոչ լեգեոնքն հակառակորդաց ոչ կացին յակձիռս, և ոչ նուազ սաստկութեամբ ետուն զանձինս յահագին յարձակումն և ի մարտ։ Յաւուրեաւ յայնժամ սրտմտութիւն և գոչիւն անհնարին՝ որոյ նման չեր երբեք լսելի լեալ յերկինս։ Ճ առաչեալ գինուց ի վերայ զրահից նոցա՝ շունչ չածայն հնչէին ահագինս. և կատաղի անիւք պղնձի կառացն ուժգնին զայրանային։ Ոսկալի իմն էր թնդիւն բաղխման նոցա ընդ միմեանս։ Ի շչիւն անհնարին՝ խաղային ի վերայ գլխոց նոցա նետիչք հրեղէն նետից բոցավառ յարձակմամբ, և կամար յօրինէին ի հրոյ ի վերայ զօրացն երկոցունց։ Այս այնպէս սաստկագոյնս կռուէին կողմանքն երկոքին ընդ միմեանս՝ յարձակեալ ի վե-

բայ մահաբերաւէր և անչէջ սրտմտութեամբ։ Ընդ
չեցին երկինք առհասարակ. և եթէ լինէր յայն-
ժամ երկիրդ, ողջոյն սասանէր ի կենդրոնէ իւր-
մէ։ Այլ զինչ զարմանք ի բաղխել անդ սասա-
կութեամբ ընդ միմեանս այնչափ բազմութեան
Հրեշտակաց՝ որոց և միոյն մարթ է շարժել զամ-
բարձ ողջոյն, և սպառազինեալ զնոսա՝ յուցա-
նել զզօրութիւն իւր։ Այլ քանիօ՞ն առաւել
մարթ էր զօրութեան անթիւ բազմութեանն հա-
կառակ միմեանց յարուցանել զանհնարին աղ-
մուկ, և խռովեցուցանել՝ թէ և ոչ կործանել,
զընիկ աթոռս երանութեան իւրեանց, եթէ ամե-
նազօր և յաւիտենական Աստուածն վերին իշխա-
նութեամբն յամրոյկ անտի երկնից չէր կալեալ
ի չափու զզօրութիւնս նոցա։ Սակայն և այնպէս
այնչափ էր թիւ նոցա, մինչև իւրաքանչիւր լեգէո-
նացն առանձինն երևիլ բազմութիւն յորհնախօսմն
զօրաց։ Իւրաքանչիւր ձեռն սպառազէնն՝ էր մին
ի լեգէոն ի զօրութեան անդ։ Ամենայն ոք ի
գինուորաց անտի՝ թէպետև առաջնորդեալ ի
մարտ, սակայն Թուէր առանձին զօրագլուխ քա-
ջահմուտ արուեստի գինուորութեան. որ գիտէ՝
երբ արժան է յառաջ խաղալ, կամ զտեղի առ-
նուլ, և կամ շրջել զեղանակ մարտին. և երբ
լայնել կամ ամփոփել զնահատան։ Եւ խորհուրդ
փախստեան երևէր ի նոսա, ոչ դարձումն յետս,
և ոչ նշան վատութեան առ երկիւղ։ Ամենայն
ոք վստահ էր յանձն իւր՝ որպէս թէ պարծանք
յաղթութեանն կախեալ կայէն զբազկաց նորա։
Պորձք քաջութեան արժանի յաւիտենական յի-
շատակի գործէին անդադար, բայց ոչ առնուին

զվախճան· զի ցրուեալ էր մարան, և բազմապի-
սի· Այլ զի ի գետնի անդ հեաւակամաբար կըռ-
ուէին, և էր զի սլացեալ ի վեր յուժգին թռիչս՝
մրրկեալ յուզին զօդն· յորմէ երեւէր նա հուր
պատեբազմող· Այսպէս մարան ընդ երկար յերկ-
յանս կռտմանց անպարտելի· Մինչև զկնի Ա-
ատանայ՝ որ ի նմին աւուր եղեալ զմեծամեծ բազու-
թիւնս, և անզուգական գաւառ ի վինս, յորձա-
կեալ ի մէջ ամբոխի մարտիկ Աերովբէից՝ եգիտ
զառիւծն, ուրանօր հարկանէր տուըն Աքթայելի, և
յերկիրս կործանէր զգունդս միանգամայն· Օ՛ի
ահագին սպառ նորա շաղայուցեալ ի վեր կարովն
արուեստիւք՝ իջանէր ի խնամարհ ի սատակումն
համակործան· Փութայաւ նա անդր առ՛ի ունել
զառաջս նորա· և եդ ընդդէմ զվիմարդեան սկա-
ռառին տանապատեան ազամանդի՝ զսպապար իւր
ընդարձակածիլ և լայնանիստ· Ի մտանել նորա
աւրհնէր՝ զառիւ հառ Հրեշտակապետան մեծ ի
Ադնուեիանց մարտին· և խնդայեալ ընդ պա-
տասա նորա՝ զի ակն ունէր վախճան տալ կայս-
ժամ պատերազմին յերկինս, ածեալ զբառամբ
և չզթայակաղ գերեալ զսկզբնապաշտ թշնամին,
սկսաւ զառաջինն ասել ցնա ի խոժոռահայեաց և
ի բոցավառ դէմս՝ օրինակ զայս·

Ադաջնորդ չարեաց՝ որք ցասմատաբուքիւն
քո անձանօթ էին և անլուր յերկինս, և արդ՝
որպէս տեսանես, կարի ինն բազմացեալ ի դժն-
դակ մարտիդ, որ անբերելին է ամենեցուն, թէ-
պէտև ըստ արդար իրաւանց յաւէտ ծանրացեալ
ի վերայ քո, և միաբանեալցն ընդ քեզ· Օ՛խարդ
վրդովչաց զերջանկաւէտ խաղաղութիւնն յեր-

կինս, և մուծեր ՚ի բնութիւն անդր զանպտղ ա-
ղէտսն յժամ յանցանաց քումդ վտարանդութեան։
Օ խոնդ հեղեր զչարութիւն քո ՚ի սիրտս հազա-
րաւորաց՝ որք երբեմն ամբիծ կէին և հաւատարիմ,
և այժմ գտան ուխտադրուժ։ Ապակայն մի համա-
րիր զանձն քո ձեռնհաս յամբոխել աստանօր ըզ-
հանդիսան սրբութեան։ Արկինք հանդերձեալ են
հալածել զքեզ յամենայն սահմանաց իւրեանց.
զի աթոռն երանութեան ոչ տանի բռնութեան և
մարտի։ Ընդ՝ զնա՛ աստի ընդ չարեացն՝ ընդ քոյ-
ին ծննդոց, ՚ի տեղին չարեաց ՚ի դժոխս. դո՛ւ, և
անօրէն խուժանդ ընդ քեզ։ Այլ անդ յուզեսջիր
զաղմուկս խռովութեանց՝ մինչև և քինախնդիր
սրոյս ձեռն արկեալ ՚ի սատակել զքեզ. և կամ
յաւէտ յանկարծահաս վրէժխնդրութեանն թուս-
ցեալ յԱստուծոյ գահավէժ ընկղմեալ զքեզ յան-
դունդս ահագին տանջանաւք։

Օ այսօրինակ խօսեցաւ պետն Պրեշտակայ։
Ապա համառակորէն ետ պատասխանի։ Ա՛հ հա-
մարիր ահ արկանել հողմովք սպառնալեաց նմա՝
զոր ցարդ չեղեր ձեռնհաս երկեցուցանել ար-
դեամբք։ Ա՛հմէկ դարձուցի՛ր ՚ի փախուստ զնա
նուաստագոյնն ՚ի սոցանէ, և կամ ձգեցեր ՚ի կոր-
ծանումն։ Ապակայն և այնպէս վերստին կանգնեալ
նորա անպարտելի՝ դիւրաւ վհատեսցէ ընդ իս զոր
եղեալ է քո ՚ի մէնջ, խմա՛ հալածել զնա աստի իշ-
խանաբար և սպառնալեօք։ Ա՛հ խաբէր, ո՛չ նոյն
պէս հանդերձեալ է լինել կատարած մարտիդ՝
զոր դու գրեա ՚ի չարիս, և մեք ՚ի պարծանս ան-
ձանց։ Օ՛ ի հաստատեալ է մեր ՚ի մէնջ՝ կամ յաղ-
թել քաջութեամբ, և կամ զնոյն ինքն զերկինս

դարձուցանել ՚ի դժոխս ստայօդեալ ՚ի քէն. և անդ որով և իցէ օրինակաւ կալ յազատութեան մերում, թէ և ոչ յարքայութեան։ Զի՝ ոչ խոստացեմ ես յերեսաց քումդ զօրութեան, յաւէտ ընդ քեզ և զգնականութիւն Քրիստոսական, այլ պնդեալ կամ զհետ քո՝ ՚ի բացուստ, և ՚ի մօտոյ։

Զախճան տուեալ նոցա բանիցդ՝ երկոքեան եւս պատրաստեցան ՚ի ձակատամարտ, զոր չէ հնար ցուցանել բանիւ բերանոյ։ Օ՞ր ո՞ր թէպէտև ՚ի լեզու հրեշտակաց, կարող է պատմել զայն, և կամ իմ իմիք յերևելեացս համեմատել ՚ի վերոյ երկրի, որում հնար իցէ ամբառնալ զփոխ մարդկան յայնպիսի բարձրութիւն աստուածաւայելչութեան զօրութեան։ Զանգի և կարի իսկ նման Աստուածոյն երևելին նոքա ՚ի կալ իւրեանց և ՚ի խաղալ յառաջ, ՚ի չափ հասակի, ՚ի գնացս և ՚ի զէնս. և քաջայարմարք յորոշումն վիճակի գերագոյն հնարք նակալութեան երկնից։ Զի՝ շողացուցեալ նոցա զհրեղէն սուսերս իւրեանց՝ ահագին ծիրս գործէին ընդ օդն։ Արկին մեծամարմին արեգակունք յոլացուցանելն ՚ի հանդիպել զասպարս նոցա, մինչդեռ ակնկալութիւն ամենեցուն ըմբռնեալ կայր յերկիւղ։ Զգէն փութանակի տեղի եառն բազմութիւնք հրեշտակաց յերկոցունց կողմանց՝ ուր կայր զառաջինն թաւ ձակատ մարտին, և թողին ՚ի միջի զդաշտ լայնարձակ. բայց ոչ աներկևան յիւրեացս փոխադրիլ այնպիսի խռովութեան։ Օ՞ր օրինակ կամեցեալ փոքումբք զմեծամեծս ցուցանել՝ եթէ քակտեալ բաժանէր միաբանութիւն բնութեանն, և յառնել պատերազմի ՚ի միջ հա-

մաստեղութեանց՝ կրկին մելորակք յարձակեալ՝ի վերայ միութեանց չարախտավատ հայեցուածովք ո-խերիմ թշնամութեան, մենամարտեալ կռուէին՝ի հաստատութեան երկնից, և շփոթեալ խառնակէին զնախնչաձայն պարուհսկաս իւրեանց։ Ապ՝ ամբարձեալ՝ի վեր երկոցունց միանգամայն զբա-զուկս իւրեանց՝ որք էին երկրորդ զինք Վահակա-լին, զմի և եթէ կշռեալ դիտէին զհարուած՝ որում հնար իցէ որոշել զյաղթութիւն մարտին առանց կրկնելոյ։ Որպէս՝ի զօրութեան, նոյնպէս և յա-րգութեան անդ զուգահաւասարք էին նոքա միմեանց։ Բայց սուրն Միքայելի տուեալ՝ի ձեռս նորա՝ի գինարանէն Աստուծոյ՝ այնպէս քաջա-մուխ էր, մինչև ոչինչ սայրատուր կամ կարծրա-պինդ կարող էր կալ առաջի սրութեան նորա։ Եւ նա ընդ առաջ սրոյն Սատանայի՝ որ իջանէր ահագին սաստկութեամբ՝ի հարկանել, և անդէն կարեաց զայն ընդ մէջ։ Բայց ոչ տեսեալ զտեղի՝ հանց կայն կոյս, և խորաթափանց ձեղքեաց զա-ջակողմն Սատանայի։ Յայնժամ զառաջինն պի-տաց նա յանձին զփորձ ցաւոց. և կարի իմն տանջեալ՝ սկսաւ թաւալել կայս կոյս և կայն կոյս։ Յո-րում վայրկ հանց ընդ նա բաղում անգամ հա-տանող սուրն կարեվէր։ Բայց եթէ երակն մար-մին նորա գոլով անքաժանելի ընդ երկար՝ կեցաւ անդէն. և՝ի վերաց անտի նորա այնպիսի իմն բղխեաց վտակ Եհեկտարեան՝ արիւնեբանդ հիւ-թոյ, զորպիսի մարթի ե հոսել երկնաւորաց։ Յոր-մէ և շաղախեցան ամենայն կազմածք զինուց նո-ր՝ որք սակաւ մի յառաջ էին այնչափ պայծա-ռափայլ։ Յայնժամ յամենայն կողմանց բաղմու-

Թիւնք քաջազօր հրեշտակաց նորա փութացան վազվազակի յօդնականութիւն նմին, և արկին զանձինս ընդ մէջ ի պահպանութիւն նորին։ Յորում վայրի բարձեալ զնա այլոց ի վերայ ասպարաց իբեանց՝ զարձուցին անդրէն ի կառս իւր։ Յորում եկաց նա մեկուսի ի ձակատէ տեառն։ Նկեալ կայր ի նմա, և կրձտէր զատամունս իւր յերեսաց անհնարին տագնապի, նախատանաց և ամօթոյ. զի տեսանէր զանձն ոչ անզուգական, և զզուռզութիւն իւր նուաստացեալ այնպիսի նախատանօք, և նկուն լեալ զյանդգնութիւն իւր ի լինել հաւասար Որդւոյ ի զօրութեան։ Այսկայն վազ ապաքինեցան վէրք նորա. զի հոգիք՝ որոց կենդանութիւնն և յիւրացանչիւր մասունս նոցա, և ոչ իրրև զակար մարդկան յընդերս, ի սիրտ կամ ի գլուխ, ի լեարդ և յերիկամունս, անչքութեամբ ևեթ մեռանէին։ Այլ ի լուծական հիւսուածս մարմնոյ իւրեանց ոչ կարէն զառաւել մահացու վէրս ընդունել, քան որչափ մարթ է հոսանուտ օդոյն։ Վէրանք նոցա էր բոլորովին սիրտ, բոլորովին գլուխ, բոլորովին աչք, բոլորովին առանջք, բոլորովին միտք, և բոլորովին զգայութիւն։ Այս որպէս կամք էն նոցա, յօրինեն անձանց անդամս, և առնուն ըստ հաճոյս զգոյն, գկերպարան և գվհատակ՝ Թանձր կամ անօսր [2]։

Ի նմին ժամանակի և յայլում կողման ցուցան նոյնօրինակ գործք քաջութեան արժանի յիշատակաց՝ ուր ասէին պատերազմ զօրքն Վաբրիէլի։ Այս էնքն արհավէն նշանաւքն ձեղքեաց զբոստուար բանակն Ոզոքայ [3] մելեգին արքային՝ որ այն էնչ յասպարէզ կարդայր վէնա, և սպառնայր նմին

ընդ քարշ ածել զնա՝ կապեալ ընդ անիւս կառաց իւրոց. և ոչ կարձեր ևս զհայհոյիչ լեզու իւր՝ ի միասոյ Սրբոյն երկնից։ Ա.յլ անդէն և անդ ձեղքեալ միջով չափ՝ փախեաւ՝ ի բառանջիւն խորտակեալ զինուք, և անհնարին ցաւովք։ Յերկոսին Թէս նորա Աւրիել և Ասափայել վանեցին զկորստ Թշնամիս իւրեանց զԱ.գրամելէք [4] և զԱ.ա մոդէ՝ [5] զերկոսին հակառակորդ Ա.Թոռան, որք էին սոսկալիք Թիսար և քաջագէն՝ ի ժայռս ագամանդի. և չաւիղ յանձն ստորին լինել քան զայլ Ա.ստուածս։ Ասակայն ծանեան նոքա զնուաստութիւն իւրեանց՝ ի փախստեան անդ՝ զկնի ընդունելոյ զանհնարին վէրս ընդ պահպանակս զրահից իւրեանց։ Ել յետնեալ գտաւ և Ա.զդիել՝ ի նեղել անդ զնուժանն անաստուածից. այլ բազմապատիկ հարուածովք յերկիր կործանեալ զԱ.րէլ [6] և զԱ.րիոզ [7] և զզօրութիւն Իշմաելայ՝ [8] էհար և ապականեաց զնոսա։ Ա՝ռիթ էր լինել յաղաչ բերել և զայլ հազարաւորս, և յաւերժայուցանել զանուանս նոցա յերկրի աստ. այլ ընտրեալ Իբեշտակք շատացեալ ընդ համբաւ անուան իւրեանց յերկինս՝ ոչ լռնդրեն զփառս՝ ի մարդկանէ։ Ասակ զկողմն հակառակորդաց՝ թէպէտև աքանչելի էին՝ ի զօրութեան անդ, և՝ ի մրցանս մարտի, և հետամուտ հաւքառոյ քաջութեան, այլ քանզի ջնջեցան՝ ի սուրբ յիշատակաւ բանէ երկնից դատաւճռովք իւրեանց՝ թո՛ղ ինալ անյիշատակ՝ ի խաւարի անդ մոռացութեան։ Օ՛ի քաջութիւն անբաժ՝ ի չշմարտութենէ և յիրաւանց՝ ընդ պարսաւանաւք է, և նախատանաց եւթ արժանի։ Ասակայն և այսպէս մնափառն զհետ

պնդի փառաց, և անարգանօք խնդրէ զհալածակ անուան իւրոյ։ Այլ երբ լուաւ Յաւետեանական լեալ դատակնիքն նոցա։

Եւ ըստ յանկամիլ հզօրագունին Սատանայի՝ տէր ելեալ պաշտօնեայք նորա յերեսաց մարտի, զի հարան յամենայն կողմանց։ Յայնժամ եմուտ ի նոսա հարուած սաստիկ, և աղմուկ չիմացի անհնարին։ Յատակն երկնից սփռեալ կայր ողջոյն ի կոտորակս զինուց նոցա. և կառք և կառավարք և հրաշունչ նժոյգք կործանեալ առհասարակ՝ զի զայեալ կային ի վերայ միմեանց։ Ընդ միանգամ ոչ անկան, զարձան յետս ընդ զօրուն լքելոյ. որոյ այլագունեալ ի դէմս առ երկիւղն՝ հալիւ ձեռնհաս էին ի պաշտպանութիւն անձանց։ Եւ յայնժամ զառաջինն ըմբռնեցան նոքա յերկիւղ, և ի կիրս ցաւոց. վասն որոյ և վատանուն դարձան ի փախուստ։ Եւ մեղքն անհնազանդութեան ձգեաց զնոսա յայն աղէտս. զի յառաջագոյն ոչ փոեէին զերկիւղ, զցաւս և զփախուստ։ Ասէ անպարտելն Սրբոց կացեալ հաստատուն՝ յառաջ խաղացին կարի տարօրինակ ի նոցանէ, ողջանդամ և անխոց անդծելի զինուքն իւրեանց։ Օ այս պիսի յաղթանակ ի վերայ թշնամեացն՝ ետ նոցա անմեղութիւն իւրեանց. զի ոչ յանցեահն նոքա, և ոչ գտան անհնազանդ։ Այլ ի մարտի անդ անխոնջ, և ոչ անկան ընդ ցաւովք վիրաց։ Այսպէս և այնպէս հարկ եղև նոցա մեկնիլ ի աեղւոջէ անտի։ Օ զի սկսաւ գիշերն զընթացս իւր. և ձգեալ զխաւար զերեսաք երկնից՝ էած ի վերայ նոցա զցանկալի դադարումն զինուց, և զհանգիստ յերեսաց սոսկալի աղաղակի մարտին։ Ընդ ըստ-

ուերաւ առնոյ նորա խոյս եւտաւն յաղթականքն եւ յաղթեալքն առհասարակ։ Ի դաշտի անդ ձնա-
կատանարտին քաջութեամբ զտեղի առեալ Աի-
քայելի եւ հրեշտակաց նորա՝ հարին զքանակս իւ-
րեանց. եւ շուրջանակի կարգեցին ի պահպանու-
թիւն զԱրմովեական լուսափայլութիւնն։ Ասկ
Սատանայի անհետացեալ անտի ընդ իւրոց ամպ-
ամբոխ՝ զտեղի հաւ ի խաւարչտին վայրի ու-
րեք։ Ուր ոչ գտեալ զՀանգիստ՝ կոչեաց ի նմին
դիշերի զիշխանան ի ժողով. եւ կացեալ ի միջ
նոցա՝ զայս օրինակ խօսեցաւ անվհեր համարձա-
կութեամբ։

Ով սիրելի ընկերք իմ՝ որք այժմիկ փորձ կր-
տայք ի հանգիստ, եւ անպարտելիք ի զէնս. եւ
ցուցայք արժանի ոչ միայն ազատութեան՝ զոր
իրաւամբք խնդրէք, այլեւ պատուոյ, իշխանու-
թեան, եւ պանծալի անուան՝ որոյ թեւին ածեմք։
Որք եւ ի կեզակարծ մարտի անդ դդեմ կալայք
ի միւսմ աւուր (եւ ընդէր ոչ զամենայն աւուրս
յաւիտենից) ևս քաջագունին՝ զոր մարթի էր
Տեառն երկնից առաքել ընդդեմ մեր ի բարձանց
յանծուոյ իւրմէ. պի համարէր զնա ձեռնհաս ի
նուաճել զմեզ ընդ իւրով իշխանութեամբ. բայց
եւք իրայն զհակառակն ցուցին։ Ոմին իրի թուի
ինձ, թէ մարթի է մեզ համարել զնա ոչ անվնաս
ի խորհուրդս իւր, թէ եւ ցարդ կարծեաք լինել
ամենագէտ [9]։ Այլ իսկ պիտէք, պի զոլով մեր
պինեալ փորձու եւթ զօրութեամբ՝ յանձին կրե-
ցաք զուզնաքեայ իմն վիշտս եւ վնասս, որք ցարդ
անծանօթ էին մեզ. այլ ընդ ծանօթանալն՝ ան-
դէն աւ ոչինչ զրեցաք զնոսա։ Որդ՝ քանպի գտա-

նեւք այժմ զՀրեղէն գոյացութիւն մեր անընդունակ մահաբեր ցաւոց և կորստեան . և թէպէտ վիրաւորեալ, այլ դիւրակեզել և արագաբոյժ իւրով իսկ ընդաբոյս զօրութեամբ , յայն սակս ըստ փոքրկութեան միտսուդ համարեօթիք և զդալման նորին դիւրահնար : Ի պատահել մեր միւսանգամ մարտիւ ընդ միմեանս՝ թերևս ձեռնտու լինիմ ձեզ հզօրագոյն ևս զինք և մեքենայիւք ի չաղթութիւն անձանց , և ի պարտութիւն թշնամեաց . և կամ դէթ հատասար գործեսցեն զանհատասարութիւնն ի մէջ երկոցունց կողմանցս՝ որ ոչ է ըստ բնութեան : Այլ եթէ այլ ինչ պատճառ զանխուսափ առ ի մէնջ թողեալ իցէ նոցա գեր ի վերոյ հանդիսանալ քան զմեզ , մինչդեռ մարթ է մեզ ունել անարատ զմիտս , և քաջառողջ զխորհուրդս՝ խորհրդակցութիւնն ըստ արժանեաց հանգէ զայն ի լոյս :

Ո՛չ այս ասացեալ նորա՝ բազմեցաւ . և զկնի նորա յարեաւ ի ժողովն անդ Լիսրովգ [10] առաջինն ի մէջ իշխանաց նորա . որ էր կարեվէր և վաստակաբեկ փախուցեալ յերեսաց մարաին՝ ունելով զվորտակեալ զինս իւր նեբկեալ ի գոյն ապականութեան . և ամպամած դիմօքն ետ զայս պատասխանի :

Զգաստարար մեր ի նորոգ տերանց , և առաջնորդ ի վայելս ազատութեան ըստ իրաւանց Աստուածոց , զմարդ ընդդէմ անհամեմատ զինուց , և ընդդէմ անվճռայ և անխոցիկ՝ տակաւին զտանեք անբեկելի Աստուածոյս , և լի վտանգաւոր : Ո՛չ զինչ օգուտ է քաջութիւն կամ զօրութիւն՝ թէ և անպարտելի , եթէ ընկճեալ կայ յերեսաց

յաւոց՝ որք յաղթահարեն զամենայն անձն, և լքուցանեն զձեռս և զ'ոտս նորա։ Այրել է մեզ 'ի բաց կալ 'ի վայելից անտի զուարճու- թեանց, և առ ոչինչ դրեալ զայն՝ կեալ խաղա- ղաւէտ կենօք։ Այլ ցաւքն են կատարեալ թըշ- ուառութիւն, և վատթարագոյն քան զամենայն աղէտս. որք և կարի լինի բռնացեալ՝ տապալէն զհամբերութիւն։ Այդ՝ որ միանգամ՝ կարէ դատ- նել հնարս, որով մարթ իցէ մեզ առաւել և ևս ևս հասուցանել մերոց թշնամեաց՝ որք դեռ և ս կան անխոցելի, և կամ զինել զանձինս մեր նովին պաշտպանութեամբ, թուի ինձ լինել նման արժա- նի ոչ փոքր փոխարինաց՝ քան զոր խոստովանիմք ազատարարիդ 'ի սակս քումդ երախտեաց։

Որում արար պատասխանի Աստանայ յան- խաւով դէմս։ Ընդունայն գոից զայն՝ զոր իրաւամբք համարիս յաւէտ լինի կարևոր 'ի յաջողութիւն անձանց։ Օ՛ի՞ ո՞ր 'ի մէնջ՝ որոյ աչք ակնարկեն 'ի պայծառափայլ երեսս եթերական գեհոյս, յորոյ վերայ հաստատեալ կամք, և տեսանեն զը- լայնածաւալ սահմանս երկնից պաճուճեալ ծառուք, պտղովք, Ալբրոսեան[11] ծաղկամբք, ակամբք պատ- ուականօք և ոսկւով՝ այնպէս 'ի հարևանցի անցեալ ընդ նոսա, մինչև չածել երբեք զմտաւ՝ թէ գի- արդ աձեն 'ի խորս անդ երկրի այդոքիկ. որք են անլուրջ և անզարդ նիւթք ոգեղէն և հրեղէն փրփրոյ. մինչև 'ի մերձենալ առ նոսա երկնային ձառագայթիւ՝ արգասաւորեալ բուսանին յայն- պիսի գեղեցկութիւն, և տարածանեն զինքեանս առ լոյն շրջապատեալ։ Որքա 'ի խորս անդ ար- տադրութեան իւրեանց հանդերձեալ են տալ մեզ

նիւթս բազմաբեղուն առատութեամբ՝ ի բոց դժո-
խոց· Այրոց լցեալ խառնեցաւ՝ ի խոռոչատոր,
յերկայնաձիգ և՝ ի բոլորշի մինչեւնայս՝ ի մեզնե-
նալ հրոյն ընդ ծակս նոցա, ընդարձակեալ մինչ-
դէն կատաղութեամբ՝ արձակեցին՝ ի հեռաստա-
նէ որոտընդոստ թնդմամբ՝ ի թշնամիս անդր զայն
սիսեռ մահաբերսն անօթս պատերազմի, որոց
մնրթ էր խորտակել և յերկիր կործանել զա-
մենայն ընդդիմակացս· մինչև խիթալ նոցա, թէ
գուցէ զինաթափ առնիցեմք՝ ի կայծակունս իւրոց
և զնոյն ինքն զՔ անթընկէցն[12] որ միայն է ահա-
ւոր· Այլ աշխատութիւն մեր՝ ի վատակս սորին
ոչ յերկարեցաւ, այլ մինչև է լուսացեալ առա-
ւօտու՝ արդիւնքն լցին զկամս մեր· Այլ արդ՝ նո-
րոգեցարուք յանձինս ձեր, և զամենայն երկիւղ
մերժեցէք յանձանց՝ ի բաց· Ի՞նքան խորհրդով
և քաջութեամբ զօրացեալ՝ մի՛ ինչ համարեսջիք
դժուարին, և՛ առաւել անհնարին·

Այլ ոչ նա· և բանք նորա զուարթացուցին
զթալկացեալ դէմս նոցա, և զլքեալ սիրտս քա-
ջալերեցին· Այնուհետեւ զարմացան ընդ նորոգ
գիւտդ[13], և թողին՝ ի բաց զայլ հնարս իւրեանց·
Այդ այսպէս դիւրահնար ցուցաւ նա զինի դտա-
նելոյ միանգամ· և եթէ չէր գտեալ տակաւին,
բազումք ունէին կարծել անհնարին· Այս թերե-
և առյապայս՝ ի բազմանալ չարութեանն ոմանք
՝ի ծննդոց քոց հակամիտեալ յաւեր և՝ ի կործա-
նումն, և ազդեալ՝ ի դիւական հնարից՝ գտցեն
զնոյնօրինակ գործիս յատկանութիւնն որպէս
մարդկան· զի՝ ի սակս մեզաց ձգեցին՝ ի սատա-
կումն միմեանց պատերազմաւ· Այնդէն վաղվաղ

կի՛ ի ժողովոյ անտի փութացան՛ ի գործ . ոչ ոք
էկաց յընդդիմաբանութիւն . անհամար ձեռք
կային պատրաստական յաշխատութիւն ։ Քար-
ԹԷ ական Թաւալեցուցին զՀողն երկնային . տե-
սին՛ ի խորհուրդս զանկերպարան արարածոց
սկզբանց բնութեան . զոմն անդ զխորխուրն ծծմ-
բոյ և բոլակի . խառնեցին՛ ի միասին . եփեցին
Ճարտարութեամբ . և վերածեալ՛ ի փոքրիկ սեռ
բակ հատս՝ շահմարանեցին զնոսա [14] ։ Յոմ ոմանք
հանին՛ ի հողոյ զծածկեալ երակս հանքոց և քա-
նոց ( ունի և երկիրս զնոյնօրինակ ընդերս ) . յո-
րոց և ձուլեցին զմետղանօթս իւրեանց , և զուսմն
առ՛ ի արձակել՛ ի կործանումն ։ Այլ այլք պատ-
րաստեցին զՀրձիգ հեղկն որ մահաբերն է՛ ի մեր
ձեալ հրոյն [15] ։ Ոչ այսօրինակ՝ մինչև էր ծա-
գեալ առաւօտու , աւարտեցին զամենայն ինչ՛ ի
գաղտնութեան անդ գիշերոյ , և եղեն՛ ի կարգի
լռելեայն զգուշութեամբ և անտեսանելապ [16] ։

Ընդ՝ ի ծագել զուարթագեղ առաւօտու յեր-
կինս՝ յարեան յաղթական հրեշտակքն . և փողն
առաւօտեան կոչեաց զնոսա՛ ի զէնս ։ Համախմբե՛
բեալ փութանակի պայծառափայլ զօրաց՝ կային
սպառազինեալ ոսկիազինք ։ Ոսկ այլք՛ ի լուսա-
փայլ լերանց գիտէին շուրջանակի զԵհնամին . և
ԹԷԹևաւղն աստղատակաւորքն խուզէին զամենայն
վայրս և զսահմանս՛ ի խնդիր նորուն , Թէ ուր ար-
դեօք օթևայեալ կայցէ , կամ փախուցեալ . և
կամ կամիցի արդեօք վերստին յարձակիլ՛ ի մարտ ։
Այս ամս անգէն գոմն զնա նշանաւոր առաւոտե-
լով յառաջ խաղացեալ՛ ի գունդ հանդարտա-
քայլ բայց քաջագէն ։ Յայնժամ Ոչխիկ [17]

արագաշարժ Աբրովքէն սլացեալ՝ի Թէա՝ զարձաւ անդրէն փութանակի. և կացեալ ընդ օրն՝ զայս օրինակ աղաղակեաց մեծաձայն ։

«Ո՛վ զինս ընթացարուք զօրականքդ՝ի զինս մարտի. զի ահա հասեալ կայ վերատին Թշնամին՝ զոր կարծէաք փախուցեալ ։ Կամի նա ազատ կացուցանել զմեզ այսօր՝ի սմպելոյ զհետ նորա ։ Կայ իբրև զամն Թանձրախիտ. և տեսանեմ բազմեալ՝ի գիմն նորա զբարիմայ և զժպիրն կամս ։ Արկի՛ք զանձամբ զվարապետնակ ձեր ադամանդեայ. զի՛ք՝ի գլուխ զսաղաւարտ ձեր. և առի՛ք՝ի ձեռին զգեղ վահան ձեր՝ի ձև սկաւառակի. և տարա՛յք զայն մանկաւասար, և կամ՝ վերամբարձ. զի որպէս ինձ թուի, հանդերձեալ է այսօր տեղալ՝ ոչ անձրև յօդագին, այլ ամպրոպք շառաչուն նետից՝ Թնա զգեստեալ՝ի հուր ։

Ո՛վ այսօրինակ ծանոյց նա որոց կայցն՝ի զգուշանալ ։ Այլ նոցա անդէն վաղվաղակի՝ի կարգ անկեալ անխուռով՝ փութացան՝ի զինս, և կարգեցան կացին՝ի ձակատ մարտի ։ Այլ ահա տեսին, զի մերձենայր առ նոսա Թշնամին յամբոխ յոգնախուռն և երկայնաձիգ բազմութեամն՝ որք ձգեին զգխաւական Թնդանօթս իւրեանց՝ի խորանարդ գոգաւոր [18]. որ էր շրջապատեալ՝ի սուսեր բանակէ զօրացն առ՝ի ծածկոյթ դաւանաց ։ Կացին երկոքին ձակատքն առ վայր մի հանդիպ միմեանց. բայց Սատանայ անդէն երևեցաւ՝ի գլուխ իւրոցին. և ձայն նորա մեծաբարբառ եղև լսելի, զի ասէր հրամանն՝ օրինակ զայս ։

Կացի՛ք յառաջապահդ զձակատդ յայլ և յայլ հեակ, զի գիտասցեն Թշնամիք մեր, Թէ զինարդ՝ի

խնդիր եմք մեք հաշտութեան և խաղաղութեան, և տարածեալ զպիրկս՝ կամք ՚ի պատրաստի ընդունել զնոսա, եթէ ախորժեն զսկզբնատուրութիւնն առ՚ի մէնջ, և ոչ խոստափին խորամանկութեամբ՝ որպէս կասկածիմ։ Սակայն վկայ լեցին երկինք արագ արագ վկայութեամբ ընդ ընտիր մեր քաջութեամբ զպարտս անձանց։ Ոչ դուք ձակատեալքդ կատարեցէք զհրամանն՝ որ տուաւ ձեզ յառաջագոյն։ Ո՞ր հանդերձեալ է ձեր դնել առաջի, մերձեցարուք ՚ի նա յուշիկ, բայց մեծաձայն՝ զի լսելի լեցի ամենեցուն։

Մինչչև էր աւարտեալ նորա զհենդնութեան զերկդիմի բանսն, և ահա բաժանեալ ձակատուն յաջ և յահեակ՝ յանդիման արար աչաց մերոց զնոր և զտարօրինակ դասաւորութիւնն երբակի կարգաց սեանցն բարձելոց ՚ի վերայ անուց[19] (զի կարի նմանօրինակ երևէին նոքա սեանց կամ գոգաւոր մարմնոց յօրինելոց ՚ի կաղնի կամ յեղևնի ծառոց ոստաքանց անկելոց յանտառի կամ ՚ի լերինն) ՚ի պղնձի, յերկաթի և ՚ի վիմարդեան ձոյլս։ Եւայց ՚ի նշանակ կեղծեաք գադարման զնոցա՝ բացեալ ունէին նոքա ընդդէմ մեր զլայտաձակ և զահագին բերանս իւրեանց։ Ո՞ւ մի մի ՚ի նոցանէ կայր ՚ի յետուստ կողմանէ մէնջ մի Աերովբէ, ունելով ՚ի ձեռին զգաւազան՝ որոյ ծայրը բոցավառեալ էր, և ձօձայր։ Յայնմ վայրի կայաք մեք ՚ի վարանս, միանգամայն և ըմբռնեալ ՚ի զբօսանս միտց ընդ նորոգ տեսիլդ։ Եւայց ոչ միայաբ ընդ երկար։ Ո՞ւ ձգեալ ամենեցուն զգաւազանս իւրեանց՝ մերձեցուցին յուշիկ զծայրս նոցա ընդ անձուկ ծակս սեանցդ. և ահա անդէն վազ

վաղակի բոցավառ ցուցան երկինք, այլ զկնի մե-
ծագնեցան ի ծուխ՝ զոր զգայեցին մենքենայքդ
խորաբերան։ Ոգոց բոմբիւնք լցին զօդն ի հրն-
չիւն դժոխալուր, և պատառեցին զփորոտիս նորա՝
ժայթքեալ արտաքս զգարշահոտ և զդիւական
աղխս իւրեանց, զանթիս ասեմ շղթայաշար, և
զկարիուտս երկաթի գնտակաց։ Որք և ուղեալ
ի վերայ յաղթական զօրացն՝ այնպէս ահագին
սաստկութեամբ խաղացին ի նոսա, մինչև ոչ ու-
րուք ի նոցանէ՝ որոց միանգամ հարան, կարող
լինել կալ յոտին. Թէպէտև հաստատուն էին իւ-
րև զժայռս վիմաց։ Այլ հաղարաւորք ի հրեշ-
տակաց անտի և ի հրեշտակապետաց՝ անկան թա-
ւալգլոր։ Այս այն փուճանակի էս ի սակս զի-
նուց իւրեանց. զի եթէ անզէն լինէին, դիւրա-
մարթ էր նոցա խոյս տալ արագագոյն կծկմամբ
կամ խուսափմամբ յերեսաց մենքենայիցդ։ Ա ան
որոյ և եհան ի վերայ նոցա ցրուման անհնարին, և
խորտակումն անհրաժեշտ։ Այս լինչ ոչ օգնէր նո-
ցա Թուլուքիւն ձակատացն պնդութեան։ Այս
զինչ այլ ինայր նոցա։ Այթէ դիմէին ի վերայ,
կրկին վանումն, և չարաչար էս հարուած հանդէր
ձեալ էին կարդել զնոսա յառաջել նախատինս,
և չայսմ կատականաց Թշնամեաց իւրեանց. զի
միս էս դասակարգութիւն սերովբէական պատ-
րաստեալ կայր ի հանդիպել հնչեցուցանել վերս-
տին զբոմբիւնն շանթընկեցութեանն։ Ոսկ զնիւ-
նադարձութիւնն զկնի խորտակմանն՝ չարաչար էս
համարձակին։ Ի միտ էառ Աստուած զտագնապ նո-
ցա, վասն որոյ և զայսօրինակ աղաղակեաց առ ընդ-
կերս իւր ընդ կատակս։

Ո՞վ բարեկամք իմ, ընդէր ոչ մատչին յառաջ խրոխտ յաղթականքն՝ որք սակաւ ի յառաջ յանդգնապոյս խիզախեին։ Օ՛ի մեք յընդունել լուծիւն նոցին ըստ արժանեաց՝ բացաք զձակատն, և զդիրկս մեր (և զի՞նչ առաւել մարթի էր մեզ առնել)։ և եդաք առաջի նոցա զինդիր հաշտութեան. այլ նոցա անդէն վազվզակի փոխեալ զիիս իւրեանց՝ հրաժարեցան, և անկան յայլ խորհուրդս. որպէս թէ կամք իցեն նոցա կաքաւել. բայց կարի ինն անհեթեթ ցուցան նոքա ի պարս իւրեանց, թերևս առ անչափ խնդութեան ընդ հաշտութիւնն ընծայեալ առ ի մէնջ։ Սակայն և այնպէս թուի ինձ, թէ մարթի է մեզ ձգել զնա ի հաշտութիւն՝ եթէ միւսանգամ լուիցեն զինդիր մեր։

Ընդ այս ետ պատասխանի Խեղևար [20] նոյնպէս ընդ կատակս։ Ո՛չ առաջնորդդ քոյ՝ պայմանքն հաշտութեան զոր յղեցաք առ նոսա, ելին ծանուցանք, դժուարիմացք և սաստիկ յոյժ. մինչև մարթի է մեզ ի կարծիս լինել, թէ զուարճացուցեալ իցեն զամենեսեան առհասարակ, և յորդորեալ զբազում յընդունելութիւն հաշտութեան։ Ընդ միանգամ ուղղութեամբ ընկալեալ իցեն զայնոսիկ, անշուշտ քոյ խնացեալ են զիիս նոցին։ Ո՛պա թէ ոչ՝ հաստատեալ ցուցանեն մեզ, թէ զինդրդ թշնամիք մեր վարին ընդ մեզ խորամանկութեամբ։

Օ՛ այսօրինակ կայսն նոքա յայսն կատականաց [21] ընդ միմեանս ըստ ինքնահաճոյ քմոյ իւրեանց. զի կարի ինն յուսացեալ էին ի նորահնար մէնքենայս իւրեանց լինել հատասար նոքօք յաւիտենական զօրութեանն. վասն որոյ և ծաղր առ-

նեին զանթիւ նորա, և այսպիսակատակ լինէին զօ-
րաց նորա ի տեսանել անդ զնոսա առ վայր մի
խռովեալ: Սակայն ոչ ինայէին նոքա յայն վիճակ
նուաստութեան ընդերկար: Օ՛ի սրամտութիւն
բարկութեան փութացոյց զնոսա, և ետ ի ձեռս
նոցա զքաջայարմար զէնս յընդդիմադրութիւն
դիւական հնարից նոցա: Ընդէն փութանակի (՛ի
միտ առ զառաւելութիւն զօրութեան Աստուծոյ
յընտիր Հրեշտակս իւր) ձգեալ նոցա՛ի բաց յան-
ձանց զէնսն՝ յարտադրոյն թռիչս իբրև զիայլակն
ընթացան՛ի լերինս (զի և երկիրս ունի յերկնից
անտի զղջարձութիւն դրից իւրոց՛ի լեառն և՛ի
հովիտ). և սասանեալ զնոսա՛ի հիմանց՝ կորզե-
ցին՛ի բաց համօրէն ծանրաբեռնութեամբք նո-
ցին, ժայռիւք, պետովք և անտառովք. և կա-
լեալ զթաւ զաղաթանց նոցա՝ տարան՛ի ձեռս:
Ընչութիւն անհնարին, և ահ մեծ կալաւ զզօրագ
ազատամբեաց (զի ինչ երկմտիր ընդ այն)՛ի տես-
անել անդ զահագին գալուստ երկնահայեաց յա-
տակաց լերանց՛ի վերայ նոցա: Օ՛րս և տեսին
զինի յարձակեալս՛ի վերայ երեքկարգեան անխ-
ծապարտ մինչբենայիկ իւրեանց. և զամենայն յոյս
իւրեանց խորասոյզ թաղեալ ընդ ծանրութեամբ
նոցին: Այլ ապա դիմեալ Հրեշտակաց՛ի վերայ
նոցա՝ հոսել սկսան՛ի վերայ գաղաթանց գլխոց
նոցա զմեծամեծ բարձրատանգակս: Որոց սաստկ
բացուցեալ զօդն՝ ձնիեցին առհասարակ զամե-
նայն լեգէոնս սպառազինութեան նոցա: Յորում
վայրի և նոցունց խակ զինք յատկա իմն ձեռնտու
եղեն յաւառելութիւն ցաւոց նոցա. զի խորտա-
կեալ՛ի մասունս՝ մնին՛ի մարմինս նոցա, և ածին

'ի վերայ զանհնարին վիշտս, և զբազմատապնաց հեծութիւնս՝ մինչև զկնի բազում տառապանաց զերծան նոքա 'ի սաստկատանջ բանտէ անտի, թէպետև հոգիք էին նրբանիւթ յառաջապոյն, և այժմ թանձրամարմնի 'ի սակս մեղաց [22]։ Ո՛նա յեալքն 'ի նոցանէ դիմեցին ըստ օրինակի Հրեշտակաց 'ի նոյնատիպ զկնս, և խլեցին յարմատոց զվերձակայ լերինն։ Ո՛ւստի որպ լերինք ընդառաջ ելանէին լերանց յօդս՝ ընկեցեալ յերկայնութիւնս կողմանց անհնարին սաստկութեամբ. մինչև յահապին ստուերի անդ մարտնչել նոցա ընդ երկրաւ։ Ո՛վ անդնդային բաղխմանն. առ զրոզդմամբ նորին մարտն Թուէր խաղ հանդարտազարձ։ Յարեաւ յայնժամ խռովութիւն 'ի վերայ խռովութեան. և համօրէն երկինք հասեալ կային յապականութիւն, և հանդերձեալ էին ծածկիլ ընդ անհնարին կորստեամբ, եթէ Հայրն ամենակալ՝ որ նստեր անեղական յանքոյթ խորանի անդ սրբութեան երկնից, և 'ի միա առնոյր զվախճան ամենայնի, և կանխագէտ գովութ խռովութեանս՝ Թոյլ տուեալ էր նմին, ոչ էր կամեցեալ տալ կատարումն վերին խորհրդոց իւրոցն կամաց. այն է՝ բարձրացուցանել զՈրդի իւր զօծեալ վրէժխնդրութեամբ նորին 'ի Թշնամեաց անտի. և յուցանել զիշխանութիւնն տալեալ նմին 'ի վերայ ամենայնի։ Ո՛ստն որպ և զայս օրինակ սկսաւ խօսել ընդ աԹոռակից Որդւոյ իւրում։

Ծագումն փառացս՝ Որդիդ սիրելի, յորոյ 'ի դէմն փայլէ Ո՛յտուածութիւնն իմ անառեսանելի. և գահակից ամենակալ զօրութիւն՝ յորոյ 'ի ձեռս

են ամենայն վէհութք իմ։ Ահա անցին երկու աւուրք ըստ հաշուին երկնից յորմէհետէ չոգան Ինքեայեր և զօրութիւնք նորա ի նուաճել զապստամբեան։ Արտ նոցա՝ որպէս և կարծելի իսկ էր, զաւուրս կարի յաւագին՝ ի պատահել անդ ընդ միմեանս երկոցունց հզօր և սպառազէն թշնամեաց։ Օ՛ի ես Թողլ զնոսա ի կամս ազատութեան իւրեանց։ Այլ դու ինքնին գիտես, զի յարարչութեան անդ ստեղծման նոքա զուգահաւասար միմեանց. և միայն մեղքն կացոյց զնոսա անհաւասարս. և այն՝ սակաւուք ևս եթէ, զի գեռ ոչ ածի ի վերայ նոցա զգատակնիք պատուհասին. յորս սակս հարկ է նոցա ունել զանվախձան պատերազմ ընդ միմեանս։ Արարն բազմավաստակ՝ զոր կարծէին եր առնել, արար. այլ նոցա Թողեալ զսանձս զայրագին սրտմտութեան՝ զինեցան լերամբք եւ զինուք. որովք և զանհնարին աղէտս գործեցեալ յերկինս ի մէնաս հասարակաց։ Այդ՝ անցին երկու աւուրք, և երրորդն ինձ քեզ։ Ի քո սակս Թողի զայն, և ժուժկալեցի ընդերկար, զի պարծանք կատարածի ահագին մարտի լինի քո. քանզի ոչ ոք բաց ի քէն կարող է վախճան տալ նմին։ Հեղի ի քեզ [23] զօրութիւն և զնուրջս անսահմանն առատութեամբ, զի ամենեքին յերկինս և ի դժոխս ծանիցեն զմեծութիւն քո անզուգական։ Ուրախ և տեղի տուեալ խռովութեան՝ դու միայն քարոզեսցես արժանաւոր ժառանգ և Թագաւոր ըստ իրաւանց քումդ օծութեան։ Այդ՝ գնա Այնանակաւղ զօրութեամբ Հօր քո։ Ի ազգեաց ի կատս իմ՝ և ուղեա զերապրութեամբ անիւս նոցա՝ որք սասանեցուցանեն զիմմանս երկնից։ Ուղեա զպա-

տերազմունս իմ։ Ա՛ծ ընդ մեջ քո զաղեղն իմ և զշանեաս՝ զվնասն ամենազօր, և զաղեղբրդ զսուսերն իմ զօրաւոր։ Հալածեալ վանեա զորդիս խաւարի. և վտարեա զնոսա ի սահմանաց երկնից յանդունդս խորոց. զի ուսցին անդանօր՝ որպէս կամք են նոցա, անդոմանել զԱ՛ստուած, և զՄորդի նորա զ()ծեալ արքայ։

Ո՛յաւօրինակ բարբառեցաւ նա. և յարձակմանէ Ձառագայթիցն ողջոյն արտափայլեալ յուսյաւ ՄՈրդի իւր։ Ակ նա համբուն էցոյց ինքեան զՀայր իւր, ընկալեալ զնա ի գիմն իւր անձառապէս։ Որ և խօսեցաւ ընդ նմա օրինակ զայս։

Ո՛վ Հայր անսկիզբն, ամենասուրբ, ամենապատուելի և բարձրագոյն քան զամենայն երկնից, դու ի ինդիր ես միշտ փառաւորել զՄորդի քո, որպէս և ես զքեզ ըստ արժանեացդ։ Ա՛յն են իմ պարծանք, մեծութիւն և բերկրութիւն՝ զի հաճեալ քո ընդ իս, ծանուսցես զլուսին կամաց քոց՝ որ ի երանութիւն իմ լիապատար։ Ընդունիմ զպատուազանդ և զիշխանութիւնդ՝ զոր տաս ինձ. և բազում հաճութեամբ դարձուսից զայն անպրէն առ քեզ, յորժամ լիցիս դու ամենայն յամենայն. և ես եղեց ի քեզ յաւիտեան. և յիս ամենեքին՝ զոր դու սիրեցեր [24]։ Ա՛րդ՝ գոլով իմ պատկեր քո ըստ ամենայնի, առեցից զձեռնամիս քո, և ցուցից առ նոսա՝ որպէս զքաղցրութիւնդ, նայնպէս և զահ քո։ Ա՛ւ սպառազինեալ անյաղթ զօրութեամբ քով՝ սրբեցից զերկինս յասպատմբեցդ. և վտարեցից զնոսա ի պատրաստեալ բնակութիւն նուրեանց չարաչուք, ի կապանս խա-

սարի և յորդն անմահ· փոխանակ պն իշխեցին վտարանջել յարդարացի իշխանութենէ, քանզի՝ որպ հպատակութիւն է կատարեալ երանութիւն։ Յայնժամ Սուրբք քո հեռացեալ ի պղծոյ անտի, և պար առեալ անարատութեամբ զլերամբդ սրբով՝ երգեցեն քեզ զերգս և զդոհաբանութիւնս. և ես Վլուխս զդդ ընդ նոսին։

Օ այսօրինակ բարբառեցաւ նա. և ապա խոնարհեալ ի վերայ գաւազանի իւրոյ՝ յարեաւ յընդաջմէ փառացն՝ ուր նստէր յայնժամ։ Եւ երրորդ առաւօտն սրբութեան սկսաւ լուսանալ յերկինս։ Յայնմ վայրի յառաջ խաղացին կառքն յաւիտենականին Հօր ի հնչուն ահեղ շառաչմանն, և շրջապատեալ արձակեալ զթանձրախիտ կայծակունս։ Ընդ նմա ի մէջ անուաց ինքնաշարժք հոգւով. բայց ձգելին զնոսա չորեքին քրովբէականքն կերպարանք, որոց իւրաքանչիւր ունէր զբառեակ ահեղահրաշ դէմս։ Հանդերձն մարմնոյ նոցա և թեւք լի էին աչօք նման աստեղաց, և անիւքն ուղղելին զտեսիլ փայլակնացայտ [25]։ Կազմեալ կայր ի գլուխս նոցա բիւրեղեան հաստատութիւնն երկնից. և ի վերայ նորա աթոռ շափիւղայ յեռեալ ընդ բազմագունի ական, և ընդ երանգոյ ադեղան անձրևաց [26]։ Եւ նա և բազմեցաւ ի նմա՝ սպառազինեալ բոցանշոյլ Աւրիմաւ [27], որ է յօրինուած երկնից աստուածակերտ։ Ընդ աջմէ նորա նստաւ Յաղթութիւնն արծուաձեւ։ Օ միջոց նորա կախեալ կային աղեղն և կապարճն ամբարեալք երեքթևեան կայծակամբք։ Շուրջ զնովաւ հոսանք խաղային ահագնատեսիլ ծիոց, հակառակամարտ բոցոց, և սոսկալի փայլատա-

կանց ։ Յառաջեաց նա ’ի խումբս Սրբոց բիւրաւորաց. և գալուստ նորա յառաջագոյն ցուցաւ ’ի բացուստ ։ Ի բիւրապատիկ կառս Աստուծոյ (լուսոյ զթիւ նոցա) երևեցան յաջմէ և յահեկէ նորա հասեալ բաժանմամբ ։ Ալեցաւ նա ’ի թևս Որովբէից ... Ա. Ս. զառաջինն յանդիման ցուցաւ ասէից իբրայոյն ։ Ո՞րս կալաւ խնդութիւն անպատմելի ’ի տեսանել անդ զգերագոյն նշանն Ծննդեան վերամբարձեալ ’ի Հրեշտակաց ։ Լակ Աիքայէլ անդէն փութանակի էած ընդ հրամանատարութեամբ նորա զզօրս իւր. որք սիրեցան յերկոսին թևս նորա՝ համախմբեալ ընդ գլխով իւրեանց ։ Յայնժամ զօրութիւնն աստուածայինն հորդեաց զՀանապարհ առաջի նորա ։ Ի ներքո՝ որք խլեալ արմատաբի անկեալ կային զՀանապարհայն, ունկնդիր լեալ ձայնի հրամանաց նորա՝ մեկնեցան յիւրաքանչիւր տեղիս ։ Երկինք նորոգեցին զյանկալի երեսս իւրեանց, և բլուրք և հովիտք խայտացին նորաբողբոջ ծաղկամբք ։ Տեսին զնա չուառական թշնամիք նորա. սակայն տակաւին յամառեալ՝ դուժաբերեցին զիմաստակութիւս զօրս իւրեանց ’ի մարտ վտարանդութեան, ընկալեալ զայս յանդուստութենէ իւրեանց ։ Այն թէ Հնա՞ր էր այնպիսի խոտորնակութեան ունել զտեղի երկնային Հոգւոյ ։ Ասայ որպիսի՞ նշանաց մնրթի է խոնարհեցուցանել զամբարտաւանն. կամ՝ որպիսի՞ աքանչելեաց մեղմացուցանել զխստասիրտն ։ Որով արժան էր նոցա մեղմանալ, առաւել և խստացան ։ Ո՞չ երեւել նոցա ընդ յանդիման տեսիլ փառաց նորա՝ նախանձաբեկ դառն յանձինս. և թեկն ածեալ բարձրագոյն աստիճա

նի նորա՝ աստակածին ևս Ձակատեցան ի մարտ. կարծեցեալ յանձինս գտանել գայթողութիւն զօրութեամբ իւրեանց, կամ գաւանանութեամբ. և այնպէս բռնանալ ի վերայ Աստուծոյ, և Ծնեալ նորա. և կամ խաչառ անկանիլ ի վերջին կորճանումն: Ոչ այն որոյ և արհամարհեալ զխաչառութիւնս, կամ՝ զթիկնադարձութիւն ընդ խաբէն՝ յանդուգն դիմագրաւ ետուն զանձինս ի մարտ: Այլ վայրկ միածին Որդին Աստուծոյ զայս օրինակ խօսեցաւ ընդ զօրս իւր՝ որք կային յաջմէ նորա և յահեկէ:

Կացէք Ասուրբգ տակաւին ի պայճառափայլ Ձակատ ձեր. կացէք Երեշտակգ սպառազինեալ աստանօր. և մի ևս տայք այսօր զանձինս ձեր ի պատերազմ: Ջնդունելիւնք քաջաբար մըցանայ ձերոյ ի գտի անդ արդարութեան՝ հաւատարիմ գտան, և Հաճոյ Աստուծոյ: Որպէս ընկալայք, նոյնպէս ցուցիք յանձինս զքաջութիւն յաղթութեան: Այլ պատիժ պատուհասի խուժանդ նզովելոյ սպասեալ մնայ այլում ձեռին: Ոչ որա է վրէժխնդրութիւնն, և կամ նորա միայնոյ՝ որում ետուն: Ի մըցանս այսր աւուր չէն պէտք բազմութեան: Կացէք զուք աստանօր, և տեսէք զփրկութիւնն Աստուծոյ հեղեալ ինձ ի վերայ ամենայնի: Ոչ զձեզ անարգելոյն նորա, այլ զիս՝ որ տակաւին նախանձելի եմ յաչս նոցա: Ընդդէմ ինձ կարգեալ է ամենայն սատանութիւն նոցա, փոխանակ զի Հայրն յաւիտենական՝ որում վայել է գերագոյ արքայութիւն, և զօրութիւն, և փառք յերկինս, պատուեաց զիս ըստ Հաճութեան կամաց իւրոց: Ոչ ինքն

յանձնեաց ՚ի ձեռս իմ զպատակիսիք նոցա ։ Օ ի ըստ ցանկութեան իւրեանց մարտուցեալ ընդ իս ՚ի հանդէս մարտի՝ ծանիցեն, թէ ո՞է հզօրագոյն, նոքա՞ ամենեքեան ՚ի միասին, եթէ ես միայնակ ընդդէմ նոցա ։ Օ ի նոքա զամենայն ինչ չափեն ըստ զօրութեան ևեթ . և չունին ինչ փոյթ զայլմ առաւելութենէ գերազանցելոյն զնոքօք ։ Ա ան որոյ և ես ՚ի փորձ քաջութեան միայն զիջանիմ առ նոսա ։

Օ այսօրինակ բարբառեալ Որդւոյն՝ դարձոյց զաչս իւր յահագնահայեաց տեսիլ, և էարկ սրտմտութեամբ ՚ի վերայ Թշնամեացն ։ Յայնժամ փութանակի տարածեցին քառադէմքն զաստեղազարդ թևս իւրեանց յահեղ հովանաւորութիւն. և թաւալեցուցին զահագին անիւս կառաց նորա ՚ի հնչիւն իբրև հոսանաց ջուրց, կամ բազմամբոխ զօրաց ։ Վտիտաց նա չեշտակի ՚ի վերայ անօրէնն Թշնամեաց իւրոց իբրև ՚ի վերայ խաւարամած գիշերոյ ։ Ընդ փայլակնացայտ անուօք կառաց նորա հաստատմամբ երկինք առհասարակ սասանեցան՝ բայ յաթոռոյն Աստուծոյ ։ Այնժամ նա փութանակի առ նոսա՝ զինեալ զամբ իւր բիւրաւոր կայծակամբք . զրոս և արձակեալ ՚ի հեռաստանի՝ եհար զնոսա սրածութեամբ [28] ։ Յորմէ ահաբեկեալ նոցա՝ անդէն կորուսին զգօրութիւն իւրեանց, և լքան կործանեցան ։ Ապա նա հանդ կառաք ՚ի վերայ վահանաց, սաղաւարտից և սաղաւարտակիք գլխոց Աթոռոց և քաջամարտիկ Սրովբէից տապաստ անկելոց. որք ՚ի նմին ժամու ցանկային վերստին անկանելոյ լերանց ՚ի վերայ գլխոց նոցա՝ առ ՚ի լինել հովանի յերեսաց բար-

հուԹեան նորա ։ Այլ ոչինչ նուազ ԹօԹափեցան
՚ի վերայ նոցա յամենայն կողմանց կարկտահոս
նետք նորա ՚ի ջրից բազմաչէպ քառադիմաց , և
յանուագ կենդանեաց ։ Օ՚ի նայն հոգի էր՝ որ վա-
րեր զնոսա . և աչք իւրաքանչիւրոց ահագինս փայ-
լատակեալ՝ արկանէին ՚ի միջ նզովելոցն զհուրն
կորստական . որ և Թարշամեցոյց զզօրուԹիւն նո-
ցա . և եՀող զնոսա լքեալս , վհատեալս , վշտա-
գեալս և սպառեալս ։ Այլ նա ոչ եցոյց առ նո-
սա զզօրուԹիւն իւր Համբուն , այլ անդէն ՚ի կէս
Հարուածոյն կարձեաց զշանԹս իւր ։ Օ՚ի ոչ էին
նորա կամք բնաջինջ սատակել զնոսա , այլ միայն
տառապեցուել յերկնից ։ Այսին իրի կանգնեաց ըզ-
կործանեալսն . և վարեալ զնոսա զառաջեաւ ՚ի
Հարուածս փայլատականց իբրև զՀօրանս երկնա-
խաշանց և այծից՝ ահիւ և սպառնալեօք վտարեաց
զնոսա մինչև ՚ի սահմանս և ՚ի բիւրեղեան պա-
րիսպն երկնից ։ Այրդ ինքնին բացեալ լայնարձակ՝
Թաւալեցաւ ՚ի ներքին կողմն , և ետ նոցա ահա-
գին անցս ՚ի խորխորատն կորստեան ։ Այեղ տե-
սիլ նորա ընկրկեաց զնոսա յետս զարհուրանօք ,
այլ չարաչար ևս արհաւիրք Հարուածոյ ՚ի յե-
տուստ կողմանէ մղեցին զնոսա յայն կոյս ։ Այս
այնպէս գահավիժ հոսեցին զանձինս ՚ի վայր ՚ի
շրԹանց անտի երկնից ։ Խորբոքեալ սրտմտու-
Թիւնն յաւիտենական սնդեցաւ զկնի նոցա մինչև
՚ի խորխորատն անյատակ ։ Այուան դժոխք զան-
հնարին աղաղակ նոցա . և տեսին զերկինս կոր-
ծանեալ յերկնից ։ Այսին իրի և զահի Հարեալ՝
խնդրեին զփախուստ ։ Այայց Ձակատագիրն ան-
հրաժեշտ խորագոյնս արկեալ էր զխաւարային հի-

մանա նոցա, և քաջասիրտ եալ անլռեցանելի։ Ընդ կան նոքա յերկնից աւուրս լինի [29]։ Մանկեալ Ալէքն ընդ կործանումն նոցա, զի եաես յայնժամ տանուպատիկ խառնակութիւնս ի համատարած անիշխանութեան իւրում։ Ընդ այսպիսի կործանումն և խորտակումն եղեալ զնոսա։ Խաղեալ ապա դժոխոց զբերանս իւրեանց՝ ընկալան զնոսա միաձայն, և փակեցան վերստին. դժոխքդ ասեմ լցեալ անհնչ հրով, տուն վշտաց և աղետից, և արժանի բնակութիւն նոցին։ Ընդառեալ յայնժամ երկնից ի նոցանէ՝ ուրախ եղեն յանձինս. և անդրէն կարկատեցին զիարամատութիւն պարսպի իւրեանց՝ ոստի ի բաց Թաւալեցան։ Եւ Օծեալն յաղթող ինքնին՝ դարձոյց զյաղթական կառս իւր ի պնդելոյ զհետ Թշնամեաց։ Յայնժամ եղեն ընդ առաջ նորա յոբելինաւ ամենայն Աւրբք նորա՝ որք լռեցեալ ակնատես կային ամենազօր քաջութեան նորա։ Ի չուեալ նոցա ընդ հովանեաւ ոստոց արմաւենեաց՝ իւրաքանչիւր պայծառափայլ դասք նուագէին զերգս յաղթութեանց նորա. և զնա երգաբանէին Յաղթող Աբեքսայ, Որդի, Յառաջդ և Տէր. և ըստ իրաւանց իշխանութեանն միայն արժանաւոր ի Թագաւորել։ Այսօրինակ բարեբանեալ ի նոցանէ ընդ երկայնութիւն երկնից՝ հանց յաղթականաւ ի տաճար անդր Հօր իւրոյ ամենակալի՝ բազմեցաւ յաթոռ բարձրութեան. որ և ընկալաւ զնա ի փառսն՝ ուր արդ նստի ընդ աջմէ երանութեան [30]։

Ընդ սովին օրինակաւ ի համեմատութիւն բերեալ զերկնաւորս ընդ երկրաւորացդ՝ ծանուցի քեզ ի խնդրոյ քումմէ զանցս, զորս Թերևս ար-

ժան էր ճանկել ի մարդկանէ, զի լինիցին քեզ ի զգուշութիւն։ Օ՜ապստամբութիւնն ասեմ, և զպատերազմն ի մէջ հրեշտակային զօրութեանց. և զխորասոյզ կործանումն զխրոխտացելոցն՝ որք զլուխ ամբարձին ընդ Աստանայի։ Որ և արդ նա խանձեալ ընդ վնասակ քո՝ զամենայն հնարս հնարի առ ի խոտորեցուցանել և զքեզ ի հնազանդութենէ անտի. զի անկեալ յերանութենէ՝ բաւ ժամուրդ լեցիս ընդ նմա պատժոյ նորա՝ որ է թշնամութիւնն յաւիտենական։ Այլ ունել նորա զքեզ ընկեր աղետից իւրոց՝ հանդերձեալ է լինել միակ միխթարութիւն նորա, և քեզն վրէժուց՝ իբրև ի նախատինս Արարչին։ Արդ՝ զգոյշ լեր ի փորձանաց նորա. և զգուշացի՛ւս զ(Գնահանն քո՝ որ է տկարագոյն քան զքեզ։ Այլ ան ցեց սոսկալի հատուցմանն անհնազանդութեանն լիցի քեզ ի խրատ։ Ահարեկ եր նոցա կալ հաստատուն, բայց անկան։ Ցիշեա զայն, և երկիր ի պատուիրանազանցութենէ [31]։

# ԴՐԱԽՏ ԿՈՐՈՒՍԵԼՒ

ԳԻՐՔ Ե։

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Դարձեալ ի խնդրոյ Աբամայ պատմէ Որսկայիլ, թէ զնարգ, և չոյլ սակս առեղծուա աշխարհն ի սկզբանէ. և թէ զնարգ Աստուած զինի տարամերժելոյ չերկնից զԱստանայ և զերեշտակս նորա՝ չայանութեաց զկամս իւր ընդ արարածս թիւն նորոյ աշխարհի, և արարածոց ի նմա: Աւրաքն զԱրգի իւր փառաք և սպասաւարկութեամբ Հրեշտակաց և վեցօրեայ արարչութիւն: Երգաբանն Հրեշտակք զկատարումն նորին, և զանդրէն գարձ Որսոյն չերկինս:

# ԴՐԱԽՏ ԿՈՐՈՒՍԵՑԼՈՑ

## ԳԻՐՔ Ե։

Ի՛Չ յերկինից Աւրանիա[1], եթէ իրաւամբք կոչիս յայդ անուն. զի զնոսի աստուածային ձայնիդ խայտացայ ես՝ի վերոյ քան զլեառն Պղնձիական[2] անդը քան զԹռիչս Պեգասեան[3] Թևոց։ Այսպէս զմիտս քո, և ոչ զանունդ կարդամ՝ յօդնականու Թիւն. զի դու ոչ ես ննջեցողդն՝ի Վուսայս[4], և ոչ՝ի զաղաԹան բնակես նախնոյն Պղնձիայ[5]. այլ երկնածին պոլով մինչև եր երեւեալ լերանց, կամ՝ բղխեալ աղբերաց ջուրց, կայիր ընդ յաւիտենական իմաստուԹեան ընդ քումդ Հարազատի. և խնդայիր ընդ նմա առաջի Հօրն ամենակալի՝ որ հաճեցաւ ընդ երդ քո երկնային[6]։ Այև առաջնորդեալ՝ի վեր օտարս երկրային՝ համարձակ կեցոյց մնանել յերկինս երկնից. և անդ ձգեցեր զօդն լեռնական բարեխառնեալ՝ի քեն[7]։ Այս արդ նովին անեղական առաջնորդուԹեամբ զարձ ձա զնս անդրէն՝ի խնայարհ՝ի տարրն իմ բնական[8]. զուցէ՝ի վայր ընկեցեալ՝ի Թևաւոր, յօդատարիկ և յանսանձ երխարէն[9] որպէս երբեմն Ա-

զերեփան [10] ի ստորին նահանգէ, անկանիցիմ ի դաշտն Ասկեան [11]. և անդ մոլորեալ չորիցիմ առանց օգնականի։ Օ՛ի տակաւին կէտն երգոյս ինձ աներգ, թէպէտև անձկագոյնս սահմանեալ յերևելի պարունակն օրական [12]։ Վանդի կացեալ յերկրի, և ոչ անդր քան զլեառն [13] սլացեալ՝ երեկեմ յաւէտ աներկեան ի ձայն մահկանացուացս՝ ոչ կերկերեալ, և ոչ անմուռունչ, թէպէտև վիճակեալ աւուր չարի, և լեզուաց չարաց [14]. և պահարեալ յերեսաց վտանգաց ի խաւարի անդ, և յամպրութեան ի մարդկանէ [15]։ Ապակոյն ոչ եմ միայն յայց առնել քո իմում գիշերային հանգստեան, և ի ծերանազգեստ զարդարել առաւօտու զելս արևու։ Ասդ՝ ով Աբրանիա՝ դու ինքնին յարմարեա զնուագն իմ, և գիտ զունկնդիրս ըստ արժանեաց՝ թէպէտև նուազունս։ Ասյ ի բայց արա գիտդժական և գիտառնաձայն աղաղակն Աիոնիսեայ [16], և գիտրախնամակցայ նորա, գվայրագ ասեմ խուժանին՝ որք գիշատեցին ի Հռոդովը [17] գնահին բանաստեղծն Աբրահեան [18]. ուր անտառք և քարաժայռք կային յունկնդրութիւն՝ զմայլեալք ընդ քաղցրութիւն երգոյ նորա. մինչև աղաղակն խուժադուժ հեղձոյց միանգամայն զքնար նորա և զձայն։ Նա Աստուած [19] չեղև ձեռնհաս հասանել յօգնութիւն խրատուն սրտից։ Ասդ՝ մի Թողուր սովին օրհնակաւ զապերասիկս առ քեզ. գի դու ես երկնային, իսկ նա երազ անտեսաց [20]։

Ազէ ասա Աստուածուհիդ զորս են ըստ կարգի՝ գինի զգուշացուցանելոյ Ասփայելի մարգահարի Հրեշտակի գԱդամ սսկալի օրհնականն որ

*էանց յերկինս ընդ ապստամբեան , անձնասպան լինել յանհնազանդութենէ , զուցէ գնամանն բերցեն յանձինս ի դրախտի անդ Ադամ և որդիք նո՛ա՝ որոց տուաւ հրամանն չերձենալ ի ծառն արգելեալ յանցանել անդ և ի ստուգանալ միոյ միոյ նոյ պատուիրանին՝ որ էր այնչափ դիւրաստար յիշխանութեան անդ ընտրութեան այլ ամենայն ձա՛շակաց լաստ քանց ։*

*Այսաւ Ադամ մտադիւր ընդ կողակցի իւրում Եւային զգաստութենէն հրեշտակին . և լցաւ վհատմամբ և խորին խորհրդով ի լսել անդ զայնպիսի ահագին անցս ի վեր քան զվիտս իւր . որպիսի էր ձշնամութենէն յերկինս , և մարտ պատերազմի անհնարին խաւարութեամբ առընթեր խաղաղութեանն Աստուծոյ յերանութեան անդ ։ Ոչայց չաւ ընկն ի բաց մերժեալ անտի փութանակի՝ յորդեալ գեղեալ ելեալ էին ի վերայ նոցա , յորոց ընկալեալ էին զծագումն . զի անհնար էր նոցին կալ ընդ երանութեան ։ Այն որոյ և Ադամ եբարձ ի մտաց իւրոց զտարակուսանսն՝ զոր ունէր ընդ այն ։ Եւ ապա անմեղ գոլով տակաւին , ձգեալ ի տենչանաց անտի պիտելոյ զորս ի մծոյ Հայէնն ի նա , այսինքն Ե՛ք զկարդ ստեղծաւ զառաջինն երեւելի աշխարհս , յորմէ ժամանակի , յումմէ , և յոյր սակս . և զինչ ինչ դործեցան ի նեղըս կամ արտաքոյ Եդեմայ յառաջ քան զժամանակ իւր . որպէս զի՝ որ տակաւին անշէջ ունելով զզգաստութիւն իւր , արձակէ զսէր ի հոսանս պետին՝ որոյ կարկաջահոս ձայնք յաւէտ իմն զարթուցանեն զծարաւ նորա , այնպէս սկսաւ նա հարցանել զՀիւր իւր երկնային սովին բանիւ ։*

Օ՜ մեծամեծս, զզարմանալիս մերոյ լսելեաց, և զկարի ի՞ն օտարոտիս յաշխարհէ աստի ծանուցեր մեզ Յարգմանդ աստուածային՝ առաքեալ շնորհօք ի հրեղէն երկնից ի խոնարհ ազգ առնել մեզ յառաջագոյն զայնմանէ՝ որ անծանօթ գոլով առ ի մէնջ, և անդր քան զմարդկայինս գիտութիւն, մնար էր նմա Թերևս պատճառ լինել մերումն կորստեան։ Այլ իբրև յաւերժական շնորհս խոստովանիմք վերնականաւ բարութեանն, և զպզ գեցութիւն նորա ընդունիմք հաստատութեամբ մտաց՝ առ ի կարող լինելոյ պահել անշարժ զվէրն կան նորա, որ է նպատակ մերումն կենաց։ Այլ քանզի ի վարդապետութիւն մեր հաձեցար մարդասիրապէս հաղորդել մեզ զգեր ի վերոյ մտաց երկրաւորաց, բայց ընդ նմին և կարևորս մերումն գիտութեան՝ որպէս կամք եղեն վերինն խնամոտութեանն, արդ՝ հաձեայ ընկանել ի խոնարհ հոգոյս, և պատմել մեզ զորս Թերևս առաւել պիտանի են մերումն գիտութեան, Թէ զինարդ և ընդ սկզբանէ երկինք՝[21] զոր տեսանեմք այնչափ ի բացեայ ի մէնջ, և պճնազարդեալ անթիւ բազմութեամբ լուսաւորացն՝ որք շարժին։ Այն պէս և օգս շրջապատ, որ համայնածաւալ սրսռեալ, և փարեալ զծաղկազարդ երկրաւս՝ տեղի տայ, և ընդ զամենայն վայրս։ Յումմէ շարժեցաւ Այրարիչն ի սրբութեան անդ խրատուն յաւերժական հանգստեան յօրինել անագան ուրեմն զհինաւածս ի Այ հի անդ խառնակութեան[22]. և զնարդ հինութիւնն Էառ փութանակի զվախճան։ Այնպէս Թէ չիցէ քեզ արգելեալ յայսմանէ գիտութիւն սոցին, զոր հարցանեմք մեք՝ ոչ ի հետազօտու-

Թիւն գաղտնեաց յաւիտենական իշխանութեան
նորա, այլ յառաւելութիւն փառաց նորա ըստ
չափոյ մերոյն պիտութեան: Եւ երկայնութիւն
լուսոյ տունջեանս՝ Թէպէտև յինջս է՛ի խոնարհ,
սակայն տակաւին ունի հատանել զերկայնաձիգ
ընթացս Հանապազորհի: Որ և անապատել քումդ
հրամանի՝ կացցէ կախեալ ընդ երկինս. և անա-
պանեսցի ընդ երկար առ՛ի լսել՛ի քէն զպատ-
մութիւն իւրումն ծննդեան, և զծագման արարած
ծոց՛ի խորոց անտի աներևութից: Զպատ երեւ
աստղն երեկոյի [23] և լուսինն փութասցին յանն-
դրութիւն քանից քոց, զիշերն ընդ իւր ածցէ
զլռութիւնն. և քնոյն անապատել քեզ՝ կացցէ
յարթմնի, և մեզ իսկ մարթ է հրամանս տալ նմին
մեկնել՛ի քաց միտչէ ցաւարտումն երջոյդ: Եւ
այնպէս ապա թողցուք զքեզ՝ միտչէ է ծագեալ
առաւօտու:

Օ՜այսօրինակ աղաչեաց Զդամ զհիւր իւր մե-
ծարու: Եւ Հրեշտակն աստուածախոսեալ ետ նմա
քաղցրութեամբ զայս պատասխանի: Նկատ և
զայդ ևս քո խնդիր՝ զոր հարցեր զդուշութեամբ:
Զի՞ր քան կամ լեզու սրտվէպական բաւական
իցէ՛ի պատմել զգործս Վհնոկայելին, և ո՞ր միաք
մարդոյ՛ի հասանել: Սակայն ոչ արգելցի՛ի լսե-
լեաց քոց ոչ ինչ միանգամ դիւրահաս է քեզ,
և ձեռնտու՛ի փառաւորութիւն Զորչապետին,
և յառաւելութիւն երջանկութեան քումդ ան-
ձին: Օ՜այս պատուէր ընկալայ ես՛ի վերուստ,
ևսել զփափաք քումդ պիտութեան ըստ չափու:
Զդ՝ զդո՛ւշ լեր՛ի խնդրելոյ զառաւելագոյնն, և
մի խաստանալ քումդ իմաստութեան զանչափելին

զայս՝ զոր անբևեռքի և միայն առնիմաստ արքայն երկնից Թագոյց ՚ի պիշերի [24]. և ոչ հաղորդեաց ումեք յերկրի կամ յերկինս։ Սակայն և այնպէս զըստ բաւականին եթող քեզ խնդրել և իմանալ։ Բայց պիտութիւնն կերակուր լինի է, և պէտս ունի ոչ փոքու բարեխառնութեան իւրումն ախորժակի ՚ի պիտել անդ և ՚ի չափել՝ թէ զինչ լինչ մարթի է մտացն տանել անվնաս։ Այս թէ ոչ՝ անչափութիւնն ծանրացուցանէ զնա, և խանգուրթիւնն վազվազակի փոխի յանմտութիւն՝ որ պէտս կերակուրն ՚ի փուքս։

Բդ՝ ծանիր։ Օգնի անկանելոյ յերկնից Բրուսեկին [25] (յայս անուն կոչեա զնա՝ որ երբեմն առաւել պայծառ էր ՚ի զօրս հրեշտակաց քան զայդ աստղ ՚ի մէջ լուսաւորաց) բոցանշոյլ լեզուն օձն հանդերձ ՚ի պատրաստեալ տեղի իւր յանդունդս, և զինի վերստին դարձի Պատուածողն աս Հայր իւր յաղթականօքն Սրբովք՝ և տես Պհնակալ յաւիտենականն զգաստութիւն նոցա յաթոռոյ իւրմէ. և զայսօրինակ խոսեցաւ ընդ Որդւոյ իւրում՝ միածնի։

Պպաքէն վերկալ գտաւ նախանձաբեկ թշնամին՝ որ ապստամբս հանդերձ զամենեսին ըստ իւրումն օրինակի։ Եդեալ էր նորա ՚ի մեի նոցունց օգնականութեամբ առնուլ զայս բարձրագոյն գերակայ անմատոյց՝ զաթոռ աստուածութեանս, և ընկենուլ զմեզ աստի։ Այն որոյ և պատրեալ էարկ ընդ իւր ՚ի կործանումն զգաստութեան՝ որոյ տեղիք թափուր մնային աստանօր։ Սակայն տակաւին տեսանեմ զառաւելագոյն մասն ՚ի նոցանէ առնել զկայանս իւրեանց։ Երկինք տակաւին լի են

բնակչօք, և ունին զբաղմունքիւն ըստ բաւակա-
նին առ ունելոյ զթաղաւորութիւն իւրեանց՝ թէ
պէտև ընդարձակագոյն սահմանաւ, և մատչել
ստէպ յայս տաճար բարձրութեան՝ ի հանդէս
պաշտաման ըստ օրինի: Այլ զի մի բարձրասցի
սիրտ Թշնամւոյն ընդ ինեան՝ զոր արար, և ան-
մտութեան խորհրդով կարծիցէ, թէ ամայի կա-
ցուցեալ եցէ զերկինս ի բնակչաց անտի, կամիմ
զարման մատուցանել ինառուն. և այդ լինի ի նա-
խատինս կորուսելոյն ինքնին: Արարչագործեցից
միւս և աշխարհ, և հանից զբազմութիւն սերն-
դոց ի միոյ մարդոյ առ ի բնակել ի նմա, և ոչ
սատանօր: Մինչև ելեալ նոցա ընդ աստիճանս
Հղնութեանց, և ընտիր գտեալ յերկարաժամա-
նակեայ հանդիսի հնազանդութեան՝ բացցեն տալ
զձանապարհ իւրեանց ի բարձունս: Եւ յայնժամ
երկիր փոխեսցի յերկինս, և երկինք յերկիր. և
գոյ մի թագաւորութիւն, խնդութիւն և միա-
բանութիւն անվախձան: Մինչև գայն վայր [20]
րութիւնդ երկնից բնակեցէք դուք յընդարձա-
կութեան անդ սահմանաց ձերոց: Ասէ դու Ծանդ
իմ և Աստուածն Ոդմի՝ քո՛ կատարեցից զայդ ամե-
նայն: Այս, և եղիցին: [21] Հոգի իմ հովանաւոր,
և զօրութիւն իմ առաքեցից ընդ քեզ [26]: Ա՛րդ,
և հրամայն տուր անսահման անդնդոց, զի յա-
ռանձին սահմանս նորա լցցին երկինք և երկիր.
զի ես եմ որ ընտրեմ զանբաւութիւնն, և չինք տե-
ղի Թափուր յինէն. Թէպէտև մեկուսացեալ ան-
պարագրելի անձամբս՝ ոչ ցուցանեմ զինքնիշխան
բարութիւնն իմ: Ջարկ և դիպուած չունիմ առ
ի ստեղծ. և կամքն իմ է գործ կատարեալ:

Օ՜յսօրինակ բարբառեցաւ Ա՛ստուածորդին. և Ման նորա Աստուածորդին յաւել զարդիւնս ընդ բանս նորա։ Օ՜ի միամտական են գործքն Աստուծոյ, և երագագոյն քան զժամանակ և զարժուն. բայց անհնար է նոցա անցանել ընդ լսելիս մարդոյ առանց կարգի բանից պատմութեան, և այն՝ ըստ տանելոյ մտաց երկրաւորաց։ Անդէս ուրախութեան, և խնդութիւն մեծ ցուցաւ յերկինս՝ այն ինչ սուիցն օրինակաւ ծանուցաւ երկնաւորաց յայտնութիւն կամաց Հարձրելոյն։ Փառս երկեցին նմա՝ ի բարձունս, հաճութիւն ընդ հանդերձեալ ծնունդս մարդկան, և խաղաղութիւն՝ ի բնակութեան նոցա [27]։ Փառս նմա՝ որ արդարացոյց վերաժխնդրութեամբ մերժեաց զամբարիշտս յերեսաց իւրոց, և՝ ի բնակութեանց արդարոց։ Փառս և օրհնութիւնս նմա՝ որ խնամատարութեամբ իւրով սահմանեաց յառաջ ածել զարդիս՝ ի չարեաց անտի. և փոխանակ հոգւոյն չարաց կարդել՝ ի թափուր տեղիս նոցա զընտիր ծնունդս մարդկան. և սիրել զարարութիւն իւր ընդ աշխարհս, և ընդ դարս անվախճան։

Օ՜յսօրինակ երգեցին քահանայապետութիւնք Երեշտակաց։ Յայնմ վայրի հանդերձեցաւ Արդին Աստուծոյ յարարչութիւնն մեծահրաշ՝ աճել ընդ մէջ զամենակալ զօրութիւնն, և լուսաճառագայթ պսակեալ աստուածային մեծվայելչութեամբ։ Խնամատարութիւն և սէր անսահման, և Հայր նորա գլխովին արտափայլեալ ցուցան յերեսս նորա։ Օ՜ եղան պատեցան զկառս նորա անհամար բազմութիւնք Վրովբէից և Սերովբէից, Իշխանութեանց և Աթոռոց և Օ՜ծութեանց՝

հոգւոց Թևազղեսակ, և կառաց Թևակրաց ՚ի գինարանէն Աստուծոյ՝ յորում կային բիւրաւորք ամբարեալք ՚ի յաւիտենից ընդ մէջ երկոցունց պղնձի լերանց՝ [28] կազմ և պատրաստական երկնային հանդերձանօք ՚ի սակս աւուրն երեսելոյ։ Յառաջ խաղացին նոքա ինքնաշարժ, զի հոգին յուզարկաւոր Տեառն իբրեանց կենդանի էր ՚ի նոսա։ Եւ երկինք բացին լայնարձակ գյաւիտենական դրունս իբրեանց՝ որք հնչեցուցանէին ըզձայն երաժշտական ՚ի վերայ ոսկեղէն ծղինեաց. և Տէրն անցս Մադաւորին փառաց՝ որ ՚ի բան զօրութեան իւրոյ և ՚ի հոգի՝ երթայր յարարչութիւն նորոյ աշխարհի։ Հասեալ նոցա ՚ի սահմանս երկնից՝ զկայ առն անդանօր. և տեսին յեղերայ անտի զանչափութիւն համատարած անդնդոցն՝ [29] որ էր իբրև գծով ապականապործ, խաւարամած, ահարկու և ամեհի։ ՚Ի յատակէ իւրմէ ջրջեալ կայր ՚ի վեր անհնարին հողմոյն բռնութեամբ. և բարձրացեալ ՚ի լեռնաձև կոհակս՝ կամէր յարձակել ՚ի բարձունս երկնից, և խառնակել զերեսեան ընդ կենդրոնի։

Մադաւրեայքն՝ ասաց յայնժամ Աստն առնեա առեղծ, ամբոխեալ ալիքդ, և անդունդքդ հանդարտեալ՝ վախճան տուք ձերումդ խռովութեան։ Այլ ոչ գտեալ էառ անդէն, այլ ամբարձեալ ՚ի թեւս Վերոյլեից՝ դիմեաց հայրական կառաց ՚ի խորս Ա հի, և անծին աշխարհի [30]։ Եւ համօրէն սպասահարկուք նորա պայծառափայլ հանդիսիւ չոգան զկնի նորա ՚ի տեսիլ արարչագործութեան, և սքանչելեաց զօրութեան նորա։ Եւ անդ կանգնեցան կացին եռանդագին անիւք կառաց նորա։

Եւ նա էառ ի ձեռին իւրում զկարկինն ոսկի՝ որ էր պատրաստեալ ի մշակելիսն շահմարանին Աստուծոյ, առ ի գծագրել նովաւ զընդհանուր տիեզերս, և զհամօրէն արարածս։ Օ՜ի ոտն նո֊ ա֊ սայ. Յայս վայր ով աշխարհ ձգեսցի ընդարձա֊ կութիւն քո. այս լեռին քո սահմանք, և այս շըր֊ ջապատ քո արդարասէր։ Ահա սովին օրինակաւ արար Աստուած զերկինս, նոյնպէս և զերկիր ան֊ կերպարան և անզարդ. զի խաւար խոր ծածկէր յայնժամ զանդունդս։ Եւ Հոգին Աստուծոյ տարածեալ զտածողական ձեւս իւր ի վերայ ջուրցն հանդարտութեան, և հեղեալ զկենդանա֊ կան զօրութիւն իւր և զջերմութիւն ի վանդուա֊ ծըն ողջոյն հոսանուտ՝ մղեաց ի խոնարհ զպրտա֊ գին, զթանձրամած, զտարտարոսական և զնիւ֊ ութակար մասունս նորա։ Եւ ապա ձուլեալ գնատ֊ ցոյց զնմանին ընդ միմեանս։ Ոսկ ինայեալ մա֊ սունքն խոյս էառնն յայլևայլ տեղիս, և օդն հիւ֊ սեցաւ ընդ ամէնսոցա։ Եւ այնպէս երկիրն ի հա֊ աստարակշռութիւն բերեալ՝ կախեցաւ զկենդրո֊ նի իւրմէ [32]։

Եւ յայնժամ ասաց Աստուած. Լինիցի լոյս։ Եւ ահա անդէն վաղվաղակի էլ ի խորոց անտի լոյն եթերական, առաջինն ամենայն արարածոց, և մաքուր գոյացութիւն հինգերորդ։ Որով անդա֊ տին յելից իւրոց սկսաւ առնել ձանապարհ ընդ խաւարն օդային՝ գնատցեալ յամպ լուսատպա֊ ծառ, զի դեռ ոչ գոյր արեգակն։ Եւ եկաց նովին օրինակաւ ի տապանակի անդ ամպոյն։ Եւ եառ

Աստուած զլոյս, զի բարի էր. և բաժանեաց զլոյս
՝ի ձեռն կիսագնդոյն ՝ի խաւարէ անտի: Եւ կո-
չեաց զլոյսն տիւ, և զխաւարն գիշեր: Եղիցի երեկո
նակատ առաջինն օրն եղև երեկոյ և վաղորդայն:
Այլ երկնայնոցն դասք ոչ թողին զլոյս առանց եր-
գոյ օրհնաբանութեան, զի տեսին զնախկին ծա-
գումն լուսոյն ՝ի խաւարէ՝ զօր ծննդեան երկնից և
երկրի: ՝Ի բարձր բարբառ ցնծութեան լցին զկա-
մարն սիեզերական, և ՝ի հնչման ոսկի քնարաց
օրհնեցին զԱստուած, և զարարածս նորա: Եւ
յերգաբանութեան անդ քարոզեցին զՏէր՝ արա
րիչ առաջին երեկոյի և վաղորդայնի:

Այսաց դարձեալ Աստուած. Եղիցի հաստատու
թիւն ՝ի մէջ ջուրց յանջրպետութիւն ՝ի միմեանց:
Եւ արար Աստուած զհաստատութիւնն երկնից՝
տարածեալ զլոյն ՝ի հոսանուտ ջինջ և թափան-
ցիկ՝ յօդ տարրական, և սիրեալ շուրջանակի
մինչև ՝ի վերջին էամարն սիեզերական: Ընդլայն
տութիւն հաստատուն և աներկեւան ՝ի բաժանել
անդ զվերին ջուրսն ՝ի ներքինոց: Ո՛չ որպէս զերե
կիր, նոյնպէս և զսիեզերս հաստատեաց նա ՝ի վե
րայ հանդարտութեան համատարած ջուրց ՝ի բիւ
րեղեանն Ովկիանոս [33]: Եւ մեկնեալ հեռացոյց
զնա ՝ի խառնակութենէ Ովկեան [34], զուցէ յատա
կիկ սահմանք նորա խանգարեցուն զկարգութիւն
նորա համօրէն: Եւ կոչեաց զհաստատութիւնն
երկին: Եւ նոյնպէս յերեկոյին և ՝ի վաղորդայն
երգեցին դասք երկնայնոց զօրն երկրորդ:

Եւ թէպէտ ստեղծեալ էր երկիր, այլ տակա
ւին իբրև զաւազն անկերպարան փակեալ յորո-
վայնի ջուրց՝ ոչ երևէր · զի Ովկիանոս համատա

րած [35] պատեալ ունէր զամենայն երեսս նորա ։ Ա-
ապա ոչ վայրապար , այլ ՚ի կակղացուցանել ըզ-
գունա նորա՝ ջերմ և բեղնաւոր հիւթովն իւրով ,
և ՚ի պատրաստել ՚ի յղութիւն զմայրն մեծ՝ [36]
լցեալ զնա ծննդական խոնաւութեամբ ։ Յայն-
ժամ ասաց Աստուած . Ածողվեսցին ջուրքդ որ ՚ի
ներքոյ երկնից ՚ի տեղի մի , և երևեսցի ցամաքն ։
Եւ ա՛հա անդէն ՚ի վեր երևեալ լայնանիստ լե-
ռունդ՝ կանգնեցան կացին ։ Ծովուընք նոցա հոլա-
նի և լայնատարած ամբառնային յամպս . և գագա-
թունք նոցա ժամանէին ՚ի հաստատութիւնն երկ-
նից ։ Այլ ըստ չափոյ բարձրութեանն ստորոտք
նոցա սուզեցան ՚ի խորս . և յօրինեցին լայն և
ընդարձակ խորխորատ ՚ի քաջադէպ ընդունարան
ջուրց ։ Ուրք և անդէն վաղվաղակի պիտեցին անդր
խնդագին հոսանօք , հոլովեալ իբրև զչինթս գրն-
տակացեալ ՚ի վերայ հողոյ ։ Յորոց և մանն ինչ
առ ուժգին յարձակմանն ամբարձաւ ՚ի բիւրե-
ղեան պարիսպ [37], և կանգնեցաւ բարձրաբերձ ։
Այսպիսի թռիչս ազդեաց յերագընթաց հեղեղդ
հրամանն վերնոյն ։ Զորօրինակ ՚ի ձայն փողոյ հա-
մահաւաքին զօրք (որպէս լուար զերկնայնոցն յա-
ռաջագոյն ) ընդ դրօշակաւ իւրեանց , նոյնպէս և
ջուրցն կուտակութիւն մէտ առ մէտ թաւալմամբ
ամիսփռեցաւ ՚ի տեղին՝ զոր եզիտ . ընդ գիւր հե-
ղիկ խաղացեալ , և ընդ զառ ՚ի վեր մղեալ բըռ-
նութեամբ հոսանաց ։ Եւ ոչ լերինք կամ քարա-
ժայռք զդէմ կալան նոցա ։ Այն որոյ յածեալ
նոցա ընդ երկիրս , կամ ընդ ոլորտապտոյտ և եր-
կայնաձիգ շրջանս ՚ի վերայ երկրի՝ հատին զձա-
նապարհ իւրեանց . և գիւրագոյն ևս , և խորին

ընդ տղմուտս՝ մինչեւ եր հրամանն տուեալ Յատու-
ծոյ երկրի ցամաքիլ ողջոյն, բայց ի վայրսն ընդ-
ամէնք եղերաց՝ յորս գնան այժմ պետք, և ձգեն զինն
իւրեանց զնոսաւ ուղեկցութիւնն միանձնաւորք[38]:
Ո ցամաքն կոչեաց նա երկիր, և զընդունարանն
ամենայն ջրոյն հաւաքման ծովս: Եւ ետես, զի բարի
եր: Եւ յաւել ասել· Աղեհեցէ երկիր զբան-
ջար, խոտ սերմանելի, և ծառ պտղաբեր ըստ
ազգի իւրում՝ որոյ սերմն իցէ ի նմա ի վերոյ
երկրի: Ինչեւ եր նորա աւարտեալ զբանն,
ահա երկիրն հոլանի ցայն վայր ամենայն, անբերրի,
և անպարդ, բուսոյց զխոտ. որոյ գալարութիւն
ծածկեաց զհամօրէն երեսս երկրի ի պէղ գուար-
ձալի: Յայնժամ զամենայն բոյս սաղարթաբեր·
որք ծաղկեցան յանկարծակի՝ բացեալ զբազմա-
դունեան երանգս իւրեանց. և բերկրեցուցին
զծոց նորա ի հոտ անուշից: Ձև եր փթթեալ նո-
ցա, և ահա ծաղկեցաւ որթն՝ ողկուզացեալ բազ-
մախիտ: Ոսղոսկեալ սիւեցաւ դդմենին քաղցրա-
հոտ: Ծղօտն հասկաթուռ ձակատեալ կանգնե-
ցաւ յանդի իւրում: Եւ խոնարհագոյն թուփք և
մացառք ելին ի վեր գանգրահեր և գիսախուխ:
Հուսկ յետոյ կանգնեցան կացին շքեղապանծ ծա-
ռատունկք զոտեցս ի հանդէս կաքաւու. և սերմ-
ռեալ տարածեցին զոստս իւրեանց՝ որք առկա-
խեալ էին բազմառատ պտղովք. և կամ՝ սերմօք
զարդարեցին զծաղիկս իւրեանց: Եւ երինք պտա-
կեցան բարձրադագաթն անտառովք, հովիտք
անկօք, աղբերակունք կողմանոցօք, և գետք եր-
կայնաձիգ ափամբք: Յայնժամ երկիր նմանատիպ
ցուցաւ երկնից, տեղի արժանաւոյեղուզ Յատուա-

ծոյ՝ ի բնակութիւն, ի զուարճութիւն, և ի զբօսանս ընդ հովանեաւ սրբութեան։ Այլ թէպէտ ոչ էր տեղացեալ Աստուծոյ, և չէր մարդ՝ որ գործէր զերկիր, սակայն գոլորշի ելանէր յերկրէ յօդագին, և ոռոգանէր զամենայն երեսս երկրի, և զբոյս դաշտի՝ զորս արար Աստուած մինչչև լեալ էին ի վերայ երկրի, և զամենայն բանջարս՝ մինչչև բուսեալ էին ի յօդուն դաշտի։ Այլ ետես Աստուած, զի բարի էր։ Այլ այնպէս երեկոյն և վաղորդայն հնգերորդ օրն երրորդ։

Ասաց դարձեալ Աստուածն։ Արկցին ջուրք ի ժողով մի ի վերնագաւառս երկնից՝ յանջրպետութիւն տունջեան և դիշերոյ։ Այլ եղիցին ի նշանս եղանակաց, և յաւուրս, և ի տոլորումն տարեաց։ Այլ կացցեն ի պաշտամանն՝ յոր կարգեցի զնոսա ի հաստատութեան երկնից, լինել լուսատուս յերկիր։ Այլ եղև այնպէս։ Այլ արար Աստուած զերկուս լուսաւորս մեծամեծս. և էն նոքա մեծամեծք ըստ կարևոր պիտոյիցն՝ զոր ընծայեն մարդոյ։ Մեծագոյնն յիշխանութիւն տունջեան, և փոքրն յիշխանութիւն դիշերոյ՝ փոխանակեալ զիմիեանս։ Այլ արար և զաստեղս, և կարգեաց զնոսա ի հաստատութեան երկնից ի լուսաւորութիւն երկրի, և իշխել փոխանակաւ տունջեան և դիշերոյ, և անջրպետել զլոյսն ի խաւարէ։ Այլ հայեցեալ Աստուածոյ յերևելին արարածս իւր՝ եւ տես զնոսա, զի էին բարի։ Վասնզի ի մարմնոյ անտի երկնաւորաց ստեղծ նա զառաջինն զարեգական՝ զգուշանն ընդարձակատարը. որ էր անլոյս ի սկզբան անդ, Թէպէտև կազմեալ յերեքեակն

նևեթայ . ասա զլսանն ՚ի ձև սկաւառակի . և ա-
պա զաստեղս ըստ այլևայլ մեծութեան իւրեանց ։
Այլ մեք այնորիկ առեալ ՚ի լուսոյ անտի զմեծա-
գոյն մասն՝ փոխադրեաց զայն յամպեղէնն տապա-
նակին , և եդ ՚ի գնալ անդ արեգական ։ Զոր և
կազմեաց ծակոտկէնն առ ՚ի կարող լինելոյ ընդու-
նել և ձգել ՚ի նեբքս զլոյսն հոսանուստ . և հաս-
տատուն ևս՝ առ ունելոյ լինքեան զհաւաքումն
ձառագայթիցն նորա . որով է նա այժմ աքանչելա-
պայծառ տաճար լուսոյ ։ Զնդր իբրև առ աղբիւր
իւրեանց ընթանան այլք յաստեղաց , և ձգեն ըզ-
լոյս յոսկի սափորս իւրեանց . և նովաւ մնլորակն
առաւօտու [39] համակէ յոսկի զմահիկս իւր ։ Զա-
ւուտ մեծացուցանէն աստեղք ՚ի փայլումն գունոյ
կամ ՚ի ցոլացումն զփոքրկութիւն իւրեանց , և
երևելն մարդկեղէնն աչաց յանչափ հեռաւորութե-
նէ իւրեանց ։ Զառաջինն ևս իւր երևեցաւ
ջահն մեծապայծառ յիշմանութիւն տունջեան .
և ապա զՅորիզոնն ողջոյն զարդարեաց շուրջա-
նակի լուսափայլ ձառագայթիւքն իւրովք , յըն-
թանալ անդ խնդագին զերկայնութիւն արահետ
ճանապարհին երկնից ։ Զլուսեղէն ազօտափայլ ,
և Հազմաստեղք [40] պարս բոլորեցին զառաջեաւ
նորա՝ արկեալ սիրուս զհոսանս քաղցրութեան ։
Զուսինն՝ թեպետ նաւազ ունէր զլուսափայլե-
թիւն իւր , բայց կարգեալ էր յարևմտեաս հայե-
լի ՚ի հանդիպոյ նորա . և առնոյր յանօթ ՚ի նմա-
նէ զլոյս իւր լնապատար երեսօք . զի յայն հայեց-
ուած ոչ կարօտանայր նա այլեւս լուսոյ . և տա-
կաւին ունէր զհեռաւորութիւն իւր միւսէ ՚ի մե-
ծէս զիւրեանց ։ Այլ ասա փայլէր նա փոխանակաւ

յարևելս՝ շրջան առեալ ՚ի վերայ քաջապինդ ա-
ռանցից երկնից , և կալեալ զառանձին իշխանու-
թիւն փոքրագոյն լուսաւորօք՝ բիւրաւոր աստե-
ղօք , որք յայնմ պահու Թուխին պաճնազարդել
զկիսագունան նշուլափայլ վահանակօք [41] : Յայն
ժամ զառաջինն շքեղազարդեալ զուարթագոյն
երեկոյի և վաղորդայնի պայծառափայլ լուսաւո-
րօքն յելս և ՚ի մուտս իւրեանց՝ պսակեցին զօրն
ջորդոյ :

Եւ ասաց դարձեալ Աստուած . Հանգիցեն ջուրք
զկայսաուս՝ շունչ կենդանի բազմաբեղուն սեր-
մամբ : Եւ հաւք թռիչս առցեն ՚ի վերոյ քան զեր-
կիր, և տարածեսցեն զթև իւրեանց սաւառնեալք
՚ի հաստատութեան երկնից : Եւ ստեղծ Աստ-
ուած զկետս մեծամեծս , զամենայն շունչ կենդա-
նի , և զամենայն կայսաուս՝ որք հանին ջուրք բազ-
մաբեղուն առատութեամբ ըստ ազգի իւրեանց :
Եւ զամենայն թռչուն թևաւոր ըստ ազգի : Եւ
եահս , զի բարի են : Եւ օրհնեաց զնոսա , և ա-
սաց . Աճեցէք և բազմացարուք , և լցէք զջուրսդ
որ ՚ի ծովս , և ՚ի լճս , և ՚ի հոսանս գետոց : Եւ
թռչունքդ բազմասցին ՚ի վերայ երկրի : Եւ ահա
անդէն վազվազակի լցան խորութիւնք ջուրց , և
համօրէն զոգք կամ խորշք ծովու բազմառատ սեր-
մամբ , և խուռն բազմութեամբ ձկանց՝ որք մի-
անգամ լողան ընդ կապուտակ ալեօքն ՚ի թիւս ,
կամ ՚ի փայլուն պատեանս : Ոմանց և բազում անդ
գամ անհամար բազմութեամբ խռնեալ ՚ի ծովս՝
զիսնան իբրև զաւազակոյտ : Ոմանք ՚ի նոցանէ
առանձինն կամ ՚ի միասին ձաղակեին զծովասէզ
զարօտ իւրեանց , և շրջեին արօտական ընդ ան-

տառս բստոյ ։ Ամենք Թինդս առեալ խայտանօք՝ յանդիման առնէին արեգական զկոհակափայլ և զսակեհուռն պատմուճանս իւրեանց ։ Այլք հան դուցեալ ՚ի դաղտակրայս իւրեանց՝ սպասեալ ինային ցօղային պարենի ։ Այս կէսք քաջակուռս զինեալ՝ որսային ընդ ժայռիւք զկարևոր սկաս իւրեանց ։ Ակ լերեաս հարթայատակ ջուրց խըն դալից խաղային փոկք, և կորաբամակ դլխիկք ։ Ա իմխարիք ամենք ՚ի նոցանէ անհեթեթ թառալ մանր ահագնս մըրկէին զվկիանոս ։ Ընդ Լիսա Թան անառի քան զամենայն կենդանիս տարա ծեալ իբրև զբարձրաւանդակ ծովու՝ ննջէր ։ և կամ լողայր իբրև զերկիր շարժական ։ Ընդ փեղ կըս դլխոյ իւրոյ ձգէր ՚ի ներքս զծոփն, և ընդ կըն ձիճ իւր սրսկէր արտաքս ։ Յայնմ վայրի և խո ռոչք ժայռից, և ձահիճք, և գետեղերք առ հա սարակ ջերմացեալ ՚ի Թուխս, և բազմաթեան ձուոյն հեղիկ ձայնաւոյեալ փառանակի՝ յանդի ման առնէին զանպետուր ձագս իւրեանց ։ Այլք նոյն հետայն փետրազարդեալ նոցա՝ զգենուին զգեստ ։ և սլացեալ յօդն վերին՝ քամահանս առ նէին աղաղակաւ իւրեանց երկրի, զոր տեսանէին ՚ի ստորև ամպոյն ։ Ընդ ՚ի վերայ լերանց, և զարա Թանց մայրից բոյնս դնէին արագիլք և արծուիք ։ Ամենք ՚ի նոցանէ բազմապիսւոյ շինէին ընդ դա ւառս, և այլք խնամատարօրինք և քաջահմուտք եղեալ նախայ տարեցին, ՚ի կարգ անկեալ՝ ՚ի միասին հա տանէին զձանապարհ իւրեանց ։ Եւ Թռուցեալ ՚ի բարձունս ՚ի վերայ ծովուց և սահմանաց երկրի՝ յուսանէին զկարաւան իւրեանց ընդ օդն ։ և մի ըստմիջէ Թևարկուելեամբ ՚ի վերայ միմեանց

ղխըտացուցանելին զթռիչս իւրեանց։ Կառնէին խո-
հական զայս օրինակ հատանելը զձմեռապարհ իւր՝
կառավարեալ՝ի վերայ հողմոյ։ Եւ յանցս գնա-
ցեալ նորա՝ի բաղխմանել անհամար թռչնոյն օդն տա-
տանելը։ Ասէ փոքրագոյնք՝ի թռչնոց անտի խա-
ղացեալ ոստոց յոստս՝ զուարճացուցանելին զան-
տառս յերգս իւրեանց. և գնկարէն Թռչս սիրեալ
տարածանելին ընդ օդն մինչև ցերեկոյ։ Ասացց տա-
խտին պարագլուխ հանդիսի նոցա և ոչ յայնժամ
գկայ առնոյր՝ի գեղգեղմանէ անտի, այլ յեղա-
նակէր վերդ իւր քաղցրաբարբառ զղիշերն ող-
ջոյն։ Այլք յարծաթի լինձ և՝ի գետս ողողելին
զթռչունսն լանջս իւրեանց։ Կարապն Թիակաձև
ոտամբն նաւարկեալ՝ ցուցանէր զվերձուԹիւն
իւր կամարաձև պարանոցաւն ընդ միջ սպիտա-
կազգեստ Թռչոյն՝ շքեղաշուք իւրոց պատմուճա-
նաց։ Այլ բազում անգամ Թողեալ նոցա գնո-
նաւուԹիւն ջուրցն՝ ամբառնային՝ի վեր քաջա-
կուռ Թռչօքն իւրեանց. և արձանագրեալ կային
ընդ օդն՝ի հաստատուԹեան անդ երկնից։ Կին-
քն՝ի նոցանէ հաստատուն շրջելին՝ի վերայ երկրի. յո-
րոց սակի և պաշտպանն կատարազարդ՝ որոյ փող
հնչեցուցանէ զժամն լռուԹեան գիշերոյ. և սի-
րամարդն գեղեցկատուռն՝ զձնազարդեալ՝ի գու-
նազեղ և՝ի ծաղկեայ երանգս ծիածանի, և յայլ
ասղանման։ Սովսին օրինակաւ լցան ջուրք ձը-
կամբք, և օդք Թռչնովք։ Եւ երեկոյն և վաղորդ
դայն ոճնախմբեալ հնչակեցին զօրն հինգերորդ։

Ասէ վեցերորդ և վերջին օրն արարչուԹեան
ծագեցաւ յերեկոյին և՝ի վաղորդեան քնարս իւր՝
այն ինչ ասաց Ասուած. Հանցի՛ երկիր շունչ

կենդանի ըստ ազգի իւրում՝ զանասունս, զպա-
զանս, և զսողունս ըստ ազգի։ Ա՛ուաւ երկիր ձայ-
նի նորա. և անդէն ընդարձակեալ զարդանդ իւր
բազմածնութեանդ՝ ծնաւ միանգամայն զանթիւ կեն-
դանիս կատարեալս ի կերպարանս, յանդամս,
և ի լրութիւն հասակի։ Եւ էին երկրիւ երբեմն յոր-
ջոյ իւրեանց զազանքն՝ որք բնակեն յանտառս ա-
նապատի, ի թաւուտս, ի մացառս, և ի քարան-
ձաւս լերանց։ Սոքա ելանէին զոյգ զոյգ, և շրջ-
ջէին ընդ ծառովք. իսկ արջառք ի դաշտս և ի
մարգագետինս։ Գազանքն սակաւաթիւ էին և
մենակեաց, և անասունքն բազմահօտ և մեծաջոկ՝
ձարակաւոր ի միասին։ Ի միում վայրի հոլն զա-
լարագեղ ծնանէր զարջառս։ Ա՛յլուր առիւծն
խարեաւ եւեալ կիսաչափ ի վէր՝ դափր հատա-
նէր առաջակողմեան ոտամբքն առ ի գերծուցա-
նել զյետոյս իւր յերկրէ։ Եւ ապա զոգեսն արբ-
ձակեալ ի կապանաց անտի՝ ընդոստնոյր, և տա-
տանէր զնայատաբղետ բաշս իւր։ Յովազ, լինձ և
վագր յելանել իւրեանց յերկրէ՝ ձգէին զկնի գնդ
զաբլուրն հանդոյն խլրդան։ Ա՛րագընթաց եղջե-
րուն ամբառնայր ի վեր յերկրէ զգլուխ իւր բազ
մաստեղն։ Ա՛նհեմուզն մեծամարմին յելանել
անդ յերկրէ՝ հազիւ թափէր ի խորոց անտի զհա-
սակ իւր վիթխարի։ Չօտքն գեղձիաբարձ բուսա-
նէին յերկրէ իբրև զտունկս։ Զխափեփն, և կո-
կորդիլոսն պատենազէն՝ երկակեցեալ յառնէին ի
ծովու և ի յամաքի։ Սողունք, միջատք, և որ-
դունք ելանէին միանգամայն։ Միջատքն բազ-
խէին զգիւրաթեք հովհարս իւրեանց փոխանակ
թեւոց. և ի ձիւղ մանրանկար գծագրութեան

անդ պաճուճարդեին զնշանագործս իւրեանց կին-
տուածովք ոսկւոյ և արծաթոյ յերկնագոյն և ի
կանաչագեղ երանգս՝ ի հանդէս գարնայնոյ։ Որ
դունք իբրև զլոր ձգէին զերկայնութիւն հասակի
իւրեանց. և յոլորտապատոյտ ընթացս իւրեանց զը-
ծագրէին զերկիր։ Ոչ էին ամենեքեան սինկքորք
բնութեան։ Ամենք ի նոցանէ յահարկու երկայ-
նութեան անդ վիշապաձև գալարէին զազմանա-
նուաճ տուընս իւրեանց, և ունէին և զթիւս։ Ա-
զսկեցաւ նախ մինչևնոյն սակաւապէտ՝ հանգերձե-
լոյն նախահօդակ. որ ի փոքրիկ մարմնի անդ բո-
վանդակեալ ունէր զսիրտ մեծապանծ։ Այ թերևս
յայսմհետէ օրինակ գտցի նա արդարադատ ուղ-
ղութեան՝ միաբանեալ ի ժողովրդական տոհմս իւ-
րումն հաստատակապետութեան։ Այլ ապա խըմ-
բեալ ցուցաւ ի պարուս մեղուն՝ որ խնամով մնու-
ցանէ զայր իւր դատարկապորտ [43]. և յօրինէ ըզ-
մեղրն բնիւ իւր ամբարեալ մեղու։ Ոմոզումն
և զայլս՝ որք են անթիւ. զի զոչ ծանեալ զնու-
թիւն նոցա, և եդիր և աս անուանս. վասն որոյ և
աւելորդ է երկրորդել քեզ զնոսա։ Այլ ոչ իսկ
ծածկեալ է ի քէն օձն՝ որ խնամատարն է քան
զամենայն գազանս երկրի։ Այ նա երբեմն երկայ-
նանիզ և ատուարամարմին, և աչարկու բոցա-
շունչ աչօքն, և գիսաձարդ բաշիւքն իւրովք. այլ
ոչ մեղանչական քեզ. և կայ հնազանդեալ ակնար-
կութեան քումդ կամայ։

Ըդ՝ սովին օրինակաւ շքեղազարդեալ ցու-
ցաւ երկին յամենայն փառս իւր. և հոլովեալ թա-
ւալեցոյց զընթացս շարժմանց իւրոց՝ որպէս և
զիարդ ձարտար ձեռնն առաջին շարժողի յօրի-

նեաց ՚ի սկզբան անդ զանիւս կառաց նորա։ Այս երկիր պձնազգեստեալ զարդարեցաւ ՚ի մեծաշխատանձ պատմուձանս իւր իբրև զՀարսն պանծալի։ (Ոչ, ջուր և հող՝ յոգնախոնջ լցան Թռչնովք, ձկամբք և անասնովք։ Սակայն տակաւին պակասեր ինչ աւուրն վեցերորդի ՚ի լրումն բոլանդակութեան արարածոց՝ յորս սակս ստեղծեալ էին դոքա. արարածն ասեմ՝ որ չիցէ անբան, և ընդ երկիր կոչացեալ իբրև զայլս ՚ի կենդանեաց. այլ պձնեալ բանիւ և մտօք՝ ուսնելով զՀասակ իւր կանգնոյն. և քաջածանօթ գոլով անձին՝ ուղղեսցի զայլս ուղղութեամբ և պարզութեամբ իւրոյ դիմոյ. որով և գոյի գերագոյն՝ Համեմատ երկնից։ Սակայն միանգամայն և հնոտհապարտ՝ ՚ի Նմանել անդ, Թէ ուստի իջանեն առ նա ամենայն բանք։ Սա որոյ և ուղղեալ անդր աչօք, ձայնիւ, և եռանդագին սրտիւ՝ պաշտեսցէ երկրպագութեամբ զԱյսուածն, որ արար զնա, և կարգեաց զլսել ամենայն գործոց իւրոց։ Այս ահա վասն այսորիկ ամենակալ Հայրն յաւիտենական (որ է ընդ ամենայն տեղիս) խօսեցաւ ընդ Որդւոյ իւրում լո՚ի լո՚ի երկնաւորացդ՝ օրինակ զայս։

Արդ՝ արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան, զի իշխեսցէ ձկանց ծովու, և Թռչնոց երկնից, և անասնոց երկրի, և ամենայն սողոց՝ որք սողին ՚ի վերայ երկրի։ Այս զայս ասացեալ՝ ստեղծ զքեզ Արդամ մարդ Հող յերկրէ. և փչեաց յերեսս քո շունչ կենդանի. և այն պէս արար զքեզ ՚ի պատկեր իւր, ՚ի պատկեր Աստուծոյ կերպարանեաց զքեզ. և եղեր Հոգի կենդանի։ Արու արար նա զքեզ, և զօրհնեաց

քո կը ի սակս որդեծնութեան ։ Եւ ապա օրհնեալ ի ձեզ զհամօրէն ազգ մարդկան՝ ասաց . Եղեցէք և բազմացարուք և լցէք զերկիր . տիրեցէք դմա , և իշխեցէք ձկանց ծովու , և թռչնոց երկնից , և ամենայն շնչոց կենդանեաց՝ որք շարժին ի վերայ երկրի ընդ ամենայն տեղիս . զի տաւ կաւին ոչ գոյր տեղի վիճակեալ անուան ։ Եւ անդաստան արտ՝ որպէս գիտակ ես , ած զքեզ յայսդրախտ զուարճալի , յայս պարտէզ փափկութեան՝ ուր մնկեալ կան ծառքն Աստուծոյ գեղեցիկ ի տեսանել , և քաղցր ի ճաշակել ։ Եւ ընծայեն քեզ բազմատաւ պտուղս իւրեանց ի կերակուր ։ Ամենայն ազգք պտղոց՝ զորս բերէ երկիրս համօրէն , գտանին աստանօր ըստիւրաքանչիւր տեսակի ։ Այլ ի ծառոյ անտի՝ ուրոյ ճաշակ ընծայէ գգիտութիւն բարւոյ և չարի , մի ուտիցես ի նմանէ . զի յորում աւուր կերիցես , մահու մեռանիցիս . քանզի մահն կարգեալ է ի պատիժ նորին ։ Այդ՝ զգոյշ լեր , և սանձեա զանսորժակս քո. գուցէ հասանիցեն յանկարծակի ի վերայ քո մեղք , և մահ՝ ընկեր նորա ցաւագինք

Ստանօր կատարեաց նա զամենայն գործս իւր , և եհաս , զի առհասարակ էին բարի ։ Օյս օրէնակ երեկոյն և վաղորդայն աւարտեալ հնգեցին զօրն վեցերորդ ։ Եւ այնպէս դադարեալ Հաստատին յարարչագործութենէ՝ թէպէտև էր անխոնջ , դարձ արար ի բարձունս երկնից ի բնակութիւնսիւր վերին՝ առ ի տեսանել անդուստ զնորաստեղծաշխարհ յաւելեալ յինքնակալութիւն իւր , թէզիմբրդ երևէր նա հայեցեալ յաթոռոյ իւրմէ . քանի գեղեցիկ , քանի վայելուչ , և քանի հաճո

մատ ընդ գաղափարի իւրում։ Այլեւայլ հարիւր
ձաւ ՚ի վեր ՚ի ձայն ցնծութեան, և յերաժշտա-
կան հնչիւն բիւրաւոր քնարաց՝ որք յօրինեին ըզ
ներդաշնակութիւն հրեշտակային ։ Ընդ ելոյն յայն
ժամ երկիր և օդ առհասարակ (որպէս լուաք ըզ
ձայն նոցա )· և երկինք և համաստեղութիւնք է-
ութն զարձագանգս իւրեանց ։ Այլ որ ոչ կարէ
ձիւս կայցն յիւրաքանչիւր կայսն ընդ խնդա-
կին էր նորա պայծառափայլ հանդիսիւ ։ Յամ-
բարձք զրնձք յաւիտենից՝ աղաղակէին, համ-
բարձք երկինք զկենդանի զրուսն ձեր ՚ի վեր, զի
մտցէ Արքայ փառաց՝ որ զարձեալ գայ ՚ի սքանչե-
լի գործոց իւրոց վեցօրեայ արարչութեան աշխար-
հի ։ Այլ յայսմհետէ համբարձք բազում ան-
գամ, զի Որդւոյն հաճեսցի սակս այց առնել
զուարձութեամբ բնակութեան արդարոց · և յր-
դել անդր զթեւաւոր պատգամաւորս իւր ՚ի բանս
վերին ընդհայց ։ Ո՞ այսօրինակ երգէին յերս նո-
րա շքեղաշուք հանդիսիւ ։ Ոսկ նորա անցեալ ընդ
երկինս՝ որոյ աքանչելապայծառ զրունք բացեալ
կային լայնարձակ, հորդեաց զՀանապարհ իւր ՚ի
տաճար անդր մշանջենաւորին Աստուծոյ [43]։ Զա-
նապարհ նորա էր լայն և ընդարձակ · որոյ հողն
էր ոսկի, և սալայատակ նորա աստեղազարդ, նման
այնմ՝ զոր տեսանէս ՚ի գիշերի ՚ի յարդագողն կամ
՚ի ծիր կաթինն ցանեալ յաստղալից փոշի, և շուրջ
պատեալ էրբև զգօտի ։ Յայնմ վայրի յառնէր ՚ի
վերայ երկրիս Ադեմ երեկոյն եւթներորդ (քանզի
մեռեալ էր արեգականն, և լոյս աղօտաձայնանչ
էլեալ էր յարևելից ՚ի կարապետութիւն գիշե-
րոյ ) այն ինչ էհաս Աստուածորդին ՚ի լեառն ստուեր

բարձրացեալ ՚ի պագանեան երկինից՝ յորում արկեալ էր տիրականաթոռ Պատուածութեանն մերոյ տառն և անատան, և բազմեցաւ ՚ի նմա ընդ Հօր իւրում։ Վասն զի և նա ջոգաւ յաներևոյթս, բայց կացեալ անդանօր (այս են գործք ներկայութեան նորա ընդ ամենայն տեղիս) հրաման ետ [44] արարչագործութեան սկիզբն և վախճանն ամենայնի։ Եւ զնոսին արարչութեան օրհնեաց նա և սրբեաց զօրն եւթներորդ. զի ՚ի նմա հանգեաւ յամենայն գործոց իւրոց։ Սակայն ոչ շաբաթացաւ նա ՚ի սրբութիւն լուսոյ. քանզի քնարն երկնաւոր հընչեցուցանէր զգործս նորա։ Արևնգն մեծ և տեւիղ [45], և ամենայն գեղեցկայարմար նուագարանք, և երաժշտական ձայնք ՚ի լարս կամ յաղիս՝ դաշնակաւորեալ ՚ի քաղցրաբարբառ եղանակ՝ խառնեցան ՚ի հնչիւն պարու, կամ յերգ առանձինն։ Եւ ամնգք կնդրկայն ծխելոյ յոսկի բուրվառաց ծածկեցին զլեառն։ Եւ այնպէս նուագեցին զաշխարհագործ արարչութիւնն վեցօրեայ՝ օրինակ զայս։ Մեծ են գործք քո Տէր, և անասհման զօրութիւն քո։ Որ միտք կարող է քննել զքեզ, և որ լեզու պատմել զքեզն։ Այլ յայս դարձ քո մեծ ևս երևիս, քան ՚ի դառնալդ անդրէն ՚ի հնեշտակայն ապստամբեալ։ Օ՛ի յայնմ աւուր մեծացուցին զքեզ շանթք քո, այլ մեծ ևս ի արարչութիւնն քան զչնջումն արարածոց։ Եւ ո՞ կարէ նուաստացուցանել զքեզ, կամ սահման դնել քումդ իշխանութեան՝ Թագաւոր հզօր։ Վիբրաւ վանեցեր զամբարտաւանութիւն և զնոտի խորհուրդս հոգւոցն ապստամբեալ՝ ՚ի կամել նոցա առ պարշտութեամբ խնամարհեցուցանել զքեզ, և օ-

տարացուցանել ՚ի քէն զլսացմունքիւն երկրպա-
դուացդ : Ալ միանգամ խնդրէ նուաստացուցա-
նել զքեզ, յակամայ կամ ունի յաւէտ լինի մեծա-
յուցանել զգլորութիւն քո : Ո՛վ առնուս զործի
՚ի ձեռին զչարութիւն նորա , և նուաւ յառաջ
աճեա զառաւելութիւն բարեաց : Ալ կայ և նորատ
առեղծ աշխարհս՝ միա և երկինք ոչինչ կարի ՚ի
բացեայ ՚ի դրանց անտի երկնից , որ լսատ տեսու-
թեան աչաց հաստատեալ կայ ՚ի լուսափայլ ատլա-
կեայ ծովու [46] անսահման տարածութեամբ , և
բազմազունդ աստեղօք : Յորոց իւրաքանչիւր
թերևս իցէ մեզ ևս մի աշխարհ կարգեալ ՚ի բնակու-
թիւն [47]. սակայն դու գիտես զհանգամանս նոցա :
Ընդ որս է և երկիրս յանկալի կարգեալ ՚ի բնա-
կութիւն մարդկան . զոր շրջապատեալ պատ Ալ-
կհանաոնորանեքքին [48] : Ո՛վ երիցս երջանկութեան
որդւոց մարդկան՝ զորոց այսպիսի ինամ կալալ
Ա՛ստուած . և ստեղծ զնոսա ՚ի պատկեր իւր առ ՚ի
բնակել անդանօր , և պաշտել զնա : Ա՛յս փոխա-
նակ վարձուց իւրեանց խլհել համբերն արարա-
ծոց իւրոց՝ որք են յերկրի , ՚ի ծովու , և յօդն .
և բազմացուցանել զծնունդս երկրպագուաց նո-
ցա սրբոց և արդարոց : Ո՛վ երիցս բարեբաստիկ
են նոքա , եթէ գիտեն զերջանկութիւն իւրեանց,
և յարանան ՚ի նոյն ամբծութեամբ :

Ալ ոչին օրինակաւ երգեցին նոքա . և հրեշտն
երկնից հնչեցուցին զօրհնութիւնս : Ա՛յս այսպէս
ասա շաբաթացան նոքա : Ա՛յս ինձ թուի այժմ,
թէ լցաւ խնդիրդ քո վասն արարչութեան աշխար-
հի ՚ի սկզբանէ , և զհղեցկազարդ վայելչութեան
նորա , և վասն արարածոց՝ որք ելեն յառաջ քան

*զքեզ ։ Օ՛ի ծանիցեն և որդիք քո՝ տեղեկացեալ 'ի քէն։ Ա՛պա ելիր, և այլ ինչ խնդրես՝ որ ոչ ահա ցանկ, ըստ սահմանն մտաց մարդոյ, ասաւ, և լուաւ ցեա զարժանն* [49] ։

# ԳՐՔԱԽՏ ԿԱՐԱՒԱՆԱՑԼ

ԳՐՔ Ը

## Ն ԱԽ ԱԴՐՈՒԹԻՒՆ

Խնգիրս առաջի դնէ Ադամ յաղագս երկնային շարժմանց, և Աբրհամն ասէ նմա պատասխանի ի կարծիս ածեմ, և յորդոր լինի նմա խնդրել յաւէտ զարժանին կարևոր գիտութեան։ Հաւանի Ադամ ընդ բանս նորա, սակայն կասկածեալ նորա տակաւին ունել առ իւր զվստահայել՝ պատմէ նմա զանցս իւր անգամն յաթաբչութենէ իւրմէ, թէ զնարդ եգաւ նա ի գրախտին. զինչ բանք եղեն նորա ընդ Աստուծոյ յաղագս առանձին կենաց, և կարևոր ընկերութեան, և զնարդ եգիտ նա զառաջինն զնչեայ, և ամուսնացաւ ընդ նմա։ Բանք նորա ընդ Աբրհամին ի նոյն առիթ։ Որոյ երկրորդեալ զբանս խրատուց՝ սկիզբն ի նմանէ։

# ԴՐԱԽՏ ԿԱՐՈՒԱՆԱՑ

ԳԻՐՔ Ը։

Աւարտեալ Հրեշտակին զգանա իւր՝ այնպիսի ին եղող քաղցրութիւն ձայնի յականջս Աշա- մայ, մինչև համարել նմա՝ թէ տակաւին խօսի նա. վասն որոյ և ետուն յունկնդրութիւնս վայր մի և ։ Այլ ապա զոգեաց նորոգ զգաստացեալ յանձն իւր՝ արար նմա պատասխանի խոնարհու- թեամբ օրինակ զայս ։

Օ՞ր չնորհս կամ գինչ փոխարէն տրիտուր հատուցից քեզ Պատգամաւորդ երկնային՝ որ կրճ տակավին զովացուցեր զպաղքունն խմումն գիտու- թեան. և հաճեցար զիջանել մարդասիրաբար ի պատուհասիս իրացն՝ զորս անմարթ էր ինձ խնդ- րել այլևս. և զորս լուայ առաւիկ հնազմամբ, բայց ընդ նմին և զուարճութեամբ, ընծայեալ բոտ արժանեաց գիտուս գերագոյն Հաստչին։ Այս կայն տակաւին ունիմ յանձին զտարակուսանս՝ զո րոց զլուծումն դու միայն կարող ես չնորհել ինձ ։ Վանգի յակնարկել խնամ ընդ գեղեցկութիւն արարածոց, և ընդ բովանդակութիւն տիեզե-

բայց յերկինէ և յերկրէ, և ՚ի համեմատել իմում վճռութիւն նոցա ընդ միմեանս՝ դատեմ զերկիս կիրս կեալ մի կամ հիւղէ առ հաստատութեամբ երկնից, և համբոյն աստեղացն՝ զորս մարթի ի թուել ՚ի նմա։ Որք և երևին շրջան առնուլ յանսահման ընդարձակութեան անդ (զի զայն ցուցանէ հեռաւորութիւն նոցա յերկրէ, և անհնարին արագութիւն օրական ընթացից նոցա) առ ՚ի մատակարարել միայն զլոյս ՚ի տուէ և ՚ի գիշերի յամենայն կողմանց դիմնհար երկրիս՝ որ է առ նոքօք բիծ իմն կիտանիշ։ Սակ այլով ամենայնիւ թուին լինել անօգուտ։ Այսն որոյ զարմանք ունիմ բազում՝ անգամ զմիտս իմ, թէ զինարդ մարթ էր իմաստուն և անվրէպ բնութեան՝ ցուցանել զայնպիսի գործ անհամեմատ։ Ստեղծանել առեմ՝ շնայլ ձեռամբ զայնչափ երևելի և ըզ մեծամեծ մարմինս յայս սակս միայն՝ որպէս երևի, և հրամայն տալ գնալոց նոցա շրջան առնուլ անդադար՝ օրըստօրէ թաւալմամբ։ Այն ինչ երկիս կացեալ հաստատուն՝ որում մարթ էր գիւրագոյն և շարժիլ ՚ի նուազ ընդարձակութեան անդ, և արբանեկեալ յայնուազունից քան զինքըն՝ անշարժ ընդունի ՚ի նոցանէ ընդ անսահման ձանապարհն զՀարկ ծառայութեան՝ զլոյս և զջերմութիւն, զոր ածէ առ նա անմարմին արագութիւնն՝ զորոյ առ ՚ի նշանակել զընթացս՝ պակասին թիւք և համարք։

Այսօրինակ խօսեցաւ Պղատոն մեր. և էցոյց ՚ի դէմս իւր զՀաճութիւն իմն ընդ մուտս դժուարիմաստ խնդրոց իմաստասիրութեանն Օրի ծանուցեալ Պետի՝ յարեաւ ՚ի տեղւոջէն, ուր

նաեւը յայնժամ Մեկուսի յանդիման նոցա վէճա-
փառ ինն պատկառանօք եւ վայելչութեամբ՝ որք
յանկալի ընծայէին զկալ նորա յաչս առեղայց ։
Այս չոգաւ ի բուրաստանն պաղոց եւ ծաղկանց առ
ի առնանել անդ զարգաւաճութիւն պտկանց նո-
ցա ։ Որք եւ ի հասանել նորա անդր՝ բողոքէին
փութանակի , եւ ի մերձենալ առ նոսա դէղեցիկ
խնամոյ ձեւովն՝ ուռճայեալ ահեղին ։ Այլ ոչ
չոգաւ նա անդր իբրեւ դժկամակեալ ընդ այնպէս
սի բանս , եւ ոչ առ չունելոյ զգաւական լսելիս ի
լուր բարձրագունիցն խմաստից ։ Այլ հաճեցաւ
նա լսել զպատմութիւն նոցին առանձինն Այգա-
մոյ ։ Ընծարեաց զայր իւր առաջի Հրեշտակին ի
բանս անդ , եւ ինքն յաւէտ ընտրեաց լսել զայնո-
սիկ ի նմանէ · զի քաջ գիտէր , թէ մարթ էր Այ-
գամոյ մուծանել ի պատմութիւն անդր զզուար-
ձալի արտաղրութիւնս , եւ այնպէս լուծուին տալ
բարձրագոյն խնդրոց խանդաղատանօք ինն լծա-
կից սիրոյ · քանզի ոչ ախորժէր նա լսել զսակ
բանս ի շրթանց նորա ։ Այլ ուրանօր գտանէին
այժմ այսպիսի լծակիցք միաբան զուգակցեալք ի
սէր և ի պատիւ միմեանց ։ Ընկենցաւ նա ի նո-
յանէ նազելի ընթացիւք իբրեւ զմին Այսուածու-
հի · այլ ոչ առանց ինչ սպասաւարկութեան [2] · զի
հանդէս շքոյ սիրալի ընդոհոյ նորա երթայր միշտ
ընդ նմա զոգեբոյս ընդ դշխոյն , և յանկալի ընծայէր
զնա յաչս ամենեցուն ։ Յայնժամ Ախիայէլ մնաց
դիւրութեամբ եւ մարդասիրաբար արար պատաս-
խանի առաջարկութեան տարակուսանացն Այգա-
մոյ՝ օրինակ զայս ։

Ընդ պատանեմ ես զինպիր քումդ հարցուածոց ·

զի երկինք եդեալ կան առաջի աչաց քոց իբրև զմատեան աստուածային՝ առ ի վերծանել ի նմանզբանչելի գործս Արարչին, և ուսանել զեղանակս տարբոյն, զամիսս, զաւուրս և զժամս։ Այլ առ ի գիտել զոսոմ՝ եթէ ուղիղ իմաստասիրեացս, չէ ինչ փոյթ՝ երկինք արդեօք, եթէ երկիր շարժիցի։ Զառաւելն քան զայս թագոյց վերին Աստուածեան իմաստութեամբ իւրով ի մարդոյ և ի հրեշտակէ. և ոչ յայտնեաց զգաղտնիս իւր ի քննութիւն նոցին, այլ յաւէտ ի զարմանս։ Այս եթէ կամք են նոցա մատչել ի հանդէս կարծեաց իւրեանց, եթող նա զլծորինուած երկնից ի նմանի նոցին՝ առ ի ծիծաղիլ թերեւս զկնի զնտա[3]տի հնարագիտութեամբք նոցա ի կազմել անդ զերկինս, և ի համար արկանել զաստեղս՝ առ ի կարոյ լինել շարժել զմեծակառոյց շինուածն. ի քանդել զայն, և ի վերստին ձեւացուցանել ըստ կամի ի պաշտպանութիւն երեւութեացն յերկինս. և յածել անդ զօտի զկենդանին, ձգեալ ի վերայ նորա յոմանկս զգիծ կիսդրնաական և զարտակենդրոն, զշրջանակ և զմիսկաշրջանակ, և զպարունակ ի պարունակի[4]։ Այլ այժմըն իսկ յայդ կարծիս ձգեն զիս բանք քո՝ որ ես զլուխ ծննդոցդ, և եդեալ ես ի մտի՝ թէ չէ արժան մեծամեծ և պայծառատիպել մարմնոյ արբանեակել փոքունց և անլուսաւորաց. և ոչ երկնից հատանել զայնչափ երկայնութիւն ձանապարհի, այն[5]չ երկիրն անշարժ կայ հանապազ, և վայելէ միայն ի բարիս։ Այլ դու զմտաւ ածէ նախ՝ թէ մեծութիւն և լուսափայլութիւն ոչ են նշանակ գերազանց առաւելութեան. զի մերձ է երկիրս՝

որ կարի փոքր է առ համեմատութեամբ երկնից, և ոչ լուսափայլ երբեւ զնա՝ ունել լինքեան զնո- սիբ բնութիւն բարիս առաւել քան զսրեղակն, որ ամբութեամբն պայծառ փայլէ: Որոյ պատճա- ռիւն անձին ինչ ոչ օգնէ, այլ պատուական երկրի: Ընդերըն ձառագայթք նորա յերկինս՝ զառաջինն ընկալեալք ի սմա, զտանեն զգօրութիւն իւ- րեանց: Սակայն պայծառափայլ լուսաւորըդ այ- դոքիկ ոչ այնչափ երկրի են պաշտօնատարք, քան որչափ բնակչիդ ի նմա: Սակ զանչափ ընդարձա- կութիւն շրջապատին երկնից Թոզ նման, զի ինք- նին պատմեսցէ զանսահմանն մեծութիւն Քարզին իւրոյ՝ որ արար զնա այնչափ լայնածաւալ, և ըզ- դիծ երկայնութեան նորա ձգեալ այնչափ հեռա- գոյս: Եւ մարդոյն Թոզ ի միտ առնուլ, Թէ ոչ բնակիչ նա յիւրումն սեփականի. զի կարի մեծ է երկիրդ ի սակս նորա առ ի շնուլ զոլով նորա օ- Թագայեալ ի փոքրիկ բաժնի նորա ևեթ: Ապա- կայն և այնպէս մնայեալ սահմանք նորա կար- գեալ են առ ի պէտս՝ որք են քաջածանօթք Տեառն իւրեանց [5]: Օ այնչափ արագութիւն ընթացիկ շրջանակացդ ընծայեաւ ամենակալ զօրութեան նո- րա՝ որ զառաւ ձեռնհաս տալ նմա ընթակատացդ զպին- պիսի երագաձեմ ընթացս զոգոյես հոգեղէն: Եւ զիսկ մի համարիր յամրաշարժ. զի ընդ առա- ւօտան մեկնեալ յերկնից ի բնակութենէն Քստու- ծոյ՝ յառաջ քան զօր հասցարակ ժամանեալ հասի Աղեմ. և չի հնար Թուոց յուցանել զանչափու- Թիւն հեռաւորութեան Ճանապարհիդ: Օ այս ասեմ, եղեալ յերկինս զշարժումն, զի ծանիցես զտկարութիւն տարակուսանացդ. այլ ոչ հասաս

ասիմ զայն . Թէպէտև այնպէս թուի քեզ՝ որ չէր
կրի ասա ունկն զգնահուածին քո : Օ՛ի Ա՛ա-
տուած առ՝ ի հեռացուցանել զմանասարկն իւր
՝ի զգայութեանց անտի մարդկան՝ այնչափ բացա
գոյնս ձգեաց զերկինս չերկրէ, մինչև՝ ի չանդըգ
նել երկրաւոր աչացդ՝ ի զննութիւն՝ մոլորիլ նմա
՝ի բարձրագոյնդ , և օգուտ և ոչ մի ինչ գտա-
նել՝ ի նոցանէ : Օ՛ի զի՞նչ է քեզ, եթէ արեգակն
գոյի կենդրոն աշխարհի , և այլք յաստեղաց մի
գեաւ ձգողական զօրութեամբ նորա և իւրեանց
խակ՝ [6] պարս բոլորեսցեն զնովաւ չայլևայլ շրջանս
իւրեանց : Ի վեցերորդն մոլորակդ [7] տեսանես զգ
զարուզի ընթացս նոցա՝ ի գլ՝ ի վեր , և ի գլ՝ ի
խոնարհ. և ապա ծածկեալ, չառաջախաղաց և
չետախաղաց , և կամ բոլորովին անշարժ [8] : Ա՛ա
զի՞նչ , եթէ երկիրս մոլորակ եւթներորդ՝ որ այն
չափ հաստատուն երևի, չառաջ խաղացեգ առ նո
ա չանդգալի ընթացս իւր երրակի շարժմամբք [9] :
Օ՛րս այլազգ պարտ էր քեզ՝ ընծայել այլ և այլ
գնաոց շարժելոց ընդ հակառակն առ՝ ի շեղ խա-
տրմամբ : Ա՛ա կամ ազատ կացուցանել զարե-
գակն՝ ի վաստակոց նորա . նոյնպէս և զերագոյն
թաց տարանկիւնն գիշերային և տունդնդային՝ որ
համարեալն է անտեսաբար անիւ տունդեան և գի-
շերոյ՝ ի վերոյ քան զաստեղս : Ա՛ա չէն խակ պակաս
քումդ հաւատոց , եթէ երկիրն ինքնին աշխատա
սէր՝ ելանիցէ՝ ի խնդիր աւուրն , ձանասարկոր-
գեալ ընդ արևելս. և միւս կողմանէն հեռացեալ
՝ի ձառագայթից անտի արեգական՝ ելցէ ընդ ա-
ռաջ գիշերոյ . և այլ մնասունք նորա տակաւին
լուսափայլեսցին չերեսաց նորա : Օ՛ինչ , եթէ

լայն արձակեալ ՚ի նմանէ ընդ լայնաճաւալ օդն
Թափանցիկ՝ գոյի առ լուսինն երկրաւոր [10] իբրև
զաստղ՚ի լուսաւորութիւն նորա ՚ի տուէ, որպէս
նա երկրիս՚ի գիշերի։ Ալ և զնոյն կատարէ գործ,
եթէ գոյին անդ երկիր, դաշտագետին և բնա-
կիչք։ Օ՚ի զբիծս նորա տեսանես իբրև զամպս,
և ամպոց մարթ է տալ զանձրև, և անձրևաց բե-
րել զպատուղ յարդաւանդահող երկրի նորա առ
՚ի կերակուր վիճակելոց ոմանց անդանօր։ Գոյես
Թերևս և զայլ արեգակունս հանդերձ արբանե-
կօք իւրեանց լուսնովք՝ որք ընծայեացեն զլոյս իւ-
րեանց ծննդական։ Այլ այս երկոքին մեծամեծ
սերք [11] կենդանացուսցեն զտիեզերս, ամբարեալ
Թերևս յիւրաքանչիւր պարունակական գկենդանիս
ոմանս։ Ալ ասեն զի դիւրաւ մարթ է՚ի յոյզ և՚ի
խնդիր արկանել զանչափ ընդարձակութիւնն՚ի
բնութեան անդ՝ որ իսկ Թափուր՚ի հոգւոց անտի
կենդանեաց, ամայի և անբնակ, և կարգեալ՚ի
լուսափայլութիւն լեթ։ Գակ իւրաքանչիւր՚ի պա-
րունակացն հաղիւ զաղօտափայլին ընծայել զլոյս.
և արկանել զայն յայնչափ հեռաւորութենէ՚ի խա-
ւարչ յայս երկիրս բնակեալ՝ որ անդրկին գտանիս
յանդ առնոսա զլոյս իւր։ Գայց թէ կայցէն ար-
դեօք այդոքիկ, [12] եթէ ոչ. կամ՝ արդեօք արեգակն
իշխան երկնից պատիցի՞ զերկրաւս, և կամ երկիր
զարեգակամբ. արդեօք նա՞ սկսանիցի զլոյսափայլ
Ճառագայթս իւր յարևելից, և կամ սա՞ ձգեսցի
յարևմտից գՀանդարտաքայլ ընթացս իւր՚ի քայ-
լափոխ աներկիւնն՝ որ մնն առեալ Հանդչի՚ի վե-
րայ յուշիկ առանցից իւրոց, այն ինչ նա Հար-
Թակիւս ընթանայ, և տանի զքեզ ընդ օդդ Հան-

դարտախտաղայ՝ մի տագնապիր ի խորհուրդս քո յերեսաց գաղտնեացդ այդոցիկ։ Այլ թող զնոսա Աստուծոյ՝ որ են ի բարձունս, և դու ծառայեա նմա երկիւղիւ։ Այլ արարածս իւր՝ ուրանօր և գոցին, զիցե նա ի կարգի՝ որպէս և զնարդ հաճոյ է նմա։ Այլեւեա դու զդրախտդ, ընդ նմին և զԱւսայ՝ զոր ետ նա քեզ օգնական։ Երկինք կարի բարձունք են վասն քո առ ի գիտել զանցս անդաւնօր։ Եր խնաստուն խոնարհութեամբ։ Ած ըզմտաւ միայն զորս հայեին ի քեզ։ Մի յերազեր զայլ աշխարհս, և մի՝ թէ զինչ արարածք են ի նոսա կեցդանիք, յինչ վիճակ կամ յինչ հանգամանս գտանին նոքա։ Ճատագիր ընդ այն միայն՝ զի այսչափ յայտնութիւնք ցուցան քեզ՝ ոչ միայն զերկրէ, այլև զբարձրագոյն երկնից։

Ուրա՛մ Ադամ աղատացեալ ի տարակուսանաց անտի իւրոց՝ արար պատասխանի օրինակ զայս։ Ծխարդ լուսոյ շատացուցեր զիս մաքրափայլ հոգի երկնային՝ Հրեշտակդ լուսապայծառ։ Եւ ուսուցեր ինձ գնալ համարձակ զդիւրին ճանապարհն կենաց, և ոչ ընդմիջել զքաղցրութիւն նորա տագնապեցուցիչ խորհրդովք՝ յորոց հրամանն ետ մեզ Աստուած հեռանալ ի բաց, և չտանջել զմեզ վայրապար և մնասախնդիր գիտութեամբ։ Ակայն և այնպէս միտք մարդոյ ինքնին բերի յանսանձ վատարանդութիւն, և դեգերանաց նորա չիք վախճան։ Ինչպէ խրատեալ նորա կամ ուսեալ ի փորձ՝ ծանիցէ, թէ կարևոր խնաստութիւն մարդոյ ոչ է լսմնածաւալ գիտութիւն հեռաւորացն առ ի մէնջ նրբից և գաղտնեաց, այլ որոյ եղեալ են առաջի մեր յառօրեայ կեանս։

Աստուածն քան զայս՝ ծուխ է, ընդունայնութիւն կամ խաղալիկ անմտաց։ Այլ և անվարժս և անյարմարս կայուցանէ զմեզ յառաւել սիրտանիւն, և տայ մեզ՝ ի խնդիր լինել միշտ մտաւեաց։ Յայն սակս ինձեալ մեր՝ ի բարձրութենէ աստի՝ ի խոնարհ հազոյն Թուխս՝ բանս՝ ի միջ առցուք զառձեռն կարևորացն ևեթ։ Յորս Թերևս խնդիրք լինիցին և զորոց ոչ են տարադէպ՝ ի հարցանել միայն Թէ, նեղոտամուտութիւն քո, և այժմէն ծանուցեալ զԹուխն՝ հաձեսցի զինջանել։ Աստ՝ լուայ ես՝ ի քէն զսատմութիւն եղելոցն յառաջքան զնս, լա՛ր և դու այժմ լինիցէն զսատմութիւն անձին իմոյ՝ որ Թերևս անծանօթ է՝ ի քէն, և լոյս տունջեանս տակաւին ոչ է ընծեալ։ Այնուհետև ցժամ մեկնելոյ նորա ունիս տեսանել, Թէ զինարդ հնարիւք ինն խնդրեմ ես ունել զքեզ առ իս հրաւիրեալ յանկրկնդրութիւն խնամն պատմութեան. որ ապաքէն լինելոյ անմտութիւն, եթէ չէր յուսալի ընդդունել՝ ի քէն զսատասխանի։ Օ՛ն՝ ի կալ խնամ ընդ քեզ՝ Համարիմ զանձն իմ յերկինս։ Այս բանք քո առաւել քաղցր են յունկն իմ՝ քան զսատուգս արմանելոյ՝ որք՝ ի ժամ առնչացեալ կերակրոյ կարի ինն ախորժաձաշակ են՝ ի քէմն քաղցեալ և ծարաւի անձին յերեսաց վաստակոյ։ Օ՛ն նոքա Թէպէտև Համեղաձաշակ են, այլ վաղ յագեցուցանեն, և ածեն՝ ի վերայ զյափրանս. իսկ բանք քո փոխանակ զի լի են աստուածային ընդհօք, չածեն և ոչ մի ինչ յագուրդ ընդ քաղցրութիւն իւրեանց։

Ասեմ՝ ես սսատասխանի Ասփսիկ քաղցրասմբոյր հրեշտակն։ Այլ առանց ընդհայ են շրջ-

թունք քո նախահայրդ Ադամ, և ոչ բերան քո առանց ընտիր Աստուածատեսութեան. քանզի եհեղ ի քեզ Աստուած բազում առատութեամբ ներքոյ և արտաքոյ զպարգեւս իւր՝ որ ես գեղեցիկ պատկեր նորա։ Ի խօսել քո, կամ ի դադարել ի բանից՝ առ քեւ կան ամենայն վայելչութիւնք հնարից, և յօրինեալ յարդարեն զամենայն բանս քո և զշարժուածս։ Նմա մեք թէպետև յերկինս եմք, այլ ունիմք զքեզ ծառայակից մեր յերկրի. և մտադիւր տամք զանձինս ի քննութիւն ձանաչ պարհացն Աստուծոյ ընդ մարդոյ։ Վասնզի տեսանեմք զքեզ պատուեալ Աստուծոյ, և զսեր նորա նոյնպէս հաստատեալ ի վերայ մարդոյ։ Ադդ՝ աղէ պատմեա, զի ի նմին աւուր [13] դեպ եղիւ ինձ հեռանալ անտի, և ըստ հրամանին Աստուծոյ ունել զձանապարհ տարագնաց, դժուարակոխ և խաւարչտին՝ արշաւեալ ի դրունս դժոխոց. և անդ ձակատեցուցեալ զլեգէոնն իմ՝ զդուշանալ, զի մի ոք վազեսցէ արտաքս ի լրտեսութիւն կամ ի թշնամութիւն՝ ի գործել անդ Աստուծոյ զարարածս. գուցէ սրտմտեալ նորա ընդ յանդուգն յարձակումն նոցա՝ զապականութիւն ընդ արարչութեան խառնեսցէ։ Նա թէպետ ոչ իշխեն նոքա մատչել յայդ փորձ առանց թոյլտուութեան նորա, սակայն և այնպէս նա ինքն իբրև դերագոյն արքայ առաքեաց զմեզ անդր վերին հրամանաւքն ի հանդէս իւրումն մեծութեան, և մերումն յօժարամիտ հնազանդութեան։ Վասն որ անդ զահագին դրունն քաջ ամրափակեալ. բայց միւնչև էր մեր հուպ մատուցեալ՝ լուաք ի ներքուստ անտի զաղաղակ ինչ կարի տարօրինակ ի

ձայնէ պարուց և երգոց . որ և էր սաստկապոյն տանջանաց , մեծակական ողբոց , և անհնարին կսկաղութեան : Այն որոյ և զարձաք անդրէն ՚ի վեր ՚ի սահմանս լուսոյ յառաջքան զերեկոյն շաբաթու[14]. զի այսպէս ընկալեալ էր մեր զհրաման : Ասայ արդ զարձուք ՚ի պատմութիւն քո . զի ոչ նուազ հաճութեամբ լսեմ զքանս քո , քան դու զիս :

Այսօրինակ խօսեցաւ Օրութիւնն երկնային . և զայս ետ նմա պատասխանի մեր Խաչայր : Ժուարին է մարդոյ պատմել զսիրելի իւրումն կենդանութեան , զի՞ գիտաց զծագումն իւր . սակայն և այնպէս վստահ առնեմս ընդ երկար բանից ընդ քեզ ձգեաց զիս առ այս : Արդ՝ զոգոյս նորոգ զարթուցեալ ՚ի խորին քնոյ՝ գոհ զանձն իմ անկեալ ՚ի վերայ դալարագեղ և ծաղկազարդ խոտոյ . և կայի հարեալ ՚ի քիրտն բազմանեան . զոր և անդէն ցամաքեցոյց արեգակն ձառագայթիւքն իւրովք , և ձարակեաց զարտասուսն իմ : Կայ ես փութանակի զարձուցի զաչս իմ յերկինս զարմացմամբ , և պշուցեալ հայեի ընդ լայնածաւալ ընդարձակութիւն նորին : Մինչև ասա կանդնեալ շայտ և մղիչ շարժմամբ՝ գոգոյս յայն կողմն ՚ի վեր ձգեալ , կայի կանգուն ՚ի վերայ ոտից իմոց : Այս տեսի շուրջ զինև զերկինս , զհովիտս , զհովանաւոր անտառս , զարեգակնաձեմ դաշտս , և զականակիտ հոսանս կարկաջախաղաց ջուրց : Այս առնոքօք զարարածս կենդանիս՝ որք շարժէին , գնային և թռչէին . և թռչունք գեղգեղաձայն երգէին յոստս ծառոց : Անհնայն արարածք զուարճացեալ կային անու-

շահատութեամբք իւրեանց . և լցին զսիրտ իմ բերկրապատար խնդութեամբ : Հայեցայ ապա յանձն իմ, և գնեցի զանդամս . և զի շարժեցայ, և և զի ընթացայ դիւրաթեք յօդուածովքս՝ որ պէս և գնարդ առաջնորդեր ինձ կենդանի զօրու Թիւնն որ յիս : Այլ ոչ գիտէի, թէ ո՛ եմ ես, ուրանօր, և յումմէ : Այլն իբրև մտաեայ ի փորձ բանից, և անդէն խօսեցայ . Հնազանդեցաւ լեզու իմ, և ես դիւրաւ մարթացայ կոչել յանուանէ զոր միանգամ տեսանէի : Այս ասացի . Արեգակն լուսաւորդ գեղապանծ, և երկիրդ լուսազար դեալ, նորազուարճ և բերկրալից, լերինք, հո վիտք, գետք, անտառք և դաշտք, և ամենայն շարժուն կենդանիքդ՝ ասացէք ինձ գեղեցիկ արա րածդ, եթէ գիտէք՝ թէ յումմէ ստեղծայ ես, և երկի այսր : Այլքն ոչ գտայ յանձնէ խմիմ, ապա անշուշտ ի գերագոյն Արարչէն՝ որ առաւելեալն է ի բարութեան և ի զօրութեան : Այլ դուք ասացէք ինձ , թէ գնարդ մարթ է ինձ ձանաչել զնա և պաշտել՝ յորմէ ունիմ զշարժուն և զկենդանս, և զդամ յանձին զառաւել երջանկութիւն քան զոր մարթ է ինձ առնուլ ի միտ : Այնչգեռ զայսօրինակ գոչէի, և մեղբեալ շրջէի ի տեղ տէն՝ չգիտեմ ուրանօր , ուր զառաջինն ձգեցի զօդ , և տեսի զլոյս երանաղուարճ, իբրև ոչ լինչ լուսոյ պատասխանի՝ նստոյ ի վերայ գալարաւէտ, ծաղկափթիթ և հովանաւոր բլրոյն՝ յառեալ ի խորհուրդս : Այնդ զառաջինն հաս ի վերայ իմ քաղցրութիւն քնոյ , և հեզիկ ծանրութեամբ կա լաւ անխտով զթմբրեալ զգայարանս իմ. թեպէտ ի նմին պահու համարէի զանձն իմ անցանել յա

առջին վճռակ անզղայութեան իւրոյ, և լուծանել անգէն [15]։ Այլ ահա յանկարծակի եկայ եւ բաղն առ մատրիւքս. և երեւումն նորա ի նեղքս՝ շարժեաց մեղմով զերեւակայութիւնն իմ, և եհաս ինձ հաւատալ, թէ ունիմ տակաւին զգայութիւն և զկեանս։ Ասէր ինձ յայնժամ, թէ եկեալ ոք յաստուածային կերպարանս՝ ասէր ցիս. «Քրի՛ստոս՝ մեղդ առաջին, որ կարզեալ ես նախասիրայր անթիւ ծննդոց. զի բնակութիւն քո սպասեալ մնայ քեզ։ Այլ ես կոչեցեալ՝ի քէն՝ եկի տանել զքեզ՝ի դրախտն փափկութեան, որ է պատրաստեալ տեղի վասն քո»։ Այլ զայս ասացեալ նորա՝ կալաւ զձեռանէ իմմէ, և կանգնեաց զիս յոտին։ Այլ ապա անցուցեալ ընդ դաշտս և ընդ գետս անբայլ ընթացիւք իբրև ընդ օդս՝ էած զիս զկնի՝ի լեառնն անտառախիտ, որ՝ի բարձրութեան անդ գագաթան ունէր զդաշտավայրս լայնանիստ, և փակեալ շուրջանակի. յորում արմկեալ կային ընտիր ընտիր ծառատունկք, և ձառնասպարհք ընդ մէջ նոցա ձողաբարձ զարդարեալք, առ որովք զոր ինչ միանգամ տեսի յառաջագոյն լերկրի, ոչ էս լինել ինձ հաճոյ։ Այլ առնոյն ծառք ծանրաբեռնեալք առհասարակ գեղեցկատեսիլ պտղովք իւրեանց՝ որք կախեալ կային զնոցանէ՝ի հրապոյրս աչաց, անգէն շարժեցին զս խորժանքն իմ կրնել՝ի նոցանէ, և ձառակել։ Յայնմ վայրի զարթեայ, և գտի զանձնայն ինչ սրդեամբք առաջի իմ՝ որպէս անընդոյն նկարեալ էր կենդանւոյն։ Այլ առաւօր էս ունելի շրջիլ մնըրտական, եթէ տեսիլն առաւածայինն՝ որ առաջնորդեաց ինձ այսր, ոչ էր երեւեալ ինձ՝ի մի-

ջոյ անկոյն : Իսդացի ընդ երեւոյին նորա . այլ
ըմբռնեալ յերկիւղ՝ անկայ յոտս նորա յերկր-
պագութիւն : Իսկ նորա կանգնեալ զիս՝ ասաց
քաղցրութեամբ . « Այս եմ զոր դուդ խնդրես ,
Աբարիչն աւետեանի՝ զոր միանգամ տեսանես ի
վերոյ քան զքեզ , շուրջ զքեւ , և ի խոնարհ : Այ-
տու քեզ ղդրախտդ ի սեպհական ժառանգու-
թիւն պործել զայն և պահել , և ձաշակել ի պըտ-
ղոց նորա : Յաւետեան ծառոյդ՝ որք բուսանին ի
նմա , կեր համարձակ , և խնդասղին սրտիւ , և մի
երկնչիր յերեսաց չքաւորութեան աստանօր :
Այլ ի ծառոյն՝ որ յառաջ բերէ զղխտութիւն
բարւոյ և չարի , զոր և ի դրաւական քումդ հնա-
զանդութեան և անկեղծ հաւատարմութեան տրուց
կեցի ի պարտիզդ առընթեր ծառոյն կենաց՝
( յո՛չ լեցին քեզ բանք իմ ) մի ձաշակիցես . և
զդո՛շ լեր ի պատուհասէն՝ զոր ածէ նա ի վերայ :
Վանդի՝ ( քանզ ի միտ առ ) յորում աւուր կե-
րիցես ի նմանէ՝ անցեալ ըստ պատուիրանն իմ
մահ , մահո՛ մեռանիցես հաւաստեաւ . և յօրէ
յայնմանէ կորուսցես և զվիճակն երանութեան՝
տարագրեալ ի դրախտէդ յերկիրը յաւուց և աղէ
տից » : Ո՛չ անոյշ նա ահարկու դիմաք զայս հրա
ման սաստկութեան՝ որ տակաւին ահագինս հնչէ
յականջս իմ : Այլ անդէն շրջեալ զերեսս իւր ի
քաղցրութիւն՝ վերստին նորոգեաց զընտրհազեղ
բանս իւր օրինակ զայս : « Ո՛չ միայն զգեղեցիկ
զուարճ սահմանդ , այլև զերկիրն ողջոյն տամ
քեզ , և զաւակի քումդ : Յերկիր տեարս ժառան-
գեցէք զայն , և զոր ինչ միանգամ գտանի ի նը-
մա , ի ծովու և յօդս՝ զանասունս , զձկունս և

զԹուչունս ։ Այս ի հաւաստի նշանակ՝ ահա ածեմ առ քեզ զամենայն անաստունս և զԹուչունս ըստ ազգի իւրեանց· զի ընկալցին ի քէն զանուանս, և խոնարհ հպատակութեամբ ընծայեսցեն քեզ զՀարկածառայութեանս Օձնոյն իմա և զձկանցն՝ որ բնաւ կեալ են ի ջուրս· զորս ոչ կոչեցի այսր, զի ոչ կարեն Թողուլ զԹանձրապոյն տարը իւրեանց, և ձգել զոդ անօսր ։ Արդ այս օրինակ խօսեր նա, և ահա ամենայն Թուչունք և անաստունք մանեան առ իս երկու երկու ։ Ընաստունքն ի գուշն անկեալ՝ քծնելին զինև, և Թուչունքն արկեալ ի վայր զԹեւս իւրեանց՝ մեծարեալ պատուէին ։ Այզի նոցա անուանս ընդ անցանել նոցա· և ծանեայ զընութիւն նոցա· զի սովին զխտութեամբ եւլից Պատուած յանկարծակի զմիտս իմ ։ Այայց քանզի ոչ գտի ի նոսա որում կարծէի պէտս ունել տակաւին, նմին իրի համարձակեցայ խօսել ընդ երկնային տեսլեանն՝ օրինակ զայս ։

Ո՞վ յինչ անուն կոչեցից զքեզ՝ որ դեր ի վերոյ ես քան զամենեսին զդոսա, ի վեր քան զաղգ մարդկան, և զոր ինչ ի վերոյ ես քան զաղգ մարդկան· և գերազանցեալ գտանիս քան զանուանս կոչութիւնն իմ ։ Այամ զիարդ մարթի ես ինձ Պրաբիչդ տիեզերաց, և պարգեւատուդ ամենայն բարեաց՝ պաշտել զքեզ, և երկիրպագանել քեզ ըստ արժանւոյն՝ որ ի հնուրհս մարդոյն հոգացեալ լինաս մարկեցեր զայս ամենայն Հոխաբար և առատաբաշխ ձեռամբդ ։ Այակայն տակաւին ոչ գտանեմ ես զոր հաղորդակից ընդ իս բարեացս այսոցիկ ։ Այս միթէ կայցէ ինչ երջանկութիւն յառանձնութեան անդ· և ո՛չ ումեք մարթի ես վայելել միայն

'ի բարիս. և 'ի վայելս անդ ամենայնի գտանել
ջհաճութիւն անձին: Օ այսօրինակ յանդգնա-
բար իմն խօսեցայ ես: Կ՚ը պայծառ տեսիլն առա-
ւել ևս լուսափայլեալ՝ զոգեկս խնդագին արար
ինձ պատասխանի՝ օրինակ զայս:

Օ՛ինչ առանձնութիւն էր զոր ասէիր. ո՞չ
ապաքէն լի են երկիր և օդ բազմապատիկ արա-
րածովքդ կենդանեօք. և ամենեքեան կռվեցեալ 'ի
հրամանէ քումմէ՝ խայտան առաջի քո ցնծալից:
Վտառես դու զլեզու նոցա և զկենցաղ. զիտեն և
նոքա զքոյդ. և խօսին 'ի լեզուս՝ զորս չ՚ արժան
արհամարհել: Կ՚ը՝ զիա 'ի նոսա զգջօսանս ան-
ձին, և կալ իշխանութիւն 'ի վերայ նոցա. զի մե՛ծ
է թագաւորութիւն քո: Օ այս օրինակ խօսեցաւ
Տէրն տիեզերաց, և թուեցաւ տալ ինձ պատուէր
հրամանի: Սակայն ես խնդրեալ 'ի նմանէ զնե-
րումն խոնարհ հայցուածովք՝ ազարի նմա զայս
պատասխանի:

Մի՛ ծանր թուեսցին քեզ գանք իմ Կ՚ատարիչ
իմ, և զօրութիւն երկնային. այլ նեբեա՛ ինձ:
Ո՞չ ապաքէն դու ինքնին կացուցեր զիս փոխա-
նորդ քո աստանօր, և զատորինեաք առենայն խոնար-
հագոյնս եդիր քան զիս: Կ՚ը՝ յանհատատարան
անդ զնո՛ր ընկերութիւն, զնո՛ր միաբանութիւն, և
զինչ տիրապէս զուարճութիւն մնրթի է գտանել.
որում արժան է լինել փոխադարձ 'ի մէջ հատա-
ւոր ընկերաց: Օ՛ի յանհատատարութեան անդ
յատաւելոյլ միոյն, և 'ի նուազիլ միւսոյն՝ ան-
հնար է երկոցունց կողմանցն քաջ յարմարիլ ընդ
միմեանս. վասն որոյ և անդէն վաղվաղակի 'ի նեբեա
մտանել ձանձրութիւն յերեսաց միմեանց: Իմ

բանք են յաղագս ընկերութեանն՝ զոր ես լսեցի, և որում՝ ի դէպ է հաղորդակից լինել ընդ ես առնային բանական զուարճութեանց, յորս անմարթ է անբանից լինել ընկեր մարդոյ։ Զուարճացեալ բերկրին նոքա ընդ սեռս իւրեանց. առիւծ ընդ մատակ առիւծու. զի սովին վայելչութեամբ կապեցեր զնոսա ի զոյգս։ Ընդհանուր է կենցաղակից լինել թռչնոյ ընդ գազանի, և ձկան ընդ հաւու, և կապկի ընդ եղջն. և առաւել մարդոյ ընդ անբանից։

Ըստ դժուարեալ Ալմենակալին ընդ այս՝ արարի ինձ պատասխանի։ Ցեսանեմ զքեզ Ալդամ յընտրութեան անդ ընկերի ունել առաջի աչաց դիտեմատ և զվայելուչ երջանկութիւն. զի թէպէտև գոյանիս ի զուարճութեան, սակայն ոչ կարես վայելել զոյն առանձինն։ Այլ զինչ ունիս ասել զինէն, և զվճռակէ խնդրոյ երանութեան։ Ասէ ցիմ զքեզ արդեօք ունել զոյն լուսոյ, եթէ ոչ։ Ոչ միայն եմ յամենայն յաւիտենից, և ոչ ձանաչեմ զոք երկրորդ կամ նման ինձ, և առաւել զուգահաւասար [16]։ Ալդ՝ ընդ ո՞մ ունիմ ես կենցաղակից լինել, եթէ ոչ ընդ արարածոց՝ զոր ստեղծի. և դոքա ստորինքդ քան զքեզ՝ անսահմանն առաւելութեամբ խոնարհագոյն են քան զիս։

Վասդարեաց նա. և ես խոնարհութեամբ ետուն նմա զպատասխանի։ Վերագոյն Տէրդ արարածոց՝ անհնար է մեզ մարդկան հասու լինել բարձրութեան և խորութեան յաւիտենական ձանապարհացդ քոց։ Կատարեալ ես դու ինքնին և ապնիազ. բայց ոչ նոյնպէս մարդ, այլ ըստ չափոյ ևեթ։ Յանկոյ նա կենակից լինել ընդ նմանեաց

իւրում՝ առ ի գտանել զօգնութիւն ի նմանէ, և ընդ գկարօտութիւն անձինն։ Ոչ են քեզ պէտք սերնդեան և ազելութեան. զի Թէպէտ միայն ես, այլ անբաւ և աննիւնակատար։ Այլ մարդն Թերի գոլով՝ սահմանեալ է ընդ Թուով, և զպատկեր իւր բազմացուցանել՝ ճնեալ գնմանն ի նմանութ։ Ի միութեան անդ ոչ է նա կատարեալ, զի պէտք են նմա համեմատ սիրոյ, և մտերմիմ բարեկամութեան։ Այլ դու ի գաղտնութեան քում Թէպէտ և միայն ես, բայց քաջ միանեալ ընդ քեզ՝ ոչ ես կարօտ հաղորդակից ընկերութեան։ Սակայն և այնպէս յորժամ կամք են քեզ, կարող ես ամբաւանալ զարարածս քո ի վերագոյն բարձրութիւն միութեան կամ հաղորդութեան ընդ քեզ, և աստուածացուցանել գնոսա[17]։ Լաւ ես ի կենակից լինել իմում ընդ սոսա՝ ոչ կարեմ ուզել գնոսա ի կորացմանէ անտի ընդ երկիր. նախ իրի և ոչ գտանեմ գՀաճութիւն անձին իմոյ ի կենցաղս նոցա։ Սովին համարձակութեամբ խօսեցայ ես ընդ նմա, ի կիր արկեալ զաղաւթիւնն՝ զոր ընկալայ ի նմանէ. և նա հաձեցաւ ընդ բանս իմ. և ետ լինել պատասխանի ընդհակառակ բարբառովն՝ օրինակ զայս։

Յայս վայր գիջայ ես Ո՛դամ առ ի փորձ քումդ անձին. և տեսանեմ գքեզ քաջ ձանաչել ոչ միայն գկենդանիս՝ զորս ուղղութեամբ անուանեցեր, այլև զանձն քո. զի տիրապէս ցուցեր ի քեզ գՀնդգիմութեան՝ զպատկերն իմ անհաղորդ անբանից։ Ա՛ան որոյ և իրաւամբք ոչ Հաձիս ընդ անհամեմատ ընկերութիւն նոցա ընդ քեզ։ Այժ տակաւին ի նոյն միտս։ Այլ մինչև եր քո խօ-

սեալ ընդ իս՝ պիտեի ես, Թէ ոչ է բարւոք մարդոյն միայն լինել: Այլ այժմ ոչ ևս ինայ քեզ ընկեր ըստ օրինակի առաջնոցն. զի ածի զնոսա առաջի քո առ ի փորձ ածել, ի տեսանել՝ Թէ զիարդ ընտրես զարժանն և զվայելուչն: Որ յայսմհետէ հանդերձեալ եմ ածել, անշուշտ հաձեսցիս ընդ նա. զի է նմանութիւն քո, օգնական քո, ընկեր քո քաջավայելուչ, միւս ևս ինքնդ, և տիրապէս ցանկալին քումդ սրտի:

Ընդ եաց նա աստանօր զբան իւր. և կամ ես ոչ լուայ: Վասնզի յայնմ պահու ձնշեալ երկրաւորիս յերկնային ծանրութենէն՝ ընդ որով եկայ ընդ երկար ի վերջին բարձրութեան անդ գերաժայռեալ և անզուգական բանից, մեծասքեցաւ, շլջաւ, նուաղեցաւ, և խնդրեաց զհանգիստ քնոյ: Որ և յանկարծակի եհաս ի վերայ իմ, զոգես կոչեցեալ յօգնութիւն ի քնութենէ անտի. և կափոյց զաչս իմ: Կափոյց զնոսա, այլ եթող բաց եալ զսենեակն խմբումն մտաց՝ զտեսութիւնն իմ ներքին: Ընդ այն՝ իբրև վերառեալ ի յափշտակութիւն, Թուեր ինձ տեսանել ի քուն անդ զտեղին՝ ուր անկեալ կայի, և զկերպարանն պայծառափայլ՝ որոյ յանդիման կացի յարթնի: Որ և խնամարհեալ՝ եբաց զահեակ կողին իմ, և եառ անտի զմի ի կողից՝ որ էր ջերմաջերմ կենդանութեամբ, և զառաժամանակեայ հոսեր զարիւն կենաց: Ինձ էին վերքն զառաջինն, այլ անդէն լցեալ մտով՝ վասն կցեցան: Կողն իմ յօրինեաց նա և կերպարանեաց ընդ իւր ձեռնն. և ի ներքոյ ձևիւ ձեռաց նորա մեծացաւ արարածն մարդանաման, բայց այլասեր: Մնալ զեղեցիկ էր

նա և ցանկալի, մինչև առ նովաւ համբրկն գե-
ղեցկութեանց աչխարհի երևել տգեղատեսիլ, և
կամ բովանդակիլ ողջոյն ի նմա, և ի դէմս նո-
ցա։ Որ և ի ժամանակէ անտի եհեղ ի սիրտ իմ
զսքնեալիսն ինն քաղցրութիւն, զորոյ զփորձ ոչ էի
առեալ յառաջագոյն. զի բուրեր յանձնէ իւրմէ
զանուշահոտութիւն սիրոյ և տենչալի բերկրա-
նաց։ Այլ անդէն աներևութացեալ նորա յա-
չաց իմոց՝ եթող զիս ի մթան։ Ծարեցեալ յոյն
ժամ, և չոգայ ի խնդիր նորին, և կամ առ ողջա-
լոյ զկորուսեալ նորա՝ բարեաւ ինձ առացեալ այլ ա-
մենայն զուարճութեանց։ Այլ ահա անակնկալ
տեսի զնա ոչինչ կարի ի բացեալ լինելն, և ի նոյն
կերպարանս՝ որպէս տեսեալ էի յանուրջս անգ,
զարդարեալ ամենայն գեղեցկութեամբ՝ զոր միան-
գամ մարթի ե համբրկն երկրի, և կամ երկնից
մատուցանել նմա առ ի ընծայել զնա յաւէտ ինն
տնձկալն։ Այլն նա առ իս առաջնորդեալ յաներ-
ևոյթ Աբարչէն, և յերկնային ձայնէ նորա։ Ա-
ոչ իսկ անգիտ էր նա ամուսնութեանն սրբու-
թեան, և հարսանեացն օրինաց։ Յամենայն քայ-
լափոխս նորա երևէին ընդդէմ վայելչութեան,
երկինք յաչս, և սէր ի գնացս ողջոյն։ Այլն իբր
զեղեալ խնդութեամբ՝ ոչ ևս կարող եղէ ունել
զբարբառն իմ յաղաղակելոյ մեծաձայն առ Տէր։

Սովաւ զամենայն ինչ հատուցեր, և լցեր զբան
քո՝ Աբարիչ իմ գթած և բարերար, և պար-
գևատու ամենայն գեղեցկութեանց։ Այլ սա գե-
ղեցիկ ևս և քան զամենայն առատաձիրն պարգև
քո։ Այդ տեսանեմ զսա ոսկը յոսկերաց իմոց, և
մարմին ի մարմնոյ իմմէ, զիս ինքն յանդիման ա-

չաց իմոյ ։ Այն է անուն նորա՝ առեալ յառնէ , վասն որոյ արժան է սմա Թողուլ զՀայր իւր և զմայր , և գնալ զՀետ հինջ իւրոյ · զի եղիցին երկոքեան մի մարմին , մի սիրտ , և մի հոգի ։

Ուստի նա զայսոսիկ բանս իմ· և Թէպէտ Աստուածոյ ածեալ էր զնա առիս , սակայն և այնպէս անմեղութիւն նորա , համեստութիւն կուսական , առաքինութիւն նորա և ծանօթութիւն իւրոց արժանեաց՝ որոց պարտ էր լինջնին լինել սիրելի , այլ ոչ անձնամատոյց առ ի երևիլ յաւետ իմն ցանկալի , և միանգամայն իսկ ասել՝ նոյն լինքն բնութիւնն Թէպէտև անարատ ի մեղանչական խորհրդոց , այնպէս իմն զեղեցիկս կարծեալ էին ի նմա , մինչև ի տեսանել նորա զնա՝ խոյս ետ լինէն ։ Ընթացայ ես զկնի նորա , և նա քաջ ծանեաւ զյարդ մեծարանացն . վասն որոյ և պանծալի հնազանդութեամբ հաւան պատա ընդ բանս յորդորանաց իմոց ։ Եւ այնպէս ածի զնա ի տունն սրսկապանի Հարսանեաց ։ Համբոյն երկինք , և բարեհաճեան համաստեղութիւնք հեղին յայնժամ զցանկալի հոսանս իւրեանց [18] ։ Երկիր , և ամենայն լերինք ետուն զնշանս խնդակցութեան իւրեանց ։ Այցատալից Թռչունք , զուարճին հողմք , և քաղցրաշունչ օդք հնչեցին ընդ անտառս . որք և բարձեալ բերեին ի Թևս իւրեանց զանուշահոտ վարդս , և զքաղցր բուրմունս խնկիւ նեաց ի զուարճութեան անդ իւրեանց . մինչև սկ բատարփ Թռչունն պիշերոյ [19] նուագեալ զերգն առագաստի . և էտ աստեղն երեկոյի [20] փութալ յարուեան իւրոյ լերին , և անդ լուացանել զջահն Հարսանեաց ։

Ահա զայսօրինակ ցուցի քեզ զամենայն ինչ զիմ, և հաստցի զպատմութիւնս ի կատար անդր երկրաւոր երջանկութեանն՝ յոր վայելեմ արդ։ Այլ արժան է ինձ խոստովան լինել զայս. զի թէպէտ գտանեմ զղջմարձանութիւն և յայլ արարածս, սակայն նոքա ի վայելս իւրեանց ոչ այլոյ լեն զվիտս իմ, կամ ձգեն բուռն ցանկութեամբ՝ որպիսի են վայելք ձաշակելեաց, տեսանելեաց, հոտոտելեաց, բանջարոց, պտղոց, ծաղկանց, շըրջելոյ ի զբօսանս, և քաղցրաձայն երգոց թռչնոց։ Այլ ի սմա այլ յայլմէ լեալ՝ տարօրինակ ինչ տեսանեմ, և զգամ յանձին։ Այս ի սմա միայն զառաջինն զիտացի զկիրս։ Յայլ ամենայն զղջմարձանութիւնս զեր ի վերոյ գտանիմ և անպարտելի, իսկ ի սմա տկարացեալ յուժոյ առաջի յաղթականն տեսչեան հրապուրիչ գեղեցկութեան։ Այսոքա որոյ կամ քնութիւնն պակասեալ է առ իս, և ծողեալ յիս մանն ինչ տկարագոյն առ ի զդէմ ունելոյ այնպիսւոյն տեսութեան, և կամ յառնուալ անդ ի կողից իմոց՝ թերևս էառ նա առաւել քան զբաւականն։ Այս կամ գէթ ընդհեաց նմա զառաւելութիւն զարգուց. որք արուեստաւկեալ են ըստ արտաքին տեսչեան, թէպէտև ի ներքս անդ ոչ նոյնպէս անվթար։ Այ տեսանեմ զնա յետնեալ յառաջին նպատակի անդ քնութեան, ի միտս առեմ և ի զօրութիւնս հոգւոյն՝ որք են յաւէտ պանծալի։ Այս ըստ արտաքին տեսչեան և ոչ է նա քաջ նմանատիպ պատկերի նորա՝ որ արար զերկոսեանս. և ոչ գուցանէ նա տիրապէս զկնիք իշխանութեանն՝ որ տուեալ է մեզ ի վերայ այլոց արարածոց։ Այակայն և այնպէս ի

մատչել իմում՝ ի գեղեցկութիւն նորա՝ այնչափ անթերի գտանեմ զնա և կատարեալ մինչև թուել ինձ իմաստուն յոյժ, առաքինի, խոհական և ընտիր յամենայն գործս և ի բանս իւր։ Վասնայն բարձրագոյն գիտութիւն նուաստացեալ խոնարհի առաջի նորա։ Համաստութիւնն կորուսանէ զհանձար իւր ի խօսել անգ ընդ նմա, և երևի գոգցես անմտութիւն։ Աչխատութիւնն և բան սպասաւորս ունին նմին, որպէս թէ առաջին լինել նա ի դիտման արարչութեան, և ոչ յետոյ քան զնս ըստ բերմանն։ Այլ ի մի բան բովանդակել զամենայն, վեհանձնութիւն և աղնուական միտք տենչանօք հաստատեն ի նմա զաթոռս իւրեանց, և զմեծարանս կարգեալ ունին զնովաւ իբրև զպահպանութիւն հրեշտակային [21]։

Ասէ Հրեշտակն ետ զայս պատասխանի խոստութեամբ լինն։ Այն լինիր մեղադիր բնութեանն՝ որ ելից զպարտս իւր, այլ լից դու զանձինդ միայն։ Այն երկմիտիր ընդ իմաստութիւն քո. ոչ լքանէ նա զքեզ, եթէ ոչ դու թողուս զնա ի կարևոր ժամու, և ոչ մեծ ինչ համարիս զորս չէն արժանի։ Օ՛ի զարմացեալ ես այնչափ, և այլ յայլմէ լինիս ընդ տեսիլ նորա արտաքին։ Արդարև գեղեցիկ է նա, և արժանի քումդ մեծարանաց և սիրոյ, այլ ոչ հպատակութեան։ Այնր ի կշիռ ընդ նմա զանձն քո, և յայնժամ ծանիցես զյարդ նորա։ Օ՛ի բաւ զումանգամ չէք ինչ այնպէս կարևոր մարդոյ, որ պէս վարկ անձինն հաստատեալ յարդարութիւն և յուղղութիւն, և ի կիր արկեալ ըստ արժանեաց։ Որչափ Հարտար ես յայս արուեստ, այնչափ ծանիցես զնա զքեզ գլուխ իւր. և արտաքին ցոյցք նորա

տեղի տայեն առաջի քումդ պարծանաց ։ Այեղ-
ծաւնա պՀնազարդ յառաւելութիւն քումդ բեր-
կրանաց . և յարդոյ՝ ղի գիտասցես սիրել զքո կե-
նակից ։ Որ և քաջ տեսանէ զքեզ, յորժամ ոչ է
ըևիս քաջ խնաստուն ։ Ապա եթէ զբերկրութիւն
զպայուքեանցդ ախորժես ՚ի նմա ՚ի սակս որդե-
ծնութեան, զնոյն գտանես ընդհեաւ և անբանից ։
Որ ոչ լիներ դուշնաքեայ ինչ առ նոսա , եթէ
վայելք նորին լինելին արժանի ՚ի նուաճել զմիտս
մարդոյն, և շարժել ՚ի նմա զկիրս ։ Այակայն և այն
պէս սիրեա դու ՚ի նմա զոր ինչ միանգամ գտանես
աղնուական, զուարճալի , մարդկային և բանական։
Պովելի է սէրն , այլ ոչ բուռն կիրք . զի չիք ՚ի դո-
սա սէր Հմարիտ ։ Այերն աղնուացուցանէ զմիտս ,
և ընդարձակէ զսիրան ։ Ունի նա զաթոռ իւր հաս-
տատեալ ՚ի բանն , և է խոհական ։ Անդուլք իմն
է նա՝ որով մարթ է քեզ ամբառնալ ՚ի սէրն երկ-
նային , այլ ոչ ընկղմիլ ՚ի հեշտութիւնս մարմնոյ ։
Վմին իրի իսկ ոչ գտեր զընկեր ՚ի մէջ անասնոց
անբանից ։

Որում ետ պատասխանի Ադամ զոգես ամե-
նասարտեալ ։ Ո՛չ տեսիլ նորա արտաքին այնչափ
գեղեցիկ , և ոչ հեշտութիւն որդեծնութեան ըստ
այլոց կենդանեաց ( Թէպետև անկողինն սրբու-
թեան խորհրդական է , և յաւէտ իմն պատուոյ
արժանի ) այնպէս բերկրեցուցանեն զիս , որպէս
ընդհաղարդ գնացքնորա , և բազմապատիկ վայել-
չութիւնք բանից և գործոց՝ զորս հոսէ նա հանա-
պազ խառն ընդ սիրոյ , և քաղցրիկ հաճութեան ։
Որք և յայտ առնեն զանկեղծ մեծութիւն մտաց
և հոգւոյ յերկոսեան ՚ի մեզ ։ Այս միաբանութիւն

այսպիսի ՚ի լծակից ամենայն յաւէտ բերկրական և քան զերդնակութիւն ձայնի յականջս ։ Այսպիսի և այնպէս ոչ յաղթահարիմ ես ՚ի նոցանէ ։ Այլ զոր ինչ զգամ յանձին իմում, ահա ծանուցանեմ քեզ ։ Անպէտև տեսանեմ զառարկայս ըզգայութեանց, բայց ինքնիշխան գոլով՝ ընտրեմ զլաւն, և զհետ երթամ բարւոյն [22] ։ Այլ դու մի ստգտանիր զիս ՚ի սակս սիրոյ. զի ինքնին ասացեր զնմանէ առաջնորդ լինել յերկինս. որ և է առաջնորդ և ձանապարհ միանգամայն ։ Այլ տուր ինձ աղաչեմ պատասխանի, եթէ հարցուածն իմ իցէ իրաւացի ։ Արդեօք արդեօք և հոգիք երկնաւորացն. և զիա՞րդ ցուցանեն զայն սէր ։ Այնեթէ հայեցուածո՞վք ևեթ, եթէ ձառագայթակից փայլմամբ ։ Օ՞ր ուրեմնակա՞ն, եթէ անմիջական հպաւորութեամբ [23] ։

Արդ արար պատասխանի Երեւտակն ժպտելով՝ ուր ցուցանէր ՚ի դէմս նորա զվարդագոյն կարմրութիւն երկնից, զսեպհական գոյն սիրոյ ։ Շատ լեալ քեզ գիտել զմեր երջանկութիւն, որ ոչ գտանի երբեք առանց սիրոյ ։ Այդ՝ զոր միանգամ վայելես դու ՚ի մարմնի մարդկութեամբ (զի ստեղծար անարատ) զնոյն վայելեմք և մեք անչափապէս, զի չունիմք խափան յերեսաց գործարացս մարմնոյ ։ Եթէ գտանի զուգախառնութիւն յերկնային հոգիս, դիւրագոյն և քան զխառնուն օդոյ ընդ օդոյ՝ միաւորին նոքա անախտ տենչանօք մարդուր ընդ մարդուր, և չունին պէտս անձկագոյն կապանաց որպէս մարմինն ՚ի զուգախառնութեան անդ ընդ մարմնոյ, և հոգի ընդ հոգւոյ [24] ։ Այլ ես ոչ և ես կարեմ ինալ առ քեզ. զի մեկնեալ արե-

գական՝ մնանէ յայնկոյս գալարազուարճ Յորդանանդին [25] երկրի, և Հեսպերեանն [26] կանաչազգեստ կղզեաց. և ակնարկէ ինձ տեղի տալ աստի։ Ասայց դու քայլ լեր, և զօրացիր. կայ յերջանկութեանդ, և սիրեա. բայց յառաջքան զամենայն զնա՝որոյ սիրոյն նշանակ է հնազանդութիւնն, և պահպանութիւն վերին հրամանաց նորա։ Ընդ գոյշ լեր՝ գուցէ թիւրեսցէն կիրք զմիտս քո հաւանիլ ընդ այն՝ զոր թերևս անձնիշխան ազատութիւն կամացդ չառնու յանձն ի գործել։ Երջանկութիւն և թշուառութիւն անձինդ, և հանդերձ որդւոց քոց ի քեզ էն հաստատեալ։ Ընդ հաստատութիւն քո ցնծացայց ես, և ամենայն հրեշտակք երկնից ընդ ես, կայ անդրդուելի։ Այլ կամ անկանիլ՝ թողեալ է յազատութիւն կամաց քոց։ Զոլով քո կատարեալ յանձինդ՝ մի լինիր ի խնդիր օգնականի արտաքուստ։ Այլ ի քոյ արա ի քէն զամենայն առիթս պատուիրանազանցութեան։

Այս ասացեալ նորա՝ յարեաւ ի գնալ։ Այլ Ադամ յաւել տալ նմա զօրհնութիւնս զայս [27]։ Այլ քանզի երթաս, գնա խաղաղութեամբ հիւրդ երկնային, և պատգամաւորդ աստուածային. որ առաքեցար ի նմանէ՝ որոյ վերնական ընծորհացն երկիր պագանեմ։ Յանկալի եղև ինձ և քաղցր յոյժ զիջումն քո առիս. որ և պատուեացի միշտ ընծորհակալու յիշատակաւ։ Այլ եր բարերար և բազում մարդկան ազգի հանապազ. և ստէպ դարձիր առ մեզ։ Այսօրինակ խօսեցեալ նորա՝ մեկնեցան ապա ի հովանոյ անտի ծառոյն՝ Հրեշտակն յերկինս ի վեր, և Ադամ ի հովանոյ իւր [28]։

# ԳՐԱԽՏ ԿՈՐՈՒՍԱԿԱՆ

ԳԻՐՔ· Թ։

# Ն ԱԽ ԱԴՐՈՒԹԻՒՆ

Յաճախել Սատանայի ընդ երկիր՝ գարձ առնէ ի դրախտ անգր ի գիշերի իբրև զմէգ։ Սատանէ յօձն ի ննջել նորա։ Ադամ և Եւայ ելանեն ի վաստակս իւրեանց։ Եւայ առա- ջի առնէ Ադամայ բաժանել զայն յառանձին վայրս, և վաս- տակել ուրոյն ի միմեանց. բայց նա ոչ հաւանի ընդ այն, յառաջ բերեալ զվտանգն փորձութեան Թշնամւոյն՝ յոյր սակս զգուշութիւն ընկալան յառաջագոյն։ Դժուարեալ Եւայի ընդ կարծիս անզգուշութեան անձին, և ոչ հաստա- տութեան ըստ բաւականին՝ ասիպէ զԱդամ թողուլ զնա գնալ առանձինն, և կամի զփորձ առնուլ իւրումն զօրութեան։ Եւ այնպէս ապա թոյլ տայ նմա Ադամ։ Օձն գտանէ զԵ- ւայ յառանձին վայրի, և խորամանկ չարութեամբ մատու- ցեալ առ նա նախ ի չարմացուին, և ապա ի բանս՝ բազմա- պատիկ չողոքորթութեամբ գեր ի վերոյ ամբառնայ զԵւայ քան զամենայն արարածս։ Զարմացեալ նորա ընդ խօսել օձին՝ հարցանէ նմա զպատճառն ատանալոյ նորա զնորոգ բար- բառ, և զիմաստ մարգոյ։ Եւ նա տայ նմա պատասխանի, թէ գոի զայն ճաշակմամբ յայն ինչ ծառոյ ի պարտիզի անդ։ Եւայ խնդրէ ի նմանէ տանել զնա անդր։ Զոր և գտանէ լի- նել արգելեալ ծառն գիտութեան։ Իսկ Սատանայի յաւել- ին խրոխտացեալ ի միտս իւր՝ բազում բանիւք հնարի ձգել զնա ի ճաշակումն։ Եւ նորա հաւանեալ՝ ճաշակէ։ Եւ ապա առվայրս մի մռայիւղ լեալ յանձն իւր տարակուսանօք՝ տա- նի և տայ Ադամայ ի պղտոյ անտի, և ծանուցանէ ևս նմա զհրապուրողն անձին իւրոյ ի ճաշակումն։ Յապուշ կրթի ընդ այն Ադամ զառաջինն. բայց ապա ծանուցեալ զնորուստ Եւայի՝ առ անհնարին սիրոյն հաստատէ զմիտս իւր կորնչել ընդ նմա։ Եւ այնպէս թեթև լինէ գրեալ զյանցանս՝ ճաշակէ և նա ի պղտոյ անտի։ Աւրդասիք նորա ի նոսա։ Խնդրէն նախ ծածկել զմերկութիւն իւրեանց, և ապա անկանին ընդ միմեանս ի հակառակութիւն և ի ատելութիւն իրերաց։

# ԴՐԱԽՏ ԿՈՐՈՒՍԵՒԼ

ԳԻՐՔ. Թ։

Այլ եւս էն բանք Աստուծոյ կամ Հրեշտակի ընդ Արդոյ՝ ի հիւրընկալութեան՝ յորում խօսեր նա ընդ նմա իբրեւ ընդ բարեկամի, և զիջաներ բազմիլ ընդ նմա՝ ի ձաշ պարտիզաբեր կերակրոյն, և՝ ի նմին պահու Թոյլ տայր նմին խօսել ընդ նմա համարձակ զարժանն։ Այլ արդ մնայ լինել զողբերգականն յեղանակել զձայն. զմարդոյն ասեմ զանկրաւ յերկուանայ, զուխտադրուժ չարութեան, և զապստամբ պատուիրանազանցութեան, և զԱստուծոյն՝ որ օտարացեալն է՝ ի նմանէ՝ զատելութեան, զսրտմտութեան, զկշտամբանաց և զարդարադատ վճռոյն՝ որ եմոյծ յաշխարհ զաշխարհ աղետից. զմեղսն խմա, և զստուեր նորա զմահ, և զամենայն չարիս՝ զկարապետս մահու։ Յաւագին է երգս, այլ յաւէտ Դիւցազնական քան զբարկութիւնն սրտմտելոյն Աքիլլեայ՝ [1] որ զՀեկտ սպդեցաւ Թշնամոյն երիցս փախստականին առ պարսպօքն Տրովադայ [2]։ Եւ քան զսրտմտութիւնն Տուրնեայ [3] ՝ի սակս Լաբինեայ [4] հարսին

զրկելոյ ։ Որպէս և քան զցասումն Պօսիդոնի [5] և Հերայ՝ [6] որք տաղնապեցուցին ընդ երկար զՅոյնս, և զորդին Կիւթերեայ [7] ։ Այնպէս թէ մարթացայց ընդունել զվայելչականն եղանակ ի պաշտպանէս երկնաւորէ՝ [8] որ առանց իսկ իմումն պաղատանաց հաձի ընորհել ինձ զայցելութիւն իւր գիշերային. և ի ննջել իմում ազդէ յիս, կամ ինքնին շարժէ զչափս ոտից իմումն անակնկալ երգոյ [9] ։ Վասնզի ընդ այս երգ Վիւցաղնական՝ զոր ընտրեցի ընդ երկար, և ձեռն արկի անագան [10], հաձեցայ ես զառաջինն. որ ի ջնել ոչ եմ յօժարեալ ընդ պա տերազմական երգ՝ զոր ցարդ միայն համարին Վիւցաղնական [11] ։ Որոյ երևելի ձարտարութիւն էր հատանել յերկայնաձիգ և ի ձանձրալի անգամ մանիւս զառասպելեալ Ասպետս ի ստայօդ պա տերազմունս և ի շահատակութիւնս [12]. Թողեալ ի բաց զերգս ընտիր ընտիր քաջութեանց արիա կան համբերութեան, և դիւցազնական նահատա կութեան [13] ։ Այլ կամ նկարագրել զկրկէս և զՀանդէս խաղուց, զարդնընկէց կազմածս, զնշա նակիր վահանս, զզամբաքանդակ կնիքս, զնժոյգս, զղաղտս, զպալափուշս և զոսկեձամուկ վերարկուս երիվարաց խրոխտապանծ Ասպետաց ի խաղս նիզակաց ։ Որպէս և զինջոյս նոցա ի հոյակապ սրահս՝ սպասահարկեալ ի տաձարապետաց անտի և ի հազարապետաց ։ Այլ այսոքիկ հնարք են մտոի արուեստի ձարտարախօսութեան, և ոչ ընծայեն իրաւամբք զՎիւցաղնականն անուն՝ անձին կամ քերթուածոց ։ Այլ ինձ՝ որ ոչ եմ վարժեալ ի նոսա, և չունիմ ինչ փոյթ, բարձրագոյն ինայ ձեռնարկութիւն. որ ինքնին իսկ [14] բաւական

է ընծայել ինձ զայդ անուն՝ եթէ ժամանակն ա-
նագանեալ դարու [15], կամ կլիմայն ցրտագին [16],
և կամ ամք կենացս [17] ոչ վայրաբերեն ՚ի խոնարհ
զթեւոց իմոց զթուիլս։ Օ՜ որ և դիւրաւ մարթ էր
նոցա տանել ՚ի գլուխ, եթէ բովանդակութիւն
երգոյս լինէր անձին իմոյ, և ոչ նորայն՝ որ արկա-
նէ զայն յունկն իմ ՚ի գիշերի [18]։

Ա՜րդէն իսկ մտեալ էր արեգական, և զինի նո-
րա աստեղն երեկոյի՝ որ կարգեալ է ՚ի պաշտօն
ածել զաղօտալոյս յերկիր՝ երբեմն առաւմանա-
կեայ միջնորդ ընդ մէջ տունջեան և գիշերոյ. և
կիսաբոլորակն գիշերային քօղարկեր զհորիզոնն
ծագաց ՚ի ծագս չուրջանակի, այն ինչ Յատանայ՝
որ փախուցեալ էր Յ՜Ադեմայ յերեսաց սպառնա-
լեացն Վ՜աբրիելի, արդ յաւէտ իմն սոնքացեալ ՚ի
չարանենգ խորհուրդս դաւաճանութեան, և զհետ
մտեալ կորստեան մարդոյն՝ թէպէտև քաջ գի-
տէր, թէ մարթ էր նմա առաւելագոյն չարեաց
հանդիպել, սակայն և այնպէս յանդուգն դար-
ձաւ անդրէն։ Վախուցեալ էր նորա ՚ի գիշերի,
և նոյնպէս դարձաւ զհասարակ գիշերաւ՝ շրջեալ
ընդ երկիր։ Օ՜ զուշացաւ յերեսաց տունջեան,
զի ՚ի նմա տեսեալ էր Ա՜բրիելի իշխանի արեգա-
կան զմուտ նորա ՚ի դրախտն, և ազդ արարեալ
Վ՜երովբէիցն պահակեցաց։ Ա՜րդ վտարեալ նո-
րա անդուստ՝ շրջեցաւ տագնապաւ գիշերս վեց
ընդ խաւար։ Ա՜րիցս պատեցաւ զգիշերահասաւ
ըմն գծիւ [19]. չորիցս էանց ընդ սայլն [20] գիշերոյ
բևեռէ ՚ի բևեռ՝ խաղացեալ ընդ կրկին ծիրս
գնոյ [21]. և յումեքորդումն նուագի դարձաւ
անդրէն՝ գտեալ զդողուզն և զանկասկած ձանա-

պարհ՝ ի հանդիպել մտից դրախտին, և քրովբէա-
կան պահպանութեանն։ Այլ անդ տեղի առ ստո-
րոտով դրախտին՝ որ արդ ոչ ևս գտանի (Թէպէտ
և մեղքն մուծին զառաջինն զայն յերկրափոխու-
թիւն, և ոչ ժամանակն), ուր Տիգրիս անդնդա-
խոր ծովանայր. և ապա մասն ինչ նորա աղբերա-
նայր առընթեր ծառոյն կենաց։ Ասուզեցաւ Ա-
տանայ՝ ի նմա ընդ գետոյն, և էլ վերստին ար-
տաքս ընդ մառախլապատ մգ նորա, և ապա
խնդրեաց զտեղի Թագաւորեան անձին։ Այլ նա՝ ի
խնդիրը ծովու և յամաքի։ Յեղեմայ էանց՝ ի Պոն-
տոս [22] և՝ ի ծովակին Ալովտեայ [23] յայնկոյս գե-
տոյն Ալբայ [24], և հեռագոյն ևս մինչև յբևեռն
հակարջային [25]։ Այլ յերկայնութեան անդ արև-
մտից յԱլբանտեայ [26] մինչև յԱվկիանոսն սահմա-
նակից Կասբենայ [27]։ Այլ անդուստ ապա մինչև
յայամաքն՝ ուրանօր գետահոսեալ ընթանան Կասպ
գէս և Հինդոս [28]։ Այսօրինակ շրջեցաւ նա ընդ
գունան երկրի՝ ի խնդիր զգուշութեան անձին։
Այլ մնադիր քննութեամբ դիտեաց զամենայն ա-
րարածս՝ առ՝ի քաջ իմանալ, թէ ուր արդեօք՝ ի
նոցանէ մարթ էր յաւէտ լիմն ձեռնտու լինել իւ-
րումն հնարիմաց չարութեան։ Այլ եդիտ զօձն
առաւել խորամանգ քան զամենայն գազանս երկ-
րի։ Ասէ որոյ զկնի բազմապատիկ խորհրդոց և
տարակուսանաց՝ զնա ընտրեաց՝ ի վերջոյ անօթ
քաջայարմար իւրումն չարութեան՝ առ՝ի մտանել
՝ի նա, և Թագուցանել՝ ի նմա զխաւարային հրա-
պոյրս իւր յերեսաց սրատես ևս աչաց։ Օ՜ի յօձն
խորագէտ էր հնար ումեք անկանիլ՝ ի կասկա-
ծանս պատրանաց՝ համարեալ զայն քնիկ գործ

իւրումն ձարտարութեան և հնարից ։ Ապա յայլ կենդանիս մարթ էր յերկուանալ ընդ նոսա իբրև ընդ դիւական զօրութիւն ազգեալ ՚ի նոսա ՚ի վեր քան զգայութիւնս անբանից ։ Այլ ոչ իրի ՚ի նմա հաստատեաց զմիտս իւր ։ Այլ նախ յերեսաց ցաւոց անձինն թափեաց արտասուօք զՀեղձամղձուկ կիրս իւր՝ օրինակ ցայս ։

Ի վերկիր՝ զիարդ նմանատիպ ես երկնից, եթէ ոչ իրաւամբք նախապատիւ քան զնա՝ արժանի բնակարանդ Աստուածոյ՝ ըստ որում շինեալ երկրորդ խորհրդով ՚ի նորոգութիւն հնոյն. զի առ ինչ էր յօրինել Աստուածոյ զյոռին զկնի լաւագունին [29] ։ Երկինդ երկրաւոր՝ պար առնուն զքեզ այլք ՚ի լուսափայլ երկնից [30], և բարձեալ բերեն զլուսալիր և զպայծառատեսիլ զամպարս իւրեանց՝ որպէս թուի, ՚ի քոյդ միայն սպասահարկութիւն. և հաւաքեալ ժողովին ՚ի քեզ զգեղեցիկ ձառագայթս երկնային հոսանաց իւրեանց ։ Օրօրվինակ Աստուած կենդրոն գոլով յերկինս՝ ձգի առ ամենեսին, նոյնպէս և դու կենդրոնեալ՝ ընդունիս ՚ի պարունակացդ յայդցանէ զվերինս հոսանս ։ ՚Ի քեզ յաւէտ քան ՚ի նոսա երևեալ տեսանին հաճելին ազգեցութիւնք նոցա՝ որք յառաջ բերեն զլոյս և զտունկս, և զանշուշական ծնունդս կենդանի արարածոց՝ աստիճանեալ զնոսա ՚ի կեանս աձելութեան, զգայութեան և բանի ։ Այս զամենայնին բովանդակեալ ունին ՚ի մարդն ։ Այլ ես քանի՞ զուարճութեամբ շրջեի ՚ի քեզ, եթէ մարթ էր ինձ գէթ սակաւուք վայելել ՚ի քաղցր փոխանակութիւնս լերանց, հովտաց, դաշտաց, գետոց և անտառաց ։ Այլ զի յերկրի, և ոչ զի ՚ի ծովու,

և կամ յեզերս նորա պսակազարդեալ անտա-
ռովք, ժայռիւք, և քարանձաւօք։ Սակայն և ոչ
՚ի միում ՚ի նոցանէ գտանեմ զտեղի, կամ զիա-
խուստ անձին իմոյ։ Այլ ըստ առաւելութեան
զուարճութեանցն՝ զորս տեսանեմ շուրջ պատեալ
զինեւ, յաւէտ ինն կրեմ զտանջանս իբրեւ յերե-
սաց ատելի բնակութեան իմոց հակառակորդաց։
Սման որոյ և ամենայն վայելք քո գառնան ինձ
՚ի Թոյն։ Այլ յերկինս իսկ անբերելի լիներ ինձ
վիճակն իմ։ Քանզի ես ոչ աստանօր, և ոչ յերկինս
խնդրեմ զհանգիստ անձին իմոյ, այլ միայն ՚ի
վերաժխնդրութեան անդ ՚ի գերագոյն Աբբայէն
երկնից։ Այլ թէպէտ սովին ոչ ակն ունիմ գտա-
նել զնուազութիւն չարեացս, սակայն փութամ
նմանօրինակ ինձ կացուցանել զայլս՝ թէ և առա-
ւել ևս կատեսցին չարիքն ՚ի վերայ իմ։ Օ՜ի մի-
այն յապականութեան անդ գտանեմ զհանգիստ
իմոցս անհանգիստ խորհրդոց։ Այլ զինի ապակա-
նելոյ իմ կամ ձգելոյ յատիլին վերջին կորստեան
զնա՝ յոյր սակս ստեղծան այս ամենայն արարածք,
սոքա ինքնին զհետ երթան նմին, զի կապեալ են
ընդ նմա յերջանկութեան անդ կամ ՚ի թշուա-
ռութեան։ Նմա գուն գործեցից, և պնդեցայց
զհետ թշուառութեան, զի համայնապինդ չարա-
կեցի ապականութիւնն։ Պարծանք անձին իմոյ
միայնոյ ՚ի մէջ զօրութեանցն դժոխոց լեցի ապա-
կանելն իմ ՚ի միում աւուր զայն՝ յորոյ ՚ի չինու-
թիւն կոչեցեալն Աստուածոյ աշխատ եղև զվեց տիւ
և զվեց գիշեր։ Այլ ո՞ գիտէ, թէ քանի՞ ևս յա-
ռաջն ՚ի խորհել անդ ընդերկար։ Սակայն թէ-
բև ոչ յառաջագոյն քան զգիշերն, յորում ես

ազատ կացուցի յանփառունակ ծառայութենէն, անտի զոգեաս զկէն բազմութեան հրեշտակաց, և թողի սակաւաթիւ զպաշտօնեայս նորա։ Որ և ի խնդիր վրիժուց, միանգամայն և ի լրումն թըշուառութեան՝ կամ տկարացեալ ի ստեղծանել զայնպէս հրեշտակս, ունելով սպառեալ զառաջինն զօրութիւն իւր (սակայն եթէ իցէն հրեշտակք արարածք նորա) և կամ յառաւել նախատինս մեր՝ եդ ի մէջ ամբառնալ ի մեր կայանս զարբածն երկրաստեղծ. և զարդարել զնա ի կողպատ մեր երկնային՝ վերառեալ ի նուաստութենէ անտի իւրումն ծագման։ Այլ զոր ինչ կամեցաւ, կատարեաց։ Զարր զմարդն, և ի սակս նորա յօրինեաց զաշխարհս ընաշխարհիկ, և ետ ի բնակութիւն նմին զերկիր։ Զանոյշ զնա տեր, և որ անբերելի և՝ կարգեաց ի սպասաւարկութիւն նմին զհեւազգեստ հրեշտակս, և ի պահպանութիւն զբոցեղէն պաշտօնեայս։ Արկինչմ ես յերեսաց պահպանութեան նոցա։ Զմին իրի առ ի պատրանս նոցին՝ կամիմ արկանել զինեւ ըզմառախուղ հասարակ գիշերոյս, և այնպէս սողոսկեալ անտեսաբար ի դրախտն՝ հետազօտել ընդ ամենայն մացառս և ընդ թաւուտս, զի թերեւս կարացից գտանել զօձն ի քուն՝ առ ի թագուցանել ի բազմակնձիւռ գալարուածս նորա զանձն իմ; և զխաւարային խորհուրդս։ Զայլ սմ կետին նըւաստութեանս. զի որ յառաջագոյն ընդ Զսաուածս կըբեցայ ի սակս բարձրագոյն գահու, արդ յանձն առնում մտանել յանբան կենդանի. և միացեալ ընդ գարշելի անասնոյ՝ մարմնացուցանել և անբան կացուցանել զգոյացութիւնն երկ-

նային, որ ձգեցաւ ի բարձրութիւն անդր Աստուածութեան։ Սակայն յորպիսի՛ ինչ ոչ խոնարհի փառասիրութիւնն, և խնդիրը վըհիժուց։ Որ միանգամ ցանկայ նմին, պարտ է նմա ձգիլ՝ որպէս ի բարձունս, նոյնպէս և ի խոնարհ. և անկանիլ ընդ նուաստութեամբ՝ կանուխ կամ անապան։ Այլ քէն վըհիժուցն թէպետև քաղցր է ի սկզբանն, այլ սակաւ ի վճնի դառնագոյն ևս յետս դառնայ ի վըհիմնդիր անդր։ Այլ չէ ինչ, զարձյի. և որովհետև յաղթահարեցայ ի բարձունս՝ անկցի վըհիմնդրութիւնն իմ ի վերայ նորա, որ գտաւ ինձ միւս ևս նախանձարկու. և այն է նորդ սիրելին Յստուծոյ, մարդ հողագանգուած, և որդի արհամարհանաց. զոր Աբարիչն կանգնեաց ի հողոյ յառաւել նախատինս մեր։ Չափա արժան է հատուցանել նախատինս ընդ նախատանաց [31]։

Օ այս ասացեալ՝ իբրև զմիգ մառախլապատ որ սողայ ընդ երկիր, կալաւ զհեռագոտութիւն իւր զհասարակ գիւղերաւ ընդ ջրարբի և ընդ ցամաք Թաւուտս ի խնդիր օձին։ Օ որ և անդէն եգիտ խոր ի քուն ննջեալ ի բաւիղս անդ բազմոլորտ և ինքնագալար մանուածոյ իւրոյ. և գլուխ նորա կայր ի միջին վայրի՝ քաջ մթերեալ ի հնարս խաբանկութեան։ Այլ տակաւին ոչ էր նա մերձանչական. և ոչ ննջէր յայնժամ յահագին ըստ ուերի կամ յորջ իւր, այլ ի վերայ դալար խոտոյ՝ աներկիւղ, և անահարկու այլոց։ Նմանապէս ևն ի նա ընդ բերան նորա. և տիրեալ անբանական սրտի կամ գլխոյ նորա՝ փչեաց ի նա անդէն վաղվաղակի զազդեցութիւն իմն անզգալի.

այլ ոչ վըդովելոյց զքուն նորա՝ սպասեալ ընդ-
հուպ հասանելոյ առաւօտուն : Ա.ըդ՝ ՚ի սկսանել
անդ երկնային լուսոյն ծագել Ա.դեմ ՚ի վերայ
յօղագին ծաղկանց՝ որք բուրեին զառաւօտեան
հնդրուկս իւրեանց , և յարձակել համօրէն անու-
շահոտութեանց ՚ի մեծակառոյց սեղանոյ երկրի
զանբաւբաւս օրհնութիւնս իւրեանց ՚ի վեր առ
Ա.բարիէն, և ՚ի լսուլ զհոտոտելիս նորա բուրմամբ
անուշից՝ ելին արտաքս ՚ի հովանոյէ իւրեանց ա-
մուլքն մարդկան ազգի · և յաւելին զբանաւոր
պաշտօնս իւրեանց ընդ դասս անխօսուն արարա-
ծոց : Ա.ւ ապա հաղորդեալ անուշահոտ բուրմանց
և քաղցրասիպ օդոց նախընծայ եղանակին՝ առին
խորհուրդ ՚ի միջի, թէ զկարդ քաջ արդեամբք ան-
յուսացեն զայն օր յառաւելութեան անդ երկրա-
գործ վաստակոց իւրեանց · զի կարի ինն յաձա-
խեալ՝ փութացուցանէին զձեռս երկոցունց և
յանդուգն աշխատութիւն ՚ի պարտիզն անդ : Ա.ւ
Ա.ւայ սկսաւ զառաջինն խօսել ընդ առն իւրում
օրինակ զայս :

Ա.պաքէն մարթ է մեզ Ա.դամ աշխատ լինել՝ ՚ի
պարտիզս ՚ի սրբել և ՚ի դարմանել զբոյսս նորա
և զծաղիկս , որ և է առաւելարձակ գործ մեր կար-
գեալ Ա.բարիէն : Ա.յլ մինչև է հասեալ մեզ
յօգնութիւն այլոց ձեռաց [32], առաւելու աշխա-
տութիւն մեր ՚ի կարձել անդ զկարի բարգաւա-
ձումն բուսոց դրախտիս · զի զոր միանգամ յա-
տանեմք ՚ի տուէ , և քան զևս ածեցեալ ՚ի գի-
շերի՝ ծաղը առնեն զմերով աշխատութեամբս , և
փութանակի գնան ՚ի վայրագութիւն : Ա.ան որոյ
տուր ինձ խորհուրդ , և կամ լուր զիմն՝ զոր միաբն

իմ առաջի առնեն ինձ զառաջինն։ Խաժանեա՛ց գո՛ւք զաշխատութիւն մեր. վաստակեա՛ դու ուրա՛ նօր ընտրութիւն կամաց քոց առաջնորդե՛ք քեզ, և կամ ուրանօր յաւէտ պիտ՛ք են արկանելոյ ըզ՛ տունկս զսարսափինայիւք, և կամ ուղղելոյ զբա՛ղեղն պատատեալ՝ ի տեղին՝ ուր հանդերձեալ է եղանել։ Խակ ես՝ ի նմին պահու գտից զաշխատութիւն անձին իմոյ՝ ի տունկս անդ վարդիցն խառնելոց ընդ մրտենւոյ, և յարդարեցից զնոսա մինչև ցօր հասարակ։ Վասնզի զի՞նչ զարմանք էն, եթէ՝ ի կարգել մեր հանապազ զվաստակս մեր հուպ առ միմեանս՝ ի կարի ինն մերձաւորութենէ անտի անկանիցեն՝ ի մէջ հայեցուածք և ծիծաղք ընդ միմեանս, և կամ նոր ինչ առարկայ ըստ դիպաց պատճառ լինիցի մեզ խօսից ընդ միմեանս. որով և խափանումն լինիցի մերում վաստակոց զօր առնայն, թէ և սկսեալ իցեմք զայն վաղքաջ ընդ առաւօտն. և այնպէս ընթերեայն ժամ հասանէ՝ ի վերայ առանց ինչ արդեանց։

Որում Աղամ ետ զայս պատասխանի քաղցրութեամբ ինն։ Ա՛ւաղ՝ միակ օգնական իմ, և սիրե՛լի անձին իմոյ քան զամենայն կենդանի արարածս, քանզ խորհեցար զխորհուրդդ՝ ի գիւտ հնարից առ՝ ի բարիոք ընդել զգործ աշխատութեանն՝ յոր կարգեաց զմեզ Ստուած աստանօր. վասն որոյ և արժանի ես գովելոյ. զի չէ հնար գտանել ինչ՝ ի կին այնչափ սիրելի, որպէս զինամն բարւոք անտեսութեան, և յորդոր լինելոյ առն իւրում՝ ի գործս բարեաց։ Այլ ոչ այնչափ խրատ տիւ առկ Տէրն զաշխատութիւնն՝ ի վերայ մեր, մինչև չթողուլ նմա մեզ և՝ ի կարևոր ժամու զգ-

հանգիստ կերակրոյ և բանից ընդ միմեանս (որ և
ի կերակուր լինի մտաց) և զքաղցր հայեցուածս,
և զծիծաղ ընդ միմեանս։ Քանզի ծիծաղ ճնուն ընդ
ի բանին՝ յորմէ անբաժ են անբան անասունք. և
ի ձարակ լինի այնր սիրոյ՝ որ կարևորագոյնն ի՛ վի
կեանս մարդոյ։ Օ՜ի ոչ ստեղծ զմեզ Աստուած ի՛
կալի լինի աշխատութիւն, այլ յաւէտ ի՛ զբօսանս.
վասն որոյ և յաւել ի՛ նոյն զղջութիւն բա-
նին։ Եւ արդարև միայն ձեռք մեր երկոցունց
հանդերձեալ են պահել այժմ յերեսաց վայրա-
գութեան զշաւիղդ ի՛ պարտիզիս և զհովանոցս՝
որչափ կարևոր են մեզ ի՛ զբօսանս, մինչև զինի
մատաղերամ ձեռք հասցին մեզ յօդնութիւն։
Ապա եթէ երկարութիւն բանից ընդ միմեանս յա-
դեցուցանէ զքեզ, զիջանիմ քեզ հեռանալ յի-
նէն յառընթերակայ վայրս եւթե. զի առանձնու-
թիւնն լինի երբեմն լաւ ևս ընկերէ մարդոյ. և սա-
կաւ մի հեռացումն ստիպէ յանդրէն դարձ քաղց-
րագոյն ևս։ Վակասն և այնպէս երկմտութիւն
կալեալ ունի զմիտս իմ, զի կասկածիմ գուցէ ի՛
մեկուսանալ քո լինիլն՝ պատահեցին քեզ չարիք։
Օ՜ի քաջ գիտես զզգուշութիւնն՝ որ արարաւ մեզ.
և որպիսի չարասէր Թշնամի խանդագեալ ընդ եր-
կանկութիւն մեր, և անյոյս գտեալ յիւրմէ անտի՝
խնդրէ չարարուեստ հնարիւք ածել ի՛ վերայ մեր
զաղէտս և զամօթ նախատանաց։ Եւ թերևս ար-
ժան կայ նա ի՛ մերձակայ վայրս, և անյագաբար
սպասեալ ինոյ հասանել իւրումն ցանկութեան և
ընտիր որոյ՝ ի՛ մեկուսանալ մեր ի՛ միմեանց։ Քան
զի ոչ ակն ունի նա խաբել զմեզ ի՛ միասին, զի
մանրագ ի՛ մեզ արագ հասանել յօդնութիւն մի-

մեանց ՚ի կարևոր ժամու։ Ա՛ստանձին խորհուրդ կամաց նորա և խստութեցուցանել զինոս մեր ՚ի միամտութենէն առ Ա՛ստուած, և վերադարձել զնա կից սէր մեր, որ թերևս առաւել քան զայլ օրհնութիւնս՝ յոր վայելեմք, շարժէ զնա ՚ի նախանձ։ Այլ այս են կամք նորա, կամ այլ ինչ չարագոյն, մի Թողուր դու զկողն հաւատարիմ՝ որ ետ քեզ զկեանս, և տակաւին հովանի և քեզ և պաշտպան։ Կինն՝ ուրանօր վտանգ ինչ կամ նախանձք դարանակալ լինին նմին, անքոյթ և ՚ի դէպ ևս պատսպարի առ առն իւրում. զի պահպանի զնա, և կամ ժուժկալել ընդ նմա ևս չարագունին։

Որում կուսական պերճութիւնն Ա՛սայի՝ գոգոյես խանդակաթ, այլ ընդ նմին և դժկամակ վասն խնդրոյն զլացութեան, արար պատասխանի քաղցրութեամբ խառն ընդ խստութեան՝ օրինակ զայս։ Ո՛նուհանդգէ երկնից և երկրի, և Տէրդ արարածոց ՚ի նմա՝ զլինել Թէհամէնն՝ ՚ի խնդիր մերումն կործանման՝ ոչ միայն ՚ի քէն ուսանիմ ես, այլև լուայ ՚ի Հրեշտակէն՝ որ մեկներ ՚ի քէն, այն ինչ կայի ես յայնկոյս ՚ի հովանաւոր անկեան, գոգոյես յայնմ պահու դարձեալ՝ ՚ի փակել անդ ծաղկանց ընդ երեկս։ Ա՛յց զերկմտութիւն քո ընդ հաւատարմութիւնն իմ առ Ա՛ստուած և առ քեզ՝ ՚ի սակս ունելոյ մեր զՀնէմի դարանակալ, ո՛չ ակն ունիմ լսել ՚ի քէն։ Ո՛չ դու ոչ երկնչիս յերեսաց զօրութեան նորա. քանզի գոլով մեր անբնդունակ մահու և վշտաց՝ մնրիթ ես մեզ չտալ տեղի նմին, և կամ հալածել ՚ի բաց։ Ա՛պա երկնչիս միայն ՚ի պատրանաց նորա. զոր և հաւաստի յու-

ցանէ կասկած քո ընդ կա, թէ գուցէ խորամանկութիւն նորա դերդուէցուսցէ զՀատատուիչն իմումս հաւատարմութեան և սիրոյ առ Աստուած, և կամ արկցէ զնա ի պատրանս։ Այլ զիարդ մարթէ եր Աստ այդպիսի խորհրդոյ ունել զանձն ի միտս քո, որք էն կարի ինն օտար ի նմանէ՝ որ այնչափ սիրելին է քեզ։

Ընդէ ամենաբարի բանիւք եա Աստ զայս պատասխանի։ Ահաւասիկ Աստուծոյ և մարդոյ՝ անմահականդ Աստ. զի այսպիսի ես դու՝ անարատ զոլ ի մեղաց և ի սատանայէ։ Ընդ ի սակս երկմտութեան ինչ ընդ քեզ՝ ընտրեմ քեզ հեռանալ ի քոյ յիմնոյս աչաց, այլ ի սակս հեռացուցանելոյ զքեզ ի փորձութենէն՝ զոր եդեալ է Թշնամանն ի մէջ։ Ո՞վ փորձիչն՝ Թէպէտև վայրապար, նախատինս դնէ նմին՝ զոր փորձէն, համարեալ զնա անհաստատ ի հաւատս, և ոչ քաջակիրթ ընդդէմ փորձանաց։ Այն որոյ պարտ էր քեզ ինքնին զդէմ ունել արհամարհանօք և յաստմանէ այնպիսի նախատանաց նորա։ Ասա մի խիստ Թէ ւեսցին քեզ բանք իմ, եթէ փութամ ես բառնալ ի քէն զայնպիսի նախատինս յառանձնութեան անդ. զոր Թէպէտև կարի ինն յանդուգն է Թշնամին, սակայն դժուարաւ իշխէ տալ երկիւղունցս միանգամայն։ Այլ եթէ համարձակէ ևս, յարձակումն նորա զառաջինն անկանի յիմ վերայ։ Այլ դու մի առ ոչինչ զբեր զչարութիւն նորա կամ զնոտի պատրանս. զի անշուշտ չարաբուէստ պարտի լինել նա՝ որ զիտաց խաւարեցուցանել զՀրեշտակս. և մի վայրապար համարիր զայս օգնականութիւն։ Այս իսկ յայտնեան քումդ

երեսաց գտանեմ զմեւս յամենայն առաքինու-
թիւնս [33]։ Յանդիման քո առաւել և իմաստուն
եմ և զգաստ, և հզօրագոյն՝ եթէ պէտք իցէն առ-
տաքին զօրութեան. զի յակնարկել քո առ իս՝
ամենեն պարտութեան կամ խաբէութեան զար-
թուցանէ յանձին իմում զվերջին ձիգն և զզօրու-
թիւն։ Եւ ընդէր ոչ զնոյն կրեսցես դու յանձին
քումմէ առաջի իմ. և կամ ոչ կամիցիս առնուլ ըզ-
փորձ զօրութեան անձինդ ընդ իս՝ որ եմ հաւա-
տարիմ վկայ հանդիսի քումդ առաքինութեան։

Ո՞յսօրինակ խօսեցաւ Աստուած ինամօք տնտե-
սութեան, և լծակցութեան սիրոյ։ Այլ Եւայ՝
որ համարէր գոհ ստգտեալ ինն զանկեղծութիւն
իւրումն հաւատարմութեան, յաւել տալ պատաս-
խանի քաղցր բանիւք՝ օրինակ զայս։

Եթէ արդարև այդ իցէ վճռակ մեր՝ կալ յան-
ձուկ շրջապատիս սուիկ օրինակաւ պաշարեալ յե-
րեսաց բուռն և չարանենգ թշնամւոյն, և չեմք զև
նեալ առանձինն նոյնօրինակ պաշտպանութեամբ՝
ուրանօր և գացուք զնա, զիարդ ապա մնայր է
մեզ լինել երջանիկ ի հանապազորդ երկիւղն անդ
յերեսաց չարեաց։ Այլ չարիքն ոչ ժամանեն յա-
ռաջ քան զյանցանս։ Պարտ է թշնամւոյն՝ որ
փորձէ զմեզ, նուաստութեամբ ևեթ կարծեացն՝
զոր ունի զանկեղծութենէս մերմէ, նախատել
զմեզ. բայց նուաստութիւն կարծեաց նորա ոչ
դրոշմի ի ձակատ մեր զնախատինս, այլ անար-
գագոյն ևս դառնայ ի վերայ նորա։ Պապա ընդէր
է մեզ խոստափել և երկնչել ի նմանէ։ Այն զի
ստութեամբ կարծեաց նորա գտանեմք մեք ի վախ
ճանի կրկին պարծանս՝ զնաղաղութիւն սրտի, և

զնորհս առ Ա՛ստուծոյ՝ ի վկայէս մերմէ· Ա՛ւ առիմ էն հաւատք, սէր և քաջութիւն՝ եթէ չըպատանին փորձ առանձինն, և չէն հաստատուն առանց օգնականի· Ա՛րդ՝ մի երկմտեսցուք ընդ երջանկութիւն մերում վիճակի, որպէս թէ թերի թողեալ իցէ զայն ամենիմաստ Ա՛րարչին՝ ոչ զոյով աներկեւան առանձինն, և կամ՝ ի միասին· Ա՛թէ այդ այդպէս իցէ, ապա ուրեմն զայթ՝ ի զայթի է երջանկութիւն մեր, և Ա՛դեմ այսպէս նշաւակ վտանգաց, ոչ ևս է Ա՛դեմ·

Ապրում Ա՛դամ արար պատասխանի սաստկութեամբ լինի· Ա՛ի կին՝ ամենայն ինչ բարւոք է յոյժ, որպէս և զիարդ տեսչութիւն Հաստչին կարգեաց զնոսա· Զեռն նորա արարչական ոչ եթող ինչ թերի կամ անկատար յամենայնի՝ զոր ստեղծ· ևս առաւել զմարդն, և զոր կարևորն է յաներկեւանութիւն վիճակի երջանկութեան նորա յերեսաց արտաքին բռնութեան· Ա՛յո՛ն հաստատեալ կայ՝ ի նոյն իսկ՝ ի մարդն, բայց է դեալ՝ ի զօրութեան նորա· և անհնար է նմա ընդունել զչարիս ընդդէմ իւրումն կամաց· Ա՛յլ Ա՛ստուած եթող անձնիշխան զկամն· զի որ միանգամ հպատակ է բանին, է աղատ· Ա՛ւ արար նա ուղիղ զմանն· բայց հրաման ետ նմա պատկառել իւրումն ուղղութեան· գուցէ պատրեալ նորա յերեսաց բարւոյն տեսլեամբ և եթէ՝ թէպտիր լեսի ստութեան, և յանիրաւի ազդեսցէ կամաց առնել զայն ինչ՝ յորմէ առանձին իմն հրաժարեցոյց Ա՛ստուած· ‘Ա՛յն իրի՝ ոչ եթէ երկմտութիւն, այլ գործադրութեամբ սէրն տայ ինձ բաղում անգամ խնամ ունել զքէն, որպէս և քեզ զինեն· Ցերա-

ւի եմք հաստատուն, այլ մարթ է մեզ խոտորիլ.
զի ոչ յանհնարինն է բանին գտանել զբարւի ինչ
առ երեսս միայն՝ խորամանկեալ ի Թշնամւոյն.
և այն՝ առ չունելոյ զձիւրդ զգուշութիւն, յոյր
սակս խրատեալ եղև յառաջագոյն: Ա՛ան որոյ
մի լինիր ի խնդիր փորձուԹեան՝ յորմէ զգուշա-
նալն լաւ ևս է քեզ, և կարի դիւրին՝ եթէ ոչ ան-
Ջատիս լինիցին: Փորձն ինքնին եկեսցէ առ քեզ
անխնդիր: Ա՛ամիս գու զփորձ առնուլ զհաստա-
տուԹեան անձինդ, փորձեա նախ հնազանդու-
Թեամբ. զի ո՞ կարէ զիտել զառաջինն, և կամ
վկայ լինել նմին՝ մինչև է տեսեալ զքեզ ի փոր-
ձուԹեան: Ա՛պա եթէ հաստիս, Թէ փորձն ան-
խնդիր ոչ կարէ գտանել զերկոսին զմեզ այնպէս
պատրաստապոյն և ի զգուշութեան՝ որպէս զքեզ
առանձինն, էրԹ. զի մնալ քո առ իս ակամայ,
առաւել ևս հեռացուցանէ զքեզ յինէն: Ա՛յլ
գնա անմեղուԹեամբդ՝ զոր ունիս ի քեզ. և ժո-
ղովեալ յանձին զամենայն անաբիծութիւնդ՝
հանգիր ի նոսա: Ո՛ր արժանն էր՝ արար ընդ
քեզ Ա՛ստուած, լից և դու զանձինդ զպարտիս:
Ո՛այսօրինակ խօսեցաւ Ա՛հարոնեան մարդկան
ազգի. բայց Ա՛յայ եկաց անտեղիտալի: Ա՛ակայն
և այնպէս ետ նմա ցածուԹեամբ զայս վերջին պա-
տասխանի: Ա՛ւ արդ՝ ի քումմէ հրամանէ, և յա-
ւէտ իմն զօրացեալ ի վերջին ազդուցական բա-
նիցդ՝ Թէ մարթ է անխնդիր փորձոյ գտանել ըզ-
մեզ ոչ այնչափ պատրաստապոյն, գնամ ես մատա-
դիւր սրտիւ. այն զի ոչ ակն ունիմ ամբարտաւան
Թշնամւոյն ելանել նախ ի խնդիր տկարագունիս:
Ո՛այս ասացեալ նորա՝ եհան մեղմով զձեռն

իւր ՚ի ձեռանէ առն իւրոյ· և իբրև զՅաւելժա-
հարան [34] անտառն՝ առաւել թեթևընթաց քան
զԱվղեդ [35] և զՆրբւազ [36], և քան զլարաւորան
Վեղեայ [37] չոգաւ ՚ի Թաւուտ անդր· Ա՛յլ նա
յաստուածակերպ գնացս իւր զերազանցեալ կայր
և քան զնոյն ինքն Վեղիա [38], Թէպէտև ոչ էր զի-
նեալ հանդուգնատիպ նմին յաղեղն և ՚ի կապարճ,
այլ միայն ՚ի գործիս սոսկական պարտիզպանի·
զորս և յօրինեալ էր կամ արուեստի՝ որ էր տա-
կաւին անպատճոյ, և առանց սպասաւորութեան [39]
հրոյ, և կամ բերեալ ՚ի բեշտակաց· Ո՛չ այսօրինակ
զարդարեալ նորա՝ ոչինչ ընդհատ ցուցաւ ՚ի պա-
զեայ [40], կամ ՚ի պամնայ [41] ՚ի փախչել նորա յե-
բեայ Ա՛երտումեայ [42]· ոչինչ ընդհատ երևեր և
՚ի Վեմերայ [43] ՚ի ծաղկի անդ կուսութեանն չև
և մայր եղեալ Պրոսերպինայ [44] զոր յետոյ ծնաւ
Ա՛րամազդայ [45]· Լոկ կաթոգին աչքն Ա՛դամայ
Թէպէտև զուարճութեամբ գՀետ երթային նորա
հեռագոյն, բայց յաւէտ ցանկային ՚ի նոյն
առ նմա· Լաղջամ անգամ երկրորդեաց նա Ա՛-
ւային զպատուէր դարձի նորա փութանակի· և նա
խոստացաւ նմին դառնալ ՚ի միջօրէի ՚ի հովանոց
անդր, և պատրաստել զկարեւորսն ՚ի ձաշ և ՚ի
հանգիստ յերեսաց վաստակոց· Ո՞վ եղկելի Ա՛դամ՝
կարի լինն խաբեաւ, և վերպեաւ գտանիս ՚ի դար-
ձեդ՝ զոր եդեալ ես ՚ի մեծ· Ո՞վ ցաւագին փո-
փոխմանս· Ո՞ ժամս յայսմանէ ոչ ևս ունիս դու
գտանել ՚ի դրախտի անդ զկերակուր համեղաձա-
շակ, կամ զհանգիստ ցանկալի· Ո՛ի ինայ քեզ
մեծալուտ դարմանակալութիւն գժոխային քինու-
թեաղուցեալ ՚ի սիջ ծաղկանց և ստուերայ՝ առ ՚ի

խափան լինել քումմէ Ձանապարհի, և կամ առ՛ի
դարձուցանել զքեզ անդրէն մերկ կողոպուտ յանձ
մեղս Թէնէ, ՚ի հաւատոյ և յերանութէնէ քումմ
մէ։ Վանզի յայնժամ անդատին ՚ի ծագմանէ լու
սոյն եւ արտաքս Թշնամին՝ օձ և Եթ ըստ արտաքին
տեսլեան, ՚ի խնդիր և ՚ի գիւտ երկոցունց միայն
յաղգի անդ մարդկութեանս՝ յորս բովանդակեալ
կայքն Համօրէն սերունդը նոցա, որք նորա ցանկ
կալի։ Ե զջեցաւ ՚ի խնդիր նոցին ընդ անտառս և
ընդ դաշտս՝ ուրանօր կայքն ծառատունկք և մա
ցառք յաւէտ դալարագեղ և զուարձալի, գործք
գարմանոյ ձեռաց նոցա կամ անկագործուԹեան
առ ՚ի զբօսանս։ Ու աղբերակամբք և հովանա
ւոր վտակօք խնդրեաց զերկոսին զնոսա միանգա
մայն. այլ իղձ կամաց նորա էր գտանել զ՚ուայ
առանձին ըստ գիպաց։ Յանկայր այնմ՝ որում
ակն ոչ ունէր. զի սակաւ անգամ մնրԹ էր դէպ
լինել այնմ։ Ու այլ նա յայնմ վայրի ըստ ցանկու
Թեան անձին իւրոյ եգիտ անաչնկալ զ՚ուայ ա
ռանձինն քօղարկեալ ամպովն անուշահոտուԹեան՝
յորում մասամբ և Եթ երևէր, զի խիտաւխիտ
բաղմուԹիւնք կարմրափայլ վարդից պատեալ կայ
ին զնովաւ։ Որ և ստէպ խոնարհեալ՝ ամբառնայր
՚ի վեր զնրբաճոյղ ծաղիկսն, որոց գլուխք զուարճ
Թագեղ ՚ի մեղոյշ, ՚ի ծիրանի, ՚ի կապուտակ, և
յոսկի պիսակախայտ՝ կախեալ կայքն անմեղուկ.
և արկանէր զնոքօք խեչակս՝ գեղեցկապէս կա
պեալ զնոսա ընդ մրտեւսոյ։ Ո՛այց յայնմ վայ
րի չուներ ինչ փոյթ զանձնէ. զի ԹԷպէտ ծաղիկ
էր նա ամենագեղեցիկ, այլ կայր անխեչակ՝ գոլով
կարի լաւն հեռացեալ ՚ի ցանկալի հաստատուԹե

նէ իւրմէ· և մըրիկն ահագին հասեալ կայր առ դուռս· Ապերեցաւ առ նա Թէնաւին, անցեալ ընդ բազմապատիկ շաւիղս ընդ հովանեաւ ծառոյն մայրի, Թեղջի և արմաւենւոյ· Ի գլ գիւրաթաւալ և խրոխտաձեմ, Ի գլ ծածկեալ'ի առաւեղէ, և Ի գլ երևեալ'ի միջոյ բազմախիտ բուսոցն և ծաղկանց՝ որք պատէին զերկոսին կողմանս նոցա, գործք ձեռացն Աստուծոյ· Որ և էր տեղի յաւէտ գեղեցկազարդ՝ քան զառասպելեալ պարտէզսն վերակենցալոյն Ադոնիսայ[46], կամ մեծահռչակին Ակկինովոյ[47] վանատրի որդւոյ նախնոյն Այերտայ[48], և կամ քան զանխորհրդաւորն[49] զայն դարաստան՝ ուրանօր իմաստունն արքայ[50] վայելէր'ի զբօսանս անձին ընդ հարսին և պիտուհւոյ· Որ արմացաւ նա յոյժ ընդ գեղեցկութիւն վայրացն, այլ յաւէտ անձինն Աստուծոյ· Որ օրօրինակ արգելական որ ընդերկար'ի բազմամարդ քաղաքի՝ որոյ Թանձրութիւն ապարանից, և անցք լուսաւեց ապականեն զօդն, էլեալ արտաքս յառաւօտուն պահու ամպրպչի ձգել զօդ քաղցրասիրտ'ի զբաւարձալի գիւղօրէս, և յընթերակայ վիճակս անդաստանաց նորա՝ գտանէ ըզբերկրութիւն անձին յորոց միանգամ ընդ առաջ ելանեն նմա, 'ի հոտոյ ասեմ ցորենոյ, խոտոյ, կովուց և կաթնարանաց, եթէ յանկարծակի գեղաղէշ ոք անցանէ ընդ այն սիրաձեմ ոտանցն՝ առնայն ինչ ցանկալի երևեալ յաւաջագոյն՝ առաւել ևս հաճոյական ընծային յայս նորա'ի սակս անձինն՝ որ բովանդակեալ ունի'ի դէմս իւր զանձնային բերկրութիւնս նոցա, զայսպիսի լինն զբաւարձութիւն յանձին կալաւ օձն'ի տեսանել

անդ զծաղկազարդ և զանուշահոտ վայրն՝ յորում առանձնացեալ կայր Աւետ վաղ քաջ ընդ առաւօտն . և առաւել ևս զնաշխարհիկ և զերեւոյթ կատիպ կերպարանս նորա : Որոյ շնորհազարդ անմեղութիւն , և համբոյն գնացք և գործք պատկառանս արկին չարութեան նորա , և քաղցր խնդութեամբ կողոպտեցին ի նմանէ զանհնարին գազանութիւն կամացն՝ զոր բարձեալ բերէր յանձին : Այլ այս չարն առ վայր մի անդ՝ մերկացեալ յանձնէ զիւնս թշնամութեան , դաւանութեան , ատելութեան , նախանձու և վրէժխնդրութեան : Այլ այն գժոխք՝ որք միշտ աբերդոք ջեռուցեալ կային ի նմա ևս և յերկինս , արագ արագ վախճան եառուն բերկրութեան նորա . և այնուամենայնիւ տանջեցին զնա , զի տեսանէր զզուարձութիւնս կարգեալ անդստոյգ , այլ ոչ ի սակս իւր : Այն իրի և անդէն ժողովեալ յանձն իւր զանհնարին ատելութիւն , և խնդակից լեալ ընդ համբոյն խորհուրդս իւրութեան՝ զայսօրինակ խօսեցաւ ընդ նոսա :

Ո՛վ խորհուրդք իմ՝ ուրանօր ածեալ կամք , և յորպիսի զուարճութիւն՝ մինչև մոռանալ մեզ զպատճառն գալստեան : Աստեղութիւնն ձգեաց զմեզ այսր , և ոչ սերն , և կամ՝ անկայութիւն փոխանակելոյ զդժոխս ընդ դրախտին : Այլ ահն կալջիք աստանօր վայելից ուրախութեան , այլ ապականութեան ամենայն զուարճութեանց , և ապաեանջիք միայն բերկրութեանն՝ որ գտանի յապականութեան անդ : Այլ ամենայն զուարճութիւն և բերկրութիւն վճարեալ է վասն իմ : Ահա այս ոչ կորուսից զժամն բարեպատեհ : Այդ կինն

քաջագիտ առ ամենայն յարձակմունս՝ կայ առանձինն ։ Այր նորա՝ որպէս տեսանեմ ՚ի բացատ, ոչ է առ նմա ։ Ցորոյ ՚ի մտայ վեհմեծութենէ, ընդ նմին և ՚ի զօրութենէ յաւէտ ինն խոստափեմ ես. զի թէպէտ շինուած է նա երկրաւոր, այլ պնդեալ կայ հզօր անդամօք, և դիւցազնական քաջութեամբ ։ Նա ախոյեան ահաւոր և անխոց, այլ ոչ ես ։ Ոչխա այսպէս նկուն արարչին զիս զբաժոխք. և տանջանք նորա նուաստացուցին ՚ի վիճակէն՝ զոր ունէի յերկինս ։ Ինկ Լուցայ գեղեցիկ է յոյժ, և արժանի սիրոյ Աստուածոյ, այլ ոչ ահարկու (թէպէտև արժան է երկնչել ՚ի սիրոյ և ՚ի գեղեցկութենէ). միայն թէ ոչ մատեայց առ նա ոխերիմ թշնամութեամբ, այլ ընդ պատրուակ կուսիրոյ ։ Զրդ՝ պարտ է ինձ ունել զայս ձանձ պարհ ՚ի կործանումն նորին ։

Օ այսօրինակ խօսեցաւ հակառակորդն մարդկան ազգի՝ մեծաւ յօժն բնակակից չարարուեստ. և ուղեաց զգնացս իւր առ Լուցայ ։ Ոչ ընդ երկիր սողացեալ մէտ առ մէտ ծածանամամբ՝ որպէս զկնի, այլ ՚ի յետոյս իւր յեցեալ՝ որ էր բոլորշի պատուանդան գեղադէզ ոլորտից նորա, որք բարձ բացեալ կային իբրև զբաւիղ բազմամանուած և կոհակաձև ։ Պատառ գլխոյ նորա էր ցցունազարդ. աչքն կարկեհան. և ողորկափայլ պարանոց նորա ՚ի կանաչագեղ ոսկւոյ՝ կանդուն կայր ՚ի միջի անդ շրջապատ ոլորտիցն, որք գեղեցիկ տատանէին ՚ի գալարուղ ։ Կարի գեղեցիկ էր և ցանկալի տեսիլ նորա ։ Ոչ գտաւ գինի օձ նմանօրինակ նմին սիրալի ։ Ոչ նաբլին՝ յորս վսեմաերեւութեան՚ի Լ իւբիկիա [51] Հերմինէ [52], կամ Կադմոս [53], և կամ

Ստուածն Ալիդաւրոսի [54]. և ոչ յորս դարձան Մինեանն [55] և Կապիտոլեանն [56] Ջրամաղաք [57]. նա առ սիրոյ Ղևմպիայ [58], և սա ծնողին Ակիպիոնի [59] բարձրութեանն [60] Հռոմայ։ Խաղաց նա զառաջինն ի խոտորնակ ընթացս. որպէս յոր ժամ կամեցեալ ուրուք հուպ մատչել առ ումեմն, բայց երկուցեալ յերեսաց նորա՝ զխոտորնակի ու նի ձանապարհ։ Եւ զորօրինակ նաև ուղեալ ի Ձարտար զեկավարէ առընթեր բերանոյ գետոյն և կամ սարաւանդակի՝ ուրանօր ստիպ ջրհան առնու հողին, և նա բաղում անգամ վարէ զղեկն, և ջրէ զառագաստս նաւուն, այնպէս փոփոխեաց նա, և գալարեաց խնդագին յանդիման Եւայի զբազմնոցրատ մանուածս իւրումն տատան ի հրապոյրս աչաց նորա։ Յակ նորա զբաղեալ գոլով թէպետև լուաւ զշշնջիւն շարժմանն տերևոցն, սակայն չեղև ինչ մտադիր. զի բաղում անգամ տեսեալ էր նորա զնոյնօրինակ խաղս կենդանեաց զառաջեաւ իւրով՝ի դաշտի անդ։ Եւ ելին նոքա յաւէտ գիւրալուր ձայնի նորա, քան այլակերպեալ հօրանն Ալիբկեանն [61] կոչման։ Յոմարհեցոյց օձն բազում անգամ առ նա զկատար իւր աշտարակաձև. և քծնելով լինի փայլեցոյց զգլարանոց իւր կիտուածագործ. և լիզեաց զՀողն առ ոտիւք նորա։ Եւ այնպէս ապա սիրալի նշանքն անքաւառ՝ դարձուցին զաչս Եւայի յակնարկութիւն խաղոյ նորա։ Յնդամսեալ օձին ընդ ունկնդրութիւն նորա՝ սկսաւ ընդ գործարանն օձաբերան, կամ ընդ բաղխիւն ձայնահան օդոյ՝ զպատիր փորձութիւն իւր օրինակ զայս։

Մի՛ զարմանար ընդ իս վերհապատած դչիսոյ, եթէ

մարթ ինչ քեզ զարմանալ՝ որ միայնդ ես աքան-
չելը ։ Այս մի զիներ զաչս քո արհամարհանօք դըժ-
ուարեալ ընդ ես՝ եթէ զայսօրինակ մատչիմ առ
քեզ առանձինն , և պշուցեալ հայիմ ընդ քեզ
անյագաբար . և ոչ երկնչիմ յերեսաց ահեղ աը-
տեւանանց քոց՝ որք ահարկու ևս են յառանձնու-
թեան անդ ։ Ով ամենագեղեցիկ նմանութիւնդ
Աստուծոյ՝ աքանչացեալ հայիմ ի քեզ ամենայն
կենդանիք , ևս և համբերէն արարածք՝ որք քո են
պարգեւօք . և հիացեալ՝ երկիւղ պատանեն քումդ
անղուգական գեղեցկութեան ։ Որ լաւ ևս երևիլ
յակնիռս անդ հասարակաց ։ Այլ աստանօր շըր-
ջափակեալ յամայութեանդ ի միջ անասնոց ան-
մտից և վայրենեաց՝ որք ոչ կարեն ի միտ առնուլ
և զկեան գեղեցկութեանդ՝ յակնարկել անդ ընդ
քեզ , ո՞ բաց ի միոյ մարդոյ , տեսանել զքեզ ։ Այս
զիա՞րդ հնար է այժմ լինել ։ Աըժան եր քեզ
հանդիսանալ Աստուածուհի ի միջ Աստուածոց ,
երկրպագեալ և սպասաւորեալ յանթիւ բազմու-
թենէ Հրեշտակաց պաշտօնատարաց քոց հանա-
պազ ։ Այսպիսի լիմն շաղաքորթ բանիւք սկսաւ փոր-
ձիչն զնախերգանս իւր . և գտին զանցս ի սիրտն
Աւային՝ որ եր կարի լիմն զարմացեալ ընդ բարբառ
նորա ։ Որ և զինէ զայսօրինակ խօսեցաւ ընդ նմա ։

Ով աքանչելեացս . բարբառ լսեմ , և զիմաստ
մարդկային ի բերանոյ անասնոյ ։ Օ՞ առաջինն ի
սոցանէ ոչ համարիմ շնորհեալ անբանից . զի յա-
ւուր արարչութեան ստեղծ զնոսա Աստուած ան-
բարբառ , և անբաժ ի յօդաւոր ձայնէ . և ընդ
երկրորդն յերկուանամ . քանզի բազում անգամ
տեսանեմ ի գէմն նոցա և ի գնացս զյուզնապէ-

մի խնամտս ։ Ասէ ցքեզ՝ ոմն օձ, Ձանապհեմ խորա-
գէտ քան զամենայն գազանս երկրի, այլ ոչ ըն-
դունարան մարդկեղէն բարբառոյ ։ Ասէ նորա-
գեաղ զընթանալոյ՝ ասա ինձ, Թէ զիարդ գտեր
զբարբառդ, և ի ընտելացար ընդ իս առաւել
քան զայլ կենդանիս՝ որք կան առաջի իմ Հանա-
պազ ։ Այս, զի սքանչելիք այդպիսի արժանի են
առանձին ինն ունկնդրութեան ։

Որում փորձիչն նենգապատիր արար պատաս-
խանի օրինակ զայս ։ Ոչ գեղեցիկ դշխոյ աշխար-
հիս՝ ամենապայծառդ Հռայ, կատարեցից մտա-
դիւր ընթանալս քո, զի կարի յիրաւունս արժա-
նի են Հնազանդութեան ։ Ահա ես զառաջինն իբրև
զայլս ի կենդանեացդ՝ որք Ձարակին զնոսն ընդ
ոտիւք իւրեանց. և ըստ օրինակի խնամս կերակրոյ
էի ես անարգ և նուաստամիտ. և ոչ այլ ինչ խընդ-
դրեի, բայց միայն զՁարակն իմ, և զիատրութիւն
սեռիս. և չառնուի ի միտ զայլ ինչ բարձրագոյն ։
Մինչև յաւուր միում ի շրջել անդ ի դաշտի՝
դէպ եղև ինձ տեսանել ի բացատ զծառ ինչ
ծանրաբեռնեալ պտղովք յընտիր ընտիր երանգս
խառն ընդ ծիրանի և ընդ ոսկի ։ Մօտ մատեայ ի
պչնուր ընդ նա զարմացմամբ. և ահա ախորժակ
ինն բուրեր անուշահոտութիւն ի ծառոյ անտի.
որ և առաւել հեշտալի գտաւ ինձ քան զհոտ ա-
նուշակ սամթի, կամ ստեանց այծից և մաքեաց՝
որք բղխեն զկաթն ընդ երեկս, մինչև է ծծեալ
զնոսա ալօջից և գառանց՝ գոլով նոցա պատա-
ղեալ զկայթիւք իւրեանց ։ Այս անդէն եդի ի մտի
ընուր զանհնարին փափաք ցանկութեանն՝ զոր
յանձին կալայ առ ի Ձաշակել ի գեղեցկատեսիլ

ինձնորոց անտի ։ Այլ քաղցն և ծարաւն՝ կրկնակի հրապոյրք անպարտելի, միանգամայն զարթուցեալ յերեսաց սիրալի Հոտոյ պտղոյն՝ եւս քան զեւս փութացուցին զնա ։ Ապա որոյ և մածեալ անյապաղ զնամուռատատ արմունկն ծառոյդ, զի բարձ բաբերձ շառաւիղք ոստոց նորա պիտոս ունելին քունդ բարձու հասակի և Ադամայ՝ առ ի հասանել ։ Յայնմ վայրի ամենայն կենդանիք՝ որք էին ականատեսք, շուրջ կային զծառոյն նովին ցանկուցեամբ՝ շարժեալ ընդ իս ի նախանձ. բայց ոչ կարէին ժամանել ։ Այլ ապա՛ի վերայ ծառոյդ. ուրանօր պտղոյն բազմուքիւնք՝ որք պատեալ կային զնոսա, յաւէտ ինն յորդոր լինէին ինձ կըքել ի նոցանէ, և ձաշակել ցյաղուրդ ։ Ապա ես ոչ խնայեցի. զի ցայնժամ չէր իմ երբեք զգայեալ յանձին զայնպիսի ախորժակ ընդ ձարակ կամ ընդ ըմպելի ։ Յապեալ ապա՝ զինի սակաւուց գիտացի յանձին զնորոգ ինն փոփոխութիւն նեղքին զօրութեանցս յաստիճան բանականութեան ։ Այլ ոչ իսկ բարբառ մարդկեղին պակասեաց ինձ ընդերկար, թէպէտև կացի ի նոյն կերպարանս ։ Ցարձուցի ապա զմիտս իմ ի բարձրագոյն և ի խորին քննութիւնս, և հասու եղէ ի միտառնութ զամենայն երևելի արարածս յերկինս և յերկրի ։ Այլ գոի զնոսա բարի և գեղեցիկ առհասարակ ։ Ապակն զամենեցունց զգեղեցկութիւն և զբարութիւն համահաւաքեալ տեսանէի ի քունդ աստուածանման պատկերի, և յերկնային ձառագայթս քունդ վայելչութեան ։ Այլ չէք ի նոսա գեղեցկութիւն համեմատ քոյումդ, և կամ երկրորդ ըստ նմանէ ։ Որ և յորդորեաց զնա և

Թերևս յանդիպես, զայսօրինակ յանդիման լինել քեզ, և պչնուլ զարմացմամբ. և միանգամայն երկիր պապանել քեզ՝ որ իրաւամբք ձանձրոյս դիմոյ և միահեծան թագուհի արարածոց։

Այսօրինակ խօսեցաւ դիւազգեցիկ օձն խոստանալ։ Եւ Եւայ տակաւին կարի լիւն զարմացեալ՝ ետ նմա յանդգնչէն զայս պատասխանի։ Ոչ չափուիմն զովեստիդ՝ ով օձ, խիթալի լիւն յուցանել լինձ զգօրութիւն պաղպղդ՝ զորոյ զփորձ առեր զառաջինն։ Այլ ասա լինձ, ուրանօր գտանի ծառդ, և քանի՞ ի բացեայ է աստի. զի պէսպէս են և բազմապատիկ ծառքն Աստուծոյ՝ որք բուսանին ի դրախտիս, և են տակաւին անծանօթ առ ի մեզ։ Եւ ընտրութիւն ձաշակման մերոյ հաստատեալ կայ յայնպիսի լիւն առատութեան՝ միանգամ զմեծագոյն մասն պտղոցդ Թաղուլ մեզ անչօշափ, և կախեալ անապական։ Մինչև ձեռն յին մարդիկ ի ձաշակութիւն նոցին, և բազմութիւն ձեռաց օգնեացեն մեզ ի թեթևացուցանել զնուագութիւնն ի բեռանոյ անտի իւրումն պտղաբերութեան։

Ուրախ թուեցաւ օձն չարարուեստ ետ խնդալ զինս և զուարթագիմ զայս պատասխանի։ Ոչ խորհածուդի տիկին՝ առընթեր կայ ձանապարհդ, և չէ կարի ի բացեայ. յայնկոյս դառակարգութեան մրտեհեացդ ի դաշտի անդ առընթեր ազբերն, անցեալ ընդ անտառդ՝ որ բուրէ զմուռն և զբալասան։ Եւ եթէ հաձոյ է քեզ առաջնորդութիւնն իմ, տարայց զքեզ անդր փութանակի։

Եւ Եւայ ասաց ցնա. Զքէ առաջնորդեա լինձ։ Յայնժամ փութայեալ նորա՝ գալարեաց զլերտս

իւր, և եղոյզ զինձիուն ուղղեալ յարագ արագ չարութիւն։ Անկալութիւն յուսոյն ամբաւնայր զանձն նորա. և խնդութիւնն պայծառացուցանէր զկատար դէմսոյ նորա։ Արդեօք յորժամ հուր մտի լցեալ իւղային գոլորշեաք՝ զոր գիշերն խտացուցանէ, և ցրտութիւնն պատեալ պաշարէ շուրջ զնանակի, և բորբոքեալ շարժմամբն՝ զոմն ասեն[62] ուղեկից լինել բազում անգամ հոգւոյն չարութեան, և կախեալ ընդ երկինս ստապատիր լուսափայլութեամբ՝ մոլորեցուցանէ զերկիւղալից գիշերագնացն ի ձանապարհէ իւրմէ, և բազում անգամ արկանէ ի տղմուտս, ի ձահիճն և ի կուտակութիւնս ջուրց, և խորասուզեալ կորուսանէ ի բացեայ յօգնականութենէ այլոց, այնպէս փայլեալ անապորոյն օձին՝ առաջնորդ գտաւ գիւրաքաղաքս մեր մերում Հռայի ի պատրանս, ի ծուռն ասեմ արգելեալ՝ արմատ մերոյս ապիտից։ Զոր տեսեալ նորա՝ խօսեցաւ ընդ ուղեցոյցի իւրում օրինակ զայս։

Ո՞վ օձ՝ մարթի էր մեզ խնայել ի գալստեդ. զի թէպէտև կարի շատ են պտուղք ծառոյդ, այլ չէն ինձ պիտանացու։ Այլ պարծանք նորա կայցեն առ քեզ. թէպէտև յիրաւի աքանչելի է նա, եթէ իսկ պատճառ այնպիսւոյն զօրութեան։ Ապա կայն և այնպէս անմարթ է մեզ ձաշակել ի նմանէ, և կամ հուպ մերձենալ առ նա. քանզի զայս պատուէր ընկալաք Աստուածոյ. որ և է միակ պատուիրան նորա, և արգել Հրամանի։ Ոչ կայր ամենայն ինչ մեք եմք օրհնադիր անձանց մերոց, և բանն օրհնեալ մեր։

Ապա ետ պատասխանի փորձիչն նենգաւոր։

Նէթ արդարև այդպէս իցէ, ապա ուրեմն ոչ աւ-
ժան համարեցաւ Աստուած ձաշակել ձեզ յամե-
նայն ծառոց ի դրախտիս. Թէպէտև նա ինքն
կարգեաց զձեզ տեարս ի վերայ ամենայնի՝ որ ինչ
միանգամ գտանի յերկրի, և ի հաստատուԹեան
երկնից:

Այլ որ Նոյայ տակաւին անմեղանչական՝ արար
պատասխանի: Յամենայն պտղոց ծառոց՝ որք են
ի դրախտիս, մաքԹ է մեզ ձաշակել, բայց ի պատ-
ուղ գեղեցիկ ծառոյս՝ որ է ի մէջ պարտիզիս, ա-
սաց Աստուած մի ուտել, և մի հպել մահաբեր-
յիկ մեռանիցիմք:

Մինչեւ եր աւարտեալ նորա զբանն ի կար-
ձոյ, և ահա փորձիչն յաւէտ իմն խրոխտացեալ
իբրև ի նշանակ նախանձու և սիրոյ առ մարդն,
և գԺամինեալ գոգացեալ ընդ զրկանս նորա՝ եցոյց
յանձին զտարօրինակ կերպարանս, և որպէս Թէ
ի գուԹ շարժեալ եր ի վերայ նորա՝ խօսվեալ
տատանէր: Այլ ապա կարի ի դէպ արձանանայր
ի վեր՝ իբրև Թէ կամք էին նմա ձեռն արկանել
ի դատ ինչ երևելի: Օրօրինակ ի նախանձին՝
յորժամ Ձարտասան ոք մեծանուն ԱլԹիոս [63],
կամ յազգատն Հռովմ՝ [64] յորս ծաղկեալ եր եր-
բեմն ՁարտարախօսուԹիւն Թառամեալ զկնի, Հան-
դերձեալ եր տալ զանձն ի պաշտպանուԹիւն դա-
տի, կայր ժողովեալ յանձին՝ այն ինչ շարժուածք
անգամոց նորա յառաջ քան զլեզուն ձգելն զա-
տենակալն յոնկնդրուԹիւն. և երբեմն առ կա-
րի իմն նախանձու իրաւանց արդարուԹեան ոչ
ապասեալ յառաջաբանին դէպ երանաց՝ սկիզբն
առնէր ի բուն իսկ կարևոր մասնէ խնդրոյն, նոյն

պէս կացեալ փորձողին, չարժեալ զանդամն իւր, և արձանացեալ ՚ի բարձրութիւն իւրումն հատա-
կի՝ սկսաւ խօսել սրտառուչ կարեկցութեամբ ընդ
ծառոյն օրհնակ զայս։

Ո՛վ տունկդ աստուածային՝ աղբիւր խնամոտու-
թեան, և մայր գիտութեան. զի՞րդ հաւատեաւ
զգամ ես յանձին զզօրութիւն քո՝ ոչ միայն յառ-
նուլ անդ ՚ի միտ զգործս ՚ի պատճառս նոցին, այլ
և ՚ի հետազօտել անդ զձանապարհս վերին պաշտօ-
նէից՝ որք խնամատունքն էն համարեալ։ Ա՛յլ դու
Աչխոյ տիեզերաց մի՛ հաւատար ահագին սպառ-
նալեաց մահուն։ Ա՛յ մեռանիք. զի ի՞նչ հնար է
ձեզ։ Ա՞ի՛թէ ՚ի ձեռն պտղոյն։ Ա՛յլ նա տայ ձեզ
զկեանս գիտութեան։ Այ՛ մի՛թէ ՚ի ձե՞ռն նորա՝
որ սպառնացաւն։ Ապակոյն հայեաց դու ընդ իս.
զի թէպետև մերձեցայ ես, և ձաշակեցի ՚ի նմա-
նէ, այլ կենդանի եմ տակաւին. և հասի կատա-
րեալ և ես կենաց քան զոր կարգեալ էր վասն իմ
տեսչութեանն վերին. և այն՝ դիմագրաւ տուեալ
զանձն իմ յոր ինչ գե՛ր ՚ի վերոյ էր քան զչափ ան-
ձինս։ Ա՞ի՛թէ փակեսցի առաջի մարդոյն՝ որ բա-
ցեալն է առաջի անասնոց։ Այ՛ մի՛թէ կամք իցեն
Աստուծոյ բորբոքել զսրտմտութիւն բարկութեան
իւրոյ ՚ի սակս դուշնաքեայ ինչ յանցանաց։ Այ՛
ոչ գովեսցէ մանաւանդ զանվեհեր քաջութիւն ձեր՝
զոր սպառնալիք պատուհասի մահուն (եթէ կայցէ
այդպիսի ինչ) ոչ գտաւ ձեռնհաս երկեցուցանել,
և արգելուլ յայնմանէ՝ որում մարթ է լինել ա-
ւաջնորդ յԱս երանելի կեանս, ՚ի պիտութիւն
սեմ բարւոյ և չարի։ Այ՛ եթէ է նա գիտու-
թիւն բարւոյ, զի՞րդ արդարացի է հրաժարեցու-

յանեալն ի նմանէ. իսկ եթէ չարի՝ (միայն թէ կայ
ցե արդեամբք չար ինչ) ընդէր ոչ ծանիցի նա՝
առ ի խուսափել ի նմանէ: Պպա անհնար է Պա-
տուճոյ անիրաւիլ առ ձեզ, և լինել ևս արդար:
Իսկ եթէ չէ նա արդար, ոչ ևս է Պստուածՙ. վասն
որոյ և չէ արժանի երկիւղի կամ հնազանդու-
թեան: Այլ ձեր իսկ երկիւղ մահու ի բաց մերժէ
ի ձէնջ զերկիւղն: Պռինչ ապա հրաժարուիմս,
եթէ ոչ յահարկութիւն ձեզ. առ ինչ, եթէ ոչ
առ ունելոյ զձեզ իւր անարգ և անխմաստ երկերը-
պագուս: Վայ զիտէ նա, զի յորում աւուր ձա-
շակէք ի նմանէ, աչք ձեր երևեալ այժմ պայծա-
ռատես՝ բայց մթագին միայն, հանդերձեալ են
բանալ, և ողջոյն պայծառանալ. և դուք լինելոց
էք իբրև զՊստուածս ի ձանաչել զբարի և զչար:
Իսկ լինել ձեր նման Պստուածոյ՝ փոխանակ զի
եղէ ես նման մարդոյ ի ներքուստ, է կարի ինձ
վայելուչ: Այս անբանս ստացայ զվիճակ մարդ-
կային, և դուք ստասջիք զաստուածայինն: Այլ
թերևս սովին օրինակաւ մեռանիջիք, ի բաց մեր-
կացեալ զմարդկայինն՝ առ ի զգենուլ զաստուա-
ծայինն: Պրդարև կարի ինձ ցանկալի է այդ մահ՝
թէպէտև սպառնացեալ, որում չէ հնար լինել
եղ վատթարագոյն ինչ քան զայդ: Այլ զինչ Պստ-
ուածքն են, զի չիցէ հնար մարդոյն լինել իբրև
գնոսա՝ հաղորդեալ աստուածարար կերակրոյն:
Պռաջինն գողով նոցա ըստ կարգի՝ կամին հաւանե-
ցուցանել ձեզ, թէ աւենայն ինչ յառաջ գայ ի
նոցանէ: Այլ ես խրթամ ընդ այդ. զի տեսա-
նեմ զգեղեցիկ երկիրս յառաջ բերել ջերմու-
թեամբ արեգականն զաւենայն ինչ, իսկ գնոսա և

ոչ մի ինչ ամենևին ։ Այլ եթէ նոքա են պատճառ ամենայնի, ո՞ եղ զգիտութիւն բարւոյ և չարի՛ ի ծառդ· զի որ միանգամ ձաշակէ՛ ի նմանէ, անդէն վաղվաղակի գտանէ զիմաստութիւն անձինն առանց ակնարկութեան կամաց նոցա ։ Այլ յո՛ր ժամ են յանցանքն՛ ի գտանել մարդոյն զգիտութիւն այնպիսի ։ Այլ զինչ ինաս մարթի է գիտութեան ձերոյ հասուցանել նոցա, և կամ ծառոյս զինչ տալ ձեզ ընդդէմ կամաց նոցին, եթէ ոչ գարև նոցա է ամենայն ինչ ։ Այլ թերևս նա՛ խանձ ինչ կայցէ՛ ի դմա ։ Այլ մինչ հնաո՛ր էցէ նախանձու բնակել՛ ի սիրտս երկնաւորաց ։ Այլ ոչ ահաւադիկ, և այլ բազմապատիկ պատճառք և փաստք ընդ սոսա, քանզ յուցանեն զկարևորութիւն ձաշակմանն՛ ի գեղեցիկ պտղոյ ծառոյս ։ Զգեա՛ արդ Աստուածաշնչիդ երկնային զձեռն քո, և ձաշակեա՛ ի նմանէ աներևման ։

Ահաւադիկ նա, և բանք նորա լի դաւաճանութեամբ դիւրամուտ սողոսկեցին՛ ի սիրտ նորա ։ Այլ ձգեալ զաչս՝ հայէր զարմացմամբ ընդ պտուղն, որոյ տեսութիւնն իսկ շատ էր՛ ի փորձել զնա ։ Այլ հնչէր տակաւին՛ ի լսելիս նորա ձայնն հրապուրանաց նորա՝ զորս համարէր փաստս ձշմարտութեան ։ Այնմ վայրի յառաջ խաղայր ժամն միջօրէի, և կարի լիճն զարթուցանէր զայ խորժակ նորա, զրգռեալ յաւէտ ընդ քաղցրութիւն հոտոյ պտղոյն· որ և անհնարին ցանկութեամբ յօժարեցուցեալ զնա՛ ի ձեռնարձակութիւն և՛ ի ձաշակ՝ փութացուցանէր զկաթողիկն աչս նորա ։ Այլ նախ զտեղի առեալ առ վայրս մի՝ զայսօրինակ խօսեցաւ ընդ միտս իւր ։

Ասէ՛ծ են արդարև և աքանչելի զօրութիւնք քո՝ զեղեցիկդ քան զամենայն պտուղս ՚ի դրախտիս, Թէպէտև արդեւլեալ կաս ՚ի մարդոյ. քանզի Ճաշակ քո ընդ նախկին վտրձ այտի, եւ զբարբառ անխօս անաանոյ, և ուսոյց լեզուի նորա գովել զքեզ։ Ո՛չ գովեստ քո ոչ ծածկեաց առ՚ի մէնջ և նա ինքն՝ որ արգել զՃաշակուածդ, ՚ի կոչել զքեզ ծառ գիտութեան բարւոյ և չարի միանգամայն. Թէպէտև հրաժարեցոյց ՚ի քէն։ Ոյց հրաժեշտ նորա յաւէտ էին ցանկալի ընծայէ զքեզ, զի ցուցանէ հաւաստեաւ զերախտիս քո, և զկարօտուԹիւն մեր։ Ոչ զանգի արդարև չի՛ք ինչ բարի առանց ծանօԹ. և եԹէ գոյի, այնպէս է՝ որպէս Թէ չիք ներ բնաւ առանձինն։ Ոպա ուրեմն քաջայայտ է, Թէ արգելու նա մեզ զգիտուԹիւնն՝ որ է բարօրուԹիւն մեր և լմնաստուԹիւն։ Ոյլ այսպիսի հրամանք չունին ինչ իրաւունս։ Ոպա եԹէ մահն զկնի ըմբռնէ զմեզ ՚ի կատարած հրամանաւ նորա, զինչ օգուտ է մեզ ազատուԹիւնն՝ զոր ունիմք յանձին։ Ոդեաւ կայ գատաւկնիք ՚ի վերայ մեր, Թէ յորում աւուր ՃաշակիցիՔ ՚ի նմանէ, մահու մեռանիջիք։ ՈչԹէ մեռաւ օձն. եկեր նա, և է կենդանի. և որ անբանն էր, բանաւոր գտեալ այժմ՝ խօսի, խորհի, և ՚ի միտ առնու զամենայն ինչ։ Ոնայն ՚ի մեր սակս գտանի մահ. և կերակուր մտացն պահեալ ՚ի պէտս անբանիցն՝ ոչ տրեալ լինի մեզ, որպէս Թէ լիներ կարգեալ ՚ի սակս նոցա միայն։ Ոակայն անբան կենդանին՝ որ զաջինն Ճաշակեալ ՚ի նմանէ էառ զփորձ նորին յանձն իւր, աննախանձ գոլով և անկեղծ՝ ինդա գին մտերմուԹեամբ ծանուցանէ մարդոյն զբա-

րին վիճակեալ նմին։ Արդ՝ յումմէ երկնչիմ ես, մանաւանդ թէ յումմէ մարթի է ինձ երկնչել· զի չունիմ զգիտութիւն բարւոյ և չարի, զԱստուծոյ կամ զմարդոյ, և զօրինաց կամ զպատժոց։ Այսպիսին աստանօր գտանի դարմանին ամենայնի այսորիկ։ Այս պատուղ աստուածայինն՝ որ է գեղեցիկ ի տեսանել, և քաղցր ի կերակուր, և ունի զզօրութիւն յինքեան, հանդերձեալ է առնել զիս ի մատուն։ Զինչ ապա արգելու զիս ի ձգելոյ զձեռն իմ ի նա, և ի յագեցուցանելոյ զմարմին իմ և զվիտս միանգամայն։

Այս ասացեալ՝ ձգեաց ի չարաժամու զժբախտ ձեռն իւր ի պտուղ անդր. էառ, և եկեր ի նմանէ։ Յայնժամ զգաց երկիր զանհնարին վէրս յանձին իւրում. և բնութիւնն ետ արտասուօք յաթոռոյ իւրմէ զնշան աղիտից, զի կորեաւ ամենայն ինչ։ Ոսկ օձն պատժապարտ սողոսկեալ յետս՝ խոյս ետ ի թաւուտ անդր. և դիւրաւ մարթի էր նմա տեղւոյ տալ, զի յայնմ պահու ողջոյն զբաղեալ էր Ադամ զձաշակումն։ Ոչ որպէս թուեր նմա արդեամբք կամ ի կարծիս ևեթ առ կարի ինն ցանկութեան գիտութեանն, չէր նորա պատեալ յայնժամ յայլ պտուղ զայնպիսի քաղցրութիւն։ Ոչ կարծիք իսկ իրոյն աստուածանալոյ չէին հեռի ի մտաց նորա։ Ոչեր անյագաբար, և ոչ գիտաց յանձին զմահ ի ձաշակել անդ։ Ոչ ապա յափրացեալ, և զոգոյս արբեալ գինեաւ՝ սկսաւ զուարթագին բերկրանօք ասել օրինակ զայս։

Ո՞վ գերագոյն, ազդողագոյն և ընտրելագոյն քան զամենայն ծառս ի դրախտիս. որ ցարդ կայիր

անճանօթ, և Թափուր յարդասէաց անսի իմաս-
տութեան. և գեղեցիկ պտուղ քո կախեալ կայր
դողդոջս առ ոչինչ պիտանացու։ Ա՛յլ յայմհե-
տէ կանխագոյն խնամք ձեռին իմոյ ձգեցոյն ի
քեզ յամենայն առաւօտու՝ ոչ առանց արժանա-
ւոր քրտնի գովեստի, առ ի թեթևացուցանել ըզ-
կարի ինն ծանրութիւն բազմաբեղուն ոստոց քոց,
որք եդեալ կան առաջի իմ անխափան։ Ա՛յնչա-
փ և մեծալ՝ ահեցայց ի գիտութեան իրրև զ՚այս-
ուածս՝ որք էն ամենագէտ։ Ա՛նպէտս նախանձ
ձեացոյն նոքա ընդ այն՝ զոր չէն ձեռնհաս յընծայել
ել։ Ո՛ի պարգևն լինէր նոցունց, եթէ չէր քո
ահեալ աստանօր։ Ո՛րնի ծառոյս՝ քեզ խոստո-
վանիմ առաջնորդդ իմ ցանկալի զիտու-
թեան նորին. զի եթէ չէր իմ եկեալ զկնի քո,
տակաւին մնայի ի տգիտութեան անդ։ Ա՛ւր բա-
ցեր լնձ զանապարհն խնամոտութեան, և հատուր
լնձ մեծաս առ նա՝ որ կայր զանխոտել և առան-
ձինն։ Ա՛ւերևս և ես լինքնին զանխոտել եմ. զի երբ
կինք կարի բարձունք էն, և ի բացեայ յերկրի.
և գժուարին է տեսանել անդուստ անաղօտ զա-
ւնեայն լինչ յերկրի։ Ա՛ւերևս յայլ խնամն պա-
տահեալ վերին պատուիրանադրին՝ Թողեալ իսկ
զհանապազորդ և զանվրէպ զգուշութիւնն պահ-
պանութեան իւրոց լրտեսաց, որք կան զնովաւ[65];
Ա՛յց ես որո՞վ օրինակաւ յանդիման եղէց Ա՛ստ-
ծոյ։ Ա՛րդեօք ծանուցից նմա զփոփոխութիւնն՝
զոր այժմն գիտացի յանձին, և արարիչ զնա հա-
զորդ խնամոյ անթերի երանութեան, եթէ կալայց
յաւէտ անհաղորդ յիմարութեան զգե-
տութիւնն անզուգական՝ առ ի լնուլ նովաւ զպա-

կաստեղիւն խնամն սեռի, և ձգել նովաւ առա-
ւել ևս զսէրն նորա առ իս. և ընծայել զանձն իմ
զուգահաւասար նմին, և Թերևս երբեմն գերա-
գոյն ևս: Այս յանկուցիչն չի՛ ինչ պարտաւե-
լի. զի՞ ոք գոլով ստորին՝ իցէ անձնիշխան: Այ-
կարի՛ քաջ մարթի ե ինձ առնել զայդ: Այլ զինչ
արարից՝ եթէ տեսեալ իցէ Այստուծոյ զձառակումն
իմ. և մահն հասցէ՛ ի վերայ. զի չարժամ ոչ
ևս գտայց: Այս՛ ի կորնչիլ իմում՝ ամենացաւալ
Այգամայ ընդ այլում Այսայի, վայելեցէք ընդ
նմա. զոր ածել անգամ ընդ միտ մահ ե ինձ:
Ալ՝ ան որոյ կամիմ հաստատութեամբ ունել զԱ-
դամ հաղորդ ընդ իս յերջանկութեան անդ և՛ ի
Թշուառութեան: Օ՛ի այնչափ սիրեմ զնա, մին-
չև յանձն առնուլ ինձ զամենայն մահտնս ընդ
նմա, և առանց նորա և ոչ մի կեանս:

Օ՛այս ասացեալ՝ դարձոյց զոտս իւր՛ի ծառոյ
անտի առ՛ի գնալ: Այայց նախ խոնարհեալ՝ եր-
կիր եպագ զօրութեանն, զոր համարեր բնակեալ
՛ի նմա, և հեղուլ՛ի տունկն գՀիւթ գիտութեանն
բղխեալ՛ի Այեկտարէ կամ յաստուածընկալեցաց:
Յայնմ վայրի Այգամ տենչանօք ակնկալեալ միայր
դարձի նորա. և ունէր և բոլորեալ զսակ յընտիր
ընտիր ծաղկանց՝ առ՛ի զարդարել գՀերս նո-
րա, և պսակել զվաստակս մշակութեան նորա՝
որպէս օրէնն է հնձողաց բազում անգամ յօրինել
դշխոյի իւրեանց [66]: Այանգիտ արդարև մեծի խրչն
դութեան, և նորոգ միսիթարութեան ակն ունելին
խորհուրդք մնային Այգամայ՛ի դարձի անդ Այսայի
զկնի այնչափ դէպերանաց: Այայց սիրտ նորա զոգ-
ոյեա նախագուշակ չարեացն՝ երկեղուկս արկանէր

նմին. և բազում անգամ տայր զդողանի հարկա-
նել։ Նմին իբր չոգաւ ընդ առաջ նորա ընդ ձա-
նապարհն՝ զոր կալաւ Նշայ յառաւօտուն՝ ի մեկ-
նել իւրում՝ ի նմանէ։ Նշ պարտ էր նմա ան-
ցանել առ ծառուին գիտութեան։ Ընդ եգիտ նա
զՆշայ, մինչեւ էր նորա մեկնեալ՝ ի ծառոյ ան-
սի։ Որ և ունէր՝ ի ձեռին զգեղեցիկ ոստ ծառոյն
պաղալից. և պտուղք նորա գոլով նորոդ հատեալ՝
խնդային աղուամազիւք, և բուրէին զոտ անման
հոտութեան։ Փութացաւ Նշայ առ նա, և ունէր
՝ի գէմն իւր զջատագովութիւն անձինն պատրաս-
տական՝ ի նախերգանս. զոր և ամբք բանիւք սկսաւ
ըստ կամի՝ օրինակ զայս։

Ընդամ՝ միթէ ոչ զարմացար ընդ անապանելն
իմ։ Ոչողջ զքեզ, այլ՝ ի զրկիլ իմմէ յերեսաց
քոց՝ համարեցայ զայն ընդերկար յոյժ. զտապ-
նապ սիրոյ այնպիսի չարդ չէր իմ կրեալ, և ոչ
իակ կրեցից. զի ոչ և կամիմ առնուլ զփորձ վըշ-
տացն՝ ի հեռանալ անդ յաչաց քոց. զոր և ան-
փորձ գոլով յառաջագոյն՝ յանդուգն խնդրեցի։
Նայց անակնկալ գտաւ պատճառն յապաղմանս,
և արժանի լսելեաց։ Ոյ ե ծառս՝ որպէս ծանու-
ցաւ մեզ, մահառիթ՝ ի ձաշակմանն անդ, և պատ-
ճառ անծանօթ էարեաց. այլ բանայ զաչս աստ-
ուածային իմն զօրութեամբ, և աստուածացուցա-
նէ զորս ձաշակէն՝ ի նմանէ։ Նշ այնպէս իակ ցու-
ցաւ՝ ի փորձոյ։ Ոձն իմաստուն՝ ոչ ունելով զար-
գել հրամանի իբրև զմեզ, և կամ ոչ հնազան-
դեալ՝ եկեր՝ ի պտղոյ անտի, և ոչ մահացաւ՝ ըստ
որում սպառնացաւ մեզ. մանաւանդ զի յայնմ-
հետէ ստացաւ և զբարբառ և զիմաստ մարդկե-

ղէն, և խօսէը ընդ իս՝ ի զարմանս անձին իմոյ։ Ար և այնպէս քաջ հաւանեցոյց զիս, մինչև յանձն առնուլ ինձ ձաշակել՝ ի նմանէ. և զոմն վնասն առ դասիս յանձին իմում։ Օ՜ի և ես քան զևս բա- ցան աչք իմ՝ որք յառաջն էին մթագունն. ոչ իբրև իմ ընդարձակեցան. և սրտի իմոյ լայնացեալ՝ վեր- առեալ եղէ յաստուածութիւն անդր։ Օ՜որ թէ պէտև խնդրեցի՝ ի սակս քո, այլ առանց քո մնրթե է ինձ արհամարհել և թողուլ՝ ի բաց. զի այն է երջանկութիւն անձին իմոյ՝ որում դու գտանիս բաժանորդ. և որ անբաժ է ընդ քեզ, անդէն և անդ գառնայ ինձ անհաձոյ և ծանրատաղտուկ։ Ա՜րդ՝ ձաշակեա՛ և դու, զի ըստ հաւասարութեան սիրոյն հաւասար լիցի և վիճակ մեր և խնդութիւն։ Պատուէր՝ ի չձաշակել քո՝ խաիր աստիճանիս բաժա- նեաց զմեզ՝ ի միմեանց. և յայնժամ կարի անա- գան հրաժարեցայր ես յաստուածութենէս՝ ի սակս քո, և տեսութիւնն վերին ոչ ներեաց ինձ։

Օ՜այսօրինակ պատմեաց Ադամ զանցս իւր զը- արթադէմ խնդութեամբ. այլ յայտս նորա շա- ռաղոյն ցուցաւ ախտակրութիւն։ Ասէ Ա՜դամ՝ ի լսել անդ զնահատիլ յանցանս նորա՝ անդէն դու- մարեալ՝ եկաց յապուշ կրթեալ և այլագունեալ, և ահ ցրտագին խաղաց ընդ երակս նորա, և լքոյց զամենայն յօդուածս անդամոց նորա։ Ա՜նկաւ՝ ի ձեռանէ նորա պատկն՝ զոր բոլորեալ էր՝ ի սակս Ա՜ւային. և վարդք նորա թառամեալ թօթափե- ցան՝ ի խոնարհ։ Ա՜կաց անբարբառ՝ ունելով թառ- չամեալ զգոյն երեսաց իւրոց. մինչև զկնի զայս օրինակ ելոյծ յանձին զլուութիւնն նեղբին։

Ա՜ՀԱ զեղեցկազոյն արարածդ յարարչութեան

անդ. ով վերջինդ և ընտրելագոյնդ քան զամե-
նայն գործս Աստուծոյ։ Զինոյն ինչ սուրբ, աստ-
ուածային, ընտիր, ցանկալի և քաղցր՝ որում
մարթ էր յանդիման լինել աչաց կամ մտաց, կայր
գերազանցեալ ի քեզ։ Ոչ իմրդ կորեար, զիմրդ
յանկարծակի կործանեալ՝ անչքացար, ծաղկիդն
կեց եղեր, և մանեցար մահու։ Անառանդ թէ՝
զիմրդ զիջար անցանել զահագին պատուիրա-
նաւն. և զիմրդ արկեր զձեռն քո յարգելեալ
պտուղն սրբութեան։ Պատրեաց զքեզ չարանենդ
թշնամին, և տակաւին չառնուս ի միտ. և զիս
կործանեաց ընդ քեզ։ Ոչ ի յիրաւի կամք էն ինձ
մեռանել ընդ քեզ։ Վասզի զիմրդ մարթ է ինձ
կեալ առանց քո։ Ոչ իմրդ Թողից զքաղցրութիւն
բանից քոց, և զյօդակապութիւն սիրոյն ընդ մի-
մեանս՝ առ ի կեալ անօգնական յամայի անտառ-
սըդ։ Այլ թէպէտ մարթ էիցէ Աստուծոյ ստեղ-
ծանել միւս ևս Ադամ, և ինձ տալ նմին միւս ևս
ի կողից, սակայն անհնար է նմա հանել երբեք
զկորուստ քո ի մտաց իմոց։ Ոչ ի զգամ ես յան-
ձին իմում զկապանս բնութեան՝ որ ձգէ զիս առ
քեզ։ Ասարին ես դու ի մարմնոյ իմմէ, և ոսկր
յոսկերաց իմոց։ Ոչ բաժանեսցի երբեք վիճակ
իմում երջանկութեան կամ թշուառութեան ի
քումմէդ։

Ոչ այսօրինակ խօսեցեալ նորա յանձին իւրում՝
իբրև զի ոք քաջալերեալ յանհնարին երկիւղ,
և զկնի բազմատագնապ խորհրդոց զիջեալ յան-
դարմանելին ինչս՝ հանդարտագոյնս ուղղեաց ըզ
բան իւր առ Ադամ՝ օրինակ զայս։

Յանդուգն ձեռնարկեր ի գործ ով զիմագրաւ

Այս, զմեծն գրգռեալ վտանգ. և այնպէս հա-
մարձակեցար, որպէս թէ կամք էին քեզ տեսա-
նել միայն զպատուին սուրբ զհրաժարելին ՚ի մեր-
ձենալոյ, և՛ առաւել ՚ի ձաշակմանէ։ Բայց եղե-
լոյն չիք հնար. ոչ Յ.մենականն, և ոչ տեսչութիւնն
վերին կարող են նահանջել յետս զանցեանն, կամ
զոր ինչ եղևն։ Վասկայն թերևս ոչ մեռանիցիս,
և յանցանք քո չլցեն կարի մեծեղեռն. զի յա-
ռաջ քան զքեզ օձն ձաշակեաց ՚ի պտղոյդ, և
պղծեաց զայն։ Այս նովաւ գտաւ նա զառաջինն
անարդ և անսուրբ։ Բայց և ՚ի նմա ոչ գտաւ մա-
հաւթ, զի կենդանի է տակաւին՝ որպէս աստգեր
դու, և գտեալ է զբարձրագոյն աստիճան կենաց
խբրև զմարդ։ Որ և հաւաստի ցուցանէ մեզ, թէ
՚ի ձաշակել մերում նոյնպէս՝ հանդերձեալ եմք
հասանել մերում բարձրութեան, որ այն խակ է
լինել Յ.աստուածս կամ ՚ի բեշտակս։ Այս ոչ խակ
մարթ է ինձ ընդ միտ ածել, թէ Յ.բարւոյն աւելն-
լոյսատ՝ թէպէտև սպառնացաւ մեզ, կամիցի այն-
պէս չարաչար կորուսանել զմեզ զնախատատիս
արարածքս. որք և արժանի գտաք այնպիսումն
բարձրութեան՝ գեր ՚ի վերոյ կարգեալ քան զայլ
արարածս։ Այս զի ՚ի մեր սակս ստեղծան նոքա, և
կան ընդ մերով իշխանութեամբ, անշուշտ յան-
կանիլ մեր՝ կորնչելոյ են ընդ մեզ։ Այս այնպէս
՚ի ջնջել Յ.աստուծոյ զարարածս իւր՝ ՚ի գերև ելա-
նէ, և կորուսանէ զաշխատութիւն իւր. զի ստեղ-
ծանէ, և եղծանէ։ Վարձեալ՝ և չունիմք մեք ըզ-
պատշաճ կարծիս զՅ.աստուծոյ. զի թէպէտև մարթ
է զօրութեան նորա երկրորդել զարարչութիւնն,
սակայն ոչ կամի նա ջնջել զմեզ՝ զոյէ հակառա-

կորդն համարձակեսցի ասել. « Ո՛չ է աներկեան վիճակ նոցա՝ զորոց յաւէտ իմն խնամ ունի Աստուած : Ո՞ւմ ուժեք հնար է ընդերկար հաձոյ լինել նմին : Կործանեաց նա զիս զառաջինն , և այժմ զազգ մարդկան. և յետ այսորիկ զո՞ կամեսցի » : Արդ՝ չէ արժան ընծայել Քրիստոսի զայդպիսի առելի նախատանաց : Այլ ես հաստատեալ եմ զվիճակին իմ ընդ քեզ , զի գիտեմ հաւաստեաւ՝ թէ ունիմ անկանիլ ընդ նովին դատապարտութեամբ : Եթէ մահն առնէ զիս ընկեր ընդ քեզ , է նա ինձ իբրև զկեանս : Ցհա այսչափ բռնագոյնս ձգեն զիս կապանք սիրոյն առ քեզ , զի իմ ես բոլորովին : Ընդհնար է մեզ բաժանիլ ի միմեանց , զի մի եմք , և նոյն մարմին : Կորուստ քո է կորուստ անձին իմոյ [67] :

Օ այսօրինակ Ադամ. և Եւայ ետ նմա զայս պատասխանի : Ո՞վ սիրալի հանդիսի գերապանծ սիրոյս : Ո՞վ լուսափայլ ապացուցիս , և բարձրագոյն օրինակիս. որ և ստիպէ զանձն իմ լինել նաև խանձարուր : Սակայն Ադամ գոլով իմ յեանեալ ի քումմէ կատարելութենէ՝ զիարդ կարացից հաւանիլ այնմ: Պանծամ ընդ ծագումն իմ ի քումդ յանկալի կողէ , և մնադիւր լսեմ զբանս որ յաղագս մերումն անքակ միութեան. զի եմք մի սիրտ , և մի հոգի : Որոյ գեղեցիկ փորձ քաջայայտ երևի այսօր. զի ցուցանես զանձն քո հաստատեալ՝ առաւել յանձն առնուլ անկանիլ ընդ նովին պատժով , և ընդ նովին յանցանօք՝ (եթէ կայցէ ի ձա շակման անդ գեղեցիկ պտղոյն) քան բաժանիլ ի յօդակապ սիրոյ միմեանց մահուամբ , կամ այլ ինչ դժնդակաւ քան զմահ : Այս զայս պանծալի

հանդէս քումդ սիրոյ եղոյց նոյն ինքն զօրութիւն պաղոյս (զի ՚ի բարեաց անտի յառաջ գան միշտ բարիք՝ ինքնին, կամ ըստ դիպաց)· ապա թէ ոչ՝ չէր նորա ծանուցեալ այնչափ աքանչելի՝ ՚Աստուածն եթէ զիտէի, թէ մահն սպառնայեալ հանդերձեալ է զհետ գալ իմում յանցանաց, ես միայն յանձն առնուի զչարագոյնն, և ոչ յորդոր լինիի քեզ՝ ՚Աս ինքնին մեռանիի առանձինն, և ոչ բըռնադատիի զքեզ ՚ի վրդովել զխաղաղութիւն անձինդ· մանաւանդ զինի հաւատոյ նշանի քումդ անզուգական և անկեղծ սիրոյ՝ ՚Այլ ես զհակառակն տեսանեմ յանձին իմում՝ Ո՛վ մահ, այլ կեանք առաւելան ՚ի յիս· լուսաւորութիւն աչաց, նորոգումն յուսոյ և խնդութեան· և այնպիսի իմն անհամեմատ քաղցրութիւն՝ մինչև առ նովաւ զոր միանգամ վայելեցի յառաջագոյն, երևել ինձ դառն և անախորժ՝ ՚Որդ՝ ՚Ադամ զինի իմում փորձոյ ձաշակեա՛ և դու անվհեր, և թո՛ղ հողմոց զերկիւղ մահուդ·

Ո՞չ այս ասացեալ նորա՝ զիրկս արկ ՚Ադամայ· և առ խնդութեան եհեղ զգորովալից արտասուս· Որ և յաւէտ իմն հաձեալ էր ընդ այն, զի ՚Ադամ այնչափ մեծացոյց զսէր նորա՝ մինչև յանձն առնուլ նմա անկանիլ ընդ աստուածայինն բարկութեամբն կամ մահուամբ· Յորոյ ՚ի փոխարէն (զի անիրաւ չողոքորթութիւնք արժանի են այսպիսումն հատուցման) մատոյց նա ՚Ադամայ լի՛ ձեռամբ ՚ի գեղեցիկ և ՚ի ցանկալի պաղոյ անտի ոմն տոյն՝ զոր ունէր ՚ի ձեռին՝ ՚Ու նա ձաշակեաց անխիղճ՝ հակառակ իւրումն հաւատոյ պիտութեան· Ո՞ան որոյ ոչ պատրեցաւ նա, այլ պարտեցաւ

անմտութեամբ ՚ի հրապուրանաց անտի հնոջն։ Յայնժամ վերստին սասանեցաւ երկիր յընդերայ անտի իւրոց, և գարձեալ պիտաց յանձին վերկունս ցաւոց. և բնութիւնն կրկին եբարձ զձին։ Ապաղնեցան երկինք, և որոտընդոստ փայլատակք կամք հոսեցին զցաւագին կայլակս արտասուաց, և առին ողբս ՚ի վերայ ծննդեան մահացու մեղաց։ Ա.ՀԼ Ա.ԳԱՄ ուշ եդեալ կայր միայն ՚ի ձաշակումն ցյաղուրդ։ Եւ Լուայ ևս ոչ զարհուրեցաւ ՚ի կրկնելոյ վերստին զյանցանս՝ առ ՚ի հաճոյանալ և ևս յաչս նորա միաբան ընկերշակութեամբ։ Որ և արբեցոյց զնոսա գոգոյես նորոգ գինեաւ։ Կային պարանոցաթաղ ՚ի խնդութեան անդ, համարեալ զանձինս հասեալ յաստուածութիւն անդր՝ որ ընդ ծայրս նոցա թևս ելանել ՚ի բարձունս, արհամարհեալ զերկիր։ Լայց պատուէն ստացաւարը կարի տարօրինակ եցոյց առ նոսա զազգեցութիւն իւր. զի բորբոքեաց զնոսա անհնարին ցանկութեամբ մարմնոյ . . . ՚ի հնիք յանցանաց, և յառաւելութիւն մեղաց իւրեանց։ Ապինդ զինի յափրանալոյ նոցա հեշտութեամբ՝ թմրեցոյց զնոսա քունն յօղագին։ Ա.ՀԼ ՚ի ցնդիլ ազգեցութեան պատիր պատոյն՝ որ կալեալ էր զՀոգիս նոցա զառաքինաբար ինն և քաղցր գոլորշեօք, անդէն եթող զնոսա թանձրութիւն քնոյն՝ որ լցեալ էր ՚ի ծուխ բազմավիշտ, և յանուրջս մտացն խղճի։ Յարեան ապա գոգոյես յերեսաց անհնարին տագնապի. և հայեցեալ առ միմեանս՝ տեսին վաղվաղակի, թէ զիարդ բացեալ էին աչք նոցա, և ձրպիս խաւարեալ միաք նոցա։ Ինամեզութիւնն՝ որ իբրև զբօղ Հոլանի էր նոցա յերեսաց գիտութեան չարին, ՚ի

բաց գնացեալ էր ՚ի նոցանէ ։ Նկեղծ վատահու-
թիւն, բնական արդարութիւն, և պատիւ երե-
սաց մեկնեալ ՚ի նոցանէ՝ թողեալ էին զնոսա մերկ
անդամ առաջի ամենայն յանցանաց ։ Որ թէպէտ
և ծածկէր զանձն իւր, այլ ծածկոյթն նորա ա-
ռաւել ևս մերկացուցանէր զնա ։ Այսօրինակ
յարեաւ հզօրն Նաւախատան Հերքիւլեանն Աժա-
սան՚ի ծոցոյ անտի վիշտեանն Նաւկրեայ պոռնկի ։
Նա զարթեաւ խուզեալ ՚ի գօրութենէ իւրմէ,
իսկ սոքա կողոպտեալ և հոլանի յամենայն առա-
քինութեանց ։ Որք և իբրև զհամր հարուածեալ՝
նստեալ կային անբարբառ, և ամենապարտ ՚ի
դէմս իւրեանց ։ Մինչև զկնի Նշամ թէպետև
ոչ նուազ ամենայնից էր նա քան զՆսայ, սակայն
յաւ տալ ելս բանիցս այսոցիկ ։

՚Ի չար ժամու ոմն Նսայ ունկնդիր եղեր բա-
նից վեհնդին ստութեան ։ Նանգղ յուսմնէ և իցէ,
անշուշտ ուսաւ նա զյօդաւորութիւն մարդկեղէն
բարբառոյ ՚ի կործանումն մեր, և ՚ի մտոքն յոյս
խոստացեալ բարձրութեան ։ Օ՚ի բայան արդա-
րև աչք մեր, և գտաք զգիտութիւն բարւոյ և չա-
րի. այլ ընդ նմին կորուսաք զբարին, և գտաք ըզ-
չարին՝ զբարեաչար պատուղն գիտութեան. եթէ ար-
ժան իցէ կոչել զնա գիտութիւն՝ որ եթող զմեզ
մերկ և թափուր ՚ի պատուոյ անտի, յանմեղու-
թենէ, ՚ի հաւատոյ և յանարատութենէ՝ որք էին
բնիկ զարդք մեր, և կան այժմ աղաւեալ և ա-
պականեալ ։ Նա ՚ի դէմս իսկ մեր երևեին նշանք
անառակ յանկութեան. յորմէ և բաղմնանան չա-
րիք, ընդ նմին և ամենայն խայտառակութեանն՝ վեր-
ջինն չարեաց ։ Զոր՝ լեր հաւատալ ընդ կորուսա-

բսրբոյն, զոր ձգեցաք յանձինս։ Այլ ես զիարդ տեսից յայսմհետէ զերեսս Աստուծոյ կամ Երեշ տակի՝ զորս յառաջն տեսանէի բազում անգամ խնդութեամբ և զմայլմամբ։ Երկնային կերպարանք նոցա հանդերձեալ են յայսմհետէ չլացուցանել զերկրաւորս մեր՝ անտանելի և պայծառաց տեսիլ փայլմամբ իւրեանց։ Ո՞վ երանի՛ թէ հնար լինէր ինձ կեալ աստանօր առանձինն յամայի և ի մթին կողմն անտառիս՝ ուրանօր բարձրաբերձ ծառատունկք անթափանցելի ի լուսոյ անտի աստեղաց կամ արեգական՝ արկանեն զստուերս իւրեանց նսեմազգեաց իբրև զգիշեր։ Այլ սարսիլք և մայրք ծածկեցէ՛ք զիս անհամար ոստովքդ, զի մի՛ ևս տեսից զնոսա։ Այլ այժմ Աստ՛ուած տեսցուք, թէ զիարդ մնրթ է մեզ ծածկել ի չարաչար վիշ Ձակիս յերեսաց միմեանց զանդամս մեր՝ որք կարի ամօթապարտ երևին և տգեղ։ Պատցուք զծառ ինչ լայնատարածս, և կարեալ ի միասին զփայփուկ տերևս նորա՝ պատեսցուք զմիջուկս առ ի ծածկել շուրջանակի զանդամս մեր. զի մի՛ ամօթն նորամուտ բազմեալ ի նոսա՝ յանդիմանեսցէ զմեզ իբրև զգարշելիս։

Այսպէս խորհուրդ ետ նա. և չոգան ի միասին ի տնկախիտ անտառն։ Ուր և անդէն վաղվաղակի ընտրեցին զթզենին՝ ոչ զանուանին ի սակս քաղցրութեան պտղոյն, այլ զբաջածանօթն այժմիկ ի Հնդիկս. որ այնչափ լայն և ընդարձակ տարածէ զոստալից բազուկս իւր ի Ալաբար[68] կամ ի Գեհան[69], մինչև ոստոց նորա խոնարհեալ առնուլ զարմատ յերկրի։ Այս այնպէս բազմացեալ դստերացն առ մայրն՝ յօրինեն ի վերուստ

սիմեսաղարդ հովանի բարձրակամար, և ի միջի անդ ձեմելիս ի հնչիւն արձաղանգաց։ Ընդանօր բազում անգամ խոյս տուեալ հովուին Հնդկաց յերեսաց տօթոյ՝ գտանէ զհովանի իւր զուարճին. և անդուստ դիտէ ընդ ծակ նորա զհօտ իւր արօտական։ Ընդ՝ ժողովեցին զտերեւս նորա, որք էին լայնատարը իբրև զվահանն Ամազոնեան [70]. և ըստ ուշիմութեան հանճարոյ իւրեանց կարեցին զնոսա ընդ միմեանս՝ առ ի շրջապատել զմիջս իւրեանց։ Կնոսի ծածկոյթ յերեսաց յանցանաց, և ամենայնի պատկառանաց։ Ոչ զիար տարօրինակ յառաջին ծածկութիւն անտի փառացն։ Ըստ սմին օրինակի եգիտ Կողմբոս [71] զԱմերիկայիս՝ որք սփածեալ ունէին զմիջս իւրեանց ի գօտի փետրազարդ, և այլ մասունք նոցա կային մերկանդամ. և ինքեանք վայրապատուն ի միջ ծառոց կղզեայց, և յանտառս ծովեզերայց։ Օ այսօրինակ հնարից՝ Ախահարքն մեր, և համարեցան ի միտս իւրեանց թագուցանել մասամբ զամենի իւրեանց։ Ամենայն զգեաւք զհնդիսիտ և զանդորրութիւն մերոց՝ նոտան, և եռուն զանձինս յարտօսր։ Ոչ միայն հեղեղք արտասուաց իջանէին յաչաց նոցա, այլև ի նեղըսն անդ սկսան յառնել սաստկաշունչ հողմք բազմապատիկ կրից՝ սրտմտութեան, ատելութեան, երկմտութեան, կասկածանաց, և գժտութեան։ Ամբ և յանհնարինս վըդովեցին զնեերքին խաղաղաւէտ վիճակ մտաց նոցա՝ որ եր բեմն էր սահման անդորրութեան, և այժմ յուզեալ կայ յերեսաց խռովութեան։ Օ ի միաբն ոչ էս ի իշխան. և կամքն ոչ անսայ հրամանաց նորա. և երկոքին էս հնազանդեալ կան զգայա-

կան ցանկութեան, որ ի նեղբուստ բռնացեալ ի վերայ գերապոյն բանիցն՝ թեկն ածէ իշխանու-թեան նորա։ Ալլափոխեալ Աստամայ ի խռովու-թեանց աստի սրտի իւրոյ, և խիստ հայեցուածովք սաստկացուցեալ զոհ բանիցն՝ զայսօրինակ սկսաւ խօսել վերստին ընդ Աւային ։

Դէմ անսացեալ էր քո իմոյ բանից, և կա-ցեալ առ իս՝ որպէս աղաչելի զքեզ ի չարագու-շակ առաւօտուս, յորում օտարոտի ցանկութիւնն վտարանդի շրջելոյ՝ ոչ գիտեմ յումմէ ազդեալ կալաւ զքեզ, տակաւին ինացեալ էր մեր յերջան-կութեան. և ոչ որպէս այժմ՝ կողոպտեալ ի բա-րեաց, ամենաապարտ, մերկ և ողորմելի ։ Ո՛ր ոք յայամշեհէ՛ի խնդիր լինցի տարապարտ փորձոյ իւ-րումն հաւատոյ ։ Ի խնդրել նորա զայդ՝ ծանիցէ հաւաստեաւ, թէ սկսեալ է կործանումն նորա ։

Որում անդէն արար պատասխանի Աւայ՝ կա-րի լիմն զայրացեալ ընդ հարուածս բանիւ կշտամ-բանաց նորա ։ Օ՜ ինչ են բանքդ ոմ Աստամ անա-դորոյն՝ որք ելանեն ի շրթանց քոց ։ Ահաւադիկ հա-մարիցիս դու զայդ ի սոգտանս իմումն ցանկու-թեան վտարանդի շրջելոյ՝ որում թերևս մարդ էր պատահել ինձ առընթեր քո, և քեզ իսկ գըլ-խովին ։ Դէմ լեալ էր քո անդ, և կամ փոր-ձեալ աստանօր՝ անհնար էր քեզ առնուլ ի միտ զդաւաճանութիւն օձին ի խօսել նորա ընդ քեզ, որպէս ընդ իս ։ Օ՜ ի չունէր նա պատճառ ինչ թերի-նամութեան ընդ իս՝ առ ի խորհել զինեն չարու-թեամբ, և խնդրել զինաս անձին իմոյ ։ Ահաւադիկ պարտ էր ինձ չմեկնիլ երբեք ի քէն, և կալ առ-ընթեր քո իբրև զկող քո տակաւին անկենդան ։

Սակայն և այնպէս՝ գոլով քո գլուխ իմ, ընդէր ոչ ետուր ինձ հրաման սաստիկ չմեկնելոց, եթէ ըստ բանից քոց գնայի ես ի վտանգ։ Ողջոյ ես հեշտեաւ ինձ, զի դու ոչ ուժգնին զդէմ կալար, մանաւանդ զի՝ թոյլ ետուր, հաւան գտար, և խնդագին յուզարկեցեր։ Այնթէ կացեալ էիր հաւատացեալ և անշարժ յընդդիմանալ քո՝ ոչ էր իմ յանցուցեալ, և ոչ քո ընդ իս։

Արդ Աստուած, զառաջինն յայնժամ սրտմտեալ՝ ետ պատասխանի։ Ո՞յս է սէր քո առ Աստուած ասաւ չնորհ, և այս փոխարէն սիրոյ իմոյ՝ զոր ցուցի առ քեզ անփոփոխելի, այն ինչ կորուսեալ էր քո, և ոչ իմ։ Այդ թէպէտ մանրթ էր ինձ ինալ կենդանի, և վայելել յանմահական երանութեան, սակայն և այնպէս առաւել ընտրեցի զմահ ընդ քեզ։ Այժմ տագանիմ իբրև զպատճառ քումդ յանցանացդ։ Համարիս դու ինչ ոչ սաստիկ պտեալ ըստ բաւականին՝ի Թողուլ անդ զքեզ։ Այլ զինչ մանրթ էր ինձ առնել առաւել։ Ո՞վ զգուշացուցի զքեզ, խրատեցի, և ծանուցի յառաջագոյն զվտանգն, և զգաստակալութիւն ձշնամանն։ Ո՞չ աւելն քան զայդ լինէր բռնութիւն. և բռնութիւնն չունի աստանօր տեղի՝ի վերայ ազատութեան կամաց։ Այլ կարի ինձ յանձնապատանութիւնն ձգեաց զքեզ անդր՝ չհամարեալ դատել զվտանգ, այլ յաւէտ զպանծալի առիթ հանդիպի։ Ահաւասիկ վերիպեցայ և ես, յանչափս զարմացեալ ընդ ձիրս չնորհացն՝ որ՝ի քեզ. մինչև դնել ինձ՝ի մահ, թէ ոչ պատահելոց են քեզ չարիք։ Սակայն ցաւ է ինձ արդ ընդ վերսանագ՝ որ եղև պատճառ խնամն յանցանաց, և քումդ մեղադրութեան։ Այսպէս

ունի անցանել ընդ նմա, որոյ կարի ինն վտահա-
ցեալ ընդ պանծալն ձիրս հինջ իւրոյ՝ Թաղու զիշ-
խանութիւնն ՚ի կամն նորա։ Օ՚ի ոչ հանդուրժեա-
ց ի նա սանձի. և Թաղեալ՚ի կամն իւր՝ եթէ չարեաց
ինչ հանդիպեացի, նա ինքն զառաջինն լնցի մեզա-
դիր տկարութեան առն իւրոյ ՚ի զիջանել անդ։

Օ՚այսօրինակ անցուցին նոքա զօդուտ ժամն ՚ի
ստգտանել զիմաստս. բայց ոչ ոք մեզադիր եղև
անձին. և տարապարտ հակառակութեան նոցա
ոչ գտաւ վախճան [72]։

# ԳՐՔԱՑ ԿԱՐՈՒԱՆՔԱ.

ԳԻՐՔ Ա.

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ճանուցեալ Հրեշտակաց զպատուիրանազանցութիւն մարդոյն՝ Թողուն զպահպանութիւն դրախտին. և զառնան անդրկին յերկինս, առ արդարացուցանելոյ զզգուշութիւն պահպանութեան իւրեանց։ Որք և արդարեան ի ցուցանել Աստուծոյ, թէ անհնար էր նոցա արդելուլ զմուտս Սատանայի ի դրախտ անդր։ Աւաքէ նա զՈրդի իւր ի գտանել դանցաւորս։ Իջանէ նա ի դրախտն, և ասէ նոցա զվճիռ արդարադատ։ Եւ ապա զթացեալ ի նոսա՝ զգեցուցանէ զնոսա. և այնպէս վերստին ելանէ յերկինս։ Մեղք և Մահ՝ որք ցայնժամ նստեալ էին առ գրունս դժոխոց, զգան յանձինս զյաջողութիւնն Սատանայի ի նորաստեղծ աշխարհն, և զանցանան՝ զոր արարեալ էր մարդոյն ի նմա. և հաստատեն զմիտս իւրեանց ոչ ևս մնալ ի դժոխս, այլ երթալ զհետ Սատանայի հօր իւրեանց ի բնակութիւն անդր մարդոյն։ Եւ ի գիւրութիւն անցից ի դժոխոց անտի յայս աշխարհ, և ասեն անդր՝ յօրինեն լայն ճանապարհ կամ կամուրջ ի վերայ վհին, զոր չաւզայն՝ զոր կալաւ Սատանայ զառաջինն։ Եւ այնպէս եղեալ ի ինդիր երկրի դատանեն զՍատանայ, զի դառնայր անդրկին ի դժոխս՝ պանծացեալ ընդ յաջողութիւն իւր։ Խնդակցութիւն նոցա ընդ միմեանս։ Հաւեալ Սատանայի ի Պանդէմոն՝ պատմէ պարծանօք ի հակառակ մարդոյն։ Ասէ փոխանակ գովութեան ընկալեալ լինի ի նոցանէ ի չէնն հաստարակաց. և յանկարծակի փոխէ ընդ նոսա յօճ ըստ գատակնքոյն զոր ընկալեալ էր ի դրախտի անդ։ Ի գերև եղեալ ապա ամենեցուն ի տեսլենէ անտի արդելեալ ծառոյն՝ որ բուսանի յանդիման նոցա, ձգեն զձեռս իւրեանց տենչանօք ի պտուղ նորա, այլ ծառքն զնով, և զմոխիր գառնաճաշակ։ Յառաջագէմ ընթանան Մեղք և Մահ։ Ճանուցանէ Աստուած յառաջագոյն զյաղթութիւն Որդւոյ իւրոյ ի վերայ նոցա, և զնորոգութիւն արարածոց։ Աւգ յայնմ վայրի պատուէր ասէ Հրեշտակաց իւրոց յարուցանել փոփոխութիւնս ի հաստատութեան երկնից, և ի տարբերս։ Եւ Ադամայ քալ ի միտ առեալ զյաւագին վճռակ անկման իւրոյ՝ ողբայ դառնապէս, և չառնու յանձն զյաւակնութիւնն Եւայի։ Սակայն ոչ գադարեալ նորա՝ հանդարեցուցանէ զնոսն։ Եւ ապա առ խուսափել յերեսաց անիծիչն՝ որ ոչինչ ընդհատ ի նոցանէ հանգերձեալ էր անկանել ի վերայ համօրէն ծննդոց նոցա, առաքն դնէ Ադամայ ընտրել զերբուկն կորուստ անձինն։ Աւգ նա ոչ հաւանի։ Սակայն ընկալեալ յանձին զաւագոյն յոյս՝ յոչ առնէ Եւայի զնոստուհին արարեալ նոցա ճան ինդրելոյ Ջաւակն նոցա զվրէժ յօձէ անտի. և յորդոր լինի նմա ինդրել ի միասին զղջմամբ և արտասուօք զհաշտութիւն ընդ Աստուծոյ սրտմտելոյ ի վերայ նոցա։

# ԴՐԱԽՏ ԿԱՐՈՒՍԱՆԱԼ.

ԳԻՐՔ Ժ.

Ի նմին ժամանակի ճանուցեալ էր յերկինս ա-
նագորդն դատաճանութիւն Սատանայի ՚ի դրախ-
տի անդ՝ որով խոտորեցուցեալ էր զԱդամ, և
զայր նորա. և ձգեալ զնոսա ՚ի ձաշակումն մահա-
բեր պտղոյն։ Ո՛վ զի՞նչ իրաց մարթ էր ինալ
Թագուն յամենատես աչացն Աստուծոյ, և կամ
ստուերագծ արկանել ամենագէտ մտաց նորա։ Որ
և գոլով ամենիմաստ և արդար յամենայնի՝ Թոյլ
տուեալ էր Սատանայի փորձել զիմաստ մարդոյն,
որ սպառազինեալն էր անթերի գօրութեամբ, և
ինքնիշխան ազատութեամբ կամաց. և էր ձեռն-
հաս լինել խելամուտ, և մերժել ՚ի բաց զամենայն
պատրանս Թշնամանոյն, կամ առ երեսս բարեկա-
մի։ Վասն զի քանզի տեղեակ էին Սախահարքն մեր,
և պարտ էր նոցա յոյժ ածել զՀրամանն վերին՝ որ
եգեալ էր ՚ի վերայ նոցա վասն չձաշակելոյ ՚ի պըտ-
ղոյ անտի, ո՛ր և փորձէր զնոսա։ Այլ անսասա-
նեալ նոցա Հրամանին՝ գտան պատժապարտ (և
մեք հնա՛ր էր լինել դուզնաքեայ ինչ քան զայդ)։
և բազմապատկեալ զմեղս՝ արկին զանձինս ՚ի կոր-

ծանուսին։ Ա՝ սան որոյ և Հրեշտակք՝ որք կարդեալ էին ի պահպանութիւն դրախտին, անդէն վաղվաղակի թողեալ զայն՝ վերացան յերկինս անմբռնանչ և ակնթարթի ի սակս աղետից մարդոյն. զի ծանեան զողորմ վիճակ նորա. և զարմացան ևս ընդ անտեսաբար մնալոյ Ճշմարտոյն ի դրախտ անդր։ Ընդ հասանել ցաւագին բօթոյն յերկրէ յերկինս՝ դառնագին գոյր որոց լուանն։ Այս արիւնաթիւնն Յանձրամած ոչ խնայեաց յայնժամ ի դէմն երկնաւորաց. բայց խառն ընդ դԱթոռեան, և ոչ իսկ բռնացաւ ի վերայ երանութեան նոցա։ Օ Եղան կատեցան երկնային բազմութիւնքն զժամանելովքն յերկրէ՝ առ ի լսել ի նոցանէ զամենայն անցս։ Այլ նոքա փութացան յանդիման լինել վերին աթոռոյն՝ առ արդարացուցանելոյ զզգուշութիւն պահպանութեան իւրեանց։ Ընդ և հեշտեաւ ինն արդարոյն, ի բարբառել անդ յաւիտենական Հօրն բարձրելոյ ի միջոյ փայլատականաց յամպոյ անտի իւրումն Յաղնութեան՝ օրինակ զայս։

Հրեշտակդ համահաւաքեալ և զօրութիւնդ՝ որք դարձայք յերկրէ ի ձախող պահպանութենէ ձերմէ, ձեզ ասեմ՝ մի խոովեսջիք յանձինս ձեր ընդ պատահումն ի դրախտի անդ. զի անհնար էր ձեզ բուսեալ անկեղծ խնամոյ ուսանել զառաջս նորա։ Վասնզի ծանուցի ձեզ յառաջագոյն զոր ինչ անցանելոցն էր ի խաղալ անդ զառաջինին փորձողին ի դժոխոյ անտի՝ անցեալ ընդ անդունդս։ Ծանուցի ձեզ զհանդերձեալ զօրութիւն նորա, և զյաջողութիւն ի չարանենդ հանդիսի անդ. և զանկումն մարդոյն ի պատրանս յերեսաց հրապու-

բանաց նորա՝ ընծայեալ հաւատս զրախօս բանիւ նորա հակառակ Սատանին ։ Այլ ոչ բռնադատեալ ՚ի կործանումն յերեսաց իմումն վճռոյ , և կամ փոքու ինն բռնազբօսեալ ազատութեան կամայ նորա՝ զոր Թողն ինքնիշխան իւրումն յօժարութեան ։ Սակայն և այնպէս անկաւ նա ։ Սդ՝ զինչ և ևս ինայ նմին , բայց միայն դատակնիք մնահան՝ զոր սպառնացայ նմա ՚ի նմին իսկ աւուր ՚ի սակս յանցանացն նորա ։ Զոր ցարդ համարի նա անտի ինչ և վայրապար , փոխանակ զի տակաւին ոչ ձգեցաւ ՚ի վերայ նորա հարուածն յանկարծահաս՝ յորմէ երկնչէր նա ։ Սակայն մինչդեռ աւուր կայ՝ գոցէ նա միայն զյապաղումն , և ոչ զպատուհասն յերեսաց նորա ։ Սդարութիւնն իմ ևս դարձցի յետս արհամարհել , որպէս դարձաւ բարութիւնն իմ ։ Սյլ զո՞ առաքեցից փոխանակ իմ ՚ի դատել զնոսա , զո՞ ոք բայ ՚ի քէն՝ դահակիւց իմ Սրդի ։ Այտու քեզ զամենայն դատաստան յերկինս և յերկրի և ՚ի սանդարամետս ։ Զառաքել իմում զքեզ՝ որ ես բարեկամ մարդոյն , միջնորդ նորա , փրկանք և փրկիչ՝ կարգեալ ինքնակամ յօժարութեամբ , և սահմանեալ առ ՚ի լինել մարդ , ՚ի դատել զմարդն յանցուցեալ՝ քաջ երևեսցի հաճութիւն կամայ իմոյ ՚ի միաբանել զողորմութիւնն իմ ընդ արդարութեան ։

Զայսօրինակ խօսեցեալ Տէրն՝ պայծառ փայլեցոյց զփառս իւր յաջակողմն կոյս . և Սստուածութիւնն Ձառագայթեալ ցուցաւ ՚ի վերայ Սրդոյն ։ Այլ նա լուսափայլեալ արեգակնաբար՝ ողջ ջնջն եղոյց յինքեան բովանդակապէս և ըստ աստուածային էութեանն զՀայր իւր . և սքանչելի

ինն քաղցրութեամբ արար նմա պատասխանի՝ ո-
րինակ զայս ։

Ո՛վ Հայր յաւիտենական, քեզ ահակ է տալ
զմեզ, և լինել կատարել զկամս քո յերկինս և
յերկրի, զի հաճութեամբ հանգիցես միշտ յմեզ
միտ քո սիրելի [1] ։ Վասն ես յերկիր ի դառել
զյանցաւորս. բայց քանզ գիտես դու՝ զի զնարդ և
դատեսին նոքա, խստագոյն ևս դատաստան հան-
դերձեալ է անկանիլ յիմ վերայ յիւրումն ժամու-
նակի ։ Օ՛ի կամաւ յանձն առի զայդ, և յանդի-
մանն քեզ խոստացայ. և այժմ ևս ոչ զղջանամ
ընդ այն, այլ վերստին ընդունիմ ՚ինուազութիւն
պատուհասի նոցա՝ որ եդեալն է ՚ի վերայ իմ։ Ա-
կայն՝ այնպիսի ինն օրինակաւ խառնեցից զարդա-
րութիւն ընդ ողորմութեան, զի երկոքին ևս պայ-
ծառ փայլեսցին. և քո հաձեալ՝ հաշտեսցիս ընդ
յանցաւորդ ։ Ա՛ւ չէն լինչ պէտք լինձ շքեղ հան-
դիսի, և պաշտօնէից բազմութեան. զի ոչ ոք հան-
դերձեալ է առաջիկայ լինել դատաստանի յան-
ցաւորացդ՝ բաց յերկոցունց ՚ի նոցանէ։ Գրիգորդն [2]
ոչ գոլով յանդիման՝ ինքնին իսկ դատապարտեալ
է, զի փախստեամբ գտաւ յանցաւոր, և ապստամբ
յօրինացդ [3] ։ Իսկ ՚ի վերայ օձին ոչ անկանին պար-
տիք [4] ։

Օ՛ այս ասացեալ նորա՝ յարեաւ ՚ի Ձառաղայ-
թարձակ աթոռոյ անտի փառացն՝ որ էր ընդ աջ
մէ Հօր ։ Ա՛ւ պաշտօնեայք նորա՝ Ո՛թոռք, Օ՛ո-
րութիւնք, Իշխանութիւնք և Տէրութիւնք, յու-
զարկաւորք եղեն նմին մինչև ՚ի դուռն երկնից՝ որ
հայի Ա՛դեմ, և ՚ի սահմանս նորա ։ Իսկ նա յա-
կան թօթափել էջ ՚ի խոնարհ. զի անհնար է ժա-

մանակի՝ Թէպէտև Թևազգեցիկ գոտանի յարագա-
գոյն վայրկեանս, առնուլ զչափ երագութեան Աս-
տուածոյ [5]: Այսմ վայրի խոնարհեալ էր արե-
գական ի միջակէն երկնից յարևմուտս կայս: Աս-
քաղցրաշունչ սիւգք հեղիկ զարթուցեալ ի զովա-
յուցանել զերկիր ի բաղխիւն Թևոց իւրեանց՝ կա-
րապետ լինէին ցանկալի երեկոյին, այն ինչ քաղց-
րադութ դատաւորն և միջնորդն միանգամայն՝ յա-
ւետ իմն զովացեալ ի սրտմտութենէ իւրմէ՝ եկն
առ ի տալ զվճիռ յանցանաց մարդոյն: Ի բաղխ-
մանէ անտի քաղցրասիւգ հողմոյն լուանոնքա զձայն
գգնալոյ Աստուծոյ ի պարտիզն անդ ընդ երեկս:
Աւր երկոքին ևս Թագուցին զանձինս իւրեանց ի
միջ տնկախիտ ծառոց յերեսաց նորա: Ինչև յա-
ռաջ մատուցեալ Աստուծոյ կոչեաց զԱդամ մե-
ծաբարբառ օրինակ գայս:

Ո՞ւր ես Ադամ՝ որ յայլնուագ տեսեալ գիս ի
հեռաստանէ՝ ելանէիր խնդութեամբ ընդ առաջ
իմում գալստեան: Ընդէ՞ր ոչ երևիս. Թերևս ոչ
համձեալ ընդ դրախտդ՝ մեկուսացեալ կաս. զի
սակաւ մի յառաջ գտանէի գքեզ անխնդիր, որ-
պէս արժանն էր: Կամ Թերևս ես ինքնին ոչ
երևիմ քեզ յայտնապէս: Կամ փոփոխութիւն
իմն հեռացուցանէ գքեզ յինէն: Աւ կամ պա-
տահումն ինչ կալեալ ունի: Ասակայն և այնպէս
ևս արտաքս:

Աւ նա արտաքս. և Աւայ ընդ նմա, բայց կա-
րի իմն ակամայ՝ Թէպէտև նա ինքն էր առաջինն
ի յանցանս: Աւրկոցունչ ևս երեսք այլափոխեալ
էին և խաթարեալ: Ալ զայր տեսանել ի նոսա
զսէր առ Աստուած, կամ առ միմեանս. այլ միայն

*զյանցաւորութիւն, զամօթ, զխռովութիւն, զանյուսութիւն, զսրտմտութիւն, զկամակորութիւն, զատելութիւն և զդաւաճանութիւն։ Այլ ապա զինի բազմադիմի տալակուսանաց՝ արար Աստուած պատասխանի կարճ՝ի կարճոյ՝ օրինակ զայս։*

*Ասայ զձայն քո՝ի պարտիզին, և զի մերկ էի, երկուցեալ յերեսաց քոց՝ թագեայ։ Որում ետ պատասխանի բարեգութ Աստուածն առանց ինչ կշտամբանաց։*

*Ասաւր դու բազում անգամ զձայնն իմ, և ոչ երկեար, այլ ուրախ եղեր հանապազ. իսկ այժմ զինքդ այնչափ ահագին ցուցաւ նա քեզ։ Այլ ո՞ պատմեաց, թէ մերկ ես։ Միթէ կերար արդեօք՝ի ծառոյն՝ յորմէ պատուիրեցի քեզ չուտել։*

*Ասակ Աստուած յանհնարինս մեռեալ՝ արար նմա զայս պատասխանի։ Ովվ երկինք՝ զինքդ պաշարեալ կամ այսօր՝ի չարաչար անձկութեան առաջի իմում պատաւորի։ Պարտ է ինձ՝ կամ զանձամբ արկանել զամենայն զյանցանս, և կամ ըզկենակիցն իմ՝ որ է միւս ևս ես, պատժապարտ ցուցանել։ Այլ քանզի հաւատարիմ գտաւ նա առ իս, արժան է ինձ ծածկել զյանցանս նորա. և ոչ առակել զնա իմովս ամբաստանութեամբ։ Այս կայն հարկն անհրաժեշտ, ընդ նմին և բռնադատութեանն անողոքելի՝ տիպեն զնա հրատարակել զայն. գուցէ յանցանքն և պատիժն միանգամայն՝ որ է անբերելի, անկցին՝ի վերայ զլխոյ իմոյ։ Այլ թէպէտ մնրթ լսէ ինձ լռել, սակայն և այնպէս դու ինքնին կարող ես յայտնել զըր եմն թագուցեալ։ Ըրդ՝ կինս զոր ստեղծեր օգնական ինձ, և ետուր իբրև զպարգև քո կատարեալ՝ այնչափ*

ընտիր , սիրելի և չնաչխարհիկ , մինչև ոչ խիթալ
լինէ ընդ չարութիւն լինչ ՚ի ձեռաց նորա , և զա-
մենայն գործս նորա համարել արդարացի , նա ետ
լինէ ՚ի ծառայ անտի , և կերայ ։

Ապրում ետ պատասխանի տեսիլն տիրական ։
Այլեթէ էր նա Աստուածդ , զի չառաջ քան զգ-
ձայն նորա՝ հնազանդեցար նմին ։ Այլ մի՛թէ ստեղ
ծաւ նա գլուխ քո գերագոյն , կամ գի՛թ զուգա-
հաւասար քեզ՝ զի ետուր ՚ի ձեռս նորա զիշխանու-
թիւն քո այրական , և զտեղին՝ յորում կարգեաց
զքեզ Աստուած գեր ՚ի վերոյ քան զնա ։ Որ և
յօրինեաց ՚ի քէն , և ՚ի սակս քո . և պարծանք ար-
ժանեաց քոյ կալի ինն գերազանցեալ գտանին
զնորայոյն ։ Այր նա արդարև հնարհաղարդ և գե-
զեցկատեսիլ՝ առ ՚ի ձգել զսէր քո միայն , այլ ոչ
զհնազանդութիւն ։ Այս պարզևք նորա ընտիր և
երևելին ընդ քոյով իշխանութեամբ , այլ կարի ինն
տգեղ յիշխանութեան անդ՝ որ է բաժին քո , եթէ
քանզ ծանուցեալ էր քո զանձնդ ։

Որպես ասացեալ նորա՝ ուղղեաց համառօտա-
գոյնս զբան իւր առ Աւետ ։ Նա ոմն կէին , զի՞նչ է՝
զոր արարեր ։

Ոսկ Աւետ կացեալ առաջի գատաւորի իւրոյ
ահռելին և ամենաստարտ , այլ ոչ յանդուգն
կամ շաղակրատ՝ անդէն խոստովան եղև զյան-
ցանս իւր , և արար նմա զայս պատասխանի ։ ( )Ձն
խաբեաց զիս , և կերայ ։

Որ լուեալ Տէառն Աստուծոյ՝ մնաեաւ փու-
թանակի ՚ի գատաստան ընդ օձին , թէպէտև ան-
բան էր նա , և չէր ձեռնհաս ըմբռել զյանցանս իւր
՚ի վերայ նորա՝ որ էառ զնա գործել ՚ի ձեռին իւ-

*բուսին չարութեան, և այնպէս խոտորեցոյց զնա ՚ի նպատակէ անտի արարչութեանն. վասն որոյ և ի բաւամբք անիծաւ զինի իբրև ապականեալ լինել բուսին բնութեան: Կիտեալ ինչ առաւել քան զայս՝ ոչ էր կարևոր մարդոյն (այն զի և ոչ իսկ գիտաց), և ոչ փոփոխեր զյանցանս նորա: Վասն և այնպէս ասաւածն ՚ի վերայ Վատանայի՝ որ աւազ ջնին էր ՚ի յանցանս, զգատակնիք իւր. Թէպէտև խորհրդական բանիւք, որպէս և զևարդ ՚ի դէպ համարեցաւ յայնժամ: Այս ետ անիծիցն անկանել ՚ի վերայ օձին՝ օրինակ զայս:*

*Վոխանակ զի արարեր դու զայդ, անիծեալ լիս ջիր ՚ի մէջ գազանաց երկրի: ՚Ի վերայ որովայնի քո գնասցես սողալով, և զհող կերիցես զամենայն աւուրս կենաց քոց: Այդից զքէնութիւն ՚ի մէջ քո և կնոջդ, ՚ի մէջ զաւակի քո և նորայն: Ո՞ւ զաւակ նորա փշրեսցէ զգլուխ քո, և դու զգարշապարս նորա:*

*Այսպէս բարբառեցաւ պատգամն աստուածային: Այր և Ճչգրտեալ գտաւ յայնժամ, յորժամ Յիսուս որդին Աստուծոյ երկրորդն Ադամ՝ եւ տես զՎատանայ զնշման օդոյս անկեալ յերկինից իբրև զփայլակն: Այս ապա յարուցեալ ՚ի գերեզմանէն՝ մերկեաց զնշանութիւնս և զպետութիւնս, յայտ յանդիման խայտառակեալ զնոսա: Այս պայծառափայլ համբարձմամբ անցոյց զգերութիւնն ընդ օդն՝ որ էր Թագաւորութիւն Վատանայի, բռնակալեալ ՚ի նմանէ ընդ այնչափ ժամանակս: Ո՞ր և զինի նա ինքն՝ որ ծանոյց կամ խաւ զաւրաչար խորտակումն նորա, արկանելոց էր ընդ ոտիւք մերովք: Այս ապա սովին օրինա-*

կաւ շրջեաց նա անդրէն զդատաւճիռք իւր առ կինն։
Խաղաղացուցանելով բազմացուցից զցաւս երկանց քոց, և արտաքսեամբ ծնցիս որդիս։ Ընդ ա-
նդրեաւ դարձիս կամաց առնդ, և նա տիրեսցէ քեզ։

Ադամայ ասա և՝ վասն Ադամայ զդատաւճիռք իւր՝ տալոյն բանիւ։ Վասնզի ունկն ետուր կնոջ քո, և կերար՝ ի ծառոյ անտի՝ յորմէ պա-
տուիրեցի քեզ ոչ ուտել, անիծեալ լիցի երկիր՝ ի սակս քո. արտաքսեամբ կերիցես՝ ի նմանէ զա-
ւուրն կենացդ քոց. փուշ և տատասկ բու-
սուցէ քեզ. և կերիցես զբանջար վայրի։ Իբր-
տամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչև դարձցիս՝ ի հող։ Զի առեալ եղեր՝ ի հողոյ, ծա-
նիր զծնունդ քո. և զի հող եիր, դարձցիս ան-
դրէն՝ ի հող։

Յայսմիկ դատաստանի զմարդն նա, որ առաքեալ էր դատաւոր և փրկիչ նորա միանգամայն. և՝ ի բաց արար՝ ի նմանէ զչանկարծահաս հարուածն մահու՝ որ սպառնացեալ էր նմա՝ ի նմին աւուր։ Եւ ապա զԹագեաւ՝ ի նոսա՝ զի տեսանէր զնոսա կալ առաջի իւր անծածկելի յերեսաց օգոյն, որ յայնժամ հանդերձեալ էր անկանիլ ընդ փոփո-
խութեամբ, ոչ անարժան համարեցաւ սկիզբն առ-
նել՝ ի ժամէն յայնմանէ յուսանել յանձին զծա-
ւայն կերպարանս՝ որպէս յորժամ լուաց զկնի զոտս աշակերտաց իւրոց։ Այսպէս և այժմ իբրև հայր որդւոց՝ ճանկեաց զմերկութիւն նոցա մոր-
թովք անասնոյն՝ որք կամ զերծեալ էին, և կամ իբրև զօձ նորոգեալ զդիւտս մանկութեան իւ-
րեանց։ Ապա՝ ոչ միայն զարտաքին մերկու-

թիւն նոցա ծածկեաց մոլորմունք անաստուց, այլև յաւէտ զներքին ամենայնից մերկութիւն նոցա յե-
րեսաց Տ֊որ իւրոյ պատմուճանաւն արդարու-
թեան։ Զի որ և զարձաւ անդրէն յարագագոյն
եղև. և վերառեալ եղև ՚ի փառս յերանաւէտ ծով
նորա՝ որպէս էրն ՚ի յաւիտենից։ Զի թէպէտ ա-
մենագէտ էր նա, սակայն ՚ի հաշտիլ նորա՝ պատ-
մեաց նմա զամենայն անցս ընդ մարդոյն. և յա-
ւել ՚ի նոյն զվիճնորդութիւն իւր գորովագութ։

Յայնմ ժամանակի՝ մինչև էր յանցուցեալ մար-
դոյն, և անկեալ ընդ դատաստանաւ, Ո՛ղք և
Ո՛ահ նստէին առընթեր դրան դժոխոց՝ որ յայն
ժամ բացեալ կայր լայնարձակ, և զգայուէր հե-
ռագոյնս զբոց մահաշունչ ՚ի Ա֊իհ [6] անդր՝ զվնիկ
անցանելոյ ընդ այն թշնամւոյն։ Զոր և բացեալ
էր Ո՛ղքայ. և նա ինքն սկսաւ արդ խօսել ընդ
Ո՛ահու՝ օրինակ զայս։

Ո՛վ որդի՝ ընդէր ե մեզ կալ աստանօր դա-
տարկ, և հայել ՚ի դէմս միմեանց, մինչդեռ հայր
մեր պանծալի յառաջ ընթացեալ յայլ աշխարհն՝
դուն գործէ պատրաստել մեզ սիրելի որդւոցս տե-
ղի բարերջանիկ։ Զի պատճառ յամենայնից նորա
ցայս վայր՝ ո՛չ այլ ինչ թուի ինձ, բայց միայն յա-
ջողութիւնն՝ զոր եգիտ։ Զի եթէ չէր յաջո-
ղեալ նորա, վաղուց ևս դառնայր արդեօք՝ վա-
նեալ յետս ամօթոյ թեամբ յերեսաց վրիժառ-
ուաց իւրոց։ Զի չէ հնար այլուստ տեղւոյ՝ բաց ՚ի
դժոխոցս, լինել քաջայարմար տեղի պատժոյ նո-
ցա, կամ նոցունն վրիժուց։ Զի թուիմ զգալ յան-
ձին տարօրինակ զօրութիւն՝ որ բուսուցանէ ինձ
թևս, և տայ լայնածաւալ իշխանութիւն յայն

կոյս անդնդոցս ։ Ա՛յ կիտեմ, արդեօք ազգեցու-
թիւն իցէ՝ որ մղէն զիս զայսօրինակ, եթէ զօրու-
թիւն իմն ընդաբոյս . որում մ՛րթ է միաւորել
ընդ միմեանս զհամանմանիսն զաղտնի սիրով, և
զանխոտել ձանապարհաւ՝ ի կարի իմն հեռաւորու-
թեան անդ ։ Ա՛տուէրդ իմ անբաժան՝ արժան է
քեզ լինել ընդ իս անդանօր . զի չ՛իք ինչ զօրու-
թիւն՝ որում հնար իցէ անջատել զմեզ ի մեղայ·
Այլ գուցէ դժուարութիւն ձանապարհին խա-
փանեալ իցէ ղարձ հօր մերոյ անդրէն ընդ ան-
դունդ անանց և անկոխ. վասն որոյ տացուք
զանձինս դիմագրաւ ի փորձ ինչ՝ որ չէ կարի իմն
օտար ի զօրութենէս մերմէ ։ Ա՛րկցուք ի վերայ
համատարած անդնդոցս ձանապարհ ի դժոխոց
աստի յաշխարհն նորաստեղծ՝ ուրանօր զօրացեալ
կայ արդ Սատանայ ։ Ար և լեցի պանծալի յիշա-
տակ մերոց արդեանց, ընդ նմին և ցանկալի ձա-
նապարհ անդնդային զօրաց՝ ի դիւրացուցանել
զանցս նոցա, այն ինչ կամք իցէն նոցա փոխանա-
կել զտեղի իւրեանց կամ զգնացս՝ որպէս և զիարդ
առաջնորդեսցէ նոցա վիճակ նոցին ։ Ա՛յս անմ՛րթ
է ինձ կորուսանել զշաւիղդ, զի ձգեալ կայ առա-
ջի իմ նովին ազգեցութեամբ, և նորոգ շարժմամբ։

Ա՛րում անդէն վաղվաղակի արար պատասխանի
ստուերն ցամաքեալ՝ օրինակ զայս ։ Ա՛րթ ուրա-
նօր և առաջնորդեսցէ քեզ ձակատագիրն, կամ
ցանկութիւն անձինդ ։ Ա՛ակ ես ոչ անազանեցայց
գալ զկնի քո, և ոչ խոտորեցայց զձանապարհին
ի հետոց քոց ։ Ա՛յլ զանձն առնում ես քաջ քաջ
զհոտ դիոցն՝ զանհամար բազմութեան որոց, և
զձաշակ մահու՝ յորոց կենդանին են անդանօր ։ Ա՛

պատուց լեռնեալ՝ի շահատակութեանդ, այլ մատուցիչ քեզ գիարևոր ձեռնտուութիւն։

Ո՞պա ասացեալ՝ հոտոտեցաւ բերկրանօք զմանհաւիթ հոտն փոխխութեան եղելոյ՝ի վերայ երկրի։ Ո՞րօրինակ յորժամ երամք գիշատիչ թռչնոց՝ թեպետև՝ի բացարձակ հեռաւորութեան անդ, յաւուր պատերազմի թռուցեալ հասանեն՝ի դաշտն՝ ուրանօր հարեալ կայ բանակ զօրացն, ձգեալ՝ի հոտոյ շաղղայն կենդանեաց՝ որք կարգեալ էն՝ի մահ յաւուրն երկրորդի յարիւնախանձ մարտի, այնպէս հոտոտեցաւ սատուերն խոժոռադէմ, ամբարձեալ՝ի վեր գերկայնաձիգ ռնգունս իւր յօդն անլոյս. որ և էր քաջ հոտառու յայնչափ հեռաստանէ իւրումն որոյ։ Ո՞ւ ապա երկոքեան ևս խոյացան ընդ այլևայլ ձանապարհ՝ի գրանց անտի գժոխոյ՝ի լայնածաւալ և յամայաբնակ անիւխանութիւնն գիձին և խաւարչային Ավ։ Ո՞ւ զօրութեամբ իւրեանց (զի էր մեծ յոյժ) ընդոստուցեալ գերեսաք ջրոյն՝ զոր գտին հոծ և աղմախիտ, ՚ի վեր և ՚ի խանարշ՝ իբրև ՚ի մրրկալից ծովու, կուտակեցին զայն ՚ի միասին. և այնպէս խաւիեալ աստի և անտի՝ եռուն՝ի բերան դժոխոց։ Ո՞րօրինակ կրկին բևեռական հողմք շրջեալ հակառակ միմեանց՝ի վերայ Կրոնեան [7] ածեղ ծովու՝ ձգեն՝ի միասին՝ի Կաթայեան [8] մեծագանձ եղերս գլերինս սառնամանեաց, որք կալեալ ունին զձանապարհն կարծեցեալ յայն կոյս Պետսորայ [9]։ Ո՞պա եհար Ա՞հն քարացուցիչ պատաղանաւն իւրով՝ զոյգես իբր երեքժանեօք ըզսրտագին և զցամաքեալ Թանձրութիւն յատակին, և քաջ սնդայոյց զայն իբրև զՎեղս [10]

յոդնատատան երբեմն ։ Եւ զայլ մասունս նորա անշարժ կապեաց տեսիլ դիմաց նորա Յովհաննէսի[11] ամբուխեամբ ։ Եւ ապա երկոքեան՝ ի միասին մածուցին՝ ի կուսէր և ի նաւթ զծովային լայնարձակ իբրև զգուշն սանդարամետական և անդինդախոր ցաւմատս անդ դժոխոց ։ Եւ այնպէս կանգնեցին՝ ի վերայ փրփրալից անդնդոց զահպին շինուածն բարձրակամար կամ զկամուրջն՝ որ էր ահեղատեսիլ յերկայնութեան անդ ։ Եւ կապեցին զայն անշարժ ընդ պարիսպն աշխարհին՝ որ էր յայնժամանպատասպարան և պատժապարտ մահու ։ Եւ սովին օրինակաւ բացին անդուստ՝ ի սանդարամետս զանցս լայնարձակ, կուռ, դիւրաւ դնալի և աներկեան ։ Օ այսօրինակ՝ եթէ մարթի իցէ համեմատել զմեծամեծս ընդ փոքունս, կաւեցեալ Վահեբքսեայ[12] արկանել ընդ լծով ծառայութեան զազատութիւնն Յունաստանի՝ էին՝ ի Շուշայ[13] ի Աեճմնեան[14] հայակապ իւրոց ազբունեաց՝ ի ծով անդը. և ձգեալ կամուրջ՝ ի վերայ Հելլեսպոնտեայ՝[15] կապեաց զԱրտաւազդ ընդ Աքեմ. և դան հետ ուժգին զանատատութիւն առեաց նորա ։ Եւ դարձ՝ հանին նորա՝ ի դլուխ Ճարտար արուեստիս զշինութիւն կամրջին՝ որ էր շարադասութիւն քարաժայռեայ կախելոց՝ ի վերայ բազմատանջ անդնդոց ։ Եւ յօրինեցին զայն զհետ դնացեալ շաւղացն Աատանայի՝ ի նոյն տեղի՝ ուր անուր զառաջինն խոյացոյց նա զթռչուն իւր, և էլ անվատանգ յերեսաց Աչին՝ ի ցամաք անդը, ՝ի հովանի ասեմ երեսս բոլորակաձև աշխարհիս ։ Օ որ և ուժգին պնդեցին յադամանդեայ սեպս և՝ ի շղթայս. և այնպէս կացուցին մշտատև և անբակ

տելի ։ Որով ’ի սակաւ ժամանակի եղեւն ընդ ա-
ռաջ միմեանց սահմանք հրեղէն երկնից , և այսր
աշխարհի . և դժոխք կարգեցան ընդ մէջ՝ ձգեալ
յերկայնութիւն ընդ ձախմէ ։ Այս այնպէս երբեակ
այլեայլ ձանապարհք եղեալ կային առաջի որոց
գնային յերեսին սահմանադ ։ Այս վինչդեռ կա-
ւեալ էին նոքա զձանապարհ իւրեանց ընդ երկիր՝
դէմ եղեալ ’ի դրախտ անդր , և ահա եհաս առ
նոսա Սատանայ յանձանութիւն ’ի նմանութիւն լու-
սափայլ հրեշտակի՝ ուղղեալ զՕ էնիթ [16] իւր ընդ
մէջ Աղեղնաւորին և կարձի յելանել անդ արե-
գական ’ի խոյ ։ Սակայն անդէն և անդ ծանեան
սիրելի որդիքն գՀայր իւրեանց , թէպէտև յայլա-
կերպս էր ։ Որ և զկնի պատրելոյ զՀայ սոցա
կեալ անկաւ զանխլաբար յանտառն առ երի ։ Այս
ապա փոխեալ զկերպարանն առ’ի կարող լինելոյ ’ի
գնին կալ եղից իրացն՝ եաես զՀայ , զի յանգետս
թէլադիր լինէր իւրումն չարութեան առ այր իւր ։
Այսես և զամօթ նոցա զկնի յանցանացդ . և զի
վայրապար ’ի խնդիր լինէին ծածկութեի ։ Աչ ’ի
տեսանել անդ զկնջումն Որդւոյն Աստուծոյ ’ի դա-
տել գնոսա, զարհուրեալ յերեսաց նորա՝ խոյս ետ
’ի դրախտէ անտի ։ Օչ ոչ այլով օրինակաւ ակն
ունէր զերծանիլ ’ի ձեռաց նորա, բայց միայն փա-
խստեամբ ։ Վանզի պատժապարտ գոլով՝ երկնչէր
’ի պատուհասէն , զոր մաթը էր սրտմտութեան նո-
ցա ածել արագ արագ ’ի վերայ նորա ։ Սակայն և
այնպէս վերստին դարձաւ ’ի գիշերի ։ Այս ուշ ե-
դեալ ուրանօր ամուքն աշխարելի ցաւագինս խո-
սէին ընդ միմեանս , և նստեալ լային դառն ար-
տասուօք՝ ’ի միտ հաւ ’ի բանից նոցա զգատակնիք

իւր ։ Կայց դիտացեալ զայն՝ թէ ոչ առժամայն հասանելոց է ի վերայ իւր, այլ պահեալ կայ ի հանդերձեալն, լի խնդութեամբ և զուարթալար աւետեաց դառնայր յայնժամ ի դժոխս ։ Որ և առ ընթամբք Վ Հին ի ստորոտս անդ սքանչելարուեստ կամրջին եգիտ անակնկալ զսիրելի ծնունդս իւր՝ որք եղեալ էին նմա ընդ առաջ ։ Կարի մեծ եղև խնդութիւն նոցա ի գտանել անդ զմիմեանս. այլ ցնծութիւնն Սատանայի յաւէտ լինի առաւելեալ յուցաւ ընդ տեսիլ հրաշալի կամրջին ։ Դարձաց նա ընդերկար ի զարմացման անդ. այլ զկնի Վեղքն՝ բազմավհուկ դուստր նորա, ելոյծ զբուխն իւր՝ օրինակ զայս ։

Վա՛ են ո՛ հայր մեծամեծ արարքս և յաղթութիւնքս՝ ընդ որս ակնարկես իբրև ոչ ընդ քոյս ։ Վա՛ւ ես գտակ նոցին, և նախկին ձարտարապետ ։ Օ՛ի ազգեցութիւն ընկալեալ ի սրտի իմում՝ որ միշտ շարժի ընդ քոյումդ գաղտնի միաբանութեամբ և ընդաբոյս յօդակապութեամբ, ընդ յաջողութիւն քո յերկրի՝ զոր և արդ դէմք քո քաջայայտ ցուցանեն, անդէն և անդ ծանեայ՝ թէ պէտև հեռի գոլով ի քէն անջրպետութեամբ աչխարհաց, թէ արժան էր լինել գալ զկնի քո ընդ որդւոյդ՝ զոր տեսանես աւադիկ ։ Վանզի հարկն ձակատագրի սովին օրինակաւ միաբանեաց զմեզ ։ Այլ և հնար է դժոխոց ունել զմեզ ընդերկար ի սահմանի իւրեանց, և ոչ խաւարչտին և անանց անդնդոց արգելուլ զմեզ ի հետոց քումդ լուսաւոր շաւղաց ։ Վա՛ւ տարար ի գլուխ զազատութիւն մեր՝ որ ցարդ կապեալ կայր ընդ դրունս դժոխոց ։ Վա՛ւ զօրացուցեր զմեզ յայնչափ հեռա

տրութեան, և եւտուր մեզ արկանել քաջութեամբ
ի վերայ խաւարային անդնդոցս զայս կամուրջ
Ճարտարարուեստ։ Արդ՝ քո է այսուհետեւ սիւե-
ղերքս ամենայն։ Օ՜ որ ոչ յօրինեցեր ձեռք քո, զօ-
րութիւն քո ստացաւ. և զոր պատերազմին կորոյս,
խնամատարութիւն քո եգիտ կալուլ առաւելութեամբ։
Այսմանօր կալցես զթագաւորութիւն միահեծան
աերութեան՝ զոր անհնար եղև քեզ ունել յեր-
կինս։ Այսցէ տակաւին յաղթականն անդանօր՝
որպէս որոշեաց պատերազմին. այլ տեղի տուեալ
ի նորաստեղծ աշխարհէս՝ որ օտարացեալն է ի
նմանէ ըստ նորուն իսկ դատակնքոյ։ Այս կամ՝
եթէ ձեռնհաս իցէ, մնցէ արդ ի պայքար ընդ
քեզ՝ որ ես յաւէտ ինն ահրնակից աթոռոյ նորա։

Որում իշխանն խաւարի ետ խնդագինս զայս
պատասխանի։ Վաւաստ իմ սխրալե, և դուն որդի
իմ և Թոռն [17] քաջ յոյցիք ի պանծալի հանդիսի
գլխնել ձեր ծնունդ Սատանայի (զի խնդամ ես
ընդ այդ անուն՝ որ է հակառակորդ ամենակալ
Աքբային երկնից). վասն որոյ և արժանի էք
յինէն Ճոխաբար փոխարինաց քան զամենայն ինք-
նակալութիւնս դժոխոց։ Օ՜ի այնպէս քաջայեալ
դուցես առ դրունս երկնից՝ եւ ինք շքեղասպանծ հան-
դիսիս ընդ առաջ իմձեան յաղթանակի. և կար-
գեցիք ի մի թագաւորութիւն, և ի մի երկիր դիւ-
րագնալի՝ զդժոխս և զաշխարհ։ Արդ՝ մինչդեռ
ես իջանեմ ընդ խաւար առ դաշնակից զօրութիւնս
իմ՝ անցեալ հեշտեաւ ընդ Ճանապարհդ ձեր, առ
ի տալնոցա զլուր յաղթութեանցս, և խնդակից
լինել ընդ նոսա՝ իջէք և դուք ի դրախտ անդր,
անցեալ անխոտոր ընդ Ճանապարհդ ի միջ մըր-

բակաց՝ որք ձեր են առհասարակ ։ Այսչք անդա-
նօր յերջանկաւետ թագաւորութեանդ · և ան-
դաստ կալցուք իշխանութիւն ի վերայ օդոյ և
երկրի, և յաւետ մարդոյն՝ որ կարգեալն է տէր
և իշխան ամենայնի ։ Այ արեցէք նախ ի գերու-
թիւն, և ապա սպանէք զնա ։ Այհա առաքեմ զձեզ
փոխանակ իմ · և տամ ձեզ իշխանութիւն ի վե-
րայ ամենայն երկրի · և զայս անղուգական իշխա-
նութիւն ունիմ ես յանձնէ ։ Ո՞ր և ստացայ ի-
մովս Ձգամբ ի վերայ նորաստեղծ աշխարհին՝ որ
գտաւ մեղապարտ ։ Այս կալեալ կայ նա զիարա-
նեալ զօրութենէ ձերմէ ընդ իմումն ։ Այթէ զօ-
բանայք դուք, ահա ամենայն ինչ յաջողեալ է ի
սակս գժոխոց ։ Հնազա երթայք, և քաջացարուք ։

Ո՞այս ասացեալ՝ արձակեաց զնոսա ։ Այս նոքա
կալան փութանակի զՀանապարհ իւրեանց ընդ
բազմախիտ համաստեղութիւնս՝ սիրեալ ի նոսա
զթոյնս իւրեանց ։ Այ ան որոյ աստեղքն Հարեալ
ի նոցանէ երևէին այլագունեալ · և մոլորակք Նա-
րեալ ի մոլորակաց՝ գիտացին յայնժամ յանձինս
զտիրապետս խաւարումն ։ Ասկ Այատանայ ընդ-
սալայատակ Հանապարհնոցա՝ի խոնարհ՝ի դուռնն
գժոխոց ։ Յաղթահարեալ Այ հին յերեսաց նորա՝
տեղւն ետ բարձրաձայն աղաղակաւ յայս կոյս և
յայն կոյս · և ահեղագոչ ալեօքն վազեաց զսահ-
մանօքն իւրովք՝ որք առ ոչինչ գրեին զսրտմտու-
թիւն նորա ։ Այանց Այատանայ ընդ դուռնն՝ որ
բացեալ կայր լայնարձակ և առանց զգուշութեան։
Այր եգիտ անդ զամենայն ինչ կարգեալ յամայու-
թիւն · զի Թողեալ պահապանացն զպահպանու-
թիւն իւրեանց՝ խաղացեալ էին յաշխարհն վե-

րին։ Իսկ մնացեալքն տեղի տուեալ առհասարակ
ի ներքսագոյն կողմն՝ կային առ պարսպօքն Պան
դեմոնի՝ որ է քաղաք և աթոռ պանծալի Լ֊ր֊ու֊
սեղէն (յայս անուն կոչեր Սատանայ ի նմանու֊
թենէ անտի պայծառափայլ աստեղն)։ Եւ ու֊
նէին անդանօր լեգէոնքն զպահպանութիւն իւ֊
րեանց, մինչդեռ մեծամեծ աւազանին նստեալ
կայր ի խորհուրդ՝ ըմբռնեալ ի տարակուսանս
ընդ այնչափ յապաղումն դարձի ինքնակալին իւ֊
րեանց։ Ո՞յս պատուէր ունէին նոքա ի նմանէ,
և պատկառ կային։ Ո՞րօրինակ յորժամ Ա֊
թարն [18] տեղի տայ Լերեսայ Մուսեան [19] Թըշ֊
նամոյն ի ձիւնապատ դաշտավայրս առընթեր
Լ֊տարականի [20]. և կամ Խակտրիականն [21] Սուիլ [22]
Թողեալ լքանէ Լերեսայ եղջերայ Հադարեանն [23]
Լ֊ոնանի [24] զամենայն ինչ յամայութեան յայնկոյս
աերոլեթեան Լ֊լադուլայ՝ [25] ի փախչել անդ իւ֊
րում ի Վաւրէժ [26] կամ ի Վասքին [27], նոյնպէս
Թշնամիքս այսօրիկ հալածեալ յառաջագոյն Լե֊
րեսայն Լ֊տուճոյ՝ Թողեալ էին անայլ զվերջին
սահմանս դժոխոց փարախօք բազմօք, և ամ֊
փեալ զնաւարային խնամս պահպանութեան իւ֊
րեանց զմայրաքաղաքսն։ Եւ ահն կալեալ մնային
ժամ ըստ ժամէ անդրէն դարձի քաջազօր շահա֊
տակի իւրեանց ի խնդրելոյ զհեռաւոր աշխարհս։
Լ֊անց նա ընդ մէջ նոցա յանծանօթս ի սոսկա֊
կան տեսիլ ստորին զննուորութեան։ Եւ ի դրա֊
նէ անտի Պղուտոնեան [28] սրահի եւ անտեսա֊
բար յաթոռ իւր բարձրագահ, որոյ ամպհովանին
սփռեալ մեծագանձ անկուածովք ի շուք արքայա֊
կան՝ ժամանէր ի ձեղունն։ Խաղմեցաւ անդ առ

վայը մի, և անտես յուսեքէ հայեցաւ շուրջանակի: Այլ ապա երևեցաւ գլուխ նորա պայծառապայլ յամպոյ անտի. և կերպարան նորա աստղանշոյլ ցուցաւ, և առաւել ևս՝ պճնեալ՝ի պատիր լուսափայլութիւն, կամ՝ի նշոյլ փառացն՝ որ անդստին՝ի կործանմանէ անտի Թոյլ տուեալ էր նմին: Զարմացեալ համբերն Կոտիւեան[29] բազմութեան ընդ յանկարծակի փայլումն՝ ուղղեցին անդր զաչս իւրեանց. և տեսեալ զտենչալին և զհզօր առաքնորդ իւրեանց դարձեալ՝ի հանդիսակ՝ աղաղակեցին մեծաձայն առ խնդութեան իւրեանց: Այն մեծամեծ աւագանին յարուցեալ փութանակի՝ի խաւարային աթոռոց իւրեանց՝ մատեան առ նա՝ի խնդակցութիւն: Եւ նորա նշանացի լռեցուցեալ զնոսա՝ եդիտ զունկնդրութիւն առ՝ի նոցանէ բանիցս այսոցիկ:

Ա՛ծուք, Տէրութիւնք, Զօրութիւնք, Պատուութիւնք՝ յայսոսիկ անուանս պատուոյ առաջնեմ զձեզ այժմ՝ ոչ միայն իրաւամբք, այլև ժառանգութեամբ. զի արտաքոյ ակնկալութեան դարձայ ես յաջողութեամբ՝ առ՝ի հանել զձեզ յաղթանակաւ՝ի սանդարամետական անդնդոցս, յանբերելի և յանիծապարտ տանէ աղիտից, և՝ի բանտէ Առնակալիս: Ա՛րդ՝ կալարուք երկև տեարս զաշխարհն ընդարձակատարը, որ է փոքր ինչ խոնարհ քան զերկինս՝ զսեպհական բնակութիւն մեր: Զոր և զմի բազում նեղութեամբ՝ դիմագրաւեղէալ՝ի մեծամեծ վտանգս: Կարի ինն երկայն լինի պատմութիւն անցիցն և վչտաց՝ զոր յանձին կրեցի յանցանել խմում ընդ դատարկ, համատարած, անսահման և ահագին խորս խառնակու-

Թեան։ Յորոյ վերայ յատակեցին այժմ Պեդք և Մահ զընդարձակ ձանապարհ ՚ի դիւրութիւն պանծալի գնացից ձերոց։ Ա.ԱՀ ես յանհնարս մեռեալ յերեսաց դժուարութեան խնամս ձանապարհի՝ սահելեցայ յառաջ խաղալ ընդ անհուն[30] անդունդս, ընկղմեալ յորովայնի անակղծական Վիշերոյ, և ահագնատեսիլ Ալ ՚ի։ Որոց շարժեալ ՚ի նախանձ գազանեաց իւրեանց՝ զգեմկալ լան սաստկագոյնս խնամս ընթացից. և բողոք բարձեալ՝ ձայն ետուն ազաղակաւ առ ձակատագիրն վերին[31]։ Ապա՛յն և այնպէս գոհ զինի զաշխարհն նորատեղծ՝ զորմէ յառաջագոյն համբաւ հնչեալ էր յերկինս. և էր նա կերտուած աքանչելարար և ամենագեղեցիկ. և ՚ի նմա գոհ ըզմարդն, որ էր կարգեալ ՚ի դրախտի անդ, և էր երջանկացեալ տուժանօք մերում աքսորանաց։ Ա.ԱՀ դաւաձանութեամբ խոտորեցուցի զնա Ա՚ից բարձին իւրմէ. և այն՝ միով ևեթ խնձորով, յաուաելութիւն ձերումդ զարմացման։ Ընդ որ ցաւս ուցեալ նորա (զոր արդարև արժանի ձերումդ ծաղու) եթող զմարդն, և զաշխարհ իւր դասատակեցա՝ յորս մեղաց և մահու, ընդ նոսին և մեզ՝ անվատանգ, անաշխատ և դիւրին։ Օ՛ի հոստատեալ ՚ի նմա՝ տիրեացուք ՚ի վերայ մարդոյն, որ իշխանն է ամենայն արարածոց նորա։ Լաճ նա զգատակնիք իւր և յիմ վերայ, մանաւանդ թէ ՚ի վերայ անբան օձին՝ յորոյ ՚ի կերպարանս պատրեցի ես զմարդն։ Գատակնիք խնամս պատուհասի է թշնամութիւնն՝ զոր կամի նա դնել ՚ի մէջ իմ և ՚ի մէջ մարդկան ազգի։ Այս ջաղաքեցոյ եմ զգարշապարս ոտից նորա, և զաւակ նորա զգլուխ իմ.

բայց ոչ սահմանեաց ժամանակն : Այլ՝ ո՛չառնուցու յանձն դնել զաշխարհս հարուածովք կամ ծանրագոյն և վշտաց : Այդ այս է պատմութիւն իմաստ շահատակութեան : Այս արդ Յուստինոսդ զինչ և ինայ ձեզ , բայց յառնել և մտանել յերանութիւնն լիապատար :

Օ՛այսօրինակ խօսեցեալ նորա՝ եկայ առ վայրս մի . զի ակն ունէր աղաղակի նոցա և բարձրաբարբառ ցնծութեան ՚ի ընդ զականջս նորա : Այլ կայն հակառակ նմին լուաւ նա ՚ի բազմութենէ անտի լեզուաց շուրջանակի զսոսկալի ինն շչիւն հասարակաց՝ որ էր բարբառ նախատանաց նոցին: Օ՛արմանք կալան զնա ընդ այն . այլ սակաւ ի զկնի առաւել և զարմացաւ նա ընդ առնուլ իւր յանձին զփոքր նորին : Օ՛ի եղիա նա զդէմն իւր երկայնեալ և երիվթացեալ , զբազուկս իւր մածեալ ընդ կողն , և զսրունսն զմիմեամբք պատառեալ . մինչև չկարացեալ կալ յոտին՝ անկաւ ի վերայ երկրի ՚ի վերայ որովայնի իւրոյ , փոխարկեալ յօձ զարհուրատեսիլ . Թէպէտև վայրապար ծանրացաւումն եղև ընդ այն : Օ՛ի մեծագոյն և զօրաթիւն բռնացեալ ՚ի վերայ նորա՝ պատժեաց զնա ՚ի կերպարանն , յորում գտաւ նա մեղանչական : Այժմ խօսել՝ բայց ոչ կարացեալ՝ զշչիւն և եւթ արձակեր երկձիղ լեզուաւն առ շչիւն երկձիղ լեզուաց : Վ՚անգի յայնմ վայրի գոգցես ամենեքին առհասարակ զարձեալ ելին ՚ի նոյնօրինակ օձ՝ յառաւելութիւն պատժոյ յանդուգն յանցանաց նորա : Այս ահագին եր յայնժամ հնչիւն շչմանն ՚ի սրահն անդ . զի գլուխք նոցա և տտունք լցեալ ելին և պատատեալ խիտաւխիտ հրեշիւք . ոյք և

էին՝ կարիճ, քարք, օձ երկգլխանի, սերաստէս եղջերաւոր, հիդրայ, եղջեր ահարկու, և խարա մանի [31]։ Ո՛չ խռնեցաւ զինի այսպիսի օրինակաւ երկիրն ոռոգեալ արեամբ Կորդանի [32], և կամ կղզին Ովփիուսայ [33]։ Սակայն Սատանայ կերպա րանեալ՝ ի վիշապ՝ սոսկալիթիթառ էին էր՝ ի մէջ նոցա, և ստուարամարմին քան զանհեթեթն Ա ի Թոմին՝ [34] զոր ծնաւ արեգակն՝ ի Պիւթեանն հովտի՝ ի տղմոյ անտի։ Այս Թուէր ևս ունէր տակաւին զառաւելագոյն զօրութիւն քան զայլս։ Ա՝ան ո րոյ ամենեքին առհասարակ զհետ գնացեալ նորա՝ ելին արտաքս՝ ի դաշտավայրն բացօթեայ. ուրա նօր անկեալքն յերկնից, և ապրեալքն՝ ի հարուածոյ անտի ապստամբութեան՝ կարգեալ կային՝ ի հանդէս Ձակատու, և ակնկալեալ մնային փութանակի ելից արտաքս առաջնորդի իւրեանց շքեղաշուք հանդիսիւ։ Այլ փոխան նորա տեսին զայլ հանդէս խուռն բազմութեան գարշատեսիլ օձից՝ որք զեղան հոսեցան արտաքս։ Յայնժամ կալաւ զնոսա ահ, և զգածումն. զի զոր ինչ միանգամ տեսանէին, ՚ի նոյն գտանէին զանձինս փոխակերպեալ։ Ա՝ան որոյ Թոթափեցան յերկիր զինք նոցա՝ գեղարդունք և աստղք. և ինքեանք տապաստ անկան ՚ի քթթել ականց։ Յարեաւ յայնժամ և ՚ի նոսա շչիւն ահագին. և վարակումն իբրև զժանտախտ կալաւ զահարկու կերպարանս նոցա։ Ա՝ենեքին զուգահաւասարք գտան ՚ի պատժի անդ, որպէս էին և ՚ի յառաջնում։ Ա՝ովին օրինակաւ բարբառ ցնծութեանն՝ որում ականջ ունէին, դարձաւ ՚ի շչիւն կատականաց, և յայլեայնաւին յամօթ ինքնագործով նախատանաց։ Այս ան

դէն վաղվաղակի կանգնեցաւ ՚ի նմին վայրի ան-
տառ ծառոց՝ վերաբուսեալ ընդ այլափոխութեան
նոցա (զի այսպէս կամք եղեն երկնաւոր թագաւո-
րին յառաւելութիւն պատժոյ նոցա) դեղեցկա-
տեսիլ պտղովք, նման ծառոյն բուսեալ ՚ի դրախ-
տի անդ՝ զոր վարեաց փորձիչն ՚ի հրապուրանս Ե-
ւայի։ Յայնժամ արկին փութանակի զաչս իւ-
րեանց յայն տեսիլ նորանշան. զի փոխանակ միոյ
ծառոյն՝ որ արգելեալն էր ՚ի դրախտի, համարէին
բուսանել անդանօր խուռն բազմութեան յառա-
ւելութիւն աղիտից նոցա, և ամենայն։ Այլ պա-
պակեալ յերեսաց բազմատոհմ ծարաւոյ, և ան-
հնարին քաղցու՝ թէպէտև տեսանէին զպտուիր
երևութիւն նոցա, սակայն անհնար եղև նոցա չմեր-
ձենալ ՚ի նոսա. այլ դիզացեալ ՚ի միմեանց վերայ՝
ելին ՚ի ծառսդ խտագոյն և քան զբազմութիւն
օձիցն, որք պատեցին զԱդեբար [35]։ Հատին տէն
չանօք զգեղեցկատեսիլ պտուղս նոցա՝ որք կարի
ինն նմանատիպ էին բուսելոցն երբեմն առընթեր
լճակի նաւթին, ուր բոցակեզ տօթոյեցաւ Ադամ։
Այլ սոքա պատիր և գոլով՝ ոչ միայն զձեռս,
այլև զՀաշակելիսն խաբէին։ Օ՜ի կամեցեալ նո-
ցա Հաշակաւ նոցին չիջուցանել զքաղց իւրեանց՝
փոխանակ պտղոյն ծամէին զմոխիր դառնահամ։
Այսուամ ոչ հանդուրժեալ Հաշակելեացն՝ թքա-
նէին զայն արտաքս դժոխալուր ձայնիւ։ Ատեան
՚ի փորձ բազում անգամ՝ ստիպեալ յերեսաց
քաղցու և ծարաւոյ. այլ տարապարտ զղջանօք
ծամածռեցին զծամելիս իւրեանց, և լցին զայնս
՚ի ձանձախարիճ և ՚ի մոխիր։ Օ՜ այսօրինակ ըմ-
բռնեցան նոքա բազում անգամ ՚ի նոյն պատրանս.

և ոչ որպէս զմարդն միանգամ ևեթ պատրեալ՝ զոր խոտորեցուցին նոքա։ Այլ այնպէս տանջեցան և մաշեցան ընդերկար տուայտանօք, և անդադար չամամբ. մինչև գտին զնոսին Թոյլտուութեամբ վերնոյն զկորուսեալ կերպարանս իւրեանց։ Այլ ա սեն ոմանք, Թէ պատուէր եղաւ ՚ի վերայ նոցա բերել յանձին ամ ըստ ամէ ՚ի սահմանեալ աւուրս զտարեւոր անարգանսդ՝ ՚ի նախատինս ամբարտաւանութեան իւրեանց, և խնդութեան ընդ պատրանս մարդոյն։ Սակայն սիրեցին նոքա զաւանդութիւն չաղթութեան իւրեանց ՚ի միջ հեթանոսաց. և կեղծեցին առասպելս, Թէ օձն կարդաց ցեալ ՚ի նոցանէ Աւվիեան՝ [36] կալաւ զառաջինն ընդ աշխարհածուէնն Նբրիւնոմայ՝ [37] Թերևս ընդ Նբայլ, զիշխանութիւն բարձրագագաթն Աղիւմպեայ։ Այլ զնոսին՝ մինչև եր ծնեալ Պիկտեանն [38] Զրատազդայ, մերժեցին զնոսա անդուստ Սատուրնոս [39] և Աւվլս [40]։

Յայնմ ժամանակի ամպքն դժոխոց՝ Աեղք և Աահ, հասին փութանակի ՚ի դրախտ անդը։ Աեղքն գոլով երագընթաց՝ ժամանեալ եր անդը յառաջագոյն զօրութեամբ իւրով, և այժմ եհաս անձամբ առ ունելոյ զբնակութիւն յարատևակ. իսկ Աահն զնոսին հետոց նորա ոտն առ ոտն յառաջ խաղացեալ, և ոչ տակաւին աշտանակեալ ՚ի ձի սրատեսիլ։ Ընդ որում սկսաւ խօսել Աեղքն՝ օրինակ զայս։

Աիմ Աահ ամենայաղթ՝ երկրորդ ծնունդդ Սատանայի, զիարդ Թուի քեզ այժմու ինքնակալութիւնս՝ Թէպետև դժուարակիզ Ձգամբք ստացեալ։ Աչ ապաքէն ընտրելագոյն է այս քան զը-

հանապազորդ պահպանութիւնն վատանուն անարգութեամբ առ խաւարամած սեամն դժոխոց՝ ուր կայիր կիսամեռ առ քաղցու։

Որում փոյթ ընդ փոյթ արար պատասխանի այլանդակ ծնունդն մեղաց՝ Այո՛ն են դժոխք, դրախտ և երկինք առաջի իմ՝ որ տակնուվայր եմ մշտնջենաւորապէս տուայտութեամբ։ Այս և՛ կեամ անդադանօր, ուր մարթ է ինձ գտանել զկերակուր ցյաւորդ։ Այլ աստանօր՝ թէպէտև ամենայն ինչ գտանի բազմապատ, սակայն նուազ քան զի ընդ զայս որովայն լայնատարած՝ որ ոչ է կապեալ ընդ մարթոյ [41]։

Որում ազգասիրդ մայրն ետ զայս պատասխանի։ Այլ սպառեա դու նախ զանձկարս, զծաղիկս, և զպտուղս ի դրախտիս, և ապա զանասունս, զձկունս, և զթռչունս՝ զընտիր կերակուրս արդ. և կրկին անխնայ զոր ինչ միանգամ հնձեալ արկանէ ի խոնարհ մանգաղն ժամանակի. մինչև բնակեալ իմ ի մարդն, և ի սերունդս նորա՝ ապա կանեցից զիտս, զանս և զպղծս նոցա. և այնպէս պատրաստեցից քեզ զվերջին կերակուր քաղցրաձաշակ։

Այս ասաց նա։ Այլ փութանակի կալան նոքա զգլուխդ Ճանապարհ. բայց երկոքին և դիմեալ ի վաղագոյն կամ յանապան եղջումն անմահութեան։ Այլ որ տեսեալ Ադենակալին ի դերասանէն Ճանեալ աթոռոյ իւրմէ՝ յորում նստեր ի մէջ Արբոյ, զայսօրինակ ուղղեաց զբարբառ իւր առ լուսապայծառ դասս նոցա։

Տեսանէք աւադիկ, թէ քանի կատաղութեամբ ընթանան շունքդ դժոխոց յեղջումն և յապակա-

նուԹիւն երկրի՝ զոր ստեղծի ես այնչափ գեղեցիկ և բարեվայելուչ։ Այլ տակաւին կացեալ էր ի նմին վայելչուԹեան, եԹէ անմուԹիւն մարդոյն ոչ էր Թոյլ տուեալ մնանել անդր ապականապարծ կատաղեացդ՝ որք ինձ ընծայեն զանմուԹիւնդ զայդ։ Բայց կարծիս են և իշխանն դժոխոց, և միաբանեալքն ընդ նմա. զի տեսանեն զիս հեշտեաւ լիս զիջանել նոցա ի մնանել և ի ժառանգել զվայրդ երկնանման. և Թուիմ նոցա կատարել զկամն անարգու Թշնամեաց իմոց՝ որք ծիծաղին զինև, որպէս Թէ շարժեալ յանհնարին կրից՝ Թողեալ իցեմ զամենայն ինչ ի կամն նոցա, և վարկպարապի տեղի տուեալ անկարգուԹեան։ Այլ ոչ գիտեն նոքա, Թէ կոչեցի ես զգժոխայինս շունսդ, և ձգեցի անդր՝ ի լափլփզել զաղտեղուԹիւնս և զգարշանս՝ զորս պղծագործ մեղք մարդոյն արկին զհամբրէն սրբուԹեամբ։ Այնչափ խըզոՂեալ նոցա ցպայԹուն պորտոյ ինացուածովքն զոր կլանեն անյագաբար, և ապա ի մի հարուած քումդ հզօր բազկի՝ ոմն Աբդի իմ սպրեցի, կործանեալ Աեղաց և Աահու և անյագ որովայնի նոցա ի Ա իշն՝ խոցեն զբերան դժոխոց ի յատիտեան, և կնքեսցեն զգիշախանձ ծամելիս նորա։ Այս յայնժամ նորոգեսցին երկինք և երկիր մաքրափայլ սրբուԹեամբ անընդունակ արատոյ։ Այլ ցայն վայր յառաջ ընԹասցեն անէնքն տուեալ երկոցունց միանգամայն։

Կնքեաց նա զբան իւր. և ումենդիրքն երկնից հնչեցուցին զահեղաբարբառ ալէլուիայն իբրև զգոչիւն ծովու. և ամենայն բազմուԹիւնն յաւել ընդ նոսա զձայն իւր՝ ասելով. Արդար են ձանա-

պարհք քո, և ուղիղ դատաստանք քո յամենայնի։ Այլ ոմ ունիք հնար ի նուաստացուցանել զքեզ, կամ զՀրդիկդ քո՝ որ կարգեալն ի նորս վիճ մարդկան ազգի. և նուաճ հանդերձեալ են կանգնիլ նոր երկինք և նոր երկիր, և կամ լինել ի վերուստ։ Ոչ այսօրինակ երգեցին նոքա։ Այլ Բարբէնն կոչեալ յանուանէ զՏէր հրեշտակս իւր՝ եթ նոցա իշխանութիւն՝ զոր կարեւոր դատեաց յայնմ պահու։ Այլ նոքա անդէն վաղվաղակի եւտուն հրաման զառաջինն արեգական, զի յընթանալ իւրում և՛ի ծագել ընդ երկիր՝ ազդեսցէ նմին զանբաւելիսն յաղթութիւն և զջերմեռանդութիւն։ Ուշեսցէ՛ի հիւսիսոյ զձմեռն զառաքել, և՛ի հարաւոյ ածցէ զաւդն արեւակայից ամպոյց։ Այսպա կարգեցին արծաթափայլ լուսնի զվարձս նոցա. և հնգեսունց մնջորակաց վնասուցնակ ընթացս նոցա, և զՏպէսցուածս վերջմանեայ, քառամանեայ և եռամանեայ ժանտալից ազդեցութեամբ. և ս և զժամանակն հանդիսելոյ նոցա միաձանց՝ ի չարագուշակ զուգորդութեան անդ։ Ոմանցն՝ և հաստատանոց [42] զժամանակն տեղալոյ նոցա յերկիր զարտախտալատ հոսանս իւրեանց. և թէ՝ այք ոմանք՝ ի նոցանէ հանդերձեալ էին և լանել և մտանել ընդ արեգական՝ ածեալ զնրիկ ընդ երկիր։ Ահմանեցին հողմոց զվայրս նոցա, և զժամանակ յուզելոյ զծով, զցամաք և զօդ՝ ի բաղնիսն թեւոց իւրեանց։ Ասուցին և որոտմանց և կայծականց զժամանակն խաղալոյ նոցա աշխարհիս՝ ի թխպագին սրահի անդ հաստատութեան երկնից։ Այսպէս և ոմանք, թէ հրամանս եթ Այտուած հրեշտակաց իւրոց խոտորեցուցանել զլե-

եւս երկրի երից տասնեակ ասպիճանօք և առա-
ւել եւս՝ յառանցիկ անտի արեգական ։ Իսկ նոքա
բազում ձգամբ թաւալեցուցին առ՚ի չեղ զգունան
կիսդրոնեան ։ Այլ ըստ այլոց ընկալաւ արեգակն
զհրամանն դարձուցանել զերասանակն իւր՚ի ձա-
նապարհէ անտի զիչերահաւասարին նոյնպէս հե-
ռաձիգ լայնութեամբ՚ի Յլոց անտի ընդ եւթանաս
Ա՚ղանտեան [43] քերց, և Պարտեան [44] երկուսորե-
կաց՝ ՚ի վեր կոյս առ Խեցգետին արեւադարձ [45] ։
Այլ անդուստ դարձեալ՚ի խոնարհ առընթեր Ա՚ր-
իւծու, Կրսի և Կշռոյ ըստ չափոյ խորութեան
Ա՚յծեղջեր [46] ։ Այլ այնպէս ածել յիւրաքանչիւր
կլիմայս երկրի զփոփոխութիւնս եղանակաց տար-
ւոյն ։ Ապա թէ ոչ՝ յաւէժաբար խնդայր գարունն
՚ի ծաղկիս իւր, զուգահաւասար ունելով զժա-
մանակն տունջեան և գիչերոյ, բայց՚ի տեղեաց ան-
տի՝ որք են յայնկոյս շրջանակացն բևեռաց [47] ։ Ո՛վ
տիւ նոցա ծագէր անդիւեր՚ի հոլովել անդ արե-
գական միւտ՚ի ստորև զհորիզոնաւ յանդիման նո-
ցա՝ խնայեալ՚ի վաստակս երկայնաձիգ ձանա-
պարհին ։ Այլ յայնժամ ինայլին անծանօթք՝ արև-
ելք նորա և արևմուտք ։ Այլ խափաներ նա ըզ-
ձիւնն յերեսաց ցրտասառոյցն Աստիտոլանդայ [48].
և զհարաւ հեռագոյնս ձգեր՚ի խոնարհագոյնն
Ա՚ագելեան [49] ։ Ա՚յլ դարձոյց արեգակն զընթացս
իւր՚ի ձաշակեալ պտղոյ անտի իբրև յերեսաց
Ծփւտեանն [50] ընթերեաց ։ Ապա թէ ոչ՝ զիա՞րդ
մնրթի էր բնակեալ երկրիս՝ թեպետև անմեղան-
չական լիներ տակաւին, խոյս տալ յայնժամ ա-
ռաւել քան այժմ յերեսաց սաստկագին ցրտոյ,
և բոյակեղ տօթոյ ։ Փոփոխութիւնքն օդոյ՚ի

հաստատուԹեան երկնից՝ մուծին զնոյնօրինակ կե-
պափոխուԹիւն և՛ ի ծովու և՛ ի ցամաքի, ԹեպետԵ
անագան, ժամտաբեր և ապականարար հարուա-
ծովք աստեղաց, միգի, մառախլոյ, և տօԹապին
դոլորշեաց։ Ոչ ուծեալ յայնժամ սաստկաշունչ
հողմոյն Այրկասայ, Կեկիասայ, Ապեյեաեայ և
Լիբասկիայ [51] ի հիւսիսոյ Այորումբեդայ [52] և ի
ծովեզերէն Ասմովեդայ [53] զպղնձի կապանս իւ-
րեանց զսպառազինեալս սառնամանեօք, ձեամբ,
կարկտիւ և փոԹորկալից մրրկօք՝ հարին կործա-
նեցին զանտառս. և զծով խառվեալ վըդովեցին
ահագին։ Ոտք Այտոս և Ափեր [54] ընդ հակա-
ռակն բաղխեալ ամպրոպալից և որոտընդոստ ամ
պովք՝ մերժեցին վանեցին զնոսա ի Աերըպտիս-
նայ [55]։ Աըպէս և Ընդրոս և Օ Եփիւր [56] սաստկա-
գոյնս արձակեցին ի վերայ նոցա զարևելեան և
զարևմտեան նետս [57] իւրեանց։ Օ այսօրինակ
սկիզբն էառ ապականուԹիւնն յանկենդան արա-
րածոց։ Ասայց հակառակուԹիւնն՝ որ է ծնունդ
մեզաց, եմայծ զառաջինն զմահ ի կենդանիս ոսկ-
բիմ ԹշնամուԹեամբ։ Ակսան տալ պատերազմ
գազանք ընդ գազանս, Թռչունք ընդ Թռչունս,
և ձկունք ընդ ձկունս։ Աըոց Թողեալ զընիկ Ադա
բակ իւրեանց՝ գիշատեցին զմիմեանս։ Ընդ ոչ իսկ
յերեսաց մարդոյ կարի լինն երկեան նոքա. այլ՝
կամ փախուստ առնին ի նմանէ, և կամ յանցա-
նել նորա՝ խեԹիւ հայեցան ի նա։ Ապոքիկ էին
աղէտքն բազմացեալ յայնժամ. զորս Ապամ՝ Թէ-
պէտև կայր Թագուցեալ ի ատուերի, տուեալ
զանձն յողբս արտասուաց, էառս ըստմանեայ.
այլ չարաչար ևս զգայ յանձին իւրում։ Ապան

որոյ և ցաւագինս խնդրեաց զՀանդարտութիւն ծփանաց սրտի իւրոյ ի բազմատանջ ծովու անդ կրից՝ օրինակ զայս ։

Ո՛վ աղիտից Թշուառացելոյս ։ Մինթէ այս իսկ վախճանն նորաստեղծ և չքնաղակերտ աշխարհիս ։ և իմում իսկ անձին՝ որ սակաւ ի չառաջ էի նմին ի փառս, և այժմ անկեալ կամ ընդ աւերիւք՝ վերկացեալ յօրհնութենէս ։ Այս իրըն դրեմ Թագուցանել զանձն իմ յերեսաց Աստուծոյ՝ որոյ տեսիլ էր երբեմն բարձրութիւն իմում երանութեան ։ Այլ երանի՛ թէ աստանօր միայն վախճան առնուին Թշուառութիւնք իմ ։ Զոտայ ես արժանի նոցին, և պարտ է ինձ տանել համբերութեամբ ։ Սակայն զինչ արարից զայն՝ զի զոր միանգամ ուտեմ և ըմպեմ, և կամ հանդերձեալ եմ ծանրանել, անկեալ կան ընդ անիծիւք ։ Ո՛վ տիրական ձայնիս՝ ածեցէ՛ք և բազմացարժո՛ , զոր երբեմն լսէի ի ցնծութիւն անձին իմոյ , և այժմ լսեմ առ՛ի մահ ։ Վասնզի զինչ ևս մնայր է ինձ ածեցուցանել և կամ բազմացուցանել, եթէ ոչ զանէծս ի վերայ գլխոյ իմոյ ։ Զի՞ ոք առա՛ պայս ոչ Թափեացէ զայն ի վերայ իմ, յառնուլ անդ զփորձ աղիտիցն՝ զոր ածեմ ի վերայ նորա , և ասացէ ։ » Երանի՛ Թէ կորուսեալ էր Վախտանգ հօր մերոյ չարեաքն իւրովք ։ Զայս երախտիս ևեթ մնրթէ և մեզ մնաղթել Աստուած ։ այլ այս գարձեալ նմին յանէծս « ։ Այս այնպէս բայ յանիծից անտի՝ որք եղան ի վերայ իմ, և առնեսցին անէծք բըզխեալք յինէն՝ զեղեալ յորդեսցին ի վերայ իմ առ հաղինս, յիմ վերայ իբրև ի վերայ կենդրանի ։ և Թէպէտ կարի ինն ծանրութեամբ , այլ ի սեպհա-

կան տեղի իւրեանց ։ Ո՛վ խնդութեանդն անցելոց
՝ի դրախտիս փափկութեան, զորս Թանգագին գնե-
ցի անվախձան աղիտիւքս ։ Ո՛վ Աբարիչդ իմ,
միթէ խնդրեցի՞ ես ՝ի քէն ստեղծուլ զիս մարդ ՝ի
հողոյ ։ Աւ միթէ փութացուցի՞ զքեզ հանել զիս
՝ի խաւարէ անտի , և կարգել աստանօր ՝ի զուարճ-
ութեան պարտիզիս ։ Աւ արդ՝ որպէս յայնժամ
կամքն իմ չէղեն զուգընթաց ՝ի գոյացողութիւն
անձին իմոյ, նոյնպէս և այժմ իրաւամբք խնդրեմ
դառնալ վերստին ՝ի հող ։ Օ՛ի զոր միանգամ ընդ
կալայ ՝ի քէն, կամիմ աւանդել ՝ի ձեռս քո , և
դարձուցանել անդրէն առ քեզ . փոխանակ գի չէ-
գի ձեռնհաս ընուլ զդժուարակիրն պատուիրանն՝
որով միայն հանդերձեալ կեր ժառանգել զբարիսն,
զորս ոչ խնդրեցի ՝ի քէն ։ Սակայն դու ընդ կորս-
տեան նոցին՝ որ էր պատիժ անձին իմոյ ըստ բա-
ւականին, ընդհէր յաւելեր ինձ և զկորձ անվախ-
ձան աղիտից ։ Յայտ թուի ինձ արդարութիւն
քո լինել դժուարապատուհ ։ Ա՛յլ ես ՝ի սակս
չհնազանդութեան՝ թէպէտև անապան , զայսօրիս-
նակ բարբառիմ . » Պարտ էր ինձ յայնժամ չառ-
նուլ յանձն զպայման պատուիրանին՝ զոր եդեր
առաջի իմ « ։ Սակայն դու ունիս ասել ցիս ». Ո՛չ
դէ՞ր ընկալար յայնժամ, և այժմ խորամանկու-
թեամբ կամիս վայելել միայն ՝ի բարիսդ ։ Օ՛ի
թէպէտ արար զքեզ Ա՛ստուած առանց քումդ կա-
մաց, բայց դու զինչ ունիս առնել՝ եթէ որդին քո
անհնազանդ կշտամբեալ ՝ի քէն՝ ասասցէ զքեզ
զնոյն . Ա՛նդէր ծնար զիս , զի ես ոչ խնդրեցի ՝ի
քէն ։ Ա՛յնիցէ հաձելի՞ դու ընդ այս ապաւէս
պատասխանի նորա՝ առ՝ի զերծուցանել զանձն ՝ի

կշտամբանաց քոց։ Օ՜ որ և ծնաւ հարկն բնական, և ոչ հաձուԹիւն կամաց քոց։ Այլ Աստուած ստեղծ զքեզ ինքնակամ հաձուԹեամբ իւրով առ ի ծառայել նմա։ Այլ վարձք քո հանդերձեալ էին լինել երախտիք նորա։ Այժմ իբր և պատուհաս քո այժմ է ի կամս նորա արդարուԹեամբ ։ Ասեմ ինչ ասել առ այդ, և ահա հնազանդիմ։ Զի արդար են դատաստանք նորա։ Վասն զի հոգ եմ, և դարձայց անդրէն ի հող։ Այլ էրդ արդեօք հանդերձեալ է լինել ցանկալի գալուստ այնր ժամու։ Ընդէր յամեցուցանէ ձեռն նորա զպատուհասն սպառնացեալ ի նմին աւուր։ Ընդէր կամ ես տակաւին կենդանի։ Այլ ընդէր ժամավաճառ լինի ընդիս մահն, և յերկարաձգէ զպատուհասն իմ անմահ։ Ո՞վ քանի՞ հնդուԹեամբ ընդունելի զպատակիսք մահուն յանձին իմում, և մտադիւր գառնայի յերկիր անդադար։ Վասն զի խլեալ դուԹեամբ արկանէի զանձն իմ ի հող իբրև ի գիրկս մոր իմոյ, և անդ հանգուցեալ ննջէի ի քուն աներկեան։ Զայն նորա ահագին ոչ ևս որոտայր յականջս իմ. և ոչ երկիւղն առաւելայր զոյն չարեաց անձին իմոյ և իմոց ծննդոց տագնապեցուցանէր զիս անդադար ակնկալուԹեամբ։ Ապա կայն և այնպէս տակաւին յերկեայս կամ, Թէ գուցէ ոչ մեռայց իսպառ. գուցէ անխառն շունչ կենաց՝ որ է հոգի մարդոյն փչեալ Աստուծոյ, ոչ կորնչեսցի ընդ հողանիւԹ մարմնոյս։ Այլ գուցէ յայնժամ մեռանիցիմ ես զմահն կենդանի ի գեՀենեան անդ, կամ յայլ խաւարաբնակ տեղւոջ։ Ո՞վ սոսկալի կասկածանացս, Եթէ իցեն ստոյգ։ Այլ առիմ զարդեօք։ Յանցեաւ միայն շունչն կե-

նաց . և մահն կարգեալ է ի սակս նորա՝ որ ունի
զկեանս և զանմահութիւն : Սակ մարմինն չունի և ոչ
զմի ի նոցանէ : Այլ ուրեմն ամենայն ինչ՝ զոր
յանձին ունիմ, հանդերձեալ է մեռանել : Այս
և եթէ տայ զլուծումն տարակուսանացս , զի միաք
մարդոյ յառաւել ինչ քան զայս ոչ հասանէն : Այլ
կայն՝ թէպէտև անսահման է Տէրն ամենայնի ,
բայց միթէ նմանպէս էակ և բարկութիւն նորա :
Այլ թէ և նմանպէս լինէր և նա , սակայն մարդն
ոչ է նմանելի , այլ մահկանացու որ դատապար-
աեալ : Այլ զիարդ հնար է նմա յուսանել զան-
վախձան բարկութիւն՝ի վերայ մարդոյն՝ զոր վախ-
ճանելոց է մահն : Այլ միթէ անմահացուցանելոյ
էակ զմահն : Այլ այս է անտեղութիւն անբերե-
լի . և Աստուծոյ անմարթ է յուսանել զայն յան-
ձին իւրում նշանակ տկարութեան , և ոչ զօրու-
թեան : Կամ՝ միթէ՝ի պատժել անդ զմարդն կա-
միցի՞ նա առ սրտմտութեան ձգել զահմնանաւորն
առ անսահման՝ ի շատացուցանել զխստութիւն
իւր անողոքելի . և այնպէս անցուցանել զդատա-
հինիք պատուհասի իւրոյ անդր քան զսահման հողոյ ,
և քան զօրինս բնութեան՝ որով գործեն այլ ամե-
նայն պատճառք ըստ տանելոյ էնթակային , և ոչ
ըստ մեծութեան զօրութեան իւրեանց : Այլ
թերևս վիճէ մահն ըստ խնամս կարծեաց միակ
հարուած՝ի բարձումն կենաց խնդ , այլ միայն
թշուառութիւն մշատևակ՝ սկսեալ յօրէ յայս
մանէ և առ յապա , որպէս զիտէր առնուամ յան-
ձին խնամ և արտաքոյ : Այլ աւաղ ինձ , զի այդ
իսկ երկիւղ կասկածանաց ահագին ևս որոտմամբ
դառնայ անդրէն՝ի վերայ անպատասխարան գլխոյ

լմայ ։ Վասնզի յայնժամ եթէ ես և եթէ մահն պատնիմք միանձնաւոր և անմահ ։ Եւ անիծապարտ պատնիմք ոչ միայն ես, այլև համօրէն որդիքն իմ ընդ իս ։ Ահա այս է՝ որդեակք իմ, զեղիկ ժառանգութիւնն հայրենի՝ զոր Թողում ձեզ ։ Այլ երանի թէ կարող լինիցէ վաստակել զայն, և չպանձել ինչ ձեզ ։ Ո՛վ յայնժամ առանց ժառանգութեան յիրաւի օրհնեալք գիս, որ այժմ կարգեալ կամ՝ ի նպատակ ձերոց անիծից ։ Ո՛հ, ընդէր սովին օրինակաւ տարապարտուց դատապարտեցի ազգ մարդկան՝ ի սակս յանցանացս միոյ մարդոյն՝ եթէ անպարտ էն նոքա ։ Պակաս միթէ մարթի իցէ լինել ծնանիլ զնոսա անարատս բոլորովին ։ Ո՛վ միաբ նոցա և կամք Թիւրեալ էն ընդ իս՝ ոչ միայն յառնել անդ, այլև՝ ի կամիլ զնոյն չարիս ։ Եւ զկնի՛ր հնար է նոցա կալ անպարտ առաջի Աստուծոյ ։ Ո՛ր և զկնի ամենայն տարակուսական խնդրոցս բռնադատիմ արդարացուցանել ։ Ամենայն հնարքս իմ և մտոտի բանք առ՝ի խուսափել յերեսաց արդար դատաստանի նորա՝ Թէպէտև ընդ դժուարակիզձիւն էլս, ձգեն զիս՝ի դատապարտութիւն անձին իմոյ եւեթ ։ Ամենայն նախատինք առաջինք և վերջինք իրաւամբք անկանին յիմ վերայ իբրև՝ ի վերայ առաջին պատճառի և աղբեր ամենայն ապականութեան ։ Այլ երանի թէ ածէր զայն՝ ի վերայ իմ սրտմտութիւն նորա ։ Այլ՝ ով անմիտ ցանկութեանս ։ Պիթէ կարող իցես տանել ծանրութեանդ՝ որ է մեծագոյն քան զերկիրն, և դժուարակիզ քան զաշխարհ համօրէն, Թէպէտև՝ ի միասին ընդ չարեացապարտ հնոջդ ։ Այլ՝ ամենայն ինչ՝ որում ցանկաս դու,

և յորմէ երկնչես, միօրինակ բառնան ի քէն ըզ-
յոյս ակնկալութեան փախստեան, և յուցանեն
ղքեզ եղկելի յոյժ քան զամենայն օրինակս յան-
ցեալն և յապագայս։ Այնպէս նմանատիպ ես դու
Աստանայի ի յանցանս նորա, և ի դատապար-
տութեան։ Որ խիղճ իմումն մտաց՝ յոր անդուն-
դըս երկիւղն և արհաւրաց սրկեր զիս, յորմէ՝
ընկղմեալ խորոց ի խորս, չգտանեմ ելս երբեք։

Օ այսօրինակ ողբաց Ադամ առանձինն բար-
ձրագոչ ձայնիւ զղիշերն ողջոյն. որ ոչ ևս էր քա-
ջառողջ, զուարճն և խաղաղաւէտ՝ որպէս մինչև
էր անկեալ մարդոյն, այլ միշտապատ, խռնաւ և
աղջամղջին. որ և ահարկու տեսլեամբ յանդիման
առնէր մեղապարտ խղճի մտաց նորա զամենայն
ինչ կրկին զարհուրանօք։ Անկեալ կայր տարա-
ծեալ ի վերայ ցրտագին երկրի. և բազում ան-
գամ անկճ զարարչութիւն իւր, և մեղադիր ևս
էղև մահու ի սակս յամեցուցանելոյ նորա զկա-
տարումն դատաւճռոյն՝ որ քարոզեալն էր յաւուր
յանցանացն նորա։ Ընդէր ոչ վաղ հասանէ մահն՝
ասէր նա ցանձն իւր, երիցս անձկալի հարուածոյն
իւրով, առ ի տալ վախձան իմումն կենաց։ Այ-
նիկ մնջէթ իսկ ձշմարտութեանն վերիվեր ի բանս
իւր. և միթէ ոչ փութասցի արդարութիւնն Աս-
տուծոյ ի ցուցանել զիրաւունս իւր։ Սակայն և
այնպէս ոչ գայ մահն՝ զոր կոչեմ առ իս. և ար-
դարութիւնն ոչ երագէ զյամրաքայլ ընթացս իւր
ի ձայն պաղատանաց և աղաղակի իմոյ։ Այ ան-
տառք, աղբերք, լերինք, հովիտք, և հովանաւոր
տեղիք՝ յայլ արձագանգս ուսուցեալ էր իմ զձեզ
յառաջագոյն տալ պատասխանի իմումն ձայնի, և

յեղանակել զկարի տարօրինակ երգս : Ցեսեալ
ցաւագին Լայն յայնօրինակ վիշտս աղետից զՆ-
դամ՝ մատեաւ առ նա՛ի տեղւոջէն , ուր կայր ա-
ռանձինն , և սկսաւ քաղցր բանիւք ամբքել զդ-
դառնութիւնն ցաւոց նորա : Լայց նորա հայե-
ցեալ՛ի նա խոժոռ դիմօք՝ մերժեաց՛ի բաց սակին
բանիւք :

Ի բաց գնա յերեսաց իմոց ծանդու : Լո այդ
անուն քաջ՛ի դէպ պայ քեզ դաշնակցիդ ընդ օ-
ձի . զի և դու ստախօս ես և ատելի բոլ օրինակի
նորա : Լո ոչ այլ ինչ պակաս է՛ի քեզ , բայց
միայն կերպարանդ օձանման՝ ի ցուցանել զդա-
ւաճանութիւն քո գաղտնի , առ՛ի զգուշութիւն
յայսմհետէ ամենայն արարածոց յերեսաց քոց :
Օ՛ի մի և պատրեսցէ զնոսա տեսիլ քո կարծե-
ցեալ երկնանման՝ որ հակամիտեալն է՛ի ստու-
թիւն տարտարոսական : Լ՛ւր ես ինայի տակաւին
ընդ քեզ յերջանկութեան անդ , եթէ ամբարտա-
ւանութիւն քո , և չըջմոլիկ ցանկութիւն՝ մինչ-
դեռ ոչ էիր աներեւոյթ , չէին՛ի բաց մերժեալ
զյառաջագոյն աղգեցութիւնն իմ , և արհամար-
հեալ զվստահութիւնն ընդ բանս իմ՝ ի ցանկալ
քո երեւիլ , և այն առաջի դիւին , և՛ի գնել՛ի մէկ
յաղթող նմին հանդիսանալ : Ոակայն եղեալ քո
ընդ առաջ օձին՝ ծաղածանակ գտար , և պատրե-
ցար . զի՛ի նմանել , և ես՛ի քէն՝ կարի լիւն վըս-
տահեալ՛ի քեզ՛ի քումդ բացակայութեան :
Օ՛ի համարեցայ զքեզ իմաստուն , անդրդուելի
և քաջակիրթ ընդդէմ յարձակմանց . և ոչ առի
՛ի միտ , թէ ամենայն ինչ երեւեալ՛ի քեզ՝ երբա-
ւէտ տեսիլ մնոտի , քան առաքինութիւն ձշմա-

ըիտ ։ Ոչ այլ ինչ էր բովանդակին , բայց միայն կող Թիւրեաւ ՚ի ընկ . և որպէս արդ ցուցաւ , յաւէտ խնարհեալ ՚ի ձախակողմն՝ ուստի ա- ռաւն։ Զրանի Թէ ընկեցեալ էր զնա Հասաչին ՚ի բաց ՚ի Թուոյ անտի անդամոցս իբրև աւելորդ ինչ և անպիտան ։ Ոմն, ընդէր ամենիմաստ Զարիչն՝ որ ելից զբարձրագոյն երկինս արուս հրեշտակօք , կամեցաւ զինի ստեղծանել յերկրի զայլանդակ հրեշդ զայդ՝ զգեղեցիկ պակասութիւնն բնու- Թեան . և ոչ ելից զերկիր միայն արամբք, որպէս զերկինս հրեշտակօք ։ Այլ կամ ընդէր ոչ եգիտ զայլ ձանապարհ ՚ի բազմացուցանել զազգ մարդ- կան ։ Յայնժամ չէր հանդիպեալ չարեացս , և ոչ առաւելագոյնն ինայր առյապայ՝ անթիւ ասեմ խռովութիւն ՚ի վերայ երկրի ՚ի ձեռն Թակարդ դից կնոջ ։ Զանգի այրն ոչ երբեք գայէ զկին քա- ջայարմար և առաքինի , այլ զմեղանչականն և զը- շնասպարան և ևԹ ։ Կամ դժուարաւ ՚ի ձեռս բերցէ զանձկալին իւր ՚ի սակս խոտորնակութեան բարուց նորա ։ Այլ կամ՝ Թէ և գայէ զկին միա- բան և սիրելի , սակայն տակաւին ծնողք նորա խա- փան լինին նմին ։ Յակ զկնի կապելոյ նորա զանձն ընդ ժանտաբարոյ կնոջ՝ որ նպատակ է ատելու- Թեան նորա կամ նախատանաց , յայնժամ անա- գան ուրեմն ծանիցէ նա զչարաբաստիկ ընտրու- Թիւն իւր ։ Այս այնպէս կինն գայի պատճառ ան- բաւ աղիտից կենաց մարդկան, և անբերելի խռո- վութեան ընտանեացն խաղաղութեան [58] ։

Օ՞չայս ասացեալ Զքամայ՝ ոչ ևս յաւել ինչ , այլ դարձոյց զերեսս իւր ՚ի նմանէ ։ Յակայն Յ- ւայ ոչ մեկնեցաւ ՚ի բաց , այլ գիսախուխս և յոր-

դահոս արտասուօք անկաւ առ ոտս նորա. և կա-
լեալ զնոցանէ՝ ժառաց զ[Ա]ստուած հաշտել ընդ նմա.
որ և յառաջեաց [Ի] ցաւագին բանս իւր՝ օրինակ
ըստ ս :

[Ա]ստուած մի թողուր զիս զայսօրինակ : [Ա] կայ են
երկինք ընդ անկեղծութիւն սիրոյն, և ընդ մեծա-
բանն՝ զոր ունիմ առ քեզ [Ի] սրտի իմում : [Յ]ան-
ցեալ յանգիստս ողորմ պատրանաւք. և այժմ խըն-
դրեմ զթողութիւն [Ի] համբոյր ոտիցդ : [Ա]ի զըր-
կեր զիս յերեսաց քոց՝ որով կեանս. և մի յօգնա-
կանութենէ քումէ խորհրդոյ [Ի] վերջին աղետիս՝
որ ես զօրութիւն իմ և հաստատութիւն միայն :
[Ի] զրկիլ իմում [Ի] քէն՝ ունիմ ես գնալ, կամ
ուրանօր կեալ : [Ա]ինչդեռ տակաւին կենդանի
եմք՝ թէպէտև ժամ մի ևեթ, հաշտեսցուք ընդ
միմեանս : [Ա]ս որպէս միաբանեցաք [Ի] յանցանս,
նոյնպէս միաբանեսցուք յանհաշտ առեալութիւն
ընդդէմ անպատուոյն օձին մերում Թշնամւոյ՝ որ-
պէս յայտնաբարբառ ճանոյց դատաւկնքն [Ա]ստու-
ծոյ : [Ա]ի [Ի] սակս չարեացն պատահելոց ցուցանել
զատելութիւն քո [Ի] վերայ իմ՝ որ այժմըն խակ կո-
ւսեալ կամ, և Թշուառապոյն ևս գտանիմ քան
զքեզ : [Ա]եղաք երկոքեանս. դու ընդդէմ [Ա]ստու-
ծոյ միայն, ես ընդդէմ քեզ և նմա : [Ա]ան որոյ
կամիմ գնալ [Ի] տեղն դատաւկնքոյն՝ զոր ընկալաք,
և անդ [Ա]խանձել զերկինս աղաղակաւ՝ զի պա-
տիժն ողջոյն հեռացեալ [Ի] գլխոյ քումմէ՝ անկցի
միայն յիմ վերայ՝ որ եմ պատճառ համօրէն ա-
ղետից քոց, յիմ վերայ միայն, զի ես եմ նպա-
տակ արդարոյն ցասման նորա :

[Ա]յսպէտեաց նա զբան իւր հեծեծանօք. այլ տա-

կաւելնեկայ ՚ի ծուռնկս անդ խոնարհութեան. մինչև զինի տեսեալ Յամայ զարտասուալից խոստովանութիւն նորա՝ գթացաւ ՚ի վերայ նորա, և զիջաւ ՚ի հաշտութիւն։ Յանդգն անդէն վաղվաղակի մեղմացաւ սիրտ նորա ՚ի վերայ նորուն՝ որ սակաւ մի յառաջ էր կեանք նորա և միակ բերկրութիւն, և յայնժամ անկեալ կայր ցաւագին առոտնորա։ Եւ մեղապարտ յանցաւորն այնչափ զեղիկ՝ խնդրեր զհաշտութիւն նորա, զխորհուրդ և զօգնականութիւն։ Յինն իրի զոգեաց ՚ի բաց եդեալ զղէնս թշնամութեան՝ դադարեցոյց զարտմտութիւն իւր. և փութանակի կանչնեաց զՅսայ խաղաղաւէտ բանիւք՝ օրինակ ցայս։ Որպէս յառաջագոյն, նոյնպէս և այժմ վարկպարապն ցանկաս դու այնմ՝ զոր ոչն գիտես. և ինդրես անկասնիլ համօրէն պատժոց ՚ի վերայ քո։ Ո՛հ, տաք նախ քոյումդ. զի անհնար է քեզ հանդուրժել բովանդակ սրտմտութեանն Աստուծոյ՝ զորոյ մասամբ և եթե առնուս զփորձ յանձին. և զժուարաւիսկ կարող ես տանել իմումն բարկութեան։ Այլ եթէ մարթէ պաղատանացն նհանջել յետս զդատաւճիռն նորա, ես փութացայց անդր յառաջքան զքեզ. և ինդրեցից մեծապաղատ՝ զի պատուհասն անկցի բոլորովին ՚ի վերայ գլխոյ իմոյ, և ներումն ընդհեռոյն քումդ տկարութեան, և զիւրացուցեալ սեռի՝ որ Թողեալն էր իմումն խնամոյ, և ես մատուցի զնա ՚ի փորձ վտանգաց։ Այսոր որոյ մի և յանդիմանեացուք զիմեանս հակառակութեամբ, զի արդէն իսկ յանդիմանեալ կամք ըստ բաւականին։ Այլ յաւէտ փութացուք ՚ի պարտիս սիրոյ. զի կարող լինուք բառնալ զբեռն միմեանց ՚ի

վինակիս Թշուառութեան ։ Ո՛րանդր որպէս լինիմ թուի , մանկն քարոզեալ ՚ի նմին աւուր՝ հանդերձ ձեալ և լինել աղետք յամրաքայլ , այլ ոչ յանկարծահաս . մանկ երկայնօրեայ՝ յառաւելութիւն վշտաց մերոց , և չարաբաստիկ ծննդոցս ։

Իսկ Աւետ քաջալերեալ ՚ի բանից նորա՝ արար նմա պատասխանի՝ օրինակ զայս ։ Ոխեմ Ա՛դամ ՚ի դատապին փորձոյ անտի , զի բանք իմ ոչ եւս ունին պատանել ընդհակառակ քո . քանզի կարի լիմ վըխակեցայ , և թշուառացեալ գտայ ըստ արդարադատ վճռոյն Աստուծոյ ։ Սակայն վերստին ազդ ժանտացեալ ընդունելութեան ՚ի քէն , և քաջալերեալ ՚ի յոյս անդրկին գտանելոյ զքեզ քո՝ զմիակ մխիթարութիւն սրտի իմոյ ՚ի կենդանութեան անդ և ՚ի մահու , ոչ կամիմ թագուցանել ՚ի քէն զկսոր հաւրդ՝ որք յածին ՚ի բազմատազնապ միտս իմ , ՚ի թեթեւութիւն վերջին ազիտից մերոց , կամ վախճանի կենաց ։ Այս թէպէտ դառն են և տխրալի , այլ հեշտընկալ և տանելի յառաջիկայ թըշուառութեանս ։ Ա՛յդ՝ եթէ կարի լիմ տագնապին զմեզ գումք որդւոց մերոց՝ որք հանդերձեալ են ծնանել յաղետս , և զկնի մանկիկ ՚ի կուր մահու . և կամ՝ եթէ կարի լիմ յաւադին և պատճառ լինել աղետից այլոց , և այն մերոց ծննդոց՝ բերեալ զնոսա յայս աշխարհ անիծից առ՚ի լինել զկնի աղցատուր կենացս կերակուր այնպիսւոյն այլանդակ գազանի , խափանումն ծննդեան անիծապարտ որդւոցդ , և Թողուլն զնոսա ՚ի վինակիկ անդ անծնելութեան , եդեալ կան ՚ի քումդ իշխանութեան ։ Այժ՝ որպէս եղեւ , անզսաւակ . և յայնժամ մանկն ՚ի գերեզ ելցէ յորոյ իւրմէ , և սակաւեցի

երկոքումբքս և եթե շատացուցանել զորովայն իւր անյագուրդ ։ Այլ եթէ խիստ թուեցայ քեզ և դժուարին ի կցորդութեան անդ կենաց , տեսու- թեան և սիրոյ ընդ միմեանս՝ հրաժարեցն յօրինադ անտի սիրոյն և ըստ պատշաճի լծակցութեան , և այնպէս թալկանալ յանդիման սիրելւոյն ( որ և ոչ փոքր ինչ թշուառութիւն է և տանջանք՝ քան յորմէ երկնչիմք ) ապէ առ՛ի զերծուցանել զմա- ձինս մեր և զորդիս միանգամայն յամենայն կա- կածանաց՝ կալցուք զայս ձանապարհ ի կարճոյ , ելցուք ի խնդիր մահու . և ի չգտանել մեր զայն՝ ինքնին իսկ լցցուք զպաշտօն նորա յանձինս մեր ։ Օ ի ընդէր է մեզ կեալ ընդերկար յերկիւղի անդ , որոյ վախճանն է նոյն իսկ մահն անձանց մերոց ։ Ի ձեռս մեր է ընտրութիւնն համառօտագոյն մա- հու՝ կորստեամբ սատակեալ զկորուստ [59] ։

Ա ախձանեաց նա զբան իւր աստանօր , և կամ վերջին անյուսութիւնն կարձեաց ի բերանոյ նորա զինացեալն . զի այնչափ կալեալ էր երկիւղ մա- հու զիտս նորա , մինչև այլազունիլ երեսացն ։ Այլ Աստանց ոչինչ տեղի տուեալ անհանձար խորհրդոյ նորա՝ բազում ձգամբ ամբարձ զաչ- նատեսական միտս իւր ի վեհմտգոյն խորհուրդս . և ետ պատասխանի Աւսայի՝ օրինակ զայս ։

Ա րհամարհութիւնն կենաց , և հեշտութեան մարմնոյ՝ զոր ցուցանես յանձին քումմէ Աւսայ , յայտ առնեն ի քեզ բարձրագոյն ինչ և առաւել գերազանց՝ քան զոր արհամարհեն միտք քո ։ Այլ բարձումն կենաց անձին՝ զոր յայն սակս խնդրես , մերժէ ի քէն զկարծեցեալ աշխատասիրութիւնդ . և ցուցանէ ոչ զարհամարհութիւն անձինդ , այլ

յաւէտ զտապնապ քո և զվիշտ ընդ կորուստ կե-
նաց քոց , և հեշտալի բերկրութեանն : Այլ եթէ
ցանկաս մահու իբրև վերջին վախճանի թշուա-
ռութեանց՝ կարծեցեալ զերծանիլ նովաւ ի կար-
գեալ պատուհասէն , մի երկմտիր ի միտս քո . զի
Նարձրեալն մեծագոյն ևս իմաստութեամբ զև-
նեալ է զբարկութիւն իւր վրէժխնդիր , մինչև
չկարել մեզ ունել զառաջս նորա : Ո՛ան որոյ յա-
ւէտ երկնչիմ ես , թէ գուցէ հասեալ մահու յան-
կարծակի՝ ոչ զերծուացէ զմեզ ի պատուհասէ ան-
տի , զոր ունիմք կրել ըստ դատաւճռոյն : Այն զի՝
այնպիսի գործք յանդգնութեան առաւել ևս շար-
ժելոց են զՆարձրեալն անմահացուցանել ի մեզ
զմահն : Յայն սակս ելցուք յաւէտ ի խնդիր ան-
քոյթ Ձանապարհին՝ որ ըստ խոստման կարծեաց է-
դեալ կայ առաջի մեր , եթէ ի յուշ բերցուք զբ-
մանն դատաւճռոյն Աստուծոյ՝ որ ասէ . « Օ ա-
ւակ քո խորտակեսցէ զգլուխ օձին » : Այսպէսին՝
որպէս ինձ Թուի գուշնաքեայ ինչ լինելին այդ տու-
գանք յօձն , եթէ չէր բացածանուցեալ նովաւ ա
նագորոյն Թշնամին մեր Սատանայ՝ որ ի ձեռն օ-
ձին գարանակալ եղև մեզ : Խորտակումն գլխոյ
նորա է արդարև քէն վրիժուց մերոյ ի նմանէ .
որովհետև ոչ կարեմք հասանել մահուամբ՝ զոր ա-
ծեմք ի վերայ մեր, և ոչ կենօքն անպատակութեան՝
զոր եդիր ինձ առաջի : Այս այնպէս զերծեալ թըշ
նամւոյն ի պատուհասէն իւրմէ՝ մեք կրկնապատա-
կեմք և գնորայն ի գլուխս մեր : Այդ՝ մի ևս ըզ-
մնաս ածցուք գնիւթովն կորուստ անձանց, և մի զանց
գառակութիւն հակառակ բնութեան . զի սոքա
բառնան ի մէնջ զամենայն յոյս կենաց , և ձգեն

զմեզ յոխակալութիւն, յամբարտաւանութիւն, յանժուժկալութիւն և ի նախատինս. որպէս և յընդդիմանալիւն կամացն Աստուծոյ, և արդար լծոյ նորա՝ զոր եդ ի վերայ պարանոցաց մերոց։ Օ մտաւ ած, թէ քանի՛ քաղցրութեամբ և մարդասիրութեամբ՝ առանց ինչ բարկութեան և կրճտանջանաց, լուաւ նա զպատասխանիս մեր, և դառեաց զմեզ։ Այնչափ ակն ունէաք յանկարծակի սատակմանն՝ զոր եդեալ էր մեր ի մոլ ըստ մահնն սահմանելոյ ի նմին աւուր, ծանոյց նա քեզ յառաջագոյն զցաւս երկանց քոց, այլ անդէն ի վերայ հած զփոխարէնն խնդութիւնն ընդ պտուղ որովայնի քո։ Ասաւել խեթիւ հայեցան ակս անձք նորա. մնայ ինձ դառնալ զհայ իմ աշխատութեամբ յերկրի։ Այս զինչ ինաս այսր։ Դառարկութիւնն անտանելի ևս է։ Օ ի աշխատութիւնն հանդերձեալ և զօրացուցանել զկեանս իմ։ Այլ զի մի ցրտութիւն կամ ջերմութիւն ինաս ինչ բերցեն կենաց մերոց, խնամք նորա ինքնին հոգայան վանս մեր յառաջագոյն. և ձեռք նորա զբաց եալ ի վերայ մեր ի դատաստանի անդ՝ զգեցուցին զմեզ ի ժամու։ Անհօն ապա լուիցեն ականջք նորա ի պաղատել մերում. և սիրտ նորա խնայարհեալ ի գթութիւն՝ ուսուցանէ մեզ զնաև զգուշութեան յարկածից օդոյ, անձրևայ, սառնամանեաց, կարկտի և ձեան։ Օ որս այժմն իսկ սկիզբն առնեն երկինք ցուցանել ի լերինս՝ ի ընդել անդ խոնաւ և սաստիկ հողմոյ, և ի ցրտել զգեղեցիկ վտունջս հերայ չքնաղագեղ ծառոց։ Այս ծանուցանեն մեզ ի խնդիր լինել կարևորագոյն ծածկութեի և հոյ՝ ի պատսպարել

և ջերմացուցանել զցրտացեալ անդամն մեր ։ Այլ
ուսուցանեն և ես , թէ զիարդ մարթ է մեզ՝ մինչև
ի լուսաւորին տունջեան տեղի տուեալ ցրտագին
դիշերոյ , արծարծել վերստին զցոլացեալ ձառա-
գայթս նորա՝ հաւաքեալ զնոսին ՚ի նիւթ դիւրա-
վառ ։ Այլ կամ բաղնեալ ընդ միմեանս զկրկին
մարմինս՝ շիեալ զոդն առ ՚ի հանել զհուր ։ Ապա-
սակաւ մի յառաջ բաղնեալ ամպոց ընդ միմեանս ,
և կամ հարեալ ՚ի աստեղագոյն հողմոյ՝ լուսկին
զփայլակն խոտորնակի . որոյ ձոյ իջեալ ՚ի խանարհ՝
բորբոքեաց զհեժալից կեղևն եղևնի կամ թեղո-
ւի , և արձակեաց ՚ի հեռագոյն վայրս զջերմու-
թիւն ըստ բաւականին՝ որում մարթ էր ընդու-
զակաստութիւն արեգական ։ Ընդ՝ վարել հրով
և նմանեաք ՚ի դարման աղիտից՝ զորս յանցանքն
ածին ՚ի վերայ մեր , ուսուցեալ նա մեզ ՚ի կալ մե-
ծում յաղօթս առ նա , և ՚ի խնդրել ՚ի նմանէ ըզ-
ընծորն ։ Այլ այսպէս բազում մխիթարութեամբ
խնամարկեալ ՚ի նմանէ՝ ոչ էաս ունելիմք տեղի կաս-
կածանաց ընդ անցուցանել մեր զկեանս խաղա-
ղութեամբ . մինչև զարձցուք անդրէն ՚ի հոգ ՚ի
վերջին հանգիստ մեր , և ՚ի տուն սեպհական ։ Այլ
արդ զի՞նչ էաս ինայ մեզ . բայց դառնալ ՚ի տեղին՝
ուրանօր դատեաց նա զմեզ յառաջագոյն ։ Այլ
անդ անկեալ առաջին նորա՝ խոստովան լինել ըզ-
յանցանս մեր , և խնդրել զթողութիւն . ուրպիսի
զերկիր արտասուօք , և բաղնեալ զոդն հառաչա-
նօք բեկեալ սրտի ՚ի նշանակ անկեղծ ցաւոց , և
յետին խոնարհութեան ։ Ապրուի մեզնմանի նա ան-
շուշտ , և դարձցի ՚ի բարկութենէ իւրմէ ։ Օ՛ ՚ի
պայծառափայլ դէմս նորա՝ այն ինչ երևելին ա-

հագինս սրտմտեալ, զինչ այլ ինչ առեսաք ցոլացեալ՝ բայց միայն զերախտիս, զՅնորհս և զողորմութիւն։

Ո այսօրինակ խօսեցաւ Հայրն մեր ապաշխարող. և այսպէս ընդհատ ի նմանէ եղոյց յանձն զկայքի մտացն խղճի։ Ա՛ան որոյ և դարձան վաթմանակի ի առջին դատակնքոյ իւրեանց. և անդ անկեալ առաջի Աստուծոյ յերկիր ի խոնարհ՝ խոստովան եղեն զյանցանս իւրեանց. և խնդրեալ զթողութիւն՝ առուգեցին զերկիր արտասուօք, և հեծութեամբք իւրեանց բազմեցին զօդն ի նշանակ անկեզծ ցաւոց և խոնարհութեան բեկեալ սրտի [60]։

# ԴՐԱԽՏ ԿՈՐՈՒՍԵԼՅ

ԳԻՐՔ· ԺԱ·

## Ն ԱԽ ԱԴՐՈՒԹԻՒՆ

Ոչ ոք Աստուծոյ մատուցանէ Հոր խրատ զայնմ Որ
խաղաղ մերոց ապաշխարողաց, և լինի բարեխօս վասն նո-
ցա : Ընդունի Հայր զնդրուածս նորա . բայց ծանուցանէ,
թէ ոչ ևս արժան է Նախահարց ճաշակ ի գթասիրէ անդ :
Ապաքէն նա զՄիքայէլ հանգերձ բոլոր հրեշտական գնդաւն հա-
նել զնոսա անտի . բայց յայտնել Աստուծոյ յառաջագոյն զգ-
հանգերձեալսն : Իջանէ Միքայէլ ի գթասիրէ անդր : Աստ
ցուցանէ Երայէլ զնշանն բարեգուշակ . և տեսեալ ի հեռաս-
տանէ զգալուստն Միքայէլի գնայ ընդ առաջ նորա : Ծա-
նուցանէ նա Նախահարց զերամանն մեհենից նոցա ի գթաս-
տէ անտի : Ոչխս առնու Երայ : Աստ զինի պաշտպան կա-
ց անձին հնազանդէ : Տանի զնա հրեշտակին ի լեառն, և
անդ ցուցանէ նմա ի տեսլեան զանցս սրբ հանգերձեալ
էին անցանել մինչև ցՔրիստոսն :

# ԴՐԱԽՏ ԿՈՐՈՒԱԾԱՑ.

ԳԻՐՔ· ԺԱ·

Այս օրինակ կային նոքա յաղօթս՝ իջեալ ի ծունկս ապաշխարութեան. զի խոնարհեալ նահաժամանն ընդհայցն ի բարձանոյ՝ յանժամ զթութեանն Աստուծոյ, ի բաց արար ի նոցանէ զսիրան քարեղէն, և փոխանակ նորա ածէ ցոյց անդրէն զմարմնեղէնն վերստին ծննդեամբ: Որ և բղխեր յայնժամ զանմուռունչ հեծութիւնս՝ զորս հոգին աղօթից ազդէր ի նոսա, և տայր նոցին թևս յարատագոյն թռիչս յերկինս քան զբարձրագոյ աղաղակս: Սակայն եղանակ աղօթից նոցա ոչ էր իբրև զնուաստահոգ աղաչաւորսդ. և խնդրուածք նոցա ոչ սակաւ կարևոր էին քան զեռանդագին մաղթանս առելոցն նախնեաց ի հին առասպելս՝ բայց յետնագունից քան զսոսա, Կովկասեցի[1] ասեմ և ողջախոհին Պիւբրայ[2] առաջի տասնամեայն Ովեմիայ[3] ի նորոգութիւն մարգկան ազգի ընկղմելոցն ի ջուր[4]: Սոցայն աղօթք նոցա չէշտակի յերկինս, և ոչ խոտորեցան երբէք զձանապարհայն յերեսաց նախանձաբեկ հոգմանն՝

որք վայրապար և՛ ի տարապարտուց ընկենին հակառակ նոցին : Նոցին հոգեպէս ընդ դրունս երկնից . և անդէն շուրջ պատեալ բուրմամբ անուշահոտ խնկոց ոսկի սեղանոյն՝ ի ձեռն գերազոյն Հրեշտակին յանդիման եղեն առաջի աթոռոյ Հօրն երկնաւորի : Օ՜ որա և խնդութեամբ ընծայեալ նմա Որդւոյն՝ սկսաւ լինել բարեխօս՝ օրինակ ղասյս [5] :

Հայեաց Հայր ընդ երախայրիս պղծոյն՝ որք բուսան՝ ի վերայ երկրի՝ ի ձեռն հնօրհայն , զոր անկեցեր՝ ի մարդն : Հայեաց ընդ հեծութիւնս և ընդ պաղատանս նորա՝ զորս ես քահանայ քո կնդրկախառն մատուցանեմ քեզ յայս բուրուառ ոսկի : Հայեաց ընդ պտուղդ՝ որք գոլով աձեցեալ ի սերմանէ անտի ապաշխարութեան արկելոյ ի սիրտ նորա , առաւել քաղցրահամ են քան զորս միանգամ մաքրեր բուսուցանել ծառոյ դրախտին նորուն իսկ մշակութեամբ ձեռաց՝ մինչև եր անկեալ նորա յերանութենէ անտի : Խոնարհեցո՛ զունկն քո՛ ի պաղատանս նորա , և լուր անբաւական հեծութեանն : Այլ քանզի ոչ գիտէ նա զարժանին եղանակ մաղթանաց , ես ինքնին եղէց թարգման վասն նորա՝ որ եմ փաստաբան նորա և քաւութիւն : Այնպէս գործ նորա՝ բարի և կամ ոչ , պատուաստեսցին յիմ վերայ . և արդ սիքն իմ ընտիր ընծայեսցեն զնոսա առաջի քո , և մանկն իմ հատուսցէ փոխանակ նոցա : Ընկալ զնա , և ընկալ՝ ի նոցանէ զհոտ հաշտութեան ընդ մարդկան ազգի : Այեցի՛ նա դէպ զթութիւն ապաւինանել աւուրս իւր՝ թէպէտև ի տրտմութեան , սակայն հաշտեալ առաջի քո . մինչև դա

տակինք նորա մահն (զոր մեղմասցուցանել ևեթ, և ոչ նհանջել յետս՝ խնդրեմ) ձգեսցէ զնա ի լաւագոյն կեանս։ Արդանօր ամենայն վրկեալքն իմ կացցեն ընդ իս ի խնդութեան և յերանութեան. և եղիցին ի ընդ իս, որպէս և ես ի եմ ընդ քեզ։

Արդ արար պատասխանի Հայրն անաղօտ պարզութեամբ՝ օրինակ զայս։ Պատարեսցին ամենայն խնդրուածք քո ի սակս մարդոյն՝ ոմ Արդի իմ հաճոյական, զի հայցուածք քո իմ իսկ են վճիռք։ Այլ օրէնքն՝ զոր ետու բնութեանն, ոչ ևս նեղեն նմա մնալ ի դրախտի անդ։ Օ՛ի մաքուր և անմահական տարերքն նորա ի բաց մերժեն անտի զաղտեղեալգ. և իբրև զնաւնուրդ ինչ Թանձրադոյն վարեն զնա ի Թանձրադոյն օդ, և ի կերակուր մահկանացու. զի նաքօք կարգեսցի նա ըստ արժանեաց յատկանութիւնն՝ որ մնծաւ ի ձեռն մեղաց. որ և զառաջինն վարակեաց զամենայն ինչ, և յանապականացուէն արար ապականացուս։ Այս ի սկզբան անդ արարչութեանն զարդարեցի զնա կրկին գեղեցիկ պարգեւօք երանութեան և անմահութեան։ Այլ նա զառաջինն կորոյս անմտութեամբ իւրով, և երկրորդն պահեցաւ նմին ի միանձնաւորել զաղետս նորին։ Մինչեւ զկնի հոգացայ զմա՝ որ է վերջին և միակ դարման նորա։ Օ՛ի սա ինքն՝ զկնի փորձելոյ նորա ի վիշտս, և մաքրելոյ հատատովք և հատատուիմ գործովք, աւանդեսցէ զնա երկրորդ կենաց՝ զարթուցեալ ի յարութեան արդարոց, և նորոգութեան երկնից և երկրի։ Այլ արդ կոչեցուք ի սահմանաց երկնից զհամօրէն երանեալս ի խոր

հուրդ. զի ոչ կամիմ Թագուցանել ի նոցանէ զգատաստանն իմ՝ զոր կամիմ յուցանել մարդկան ազգի։ Ո՛չ որ և տեսեալ նոցա յառաջագոյն ընդ յանցուցեալ հրեշտակս՝ առաւել և աստուածային յանդգնութեան անդ իւրեանց։

Ինքեաց նա զբան իւր։ Իսկ Աբդին ետ զվերնական նշանն լուսապայծառ պաշտօնէին՝ որ կոչեալ էր ի պահպանութիւն։ Այլ նա եհար ըզփողն՝ որ զկնի լսելի եղև ի Վարդեր յիջանել անդ Աստուծոյ. և միւսանգամ հնչեցոյց ի հասարակաց դատաստանին։ Այլոց հնչիւնն հրեշտակային զգաւառս համօրէն։ Այս ի ձայն վերին հրամանէն փութացան որդիքն լուսոյ յիւրաքանչիւր հովանեաց անթառամ ստուերին, յաղբերակսդ և ի վտակաց առընթեր ջրոյն կենաց՝ ուրանօր միանալ կայնն յընկերշակութիւն ուրախութեան, և եկեալ կալան զաթոռս իւրեանց։ Այս յայնժամ ասա ծանոյց Ադենակալն ի գերատիճան նեալ գահոյիցն զիշխանական կամ իւր՝ օրինակ զայս։

Ով որդիք երկնից՝ զկնի Հաշակելոյ մարդոյն զպատուն արգելեալ, գտաւ նա իբրև զմի ի մէնջ՝ Հանապազ զբարի և զչար։ Այլ պարծեսցի նա ընդ պիտութիւն բարւոյն՝ զոր կորոյս, և չարին՝ զոր և պիտ։ Ո՛չ արգասիս լինէր նա յաւէտ երջանիկ, եԹէ շատացեալ էր ընդ պիտութիւն բարւոյն և եթ, և չէր առեալ զփորձ չարին։ Ընդ որ այժմ ապա շահ նա, և արտասուօք մնալոյ զպիտութիւնս իմ։ Սակայն ես յառաջիմ իսկ շարժեալ կայի ի դուն՝ գիտելով չափ զանհասատատութիւն և զընդունայնութիւն սրտի նորա, ի Թողուլ իմում

զնա ՚ի ձեռանէ ։ Եւ արդ զուցէ ձգեսցէ նա և այժմ զանգուածն ձեռն իւր ՚ի ծառն կենաց , և ճաշակեալ անտի՝ կեցցէ ՚ի յաւիտեան , և կամ գէթ այնպէս համարեսցէ ՚ի միտս , տամ աւադիկ զգատակնիքն հեռանալոյ անտի ։ Զանցի՛ նա արտաքս ՚ի դրախտէն զործել զերկիր՝ ուստի առաւ. որ և է տեղի քաջավայելուչ նմին ։

Եւ զդ՝ Ա՛ինքայել , այս է իմ պատուէր առ քեզ· Ընտրեա՛ քեզ ՚ի միջի Հրովէհիյն զըսոցեղէն զօրս, զուցէ վերստին յարուսցէ Թշնամին զհառաչս Թիւնա՝ կամ ՚ի չարչն մարգոյն, և կամ առ՚ի տիրել պարապորդ ժառանգութեան նորա ։ Վասն զի և հմն արտաքս ՚ի դրախտէն Աստուծոյ զամբողջ յանցաւոր . հմն անիմաց զանաւրէնդ ՚ի վայրոյն սրբութեան ։ Եւ ծանո՛ նորա , և ծննդոց նորա առհասարակ՝ զերամանն իմ որ վասն մշանջենաւոր տարապրութեան նորա ՚ի տեղւոջէ անտի ։ Եւ զի մի՛ անկցի սիրտ նորա ընդ սատկութիւն յաւապին հրամանիդ ( զի տեսանեմ զնոսա խոնարհեալս, և արտասուօք ապաշաւեալս զանցանս իւրեանց ) Թագուաջիր յերեսաց նորա զամենայն ահարկութիւն ։ Եւ թէկ հնազանդին հրամանաց քոց համբերութեամբ , մի՛ արձակեր զնոսա անմիսիթարս , այլ յայտնեա՛ Հզամայ զհանդերձեալսն՝ որպէս և զիարդ լուսաւորեցից զքեզ ։ Խոստնեա՛ ընդ քանս քո և զուարճան իմ որ ընդ նորս դեալ զաւակի կնոջն ։ Այնու քանիւ՝ այնպէս հան արտաքս զնոսա ՚ի դրախտէն, զի գնասցեն ախրապին , այլ ոչ խռովեալ ։ Եւ յարևելից կողմանէ պարսիցն՝ ուրանօր գիւրին են ելք Հդեմայ , կայծ զՀրովէհական պահպանութիւնն , և զոռ-

յաճախալ հուրն յահարկուածին ի հեռաստանէ մարից նորա, և ի զգուշութիւն ձանապարհի ծառ ոմն կենաց։ Զոսկէ գոյն դրախտիդ բնակութիւն այսոցիկ չարաց. և այնպէս կողոպտեալ նոցա զնա մնալն ծառս իմ՝ ի ձեռն պաղոյ նոցա վերստին պատրեսցեն զմարդն։

Զադարեցոյց նա զբանս իւր. և հրեշտակապետական զօրութիւնն պատրաստեցաւ յարագ արագ ելս. ընդ նմին և պայծառատեսիլ գունդն Աբրամ բեկեալ զուարթնոց։ Ուրք և ունելին քառեակ դէմս ըստ օրինակի երկկերպարանին Յանովսի [6]։ Այլ տե սիլ կերպարանաց նոցա յաւէտ աստեղազարդ էր բազմապոյն աչօք քան զԱրգոս [7]։ Այլ ևքն նոքա յաւէտ արթուն, քան ի նմին խոնարհեալ ընդ քաղցրահնչիւն ձայն Աբրակաեանն [8] սրնգի հով ուական եղեգան Հերմէայ [9], և կամ դիւթական գաւազանի նորա։ Յայնմ պահու զարթեաւ Լ և կոթիա [10] ողջունել վերստին զաշխարհ ի լոյս մաք բաւեալ, և զմեռեալ զերկիր ի յօդ զուլպին։ Ա՛ր ինչ աւարտեալ Աբգամոյ և նախամօրն Աւ սայի զաղօթս իւրեանց՝ ընկալան ի բարձանց զա ռաւելութիւն զօրութեան, և զքաջալերութիւն վերստին կանգնելոյ յանյաւսութիւնէ իւրեանց. և պին զինդութիւն սրտի, թէպէտ տակաւին կա պեալ ընդ երկիւղ։ Այսու ուրոյ և Աբգամ զայս օրինակ երկրորդեաց առ Աւսայ զբանս ողջունի իւրոյ։

Ա՛պաքէն ոմ Աւսայ դիւրին լինի և մեզ հաւա տալ, թէ ամենայն բարիք՝ յոր վայելեմք, ի քա նեն ի վերուստ. բայց թէ մնրթ լսել ազգդդա պանի իմիք վերանալ ի մենջ յերկինս՝ մինչև կա

բոզ լինել շարժել զսիրան Աստուծոյ, որ օրհ-
նեալն է ի յաւիտեան, և խոնարհեցուցանել զը-
կաման նորա, այդ դժուարին Թուի ինձ ի հաս-
տատ։ Ակայն և այնպէս մնրեթ է աղօթից և
դոյզն հառաչանաց սրտի մարդկան կատարել զայն՝
սլացեալ ի վեր ի նայն իսկ յաթոռն Աստուծոյ։
Վանզի յորմէհետէ անկեալ յերկիր, և հեղեալ
զսիրտ իմ առաջի Աստուծոյ՝ ի խնդիր եղէ զնշու-
յանել զցաւումն նորա, Թուի ինձ տեսանել զնա
հաշտեալ ընդ ես, և զԹուլեամբ խոնարհեցու-
ցեալ առ իս զունկն իւր։ Յորմէ և առաւելաւ
յանձին իմում հաւանութիւն մտացս՝ Թէ լուաւ
ինձ մարդասիրապէս։ Վասրձաւ անդրէն ի սիրտ
իմ խաղաղութիւնն կորուսեալ. և ի միտս իմ
խոստումն նորա՝ Թէ զաւակ քո խորտակեսցէ զը-
գլուխ Թշնամւոյն։ Օ՜ որ յայնժամ առ անհնա-
րին երկիւղն ոչ կարացի առնուլ ի միտ. այլ այժմ
հաւաստեաւ տեսանեմ զանցանել նուաւ ի մինչ
դառնութեան մահուն, և զկենդանութիւն մեր։
Այս արդ՝ ուրախ լեր Աւետ՝ որ իրաւամբք կոչիս
մայր մարդկան աշխրի, և մայր ամենայն կենդա-
նեաց. զի քեզ կենդանի է մարդն, և քեզ կեան
ամենայն արարածք՝ որք կարգեալ էն ի պէտս
մարդոյն։

Ընդ Աւետ ետ զայս պատասխանի յաւագին
հին խոնարհութեամբ։ Այս ոչ համարիմ զանձն
իմ մեղապարտ՝ արժանի այնպիսւոյն անուանա-
կոչութեան, զի կարգեալ յօգնականութիւն քո՝
դաւադիր եղէ քեզ. վասն որոյ և յաւէտ ի դիպ
էն ինձ նախատինք, կշտամբանք և անուն չարու-
Թեան։ Ակայն և այնպէս դատաւորն իմ երկ-

նաւորը կարի բազմաւաստ գտաւ ընդ իս ի Թողու-
Թեան անդ. մինչև անձին իմոյ՝ որ զառաջինն
ձգեաց զմեզ ի վերայ աւենային արարածոց, գտա-
նել ի նմանէ զնորին լինելոյ աղբիւր կենաց ամե-
նեցուն: Ո՛չինի նորա դու լինքն ես բարեբար ան-
ձին իմոյ, զի հաճեցար կոչել յայդ անուն պան-
ծալի զարժանիս տարօրինակ կոչման: Այլ արդ
հրաւիրէ զմեզ դաշտավայրն ի քրտնաւատակ աշ-
խատութիւն՝ որ եգաւ ի վերայ մեր, Թէպէտև
զինի անքուն պիղերոյս: Այեակ, զի ոչինչ խնայ-
եալ առաւօտու յանհանգստութիւն մեր՝ խնդա-
զինս սկսանի զծայրակարմիր իբրև զվարդ զգնացս
իւր: Ո՛րդ՝ ելցո՛ւք արտաքս. բայց ոչ եւս մեկնե-
ցայց ի քէն յորո՛ւմ վայրի և աշխատեսցուք յա-
ռօրեայ վաստակս մեր՝ որ քրտամբք երեսաց կար-
գեալ է մեզ այժմ մինչև ցհանգարհել աւուրն: Այա-
կայն որպիսո՛ւմ վաստակոց մնաքն է լինել գժուա-
բաքերան ի դրախտիս փափկութեան՝ ցորչափ ու-
նիմք աստանօր զընակութիւն մեր: Այան որոյ
կացցո՛ւք աստ գոհութեամբ, Թէպէտև ի վիճակի
կործանման:

Ո՛յսօրինակ խոսեցաւ, և փափաքեաց ամե-
նահանարհն Ադամ: Այայց տեսչութիւնն վերին
ոչ կնքեաց զկամն նորա: Վանզի բնութիւնն ան-
դէն սկսաւ տալ զառաջին նշանս ապականութեան՝
տալաւորեալ զնոսին յօդն վերին, ի թուչունս և
ի կենդանիս: Ո՛չինի կարճատև կարմրութեան
առաւօտու՝ նահմանեցաւ օդին: Այուչունն Ո՛րսանզ-
դայ [11] ոչինչ հեռապոյս ի տեսութենէ աչաց նո-
ցա զարձուցեալ զօդատձեմ գնացս իւր՝ հալածա-
կան վարեալ զառաջեաւ իւրով զկրկին գեղեցկա-

վետուր Թուխտնս։ Կատարին Թագաւոր անտա-
ռաց՝ [12] որ յայնժամ գառաջինն գտաւ որսորդ,
այնգեցաւ ի լեռնէ անտի գՀետ գեղեցիկ ամուլոյն
այծեմանն և եղջերուի՝ և՛ ցանկալի բնակչացն անդ
առեալ։ Այրք և ուղղեցին զփախուստ իւրեանց յա-
րևելեան դուռն դրախտին։ Կատես զնոսա Կադամ,
և աչօքն գկնի ընթացեալ որսոյն՝ խօսեցաւ ակ-
առակցաբար ընդ Կւայի՝ օրինակ զայս։

Ո՛վ Կւայ՝ մեծ և՛ փոփոխութիւն մեզ.
զոր և ցուցանեն երկինք՝ ի բնութեան անդ՝ ի
ձեռն անբարբառ նշանացս՝ որք են յառաջընթաց
կարապետք կամաց նորա։ Կամ՝ Թերևս Հաւաս-
ոի ծանուցանէ մեզ զազատութիւն մեր՝ ի պա-
տուհասէ անտի, զի աւուրս լինէ գերծ գտաք՝ ի
մահուանէ։ Կւա՛ պիտէ, Թէ քանի՞ և ընդերկար,
և զինչ լինելոց են կեանք մեր միմեանս ցայսժամ։
Կւա՛ մեք զինչ պիտեմք առաւել քան զայս, զի Հող
եմք, և՛ ի Հող Հանդերձեալ եմք դառնալ, և այն
պէսոչ և՛ լինել։ Կպա Թէ ոչ՝ առիմ՞ ցուցան կըզ-
կին տեսարանքն փախստեան և Հալածանաց նո-
ւիրն օրինակաւ և՛ ի նոյն ժամու յօդն վերին և՛ ի
վերայ երկրի յանդիման աչաց մերոց։ Կնդ՞ը
երևեցաւ մեծութիւնդ՝ ի կողմանն անդ արևելից
յառաջ քան զմիջօրեայ ընթացս տունջեան։ Կւա՛
ընդ՞ը լոյս առաւօտու յաւէտ արևելեան ծագէ
՝ի վերայ արևմտեան ամպոյդ՝ որ սրկանի՞ ի վե-
րոյ կապուտակ Հաստատութեան երկնից զըտա-
փայլութիւն ինն սպիտակ. և յամր ելանի՞ ի խո-
նարհ՝ դոյգս բարձեալ զծանրութիւն լինչ երկ-
նային։

Կէ սխալեաց նա՛ ի տեսութեան անդ խրոմ.

զի յայնմ պահու վայրաբերեալ գնդին երկնաւո-
րաց յաստիսանման հաստատութենէ երկնից՝ ի
դրախտն՝ եկաց՝ ի վերայ լերին։ Որ եր արդարև
տեսիլ պայծառափայլ, եթէ երկմտութիւն և երբ
կիւղ մարմնական չէին ստուերացուցեալ՝ ի նմին
աւուր զայս Աստուած։ Վասնզի ոչ նուազ լուսա-
փայլ եր երևումն քան յորժամ ընդ առաջ ե-
լին հրեշտակք Յակովբայ՝ ի Մահանայիմ[13]. ուր
եւս նա զգաշտն լի վտանօք լուսապայծառ պա-
հապանաց իւրոց։ Այլ ոչ նուազ յուցաւ քան զայն՝
որ՝ ի բոցավառ լերին՝ ի Սովթայիմ[14] ծածկեալ
երևեցաւ՝ ի բանակ հրոյ ընդդէմ արքային Ասո-
ւոյ՝ որ՝ ի սակս ունելոյ զայր մի Աեթ, յարոյց
ըստ օրինի աւազակաց զպատերազմն առանց կանո-
խազգեցիկ յայտարարութեան։ Աթոռ անդ Վա-
հանայապետն իշխանական զգօրութիւնս իւր՝ ի
չքնաղ կայանս իւրեանց ունել զիշխանութիւն
դրախտին, և ինքն չոգաւ առանձինն՝ ի խնդիր
Աստուծոյ՝ որ կայր՝ ի Թագստեան։ Այս նորա տե-
սեալ՝ ի հեռաստանէ զգալուստ Պետապետին մե-
ծի՝ զայսօրինակ խօսեցաւ ընդ Աստուած։

Այժ արդ ով Աստուած լսել զմեծամեծս՝ ի բերա-
նոյ երկնաւոր պատգամաւորին, որ գայ Թերևս
որոշել արագ արագ զվիճակ մեր, և կամ դնել
՝ի վերայ մեր զնոր օրէնս՝ ի պահպանութիւն։ Օ՜ի
տեսանեմ զմին յերկնային զօրացն իջանել՝ ի լու-
սափայլ ամպոյդ՝ որ պատեալ կայ զերամբս։ Այս
ըստ երևութեանն ոչ է նա՝ ի սոսկականաց տանել,
այլ մի յերևելի Հրեշտակաց կամ Աթոռոյ յեր-
կինս. զի արկեալ է նորա զանձամբ զնոյնօրինակ
վայելչութիւն փառաց։ Այլ ոչ երևի այնչափ

ահեղ՝ մինչև երկնչել ինձ ի նմանե, և ոչ այնպէս ընտելական ըստ Աստիայելի՝ ալ մարթացայց կա- րի լինի համարձակել ընդ նմա. այլ շքեղ է և վեհափառ։ Արդ՝ ալ ի՞ շարժեցից զբարկութիւն նորա, արժան է ինձ գնալ ընդ առաջ նորա պատ- ուասիրաբար. և դու տեղի տուր ասեմ։

Հարաեաց նա զբան իւր. և Հրեշտակապետն անդէն մերձեցաւ առ նա, ոչ ի բնիկ կերպարան իւր երկնային, այլ զգեցեալ իբրև զմարդ՝ որ է- լեալ է ի խնդիր մարդոյ։ Բնկեալ էր զբաս- փայլ զարհիւրն զինուորական զգեստ ծիրանի, որ պայծառ փայլէր առաւել քան զԱղեքսէանն[15], և քան զորդանն կարմիր Ասառայի[16] զոր նախ- նի Ավիացազունք և արքայք արկանէին զանձամբ ի ժամանակի անդ դատաստան մարտի, զորոյ և նեկրկեալ էր Հիբրիկ[17] զառիւծ նորա։ Գտեղա- զարդ սաղաւարտ նորա արձակ՝ ցուցանէր զառոյգ գութիւն հասակի նորա, յորում տեղի տայ պա- տանեկութիւն։ Ո՛չ միջոց նորա իբրև զնշուլապեղ կենդանակամարէ[18] կախեալ կայր սուսերն յա- հարկութիւն Ասատնայի։ Այս ի ձեռին իւրում ունէր զգեղարդն։ Յոտարհեալ Արամայ՝ երկիր եպագ նմա։ Այս նորա ի բաց Թողեալ զարքայա- կերպ պերճութիւն իւր՝ զայսօրինակ ծանոյց նմա զպատճառ գալստեան իւրոյ։

Վերագոյն պատգամք երկնից չունէին ինչ Արդ- համ պէտս նախերգանաց։ Արդ՝ շա՛տ է քեզ պի- տել, զի լսելի եղեն աղօթք քո. և դատաւորիք մա- հուն՝ որում արժանի գտար յանցանել անդ ըզ- պատուիրանատն, ոչ եդան անդէն ի գործ. այլ ընդհեցան քեզ ընդերկայն աւուրս, զի կարող

լեցիս ապաշխարել ՚ի նոսա, և ծածկել զարու-
թիւն միոյ յանցանաց ՚ի ձեռն բազմապատիկ դո-
ծոց բարութեան։ Այլ յայնժամ հաշտեալ ընդ
քեզ Տեառնդ արարչի՝ իրաւամբք փրկեսցէ զքեզ
՚ի գիշատիչ ժանեաց մահուն։ Այլ արդ ոչ ևս
ներէ նա քեզ ինալ ՚ի դրախտի աստ. վասն որոյ
եկիր ես հանել զքեզ և արձակել ՚ի պարտիզէս,
զի երթեալ դործեսցես զերկիր՝ ուստի առար. որ
և է քաջալայելուչ տեղի անձինդ։

Այլ ոչ այլ ինչ յաւելու նա. զի հարեալ Ա-
մայ անհնարին ցաւովք յերեսաց պատգամին՝
լուծաւ, լքաւ, և անկաւ յերկիր նուաղեալ։ Ապ
Այսայ՝ որ լսեր զանխուլ ՚ի նոցանէ զամենայն բանս,
կական բարձեալ յանկարծակի՝ յայտնեաց զտե-
զի թագաստեան իւրոյ սովին ողբերգութեամբ։

Ո՞վ անակնկալ հարուածոյս չարագոյն քան ըզ-
մահ։ Ա՞ՀԵԼ պարտ իցէ լինել զայսօրինակ Թողուլ
զքեզ ո՛վ դրախտ, զայսօրինակ Թողուլ զքեզ՝ ըզ-
հայրենիսդ, զվայրդ փափկութեան, և զՀովանիդ
զարժանին Աստուածոյ՝ [19] յորում ակն ունէի ան-
ցուցանել հանգստեամբ Թէպէտև ցաւագին կե-
նօք, զժամանակն յերկարագութեան աւուրն՝ որ
հանդերձեալ է լինել մահահրաւէր երկոցունցս։
Ո՞վ ծաղիկդ՝ որոյ անմարթ է բուսանել այլուր,
դո՛ւք էք դարմանք իմումն խնամոյ վաղքաջ ընդ
առաւօտս, և անագան ընդ երեկս. զորս խանդա-
կաթ ձեռամբս մշակեցի անդստին ՚ի պակելոյ ձեր-
մէ, և եդի անուանս։ Այդ՝ ո՞ ուղղեսցէ զձեզ յա-
րեգական կոյս, կամ ո՞ դիցէ ՚ի դաստակարդի զազգս
ձեր, և ուռոգեսցէ Ա՞մբրոսեան [20] աւազանին։
Ապ զի՞արդ Թողից զքեզ ո՛վ Հովանոցդ իմումն

հարանեաց՝ զոր այնչափ գեղեցիկ անուշահոտու-
թեամբ զարդարեցի ։ Ոչխ մեկնեցայց ՚ի քէն ։
Առաւօտ չղջեցայց ՚ի խնարհագոյն երկրի անդ՝
որ առ դրախտիս խաւարաբնակ ինն է և առյի ։
Այս ի՞նչ մարթ է մեզ ձգել անդառնօր զոդն անմա-
քուր , որք աստ սովորեցաք ձաշակել յանմահա-
կան պտղոց ։

Ա.ԱՀ Երեւտակն դադարեցոյց զնա քաղցր բա-
նիւք՝ օրինակ զայս ։ Ահ աշխարեր ոմ Այաց , այլ
տար համբերութեամբ այնմ՝ զոր լրատարիք կո-
րուսեր ։ Այս մի կարի անձկանօք հաստատեր զչ-
սիրտ քո ընդ նմա՝ որ ոչ է քո ։ Ա.ԱՀ դու ոչ ես
մեկնելոց առանձինն , երթայ ընդ քեզ և այլ քո ։
Ա.ժամն է քեզ գնալ զհետ նորա ։ Առաւօտ և
բնակեսցէ նա , համարեա զայն ՚ի հայրենիս քո , և
տեղի սեպհական ։

Յայնմ վայրի զգաստացեալ Ա.ղամայ յանհնա-
րէն ցաւոց անձին , և ժողովեալ առ ինքն զցըր-
ուեալ ոգիսն՝ ուղղեաց զբան իւր առ Աստուած
զայսօրինակ խոնարհութեամբ ։

Երկնաւորդ Ա.Թոռոց անուն , և կամ գերա-
գոյնդ ՚ի նոցանէ (զի տեսիլ քո յայտ առնէ զքեզ
իշխան իշխանաց) , կարի քաղցրութեամբ ծանու-
ցեր ինձ զպատգամաւորութիւն քո , զի մարթ էր
նմա կարեւիլեր խոցել զմեզ , և վախճան տալ կե-
նաց մերոց ։ Ա.րդ՝ պատգամք քո բաց ՚ի ցաւոց
անուն , ՚ի տրտմութենէ , և ՚ի վհատութենէ սրտի՝
որոց մարթ էր հանդուրժել մերումն տկարու-
թեան , ածեն ՚ի վերայ մեր և զանձատումն ՚ի
դրախտիս փափկութեան՝ որ է միակ տեղի ցան-
կալի մերումն Թագաւորին . և ընտել գոլով աչաց

մերոց՝ Թողեալ էր մեզ ի միխթարութիւն։ Օ՛ի
այլ ամենայն տեղիք հանդերձեալ են երևիլ մեզ
անընտել և անասունքական. քանզի ոչ ձանաչեն
զմեզ, և անծանօթ են ի մէնջ։ Այսու որոյ եթէ
ակն ունիցի չըջել զկամս Յիսուսակալին պաղատա-
նօք, ոչ դադարիցի ի Թախանձելոյ զնա մեծապոչ
աղաղակաւ։ Սակայն պաղատանք չունկնդիր առա-
ւել ինչ զօրեալ ընդդէմ անհրաժեշտ վճռոյ նորա,
քան ցիչուհին բերանոյ ընդդէմ հողմոյ՝ որ սաստ-
կագոյնս շնչէ հակառակ նորուն իսկ փչողին։ Այլ-
իբրև հնազանդեալ կամ վերին հրամանաց նորա։
Ասաց յաւիտ յոյժ ընդ այն՝ զի մեկնեալ աստի
իբրև յերեսաց նորա, մնայ ինձ թագչել և զըր-
կիլ յերանաւէտ տեսութենէ նորա։ Այրթ էր
ինձ աստանօր մատչել ստէպ ի պաշտօն նորին ի
տեղւոջն՝ յորում հաձեցաւ նա յուցանել ինձ բա-
զում անգամ զաստուածային դէմն իւր. և պատ-
ուել որդւոց իմոց, թէ «երևեցաւ նա ի լերինս
յայսմիկ. եղոյց զանձն ընդ ծառովս ընդ այսուիկ.
լուսոյ զձայն նորա ի միջոյ սորոյիցս այսոցիկ. և
խօսեցոյց ընդ նմա առընթեր աղբերականս այսո-
ցիկ»։ Այրթ էր ինձ աստանօր կանգնել ի պա-
տարագեաց հողոյ զՀաձոյական սեղանս, կուտել
ի վերայ նոցա զողորկափայլ քարինս հեղեղատին,
և այնպէս մատուցանել ի նոսա զնուէրս անուշա-
հոտ կնդրկաց, ծաղկանց և պտղոց։ Այլ ի ստո-
րին աշխարհի անդ ուրանօր դարից զայցառա-
փայլ դէմն նորա, կամ զշաւիղսն ոտիցն։ Այանդր
աստանօր Թէպետև խուսափեալ յերեսաց բար-
կութեան նորա, սակայն վերստին կոչեցեալ յեր-
կարութիւն կենաց, և ի խոստումն ճշմարտոյս առնէ

լութեան՝ գիք զատորոտս փառաց նորա խնդա-
գին տեսանեմ, և երկիր պագանեմ հետոց գարշա-
պարաց նորա՝ թէպէտև ի հեռաստանէ ։

Որում Աղքատել եւ պատասխանի գիմալիր ա-
ջօք՝ օրինակ զայս ։ Վաղ գիտես Տ֊դամ, զի նո-
րա են երկինք և երկիր առհասարակ, և ոչ լոկ
լեառնս այս ։ Յանդիման երևի նա ամենայն ու-
րեք. և ընդ գերկիր, գծով և գօդն. և զօրու-
թեամբ իւրով արգասաւորէ զամենայն ազգս կենդ-
դանեաց ։ Այս եւ քեզ զամենայն երկիր ի ժա-
ռանգութիւն և յիշխանութիւն՝ որ ոչ է դուզ-
նաքեայ ինչ պարգև ։ Տ֊դ՝ մի համարիր զքեզ
փակեալ միայն յանձուկ սահմանի անդ զրախտիդ
կամ Եդեմայ ։ Այլ թերևս հանդերձեալ եր լի-
նել գահանիստ տեղի քո, և անդուստ սփռելոյ
էին ամենայն ազինք ընդ երեսս երկրի, և գալոց
էին այսրէն յամենայն ծագաց ի պատուել և ի
փառաւորել զքեզ իբրև զարժանայարդ Աստա-
ծայր իւրեանց, այլ դու կորուսեր զայդ պատիւ.
վասն որոյ և լինիս այժմ վայրաբնակ ընդ որդւոց
քոց ի վերայ դաշտագետին երկրի ։ Այլ մի երկ-
միր ի միտս քո, թէ գուցէ չգոյի Տ֊տուած ի
դաշտի անդ կամ ի հովտի՝ որպէս աստանօր, և
ոչ ցուցցէ զանձն իւր նովին օրինակաւ ։ Վասնզի
տակաւին բազմապատիկ նշանք յանդիմանու-թեան
նորա առնեայ ուրեք՝ գնացեալ զհետ քո, և շուրջ
պատեալ զքեզ հայրական խնամօք և գթու-թեամբ՝
ցուցցեն քեզ զդէմս նորա, և զշաւիղս աստուա-
ծային ոտից նորա ։ Այլ զի մինչև է քո մեկնեալ
աստի հաւաստի լինիս ընդ այն, և քաջալերեսցիս,
գիտասջիր՝ զի առաքեցայ ես ցուցանել քեզ զը-

հանդերձեալն, որք անցանէիցեն ընդ քեզ, և ընդ ծուռնդս քո առյապայս։ Արդ՝ պատրաստեա զանձն քո յուսնկդրութիւն բարեաց ընդ չարիս, և թշնամութեան մեղաց մարդկան ընդ հնարէն Աստուծոյ. զի կրթեալ զանձն քո ի ձեմարիտ համբերութեան, և խառնեալ զինդութիւն ընդ առաքինի երկիւղն և արամութեան՝ տարեգես անխուով մնաք ըստ կարի երկոցունց և՝ յաղթութեան և թշուառութեան. և այնպէս անցուցեալ զկեանս՝ գոյիս քաջ պատրաստական ի հանդուրժել և մահահրաւէր անցից օրհասին, ի ժամանել նորա առ քեզ։ Արդ ել դու ի վերայ լերինդ. և Աւսայ (յորոյ վերայ արկի զթմրութիւն) կայցէ աստանօր ի քուն, մինչդեռ կատ դու յարթնիցի ի տեսութեան անդ հանդերձելոցն. զորօրինակ և դու ննջեցեր երբեմն, այն ինչ զգեաւ նա զկերպարանն կենդանութեան։

Որում Գամ ետ զայս պատասխանի ախորժ հաճութեամբ։ Դաջնորդդ անմոլար՝ ել դու նախ, և ես եկից զկնի քումդ շաւղաց։ Հանդեմ զանձն իմ ի ձեռս Աստուծոյ՝ որում և օրինակաւ կամք իցեն նմա խրատել զիս։ Ատադիւր մատուցանեմ զանձն իմ ի դիմի ամենայն չարեաց՝ զինեալ զիս համբերութեամբ. զի կարող եղեց յաղթող հանդիսանալ ընդդէմ նոցին, և գտանել զհանգիստ իսկ անձին իմոյ ի քրանալեան վաստակս իմ, միայն թէ մարթացայց հասանել այնմ։ Եւ այնպէս ասա ելին նոքա ի լեառն աստուածային տեսլեան. որ և էր բարձրադոյնն ի դրախտի անդ։ Յընդարձակութեան անդ տեսութեան աչաց ի գագաթանէ նորա՝ տարածեալ կայր պայծառա-

աեսիլ կիսապուճան երկրի ։ Ա՛չ բարձրապոյն եր քան զայն, և ոչ ընդարձակատեսիլ լեառնն՝ յոր ըոյ վերայ ՚ի սակս տարօրինակ պատճառի կացոյց փորձիչն յանապատի անդ զերկրորդն մեր Ադամ, և եցոյց նմա զամենայն թագաւորութիւնս երկրի, և զփառս նոցա ։ Ա՛րդ եր աչացն Ադամայ տեսանել անդուստ զհամօրէն սահմանս երկրի՝ յորս կատուցան կացին զկնի երևելի քաղաքք մեծահռչակք ՚ի հին և ՚ի նոր համբաւս, և աթոռք հզօր ինքնակալութեանց [21] ։ Ակսեալ ՚ի պարսպաց անտի Կամբաղու՝ որ եր աթոռ Կաթայեանն կատնի, և ՚ի Մրզանդայ առ ափամբք Քսոսի՝ ուր թագաւորեաց Ղամուր, մինչև ՚ի փեքին արքայատնիստ Ակնեաց։ Եւ անդուստ մինչև Ադրա և ՚ի ահոռ մեծին Ոզլայ, և խոնարհագոյն ևս մինչև ՚ի Վերսանն ոսկի ։ Կամ՝ ուրանօր Պարսկաստանն նստաւ Ադկբատան, և ՚ի Պահան զկնի. կամ՝ ուր ինքնակալն Ասուաց ՚ի Ոսկով. և կամ Ոլտանն՝ որ ե քսիկ ծնունդ Ղուրքատուն, ՚ի Խուզանդիան ։ Ա՛րդ եր աչաց նորա տեսանել ևս զինքնակալութիւնն Ղեզուայ մինչև ՚ի վերջին նաւահանգիստն նորա Երկոկով. և զոր փոքրիկ ծովահայեաց թագաւորութիւնսն՝ Ոմբայոյ, Վուխլուվայ, Ալեղնդայ, և Ոզբաղայ՝ որ համարեալն ե Ավփիր, մինչև ՚ի սահմանն Կոնգոյայ և Ընգոլայ. և հեռագոյն ևս ՚ի կողմն հարաւոյ ։ Կամ անդուստ ՚ի գետոյն Ղիպերայ մինչև ՚ի լեառն Ադղաս, և՚ի թագաւորութիւնս Ազմանսովայ, Փեզայ, Ուսայ, Ա՛ռովկեայ, Ազկերայ, և Տրեվիսինայ։ Եւ անդուստ ապա զՀռոմ տիրապե-

տէր աշխարհի։ Ովերևս եաես նա հոգւովն և զմեծագանձն Աստիկով զաթոռն Անտեղուամայ. և զվուսկովն ի Պերու՝ զնա բազմահարուստ աթոռն Յոաբաղնպայ. և զտակաւին անկատուտան Վուխանա, զորոյ զմայր քաղաքացն որդիքն Վերխոմնայ [22] կոչեն Լը Վորտով։ Բայց ի սակս կարևորագոյն եւս տեղեանց ի բաց եաւ Աիքայել յաջայն Դամայ զպատրուակն՝ զոր ձգեալ էր զնոքօք պրտղոյն պատրանաց, խոստացեալ նոցին զպայծառագոյն եւս տեսութիւն։ Եւ ապա սրբեաց եւփրատ տէառ և փեգենայիս զտեսանողական կարողութիւն նորա, զի տակաւին հանդերձեալ էր տեսանել բազում ինչ. և կաթեցոյց ի նմա զերբեակ չիթս ի ջհորոյն կենաց [23]։ Եւ յայլ ազգեցոյ թիւն նոցին այնչափ ներգործեաց ի ներքին տեսութիւն մտացն Աղամայ, մինչև ստիպեալ նորա փակել զաչս իւր՝ անկաւ յերկիր թմբրեալ։ Բայց մարգասէրն Հրեշտակին անդէն վազվազակի ձեռն տուեալ նմա՝ կանգնեաց վերստին. և զմտադիր ունկնդրութիւն նորա միւսանգամ առ ինքն ժողովեաց՝ օրինակ զայս։

Բայց արդ Աղամ զաչս քո. և տես յառաջա գոյն զարդասիս սկզբնական մեղաց քոց ներդրծեալ յոմանս ի յետագայ ծննդոց քոց. որք թէպետ ոչ մերձեցան ընդ քեզ ի ծառն արգելեալ, չեղեն դաշնակից ընդ օձին, և ոչ յանցեան գյանցս քո, սակայն և այնպէս ելանէ ապականութիւնն ի մեղաց անտի, և ծնանի զդառնագոյն ծնունդս։

Եւ զաչս նա զաչս իւր, և եաես զդաշտն՝ որ էր մասամբ արօրադիր, և կայլն ի նմա որպէս նորա

հաս հնձող, և մաստամբ կարկեալ յարօտ խաշանց և հօտից ։ Եւ միջն նորա իբրև ի նշան կրկին սահմանաց՝ կանգնեալ կայր սեղան անզարդ ի գալա բաւեալ հողոյ ։ Արկրագործն բազմավաստակ [24] էած անդր փուխանակի զերախայրիս անդոյ իւրոյ՝ զհասկ գալարի, և զորայ սպիտակացեալ. բայց վեր՛ելվերոյ առանց ընտրանաց։ Հաս անդր ապա և Հովիւն հեզահամբոյր՝ [25] բերեալ զանդրա նիկս խաշանց իւրոց զընտիրս և զառիս ։ Եւ մա տուցեալ ի նուիրագործութիւն՝ եդ ի վերայ պատառեալ փայտիցն զիւորոտիս նոցա և զձարպ ինդրկախառն. և կատարեաց ըստ օրինի զպաշտօն զոհին ։ Եւ յերկնից անդէն վաղվաղակի հուր քաւութեան, և ծախեաց արագ արագ ի բոց և ի ծուխ անուշահոտ զպատարագ նորին ։ Եւ ակ զիւ սոյն ոչ նոյնպէս, զի ոչ էր անարատ ։ Ընդ այս դժուարեալ նորա՝ ի խօսել անդ ընդ եղբօր իւրում բրդեցաւ ի սրտմտութիւն բարկութեան ի վերայ նորա. և անդէն հարեալ զտոծանի նորա բարւոք՝ զրաւեաց զնա ի կենաց ։ Ընկաւ նա յերկիր այլագունեալ ի մահ, և եհան զոգի իւր սրսկմամբ հոտանաց արեան ։ Եւ Ադամ կարի ինն զգողանի հարաւ ընդ տեսիլն. վասն որոյ և անդէն աղաղակեաց առ հրեշտակն՝ օրինակ զայս ։

Ով ուսուցիչդ իմ երկնային՝ ահագին չարեաց դիպաւ այսն հեզահամբոյր, որ բարւոքն պատրաստեաց ։ Ախթե այս իսկ փոխարէնն աստուածպաշտութեան, և ամբիծ նուիրանաց ։

Ընդ Ադամ Ախթայել ինքնին իսկ աղեկիզեալ ընդ տեսիլն՝ արար զայս պատասխանի ։ Եղբարք են առաքն Ադամ, և հանդերձեալ են ելանել յերա-

նայ քոյ ։ Սպան առ նախանձու ամբարիշտն զաբ-
դարն, զի պատարագ եղբօր իւրոյ հաճոյ գտաւ
Աստուծոյ ։ Բայց ոչ կացոյկ նա առանց վըխժուց
Տեղման արեան եղբօր իւրոյ . և միւսոյն հաւատաք
ընդունելի՝ ոչ կորուսցին զվարձս . Թէպէտև տե-
սանէս մեռեալ աստանօր, և Թաթաւեալ՝ի հող
արիւնաշաղախ ։ Ո՛ւ այս երկրորդեաց Հայրն մեր ։

Աւազ դարձոյն, ընդ նմին և պատճառին ։ Ահա
այժմիկն ականատես եղէ մահու ։ Արդեօք այս իցէ
Հանապարհն՝ ընդ որ հանդերձեալ եմ ես դառ-
նալ՝ի տունն իմ բնիկ ։ Ո՞վ ահագին և սոսկալի
տեսլեանս, որ անբերելին ե յածել անդ զմտաս,
և քանիօ՞ն առաւել յանցանելն ընդ փորձ ։

Որովհետև Աստուած արար զայս պատասխանի ։
Տեսեր դու զմահ մարդոյ յայս առաջին օրինակ,
այլ բազմադիմի են չարիքք նորա՝ որք տանին զը-
մարդիկ՝ի խորխորատն խաւարչտին ։ Այս թէ-
պէտ սոսկալի են ամենեքին առհասարակ, այլ յա-
ւէտ ահ արկանէն՝ի մուտս անդ, քան՝ի ներքս ։
Արդ՝ որպէս տեսեր, ոմանք հանդերձեալ են մե-
ռանել բռնի հարուածովք, և ոմանք հրով, և
ջրով, և սովու ։ Այլ բազումք ևս յանչափս չը-
սպառութեամբ՝ի կերակուրս և յըմպելիս . որք
և հանդերձեալ են ածել՝ի վերայ երկրի զչարա-
չար ախտս ։ Որոց զանհամար բազմութիւն ինայ
քեզ արդ տեսանել զառաջեաւ, զի գիտասցես՝
թէ քանի՛ աղէտս չարեաց հասուցանելոց ե մարդ-
կան անժուժկալութիւն Աստի ։ Այս մինդեռ խո-
սեր Հրեշտակն, ահա յանդիման եղև աչաց Աբա-
համ տեղւոյ ինչ գարշատեսիլ և ստուերամած ։ Ծը-
ւէր լինել անկեալոց ինն հիւանդաց ։ Յորում

անկեալ կայնն բազմութիւնք ախտաժետաց ըմբռնելոց յերեսաց անհնարին ջղացաւութեան, բազմատապնաց ցաւոց, ոգետանջ նուաղման սրտի, բազմապատիկ ջերմանն, ցնցման վկանանց, սուկալի վերնոտութեան, դժնդակ հարբղխի, նեբքին քարանց, անյայտ վիրաց, ցաւոց աղեաց, մտաթափ մոլեգնութեան, թմրեցուցիչ սեւամաղձի, լուանոտ յիմարութեան, ծիւրիչ անտածութեան, յետին վտանգրութեան, համաձարակ ժանտախտի, ուռուցիկ ջրգողութեան, մահաբեր շնչարգելութեան, և անբերելի յոդուածացաւութեան։ Այսոքան որոց և ահագին եր ընդոստումն ի վեր, և բարձրաբարբառ յոգւոյհանութիւնք տանջելոցն ի նոցանէ։ Այնուստութիւնն փութաջան անցանէր մահձաց ի մահիճս հիւանդաց, և մահն յապաղեալ կան ատէպ արձակէր ի նոսա զնեստս իւր. բայց յապաղեր զմահացուցիչ հարուածն, թէպէտև ուխտիւք խնդրէին նոքա զայն՝ իբրև զմիակ բարի, և վերջին ախնկալութիւն իւրեանց։ Այլ որպիսի՞ ապառաժ սրտի մարթ եր տեսանել անթաց աչօք զայսպիսի տեսիլ աղետալի։ Այվին իբրև ոչ ժուժեաց և սիրտն Այդամայ, այլ արտասուեաց և նա՝ թէպէտև ոչ եր կանանցածին։ Օի կարելութիւնն բռնացաւ ի վերայ գերադոյն մասին նորա, և ետ նմա լուծանիլ յարտասու առ վայր մի, մինչև զկնի խոհական և խորհուրդք արպելլին զնա յանչափութենէ անտի։ Այս այսպէս ասա հաղիւ ուրեմն գտեալ նորա զբանս՝ զայսոքինակ նորոգեաց վերստին զողբս իւր։

Այվ եղկելի և թշուառական ազգ մարդկան՝ յո՞ր խորխորատ կորստեան կործանեցար, և յոր

սիսի չարաչար վհատակ պահեցար : Այսաքէն երա-
նելի ևս են նոքա՝ որք ոչ ծնան : Այլ ընդէր տա-
ւեալ եղեն մեզ կեանք՝ առ՝ի թափել զայն՝ ի մէնջ
սովին օրինակաւ : Անառաւանդ ընդէր բռնաբար
մուծաւ նա՝ ի մեզ : Օվ եթէ գիտացեալ էր մեր
զոր ընկալաքս , կամ ոչ ընդունէաք զտուեալ
կեանս , և կամ անդէն խնդրէաք մերկանալ զայն
՝ի մէնջ : Այլ մինչ մանրթ իսկ պատկերին Աստու-
ծոյ՝ ի մարդն՝ որ երբեմն ստեղծաւ այնչափ բարի
և անարատ , թէպէտև զինի գտաւ մեղանչական ,
խոնարհել յայնպիսի ահագին աղետս ընդ անա-
պորդն ցաւովք : Ընդէր ոչ գոյի մարդն ազատ
՝ի գարշահոտել տգեղութեանց անտի , կամ գէթ
մնասմբ իմն պահեցեալ զնմանութիւնն Աստուծոյ ,
փոխանակ զի գտաւ նա պատկեր նորա :

Որում ետ պատասխանի Աիքայէլ : Պատկերն
Աստուծոյ յայնժամ եթող զնոսա , յորժամ ինք-
եանք խնայարհեցուցին զանձինս՝ ի ծառայութիւն
անկարգ ախորժակաց . և ընկալան յանձինս իւ-
րեանց զպատկեր նորա՝ որում անձնատուր եղեն
՝ի ծառայութիւն, անբանական ասեմ ախորժն՝ որ
հրապուրիչն է առ մեզն Աւային : Այնմ իրի և
պատիժ նորին է կարի խիճ գարշելի : Որ և ապա-
կանի՝ ոչ զնմանութիւնն Աստուծոյ , այլ զնոցայն :
Այս եթէ և զԱստուծոյն եղծանէ , ինքեանք իսկ
ապականեցին զայն՝ թիւրեալ զողջամիտ կանոնս
անարատ բնութեան՝ ի գարշութիւն ախտից : Այլ
կարի յիրաւունս՝ զի ոչ պատուէն յանձինս իւ-
րեանց զպատկերն Աստուծոյ :

Այսպէս պղպակս է՝ ասաց Աւամ ցՀրեշտակն ,
և ես կամ հնազանդեալ կամայն Աստուծոյ . բայց

միթէ չկայցէ այլ ճանապարհ բաց ի բազմավիշտ անցից անտի՝ առ ի հասանել մահու, և տալ զանձինս համաբնակից հողոյ։

Այս արդարև՝ ասաց Աղեքսիէլ, եթէ բարւոք պահեսցես զկանոնս՝ Ո՛չ կարէ ի՛ն, զոր ուսուցանէ քեզ չափաւորութիւնն՝ ի կերակուրս և յըմպելիս. և խնդրեսցես ի նոցանէ զկարևոր և էթէ զալմանն կենաց, և ոչ զշռայլութիւն որկորոյ։ Եւ յայնժամ յոլովութիւնք ամաց պատեսցին զքեզ։ Եւ այնպէս հասուննացեալ քո իբրև զլատուր՝ անկցիս ի գերեզման մեր քո. և քաղեալ ժողովեսցիս ինքնին, և ոչ բռնաբար՝ ձեռամբ անադան մահուն կամ հասակի ծերութեան։ Այլ յայնմ ժամանակի կորուսցես զմանկութիւն քո, զպղծութիւն և զգեղեցկութիւն. զի դարձեալն նոքա ի զառամութիւն, ի տկարութիւն, և ի սպիտակութիւն առնեն։ Եւ զգայութեանց քոց բնացեալ՝ ոչ ևս առցեն զձաշակ բերկրութեան. այլ փոխանակ յուսապատար, խնդալից և առյդ մանկութեան՝ սիրեսցէ արեանդ սևամղձ խռնաւութիւն ցըրտութեան և ցամաքութեան։ Եւ այնպէս տկարացեալ զդիպէդ՝ սպառեսցէ ի վախճանի զքո լասան կենաց քոց։

Ո՛չ այս յաւել ասել մեզ Աղեքսիոս։ Ո՛չ երկնչիմ ես ի մահուանէ, և ոչ յանկամ երկայնութեան կենաց. այլ յաւէտ զոյն խնդրեմ, թէ և մարթացայց ըստ արժանեաց և հեշտեաւ զերծանիլ ի տաժանաւոր ծանրութենէս՝ զոր պարտ է ինձ կրել մինչև ցօրն սահմանեալ յաւանդ նորին, և սպասել համբերութեամբ լուծման անձինս։

Եւ Աղեքսիէլ ետ նմա պատասխանի։ Ի սի-

լեր, և մի առեր զկեանս քո. այլ զոր ունիս՝ կեայ բարիւք : Իսկ զերկայնութիւն և զկարճութիւն նորին Թո՛ղ ՚ի խնամն Աբրհմայ : Այլ դու այժմ պատրաստեա զանձն քո յայլ տեսիլ :

Հայեցայ նա, և եռես զգաշտ լինչ լայնածաւալ, յորում հարեալ կային բազմութիւնք նահապետաց խորանաց : Ու ոմանք ձորակէին հօտք խաշանց. և յայլոց լսելի լինէին ձայնք գեղեցկայարմար նուագարանաց՝ տաւղի և քնարի. զոր միանգամ լարէին զբազմաձայն նուագս, կամ հարկանէին զլարս [26], երևէին արտաքուստ : Որոց և առաջ արագ բազխումն յառաջ խաղացեալ ընդ ամենայն համեմատութիւնս գաշն և բարձր և թըւոյեալ խոտորնակի՝ զհետ երթայր վերահնչող փախստեան [27] : Այլոք կացեալ ուրուն [28] ՚ի գործս զաբբնոցի՝ հալէր զկրկին ստուարամարմին զանգուածս երկաթոյ և պղնձոյ : Օրս և գտեալ էր նորա՝ կամ ՚ի լերին անդ և ՚ի հովտի, ուրանօր ծախեալ հրոյն զանտառս չև մտեալ ՚ի խորշս երկրի՝ անգուստ խաղացուցեալ էր զնոսա ՚ի բերան բովուցն, և կամ հեղեղաց ջուրց հանեալ արտաքս ՚ի սառըերկրեայ խոռոչաց : Զուրեաց նա զլուծեալ մետաղս ՚ի քաջայարմար գաղափարս. և յօրինեաց ՚ի նոցանէ նախ զգործիս իւր, և ապա զանհնարին անօթս՝ զորս մարթ էր ձուլել և կամ քանդակել ՚ի մետաղոյ անտի : Օկնի սոցա եռես Աբգամ յայլում վայրի, զի տարօրինակ մարդիկ իջանէին ՚ի դաշտ անդր ՚ի բարձրութենէ մերձակայ լերանց՝ ուրանօր ունէին նոքա զբնակութիւն իւրեանց : Եւ երևէին արդարակորովք, և յօժարամիտք ՚ի պաշտօն Աստուծոյ, և

անձնատուրք ՚ի գիտութիւն երևելի արարածոյ նորա, և ամենայնի՝ որոյ մարթ է պահել զաղաւթութիւն և զխաղաղութիւն մարդկան։ Այլ մինչև էր նոցա կացեալ ընդերկար ՚ի դաշին անդ, ահա անդէն եղեալ ՚ի վրանաց նոցա չքնաղ պատուական կանանց պճնելոց ՚ի պատուական ականս, և ՚ի թանպագին զգեստս անառակութեան՝ նուագելոյն ՚ի քնար զմեղկագիտ ցուցս սիրոյ, և յօրինելոյն զկաքաւս ոտից։ Ակ արքն՝ թէպէտև էին խոհական, սակայն և այնպէս արձակեցին զաչս իւրեանց ՚ի նոսա, և Թողին յածիլ համարձակ։ Ալ ման որոյ ըմբռնեալ նոցա ՚ի ցանցս սիրոյ՝ բորբոքեցան ցանկութեամբ. և այր ի բաց քանչիւր ընդ արեալ ՚ի նոցանէ զցանկալին անձին իւրոյ, խօսակից էին եղև ընդ նմա մինչև ցերեկուայն ատեանն երեկոյի՝ որ կարապետն է սիրոյ։ Այս այնպէս ջերմեալ նոցա՝ լուսին զքահն հարսանեաց. և հրամանն ետուն կոչել զԻւդիմն՝ [29] որ յայնժամ զանաքինին կոչեցաւ յայն հանդէս։ Յայնմ վայրի հնչէին վրանք նոցա ՚ի ձայնէ խնջոյից, և երաժշտական նուագք։ Կնպիսի տեսիլ զարձալ, և հանդիպումն սիրոյ մանկութեան, երկոց նոցա, պսակաց, ծաղկանց, և սիրալի միաբանութեան նուագարանաց՝ խնամարհեցուցին զսիրտն Ադամայ յընդունելութիւն բերկրանաց. զոր և ծանոյց նա օրինակ զայս։

Երջանիկ սիրտ հրեշտակաց, և տիրապէս բարեկամ լսոց աչաց՝ այս տեսիլ Թուի ինձ յաւէտ ցանկալի քան զերկուս առաքինան, և զուշակ ինձ ակնկալութեան աւուրցն խաղաղութեան։ Կան զի առաքինքն տեսարան էին ատելութեան և մա-

հու։ Լակ ի սմա Թուի բնութիւնն պոհ լինել ընդ հաձոյս անձին իւրոյ։

Որում Աչքայել ետ զայս պատասխանի։ Աչի Թուեացի քեզ հեշտութիւնն ցանկալի, և քաջատրմանը բնութեան. զի չայլ ինչ ախնուագոյն, սուրբ և մաքուր՝ ստեղծար դու, ի նմանութիւն ասեմ Աստուծոյ։ Ա բանքս զոր տեսեր բազմազուարճ, եկն վրանք չարութեան ի բնակութիւն ծննդոց եղբայրասպանին։ Բրևէն նոքա տալ զանձինս ի խնդիր արուեստից առ ի դիւրութիւն կենաց, և են հնարագիտք ի չարատարութեան. բայց ոչ յիշեն զԲարիչ իւրեանց, և զՀոգին նոքա սուրբ՝ որ ուսոյց զնոսա. և ոչ իսկ ձանաչեն զպարգեւն նորա։ Ասկայն և այնպէս հանդերձեալ են նոքա ծնանել զդեղեցիկ ծնունդս, զչքնաղ պարս կանանց՝ զոր տեսեր, և Թուեին քեզ Աստուածուհիք ոմանք զեղազեշք և փափկամարմինք։ Բայց Թափուր են նոքա ի բարեմասնութենէ անմի՝ յորում հաստատեալ կան պատիւ և առաքինի պարծանք տնարար կնոջն։ Վանդի մնեալ են նոքա և կրթեալ միայն ի ձաշակս անառակ ցանկութեանց, երգոց, պարուց, պձնազարդութեան, շաղակրատանաց և աչարձակութեան։ Ասկայն պարկեշտասուն ծնունդք մարդկան՝ զորս աստուածպաշտութիւն և բարեվարութիւն նոցա կոչեաց որդիս Աստուծոյ, սոցա ընծայեն ի նախատինս անձանց զանմնայն առաքինութիւնս և զպարծանս իւրեանց՝ պատրեալք ի փաղաքշանաց դեղեցկացդ անաստուածիդ։ Որք և այժմ ընկղմեալ կան ի հեշտութիւնս, այլ զինչ առաւել և ասպականեսցին։ Ովիծալին արդ և խնդան, յայլ

սակս ողբասցէ զինի աշխարհ՝ աշխարհն արտասուաց ։

Որում արար պատասխանի Ադամ՝ վրկպ գրեալ ի կարձամանակեայ զուարճութենէն անցաւ ։ Ո՛վ անտանելի աղիտից , միանգամայն և ամենայն . զի որք մնին յայս կեանս այսպիսի լուսութեամբ , հանդերձեալ են՝ կամ խոտորիլ յուղղ շաւղաց անտի , և կամ անկանիլ ի կէս ձանապարհին ։ Այլ ես տակաւին տեսանեմ , զի ամենայն ջրիք մարդոյ յառաջ գան ի կնոջէ անտի ։

Ո՛չ այնպէս՝ ասաց ցնա Հրեշտակն , այլ յաւէտ յառաջ գան ի կնատութենէ առնն՝ որում արժան էր կալ հաստատուն խնամատութեամբ իւրով և առաւելագոյն պարգևօքն՝ զոր ընկալաւ ի վերուստ ։ Սակայն դու պատրաստեա զանձն քո յայլ նորոգ տեսարան ։

Հայեցաւնա , և տեես զընդարձակ սահման ինչ երկրի տարածեալ առաջի իւր . յորում կային անդաստանք , և քաղաքք մարդկան յօրինեալք հոյակապ դրամբք և բարձրաբերձ աշտարակօք ։ Տեսանէր անդ , զի ոմանք ընթանային ի զէնս , և ոմանք յուսյանէին զահագին գէմս՝ սպառնացեալ զպատերազմն . և ամենեքին էին արք հսկայք , յաղթանդամք և արիք ի շահատակութիւնս ։ Այլք շղաղուսյանէին զսուսերս իւրեանց , և կէսք մարգեալ կրթէին զփրփրալից նժոյգս իւրեանց ։ Այն էին նոքա հեծելազօրք և հետևակա մարտք ձակատեալք առանձինն , և կամ խառն ի միասին . այլ ո՛չ կային դատարկ ի հանդիսի անդ ։ Յայլում վայրի գունդ պրընտիր գաղնայր յաւարի՝ վարեալ զառաջեաւ զչոկս արջառոց՝

գեղեցիկ եղանց, և ընտիր կովուց, զորս յափըշտակեալ էր նոցա ՚ի պարարտարօտ դաշտաց, և ՚ի դալարագեղ մարգաց՝ զգեղմնաբարձ հօրանս մաքեաց և գառանց։ Որոց հովիւք մազապուրծ ձողապրեալ՝ կոչէին յօգնութիւն զարիւնախանձ մարտադիրն. և գումարտակք նոցա անդէն հասանէին ՚ի վերայ անողորմ զինուքն իւրեանց։ Յորմէ և գաշտավայրն ձարակետաղ խաշանց յաւաջադոյն՝ գառնայր յապականութիւն, ոռոգեալ ՚ի ձապաղիս արեանց, և ցանկալիքն սիրամարդ դիականց և զինուց։ Ա.յլոր ոմանք պատնէշ պահարման դնէին զքաջամարտ քաղաքօք, յարձակեալ ՚ի վերայ նոցա մանգղինօք, սանդղօք և ականհատութեամբ։ Ոմանք այլք զգեմ ունէին նոցա ՚ի պարսպայ անաւ նետիւք, սուինօք, քարամբք և ծծմբալից հրով։ Այս այնպէս յերկոցունց կողմանց գործէին անհնարին կոտորած, և հակայաղօր շահատակութիւնք։ Ոմանք այլոյր առ դրան քաղաքին քարոզքն գաւազանակիր կոչէին յաւետեան խորհրդոյ զժողովուրդն։ Այս անդէն վաղվաղակի գումարեալ ժողովեցան անդր ծերք և իմաստունք խառն ընդ մարտիկս։ Այս ամենեքին առհասարակ ունէին գնէին առհնաբանութեան՝ որ լսելի լինէր անդանօր։ Ոմանք փութանակի անցանէր այն յաղմուկ խռովութեան յերեսաց հակառակութեան նոցա ընդ միմեանս։ Ո՛րչափ յաբեաւ զինի ոմն իմաստուն և առաքինի [30]. և ձառարկեալ՝ խօսեցաւ երկարագոյնս յաղագս լռութեանց և անիրաւութեան, յաղագս արդարութեան և կրօնից, յաղագս ճշմարտութեան և խաղաղութեան, և յաղագս հանդերձեալ դատաստանացն

'ի վերուստ ։ Սակայն նոքա ոչ անասային նման. և ունէին և արկանել 'ի նա զձեռս իւրեանց՝ եթէ չէր լինեալ ամպոյն 'ի վերուստ, և յափշտակեալ զնա անտեսաբար 'ի միջոյ անտի խուժանին ։ Ընդ և 'ի զայրոյթ սրտից իւրեանց լցին զդաշտան համբրէն հարստահարութեամբ և բռնութեամբ զինուց, և ոչ դոյր անդ տեղի ապաստանի ։ Յոյր սակս յարտասուս հարեալ Դամոյ յերեսաց տեսլեանս, և դարձեալ առ Երեշտակն՝ ասաց ցնա ցաւագին կականաձ ։ Ով զինչ են սոքա. ահ մարդիկ, այլ պաշտօնեայք մնհոս, զի այնչափ անհնարին մահունս ածեն 'ի վերայ ազգի մարդկան, և բաղմապատիկ առաւելուն զյանցանս առաջին եղբայրասպանին ։ Այս ո՞ւմ ուսեալ հասուցանեն նոքա զայն չափ կոտորածս, եթէ ոչ եղբարց իւրեանց. զի ա մենեքին մարդիկ են առհասարակ ։ Այլ ո՞ւր այն իմաստուն՝ որ արդարև ունէր կորնչիլ յարդարութեան իւրում, եթէ չէր Աստուծոյ յափշտակեալ զնա ։

47 Orion համաստեղութիւն ըստ այլոց:
48 Որ Եգիպտոս:
49 Փարաւոն ալքայ ըստ սուրբ գրոց:
50 Մեմփիս մայրաքաղաք էր Եգիպտոսի:
51 Գաւառ Եգիպտոս՝ ուր պանդխտեցան Իսրայէլացիք:
52 Ելք. ծգ. 28-31:
53 Չայր Մովսէսի մարգարէի:
54 Գնա Եգիպտոս. Ելից Ժ. 13-15:

55 Ա՛յլաբանութիւն հիւսիսային կողման Եւրոպիոյ :
56 Գետ մեծ յԵւրոպա :
57 Լաւիներէն Danubius, մեծագոյն եւս գետ յԵւրոպա :
58 Անուն քաղաքի և նաւահանգստի՛ ի նեղուցին Սպանիոյ՝ որ բաժանէ զԱֆրիկէ յԵւրոպիոյ, Լաւերէն Gibilterra.
59 Անապատն Ափրիկոյ կամ Լիբիոյ :
60 Պարձեալ պաշտպանութիւն իրաւանցն Աստուծոյ :
61 Գիղեցիկ գիւտ բանաստեղծական :
62 Հոգին սուրբ տուիչ աստուածաշունչ պատգամիս :
63 Բառ եբրայական, և նշանակի՝ Աստուած, որ էն :
64 ՚ի· Թագ· ԺԸ· 15 : և Երեմ· Է· 30 :
65 Կոչի եւս Մեղքոմ· ՚ի· Թագ· Ը· 7 :
66 Տառապարտութեամբ ևեթ դնեմք զյատուկ անուանդ, զորս բերէ Մելտոնի ըստ եբրայական հնչման :
67 * Եւ չինեցին բագին Տափեթայ՝ որ ի ձոր որդւոցն Ենովմայ, որպէս զուստերս և զդստերս իւրեանց ի հուր ||· Երեմ· Է· 31 :
68 * Լացցուք զքեզ այգիդ Սաբեմայ ||· Երեմ· խը· 32 :
69 Asphaltic, նաւթի կամ կպրաքիւթոյ :
70 Եղանկր յԵգիպտոսէ :
71 * Եւ բանակեցաւ Խարայէլ ՚ի Սատիմ ... և նաւերև յաւ Ռէվիդովոյ : Եւ բարկացաւ Տէր ՚ի վերայ Խարայէլ ... և եղեն մեռեալքն ՚ի հարուածոցն յայնպանիկ քան և չորք հազարք ||· Թիւք· ԻԵ· 1 - 9 :
72 ՚ի· Թագ· 5 - 7 :
73 Դատ· ՚ի· 7 :
74 Կերպարանօք ևեթ :
75 ՋՃշմարիտ Աստուած :
76 * "Եւ զառնէն՝ որ ՚ի գիմաց Երուսաղէմի ընդ աջմէ լերինն Մոսաթայ, զոր շինեաց Սողոմն արքայ Խարայէլի Աստարտայ գարշելւոյ Սիդոնացւոց, և Քամոսայ գազզոստւոյ Մոաբացւոց, և Մելքոմայ գարշելւոյ որդւոցն Ամմնայ, պղծեաց արքայ (Յովսիա) : Եւ խորտակեաց զարձանն, և կոտրեաց զանտառն ||· ՚ի· Թագ· իզ· 13 - 14 :
77 Անուն գեղեցիկ չաստուծոյ, եւս և գեաղ ՚ի փիւնիկիա :
78 Խաւն ընդ կարմիր ասպղոյ Լիբանանու :
79 "Եսաիէն անդ կանայք, և ողբային զԹամուզ ||· Եզեկ· Ը· 14 :
80 ա· Թագ· Է· 2 - 4 :
81 * ՚ի մոանալ Տէառն իմոյ ՚ի առն Ռեմմանայ՝ երկիր պագանել նմա ||· ՚ի· Թագ· Է· 18 :
82 Ըստ մէջ Նաբանա· ՚ի· Թագ· Է· 12 :
83 Նեէման Ասորի· ՚ի· Թագ· Է· 17 :
84 ՚ի· Մնաց· իզ· 23 :
85 Զաստուած Եգիպտացւոց ընդ կերպարանաւք էգին :
86 Զաստուածուհի ընդ կերպարանաւք կովու :
87 Ծնունդ Ովսիրիդեայ և Իսիդեայ :

88 Սաղմ. ՃԵ. 19 - 20։

89 Ե. Թագ. ԺԲ. 28 - 29։

90 Ելք. ԺԲ. 12։

91 Ըստ Եբրայեցւոց Բէելիալ, և նշանակէ՝ ապստամբ, բանսարկու, ժանտ, անօրէն։ Իր յատուկ Սիդոնացւոց։ Դատ. ԺԹ. 22։ Ե. Կորնթ. Զ. 15։

92 Ե. Օրէնք. ԺԳ. 13։ ՌԻ. Թագ. Ե. 12։

93 Ծննդ. ԺԲ. 20. և ԺԹ. 4։

94 Դատ. ԺԲ. 22։

95 Յոհնա է կրկին դաւառ՝ ի Յուդաստան և ՅԱլեխ։

96 Յաւան որդի Յաբեթի՝ որդւոյ Նոյի։ Ի սմանէ ասէն սերեալ ղՅոյնս։

97 Երկինք։

98 Երկիր։

99 Որդի Աբրահեայ և Դեմեարի։

100 Ժամանակ։ Լատինք կոչեն զնա Saturnus.

101 Հռէա էր կին Կռոնոսի, և մայր Աբրամազդայ՝ Հօրն Աստուածոց։ Ըստ առասպելաց հեթանոսաց Կռոնոս կլա նէր զորդիս իւր՝ զորս ծնանէր նմա Հռէա, առ երկիւղ բռնակալելոյ ուրուք ի նոցանէ։ Բայց Հռէա թագուցեալ պատ րաստեաց զԱբրամազդ. որ և յաղթեաց հասեալ՝ խնդրեաց ըզ վրէժ ի հօրէ իւրմէ. և այնպէս թագաւորեաց ինքնին։

102 Կղզի ի Միջերկրական ծովու։

103 Լեառն ի Տրովադա։

104 Բարձրաբերձ լեառն ի Թեսսալիա։

105 Քաղաք առ ստորոտով Լերինն Պարնասոյ. ուր տայր Աղոլոն պատգամս։

106 Քաղաք Ասկիբոս. ուր էին կամնիքն հռ և Ասկեանն Աբրամազդայ։

107 Դորիս է քաղաք ՅԱքայիս։

108 Աղբիւր է քաղաք ի սահմանս Վէնէկոյ. յորմէ և ծով նորա կոչի Աղբիւրական ծով. ըստ մեզ՝ Հանդերձն անդունդք. Գործ. ԻԷ. 27։

109 Յաբեմեան կողմն Յուդաստանի՝ որ է Խաղիա։ Ըստ առասպելաց Կռոնոս փախուցեալ յերեսաց Աբրամազդայ՝ հանդ յԻտալիա։

110 ՅԱնգղիա, և այլն։

111 Սպանիա։

112 Կէզծեալ անուն Հրէշտակի։

113 Սպարապետական։

114 Նկարեալ էին ի վերայ դրօշակին զնիզ և յաղթեալ նակը Հրէշտակացն անկելոց։

115 Վիճ կամ գառարկուածին անսահման։

116 Ըստ առասպելաց հեթանոսաց է դուստր Վհի, և առաւածուհի խաւարի. և Բանասաւեցք խմանան նովաւ զվիճ Ճանին ոչնչութեան։

117 Կամ Դորիկեան, իմա Յունական։

118 Յոյն Հ՞րաչ, կիսատուած, քաջ, քաջամարտիկ:
119 Ի սրտից Դիւցազնից: Սովին բանիւք յուցանէ Միլտոնի զպիտանութիւն երաժշտական նուագաց:
120 Աշուն քաղաքի Մակեդոնիա:
121 Քաղաք ի Յունաստան:
122 Կոչի ևս Տրովադա: Զառասպելս մարդի Թզկաց ընդ խորգս կամ ընդ կռնկունս առնու Միլտոնի ի Հոմերայ:
123 Աստէա ոմն առասպելեալ Հեբրայեցի:
124 Անգղիական:
125 Ծովաբնակ կամ կղզեցի՝ որպիսի են Անգղիացիք:
126 Քաղաք Իտալիա:
127 Քաղաք ի Գաղղիա:
128 Մայրաքաղաք Սաւոյիա:
129 Փոգաւորութիւն և մայրաքաղաք Ափրիկէ՝ յաշխարհին Բարբարոսաց:
130 Քաղաք ի փոքուն Ասիա կամ ի Պոնտոս:
131 Ծովահայեաց քաղաք Ափրիկէ:
132 Փոգաւոր Գաղղիոյ, և առաջին ինքնակալ Հեբրայիա:
133 Քաղաք ի Սպանիա: Զնախակարգեալ առասպելս կամ զպատմութիւնս զինուորութեանց յաշխարհն յառաջ բերէ Միլտոնի, առ ի յուցանել զնուազութիւն կամ զպակասութիւն նոցա առ Համեմատութեամբ գժոխային զօրաց Սատանայի:
134 Ըստ կարծեաց ոմանց՝ որք ոչ են հմուտ ասուեալ բաշխութեան, ձեացուցանէ Միլտոնի զդան իւր:
135 Հրեշտակաց:
136 Զնախասահմանեալն Աստուծոյ ի յաւիտենից զարարչագործութիւն աշխարհի՝ սովին Ռաֆայելութեամբ գնէ Միլտոնի ի բերան Սատանայի:
137 Կամ Մամռնայ՝ չաստուած Աղուոյ, և ոսկեկան ընչից և մեծութեանց:
138 Կշռամբանք մեծատանց:
139 Նախասնունք ընչից:
140 Զաշտարակին Բաբելոնի:
141 Զբրգանց, և զհոյակապ վիճակաց Եգիպտոսի:
142 Հարիւր ամ:
143 Աշուն միոյ ի չորից Ռարաբապետական կարգաց:
144 Եգիպտոս:
145 Տապանակ, բազին, տաճար, մհկեան, և կամ բուրդն:
146 Կուռք Բաբելացւոց:
147 Սերափիս կամ Ապիս՝ չաստուած Եգիպտացւոց:
148 Հրամանատար:
149 Իտալական, զի Աւսոնիա մասն է Իտալիոյ:
150 Կախազուցիչ. է մի յանուանց Հեփեստեայ չաստուծոյն՝ որ էր Ռարաբապետ դաբլին:
151 Կոչի ևս գագաթնակէտ ըստ Աստղաբաշխից:
152 Յայս կղզի ընկեցաւ ըստ առասպելոյ դաբչաեւ

սիլ որդին Աբրամազդայ Հեփեստոս՝ առ ի պատրաստել անդ զանթեռս նորա ։

153 ի Յունաստան ։

154 Պանդէմոն կամ Պանդեմոնիոն ի յոնական բարբառ նշանակէ ամենայն, զոր գեղեցիկ հնարեաց Միլտոնիւ ։

155 Banim. զոր այլք Թարգմանեն Հեթանոսական ։

156 կենդանակերպ ։

157 Երկրի ։

158 Որմանց ոչ թուի ընտիր այս գիւտ բանաստեղծական ։

159 Քան առասպելից ։

160 Քան պատմութեան պատառանց ։

161 Lords. Քան որմանց յայս անուն ակնարկէ Միլտոնիւ զառաջ Աստեղակալս խորհրդարանին Անգղիոյ ։

162 Առաջին գիրքս քան Տրնիլայ գտցիկացի Թարգմանչի բանաստեղծութեանս ՝ թէպէտև ոչ է վերծ ի թերութենէ անտի, սակայն իրաւամբք համարի իրրև զի յընտրելագոյն մասանց նորա ։

---

## ԳԻՐՔ· Բ·

1 Անուն կղզւոյ ի ծովուն Պարսից՝ յորմէ եկանէ Մարդարիտ ։

2 Աչխարհ մեծագանձ ։

3 Առաւել բազմահարուստ քան զայլ մասունս աչխարհի ։

4 Ընդ Աստուծոյ ։

5 Մղոյք նշանակէ թագաւոր ։ Եւ Հոմերոս և զաւազանակիր կոչէ զայքայս ի նշանակ իշխանութեան և զօրութեան նոցա ։

6 Տես ի (38) Ճանօթ. ա· գրոց ։

7 Առարիէ ի դիմաց այլոց ։

8 Տայ պատասխանի ի դիմաց իւրոց ։

9 Կարի ի գէպ են բանքս մղեալին բնաւորութեան Մղոյքայ ։ Եւ քան Տրնիլայ՝ ՝ միայն Միլտոնիւ խոռվայոյզ, և կարի ինն սիրող ազատութեան՝ կարող էր գնել զայդոսիկ ի բերան նորա ։

10 Ջքաղցրութիւն ։

11 Մղոյք ։

12 Յաներևոյթ կամ յանկայա Թռիչս ։

13 ի միջոցի անդ գԺոխոց և երկնից ։

14 Ընչութեան ։

15 Չրեղէն ծով գԺոխոց ։

16 Խօսի ի դիմաց այլոց ։

17 Ընքերն տայ պատասխանի ։

18 Ճարտար են բանք հեշտասիրին Բելիարայ ։

19 Ընչեւրութիւն։
20 Սամ. ԺԷ. 11-13. և ղԼ. 2։
21 Աղտաս ըստ առաստպէլաց էր Թագաւոր Մաբրիանիոյ, և բառնայր զերկինս ՚ի վերայ ուսոց խրոց. որ և փոխարբ կեցաւ ՚ի լեառն։
22 Որպէս և Սատանայ Ծանոյց յառաջագոյն։
23 Պարձեալ իրաւունք անքննելի գատաստանացն Աստուծոյ։
24 Խօսի ըստ ոճոյ Աշխարհագրաց։
25 Սպեղանի անուշահոտ։
26 Յաշխարհն Նորատաեղծ ՚ի բնակութիւն մարգոյն։
27 Ընչեւրութեան։
28 ՚Ի խառնիխուռն սահման ոչխից կամ գատարկութեան։
29 Դեղեցիկ իրատ գահակալաց։
30 Ընտիր է և այս իրատ Մելոտիկի։ Աւել ըստ Տըլա-դուբայ Գազղիացի Թարգմանչի՝ լաւ և առնէր նա, եթէ փոխանակ միաբանութեան գժոխացնոց՝ նկարագրէր զերկպատակութիւն նոցա, զնայլ խղճի մտաց, և զկշտամբանս միմեանց ՚ի սակս ապստամբութեան ||։
31 Տես ՚ի ծանօթութեան (35) ից գրոց։
32 Որպէսզոս է լեառն ՚ի Յունաստան. առ սաղոտով նորա ՚ի չորս ամս միանգամ կատարէին զձանգէսս սրբոյ ւանոց, ձիրնեթացից և ըմբշամարտութեանց։
33 Նշդիպէս յօրինէին ՚ի Յունաստան երգս և հանդէսս խաղուց ՚ի ընորհս Պիւթեան Աբրամազդայ։
34 Աւյլեանութեամբ խօսի Մելոտիկ։
35 Տիւթոն կամ Տիւթէոս ըստ առաստպէլաց էր Հսկայ երկրածին ընդդիմամարտ երկնից։
36 Աչն է Հերակլէս կամ Հերքիւլէս։
37 Քաղաք ՚ի Յունաստան։
38 Գաւառ ՚ի Յունաստան։
39 Կամ Լիբքաս՝ սրբանեակ Հերակլեայ, որ երբեք առնա զպատմուճանն Թունաւորի՝ զոր առաքեաց կինն իւր։
40 Աշուն լերին ՚ի Կրետէ։
41 Աշուն ծովու ՚ի Յունաստան։
42 ՚Ի զգուշութիւն Աստուածաբանից կարգէ Մելոտիկ զբանս իւր։
43 Որպէս յաստուածաբանութեան անդ, նոյնպէս և յիմաստասիրութեան պահարակէ Մելոտիկ զնաոսն երբութիւն և զմարտարութիւն բանից։
44 Աւաջին գէտ ՚ի գժոխս ըստ առաստպէլաց Հեթանոսաց։
45 Երկրորդ գէտ։
46 Կամ Կոկիւտ՝ երրորդ գետ. և Նշանակէ՝ ողբ կամ հեծութիւն։
47 Չորրորդ գետ՝ յորգեռանդն կոչեցեալ։
48 Հինգերորդ գետ՝ անյուշ կարգացեալ։
49 Յայս անուն կոչէր Ճահիճ։

50 Քաղաք Հեգիպտոս :
51 Անուն լերին Հեգիպտոս :
52 Յայս անուն կոչին ըստ առասպելից վերջիվանդիր Աստուածքն 'ի գԺոխս :
53 Անուն միոյ յերից Գորգոնեան անուանեալ քերց՝ որք ըստ առասպելից ունէին գԺնեայ աչս , և փոխարկէին 'ի քարինս զորս միանգամ հայէին ընդ նոսա :
54 Ուրդ Աբամոզդայ գառասպարտեալ 'ի գԺոխս , որոյ Ծարաւ ըստ առասպելից ոչ հիջանէր անդ :
55 Բարձրաբերձ լերինք Հիւբրոպիա :
56 Երեք ԺանտատեսիլՔորք ըստ առասպելից , զորոց գՀերա Աթենաս փոխարկեաց յօձս :
57 Եւթնագլխեան օձք ըստ առասպելից :
58 Մատացածին հրեշք :
59 Յայսոսիկ զբօսանս դիւաց՝ ոչ գոհանի ըստ Տրվելայ գաղղիացւոյ ընտիր Ճաշակ բանաստեղծութեան :
60 Որ լինի երկից 'ի տարւոջն . 'ի 21 Մարտի , և 'ի 21 Սեպտեմբերի :
61 Սահման երկրի յարեւելեան Հնդկիս :
62 Մին 'ի Մողոքեան կղզեաց 'ի Հնդկիս :
63 Միւս ևս կղզի անգամօր :
64 Նահանգ մեծ ՀԱփրիկէ :
65 Ծովահայեաց կողմն Աֆրիկոյ՝ կոչեցեալ Սարաւանդ համ Գլուխ բարի յուսոյ :
66 Կողմն երկնից ըստ Աշխարհագրաց :
67 Ըստ առասպելացն մահանուն եռագլուխ շան՝ պահապանի դրանց գԺոխոյ :
68 Հրեշք Ծովային փոխարկեալ 'ի ժայռ առ երի Սիկիլիոյ . յորոյ արգանդէ ելանէին կառապի շունք :
69 Գաւառ Իտալիա :
70 Ան է Սիկիլիա :
71 Կոչի և Լապտեիա, երկիր 'ի հիւսիսակողման Եւրոպիոյ :
72 Կանթռհաւատ պառաւանց :
73 Տես 'ի Ծանօթ . (52) :
74 Օձակալ համառատեղութիւն յարջային բևեռի երկնից :
75 Անուն Ծովու 'ի Պարսկաստան :
76 Ըստ առասպելաց հեթանոսաց Աթենաս չաստուած Ծուխի զայսօրինակ ծնաւ յուղղայն Աբամոզդայ :
77 * Յանկուցիւնն յղացեալ՝ զմեղս ծնանի . և մեղքն կատարեալ՝ զմահ ծնանին ‖ . Յակոբ . ա . 15 : Այլ ընդ այսպիսի պղաբանութիւնս Մելտոնի ոմանք կարի լիին զարմանան , և ոմանք ոչ հաճին :
78 Ջհայթ մատն խղճի գեղեցիկ լիին նմանեցուցանէ Մելտոնի հաչման շանց 'ի գԺոխս :
79 Մեղսասիրաց :
80 Տես 'ի (35) Ծանօթ . ա գրոց :
81 Անուն գեայ 'ի գԺոխս . գնի և վոխանակ գԺոխոյ :

82 Ծով համատարած՝ օրինակ անսահման անդնդոց կամ դատարկութեան :
83 Ընչութիւն :
84 Դատարկութիւն կամ խառնակութիւն :
85 Աբրատոց, եղելոց յոչնչէ :
86 Խառնիխուռն և անկարգ իշխանութիւն :
87 Մանր կամ առաջին մասունք տարերց, շամանդաղք :
88 Անուն ահագին անապատի ԱՒփրիկէ :
89 Նախկին անուն Բարկայ :
90 Դատարկութիւնն կամ խառնակութիւնն :
91 Ջոր աստուածացուցին Հելեմանոք :
92 Գոլով տակաւին յոչնչութեան անդ, կամ յանկերպան վիճակի արարածոց :
93 Ջերկէր, ընդ որում խմանայ և զգունաս Լուսաւորաց :
94 Ըստ առասպելաց հաստատածուհի մարտի, և գուտոր Աբեսայ :
95 Ծխոյն կամ գոլորշեաց :
96 Զի 'ի խորասոյզ լինել նորա՝ ոչ ևս կորուսանէին մարդիկ զերջանկութիւն իւրեանց :
97 Gryphon, առասպելեալ կենդանի խառն ընդ արծիւ և ընդ առիւծ՝ կարգեալ 'ի պահպանութիւն գանձուց :
98 Անուն առասպելեալ ժողովրդեան :
99 Գեղեցիկ նկարագրութիւն համատարած գիշերոյ կամ դատարկութեան :
100 Զի յոչնչից կամ 'ի խաւարէ անտի ծագեցան արարածք :
101 Մականուն Պղուտոնի հաստատածոյն դժոխոց :
102 Միւս ևս հաստատած դժոխոց :
103 Ընկեր Գիշերոյ և Յաւիտենականութեան. զորոյ զանուն առ ահի ոչ առնուին հեթանոսք 'ի բերան :
104 Հաստատածք են առաք ըստ հեթանոսաց. և պաշտօնեայք վհի՝ ըստ Բանաստեղծից :
105 Անուն նաւուն՝ որ էած զԱրգոնաւորդս 'ի Կողքիս :
106 Եղեալ Կոստանդնուպոլսոյ :
107 Լատիներէն Ulysses, էր մի 'ի քաջազանց Տրոյական մարտի :
108 Անուն յորձանուտի 'ի ծովուն Սիկիլիոյ հանգէպ Սկիւղեան ժայռի :
109 Դարձեալ պաշտպանութիւն աստուածային արդարութեան :
110 Ակն ինչ պատուական սպիտակափայլ :
111 Ըստ Տըլիլայ գաղղիացւոյ՝ *յայս երկ սակաւ են թերութիւնք, և բազմապատիկ գեղեցկութիւնք : Եւ որպէս յառաջնումն, նոյնպէս և 'ի սմա աքանչելի են բանք և նկարագրութիւնք Միլտոնի : Եւ երևակայութիւնն բանաստեղծական ոչ ցուցաւ երբէք այնչափ բազմաբեղուն և ինքնաբուղխ, որպէս 'ի սմա ||:

## Գ Ի Ր Ք · Գ ։

1 Զեղմունք սրտի զաչացու բանաստեղծին Միլտոնիի ցանկան գովել զլոյն զգալի կամ եղական՝ ընդ իմանալոյն և անեղականին ։

2 ա · Յովհ · ա · 5 ։ ա · Տիմոթ · է · 16 ։

3 Յովը · լը · 19 ։

4 Ծննդ · ա · 1 - 3 ։

5 'Ի գժոխոց · սէս (35) ծանօթ · ա գրոց ։

6 'Ի գժոխս, և յանդունդս դատարկութեան ։

7 Ըստ առաստելոյ Որփէոս որդի Աբրամազդայ զմայլեցոյցանէր զանչունչս 'ի ձայն քաղցրանուագ քնարի իւրոյ ։

8 Յաստուածաշունչ գրոց, 'ի պատգամաց Հոգւոյն սրբոյ ։

9 'Ի կուրութեան անդ աչացս ոչ կորուսի զտեսութիւն մտացս ։

10 Drop serene, այսպէս կոչի ըստ Բժշկայ ախտակրութիւնն աչաց ցաւագին Միլտոնիի ։

11 Ընդ հոգևոր Մուսային ոչ թողում ասել և զարտաքինան։

12 Տաճարն երուսաղէմի՝ տեղի պատգամացն Աստուծոյ ։

13 'Ի կուրութեան անդ, և և յանքուն գիշերի ։

14 'Ի կեդրոն և 'ի Սեղովա ։

15 Ըստ առաստելոյ էր դեղեցկանուագ Թռան Ապողոնի. զորոյ զաչս հանին Մուսայք առ նախանձու ։

16 Մականուն Հոմերոսի կուրի, զի հայր նորա կոչէր Մէոնիս ։

17 Զորոյ զաչս կուրացոյց Հերա ըստ առաստելոյ. բայց Աբրամազդ շնորհեաց նմա զհոգի մարգարէութեան ։

18 Եւ զսորա զաչս զրկեաց 'ի լուսոյ Բորէաս. բայց զինի գաւաւ մարգարէ ։

19 Զբանաստեղծութեան յատանաւոր բան ։

20 Լուսաւորութիւն աստուածային ։

21 Ընտիր են գորովալից նախերգանքս. և թէպէտ արտաքոյ ընթացից բանաստեղծութեանս, այլ վայելուչ անցք 'ի խաւարէ անտի գժոխոց 'ի լոյսն վերին ։

22 Եսայ · ղ · 1 ։

23 * Որ է լոյս փառաց, և նկարագիր էութեան նորա ... նստաւ ընդ աջմէ մեծութեանն 'ի բարձունս ‖ · Եբր · ա · 3 ։

24 Խաւարային անգնդոց կամ դատարկութեան ։

25 Այս բանք երկայնաձիգ՝ յաւէտ աստուածաբանական քան բանաստեղծական, որպէս և վաստաքանութիւնն 'ի բերանի Ադենակալին՝ ոչ այնչափ ընտիր երևին ոմանց 'ի չննչաց, թէպեաև քաջ յուցանէն զարգարութիւնն Աստուծոյ ։ Այլ զնորին վարդապետութիւնն անձնիշխանութեան մարթի է յուղիղ միտս իմանալ ։

26 Ambrosial, Ամբրոսեան:

27 Քրիստոսի՝ որ էղև արդարութիւն մեր:

28 Նոյնպէս և այս բանք Հօրն երկնաւորի երկարատա-
ւում են ըստ քննչաց, և ոչ այնչափ վեմ:

29 Յայտ. ը. 1:

30 * Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյն-
պէս եաւ և Որդւոյ ունել կեանս յանձին իւրում ||. Յովհ.
Ե. 26:

31 * Զան որոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց.
և շնորհեաց նմա անուն՝ որ 'ի վեր է քան զամենայն անուն ||.
Փիլիպ. բ. 9:

32 Ժամանակ երջանկութեան ըստ Բանաստեղծից:

33 ա. Կորնթ. ԺԵ. 28:

34 Նոյնպէս և յայս բան Հօր սակաւ է վսեմութիւնն բա-
նաստեղծական:

35 Զայնիւ ցնծութեան:

36 Օրհնաբանք:

37 Ականակիտ:

38 Երկնային կամ երանական գաշտք ըստ Բանաստեղծից:

39 Ընտիր է յաւելուածս Միլտոնի ընդ երգս Հրեշ-
տակաց:

40 Բարձրաբերձ լեառն 'ի Սիւթիա:

41 Որք են բնակիչք հիւսիսային կողման Ասիոյ:

42 Գետ Հնդկաց:

43 Hydaspes, միւս ևս գետ 'ի Հնդիկս:

44 Անուն գաւառի Ասիա:

45 Կոչին ևս Սիներացիք կամ Քինեցիք:

46 Ասն է՝ ընաւակս:

47 Օդոյ կամ հաստատութեան երկնից:

48 Աբիոսա խելացնոր բանաստեղծ Խոտլացի. որում
յայսմ մասին նմանող գտաւ Միլտոնն 'ի գրախտի անդ Յե-
մարաց:

49 Խմա 'ի գրախտն Յեմարաց կամ զակատելոց զկնի մնո-
ւեաց՝ զոր ըստ օրինակի Աբիոսաեայ ձևացուցանէ Միլ-
տոնն յօդն վերին կամ 'ի հաստատութեան երկնից: Գնե-
ցիկ իմն է արգարև գիւտ բանաստեղծիս, եթէ ապանդ նորա
ոչ ձգեր զնա 'ի կատակական ճշմարտութեան:

50 Ծննդ. ը. 2-5:

51 Ծննդ. ԺԱ. 4:

52 Աշխարհակ ընդունայնութեան կամ խառնակութեան:

53 Խմաստասէր յոյն:

54 Հրաբուղխ լեառն 'ի Սիկիլիա:

55 Միւս ևս յոյն խմաստասէր:

56 Աղքայութեանն կամ երջանկութեանն՝ զոր խոստա-
նայր Պղատոն աշակերտաց իւրոց զկնի մահուան: Էղեւսիոն
ըստ առասպելոյ է գաշտ կամ տեղի բնակութեան երա-
նելեաց:

57 Մելտոնէն աստանօր երկայնէ զնկարագրութիւնն դրախտի կամ լնմպոսի Հիմարաց, այլ լաւ ևս ասել՝ իւրաւնի օտար մտածութեան. զի ինչ ինչ՝ ի Քրիստոսական աւանդութենէդ անտի համարի անոտիապաշտութիւնս. և՝ ի շնորհս աղանդակցդ իւրոց ծիծաղի զնոքօք՝ ոչինչ ընդհատ՝ ի անոտի գործոց հեթանոսաց: Վասն որոյ և մեք իրաւամբք՝ ի բաց թողաք զմարգմանութիւն այնր հատուածոյ, որպէս և բազումք յուղղափառ թարգմանչաց երբոպացւոց: Որ և ըստ Տըլեմայ՝ է յաւէտ նուաստախոհ և վանաբէ մանն ազջոյն բանաստեղծութեանս: Եւ ըստ Տըլագուբայ՝ Մելտոնէն՝ ի Լիմպոսի անդ խնդրեաց առանձին ինն զնբը աեղւ:

58 Վերին օդոյ կամ հաստատութեան երկնից:

59 Padan-Aram.

60 Կամ Բէթելայ. Ծննդ. իը. 12-19:

61 Որ է օդն հաստատութեան երկնից:

62 Ը. Թագ. ը. 11:

63 Խորայէլացւոց. զի Հրեշտակք իջեալ յերկնից՝ ի Սիոնէ՝ պատգամաբեր լինէին նոցին:

64 Եւ այս է սահման ազջոյն երկրին աւետեաց:

65 Համատարած ծովու. զի որպէս ալեաց սորա, նոյնպէս և սահմանաց խաւարի հրաման տուեալ էր Աստուծոյ չելանել ըստ չափ:

66 Կշիռ կենդանակերպ ըստ Աստեղաբաշխից:

67 Խոյ կենդանակերպ:

68 Ըստ առասպելացց կին Պերսեայ. և ըստ Աստեղաբաշխից համաստեղութիւն յերկինս:

69 Աքսպէս կոչի Ովկիանոսն ընդ մէջ Եւրոպիոյ, Ափրիկոյ և Ասիոյ:

70 Հիւսիսային և հարաւային ծայրք աշխարհի:

71 Գիւտք Բանաստեղծից, բայց այժմ անցանեն՝ ի կարծիս փիլիսոփայից:

72 Խաղական, ըստ Խորենացւոյն Եբենոսեան:

73 Գիղեցիկ խրատ հին և նոր փիլիսոփայից. որոց թողեալ զզարմանս ընդ գեղեցկութիւն Մոլորակաց՝ զմտացս ծին քնակիչս խնդրեն՝ ի նոսա:

74 Զի պէսպէս են կարծիք Աստեղաբաշխից վասն սոցին:

75 Որ է չարժմունք մոլորակաց և աստեղաց. զորս կարեւոր ոտից նմանեցուցանեն Բանաստեղծք:

76 Ասն է դիտակն աստեղաբաշխական: Գիղեցիկ է նմանութիւնն խաւարազգած դիւի ընդ բծի արեգական:

77 Եզեք. իը. 17-20:

78 Ասն է ոսկին քիմիական՝ զոր կոչեն փիլիսոփայական քար:

79 Լատիներէն Mercurius, որ նշանակէ զպատգամաւորն հատուածոց, և և՝ զսնդիկ:

80 Ըստ առասպելաց որդի Ովկիանոս. որ ընդունէր զաստիճանայն կերպարանս:

81 Թորանոց Քլիմիականաց :
82 Ի գնալ անդ արեգական :
83 Գեղեցիկ է անուանակոչութիւնս :
84 Որպիսի են ոսկի և արծաթ և քարինք պատուականք : Զարտադրութիւն մեռելոց նոցա ընծայէ Միլտոնին ազգեցութեան արեգական :
85 Որպէս ուսուցանէ Տեսաբանութիւնն :
86 Եւ այս ևս յայտնի է ի Տեսաբանութենէ :
87 Յայտ. ԺԲ. 17 :
88 Գեղեցիկ է խորհրդածութիւնս :
89 Երբայեցերէն նշանակէ Հուր Աստուծոյ. և զայս ա նուն վայելուչս ընծայէ Միլտոնին Հրեշտակապետի ոստիկանի արեգական :
90 Յայտ. Ը. 2 :
91 Մոլորակաց կամ երկնային մարմնոց :
92 Կեղծաւորք ոչ ամաչեն ստութեամբ խոստովանել զՔրիստոսութիւնն :
93 Պատրանքն Ուրիէլի բանաստեղծօրէն ևեթ ունէ զտեղի. սակայն բանքն Միլտոնին ազգու իրատ են իմաստոց և պարզամտաց ընդդէմ դատաճանութեան կեղծաւորաց :
94 Արժան է խնդրել ի բանս Միլտոնին ըբանաստեղծութիւն, և ոչ զՔրիստոս աստեղաբանութիւն :
95 Մի է և այս ի գեղեցիկ խրատուց բանաստեղծութեանս :
96 Կամ Հատարակածի ըստ Աստեղաբաշխից :
97 Կամ Նպատակ. որ է մի ի լերանցն Կորդուաց ի Հայաստան աշխարհի : - Այս երգ ըստ Տըվիլայ ստորին է քան զերկուս առաջինն, մանաւանդ ի բանս անդ Հօրն ա մենակալի. Թէպէտև լի բազմապատիկ գեղեցկութեամբ : Եւ ըստ Տըլագուրայ՝ Միլտոնի քաջ բանաստեղծ է, յաւէտ ի գժոխս՝ քան յերկինս :

---

## Գ Ի Ր Ք. Դ :

1 Յայտ. ԺԲ. 12 :
2 Յայտ. ԺԲ. 10 :
3 Քաջայարմար են բանքս ի բերան Սատանայի :
4 Կորդուաց. լիմ ի սահմանակցութեան անդ Երկրին Ասորւոց, և Հայաստան աշխարհի :
5 Նախահօրն Ադամայ :
6 Ծիածանն :
7 Տես ի (65) ծանօթ. ա գրոց :
8 Թագաւորութիւն ՅԱփրիկէ :
9 Կնդրկաբեր Երկիր ՅԱփրիկէ :

10 Խնկաբուղէս երկիր ՅԱսիա:
11 Ճով Համաստարած:
12 Կամ Աղմոդեա. Տովբ. Ֆ. 8:
13 Տովբ. Ը. 2:
14 Բանք Մելտոնէի արդարանան յաւէտ իմն ի Հերե-
սիովատեաս անդ:
15 Վայելուչս նմանեցուցանէ զԱստանայ հոլամաղն՝ գի-
շաւիչ Թուչնոյ:
16 Գէղեցիկ են խորհրդածութիւնքս, և ազդու խրատա-
բանութիւնք Մելտոնէի:
17 Թերևս Ապարան ի Հայաստան աշխարհի:
18 Քաղաք ի Մինջագեաս:
19 Կամ Թելազար՝ սահման յերկրին Ասորւոց. որ ի Ֆ.
Թագ. ԺԹ. 12. կոչի Ճովեզը ըստ Թարգմանութեան մերում:
20 Անուշահամ ըմպելիք Դից ըստ առասպելաց:
21 Անուն առասպելեալ պարսիզին՝ որ բերէր զոսկի
խնձորս:
22 Ջաստուած հովուաց ըստ առասպելաց, որ եգիտ զարինգ:
23 Կռչին և Խարխեանք. ըստ առասպելաց երիք գե-
ղեշ դստերք Աբամաղդայ, և ընկերք Մուսայից:
24 Ջորեքին եղանակք տարւոյ՝ Աստուածուհիք:
25 Ի մշտագարուն եղանակի:
26 Քաղաք ի Սիկիլեա:
27 Կամ Պրոսերպինա, դուստր Աբամաղդայ և Դեմե-
տրեայ. զոր յափշտակեալ Պղուտոնի՝ տարաւ ի գժոխս, և
արար իւր կին:
28 Այն է Պղուտոն չաստուած գժոխոց:
29 Մայր Պերսեփոնեայ՝ չաստուածուհի երկրագործու-
թեան:
30 Դստեր Պենեայ գետոյն՝ որ գարձաւ ի դաբնիդեայ
ծառ:
31 Գետ ՅԱսորիա:
32 Անուն աղբեր ի Պարնասոս լեառն Մուսայից:
33 Դիոնիսեան կամ Բաքոսեան:
34 Գետ կամ ծովակ ՅԱփրիկէ:
35 Ուրդի Նոյի:
36 Անուն այծի զորոյ զաւինս ծծեաց Աբամադդ:
37 Ուրդի Աբամադդայ՝ չաստուած գինւոյ:
38 Կամ Հերա՝ քոյր և կին Աբամադդայ:
39 Քաղաք ՅԱփրիկէ:
40 Եթէոպացի:
41 Գետ Յեգիպտոս:
42 Յասորիս գնէ Մելտոնէ զգրաման եգեմոյ. բայց նո-
ւաւ իմանայ և զՀայաստան աշխարհն ուր էն ակունք գե-
տոց Դրախտին:
43 Անուշակ ըստ բանաստեղծից:
44 Գորգեոս էր այր հոլափոխ, և բարձրացաւ յոմն առ

թագաւորութեան: Հիւսեալ էր նորա զառաջան անխզելի. զորոյ զուարթ ոչ կարացեալ քակել մեծին Աղեքսանդրի՝ եհան սուսերը, առ'ի կարող լինելոյ տիրել Ասիոյ ըստ պատգամաց:

45 Գելեցիկ նախերպանք հանդերձեալ չարութեան օձին համ Սատանայի:

46 Ըստ կարծեաց մեծամարտ, և Բանաստեղծից:

47 Կարի քաջագէպ են և այս իմաստք 'ի բերան Սատանայի:

48 Զայս գիւտ բանաստեղծական առնու Միլտոնէ յառաջելոց Դարկիսեայ մանկանն՝ որոյ տեսեալ զգեղեցկութիւն պատկերի իւրոյ 'ի ջուր անդր, և առ սիրոյն ընկղմեալ՝ փոխեցաւ 'ի համանուն ծաղիկ:

49 Ոչ զանց առնէ Միլտոնէ և 'ի կերս անդ սիրոյ զկատարեալ խրատուն:

50 Հայր չաստուածոց:

51 Կին Աբրամազդայ:

52 'Ի նկարագրութեան անդ գեղեցկութեան կերպարանաց Դախահարց, և սիրոյ նոցա 'ի դրախտին՝ անարատ են միտք Միլտոնէի: Ջնոյն պարտ է ունել և որոց վերծանեն զբանաստեղծութիւն նորա:

53 Ոչ նուազ ընտիր են և այս իմաստք 'ի բերան Սատանայի:

54 Ծովու:

55 Կամ քաջամարտիկ:

56 Առ արեգակն:

57 Սատանայ 'ի խօսել իւրում ընդ Ուրիէլի 'ի գնալ անդ արեգական՝ փոխեաց զանձն 'ի հրեշտակ լուսոյ. բայց 'ի վերայ Նպատ լերին կայր 'ի կերպարան իւր դատապարտեալ, որ էր կարի նման այլանդակեալ յերեսաց դժոխային կրից:

58 Անուն կղզեաց ընդ մէջ Եւրոպիոյ և Ամերիկայ:

59 Բանաստեղծօրէն աստեղաբանէ Միլտոնէ:

60 Մոլորակն, որ կոչի և Աբուսեակ:

61 Յայս անուն կոչէին հեթանոսք զլուսինն:

62 Միլտոնէ վերստին կրկնէ աստանօր զառաջինն բանան. այլ քանզի 'ի ձանձրոյթ լինէր լսելեաց 'ի հայկական բարբառ, նմին իրի համառօտեցաք բառիւքս Ե ու Ջ 'ի ոգոյնէ:

63 Բոյս ինչ անուշահոտ:

64 Յօրինեալ 'ի մանրիկ կիսուռածախառն քարանց. Իտալերէն Mosaico.

65 Չաստուած հովուաց կամ դաշտաց:

66 Կամ Սիւղվանոս և կամ Սիլվանոս, չաստուած անտառաց:

67 Չաստուածուհի աղբերաց:

68 Չաստուած անգաստանաց:

69 Առաջին կին ըստ առասպելաց՝ որ նշանակէ Ամենապարգեւ, զի Դևք տուեալ էին նմա օժիտս և ընծայս: Բայց Աբամազդ եւս նմին զտապանակ լի Թշուառութեամբք:

70 Ըստ առասպելաց հեթանոսաց:
71 Պատգամաւոր Աւից:
72 կամ Հեփեստեայ:
73 Ի Պրոմեթեայ:
74 Երկնային կամ աստուածային:
75 Հօրն աստուածոց:
76 Բանքդ ամիսփեալ ի փակագծի են համառօտութիւն երկայնաձիգ հատուածոյ Միլտոնի, զոր թողաք ի բաց:
77 Զև երկրաչափական:
78 Եբրայական անուն՝ զոր ընծայէ կելծեալ Հրեշտակին:
79 Նոյնպէս են և այս անուանք:
80 Toad, գորտ Թունաւոր, գեղեցիկ նմանութիւն փորձողին՝ այլ անբերելի հայկական լեզուաց:
81 Վառօդոյ:
82 կամ իշխանապետին դժոխոց:
83 Գունդն Աթուրիէլի և Զեփոնի:
84 Աստուածդուհի երկրագործութեան:
85 Կղզի Աստերիկա՝ որ ունի զբարձրաբերձ լերինս:
86 Աշտին լեառն Աստրիկէ:
87 Astrea, կոյս համաստեղութիւն ըստ Աստեղաբաշխաց:
88 Համաստեղութիւն յերկինս:
89 Դան. Ե. 27: Զայս նմանութիւն կշռոյ ի կիր ածանեն և Հոմերոս և Վիրգիլիոս բանաստեղծք:
90 Այս երգ ըստ Տըվիլայ՝ ի բաց առեալ զհատուածս ինչ, և մի յընտրելագոյն մասանց բանաստեղծութեանս:

---

## Գ Ի Ր Ք. Ե:

1 Քաղցրաշունչ հոգին արևմտեան, սիրելի Փղորայ ըստ առասպելաց:
2 Աստուածդուհի ծաղկանց:
3 Երդ. Ը. 10-13. և Է. 11-12:
4 Հրապոյրք դիւական մարդեղութեան:
5 Երևէր Սատանայ ի կերպարանս Հրեշտակի:
6 Ambrosia, անուշակ կամ անմահարար կերակուր Աւից ըստ հեթանոսաց:
7 Ի հրեշտակաց:
8 Միլտոնի յայտնակ բանս գտանի յաւէտ մթնաձոս փիլիսոփայ, քան քաջ բանաստեղծ:
9 Արտեմիկ, կամ ատող առաւօտու:
10 Առ ժամանակօք Միլտոնի ծանուցեալ էին մոյն հնդէքին մոլորակք:
11 Այս օրհնութիւն վախճանեղծից և դեղեցիկ նմին բանաստեղծական բացատրութիւն Ճիշտ Սաղմոսի:

12 Գեղեցիկ է այս իմաստ ՚ի Յատուգովութիւն արդարութեան Աստուծոյ:
13 Սերովբէից:
14 Աստեղաբաշխական դիտակն Գալիլէոսի խոալացւոյ:
15 Արքիպեղագեան կղզիք ՚ի Յունաստան:
16 Մի ՚ի կղզեաց անտի:
17 Միւս ևս ՚ի նոցանէ:
18 Ընդ գունաս մոլորակաց:
19 Կոչի ևս Արմաւ հաւ:
20 Արեգ քաղաքին:
21 Մայրաքաղաք էր երբեմն ՚ի վերինն Եգիպտոս:
22 Ըստ առասպելոյ էր մայր Հերմեայ՝ պատգամաւորին Դիւց, որ կրէր զթիւս յոտս իւր:
23 Երկրագործաց կամ պարտիզպանաց:
24 Անմահական, անուշակ, քաղցրահամ:
25 Կրկին մեծամեծ սահմանք երկրի Ասիա յայս կոյս և յայնկոյս Գանգէս գետոյն: Կամ՝ Հնդկաստան և Ամերիկայ:
26 Սեաւ ծով:
27 Ափրիկէ:
28 Վալեմի թագաւոր Յունաստանի:
29 Berry, նշանակէ զհատապտուղս՝ որք ունին զկեղև մաշկատեսակ, և լի են հիւթովք. զորս և մարթ է ճմլել, և ՚ի հիւթոյ նոցա յօրինել զօշարակս և զքաղցրաւենիս:
30 Ցատուածոյն բուրաստանաց և ծաղկանց:
31 Լեառն ՚ի Յունաստան:
32 Չի էր տակաւին ՚ի վիճակի անմեղութեան:
33 Իմն համօրէն պտուղք հատուածեալք յաշնան:
34 Կամի ասել, թէ ՚ի դրախտի անդ գարուն և աշուն ՚ի միասին գոյանէին, և բերէին զամենայն ազգս պտղոց:
35 Հրեշտակային բնութիւնն իմանալի և եթ օրինակաւ, և մարդկայինն նիւթականաւ:
36 Մոլորակաց:
37 Անմահական, քաղցր:
38 Անուշակ կամ քաղցրահամ ըմպելի:
39 Մանանայ:
40 Յայտնի և ՚ի նախընթաց բանս Միլտոնի ՚ի բերան Հրեշտակին՝ գոյանին ոչ տակաւ նիւթաբանութիւնք և իմաստակութիւնք. որք չունին զճաշակ բանաստեղծութեան:
41 Չի Ադամ էր աստուածաստեղծ և հոգածին:
42 Կարի յիրաւուն զառաջս առնու Միլտոնի զնորոց ընթերցանելոցս բանիս Հրեշտակին. զի որովհետև բանաստեղծութիւն նորա հանդերձեալ էր նկարագրել զարարս երկնաւորաց և զանմարմնոց, հարկաւ պէտք էին նմա երկրաւորք և մարմնական գաղափարաց, առ՚ի գիւրիմաց գործելոյ զայնս:
43 Որ նախայաւիտեան, անսկիզբն և անկատարած, և միշտ ներկայ ՚ի յաւիտենից մինչև յաւիտեանս. յորում ծնայ զորդին իմ համագոյակից ըստ Աստուածութեանս. և

սահմանեցի զնա լինել մարդ, և կոչիլ Մեսիայ կամ Օծեալ ըստ բանի Սաղմոսին ։ ղ. *Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ|| : Սովին մօտ մարթ է ուղիղ իմանալ զբանս Մելտոնիսի, Թէպէտև ոմանք զԱբրոսեան աղանդ նշմարեն ՚ի բանս նորա :

44 Ասեղաց :

45 Բանաստեղծօրէն ձևացուցանէ զբանն, և ոչ ըստ ճշմարտութեան. որպէս և ՚ի յայտնութենէ :

46 Գինին անուշահոտ :

47 Անմահական :

48 Տես զծանօթութիւնն (43) :

49 *Դու ասէիր ՚ի մտի քումմ. Երկից յերկինս, ՚ի վերոյ քան զաստեղս երկնից արկից զաթոռ իմ. նստայց ՚ի լերինն բարձու, ՚ի վերոյ լերանց բարձանց հիւսիսոյ : Երկից ՚ի վեր քան զամպս, եղէց նմանող Բարձրելոյն||. Եսայ. ԺԴ. 13-15 : Ըստ այսց բանից Մարգարէին ձևացուցանէ Մելտոնն զբան իւր բազում ուրեք, և այն կարի ինն չափազանցու- թեամբ :

50 Աբրահեմի :

51 Զարհուրեալքն գաղղիացիք կոչեն Ատղ հովուի, յոր- ոց առեալ է Մելտոնն :

52 Յայտ. ԺԲ. 4 :

53 Իշխանապետին դիւաց :

54 Ըստ ոմանց Արիոսեան են և այս բանք բանաստեղծ- ին Մելտոնի՚ի բերան Սատանայի. տես զծանօթութիւնն (43) ՚ի վերոյ :

55 Քաջադէպ են բանքս ոչ միայն ՚ի բերան Սատանայի, այլև նորուն իսկ Մելտոնի՝ որ կարի ինն զգուշաւեալ էր զկնի ազատութեան :

56 Յայտնիկ անվիտ և հայհոյիչ բանս ոչ միայն սատու- ծամարտ հանդիսանայ ամբարտաւանն Սատանայ, այլև ան- աստուած :

57 Անհաւատարմից, ուխտանենգաց, ապստամբաց :

58 Ըստ Տրնէայ դաղղիացւոյ՝ *Այս երգ ՚ի բովանդակ մատունս իւր է մի՚ի դեղեցկագունից բանաստեղծութեան՝ յաւէտ ՚ի սակս սիրալի պէսպիսութեանցն բովանդակելոց ՚ի նմա : Յոյր սակս և յայս գիրս առանձին ինն դէր ՚ի վերոյ դասէ նա զՄելտոնն քան զՀոմերոս և զՎիրգիլիոս :

# ԳԻՐՔ· Ջ:

1 'Ի գոյն գինւոյ, կամ ելեւրանդ:
2 Յայտնակ բանս Մելտոնի ոչ միայն ջգաստն ընտիր բանաստեղծութեան, այլև ոչ սիրտպէս նմաստասիրութեան կամ աստուածաբանութեան:
3 Տես 'ի ծանօթութեան (65) ա գրոց:
4 Ընուն կուռց ազգացն Աեփարուխմայ· ե· Թագ· ԺԷ· 31:
5 Թերևս Ազմոդ կամ Ամոդէոս գևն 'ի Տովբիթ ե· 25· զոր պաշտէին Եգիպտացիք 'ի կերպարանս օձի կամ վիշապի:
6 Ջաստուած Մովաբացւոց:
7 Էր ջաստուած վրէժխնդրութեան:
8 Միւս ևս ջաստուած հեթանոսաց· զորոց զանուանս ընդ ծայէ Մելտոնի դիւաց կամ հրեշտակացն ապստամբաց:
9 Դիւական ամբարտաւանութենն մայր է և անաստուած հայհոյութեան:
10 կամ Նեարոք՝ ջաստուած Ասորեստանեայց· ե· Թագ· ԺԹ· 37:
11 Անմահական, երկնային:
12 Ջաստուած: Ըստ հեթանոսաց է մակագրական անուն Ադրամելեքայ:
13 Վառօդոյ, ռմբոյ և մինդանօթի:
14 Սովին օրինակաւ նկարագրէ Մելտոնի զյօրինուածն վառօդոյ:
15 Այս է եղէգն կամ ձողն՝ որով մերձեցուցանեն զհուր 'ի ծակս մինդանօթիկ:
16 Որպէս 'ի գԺոխս, նոյնպէս և յերկինս համարձակի Մելտոնի յանդիման առնել զարարս երկրաւորաց· և յայտ մասին գոանի նա բանաստեղծ անճոռնի:
17 Միւս ևս կեղծեալ անուն Հրեշտակի յերկրայականն բարբառ:
18 Այն է սայլաձև և յարկածածուկ յենարանն Թընդանօթից:
19 Թնդանօթքն յայլևայլ ձոյլս կամ ձևս լերկև զբունս ծառոց բարձեալ էին երեքկարգեան 'ի վերայ անուաւոր սայլից:
20 Տես 'ի ծանօթութեան (91) ա գրոց:
21 Այս կատակ դիւաց ընդ միմեանս 'ի սակս ակարութեան յաղթող հրեշտակաց ծաղուս արժանի թուի ոմանց 'ի բանաստեղծութեան Մելտոնի:
22 Ջառանցանք են բանաստեղծին Մելտոնի մարմնաց ցուցանել զդէս:
23 'Ի յաւելուածոյ ըստ աստուածաբանութեանդ: Տես 'ի ծանօթութեան (44) է գրոց:
24 Որպէս այլուր, նոյնպէս և աստ ընծայէ բանաստեղծն

Մելտոնէ աստուածծութեանն Քրիստոսի զգործս՝ զորս կատարեաց նա զկնի մարդեղութեան:

25 Զայսոսիկ առնու Մելտոնէ ՚ի տեսլենէ անտի եզեկիէլի:

26 Ճիաճանի:

27 Urim, ըստ Եբրայեցւոց Նշանակէ հուր կամ լոյս. Ելից իբ. 30. ուր ըստ մեզ դնի՝ վերջ ընթայապործ կամ յանդիմանութիւն:

28 Ժանտախտիւ, համաճարակ ատտակմամբ:

29 Թերևս ըստ իննատասիճանեայ դասակարգութեանցն Հրեշտակաց:

30 Ջհանգէս համբարձմանն Քրիստոսի զկնի մարդեղութեան նկարագրէ ատտանօր Մելտոնէն. որ ներելի է բանաստեղծական ազատութեան:

31 Գեղեցիկ է այս խրատ զգուշութեան մարդասէր Հրեշտակին: Յայս երգ Մելտոնէի բազումք պախարակեցին զանճառնի նկարագրութիւնն պատերազմին Հրեշտակաց յերկինս: Բայց ըստ Տըլնէյ * ատգտանելի է գաղափարն, և գովելի բանաստեղծութիւնն ||: Եւ ըստ Տըլադուրայ յաւէտ լիով ցուցանէ Մելտոնէն ՚ի սմա * զբեղնաւորութիւն մտաց իւրոց, զառաւելութիւն հանճարոյն, և զօրութիւն հոգւոյն. և երևի քաջ նախանձաւոր Հոմերոսի ||:

---

## Գ Ի Ր Ք. Է:

1 Է բառ յունական, և նշանակէ՝ երկինք: Ըստ առաջելոյ էր նա մի ՚ի Մուսայից՝ հմուտ աստեղաբաշխութեան. զոր կոչէին և Ուրանիկ կամ Ափրոդիտէ երկնային: Որով իմանայ Մելտոնէն զնմաստութիւնն վերին:

2 Որ է ՚ի Յունաստան:

3 Էր թևաւոր նժոյգ Պողոնի և Մուսայից:

4 Ուրանիա կոչէր ինն երորդն ՚ի Մուսայս:

5 Լեառն Մուսայից:

6 Առակ. Ը. 24:

7 Երգեցի զերկնայինն մարդկեղէն բանաստեղծութեամբ:

8 Յերկինս:

9 ՚Ի Պեգասոսէ:

10 Առաջին ձիավար ըստ առասպելաց. որոյ կամեցեալ յանդուգն ձիավարել յերկինս՝ անկաւ ՚ի Պեգասոս երկիր:

11 ՚Ի փոքուն Ասիա:

12 Եւթներորդ երգս է սկիզբն մեծի մասին երկրորդականացն զրոց բանաստեղծութեանս, բայց է համառօտ քան զառաջինն կէսն, և նուազ նորա ընտել երկրաւորացս:

13 Հաստատութեան երկնից :
14 Բազում էին թշնամիք Մելտոնի ՝ի խուսալոյղ ժամանակի իւրում :
15 ՝Ի կուրութեան անդ լքեալ կայր ՝ի մարդկանէ :
16 Որ ի Բաքտս ըստ այլոց՝ հաստատած արքեպիսկոպութեան և պարուց :
17 Լեառն՝ի Թրակիա :
18 Որփէոս քնարահար :
19 Կաղլիոպէ՝ որ էր մայր Որփեայ :
20 Գովելի է այս իմաստ Մելտոնի, զի զարտաքին բանաստեղծութիւնն կոչէ անուան, և զհոգևորն՝ երկնային կամ անմահական :
21 Հաստատութիւնն վերին :
22 Ցոչնչութեան անդ :
23 Գիշերավար :
24 ՝Ի գաղանի մթութեան, յանդիմութեան :
25 Աբռւսեակ կոչի աստղն առաւօտեան, և բանաստիկուն Սատանայ :
26 Ղուկ. ա. 35 :
27 Ղուկ. բ. 14 :
28 Ջաք. գ. 1 :
29 Աչնչութեան կամ դատարկութեան :
30 Աչնչութեան :
31 Անդնդոց դատարկութեան :
32 Ջայտոսիկ իմաստասիրական կարծիս Թոզուամբ երևայ կայութեան բանաստեղծին Մելտոնի :
33 Ցօդս :
34 Դատարկութեան կամ ոչնչութեան :
35 Ծուխն մեծ :
36 Ջերկիր :
37 Կուտակութիւն ջրոյց սառնանման :
38 Ջ ջրեղէն հոսանս իւրեանց անապատելի :
39 Աբռւսեակն :
40 Կոչին և սա ըստ աստեղաբաշխից Բոյլք կամ Աւազունք. և են գումարք աստեղաց՝ որք երևին ՝ի գարնան ՝ի Ցուլ կենդանակերպի :
41 Փուռ ըստ Թուրքաց բարբառոյ :
42 Որ ի արուս մեղուն, զի ոչ կազմէ նա զմեղր :
43 Այս է հանդէս համբարձմանն Քրիստոսի զինի մարդեղութեան :
44 Մարդիօրէն ձևացուցանէ Մելտոնն. զի Որդին ա բարձակից եղև Հօր :
45 Dulcimer ըստ բնագրին :
46 ՝Ի հաստատութեան երկնից, ընդ օդն :
47 Ջայս կարծիս ունէին և ոմանք ՝ի նախնի Փիլիսոփայից :
48 Օդն :

49 Համառօտ նկարագրութիւնն վեցօրեայ արարչութեան յայս գիրս է ըստ Տըլտուսյ ՝ ճշգրիտ օրինակ ընտիր բանաստեղծութեան ։ Եւ ըստ Տըլիլայ՝ ՝ եթէ կայցէ թէ- ըութիւն ինչ յայս երգ, է յաւելուածն ևեթ ՝ի ձեռն նա- խերգանաց . Թէպէտև նոքին իսկ առանձինն են պատճէն ։

---

## Գ Ի Ր Ք · Ը ։

1 Աստուծոյ՝ որ է արարիչ բնութեան ։
2 Սկզբնութեան ևաժշտաց և ծառայից ։
3 Ջերկնապուռնան ։
4 Այսոքիկ են կազմածք երկնագնաց ըստ այլևայլ կարծեաց և գրից Աստեղաբաշխից ։
5 Ադամ բնակէր միայն ՝ի դրախտն անդ, իսկ այլ ահ- մանք երկրի կարդեալ էին առ՝ի պէտս կամաց Արարչին ։
6 Նեւտոն անգղիացի համարի առաջնորդ այսր կարծեաց՝ որ յետոյ էր ժամանակաւ քան զՄիլտոնն ։
7 Այս էր Թիւ մոլորակաց ըստ նախնեաց ։
8 Ըստ Պտղոմեան գրից ։
9 Ըստ Կոպերնիկեան գրից ։
10 Հողագունտ երկրի ։
11 Արեգակն իբրև արուս , և լուսին իբրև զէգ ։
12 Բնակիչք ՝ի մոլորակս ։
13 Արարչագործութեան քո ։
14 Հանգամեան Աստուծոյ յարարչագործութենէ ։
15 Յոչնչութիւն, ՝ի չիք դառնալ, կորնչիլ, մեռանիլ ։
16 Ըստ աստուածային բնութեանն պարտ է խոհանալ զբ- բանս Միլտոնի, և ոչ ըստ անձանց սրբոյ Երրորդութեանն . Թէպէտև ոչ ճիշդ աստուածաբանէ բանաստեղծս ։
17 Որպէս արար ՝ի մարդեղութեան իւրում ։
18 Այս էր երբեմն վարդապետութիւն ալէքսանդրիոյ ։
19 Սոխակ ։
20 Որ է գիշերավար ։
21 Այլ այս բանք Միլտոնի ՝ի բերանոյ Ադամայ ու- նին զաեղի յաւէտ ՝ի վիճակի անդ կործանման, քան անմե- ղութեան ։
22 Եւ այս էր սեռական անմեղութեան վիճակի ։
23 Գոդցես խոհատակական են բանքս ։
24 Թողութիւք Միլտոնի զիւրս այսոցիկ բանից ։
25 Որ է յարևմտեան ծովային Ափրիկէ ։
26 Արևմտեան ։
27 Ջոլջոյն հրաժարական, զբարեմաղթութիւն Հանդեր- ձի հանդերձ չնորհակալութեամբ ։

28 Ել յա երկ ըստ Տըլիլայ և ըստ Տըլատուրայ է մի՝ ի սիրալի մատանց բանաստեղծութեան. Թէպէտև ունի թե՝ բաւթիւնս ինչ, և այն՝ յաւէտ ի սկզբան անդ:

---

## Գ Ի Ր Ք· Թ:

1 Էր քաղաքաւիկ Դիւցաղն ընդդէմ Հեկտորի ի Տրոյական մարտի. զորոյ զքաջութիւնս նուագեաց Հոմերոս յԵղիական կամ Յեղինեական բանաստեղծութեան իւրում:

2 Քաղաք ի Յունաստան, կոչի և Եղինն:

3 Թագաւոր էր Իթալիա, և մենամարտեալ ընդ Ենէասայ՝ անկաւ:

4 Դուստր էր Լաւինոսի արքային, և եղև կին Ենէասայ:

5 Ջաստուած ծովու:

6 Քոյր և կին Աքրամազդայ:

7 Որ կոչի և Ափրոդիտէ: Ջայսոսիկ նուագեաց Վիրգիլիոս յԵնէական բանաստեղծութեան իւրում:

8 Յաստուածային Մուսայէ կամ ի Բանաստեղծութենէ:

9 Ի կուրութեան անդ, և ի քոյն գիշերոյ յածէին միաք Մելսոնին զբանաստեղծութեամբս:

10 Ի հասակի ծերութեան:

11 Ալ յայմհետէ նոյնպէս համարեցի և այս բանաստեղծութիւն:

12 Գեղեցիկս ստգտանէ Մելսոնին զատայօդ երգս առասպելացս:

13 Սրբոց և Մարտիրոսաց:

14 Ի սակս վսեմութեան ձեռնարկութեանս:

15 Ջի յեսոյ էր Մելսոնին ժամանակաւ քան զՀոմերոս, զՎիրգիլիոս, և զՏասս՝ Դիւցազնական բանաստեղծս:

16 Անգլիս:

17 Անցեալ զվաթսանամենիւք:

18 Ան է Մուսայն երկնաւորս, կամ Հոգին սուրբ աղաչեցէք Աստուածաշունչ գրոց՝ յորոյ վերայ հաստատէ Մելսոնին զբանաստեղծութիւն իւր:

19 Կոչի և Հասարակած ըստ Աստեղաբաշխից:

20 Է մի ի համաստեղութեանց երկնից:

21 Են կրկին շրջանակք՝ որք լինեսն աստիճանօք հեռի են ի կիսէ գիշերահաւասարին:

22 Սեաւ ծով:

23 Յերկրին Ռուսաց:

24 Ի թաթարաստան:

25 կամ հարաւային՝ ըստ Աստեղաբաշխից:

26 Գետ յԱսիս:

27 Ծոց կամ գոգ ծովու յԱմերիկա:

28 Կրկին գեաք 'ի Հնդիկս :

29 Վէրջին գոլով արարչագործութեան աշխարհի քան զերկինն՝ պատուականագոյն համարի զայն քան զառաջինն :

30 Աստեղաց կամ Մոլորակաց :

31 Դարձեալ սատակացուցանէ Մելոսին զհայհոյութիւնս Սատանայի :

32 Ծննդոց սերելոց 'ի միջ :

33 Կամի ասել, յանդիման տեսութիւն քո տայ ինձ լինել յաւէտ ինն առաքինի :

34 Յայս անուն կոչէին հեթանոսք զԱստուածուհիս լերանց, գետոց, ծառոց և անտառաց :

35 Կամ Ովէադէս՝ յաւերժահարսն լերին :

36 Կամ Դրիւադէս՝ յաւերժահարսն անտառի :

37 Տեղի պատգամաց Ապողոնի 'ի Յունաստան :

38 Որ է Աննահիտ, զոր Լատինք կոչեն Diana.

39 Ալսինքն՝ ոչ էր երկաթեղէն, կամ յօրինեալ 'ի հուր դարբնոցի :

40 Էր Աստուածուհի հովուաց ըստ առասպելոյ :

41 Աստուածուհի պարտիզաց :

42 Որ էր տարփածու Պոմոնայ :

43 Աստուածուհի երկրագործութեան :

44 Էր դուստր Աբամազդայ և Դեմեարի :

45 Հայր Աստուածոց ըստ հեթանոսաց :

46 Որ ըստ առասպելոյ զինի մահուանն վերակենցալեաց 'ի ծաղիկ :

47 Էր որդի արքային Կորկիւրայ՝ որ ունէր զգեղեցիկ պարտէզս :

48 Որ է հայր Ոդիսեայ :

49 Զի խորհրդաւոր պարտէզ Սողոմոնի է եկեղեցի Աստուծոյ :

50 Սողոմոն :

51 Գաւառ Յերուսաղէմ :

52 Անուն կնոջն Կադմեայ :

53 Էր Թագաւոր Փիւնիկեայ՝ որ ընդ կնոջ իւրում դարձաւ յօճ ըստ առասպելոյ :

54 Սահման երկրի Յերուսաղէմ :

55 Մականուն Աբամազդայ՝ զոր պաշտէին ՅԱվրիկէ :

56 Մականուն Աբամազդայ՝ զոր պաշտէին 'ի Հռոմ :

57 Այլևայլ ազգք հեթանոսաց ունէին զառանձին Աբամազդ՝ հայր Աստուածոց իւրեանց :

58 Մայր Աղէքսանդրի :

59 Քաջ զօրավար Հռոմայեցւոց՝ որ յաղթեաց Կարքեդոնացւոց :

60 Պարծանաց :

61 Անուն Վհկի որ ըստ առասպելոյ փոխէր զմարդիկ յանասունս :

62 Ըստ առասպելոյ պատառանց :

63 Որպէս Դեմոսթենէս :
64 Որպէս Տուղլաս Կիկերոն :
65 Կամի ասել՝ Թերևս Հրեշտակք միայն տեսեալ էցեն զՀաշակեղն իմ 'ի ծառոյ անտի, և ոչ Աստուած :
66 Սովորութիւն էր առ նախնիս զկնի հնձոց պահակաց զարդարել զդեղեցկադոյնն 'ի մէջ օրխորդացն հնձողաց :
67 Սովին բանիւք դեղեցիկս նկարագրէ Մելտոնէն զծուխ խորհրդոց, զնայթ մոաց, և զնոսին պատճառաբանութիւնս նորա՝ որ կամի մեղանչել, և խնդրէ կուրացուցանել զոյս բանին :
68 Գաւառ յարևելեան Հնդկաց :
69 Մեսս ևս գաւառ անդանօր :
70 Կամ միասին քաջամարտիկ կանանց :
71 Նաւապետ խառլացի՝ որ եկիս զԱմերիկա կամ զնոր աշխարհ :
72 Այս երդ ըստ Տըլնէյ է առաւել գեղեցիկ և կարևոր քան զայլս, Թէպէտև ունի զԹերութիւնս ինչ : Եւ ըստ Տըլտուրայ՝ համարեալ եղև միշտ ընտրելագոյն քան զայլ մասունս բանաստեղծութեանն՝ իբրև պատկ նորին : Որպէս և Ադիսոն անգլիացի դերազանց ևս գասէ զհանճար Մելտոնի յայս գիրս :

---

## ԳԻՐՔ· Ժ :

1 * Եւ զհաշոյս նորա առնեմ հանապազ ||· Յովհ· ը· 29 :
2 Դևն՝ որ զկնի պատրելոյ զնախահարս խոյս տուեալ էր յերեսաց նոցա :
3 Ըստ օրինաց Անգլիոյ դատապարտեալ համարի վախուցեալ յանցաւորն :
4 Զի նա ոչ փորձեաց ինքնին զնախահարս մեր, այլ պործի միայն գոտաւ չարութեան գիւրն :
5 Երկնաւորաց, Աստուծոյ, Հրեշտակաց :
6 Դատարկութիւն կամ միջոցն ձգեալ 'ի գԺոխոց անտի յաշխարհս :
7 Թերևս Ովկիանոս :
8 Անուն քաղաքի յԱսիա :
9 Գետ յաշխարհին Ռուսաց :
10 Կղզի յԱրշիպելագոսի 'ի Յունաստան :
11 Գոլգոնք ըստ առասպելաց էին գասեղք Փորկայ և Կետայ, և փոխարկէին 'ի քար զորս միանգամ հայէին 'ի նոսա :
12 Աթոյ Պարսից :
13 Քաղաք 'ի Պարսս :
14 Կամ Տիտանեան, երևելի, ամբոխանխառ :

15 Կերձ Տովբ՝ ի Յունաստան, բաժանէ զԱսիա յԵւրոպիայ:
16 Որ և գտանիցես ըստ Աստեղաբաշխից:
17 Մանն Ծնունդ է Սատանայի, միանգամայն և մեղաց՝ որ նոյնպէս Ծնունդ է նորա:
18 Անուն բազմամարդ ազգի Հասիա և Եւրոպիա:
19 Որ է Մոսկով:
20 Կոչի ևս Ճիդերիան:
21 Անուն քաղաքի կամ երկրի՝ ի Պարսս:
22 Շահ կամ Թագաւոր Պարսից:
23 Կամ Թուրքաց:
24 Դիւոշակի նոցա՝ որ կրէ զնշան մահեհացև կամ եղջերաւոր լուսնի:
25 Աբյն է Մարտաշ:
26 Մայրաքաղաք՝ ի Պարսս:
27 Քաղաք է Պարսից:
28 Դժոխային. Պղտութն ըստ առաստղից է չաստուածդժոխոց:
29 Դժոխային:
30 Անանցանելի, անգնալի:
31 Տեսչութիւնն աստուածային:
31 Անուանք են այսոքիկ այլև այլ օձից:
32 Անուն գաւերն Փորկայ՝ որ կախեալ ունէր օձս զհետց իւրոց:
33 Կղզի՝ ի Կրետէ:
34 Անուն օձի կամ վիշապի՝ զոր ապան Ապողոն ըստ առաստղից:
35 Էր մի՝ ի կաստղեացն դժոխոց:
36 Որ էր հսկայ անարի:
37 Որ էր կին Ովկիանի:
38 Կամ Կրետեան:
39 Կոչի ևս Կռոնոս:
40 Գուստր և կին Կռոնոսի ըստ առաստղից:
41 Իմն անմարմին:
42 Աստղից:
43 Եւթանեքին աստեղք յերկինս՝ որք կոչին Բոլք, Բազմաստեղք և Ալաւունք ըստ Աստեղաբաշխից:
44 Երկուորեակ համաստեղութիւն կամ կենդանակերպ յերկինս, համարեալ ըստ առաստղից կրկին Սպարտիացի եղբարք:
45 Կենդանակերպ յերկինս. ի ժամանել արեգական առնա՝ դարձ առնէ անդրէն:
46 Անուանք են այսոքիկ կենդանակերպից՝ ի Զոդիակոսի կամ՝ ի կենդանակամարի երկնից:
47 Երկնից:
48 Կոչի ևս Լաբրատոր՝ երկիր՝ ի հեւսեսաիոզման Աստեղից:

49 Դէպուց ծովու Յովկիանու։
50 Ցնխաւէս ընթրիս կազմեալ էր եղբօր իւրում զորդին ծնեալ ի կնոջէ նորա. զոր տեսեալ արեգական ըստ առասպելացս զարհուրեցաւ, և դարձոյց զկառս իւր։
51 Ասյոքիկ Յունական անուանք են հոլմոց։
52 Սահման երկրի ի հիւսիսակողման։
53 Դոյնպէս և այս յաշխարհին Ասուաց։
54 Անուանք հոլմոց։
55 Sierra Leona, անուն գետոյ յԱֆրիկէ։
56 Անուանք հոլմոց։
57 Բալխին հոլմոց։ Կամի ասել Միլտոնն, թէ չորք-քին գլխաւոր հոլմք՝ հիւսիսային, հարաւային, արևելեան և արևմտեան՝ հանդերձ կողմնականօքն իւրեանց հակառակ կացին միմեանց յատկանութիւն աշխարհի։
58 Յայտնի բանս նկարագրէ Միլտոնն զկնոջ անձին իւրոյ, զի կարի վշտացեալ էր նորա յերեսաց առաջին կնոջ իւրոյ, որ զինն Թողուլ զնա՝ վերստին հաշտեցաւ ընդ նմա արտասուօք։
59 Ջայտնի խորհուրդս յիմարութեան ձարտարութեամբ ինն գնէ Միլտոնն ի բերան կնոջն՝ առ ի բարձրացուցանել զնմանութիւնն Ադամայ։
60 Այս երգ գոգցես բովանդակութիւն ինն է առնային երևելի մասանց բանաստեղծութեանս, իմն՝ Աստուծոյ, հրեշտակաց, գիւաց, նախահարց, երկնից, երկրի, գժոխոց, և այլն։ Եւ ըստ Տրևիլայ յայս երգ ուրեք ուրեք առաւել ցուցանէ Միլտոնն զաշխոյժս մտաց իւրոց քան յայլ գիրս իւր։

---

## Գ Ի Ր Ք· ԺԱ։

1 Էր Թագաւոր Թեսսաղիոյ. և ըստ առասպելացս զեր-ծաւ յընդհանուր ջրհեղեղէ. և գաւաս նորոգիչ մարդկան ազգի իրրև գնոյ։
2 Անուն կնոջ Դևկալիոնի։
3 Էր չաստուածուհի արդարութեան ըստ հեթանոսաց։
4 Ոմանք մեզագիր եղեն Միլտոնի վասն առասպելացն՝ զոր մուծանէ նա յիւրումն հոգևոր բանաստեղծութեան. սակայն այլք արդարացուցանեն զնա. զի ի կիր արկանէ զեպիստատական ոսկին ի զարդ խորանին։
5 Յայտ. ը. 3։
6 Էր չաստուած հեթանոսաց, զոր նկարէին ի կրկին գէմս՝ յառաջոյ և զկնի։
7 Ըստ առասպելացս հովիւ էր հարիւրաչեայ։
8 Անուն գաւառի Հերմեայ։

9 Ջաստուած աւազակայ՝ որ սպան զԱբրգոս։
10 կամ Լևկոթովէ՝ դուստր Ոբքաւեայ, որ Թագէաց զնա կենդանւոյն. այլ Ապոլոն գարձոյց զնա ՚ի կնկենի։ Մխլ տուին իմանայ տովաւ զառաւօտն։
11 Այն է արծուի։
12 Այն է առիւծ։
13 Ծննդ. լԷ. 2. ուր ՚ի մեզ գնի Բանակս։
14 Բ. Թագ. Ը. 13. և այլն։
15 Անուն գաւառի ՚ի Յունաստան՝ որոյ ծիրանին անուանի էր առ նախնիս։
16 Անուն քաղաքի ՚ի փիւնիկէ, որ կոչի և Տիւրոս։
17 Անուն ծաղկի, և չաստուածուհւոյ՝ որ ըստ առասպելացս գարձաւ ՚ի ծիածան։
18 Ջկամար միջաց Հրեշտակապետին նմանեցուցանէ Մխլ տուին կենդանակամարին կամ Զոդիակոսին երկնից։
19 Հրեշտակաց, երկնաւորաց։
20 Անմահական։
21 Առտանօր Մխլտուին սկսանի յառաջ բերել զանուանս երեսելի Թագաւորութեանց և քաղաքաց ՚ի չորեսին մասունս աշխարհի՝ յԱսիա, յԱֆրիկէ, յԵւրոպիա, և յԱմերիկա։ Զորոց գքննութիւն Թողումք Աշխարհագրաց և Վիպասանից. և ընթերցանելեացն Մխլտուին՝ ուսանել ՚ի գրոց նոցին։
22 Որք են Սպանիացիք։
23 Թերևս սակաւք իմանայ Մխլտուին զերբեակ յեռապայ պատմութիւնս Աստուածաշունչ գրոց՝ զորս հանդերձեալ է Հրեշտակն յանդիման առնել աչացն Ադամայ, իմա Աբելի, Ենովքայ, և Նոյի։
24 Կայէն. ծննդ. Բ. 1. և այլն։
25 Հաբէլ։
26 Յովբէլ և Յովբալ. ծննդ. Բ. 20 - 21։
27 Օրէնք են այսոքիկ երաժշտութեան։
28 Թոբէլ. ծննդ. Բ. 22։
29 Ջաստուած սիրոյ, և հարսանեաց։
30 Ենովք. ծննդ. Է. 24։
31 Յուդայ. 14 - 15։
32 Նոյ. ծննդ. Ը. 9։
33 Բ. Պետ. Բ. 5։ և ա. Պետ. Բ. 19 - 20։
34 Հզօր, համակործան։
35 Եւփրատ կամ Տիգրիս։
36 Որ է Աբրահամ կամ Մասխս լեառն ՚ի Հայաստան աշխարհի։
37 Ըստ Տբէլայ՝ * գոգցես համօրէն քննիչք բանաստեղծութեանս առաջին համարեցան զերկուսին վերջին երկս քան զառաջինն, սակայն և այնպէս բովանդակեալ ունին նոքա զմեծամեծ և զգեղեցիկ նմանս ||։ Այլ ըստ Ադիսոնի * Անմարթ է համարել զայսոսիկ վերջին գիրս երբեք անվայելուչ մասունս ընտրելոյ բանաստեղծութեանն Մխլտուին ||։

## ԳԼՈՒԽ ԻԲ.

1 Եւ ելին ի Մելիտինէ՝ ոմանք պատմութիւն նորա առնել, ոչ ունի զնորս բանասաւեղծական հանճարոյ:
2 Նեբրովթ. ծննդ. Ժ. 8. և այլն:
3 ծննդ. Ժ. 9:
4 Իմն յայնմանէ՝ որ ի բռնաւորական կամ անիրաւ:
5 Նոյն:
6 Եւս մեզ՝ * ծառայ եղբարց իւրոց ‖. ծննդ. Թ. 25:
7 Որ ի Աբրահամ:
8 ծննդ. ԺԸ. 31: Եւս մեզ՝ * Յաշխարհն Քաղդէացւոց ‖: Հուր կամ Որ ի անուն քաղաքի:
9 Եւս մեզ՝ * 'ի կաղնին բարձր ‖. ծննդ. ԺԲ. 6:
10 Այն ի՝ կոկորդիլոս, որում նմանեցուցանէ Եզեկիէլ գլ. իԹ. 3. զփարաւոն արքայ Եգիպտացւոց:
11 Որ կոչի և Զոդիակոս ըստ Ասորեաբանիւ:
12 Յեսու Ժ. 12:
13 Քրիստոսի:
14 Զի չափեաց զաշխարհս 'ի պատմութեան իւրում՝ սկսեալ յարարչութենէ մինչև ցվախճան նորին՝ անցեալ ընդ ամենայն դարս նորա:
15 Աստանիօր Թողաք 'ի բաց զԹարգմանութիւն երկայն հատուածոյ բանից Մելիտինէի, որոյ յեցեալ 'ի գաղափարն սկզբունս աղանդոյ իւրոյ՝ լուսանօք խօսի ընդդէմ Վարդապետաց Ասաքելական եկեղեցւոյ, մանաւանդ ընդդէմ յայտարդաց Ասաքելապետին Պետրոսի: Որոյ բանք դիւրաւ չջնջին 'ի վերայ աղանդակցաց նորա, և համօրէն աղանդապետաց:
16 Այս վերջին երդ Մելիտինէի ըստ Տըլեյայ է ասորին քան զառաջինան: Եւ ըստ Տըլադուբայ՝ զինի երկարատև արշաւանաց երևակայութիւնն Մելիտինէի յայս երդ երևի վաստակեալ: Սակայն և այնպէս ոչ գադարեցաւ Գաղլիա նախանձաւորն Անգղիոյ՝ պանչանալ ընդ անմահ Բանասեղծ նորա. որոյ անկումն ուրեք ուրեք ըստ օրինակի Հոմերոսի և Փայետոնի՝ ցուցանէ մինչ զբարձրապոյն Թռիչս նորա:

---

*Tip. ed Edit. li Monaci Armeni di S. Lazzaro*
*in Venezia.*